Ժ. ԱՂԱՅԱՆ

ՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1905-1907

ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

Ц. П. АГАЯН

РЕВОЛЮЦИОННОЕ ДВИЖЕНИЕ В АРМЕНИИ

в 1905—1907 гг.

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1955

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

9(47.925)195
Ա-44
(Արաց
Ֆ.ստ (47.925)

Ծ. Պ. ԱՂԱՅԱՆ

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

ՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1905--1907 թթ.

Ա II 32996

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԵՎԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1955

Տպագրվում է Հայկական ՍՍՌ
Գիտությունների ակադեմիայի խմբագրական-
հրատարակչական խորհրդի որոշմամբ։

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ռուսական առաջին ռևոլյուցիան սկսվեց 1905 թ. հունվարյան դեպքերով։ Այնուհետև ծավալվող մասսայական սուր պայքարը հասցրեց դեկտեմբերյան վինված ապստամբությանը՝ ռևոլյուցիայի զարգացման ամենաբարձր աստիճանին։ 1905—1907 թվականների ռուսական ռևոլյուցիան, երկրում առաջ բերելով հակայական քաղաքական վերելք, պայքարի հանեց միլիոնավոր բանվորների ու գյուղացիների։ Լուրջ հարված հասցնելով ցարիզմին, ռևոլյուցիան աշխատավոր մասսաների համար հանդիսացավ քաղաքական դաստիարակության դպրոց՝ նրանց հետագա ազատագրական պայքարում։

Իմպերիալիզմի դարաշրջանի այդ առաջին ժողովրդական ռևոլյուցիան հակայական ազդեցություն թողեց բոլոր երկրների աշխատավորների ռևոլյուցիոն պայքարի վրա։ Այն Արևմուտքի պրոլետարիատին և Արևելքի ճնշված մասսաներին ազատագրական հզոր պայքարի ոգեշնչեց։

Ամբողջ աշխարհի աշխատավորները իրենց ջերմ համակրանքն ու համերաշխությունը հայտնեցին Ռուսաստանի հերոս պրոլետարիատին։ Բալմաթիվ երկրներում ռուսական պրոլետարիատին օգնելու շարժում սկսվեց։ Արձագանքելով ռուսական ռևոլյուցիային, Արևելքի ճնշված ժողովուրդները ազատագրական պայքարի դուրս եկան գաղութային ճնշման դեմ։

«Ռուսական առաջին ռևոլյուցիան նոր էջ բաց արեց համաշխարհային պատմության մեջ՝ քաղաքական խորագույն ցնցումների և ռևոլյուցիոն փոթորիկների դարաշրջանը, դրեց Եվրոպայում բանվորական շարժման վերելքի և Ասիայի ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման սկիզբը» [1]։

Ռուսական առաջին ռևոլյուցիայի պատմության ուսումնասիրությունն ու լուսաբանումը ունի գիտական և քաղաքական կարե-

---

[1] «Ռուսական առաջին ռևոլյուցիայի հիսուն տարին» (Թեզիսներ)։

վոր նշանակություն։ Այդ պատմության դիտական ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հեշտ կերպով ըմբռնելու հետագա ռևոլյուցիոն շարժումների ընթացքը։ Առանց ռուսական առաջին ռևոլյուցիայի դասերի հաշվառման, բոլշևիկները չէին կարող հաջողությամբ գլխավորել Ռուսաստանի աշխատավորների պայքարը և ապահովել Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակը։

Վ. Ի. Լենինը գրել է, որ «Առանց 1905 թվականի «գլխավոր փորձի» 1917 թվականի Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթությունն անհնարին կլիներ»[1]։

1905—1907 թթ. ռևոլյուցիայի ժամանակաշրջանում՝ բոլշևիկների ղեկավարությամբ Ռուսաստանի բանվորների և գյուղացիների մղած հերոսական պայքարի պատմության ուսումնասիրությունը, այդ պայքարի փորձի բազմակողմանի հաշվառումը օգնում են բոլոր երկրների կոմունիստական և բանվորական պարտիաներին՝ դեմոկրատիայի և սոցիալիզմի համար մղվող պայքարում։

Բուրժուա-նացիոնալիստական պատմագրությունն ամեն կերպ ձգտել է աղավաղել պատմական իրականությունը և անտեսել ռուսական առաջին ռևոլյուցիայի խոշոր նշանակությունը համաշխարհային պատմության մեջ։ Միայն բոլշևիկների պարտիան էր, որ տվեց այդ ռևոլյուցիայի իսկական դիտական բնորոշումը, նշելով նրա պատմական նախադրյալները, բնույթն ու շարժիչ ուժերը, հանրագումարներն ու դասերը։

Բոլշևիկները՝ բոլոր ազգերի աշխատավորության շահերի այդ միակ և իսկական պաշտպանները, Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ մշակեցին ռուսական ռևոլյուցիայի ստրատեգիական ու տակտիկական պլանը։ Նրանք նշում էին, որ ռևոլյուցիայի հաղթանակը պետք է հասցնի պրոլետարիատի և գյուղացիության ռևոլյուցիոն դեմոկրատական դիկտատուրայի հաստատմանը։ Բոլշևիկները, սակայն, մտադիր չէին ռևոլյուցիան ավարտել նրա առաջին՝ բուրժուա-դեմոկրատական էտապով. նրանք գտնում էին, որ դեմոկրատական խնդիրների կատարումից հետո այն անմիջապես պետք է վերանի սոցիալիստական ռևոլյուցիայի։

Վ. Ի. Լենինը պատմական նոր էպոխայում մարքսիզմը հարստացրեց տեսական մի շարք դրույթներով ու ընդհանրացումներով։ Դեռևս ռևոլյուցիայի ընթացքում Վ. Ի. Լենինը, ընդհանրացնելով

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 13։

ռուսական ռևոլյուցիայի փորձը, որոշեց նրա տեղն ու նշանակությունը պրոլետարիատի ռևոլյուցիոն պայքարի պատմության մեջ։

Վ. Ի. Լենինը «Սոցիալ-դեմոկրատիայի երկու տակտիկան դեմոկրատական ռևոլյուցիայի մեջ» և ուրիշ աշխատություններում հանճարեղորեն հիմնավորեց պատմական նոր պայմաններում տեղի ունեցող բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի յուրահատկությունները և նշեց բանվոր դասակարգի ղեկավար դերը այդ ռևոլյուցիայի մեջ։ Նա ցույց տվեց, որ բանվոր դասակարգի միակ դաշնակիցը կարող է լինել Ռուսաստանի բազմամիլիոն ճնշված, աղքատաղուրկ գյուղացիությունը։ Բանվոր դասակարգի կոչով և նրա առաջադրած լոզունգներով էին պայքարի ելնում ամբողջ գյուղացիական գավառներն ու նահանգները։ Ագրարային ռևոլյուցիոն շարժումներն ավելի ուժգին ծավալվում էին այն շրջաններում, ուր բոլշևիկներին հաջողվում էր կապ ստեղծել և սիստեմատիկ աշխատանք տանել գյուղացիական լայն մասսաներում։

Մշակելով պրոլետարական ռևոլյուցիայի ստրատեգիան ու տակտիկան և հիմնավորելով բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիան սոցիալիստականի վերաճելու թեորիան, Վ. Ի. Լենինը անողոք ու ջախջախիչ հարված հասցրեց մենշևիկներին՝ բուրժուազիայի այդ գործակալներին։

Սոցիալիստական ռևոլյուցիայի լենինյան թեորիան, որի հիմքերը խարսխված են ռուսական առաջին ռևոլյուցիայի փորձի վրա, անցած կես դարի ընթացքում ուղենիշ է հանդիսացել Արևմուտքի պրոլետարիատի և Արևելքի ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարի համար։ Ռուսական ռևոլյուցիայի փորձը ցույց տվեց, որ շահագործողների դեմ մղվող ազատագրական պայքարում աշխատավոր մասսաները՝ բանվոր դասակարգի ղեկավարությամբ ցուցաբերում են հսկայական ռևոլյուցիոն էներգիա և ստեղծագործական ուժ։

Ի տարբերություն արևմտյան բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիաների, դեմոկրատական ռևոլյուցիան Ռուսաստանում բռնկեց դասակարգային պայքարի ավելի զարգացած պայմաններում, երբ կապիտալիզմը թևակոխել էր իր զարգացման իմպերիալիստական ստադիան և երբ պրոլետարական ռևոլյուցիան պրակտիկ հարց էր դարձել։

Ցարական Ռուսաստանը աշխատավոր ժողովրդի համար բոլոր տեսակի ճնշումների, հալածանքի ու շահագործման օջախ էր։ Ճնշման կապիտալիստական, աղգային և ռազմա-ֆեոդալական ձևերը

բանվորներին ու գյուղացիներին դցել էին շափազանց ծանր տընտեսական ու քաղաքական դրության մեջ։ Դրան ավելանում էր նաև օտարերկրյա իմպերիալիզմի ճնշումը, առավելագույն շահույթ ստանալու նրա ձգտումը։ Ճորտատիրական կարգերի բազմաթիվ մնացորդների հետ միասին Ռուսաստանում արդեն առաջ էր եկել ու զարգանում էր մոնոպոլիստական կապիտալիզմը։ Արդյունաբերական և ֆինանսական բուրժուազիան իրենից զգալի ուժ էր ներկայացնում։ Բայց, որպես կապիտալիզմի զարգացման անխուսափելի հետևանք՝ ստեղծվել էր ռևոլյուցիոն բարձր հատկություններով օժտված արդյունաբերական պրոլետարիատի կենտրոնացված մի հզոր բանակ։ Այսպիսով, ստեղծվել էին օբյեկտիվ պայմաններ բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի հաղթանակի և այն սոցիալիստականի վերաճելու համար։

1905—1907 թվականների ռուսական ռևոլյուցիան պատմական մի ամբողջ փարաշրջան է կազմում ցարական Ռուսաստանի ճնշված ժողովուրդների կյանքում։ Ռևոլյուցիայի տարիներին ռուս բանվորների ու գյուղացիների հերոսական պայքարով ոգեշնչված, նրանց հետ ուս-ուսի տված ցարիզմի ու կալվածատերերի դեմ հուժկու մարտեր մղեցին նաև Ռուսաստանի ծայրամասերի ճնշված ազգերի բանվորներն ու գյուղացիները։ Ռևոլյուցիան խոշոր նշանակություն ունեցավ Ռուսաստանի բազմազգ ժողովուրդների համախմբման և ինտերնացիոնալ դաստիարակության համար։ Ռևոլյուցիոն մարտերում՝ բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ՝ դրվեց ժողովուրդների այն մեծ բարեկամության հիմքը, որը վճռական դեր խաղաց սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի գործում և այն այժմ հանդիսանում է սովետական հասարակարգի շարժիչ ուժերից մեկը։

Անդրկովկասի պրոլետարիատը և գյուղացիությունը ռուսական ռևոլյուցիայի մարտական ջոկատներից մեկն էր։ Ռուսական ռևոլյուցիայի մեջ իրենց մարտական մասնակցությունն ունեցան նաև Հայաստանի աշխատավորները։ Հակառակ հայ շահագործող դասակարգերի և նրանց բուրժուա-նացիոնալիստական պարտիաների բոլոր ջանքերին՝ Հայաստանում խափանելու համառուսաստանյան ռևոլյուցիայի ալիքի ծավալումը, Հայաստանի բանվորներն ու գյուղացիները՝ բոլշևիկների ղեկավարությամբ՝ ռևոլյուցիոն ակտիվ պայքար մղեցին ցարական ինքնակալության, կալվածատերերի ու կապիտալիստների դեմ։

Արդեն XIX դարի վերջերից հայ աշխատավորները՝ ռուսական

բանվոր դասակարգի և նրա ավանգարդ ՌՍԴԲՊ-ի գլխավորությամբ սկսեցին մասնակցել այն հերոսական մեծ պայքարին, որի նպատակն էր ինքնակալական և կալվածատիրական դաժան կարգերի տապալումն ու նոր, դեմոկրատական հասարակարգի ստեղծումը։

Հայաստանի բանվորա-գյուղացիական մասսաները տնտեսական ու քաղաքական կյանքում տեղի ունեցած մի շարք օբյեկտիվ փոփոխությունների բերումով ստիպված էին դրել քաղաքական պայքարի մի կարևոր էտապ՝ ռուսական առաջին ռևոլյուցիայի էտապը, որը ռևոլյուցիոն-ազատագրական շարժման մեջ էր ընդգրկել ազատության կարոտ բոլոր ժողովուրդներին։

Այդ պայքարում հայ ժողովրդի ծոցից ելան Կոմունիստական պարտիայի մեծ դործին նվիրված այնպիսի անձնվեր ռևոլյուցիոներներ, ինչպիսիք էին Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Բ. Կնունյանցը, Մ. Մելիքյանցը և շատ ուրիշներ։

1905—1907 թվականների ռևոլյուցիան Անդրկովկասում և Հայաստանում ուսումնասիրելու համար օգտագործել ենք Վ. Ի. Լենինի և նրա դինակիցներ ու աշակերտներ Ի. Վ. Ստալինի, Ստ. Շահումյանի, Մ. Յեխակայայի, Ս. Սպանդարյանի և մյուսների հոդվածներն ու առանձին աշխատությունները, ինչպես նաև ՌՍԴԲՊ 3-րդ, 4-րդ 5-րդ համագումարների որոշումները, բանաձևերը և մյուս փաստաթղթերն ու նյութերը. օգտագործվել են նաև առաջին (Տամմերֆորսյան) կոնֆերենցիայի որոշումները։

Անդրկովկասում ռևոլյուցիոն շարժումների պատմությունը ուսումնասիրելու համար կարևոր նյութեր են պարունակվում ՌՍԴԲՊ Կովկասյան Միության 4-րդ կոնֆերենցիայի որոշումներում, որոնք տպագրվել են «Կավկազսկի ռաբոչի լիստոկ» թերթի էջերում 1905 թվականին։

Կենտրոնական մարզերում, ինչպես նաև ազգային շրջաններում ռուսական առաջին ռևոլյուցիայի պատմությունը ուսումնասիրելու համար հարուստ նյութեր են տալիս ժամանակակից մամուլը բոլշևիկյան թերթերը, կոչերն ու պրոկլամացիաները, որոնք հրատարակվում էին մեծ քանակությամբ կենտրոնական ու տեղական տպարաններում և մասսայաբար տարածվում աշխատավորության մեջ։

Մեծ քանակությամբ արժեքավոր նյութեր են պահվում կենտրոնական և տեղական արխիվներում, որոնց մեծ մասը դեռ ուսումնասիրության կարոտ է։ Այդ փաստաթղթերի զգալի մասը ցարական չինովնիկների հաղորդումներն ու զեկուցագրերն են երկ

բում ծավալվող ռևոլյուցիոն շարժումների, ինչպես նաև առանձին ռևոլյուցիոն գործիչների մասին։ Բացի այդ, ժանդարմերիայի և ոստիկանության գործերում պահվում է նաև մեծ քանակությամբ ռևոլյուցիոն անլեգալ գրականություն, որը ցարական չինովնիկները բռնագրավում էին ռևոլյուցիոն գործիչների խուզարկություններ և ձերբակալություններ ժամանակ կամ հավաքում էին ռևոլյուցիոն մասսաների փողոցային ցույցերի ու գործադուլների ժամանակ։

Արժեքավոր նյութեր են ներկայացնում նաև ժամանակակիցների, ինչպես նաև հին բոլշևիկների հուշերը և առհասարակ մեմուարային գրականությունը, որոնց մի զգալի մասը դեռևս հրապարակված չէ և պահվում է արխիվներում՝ ձեռագիր վիճակում։

Սովետական պատմական գիտությունը, ուշադիր ունենալով պարտիական փաստաթղթերն ու Վ. Ի. Լենինի աշխատությունները, փաստական բավականաչափ նյութեր է ուսումնասիրել և զգալի հաջողությունների հասել ռուսական առաջին ռևոլյուցիայի պատմության գիտական լուսաբանման գործում։ Այժմ այդ ռևոլյուցիայի 50-ամյակի կապակցությամբ մեր երկրի բանվոր դասակարգի և գյուղացիության պայքարի պատմության այդ հերոսական էպոխայի ուսումնասիրման ու նրա մարքսիստական լուսաբանման գործը մեծ թափ է ստացել։

Մեր նպատակն է ներկա աշխատության մեջ, ուշադիր ունենալով պարտիական որոշումները, փաստաթղթերն ու Վ. Ի. Լենինի, ինչպես նաև նրա զինակիցների ու աշակերտների աշխատությունները, տեղական պետական արխիվներից ու բոլշևիկյան մամուլից հավաքած նյութերի հիման վրա տալ 1905—1907 թվականներին Հայաստանի բանվորների ու գյուղացիների ռևոլյուցիոն պայքարի համառոտ ուրվագիծը։

Մենք խնդիր չենք դրել հայ ժողովրդի պատմության այդ կարևոր շրջանի հետ կապված բոլոր հարցերին ներկա աշխատության մեջ սպառիչ պատասխան տալու։ Մի շարք կարևոր պրոբլեմներ հեղինակը նշում է միայն հարևանցիորեն, կամ թե հարցադրման կարգով, նպատակ ունենալով հետագայում ավելի հանգամանորեն դրանց անդրադառնալու։

I. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

1. ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1861 թ. գյուղացիական ռեֆորմը և նրան հաջորդող մի շարք այլ միջոցառումներ ռուսական ինքնակալությունը բուրժուական մոնարխիայի փոխարկման առաջին քայլերն էին։

Բայց ձեռնարկած ռեֆորմները կիսատ-պռատ էին։ Ճորտատիրության պահպանվող մնացուկները խանգարում էին երկրի արագ զարգացմանը։

Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրների համեմատությամբ, կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում սկսվեց ավելի ուշ, բայց այն 1861 թ. գյուղացիական ռեֆորմից հետո, սկսեց բավական արագ առաջ ընթանալ։

Վ. Ի. Լենինը նշել է, որ 1861 թ. ռեֆորմից հետո «կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում ընթացավ այնպիսի արագությամբ, որ մի քանի տասնամյակներում կատարվեցին այնպիսի փոփոխումներ, որպիսիները եվրոպական մի քանի հին երկրներում, տևել էին ամբողջ հարյուրամյակներ»[1]։ Արդյունաբերության զարգացումը Ռուսաստանում XIX դարի 90-ական թվականներին արդեն զգալի հաջողությունների էր հասել։ 1865—1890 թթ., 25 տարվա ընթացքում բամբակ մշակող ֆաբրիկաների արտադրությունը ավելացավ 5 անգամ, քարածխի հանույթն ավելացավ 10 անգամ, չուգունի ձուլումը՝ 3 անգամ։ Բանվորների քանակը այդ նույն ժամանակամիջոցում ավելացավ համարյա 2 անգամ։

Եթե վերցնենք խոշոր արդյունաբերության այնպիսի կարևոր ճյուղեր, ինչպիսին չուգունի, երկաթի, պողպատի և նավթի արտա-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 17, էջ 132։

[1] Ем. Ярославский, Экономика и рабочее движение пореформенной России, 1941, стр. 25.

դրությունն է, ապա կտեսնենք, որ 1890—1899 թթ. չուգունի հալոցքը Ռուսաստանում ավելացել էր 221,8 տոկոսով, երկաթի և պողպատի արտադրությունը՝ 157,5 տոկոսով, քարածխինը՝ 272,2 տոկոսով, նավթինը՝ 179,2 տոկոսով։ Առանձնապես վերելք էր ապրում մետալուրգիան Հարավային Ռուսաստանում։ Այստեղ 1890—1900 թթ. չուգունի հալոցքը ավելացավ 692,6 տոկոսով, երկաթի և պողպատի արտադրությունը՝ 343,7 տոկոսով։ 1900 թ. Ռուսաստանը չուգունի արտադրության ընդհանուրում 7-րդ տեղից դարձավ 4-րդ տեղը աշխարհում։

Արդյունաբերության արագ զարգացումը պայմաններ էր ստեղծում նրա համակենտրոնացման՝ խոշոր արդյունաբերական կենտրոնների ստեղծման համար։ Այդ համակենտրոնացումը առանձնապես արագ տեղի էր ունենում լեռնարդյունաբերության մեջ։

Զգալի չափով աճում էր նաև բանվոր դասակարգը։ Գյուղի դասակարգային շերտավորման ուժեղացման հետ, ընչազուրկ գյուղացիների մի հսկա բանակ հոսում է դեպի արդյունաբերական կենտրոնները և լրացնում քաղաքային պրոլետարիատի շարքերը։ Եթե տասը տարվա ընթացքում՝ 1887—1897 թթ., գործարանների քանակը Ռուսաստանում աճել էր 26 տոկոսով, ապա այդ նույն ժամանակամիջոցում բանվորների քանակը ավելացել էր 59 տոկոսով։

Չնայած գործարանների և ֆաբրիկաների արագ աճին, այնուամենայնիվ, քաղաքներում միշտ էլ նկատվում էր բանվորական ուժի ավելցուկ։

Արդյունաբերական կապիտալի համակենտրոնացմանը զուգընթաց, տեղի էր ունենում նաև բանկային կապիտալի կենտրոնացում։ Հինգ տարվա ընթացքում, այն է՝ 1895—1899 թթ. խոշորագույն բանկերի ակցիոներական կապիտալը կրկնապատկվեց։ Այդ նույն ժամանակամիջոցում 8 խոշոր բանկեր ռեկորդային աճ ունեցան. նրանց ձեռքում կենտրոնացել էր ամբողջ երկրի ակցիոներական բանկային կապիտալի 56,3 տոկոսը։ Այդ բանկերը 1899 թ. իրենց ձեռքում կենտրոնացրել էին արդյունաբերության ֆինանսավորման ամբողջ գործառնության 72,4 տոկոսը։

Արդեն XIX դ. վերջին և XX դ. սկզբին բանկային կապիտալը բավական մեծ ազդեցություն է ձեռք բերում արդյունաբերության մեջ։ Արդյունաբերության բազմաթիվ ճյուղեր լիակատար կախման մեջ են ընկնում բանկային կապիտալից։

Արդյունաբերության համակենտրոնացումը աստիճանաբար պայմաններ է ընձեռում Ռուսաստանում խոշոր բանկերն ու բան-

կային միավորումները իրենց ձեռքը վերցնող մոնոպոլիստական միավորումներ ստեղծելու համար։ Սինդիկատները, իրենց ազդեցության տակ առնելով ամբողջ արդյունաբերությունը, բարձրացնում են ապրանքների գները։ 1902 թ. բանկերի ակտիվ աջակցությամբ առաջանում է մետալուրգիական սինդիկատը («Պրոդամետ»), որը միավորում է ավելի քան 30 խոշոր ձեռնարկություններ, իր ձեռքում կենտրոնացնելով մետաղարդյունաբերության ավելի քան 80 տոկոսը։ 1902 թ. հիմնադրվում է նաև «Տրուբո-պրոդաժա» սինդիկատը, որը տնօրինում էր մետաղի խողովակների սպառման մոտ 100 տոկոսը։ 1903—1904 թթ. հիմնադրվում են հայելու և ցեմենտի սինդիկատները, «Պրոդվագոն», «Գվոզդ» և ուրիշները։ Չնայած նրան, որ «Պրոդուգոլ», ինչպես նաև մի շարք ուրիշ խոշոր սինդիկատներ կազմակերպվեցին ավելի ուշ, 1905 թ. ռևոլյուցիայից հետո, բայց և այնպես նրանց կազմակերպման նախադրյալները առկա էին նախառևոլյուցիոն շրջանում։

Այսպիսով, XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին Ռուսական կապիտալիզմը մտնում է իր զարգացման իմպերիալիստական փուլը։

Չնայած կապիտալիզմի արագ զարգացմանը, XX դարի սկզբին Ռուսաստանը դեռևս շարունակում էր տնտեսապես ետ մնալ մի շարք կապիտալիստական երկրներից։ Ժողովրդական տնտեսության մեջ արդյունաբերության տեսակարար կշիռը դեռևս բավական ցածր էր։ Ռուսաստանը ընդհանուր առմամբ մնում էր տեխնիկապես և տնտեսապես հետամնաց ագրարային երկիր։

Պետք է նշել, սակայն, որ Ռուսաստանի արդյունաբերական ձեռնարկություններում բանվորների համակենտրոնացումը ավելի բարձր էր, քան Գերմանիայում և ԱՄՆ-ում։ Եթե Ռուսաստանում ամեն 100 բանվորից 62-ը աշխատում էր խոշոր արդյունաբերության ձեռնարկություններում, ապա Գերմանիայում այդ թիվը հասնում էր միայն 57-ի։

Ի. Վ. Ստալինը նշում է, որ Ռուսաստանում 1905 թ. ռևոլյուցիայի նախօրյակին 500 բանվոր ունեցող ձեռնարկություններում աշխատում էր ամբողջ բանվորության 54 տոկոսը, մինչդեռ այնպիսի կապիտալիստական զարգացած երկրում, ինչպիսին Հյուսիսային Ամերիկան էր, նման տիպի ձեռնարկություններում աշխատում էր ամբողջ բանվորության միայն 33 տոկոսը [1]։

---

[1] Տես Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 6, էջ 147-148։

Սակայն Ռուսաստանի յուրահատկությունը նրանում էր, որ երկրում մեծ չափով դեռևս պահպանվում էին նախակապիտալիստական հարաբերությունների բազմաթիվ ձևերը (ռազմա-ֆեոդալական ճնշման ձևերը, ճորտատիրական, հարաբերությունների մնացուկները և այլն)։ Այդ իսկ պատճառով Վ. Ի. Լենինը Ռուսական յարիզմը բնորոշում է որպես ռազմա-ֆեոդալական իմպերիալիզմ։

Տնտեսական հետամնացությունը առավել չափով աչքի էր ընկնում Ռուսաստանի ազգային շրջաններում ու ծայրամասերում։

Ցարական Ռուսաստանի հատկանշական կողմերից մեկը XIX դ. վերջին և XX դ. սկզբին նրա՝ դնալով ուժեղացող կախումն էր արևմտաեվրոպական իմպերիալիզմից։

XIX դ. 80-ական թվականների առաջին խոշոր տնտեսական ճգնաժամը և ապա 1891 թ. համառուսաստանյան սովը, երկրում ստեղծեցին բավականին ծանր դրություն։ Ցարիզմը մի շարք միջոցներ է ձեռնարկում արտասահմանյան կապիտալի օգնությամբ ստեղծված ծանր դրությունից դուրս գալու համար։

Ռուսաստանի հարուստ հանքավայրերն ու երկրի անչափ հարստությունները, ինչպես նաև էժան բանվորական ուժը, եկամտի հսկայական աղբյուրներ են բացում արտասահմանյան կապիտալիստների համար, որոնք մեծ եռանդով ներթափանցում են Ռուսաստանի խորքերը՝ շահույթի բարձր նորմաներ կորզելու նպատակով։ Ավելի ուժեղ դառնալով, արտասահմանյան կապիտալը Ռուսաստանի ժողովրդական տնտեսության մեջ սկսում է բավական աղդեցիկ տեղ գրավել։ Արդեն 1900 թ. արտասահմանյան կապիտալիստների ձեռքում էր կենտրոնացել լեռնարդյունաբերական ձեռնարկությունների ակցիաների 87,7 տոկոսը, մետաղամշակման և մեքենաշինական ձեռնարկությունների ակցիաների 48,9 տոկոսը, հանքային նյութերի մշակման ձեռնարկությունների ակցիաների 52,9 տոկոսը և այլն։ Եթե 1870 թ. ռուսական ակցիոներական ընկերություններում արտասահմանյան կապիտալը կազմում էր 26,5 միլ. ռուբլի, ապա 1890 թ. այդ գումարը հասավ 214,7 միլ. ռուբլու. իսկ 1900 թ. մոտ 911 միլ. ռուբլու։ Ռուսաստանից արտասահման արտահանված ակցիոներական կապիտալից ձեռք բերած շահույթը (հաշված շահույթի միջին նորմայով) 10 տարվա (1895—1904) ընթացքում կազմել է 831,8 միլիոն ռուբլի։

Արտասահմանյան կապիտալը ներխուժում էր ոչ միայն ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերը, այլև իր աղդեցու-

թյան տակ էր առնում կառավարող շրջաններն ու ցարական արքունիքը։ Արտասահմանյան բանկերին ունեցած ցարական արքունիքի պարտքերը մեծ չափերի էին հասնում։ XX դ. սկզբին ցարական արքունիքի վերցրած փոխառությունների համար վճարած տոկոսները միայն հավասար էին 100 միլիոն ռուբլու։ Փոխառությունների մեծ մասը տալիս էին ֆրանսիական կապիտալիստները, որի շնորհիվ նրանք մեծ ազդեցություն էին ձեռք բերել Ռուսաստանի ներքին և արտաքին քաղաքականության հարցերում։

Ռուսական բանկերից շատերը աստիճանաբար կորցրել էին իրենց ինքնուրույն դերը և դարձել արտասահմանյան բանկերի բաժինները կամ ուղղակի նրանց կցորդը։

Ռուսական ցարիզմի նման քաղաքականությունը հասցնում էր այն բանին, որ Ռուսաստանի տնտեսական ու քաղաքական կյանքում գնալով ավելի էր ուժեղանում օտարերկրյա իմպերիալիստների ազդեցությունը։ Նրանք դիտավորյալ կերպով խանգարում էին տեղական արդյունաբերության կարևոր ճյուղերի զարգացումը. ինչպես, օրինակ՝ մեքենաշինությունը, որպեսզի Ռուսաստանը միշտ կախման մեջ պահեն և դարձնեն միայն հումք մատակարարող երկիր։ 1903 թ. ռուսական էքսպորտի միայն 3,6 տոկոսն էր արդյունաբերական արտադրանք, իսկ մնացածը հումք և այլ տեսակի կիսաֆաբրիկատներ էին։

Ցարիզմը իր վաճառված բյուրոկրատիայով ամեն կերպ ընդառաջում էր օտարերկրյա կապիտալին՝ անարգել կողոպտելու երկրի հարստությունը և շահագործելու տեղական աշխատավորներին։ Շատ անգամ օտարերկրյա կապիտալիստները իրենց ձեռնարկումներին մասնակից էին անում նաև տեղական շահագործողներին, հաշվի առնելով, որ նրանց օգնությամբ հնարավոր կլինի ավելի շատ շահույթ կորզել և տեղական աշխատավորությանը անարգել շահագործել։

* * *

Հետևաբար այն շրջանում կապիտալիզմի զարգացումը արագանում է նաև Անդրկովկասում։ Դրան զգալի չափով նպաստում էր նաև Վոլգա—Կասպիական ջրային ճանապարհը, որի վրայով ռուսական կապիտալը Հյուսիսային Իրանում սկսում է հաջող կերպով մրցման մեջ մտնել անգլիական կապիտալի հետ։

Բաքուն իր արդյունաբերությամբ հանդերձ՝ միաժամանակ շատ հարմար նավահանգիստ էր, որի վրայով կատարվում էր ռուսական

առևտուրը Անդրկովկասի և Իրանի հետ։ Հենց այդ նպատակով էլ 1858 թ. կազմակերպվեցին «Կովկաս» և «Կասպիական ընկերություն» ակցիոներական ընկերությունները, որոնք շոգենավային սիստեմատիկ երթևեկություն ստեղծեցին Վոլգայի, Կասպից ծովի և Բուռ գետի վրայով (Կասպից ծովից Բուռ գետի վրայով մինչև Մինգեչաուր, իսկ որոշ դեպքերում էլ մինչև Սամովս)։

Արդյունաբերության զարգացման, տնտեսական և առևտրական կապերի ընդլայնման հետևանքով ռուսական արդյունաբերական ապրանքները ողողում են Անդրկովկասը. դրա հետևանքով հին տնայնագործական արտադրությունը, որը նախկինում բավական զարգացած էր Անդրկովկասում, սկսում է անկում ապրել։ Ֆաբրիկա-գործարանային ապրանքները, որոնք ավելի որակավոր էին և մատչելի, արագ կերպով շուկայից դուրս են մղում տնայնագործական արտադրության ապրանքները։

Երբեմնի հայտնի կովկասյան մետաքսի գործվածքները աստիճանաբար կորցնում են իրենց արդյունաբերական նշանակությունը։

Անդրկովկասում կապիտալիզմի զարգացման համար խոշոր նշանակություն է ունենում Ռուսաստանի հարավում զարգացող արդյունաբերական կապիտալիզմը։ Այդ մասին ուշադրավ է Վ. Ի. Լենինի դիտողությունը. «Հետեւեֆորմյան դարաշրջանում,— գրում է Վ. Ի. Լենինը,— մի կողմից Կովկասը սաստիկ դաղութացման էր ենթարկվում, դաղութականները մեծ չափերով հերկում էին հողերը (առանձնապես Հյուսիսային Կովկասում), արտադրելով վաճառքի համար ցորեն, ծխախոտ և այլն ու մեծ թվով գյուղական վարձու բանվորներ գրավելով Ռուսաստանից։ Մյուս կողմից տեղի էր ունենում ընիկ գարավոր «տնայնագործական» արհեստագործությունների արտամղումը, որոնք Մոսկվայից ներմուծվող ֆաբրիկատների մրցման հետևանքով ընկնում էին... Այսպիսով ռուսական կապիտալիզմը Կովկասը ներգրավում էր համաշխարհային ապրանքային շրջանառության մեջ, համահարթում էր հինավուրց նահապետական ինքնամփոփվածության մնացորդ հանդիսացող նրա տեղական առանձնահատկությունները, իր գործարանների համար շուկա էր ստեղծում»[1]։

Անդրկովկասում կապիտալիզմի զարգացման համար խոշոր նշանակություն ունեցավ նավթային արդյունաբերությունը։ Բաքվի նավթային արդյունաբերությունը առանձնապես սկսեց զարգանալ

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3, էջ 770—771։

1872 թ. հետո, երբ վերացվեց վարձակալական կարգը նավթային արդյունաբերության մեջ։ Արդեն 1873 թ. Բաքվում գործում էին 23 նավթամշակման գործարաններ՝ 80 հազար տոննա արտադրողականությամբ։ Բաքվի նավթը իր որակով շատ բարձր էր և կարճ ժամանակում առաջնակարգ տեղ գրավեց ներքին և արտաքին շուկայում[1]։

Եթե գործող նավթահորերի թիվը 1875 թ. 35 էր, ապա 1900 թ. այն հասավ 1710-ի, եթե հորերի միջին խորությունը 1873 թ. կազմում էր 47 մետր, ապա 1900 թ. այն հասնում էր 296 մետրի[2]։

1873 թ. կազմակերպվեց «Ապշերոնյան երկաթուղագծի կոմպանիա» ակցիոներական ընկերությունը, որը սկսեց կառուցել Բաքու—Բալախանի երկաթուղին։ Երկաթուղու կառուցումը ավարտվեց 1879 թ. վերջերին։ Բացի այդ, խոշոր նավթարդյունաբերողները նավթահորերից մինչև Բաքու կառուցեցին նավթամուղ խողովակներ, որոնց թիվը 1896 թ. հասնում էր 26-ի, 288 կիլոմետր ընդհանուր երկարությամբ։

Նավթի արտադրությունը Բաքվում 1865 թ. 557 հազար փթից 1901 թ. հասավ 671 միլիոն փթի, որը ամբողջ աշխարհում արտադրվող նավթի 50 տոկոսն էր կազմում։ 1900 թ. գործում էին 146 նավթարտադրող ֆիրմաներ (1873 թ. 12 փոխարեն), որոնցից ամենախոշորը Նոբել եղբայրների ֆիրման էր։ Այդ ֆիրման 1901 թ. տալիս էր ամբողջ նավթի արտադրության 12 տոկոսը։ Նրանից հետո կարևոր դեր էր կատարում Մանթաշևի ֆիրման, որը տալիս էր նավթի արտադրության 9 տոկոսը[3]։

XIX դ. վերջին և XX դ. սկզբին տեղի է ունենում նավթային արդյունաբերության համակենտրոնացում։ 1900 թ. 146 ֆիրմայից 6-ը փաստորեն տալիս էին նավթային արտադրանքի 40 տոկոսը, բացի այդ նրանց մոտ էր կենտրոնացած նաև ամբողջ բանվորության 40 տոկոսը։ 1901 թ. Ռուսաստանի նավթի էքսպորտի 70 տոկոսը տալիս էին Նոբելի, Կասպիական Սևծովյան ընկերության և Մանթաշևի ֆիրմաները[4]։

Անդրկովկասի տնտեսական կյանքում արտասահմանյան կապիտալը գնալով գերիշխող դեր է կատարում։

---

[1] Տես А. К. Пожитнов, Очерки по истории бакинской нефтедобывающей промышленности, Москва, 1940.

[2] Նույն տեղում, էջ 85։

[3] Նույն տեղում, էջ 76։

[4] Նույն տեղում, էջ 118։

921—2

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ
A 32946

Առանձնապես այդ աչքի է ընկնում նավթային արդյունաբերության մեջ։ Այստեղ արտասահմանյան կապիտալիստները, Նոբելի և մյուսների ֆիրմաները, ներդրեցին 47 միլիոն ռուբլի։ Դեռևս XIX դ. 90-ական թվականներին Նոբելի ֆիրմաները սկսեցին ձևավորվել որպես սինդիկատ, որը գլխավորվում էր Ռոտշիլդի կողմից, (վերջինս կապված էր ֆրանսիական կապիտալի հետ)։ Անցյալ դարի 90-ական թվականներից անգլիացիները հայտնի կապիտալիստ Վիշաուի և մյուսների միջոցով Բաքվի 6 ֆիրմաներից գնեցին 12.256.000 ռուբլու նավթահորեր և նավթաթորման գործարաններ։

Հանդես են գալիս նաև տեղական՝ ադրբեջանական և հայկական բուրժուազիայի ներկայացուցիչները, ինչպես, օրինակ՝ հայտնի միլիոնատեր Բաղիևը, Ասադուլլաևը (ադրբեջանցիներ), Միրզոևը, Ծատուրովը, Մանթաշևը, Մելիքովը (հայեր) և ուրիշները։

Տեղական արդյունաբերական բուրժուազիան գտնվում էր արտասահմանյան կապիտալի ազդեցության տակ։

Արագ կերպով է աճում նաև բանվոր դասակարգը Բաքվի նավթային արդյունաբերության մեջ, որը 1879 թ. 1800 մարդուց 1904 թ. հասնում է 61 հազարի[1]։

Բաքվի ամբողջ բնակչության թիվը 1863 թվականին 14 հազարից 1904 թ. հասնում է 222.412 մարդու[2]։

Բաքվի նավթային արդյունաբերության զարգացումը մեծ քանակությամբ բանվորական ուժ էր պահանջում։ Տնտեսապես քայքայված և հողազուրկ գյուղացիությունը հոսում էր դեպի «Կապիտալի աշխարհը»՝ Բաքուն, օրվա հաց վաստակելու համար։ Այստեղ էին գալիս ժամանակավոր կամ մշտական աշխատանքի համարյա բոլոր ազգերի ներկայացուցիչները՝ ռուսներ, ադրբեջանցիներ, հայեր, վրացիներ, պարսիկներ և ուրիշները։ Այստեղ, XX դարի արշալույսին Բաքվի պրոլետարիատը իր ինտերնացիոնալ կազմով հանդես է գալիս որպես ռևոլյուցիոն խոշոր ուժ։

Հայաստանի ամենահեռավոր մասերից նույնիսկ այստեղ աշխատանքի էին գալիս։ 1904 թ. Բաքվի հայ բնակչության ընդհանուր թիվը 51340 շունչ[3] էր, իսկ բանվորների մոտ 27 տոկոսը հայեր

---

[1] Տես Симанович, Нефть и нефтяная промышленность в России. СПБ, 1909. стр. 184, „Бакинская стачка 1904 года", сб. док. Госполитиздат, 1940, стр. 6—7.

[2] Տես „Кавказский календарь" 1907, отд II, стр. 320.

[3] Նույն տեղում։

էին։ Բանվորական այդ մասսայի մեծ մասը մնում է Բաքվում մըշտական աշխատանքի, ոմանք էլ ամառվա ամիսներին գնում էին գյուղ՝ իրենց տնտեսության մեջ աշխատելու։

XIX դարի վերջերից կապիտալիստական հարաբերությունները զարգանում են նաև Հայաստանում։

«Եվրոպական կապիտալիզմը, որ տիրապետող արդյունադործական եղանակ էր դարձել Ռուսաստանում,— գրում է Ստ. Շահումյանը,— վերջին տասնամյակների ընթացքում, մուտք գործեց մեր երկիրը և դրեց իր ուժեղ և ուրույն դրոշմը հայկական իրականության վրա»[1]։

Սակայն Հայաստանում արդյունաբերական կապիտալիզմը ընդհանուր առմամբ թույլ էր զարգացած։ Հայկական խոշոր բուրժուազիայի և հայ պրոլետարիատի գերակշռող մասը գտնվում էր Անդրկովկասի արդյունաբերական մեծ քաղաքներում՝ Բաքվում, Թիֆլիսում, Բաթումում։

Այդ պրոլետարիատն անշուշտ բազմաթիվ թելերով կապված էր Հայաստանի հետ, որտեղից նա հիմնականում գուրս էր եկել։

Կապիտալիզմի զարգացումը XIX դ. երկրորդ կեսում Ռուսաստանում տեղի է ունենում տնտեսության բոլոր բնագավառներում։ Զարգացող կապիտալիզմի տնտեսական շահերը պահանջում էին երկրում ունենալ արագ և լավ աշխատող հաղորդակցության միջոցներ։ Հատկապես արդյունաբերական շրջաններում ծովային և գետային հաղորդակցության բոլոր միջոցների ստեղծումը մեծ թափ է ստանում։

Թե ինչպիսի արագ տեմպերով է զարգանում երկաթուղային շինարարությունը, ցույց են տալիս հետևյալ թվերը. եթե 1861 թ. ռեֆորմի ժամանակ Ռուսաստանում կառուցվել էր ընդամենը 1488 վերստ երկաթգիծ, ապա 1900-ական թվականներին այդ թիվը հասնում է 41714 վերստի։

Մի շարք արդյունաբերական շրջաններ միացվեցին երկաթուղագծերով. այսպես՝ Կրիվոյռոգը միացավ Դոնբասի հետ, Հարավային Ուրալի արդյունաբերական շրջանը՝ Ռուսաստանի ներքին նահանգների հետ և այլն։ Այդ բոլորը XIX դ. վերջում նպաստավոր պայմաններ են ստեղծում ծանր արդյունաբերության արագ զարգացման համար։ Առաջացան այնպիսի խոշոր կապիտալիստական արդյունաբերական ռայոններ, ինչպիսիք էին Դոնբասն ու Բաքուն։

---

[1] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, 1948, էջ 79։

Կապիտալիզմի զարգացումն արագացնելու տեսակետից խոշոր նշանակություն ունեցավ կատարելագործված հաղորդակցության ճանապարհների ստեղծումը նաև Անդրկովկասում։ Հաղորդակցության ճանապարհների ստեղծումը անհրաժեշտ էր Անդրկովկասը Ռուսաստանի հետ կապելու, ինչպես նաև Անդրկովկասի տարբեր շրջանների միջև տնտեսական կապը ուժեղացնելու համար։

Դասեր առնելով 1853—1856 թթ. Ղրիմի պատերազմից, Ռուսաստանը ամեն կերպ ձգտում էր երկրի ծայրամասային շրջանները հեռագրային կապով, ստրատեգիական նշանակություն ունեցող երկաթուղագծերով և ցամաքային ու ջրային ճանապարհներով կապել երկրի կենտրոնի հետ։

1857—1861 թթ. լիովին վերակառուցվեց ռազմավիրական ճանապարհը, որով սիստեմատիկ երթևեկություն հաստատվեց Թիֆլիսից մինչև Ռոստով։ 1860—1862 թթ. Անդրկովկասը հեռագրային կապով միանում է կենտրոնական Ռուսաստանի հետ։

1857 թ. շոգենավերի արագընթաց նավագնացություն սկսվեց Օդեսայի, Յալթայի, Կերչի, Ռեդուտ—Կալայի և Տրապիզոնի միջև։

1858 թ. բացվեց Փոթի նավահանգիստը և նավարկություն սկսվեց նաև Ռիոն գետի վրայով։

1857—1858 թթ. կազմակերպվեց կանոնավոր շոգենավային հաղորդակցություն Կասպից ծովի և Քուռ գետի վրայով (այդ գործը կոնցեսիայով տրվեց «Կովկաս» և «Կասպիական ընկերությանը») և բացվեց Պետրովսկ (Մախաչ-Կալա) նավահանգիստը, Աստրախանի և Վոլգայի վրայով մեծ քանակությամբ ապրանքներ էին տեղափոխվում Անդրկովկաս և Իրան։

Սակայն գնալով հրատապ պահանջ էր դառնում Անդրկովկասյան երկաթուղու կառուցումը։ Այն սկսվեց կառուցվել 1865 թ.։ Առաջին անգամ 1872 թ. Անդրկովկասում բացվեց մարդատար գնացքների երթևեկություն՝ Թիֆլիսը և Փոթին միացնող երկաթգծով։ 1883 թ. ավարտվեց երկաթուղու կառուցումը Սամտրեդի կայարանից մինչև Բաթում և նույն թվականին ավարտվեց Թիֆլիս—Բաքու գիծը։ Հետագա տարիներին Վլադիկավկազը միացվեց Պետրովսկի հետ, որտեղից էլ շարունակվեց մինչև Բաքու։ Մյուս կողմից Սև ծովի ափին երկաթուղագիծը հասավ կարևոր նավահանգիստ Նովորոսիյսկը։ Բացի այդ, հարավում երկաթուղագիծը շարունակվեց տարածվել դեպի Բյուրքիայի և Իրանի սահմանները։

Հայաստանը իրականում ցարիզմի «հետամնաց դաղութն էր»,

նրա հեռավոր խուլ անկյուններից մեկը։ Այստեղ երկաթուղագծի կառուցումը սկսվեց ավելի ուշ՝ XIX դ. 90-ական թվականներին։

1899 թ. դրվեց Թիֆլիս—Ալեքսանդրապոլ—Կարս երկաթուղագիծը, 1903 թ. Ալեքսանդրապոլ—Երևան գիծը, իսկ Ջուլֆան Երևանի հետ միացվեց միայն 1908 թ.։ Հիշյալ երկաթուղագծերի կառուցումը հիմնականում հետապնդում էր ստրատեգիական նպատակ, այդ պատճառով էլ տնտեսական խոշոր նշանակություն ունեցող և համեմատաբար խիտ բնակված շրջանները (Ստեփանավան, Դիլիջան և ուրիշները) մնում էին երկաթգծից դուրս։ Սակայն անկախ այդ հանգամանքից, երկաթուղագծի կառուցումը Հայաստանում խոշոր նշանակություն ունեցավ երկրի տնտեսական ու կուլտուրական կյանքում։ Կառուցվեցին բազմաթիվ խճուղիներ և այլ ճանապարհներ, որոնք Հայաստանի բազմաթիվ շրջաններն ու գյուղերը միացնում էին երկաթուղային կայարանների հետ։

Անդրկովկասում ստեղծվեցին ռազմական նշանակություն ունեցող բազմաթիվ ընակակետեր, ամրություններ և այլն, որոնք խճուղիներով միանում էին կենտրոնական մարիստրալների հետ [1]։

Տրանսպորտի ընդլայնումը հնարավորություն տվեց նախկինում իրարից կտրված առանձին տնտեսական շրջաններ իրար հետ կապել։ Այդ հանգամանքը նպաստեց Անդրկովկասում ապրանքափոխանակման ու առևտրի արագ զարգացմանը։ Այս ամենը արագացնում էր ֆեոդալական սահմանափակ տնտեսության քայքայումը և կապիտալիստական հարաբերությունների զարգացումը Անդրկովկասում։

Անհրաժեշտ է նշել, որ ամբողջ ճանապարհաշինարարությունը տարվում էր գյուղացիների շարքաշ աշխատանքով։

Բացարձակապես գյուղացիների աշխատանքով կառուցվեց, օրինակ, Գորիսը Շուշի քաղաքի հետ միացնող ճանապարհը։ Կառավարության կողմից ոչ մի աջակցություն ցույց չէր տրվում։ Գյուղացիները աշխատում էին չափազանց ծանր պայմաններում։ Միայն 1870 թ. ընթացքում նրանք այդ ճանապարհի վրա ծախսել էին 37,500 աշխատանքային օր [2]։

Ստեղծվեց հաղորդակցության միջոցների մի ամբողջ ցանց, որ միավորվում ու ձգվում էր դեպի կարևոր կայարաններն ու քաղաքները։ Զանգեզուրը Նվլախի վրայով կապվում էր Բաքվի հետ, Դի-

---

[1] Տես Чернявский, Кавказ в течение 25 летнего царствования Александра II, СПБ, 1898, стр. 43.

[2] Տես Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 416, օպ. 3, դ. 775։

միջանը և հարակից շրջանները՝ Աղստաֆայի հետ, իսկ Հայաստանի հարավ-արևմտյան շրջանները՝ Թիֆլիս—Ալեքսանդրապոլ—Երևան Ալեքսանդրապոլ—Կարս երկաթգծով միմյանց հետ։

Երկաթուղու կառուցումը, ելնելով կապիտալիստական հարաբերությունների զարգացման անհրաժեշտությունից, իր հերթին մեծ չափով նպաստում էր այդ հարաբերությունների զարգացմանը։ Երկաթգծի ամբողջ ուղղությամբ սկսում է ուժեղանալ գյուղական տնտեսությունների ապրանքայնությունը։ Գյուղացին կարիքից ստիպված իր աշխատանքի արդյունքը վաճառքի է հանում կայարաններում։ Կիրակի և առանձին տոն օրերին խոշոր կայարաններում կազմակերպվում են տոնավաճառներ, որոնց մասնակցելու են գալիս անգամ Հայաստանի հեռավոր գյուղերից։

Երկաթուղու կառուցումը աշխատավորության տեղաշարժի պայքարի տեսակետից ևս կարևոր նշանակություն ունեցավ։ Բավական է նշել, որ Հայաստանում առաջին բանվորական ելույթներն ու գործադուլներն սկսեցին դեռևս XIX դ. վերջին տասնամյակի կեսերին երկաթուղագիծ կառուցող բանվորները։

Երկաթուղագծի կառուցման հետ, ստեղծվեց երկաթուղային բանվորների մի սովոր բանակ, որ աշխատում էր դեպոյների վրա, ինչպես նաև կայարաններում, վերանորոգման արհեստանոցներում, պահեստներում և այլն։ Իրենց ռևոլյուցիոն տրադիցիաներով առանձնապես աչքի են ընկել Սանահինի, Ալեքսանդրապոլի, և Կարսի երկաթուղայինները։

* * *

Կապիտալիզմի զարգացումը ավելի և ավելի վատթարացնում էր բանվոր դասակարգի դրությունը։

Բանվորների աշխատանքային պայմանները, ինչպես նաև նրանց նյութական ու կենցաղային վիճակը շատ ծանր էր Ռուսաստանում։

Ամբողջ Ռուսաստանում յուրաքանչյուր բանվորի աշխատանքի միջին տևողությունը 12 ժամից պակաս չի եղել, իսկ տեքստիլ արդյունաբերության մեջ այն կազմում էր 13—14 ժամ։ Փաստեր կան, որ առանձին դեպքերում, աշխատանքի լարված ժամանակներում բանվորական օրը հասնում էր չտեսնված չափերի՝ 21½ ժամի։ Սովորական երևույթ էր գիշերային աշխատանքը. այն հաճախ տևում էր 12 ժամ։

Բանվորները ապրում էին սոսկալի ծանր պայմաններում, գետնափոր տնակներում և նկուղներում. նրանք չէին ստանում որևէ բժշկական օգնություն։ Աշխատունակությունը կորցրած բանվորներին, հաշմանդամներին կապիտալիստները փողոց էին շպրտում և նրանց փոխարեն ընդունում նորերին։

Սոսկալի ծանր էր կանանց և երեխաների աշխատանքային պայմանները։ Երեխաները աշխատել էին սկսում 10—14 տարեկան հասակից։ Նրանք ստանում էին տղամարդ բանվորի աշխատավարձի մեկ երրորդ մասը, իսկ կանայք՝ երկու երրորդ մասը։

Գործադուլային շարժման հետևանքով 1882 և 1885 թվականներին բանվորների իրավունքները պաշտպանելու մասին ընդունված օրենքները մնում էին որպես դատարկ թղթի կտորներ և ոտնահարվում էին գործարանատերերի կողմից։ Դատական և ադմինիստրատիվ օրգանները պաշտպանում էին վերջինների շահերը։

Բանվորներին տուգանելու դեպքերի մասին կապիտալիստները ամենայն մանրամասնությամբ օրենքներ էին մշակում և նշում բանվորների հետ կնքած պայմանագրերում։ Պատահում էր այնպես, որ բանվորի ամբողջ աշխատավարձը որպես տուգանք հետ էին պահում։ Տուգանում էին աշխատանքից ուշանալու, գործարանում բարձր խոսելու, սուլելու, ծխելու, բակ դուրս գալու, կառավարչին կոպտելու և բազմաթիվ այլ առիթներով[1]։ Հայտնի ֆաբրիկանտ Սավա Մորոզովը տարեկան մոտ 20 հազար ռուբլի եկամուտ էր ստանում միայն տուգանքներից։

Բաքվի բանվորների դրությունը անչափ ծանր էր։ Աշխատանքը նավթահանքերում օրվա մեջ հասնում էր 12—14 ժամի, իսկ շատ դեպքերում, երբ նավթային շատրվան էր խփում, աշխատանքային օրը տևում էր մինչև 18 ժամ։ Բանվորները աշխատում էին առանց հանգստի օր ունենալու. աշխատում էին նաև տոն օրերին։ Տարվա ընթացքում բանվորների աշխատանքային օրերը հասնում էին 360-ի։ Նավթահորերում բանվորների աշխատանքը անչափ ծանր էր, և ֆիզիկապես լարված։ 1899 թ. կատարած հետազոտությունը ցույց է տալիս, որ բանվորները միջին հաշվով ապրում էին 26 տարի և միայն նրանց 6,4 տոկոսն էր 40 տարուց ավելի ապրում[2]։

Աշխատանքի ծանր պայմանների հետևանքով նավթային ար-

---

[1] Տես А. Рябинин, Из Истории рабочего движения в Иваново-Вознесенском промышленном районе, журнал „Минувшие годы", № 5–6, 1908, стр. 465.

[2] Տես Պաժիտնով, Նշված աշխատ., էջ 98։

դյունաբերության մեջ աշխատող բանվորների մահացությունը բավական բարձր էր։ 1900 թ. տվյալներով նթե Ռուսաստանի ամբողջ լեռնագործարանային արդյունաբերության մեջ դժբախտ պատահարների հետևանքով 100 բանվորից մահանում էր 0,09 տոկոսը, իսկ ծանր և թեթև վիրավորների թիվը՝ 11,1 տոկոս, ապա Բաքվի նավթային արդյունաբերության մեջ մահացողների թիվը կազմում էր 0,21 տոկոս, իսկ վիրավորների թիվը՝ 17,7 տոկոս[1]։

Բանվորների ամսական միջին աշխատավարձը նավթարդյունաբերության մեջ կազմում էր 19—22 ռուբլի. նրանք ապրում էին կեղտոտ, խոնավ ու մութ նկուղներում և ընդհանուր սրահներում։

1903 թ. «Искра» թերթը, նկարագրելով Բաքվի բանվորների ծանր դրությունը նշում է, թե ինչպես հաշմանդամ դարձած անօգնական բանվորները տերերի կողմից փողոց են շպրտվում, որոնք սովամահությունից փրկվելու համար մուրացկանության են դիմում։ Շատով ոստիկանությունը այդ խեղճ արարածներին էտապային կարգով քշում է իրենց ծննդավայրերը։ Բայց այստեղ ուտելիք չգտնելով, այդ հաշմանդամները նորից վերադառնում են քաղաք և իրենց կյանքը դարձյալ քարշ տալիս բանտերում ու էտապային խմբերում[2]։

Դիտակցելով իրենց շահերը, բանվորները ծանր դրությունից դուրս գալու համար աստիճանաբար սկսում են միավորվել և պայքարել ճնշողների դեմ։ Դեռևս անցյալ դարի 70—80-ական թվականներին Բաքվի բանվորները գործադուլներ են կազմակերպում։ Բանվորների այդ առաջին ելույթները սակայն ծագում էին ինքնաբերաբար և անկազմակերպ. դրանք կրում էին պատահական բնույթ և դատնվում էին քաղաքականապես ցածր մակարդակի վրա։ Բանվորները այն ժամանակ հիմնականում տնտեսական պահանջ էին առաջադրում, նրանք դեռևս խորը կերպով չէին գիտակցում քաղաքական ազատության հասնելու, քաղաքական պայքարի կարևոր նշանակությունը։

Հայաստանում կապիտալիզմի զարգացման և բանվոր դասակարգի ձևավորման համար կարևոր նշանակություն ունեցավ պղնձի արդյունաբերության ընդլայնումը Ալավերդում, Շամլուղում և Զանգեզուրում։

Ալավերդու շրջանի պղնձահանքերն ու պղնձաձուլական ար-

---

[1] Տես Պաժիտնով, Նշված աշխատ., էջ 101։

[2] Տես „Искра", 1903, № 47.

դյունաբերությունը սկզբում գտնվում էին ֆրանսիական մոնոպոլիստների ձեռքին։ 1899 թ. այդ հանքերն ու գործարանները վարձակալության տրվեցին Կովկասյան մետալուրգիական և արդյունաբերական ընկերությանը (ֆրանսիական կապիտալ)։

Զանգեզուրի հանքերը գտնվում էին առանձին կապիտալիստների շահագործման տակ (Մելիք—Ազարյանց, Լազարև և ուրիշներ)։ Հայտնի կապիտալիստ Մելիք-Ազարյանցը 1897 թ. կառուցեց նոր պղնձաձուլական գործարան։ Այստեղ գործարաններ կառուցեցին նաև Մելիք-Փարսադանյանը, եղբայրներ Կունդուրովները և ուրիշները[1]։ 1898 թ. Զանգեզուրի գավառի գործարանները ձուլեցին ավելի քան 650 տոննա պղինձ։ Բացի այդ, օգտագործվում էին նաև Դիլիջանի և Ալեքսանդրապոլի (Սիսիմանդի) շրջանի պղնձահանքերը, որտեղից 1898 թ. ստացվել է մինչև 350 տոննա պղնձահանք և ձուլվել է 11 տոննա պղինձ։ 1900—1906 թթ. պղնձի արտադրությունը ավելացավ երկու անգամ և տարեկան արտադրությունը հասավ ավելի քան 140 հազ. փութի։ Միայն Ալավերդին 1903 թ. տալիս էր 75,4 հազ. փութ պղինձ[2]։

Պղնձարդյունաբերության մեջ աշխատում էին բավականաչափ բանվորներ, որոնց մի զգալի մասը աշխատանքի էր գալիս շրջակա գյուղերից և իր կապը չէր կտրում գյուղից։

Ելիսավետպոլի (այժմ Կիրովաբադ) նահանգի Գետաբեկի պղնձահանքում մեծ քանակությամբ հայ բանվորներ էին աշխատում։ Սրանց մի մասը հեռավոր գյուղերից եկածներն էին, իսկ մյուսը՝ հանքերից ոչ հեռու գտնվող հայկական Ղազախաշեն գյուղի բնակիչներն էին։ Այդ գյուղի բնակիչները ամբողջությամբ վերաբնակներ էին, որոնք այստեղ էին տեղափոխվել Հայաստանի տարբեր շրջաններից բանվորություն անելու նպատակով։

Երևանի նահանգի և Կարսի մարզի աղահանքերի արդյունահանումը 1902 թ. տվյալներով կազմում էր մոտ 3 միլիոն փութ[3]։ Առայժմ հնարավոր չէ պարզել այդ բնագավառում աշխատող բանվորների քանակը, որոնք հիմնականում աղահանքերին մոտիկ ընկած գյուղերի բնակիչներն էին։ Բայց և այնպես աղի արտադրության չափը ցույց է տալիս, որ բանվորների թիվը բավական մեծ պետք է լիներ, քանի որ աղահանքերում գոյություն չուներ որևէ մեխանիզացիա և ամբողջ գործը կատարվում էր ձեռքի աշխատանքով։

---

[1] Տես О. Туманян, Экономическое развитие Армении, ч. 1, Ереван, 1954, стр. 207.

[2] Նույն տեղում, էջ 207—208։

[3] Տես „Кавказский календарь" 1904, III բաժին, էջ 65։

Սևանի ավազանում ձկնորսությունը տրվում էր վարձակալության կապիտալիստներին, որոնք իրենց հերթին առանձին տեղամասերը նույնպես տալիս էին վարձակալության։

Տարվա ընթացքում ձկնորսությամբ զբաղվող բանվորների քանակը միջին թվով հասնում էր 1500 մարդու։

1902 թ. Կովկասյան օրացույցի տվյալներով՝ Երևանի նահանգում տնտեսության տարբեր բնագավառներում ֆաբրիկա-գործարանային տիպի հիմնարկ-ձեռնարկությունների մեջ աշխատող բանվորների թիվը հասնում էր 7104 մարդու, Կարսի մարզում 1247 [1]։

Մի ուրիշ փաստաթղթում նշվում է, որ 1905 թ. Կարսի մարզում մանր արդյունաբերական ձեռնարկությունների թիվը հասնում էր 879, իսկ բանվորների թիվը 1244 մարդու [2]։ Այս տվյալները ավելի շուտ պակասեցված են, քանի որ ձեռնարկատերերը շատ անգամ թաքցնում էին և ճիշտ տեղեկություն չէին տալիս իրենց ձեռնարկների կամ բանվորների թվի մասին, կամ թե այն ցույց էին տալիս շատ պակասեցված ձևով։

Այս թվերի մեջ չեն մտնում պղնձարդյունաբերության, ադամանդների, ձկնորսությամբ զբաղվող, գյուղատնտեսության տարբեր ճյուղերի բանվորները և վարձու աշխատանքով ապրող բազմաթիվ այլ աշխատավորներ։

Բանվորների մեծ մասը ապրում էին հենց իրենց արհեստանոցներում, կամ ընդհանուր նկուղներում։ Այդ «բնակարանները» մութ, խոնավ ու կեղտոտ տնակներ էին, որտեղ նույն անկողնում պառկում էին տարբեր հերթի աշխատող բանվորներ։

Ռուսաստանի արդյունաբերական կենտրոններում, ինչպես նաև ծայրամասերում, բանվորները շատ հաճախ բողոքի ցույցեր ու գործադուլներ էին հայտարարում՝ պահանջելով բարելավել իրենց դրությունը։

1882 թ. կառավարությունը հարկադրված եղավ օրենք հրատարակել փոքրահասակների աշխատանքի մասին, իսկ 1885 թ. արգելել կանանց և մինչև 17 տարեկան պատանիների գիշերային աշխատանքը։ 1886 թ. բանվորական ուժեղ գործադուլներից և առանձնապես Մորոզովյան հայտնի գործադուլից հետո, հատուկ օրենք սահմանվեց տերերի կողմից բանվորներին վարձելու ժամանակ նրանց փոխհարաբերությունները կարգավորելու մասին։ Սա-

---

[1] Տես „Кавказскій календарь“, 1901, III բաժ., էջ 70—73։

[2] Տես Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 229, օպ. 1, գ. 1134, թ. 11։

կայն կապիտալիստները այդ օրենքներով չէին առաջնորդվում. նրանք հասան և այն բանին, որ 1890 թ. որոշ ուղղումներ մտցրին այդ օրենքների մեջ և դրանք դադարեցին որևէ նշանակություն ունենալուց։

Ինչպես ամբողջ Անդրկովկասում, այնպես էլ Հայաստանում կապիտալիզմի զարգացման հետևանքով զգալի չափով ուժեղացավ բնակչության դասակարգային շերտավորումը, առաջացավ վարձու աշխատանքով ապրող գյուղական բատրակների, քաղաքի գործարանային և հանքագործական վայրերի բանվորների մի ստվար բանակ։

XIX դ. վերջին և XX դ. սկզբին արդյունաբերական զարգացումը Անդրկովկասում նպաստեց քաղաքային բնակչության նշանակալից աճին։

Լենինը գրել է. «Կովկասի ուժեղ գաղութացման պրոցեսին ու նրա հողագործական բնակչության արագ աճմանը զուգընթաց տեղի էր ունենում նաև բնակչության՝ հողագործությունից կտրվելու և արդյունաբերությանը հարելու պրոցես (որը վարագուրվում էր հողագործական բնակչության աճումով)։ Կովկասի քաղաքային բնակչությունը 1863 թվականի 350 հազարից աճեց մինչև մոտ 900 հազարի՝ 1897 թվականին (Կովկասի ամբողջ բնակչությունը 1851 թ. մինչև 1897 թ. աճեց 95 տոկոսով)»[1]։

Հայաստանում քաղաքային բնակչությունը 1873 թ. կազմում էր ընդհանուր բնակչության մոտ 7,5 տոկոսը, իսկ 1897 թ. 8,5 տոկոսը։

1873 թ. Երևանում կար 11.938 բնակիչ, Ալեքսանդրապոլում՝ 19.976, Նոր Բայազետում՝ 5.363[2]։

1897 թ. մարդահամարի համաձայն, Երևանում բնակչության աճը հասավ 29.006 շնչի, Ալեքսանդրապոլում՝ 30.616, Նոր Բայազետում՝ 8.486[3]։ Այսպիսով, քաղաքային բնակչությունը 1873—1897 թթ. ընթացքում Հայաստանում աճել է մոտ երկու անգամ։ Չնայած դրան, քաղաքային բնակչության թիվը դեռևս փոքր էր և ամբողջ բնակչության ընդհանուր թվի 8,5 տոկոսից չէր անցնում։

Պատմականորեն հայ ժողովրդի տնտեսական ու քաղաքական վիճակը այնպես էր դասավորվել, որ նրա մի զգալի մասը ցրվել էր

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3, էջ 771—772։

[2] Տես А. Бадалян, Население Армении современи присоединения ее к России и до наших дней (см. Изв. АН Арм. ССР, № 5, 1953, стр. 58).

[3] Նույն տեղում։

Կովկասի տարբեր ծայրամասերում։ Անդրկովկասի գլխավոր քաղաքները եղբայրական ժողովուրդների մի ինտերնացիոնալ ընտանիք էին կազմում։ Այսպես, 1904 թ. Բաքվում 222.412 բնակչից 64.151 մարդ ազգությունով էին, 61.104-ը՝ ռուսներ, 51.340-ը՝ հայեր, 14.168-ը՝ պարսիկներ, իսկ մնացածները լեզգիներ էին, օսեր, վրացիներ, հույներ և այլն[1]։

Նույն պատկերն էր ներկայացնում նաև Անդրկովկասի խոշոր ադմինիստրատիվ, տնտեսական և կուլտուրական կենտրոն Թիֆլիսը։ Այստեղ կարելի էր հանդիպել կովկասյան բոլոր ազգերի ներկայացուցիչներին։ Թիֆլիսում 1905 թ. ընդհանուր բնակչության թիվը 240.323 շունչ էր, որից 54.191 ռուսներ, 54.558 վրացիներ, 84.140 հայեր և մնացածը ուրիշ ազգություններ էին[2]։

Հայ ժողովրդի պատմության, նրա քաղաքական ու կուլտուրական կյանքի հարցերը լուսաբանելիս չի կարելի բավարարվել միայն հայերի այն հատվածի կյանքի ուսումնասիրությամբ, որն ապրում էր նախկին Երևանի նահանգում։

Հայտնի է, որ Անդրկովկասի մի շարք քաղաքներում, ինչպես, օրինակ, Բաքվում, Թիֆլիսում, Ելիսավետպոլում, Շուշիում և ուրիշ տեղեր հայերը զգալի թիվ էին կազմում, նրանք ունեին իրենց կուլտուրական օջախները և երկրի տնտեսական ու քաղաքական կյանքում անդրկովկասյան եղբայրական ժողովուրդների հետ զգալի դեր էին կատարում։

1897 թ. մարդահամարի տվյալներով Կովկասի տերիտորիայում հայ ազգաբնակչությունը տեղաբաշխված էր հետևյալ կերպ[3]։

Երևանի	նահանգում —	մոտ	506	հազար
Ելիսավետպոլի	»	»	294	»
Թիֆլիսի	»	»	221	»
Բաքվի	»	»	89	»
Կարսի մարզում		»	83	»
Սրևմտյան Անդրկով.		»	21	»
Հյուսիս. Կովկասում		»	29	»
Ընդամենը Կովկասում			1.143.000	

Եթե այս թվերին ավելացնենք նաև Ռուսաստանի բազմաթիվ

---

[1] Տես „Кавказский календарь", 1907, II բաժին, էջ 320։

[2] Նույն տեղում, էջ 325։

[3] Նույն տեղում, 1904, III բաժին, էջ 54։

քաղաքներում ապրող հայ բնակչությունը, ապա պարզ կլինի, որ հայ ժողովրդի հաղիվ մեկ երրորդն էր ապրում բուն Հայաստանի տերիտորիայում։ Իսկ մնացած մասը՝ սկսած միջին դարերից, շահական Պարսկաստանի և սուլթանական Թյուրքիայի դաժան հալածանքներից ազատվելու նպատակով, սեփական երկրում ապրելու միջոց չգտնելով, ցրվել էր աշխարհով մեկ, մի կտոր հաց հայթայթելու համար։

2. ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԳՅՈՒՂՈՒՄ ԵՎ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1861 թ. ռեֆորմից հետո գյուղացիների «ազատագրումը» այնպես կատարվեց, որ փաստորեն հողը նախկինի պես մնաց կալվածատերերի ձեռքում, որի հետևանքով էլ ճորտատիրության մնացորդները շարունակեցին իրենց գոյությունը։

1905 թ. ռևոլյուցիայի ժամանակ Ռուսաստանում հաշվվում էին 30 հազար խոշոր կալվածատերեր, որոնք ունեին 70 միլիոն դեսյատին հող, այն ժամանակ, երբ 10 միլիոն գյուղացիական տընտեսություններ ունեին համարյա նույնքան հող։

Գյուղացիությունը ամենուրեք տառապում էր հողազրկությունից և ստիպված էր լինում վարձակալությամբ, ամենածանր պայմաններով, հող վերցնել կալվածատիրոջից։

Գյուղատնտեսության մեջ համարյա ամբողջ աշխատանքը կատարվում էր ձեռքով. հիմնական գործիքները փայտյա արորն ու ցաքանն էին։ Գյուղատնտեսության նման հետամնաց տեխնիկայի հետևանքով ամեն 3—4 տարին մեկ դրեթե անբերրի տարի էր լինում. ամբողջ երկրով մեկ տարածվում էին սոսկալի սովն ու նրա ուղեկից համաճարակ հիվանդությունները։ Առանձնապես սոսկալի էր 1891 թ. սովը, որը տարածվեց Ռուսաստանի հիմնական շրջաններում և որի հետևանքով համաճարակ հիվանդությունները՝ տիֆը և խոլերան հազարավոր զոհեր տարան։

Հատկապես XIX դ. վերջին քառորդում շատ հաճախ էին կրկնվում սովի տարիները, «իսկ 1897 թվականից նրանք համարյա անընդհատ հաջորդում էին միմյանց»[1]։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 6, էջ 93։

Ճորտատիրական կարգերի մնացորդները կաշկանդում էին արտադրական ուժերի զարգացումը գյուղում։ Այնուամենայնիվ կապիտալիզմի զարգացումը գյուղում իր համար ճանապարհ էր հարթում, այնտեղ ուժեղացնելով դասակարգային շերտավորումն ու գյուղացիների քայքայումը։

«Գյուղացիական տնտեսությունը նույնպես կապիտալիստական էվոլյուցիա է կատարում՝ իր միջից ստեղծելով գյուղական բուրժուազիա և գյուղական պրոլետարիատ»[1]։

XIX դ. երկրորդ կեսին և մամուլում, և քաղաքական շրջաններում շատ հաճախ էր քննարկվում այն հարցը, թե ինչ ուղիով պետք է զարգանա գյուղատնտեսությունը Ռուսաստանում։ Զարգացման մեկ ուղին դա ֆեոդալիզմի բոլոր մնացորդների ևոլյուցիոն ճանապարհով վերացման և կապիտալիզմի անարգել զարգացման ուղին էր, իսկ մյուսը՝ առանձին ռեֆորմների միջոցով, աստիճանաբար, դանդաղ փոփոխությունների ուղին էր, ավելի ծանր ու երկարատև ուղին։ Լենինը այդ մասին գրում էր. «...այդ էվոլյուցիան հնարավոր է երկակի ձևով. այդ լատիֆունդիաների ևոլյուցիոն վերացման, ոչնչացման ձևով՝ գյուղացի-ֆերմերների ձեռքով, և նրանց՝ աստիճանաբար յունկերական տնտեսությունների վերածվելու ձևով...»[2]։ Դրանցից առաջինը գյուղատնտեսության մեջ կապիտալիզմի զարգացման ամերիկյան ուղին է, իսկ մյուսը՝ պրուսական։

Ռուսաստանում տիրապետում էր գյուղատնտեսության զարգացման «յունկերական տնտեսությունների» ձևը, որը ոչ միայն շատ ծանր, այլև տանջալից հետևանքներ էր թողնում բազմամիլիոն գյուղացիական տնտեսությունների համար։ Գյուղատնտեսության զարգացման նույն ձևն էր տիրում նաև Ռուսաստանի ծայրամասերում։

Ճորտատիրական կարգերը Հայաստանում և Ադրբեջանում ավելի ուշ վերացվեցին, քան այդ տեղի ունեցավ Ռուսաստանում և Վրաստանում։

Հայտնի է, որ 1846 թ. դեկտեմբերի 6-ի օրենքի համաձայն, ցարական կառավարությունը տեղական ֆեոդալներին—բեկերին, մելիքներին և աղալարներին հայտարարեց իրենց օգտագործման տակ գտնվող հողերի սեփականատերեր, որպիսին նրանք փաստո-

---

[1] Վ. Ի. Լենին, երկեր, հատ. 13, էջ 302։

[2] Նույն տեղում, էջ 303։

ընն հանդիսանում էին մինչ այդ էլ։ Սակայն ցարիզմը դրանով իսկ ցանկացավ ցույց տալ տեղական ադրբեջանական և հայկական «բարձր դասին» իր հոգատարությունն ու հովանավորումը։ Այնուհետև 1847 և 1851 թթ. հրատարակված օրենքները օրենսդրական կարգով ամրապնդում էին գյուղացիների մինչ այդ էլ կախյալ — ճորտական վիճակը «բարձր դասից»։ Կովկասի առաջին փոխարքա Վորոնցովի նախաձեռնությամբ հրապարակված այդ օրենքները փաստորեն ցարիզմի և հայկական ու ադրբեջանական կալվածատերերի ու բեգերի միջև կնքված մի դաշինք էր։ Իր գաղութային դաժան քաղաքականությունը անցկացնելու համար ցարիզմի կողմից «բարձր դասի» վրա հենվելու քաղաքականությունը հետագայում ավելի է ուժեղանում։ Ի դեմս տեղական շահագործողների, ինքնակալությունը տեսնում էր իր սոցիալական հենարանը ընդդեմ աշխատավոր մասսաների։

Գյուղացիական ռեֆորմի անցկացումը Ռուսաստանի ծայրամասերում ևս դարձել էր անհրաժեշտություն։ Այն բխում էր երկրի տնտեսական ու սոցիալական կյանքի զարգացման անհրաժեշտությունից։

Ցարական կառավարությունը Անդրկովկասում ռեֆորմը անցկացնելու գործում ցուցաբերում էր բավական զգույշ քաղաքականություն։ Դեռևս 1865 թ. հոկտեմբերի 28-ի որոշումով, Կովկասի փոխարքան վերացնում էր բեգերի, աղալարների և մելիքների ոստիկանական և դատական իրավունքները գյուղացիների նկատմամբ, իսկ հետո հրատարակում է 1870 թ. մայիսի 14-ի և ապա 1877 թ. օրենքները, որոնցով պետք է վերացվեր ճորտատիրական իրավունքը Ադրբեջանում և Հայաստանում։

Անդրկովկասում ցարական օրենքը գյուղացիական ռեֆորմի մասին գյուղացիներին հայտնելու համար ցարական չինովնիկների հետ մեկտեղ գյուղ էին գալիս զինվորական ջոկատներ և նրանց ներկայությամբ գյուղացիները «լուռ լսում էին մանիֆեստի խոսքերը»։

Գյուղացիական ռեֆորմը այստեղ անցկացվեց ավելի ծանր պայմաններում։ Բացառապես ցարական բյուրոկրատական ապարատի միջոցով. անգամ տեղերում ազնվականական կոմիտեներ չկազմվեցին, ինչպես այդ կատարվեց Վրաստանում։ Սակայն անկախ դրանից, ցարիզմը լիովին պաշտպանեց «բարձր դասի» շահերը։ Ռեֆորմը կատարվեց տիրող դասակարգի շահերից ելնելով։ Գյուղացիները պետք է հողաբաժին ստանային միջին հաշվով

ամեն մի տղամարդու համար 5,5 դեսյատին։ Սակայն իրականում գյուղացիության գերակշռող մասը այդ նորմայից շատ քիչ հող ստացավ, իսկ մի մասն էլ մնաց բոլորովին հողազուրկ։

Գյուղացիները պետք է ստացած հողաբաժնի համար վճարեին փրկագին։ Երևանի նահանգում մինչ փրկագնման ակտի կատարելը, որը տևեց շատ երկար տարիներ, կալվածատերերին վճարում էին «մուլք», բերքի 1/30 մասը, իսկ Ադրբեջանում վճարում էին «մալջահատ» կամ «բահրա» — բերքի 1/10 մասը։ Մինչև փրկագնվելը գյուղացիները մնում էին կալվածատիրոջից կախյալ վիճակում և դասվում էին ժամանակավորապես պարտավոր գյուղացիների շարքը։

Գյուղացիները արոտատեղերից, ջրից, ոռոգման ջրանցքներից օգտվելու համար պարտավոր էին կատարել բեգար—այսինքն աշխատել շաբաթվա որոշ օրեր կալվածատիրոջ տնտեսության մեջ։ Գյուղացիները անտառից, ջրաղացից օգտվելու համար պետք է հատուկ վճար տային կալվածատիրոջը։ Իսկ եթե գյուղացիների կողմից ջրից, կամ ոռոգման սիստեմներից օգտվելը կարող էր վնասել կալվածատիրոջ տնտեսությանը, ապա այդ դեպքում նրանց բոլորովին արգելվում էր օգտվել դրանցից։

Ադրբեջանում և Հայաստանում բերքատվությունը մեծ չափով կախված էր ոռոգման սիստեմից, բայց քանի որ ոռոգման ջրանցքները գտնվում էին կալվածատերերի, բեգերի ու աղալարների ձեռքում, ապա գյուղացու ձեռք բերած հողաբաժինը միանգամայն արժեքազրկվում էր։ Շատ դեպքերում գյուղացին արյուն քրտինքով ձեռք բերած հողամասը թողնում էր և գնում կալվածատիրոջ մոտ բատրակություն անելու, կամ նրանից ծանր պայմաններով ջրովի հող էր վարձակալում։ XIX դ. վերջին Երևանի և Էջմիածնի գավառներում ամեն մի դեսյատինի վարձակալման համար գյուղացին վճարում էր 45—48 ռուբլի։ XIX դ. վերջում Բաքվի, Ելիսավետպոլի և Երևանի նահանգներում ամբողջ գյուղացիությունը օգտվում էր 525.813 դեսյատին հողից, այն ժամանակ, երբ կալվածատերերին էին պատկանում 747.828 դեսյատին լավագույն հողամասերը[1]։ Եթե այդ նահանգների գյուղացիների վճարած հարկերը XIX դ. 80-ական թվականների հաշվումներով փոխադրվեր դրամի, ապա մի հեկտարի համար վճարած գումարը 2—3 անգամ կգերազանցեր

---

[1] Տես Материалы по распространению действия, Крестьянского Банка на Закавказский край, СПБ, 1904, стр. 167—168.

փրկագնման այն վճարին, որ գոյություն ուներ Ռուսաստանի մյուս նահանգներում։ Պարզ է, որ այդպիսի պայմաններում գյուղացիները բոլորովին ի վիճակի չէին իրականացնելու իրենց հողաբաժինների փրկագնումը։ Մինչև 1912 թվականի օրենքը գյուղացիների մի զգալի մասը շարունակում էր մնալ «ժամանակավորապես ալարտավորյալ» կալվածատիրոջ հանդեպ։ 1913 թ. տվյալներով Երևանի նահանգի կալվածատիրական գյուղացիներից 11.699 տնտեսություններ մնում էին դեռևս կախման մեջ և տնտեսապես քայքայված լինելով ի վիճակի չէին փրկագնվելու։ Ժամանակակից մամուլը բավական հարուստ նյութ է տալիս գյուղացիների ծանր դրության մասին։ Դրությունը առանձնապես ծանր էր կալվածատիրական ունեցվածքներում[1]։

Պետական գյուղացիների տնտեսությունները նույնպիսի իրավազուրկ և տնտեսապես քայքայված վիճակում էին գտնվում։

Անդրկովկասի պետական գյուղացիներին 1900 թ. մայիսի 1-ի օրենքի համաձայն որպես հողաբաժին պետք է հատկացվեին այն հողամասերը, որոնց վրա նրանք շատ վաղուց աշխատում էին։ Սակայն հողաբաժանման ու հողաչափման աշխատանքները այնպիսի բյուրոկրատական ձգձգումներով էին կատարվում, որ մինչև իսկ 1908 թ. հունվարի 1-ի տվյալներով, Անդրկովկասի 5000 պետական գյուղերից միայն 361 գյուղերում էր տարվում հողաչափման աշխատանքը[2] և հայտնի չէր, թե ե՞րբ այն կավարտվեր։

XIX դ. 80-ական թվականների պաշտոնական տվյալները ցույց են տալիս, որ Անդրկովկասի չորս նահանգներում պետական հողերի վրա բնակեցված պետական գյուղացիներից 22.000 շունչ բոլորովին հողազուրկ էին, 66.000 շունչ մինչև մեկ դեսյատին հողաբաժիններով էին ապահովված, իսկ 254,000 շունչ մեկից մինչև երկու դեսյատին հողաբաժիններից էին օգտվում, մնացածները մի քիչ ավել ունեին։ Այսպիսով, պետական հողերի վրա բնակեցված գյուղացիներից մեկ միլիոն շունչ նորմայի մինիմումից էլ քիչ հողաբաժնից էր օգտվում[3]։

Ավելի ուշ շրջանում, բոլորովին պետական հող չունեցող, կամ դրանով սակավ ապահովված գյուղերի թիվը անդրկովկասյան 4 նա-

---

1 Տես «Արձագանք», № 72, 1896։

2 Տես Об изменении порядка землеустройства бывших государственных поселян, стр. 7.

3 Տես Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 18, էջ 105։

հանդներում (Բաքվի, Թիֆլիսի, Քութայիսի և Երևանի) կազմում էր մոտ 46 տոկոս[1]։

Աստիճանաբար գոյանում էր հողազուրկ գյուղացիների մի մեծ բանակ, որը վարձակալությամբ հող էր վերցնում կալվածատերերից ու կուլակներից։

Պետական գյուղացիները վճարում էին ծխահարկ, իսկ 1901 թ. մացվեց բահրա (հողատուրք)։

Վրաստանում խիզան[2] կոչվող գյուղացիների նկատմամբ ճորտատիրական կարգերի վերացման օրենքը առհասարակ չկիրառվեց։

Թե ինչպիսի ծանր հետևանքներ ունեցավ ռեֆորմը գյուղացիության համար, ցույց են տալիս հետևյալ թվերը։ Թիֆլիսի նահանգում կալվածատերերը, որոնք գյուղացիների համեմատությամբ շատ չնչին թիվ էին կազմում, վերցրին լավագույն հողերից 1050,1 հազ. հեկտար, իսկ գյուղացիներին տրվեց 174,2 հազ. հեկտար, Քութայիսի նահանգում կալվածատերերը վերցրին 890,8 հազ. հեկտար, իսկ գյուղացիներին տրվեց 230,2 հազ. հեկտար։ Իսկ այն կալվածատերերը, որոնց հողամասը 12,5 հեկտարից ավել չէր, նրանք գյուղացիներին բոլորովին հողազրկում էին։ Այսպիսով, ճորտատիրական կարգերի վերացման հետևանքով գյուղացիության մի մասը ստացավ չնչին քանակությամբ հողակտորներ ցածր բերքատվությամբ, իսկ մյուս մասն էլ բոլորովին հողազրկվեց։

Թիֆլիսի նահանգում բոլորովին առանց հողի են թողնվել

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 18. էջ 106։

[2] Խիզանները այն գյուղացիներն էին, որոնք գեսես միջին դարերում փախչում էին այս կամ այն կալվածքից, կամ թե լեռներից իջնում էին և բնակություն հաստատում կալվածատիրոջ հողի վրա որոշ պայմանով։ Սովորաբար խիզանները կալվածատիրոջը տալիս էին գրագեցրած հողամասից ստացված եկամտի $^1/_{10}$-ից մինչև $^1/_3$ մասը։ Քանի որ գյուղացիական ռեֆորմը խիզաններին չէր վերաբերում, կալվածատերերը սկսեցին ավելի դաժանորեն ճնշել նրանց, պահանջելով բերքի $^1/_2$ մասը, կամ հակառակ դեպքում վտարում էին նրանց գրագեցրած հողամասից, որին ցարական ադմինիստրացիան ընդառաջում էր։ Թողնելով իրենց գրագեցրած հողամասը, նրանք գրկվում էին նաև երկար տարիների ընթացքում կատուցած շենքերից և այլ շինություններից, բարեկարգած այգուց, ուռենվածքից։ XIX դ. վերջին խիզանների դրությունը ավելի ծանրացավ։ Ցարական կառավարությունը տարված էր 1891 թ. հատուկ օրենք հրատարակել խիզանների մասին և նրանց հավատարիացնել ժամանակավորապես պարտավորյալ գյուղացիներին, բայց շուտով կալվածատերերը բողոք բարձրացրին, որի ազդեցությամբ ցարական կառավարությունը 1900 թ. այդ օրենքը չեղյալ հայտարարեց և խիզանները մնացին նույն ճորտական վիճակում մինչև 1917 թ.։

կալվածատիրական գյուղերի գյուղացիների ընդհանուր թվի 13 տոկոսը։ Իսկ Քութայիսի նահանգում ոչ մի կտոր հող չէին ստացել 25.000 շունչ[1]։ Այդ հողազուրկ գյուղացիները, որպեսզի սովից չմեռնեն՝ գնում էին կալվածատիրոջ մոտ բատրակություն անելու կամ քաղաք էին մեկնում բանվորության։

Հողազրկությունը և հողաստակավությունը Երևանի նահանգում հասնում էր մեծ չափերի։ Հեռռեֆորմյան շրջանում ամբողջ հողերի 61 տոկոսը գտնվում էր պետության և մի խումբ կալվածատերերի ձեռքում[2]։

1894 թ. տվյալներով Հայաստանում և Ադրբեջանում բոլորովին հողազուրկ գյուղական տնտեսությունների թիվը հասնում էր 3.753։ Այդ իհարկե պաշտոնական տվյալներն էին, սակայն իրականում հողազուրկ գյուղացիական տնտեսությունների թիվը ավելի շատ էր։ Այդ գյուղացիները փաստորեն կազմում էին գյուղացիական ընչազուրկ կիսապրոլետար մասսան, որոնց թիվը կապիտալիզմի զարգացմանը զուգընթաց ավելանում էր։

Քութայիսի նահանգում հողի սուր կարիք զգացող գյուղացիների քանակը կազմում էր գյուղացիության 70 տոկոսը[3]։

Ելիսավետպոլի նահանգի Ջեբրայելի, Զանգեզուրի, Շուշու և Ջիվանշիրի գավառների սեփականատիրական հողերի վրա բնակվող գյուղացիների հողային ապահովվածությունը հասնում էր միայն 0,6 դեսյատինի՝ մեկ շնչին, Բաքվի նահանգի Լենքորանի գավառում՝ մինչև 0,5 դեսյատինի, Ղուբայի գավառում՝ 0,9 դեսյատինի և այլն[4]։

Գյուղացիներին տրված վատորակ հողաբաժինները սովորաբար տալիս էին ցաք ու ցրիվ առանձին մանր կտորներով, ամենաանմշակ և անպետք տեղերում։ Արոտավայրերից, անտառից, ինչպես նաև ջրից օգտվելը ամբողջովին կախված էր կալվածատիրոջից։

Դրան հակառակ, կալվածատերերի ձեռքումն էին կենտրոնացած տասնյակ հազարավոր դեսյատին բարձր բերքատվության հողեր։

Գյուղացիների դրությունը առանձնապես ծանր էր վանքապատ-

---

[1] Տես, Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ. ֆ. 2, գործ 1212։

[2] Տես, „Сборник статистических данных пяти в губерниях в Закавказском крае“, Тифлис, 1899, стр. 324.

[3] Տես Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 18, էջ 106—107։

[4] Նույն տեղում, էջ 107—108։

կան և եկեղեցական կալվածքներում։ Էջմիածնի վանքապատկան գյուղերը, որտեղ ապրում էր ավելի քան 10 հազար մարդ, ենթարկվում էին ամենածանր ճնշման ու հալածանքների։ Էջմիածնի հոգևորականների ճորտատիրական իրավունքները ցարիզմը օրինականացրեց 1836 թ. օրենքով, և այդ որպես պարգև տրվեց հայ հոգևորականությանը ցարիզմի հանդեպ ցույց տված «հատուկ ծառայությունների»[1] համար։ Հոգևորական տերերը ցարական կառավարության հովանավորությամբ անսահման իշխանություն էին բանեցնում գյուղացիների վրա։ Գյուղացիները պարտավոր էին հոգևոր տերերի կալվածքներում կատարել բոլոր աշխատանքները. բացի այդ, նրանք վճարում էին հարկեր մթերքներով և դրամով։ Գյուղացիների և հոգևոր տերերի հարաբերությունները որևէ օրենքով չէր կանոնավորվում։

Գյուղացիական ռեֆորմը չփոխեց վանքապատկան գյուղացիների ճորտային վիճակը։ 1909 թ. Կովկասի փոխարքայության մի զեկուցագրում նշվում էր, որ Էջմիածնի կալվածքներում գտնվող գյուղացիների և հողատերերի հարաբերությունները ոչ մի օրենքով չեն կարգավորված։ Իրականում այդ հարաբերությունները ներկայացնում էին «ամբողջ երկրում արդեն վերացված ճորտատիրական կարգը»[2]։

Գյուղացիներին հատկացված չնչին հողակտորներն անգամ մշակել հնարավոր չէր, քանի որ բերքատվությունը ամբողջովին կախված էր ոռոգումից, իսկ ոռոգման ցանցը գտնվում էր միրաբների ձեռքին, որոնք նշանակվում էին գյուղի համփանների կողմից։ Հաճախ գյուղացիները համաձայնում էին բերքի կեսը տալ միրաբին՝ միայն թե նա թույլատրեր ցանքսը ջրելու ամառվա ամիսներին[3]։

Սակայն թե ինչու շատ անգամ գյուղացու բախտը ամբողջովին կախված էր նրանից, թե ում ձեռքումն է գտնվում ջրի իրավունքը։

Հաճախակի երևույթ էր հողաբաժինների և ոռոգման ջրանցքների բռնագրավումը կալվածատերերի և կուլակների կողմից։ Նոր Բայազետի գավառի Կիզիլ-բուլաղ գյուղի բնակիչները 1900 թ. մարտի 2-ին իրենց դիմումի մեջ գրում էին, որ աղալար Շիխալի

---

[1] *Տես* Высочайшие указы и акты, относящиеся до церквей армяно-григорианского исповедания... Москва, 1842.

[2] *Վրաց. ՍՍՌ ԿԳԳԱ, ֆ. 12, փոխարքայի գրասենյակի արխիվ։*

[3] *Տես* „Свод материалов по изучению быта государственных крестьян Закавказского края", том I, стр. 145.

բեկը բռնագրավելով ոռոգման ջրանցքները «ջրում է իր հողերը, իսկ մեր հողաբաժինները մնում են առանց ոռոգման, որի հետևանքով չորանում են հասարակության ցանքսերը, որից մեր հասարակությունը մեծ վնասներ է կրում»[1]։

Էջմիածնի գավառի Սարգարաբաղ գյուղի բնակիչները 1902 թ. իրենց դիմումի մեջ՝ ուղղված Երևանի նահանգի պետական գույքերի վարչությանը, նշում են, որ կալվածատեր Եղիազարովը իրենց գյուղի մոտ 120 դեսյատին հողարաժին է գնել և կաշառելով միրարին և մյուս չինովնիկներին բռնագրավել է ջրի իրավունքը և գյուղացիներին թողել ծանր դրության մեջ։ Գյուղացիները գրում էին, որ այդ չինովնիկները ցանկանում են «հարստացնել Եղիազարովին գյուղացիների հաշվին»[2]։

Շատ անգամ կալվածատերերը բռնի կերպով գրավում էին գյուղացիների հողարաժինները։ Կալադիպի գյուղի գյուղացիները իրենց դիմումի մեջ 1896 թ. մարտի 12-ին գրում են, որ իրենց գյուղում վերաբնակվել են Կուլամալի բեկ Ախմեդ բեկ-օղլին և Կերբալայ Ալիբեկ-օղլին, որոնք գյուղացիներից բռնագրավել են 5 խալվար լավագույն հող և որի համար նրանք ոչ մի հարկ չեն վճարում. նրանց փոխարեն վճարում են գյուղացիները։ Բացի այդ, նրանք գրավում են ոռոգման ջրանցքները և գյուղացիների ցանքսերը ամբողջովին զրկում ջրից[3]։

1901 թ. Էջմիածնի և Երևանի գավառի մի շարք գյուղերից թվով 30 տնտեսություն իրենց դիմումում, ուղղված Երևանի նահանգի պետական գույքերի կառավարչին, նշում էին, որ նրանք բոլորովին հողազուրկ են, և իրենց ընտանիքների ապրուստը հայթայթում են բատրակություն անելով։ Նրանք աղերսագին խնդրում էին մի կտոր հող ստանալու Չիբուխլու գյուղի մոտ գտնվող պետական հողերից[4]։

Ինչպես տեսնում ենք, գյուղացիները Անդրկովկասում տառա-

---

[1] „Крестьянское движение в Армении в XIX веке", кн. I, док № 850. (сборник архивных документов). Составил проф. В. Рштуни при участии К. Степаняна. Ереван, 1948.

[2] „Аграрная политика царизма и крестьянское движение в Армении в нач. XX века", кн. IV, Ереван, 1951, стр. 187, сост. проф. В. Рштуни при участи К. Степаняна.

[3] „Крестьянское движение в Армении в XIX веке", кн. I, док. № 337.

[4] Տես Аграрная политика царизма и крестьянское движение в Армении в начале XX века, кн. IV, стр. 177—178.

պում էին հողազրկությունից, մինչդեռ Կովկասի կառավարական չինովնիկական օրգանները ցույց էին տալիս 1.700.000 դեսյատին աղատ հող վերաբնակեցման համար։

1905 թ. Լոռիի մի շարք գյուղեր բոլորովին հողազուրկ էին, մինչդեռ կային մեծ քանակությամբ «պահեստի ֆոնդի» հողեր, որ կառավարությունը պահում էր վերաբնակեցման համար։ Գյուղացիները բազմաթիվ անգամ խնդրել էին, որ այդ հողերը գոնե վարձակալության տրվեն իրենց օգտագործելու, բայց ամեն անգամ նրանք բացասական պատասխան էին ստացել[1]։

Լոռիի շրջանի Կալա-Կալա գյուղի բնակիչները բոլորովին հողազուրկ լինելով, վարձակալությամբ հող էին վերցնում, որի համար տարեկան վճարում էին 1800 ռ.։ 1899 թ. նրանք Կովկասի վարչապետին ուղղված դիմումի մեջ գրում էին, որ անբերրիության և իրենց աղքատ վիճակի հետևանքով, ընկել են ծանր պարտքերի տակ և սովից տանջվում են, փրկության միջոց չգտնելով, խնդրում են Կարսի մարզի Աղաբաբի տեղամասում պետական հողերից իրենց բաժին հատկացնել՝ այնտեղ վերաբնակվելու համար[2]։ Գյուղացիների այդ պահանջը մերժվեց և նրանք մնացին ճնշված և հողազուրկ վիճակում։

«Վերաբնակեցման ֆոնդն ստեղծվում է բնիկների հողային իրավունքների աղաղակող խախտման միջոցով,— գրում է Վ. Ի. Լենինը,— իսկ վերաբնակեցումը Ռուսաստանից կատարվում է ի փառս «ծայրամասերի ռուսականացման» միևնույն նացիոնալիստական սկզբունքի»[3]։

Հաճախ էր պատահում, որ ցարական կառավարությունը էքսպրոպրիացիայի էր ենթարկում գյուղացիների հողերը, առանձնապես լեռնցիների հողերը։ Դրա համար կազմակերպում էին դատական պրոցեսներ և գաղութացման ֆոնդ ստեղծելու համար բնիկներին իրենց դարավոր բնակավայրերից տեղահան էին անում և քշում նրանց բնակության համար միանգամայն աննպաստ վայրեր։ Դրանով իսկ ցարական կառավարությունը «արտաքսվածների» և վերաբնակիչների միջև թշնամական հարաբերություններ էր ստեղծում, մանավանդ որ բնիկները շատ անգամ թողնվում էին բախտի քմահաճույքին՝ առանց հողով ապահովվելու։ Ցարական կառավարությունը շատ անգամ էլ ինքն էր զինում վերաբնակիչ-

---

1 Տես „Кавказское сельское хозяйство", № 580, 1905.

2 Տես Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 229, օպ. 1, գ. 722, թ.թ. 23—24։

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 18, էջ 108։

ներին՝ բնիկների հետ կռվելու և ազգային հակասությունները սրելու համար։

Բաքվի նահանգապետի կարգադրությամբ տեղական գավառապետներին հրաման էր տրվել Մուղանում վերաբնակեցված գյուղացիների համար պետության հաշվին ղենք ձեռք բերելու, տալով յուրաքանչյուր 100 ծխին 10-ական բերդանկա հրացան։ «Հետադիմական իշխանատիրացիա արդի քաղաքականության «մացիոնալիստական կուրսի» ընութագրման համար»,[1]— գրում է այդ մասին Վ. Ի. Լենինը։

Վերաբնակվող գյուղացիները շատ դեպքում տնտեսական ծանր պայմանների մեջ էին ընկնում։ Նրանք սովոր չլինելով տեղի կլիմայական պայմաններին, մասսայաբար մահանում էին։ Սակայն բոլոր դեպքերում էլ ցարական գաղութարարները «հետապնդելով քաղաքական նպատակներ, բոլորովին հաշվի չեն առնում ոչ վերաբնակվողների շահերը, ոչ էլ հնաբնակների իրավունքները»[2]։

Վերաբնակիչները շատ դժբախտ վիճակի մեջ էին ընկնում՝ չունենալով բնակարան և ապրուստի միջոցներ։ Սովն ու համաճարակ հիվանդությունները հսկայական զոհեր էին խլում։ Նրանց մի զգալի մասը հետ էր վերադառնում, իսկ մյուս մասը զուրկ լինելով որևէ միջոցից, այդ անել չէր կարողանում։

Շատ անգամ վերաբնակվող ռուս գյուղացիները հեռանալով Ռուսաստանի կենտրոնական նահանգներից, փախչում էին սովից ու հալածանքներից՝ ցանկանալով հեռու ծայրամասերում գտնել համեմատաբար ապահով կյանք։ Այդ տեսակետից ուշադրավ է Տամբովի նահանգի Մորշանսկի գավառի Նիկոլսկի գյուղի բնակիչների գիմումը 1899 թ.՝ ուղղված Կովկասի վարչապետ Գոլիցինին։ Գյուղացիները խնդրում էին թույլատրել վերաբնակվելու Կարսի մարզում։ Նրանք իրենց հայրենի երկրից հեռանալու պատճառը բացատրում էին նրանով, որ իրենք գտնվում են ծայրահեղ աղքատության մեջ և ենթարկվում են ծանր հարկերի ու հալածանքների։ Այդ պատճառով, գրում են գյուղացիները, «ստիպված ենք տարավայր զբաղմունքի գնալ, որը անչափ բացասաբար է անդրադառնում մեր բարեկեցության վրա, դրա համար էլ մենք հաստատ որոշել ենք թողնել մեր ծննդավայրը և հող փնտրել ուրիշ տեղ,

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 18, էջ 109։

[2] Նույն տեղում, էջ 110։

որտեղ լարված աշխատանքի շնորհիվ հուսով ենք բարձրացնել մեր բարեկեցությունը»[1]։

Սակայն մեծ հույսերով համակված ռուս գյուղացիները տեղ հասնելով մեծ չարչարանքներից հետո համոզվում էին, որ ամեն տեղ նույն ճնշումն ու հալածանքն է, ցարիզմի, կալվածատերերի ու բուրժուազիայի դաժան ճնշումն ու հալածանքները։

Կարսի մարզի Արդահանի օկրուգի Նիկոլաևկա գյուղի վերաբնակիչները 1905 թ. Կովկասի փոխարքային ուղղված դիմումում, նկարագրելով իրենց չարքաշ և աղքատիկ կյանքը, գրել են.

«Մենք ամբողջ ժամանակ գտնվում ենք դժվարին կացության մեջ. դրա հետ մեկտեղ գյուղատնտեսական գործիքներ ձեռք բերելու հետևանքով մեր բարեկեցությունը բոլորովին քայքայվեց, իսկ 1901 թ. սկսած անչափ ծանր հողային հարկի և տուրքերի մուցնելը մեր դժբախտությունը այնպիսի աստիճանի հասցրեց, որ մենք ընկանք անչափ ծանր պարտքերի տակ...»[2]։

Ցարական կառավարությունը Անդրկովկասում տանում էր դիշատիչ-գաղութային քաղաքականություն։ Տնտեսական և քաղաքական ճնշումներին ավելանում էր նաև ազգային ճնշումը, արհամարհանքը տեղական ժողովուրդների կուլտուրայի, սովորությունների, լեզվի նկատմամբ։

Դպրոցներում արգելվում էր մայրենի լեզուն։ Տեղերում գյուղական հասարակական-վարչական գործերը վարվում էր ոչ մայրենի լեզվով. դրա հետևանքով գյուղացիներին հարստահարելու նոր հանգամանքներ են բացվում։ Տեղական գրագիրներն ու ագենտ տանուտերերը, օգտվելով գյուղացիների անգրագիտությունից, մի դիմում կամ որևէ գրություն գրելու համար գյուղացու վերջին կոպեկն էին խլում[3]։

«Ցարիզմը ճնշում,— գրել է Ի. Վ. Ստալինը,— իսկ երբեմն պարզապես վերացնում էր տեղական դպրոցը, թատրոնը, լուսավորական հիմնարկները, որպեսզի մասսաներին խավարի մեջ պահի։ Ցարիզմը խափանում էր տեղական բնակչության լավագույն մարդկանց ամեն մի նախաձեռնությունն»[4]։

Հողազրկությունը, հալածանքներն ու ճնշումը, շարունակվող կիսաճորտական կարգերը անչափ ծանր պայմաններ էին ստեղ-

---

[1] Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 229, օպ. 1, գ. 722, թ. 33։

[2] Նույն տեղում, գ 1112, թ. 7։

[3] Տես «Մշակ», № 79, 1905 թ. «Նամակ Ջիվանշիրի գավառից»։

[4] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 395։

ծում կիսաքաղց, աղքատության մեջ տառապող գյուղացիների համար։ Կապիտալիզմի զարգացմանը զուգընթաց գյուղում գնալով ավելի են ուժեղանում դասակարգային շերտավորումն ու դասակարգային պայքարը։

Հայաստանի գյուղատնտեսության մեջ կապիտալիստական հարաբերությունների զարգացումը առանձնապես արագ էր կատարվում բամբակագործության, արդյունաբերական դինեգործության և կաթնարդյունաբերության (շվեյցարական պանրագործության) բնագավառում։ Դրան զուգընթաց XIX դարի վերջին քառորդում ցգալի կերպով նկատվում է գյուղատնտեսական մթերքների արտադրության և առանձին կուլտուրաների մշակության մասնագիտացում և աշխատանքի հասարակական բաժանում ըստ առանձին տնտեսական շրջանների։

Բամբակի կուլտուրայի մշակումը Հայաստանում տարածված էր դեռևս վաղ ժամանակից։ Սակայն այն սկսում է նոր թափով զարգանալ մոսկովյան մանուֆակտուրիստների առաջադրած պահանջների հետևանքով։ Այդ պահանջները պայմանավորված էին Ամերիկայում տեղի ունեցող քաղաքացիական պատերազմի և նրա հետևանքով առաջացած «բամբակի սովի» հետ—XIX դ. 60—70-ական թվականներին։

1879 թ. Եվրոպայի սահմաններով Ռուսաստան բերվող բամբակի համար նշանակվում է ներմուծման մաքս՝ ամեն մի փթին 40 կ. ոսկով, որը հետագայում ավելի է բարձրանում։ Այս հանգամանքը ստիպում է ռուս ֆաբրիկանտներին ավելի մեծ ուշադրություն դարձնել բամբակի հումք ձեռք բերելու երկրի ներսում՝ Անդրկովկասում և Միջին Ասիայում։

Հայաստանում XIX դ. վերջին քառորդում ստեղծվեցին Մոսկվայի և այլ մանուֆակտուրային ֆիրմաների դրասենյակներ ու բաժանմունքներ, որոնք գյուղացիներին մատակարարում էին բամբակի սերմերի լավագույն տեսակներ, տեղերում հիմնադրում էին բամբակալցման գործարաններ, կազմակերպում էին բամբակի հումքի գնումը և այլն։

Հայաստանը դառնում է Մոսկվայի և Ռուսաստանի մի շարք քաղաքների տեքստիլ արդյունաբերության հումք մատակարարող կարևոր շրջան։

Արարատյան դաշտավայրում գյուղատնտեսական կուլտուրաների մեջ բամբակագործությունը առաջնակարգ տեղ է գրավում։ Եթե, օրինակ, Սուրմալուի գավառը 1875—79 թթ. տալիս էր երե-

վանի նահանգի բամբակի արտադրանքի 0,1 տոկոսը, ապա 1895—1899 թթ. նա արդեն տալիս է 48,4 տոկոսը[1]։

1870—1893 թթ. բամբակի ցանքը Հայաստանում 23.073-ից հասավ մինչև 32.291 դեսյատինի[2]։

Եթե 1871 թ. Հայաստանի բամբակի դաշտերից հավաքվել էր 2,213 տոննա բամբակ, ապա 1900 թ. այդ թիվը հասավ 8,660 տոննայի։

Այսպիսի պայմաններում հողի գինը բավական բարձրանում է, մանավանդ բամբակացան շրջաններում։ Ամեն մի հեկտարի համար կալվածատերը 50—60 ռ. վարձակալման գին էր վերցնում, կամ թե բերքի 50 տոկոսն էր պահանջում։

Հայաստանում բոլոր այն հողերը, որոնք հարմար էին բամբակագործության համար, համարյա թե յուրացվել և լիովին օգտագործվում էին[3]։

Գյուղացիները փողի կարիք զգալով, պարտք էին վերցնում բամբակի հավաքագնորդից (սկուպշչիկ), գյուղի վաշխառուից, կամ խանութպանից, որի գիմաց միանգամայն ցածր գներով նրանց էին հանձնում բամբակի բերքը։ Գյուղի կուլակային տարրերը իրենց ձեռքում կենտրոնացնելով բամբակի հումքը, իրենց շահավետ գներով այն վաճառում էին ֆաբրիկանտներին կամ տարբեր ընկերությունների ներկայացուցիչներին։

Բամբակացան շրջանների գյուղերում աստիճանաբար ուժեղանում է գյուղական բուրժուազիան, կուլակությունը, որը կամաց-կամաց գյուղացիության հաշվին իր ձեռքումն է կենտրոնացնում հսկայական հողային տարածություններ։

1905 թ. Շարուր-Դարալագյազի գավառի Հրազդանյան և Դարբուրունյան գծերի վրա լուրջ միջոցներ են ձեռնարկվում բամբակամշակության զարկ տալու համար։ Այստեղ կալվածատերերը ձեռք էին բերել 12 ուժեղ լոկոմոբիլ, 3 բամբակաղտիչ մեքենա։ Կալվածատերերը իրենց տնտեսությունները հարմարեցնում էին բամբակագործության պահանջներին[4]։

Հանդիսանալով բամբակի հումք մատակարարող կարևոր շրջ-

---

[1] А. Амбарян, Из истории роста торгового земледелия в Эриванской губ. Изв. АН Арм. ССР, № 12. 1954, стр. 47.

[2] *Տե՛ս* Памятная книжка Эриванской губернии на 1902 г., отд. IV, стр. 127.

[3] *Տե՛ս* Н. П. Таратынов, Хлопководство в Закавказском крае, Тифлис, 1892. стр. 2.

[4] *Տե՛ս* „Кавказское сельское хозяйство", № 564, 1905, стр. 10.

չան, Երևանի նահանգը աստիճանաբար ընդգրկվում է համառուսաստանյան շուկայի մեջ։ Այդ հանգամանքը խոշոր չափով նպաստում է նահանգում ապրանքային տնտեսության զարգացմանը։

Գինեգործության զարգացումն ու բարձրորակ խաղողի տակությունը նպաստում են ընտիր կոնյակի արտադրությանը, որը մեծ ընդունելություն էր գտնում ներքին և արտաքին շուկայում։

Առանձնապես հետռեֆորմյան շրջանում բավական ընդարձակվեց խաղողագործությունը։ Եթե 1870 թ. խաղողի այգիների տարածությունը 5583 դեսյատին էր, որից եկամուտ ստացվում էր 984.172 փութ խաղող, ապա 1900 թ. այգիների տարածությունը հասել էր 10.298 դես. և ստացվում էր 2.047.211 փութ խաղող[1]։

Սկզբնական շրջանում օղի արտադրող գործարանները աշխատում էին պրիմիտիվ ձևով և լրացուցիչ եկամտի միջոց էին գյուղական տնտեսությունների համար։ 1893 թ. ակցիզային (բաժային) տուրք է նշանակվում տնայնագործական օղեգործների վրա։ Դրա հետևանքով գինեգործությամբ զբաղվող գյուղացիական տնտեսությունները սկսում են քայքայվել, արագորեն իրենց տեղը զիջելով զարգացող կապիտալիստական գինեգործությանը։

Արդեն XIX դ. վերջերից մասնավորապես Երևանի և Էջմիածնի գավառներում մանր-այդեգործ գինեգործները սկսում են քայքայվել՝ ընկնելով մի կողմից վաշխառուների, իսկ մյուս կողմից արդյունաբերական կապիտալի ազդեցության տակ։ Առաջ են գալիս ավելի կատարելագործված գործարաններ, որոնց տերերը գյուղացիներից գնում էին ջեջան և ապա այն մշակում՝ արտադրելով մեծ քանակությամբ օղի—սպիրտային արտադրանք, որը հետո վաճառքի էր հանվում ներքին և արտաքին շուկայում։

Հայաստանում առաջ է գալիս խոշոր կապիտալիստական գինեգործական արդյունաբերություն (Շուստովի, Շադրիորսկու և ուրիշների գործարանները)[2]։ Զգալի կերպով բարձրանում է խաղողի այգիների գինը։ Եթե 1870 թ. մի դեսյատին խաղողի այգին Երևանում արժեր 500—1000 ռ., Էջմիածնի գավառում 300—500 ռ. ապա 1895 թ. այդ գները Երևանում հասնում էին 2060—2500 ռ., Էջմիածնի գավառներում՝ 1000—1200 ռուբլու[3]։

---

[1] *Տես* А Амбарян, Из истории роста торгового земледелия в Эриванской губ. (см. Известия АН Арм. ССР, № 12, 1954, стр. 40).

[2] *Տես* Народные хозяйство и кооперация Армении, стр. 203.

[3] *Տես* М. Балас, Виноделие в России, ч. 3, стр. 229.

կարգային շերտավորումը։ Այդ առանձնապես նկատելի է դառնում 90-ական թվականներին Աշտարակ, Դալալար, Գեղակլու և Վերին Դամարլու գյուղերում, որտեղ բնակչությունը հիմնականում զբաղվում էր գիներգործությամբ։ Այդ գյուղերում կուլակային խավը, որը բնակչության միայն 10,7 տոկոսն էր կազմում, տիրում էր խաղողի այգիների 47,3 տոկոսին, մինչդեռ գյուղի չքավորությունը, որ բնակչության 45,6 տոկոսն էր կազմում, զբաղեցնում էր խաղողի այգիների մի չնչին մասը միայն. այն է՝ 4,4 տոկոսը[1]։

Գյուղատնտեսության մեջ ապրանքային արտադրության կարևոր ճյուղերից մեկն էլ բրնձի մշակությունն էր։ 1892 թ. ամբողջ Անդրկովկասից դեպի արտասահմանյան և ռուսական շուկան արտահանվել է 1.501.1529 փութ բրինձ. այդ բրնձի զգալի մասը արտահանվում էր Երևանի նահանգից։ Միջին հաշվով 90-ական թվականներին Անդրկովկասից արտահանվող բրնձի մոտ 20 տոկոսը տալիս էր Հայաստանը։

Տեխնիկական կուլտուրաների ցանքային տարածությունները ընդլայնվում են ի հաշիվ հայտահատիկների ցանքատարածությունների։ Ռուսական հացը արագորեն ողողում է Անդրկովկասի ներքին շուկան։ Երևանի նահանգը ռուսական հացի վաճառքի համար դառնում էր կարևոր շուկա։

Անասնապահության զարգացումը և առանձնապես խոշոր եղջերավոր անասունների աճը, անմիջականորեն կապված էր նրա ապրանքային բնույթի հետ։ Բալմաթիվ դավառներում ու գյուղերում անասունները բազմացվում էին մեծ քաղաքները վաճառքի տանելու համար։ Այսպես, 1895 թ. Նոր Բայազետի գավառի գյուղերից, միայն Թիֆլիսում վաճառվել է մոտ 10 հազար գլուխ մանր և խոշոր եղջերավոր անասուն։ Գյուղացիներից էժան գներով, տարվա այն պահին, երբ նրանք վողի խիստ կարիք են զգում, հավաքագնորդները՝ գյուղի վաշխառուները և կուլակները գնում էին անասունները և ապա իրենք բարձր գներով վաճառում քաղաքներում։

Կաթի արդյունաբերական մշակությունը և դրա հիման վրա կապիտալիստական բնույթի տնտեսություն ստեղծելը, առանձնապես սկսում է զարգանալ Լոռի-Փամբակի շրջանում, որտեղ զգալի չափով տարածվում է ցեղային անասնապահությունը։ Առանձին գյուղերում կապիտալիստները կազմակերպում են շվեյցարական

---

[1] Տես Օ. Հովհաննիսյան, Ագրարային հարցը Երևանի նախկին նահանգում XIX դ. վերջում և XX դ. սկզբում, Երևան, 1949, էջ 97։

պանրի արտադրությունը։ Վորոնցովկա գյուղի մոտակա վայրերում արդեն XX դ. սկզբում գործում էին պանիր պատրաստող մի շարք գործարաններ, որոնց տարեկան արտադրողականությունը կազմում էր 4.085 տոննա շվեյցարական պանիր։ Այդ գործարանները հիմնականում կառուցվել էին 1891—1900 թթ. ընթացքում։ Կապիտալիստները գյուղացիներից ցածր գներով հավաքում էին կաթը։ Հաճախ, գտնվելով կարիքի մեջ, գյուղացին պարտք էր վերցնում կապիտալիստից, կամ վաշխառուից և ապա ամբողջ տարին ստիպված էր լինում իր կովի կաթը, որը շատ հաճախ նրա ապրուստի միակ միջոցն էր, տալ կապիտալիստին իր պարտքի դիմաց։ Երբեմն կուլակային տնտեսությունները միանալով իրար հետ՝ ստեղծում էին արտելային գործարաններ։

Գործարանատերերը, ստեղծելով սնիկական կովերի նախիրներ, ստիպճանաբար իրենց ձեռքն էին գցում նաև գյուղական համայնքների լավագույն արոտավայրերն ու խոտհարքները։

Կալվածատերերը գնալով բարձրացնում էին խոտհարքների վարձակալման գինը։ Պարզ է, որ առաջին հերթին գործարանատերերն էին ի վիճակի վարձակալելու լավագույն արոտատեղիներն ու խոտհարքները, իսկ գյուղացիները, չունենալով այդպիսի հնարավորություն, տնտեսապես քայքայվում էին և վաճառելով միակ կովը՝ ապրուստի վերջին այդ միջոցը, վարձու աշխատանքի էին գնում գեպի գործարան կամ կալվածատիրոջ մոտ[1]։

Անասունների գլխաքանակի սիրապետման վերաբերյալ տվյալները նույնպես խոսում են գյուղում ուժեղացող դասակարգային շերտավորման մասին։ Այսպես, օրինակ, դեռևս 80-ական թվականների տվյալները ցույց են տալիս, որ Երևանի նահանգի Շարուրի տեղամասի կուլակները, որոնք կազմում էին բոլոր տնտեսությունների միայն 6,9 տոկոսը, իրենց ձեռքն էին կենտրոնացրել կովերի ամբողջ գլխաքանակի 36,4 տոկոսը, փոքր շքավորական տնտեսությունները, որոնք բնակչության 56,2 տոկոսն էին կազմում, ունեին միայն կովերի ամբողջ թվի 9,2 տոկոսը։ Պատկերը մոտավորապես նույնն էր Դարալագյազում և մյուս շրջաններում[2]։

Այսպիսով, գյուղացիական ռեֆորմից հետո, ինչպես ամբողջ Անդրկովկասում, այնպես էլ Հայաստանում, մի կողմից սկսում է ձևավորվել արդյունաբերական պրոլետարիատը, իսկ մյուս կողմից

---

[1] Տես „Кавказское сельское хозяйство", 1905, № 580.

[2] Տես Ս. Համբարյանի նշված հոդվածը, էջ 50։

արտադրանքն առաջանում է գյուղական շքավորության մի հսկայական բանակ, որի մի մասը գնում էր քաղաք բանվորության, իսկ մյուս մասը բազմացնում էր գյուղի բատրակների շարքերը։ Հայաստանի բազմաթիվ շրջաններից մեծ թվով գյուղացիներ մի կտոր հաց ճարելու համար բանվորության էին գնում դեպի Բաքու, Թիֆլիս, Բաթում և այլ քաղաքներ։

* * *

XIX դ. վերջին գյուղացիների պայքարը հողի համար լայն չափեր է ընդունում։ Գյուղացիական շարժումները արտահայտվում են տարբեր ձևերով։ Գյուղացիները հաճախ համախմբվածներ ու բողոքներ էին գրում կալվածատերերի և ցարական ճնշումների մասին։ Նրանք հրաժարվում էին հարկերը վճարելուց և կիսաճորատական զանազան պարտավորությունները կատարելուց, իսկ երբեմն էլ գյուղացիները կալվածատիրոջը դուրս էին քշում գյուղից, ոչնչացնում էին նրա ունեցվածքը և բռնի կերպով գրավում հողերը։

Այսպես, 1904 թ. Սանահինից հաղորդում էին, որ կալվածատեր Բարատովի խոտի և արտերի դեղերը գյուղացիները հրդեհել են։

Գյուղացիները ինքնակամ կերպով կարում են կալվածատեր Բարատովի անտառը, գրավում նրա հողերը, իրենց անասունները արածելու քշում կալվածատիրոջ արոտատեղերը և այլն[1]։ Առանձին գավառներում ու գյուղերում, գյուղացիները դիմում էին զինված ելույթների։ Ամեն անգամ կալվածատիրոջը օգնության էին հասնում ոստիկանությունը և կանոնավոր զորամասերը, որոնք սրի ու հրի միջոցով հաշիվ էին տեսնում «ըմբոստ» գյուղացիների հետ։ Դրան հետևում էին մասսայական բանտարկությունները և տպա աքսորը հեռավոր Սիբիրի շրջանները։ Սակայն ոչ բոլոր դեպքերում էր հաջողվում անմիջապես ճնշել գյուղացիական ելույթները։ Գյուղացիները չէին հաշտվում ճնշված ու հալածված դրության հետ և շարունակում էին իրենց պայքարը։ Սակայն նրանք պայքարում էին անկազմակերպ, կտրված մեկը մյուսից։ Գյուղացիների պայքարը հաղվագյուտ դեպքերում էր դուրս գալիս մի գյուղի, կամ գավառի սահմաններից։ Գյուղացիները գանվում էին

---

1 Տես «Մշակ», 1904, № 80։

հետամնաց վիճակում, ցարական ռեժիմն ու կալվածատիրական ճնշումները նրանց վրա ծանրանում էին որպես մի հսկայական կաշկանդող ուժ, որից ազատվելու ելքը նրանք չէին գտնում։ Գյուղացիները դեռևս ի վիճակի չէին առաջադրելու ընդհանուր քաղաքական խնդիրներ՝ հին հասարակարգը տապալելու և նորը ստեղծելու համար։ Այդպիսի խնդիր կարող էր առաջադրել ամենառևոլյուցիոն դասակարգը՝ պրոլետարիատը, որը հանդես գալով որպես նոր հասարակարգի համար մարտնչող պրոգրեսիվ ուժ, իր ետևից տանել բոլշևիկների ճնշված գյուղացիությանը։ Գյուղացիական ապստամբությունները կարող էին հաջողությամբ վերջանալ միայն այն ժամանակ, եթե նրանք զուգակցվեին բանվորական շարժման հետ և ընթանային բանվոր դասակարգի ղեկավարությամբ։

Գյուղացիությունը իր պայքարի փորձով համոզվեց, «որ միակ ուժը, որի օգնության վրա կարելի է հույս դնել,— քաղաքային բանվորներն են, պրոլետարիատը»[1]։

Հետևեցիորմյան շրջանում, կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետ միասին ավելի և ավելի է վատթարանում գյուղացիության դրությունը։ Գյուղացին ճնշվում էր մի կողմից կալվածատիրոջ, գյուղական վաշխառուի և կուլակի, իսկ մյուս կողմից ցարական չինովնիկների կողմից։ Գյուղացին ստիպված էր վաճառել իր ունեցվածքը և վերջապես իրեն հատկացված հողաբաժինն էլ համարյա ձրի վիճել կալվածատիրոջը[2]։ Այդ տեսակետից ուշադրավ է Երևանի նահանգի Յուվա գյուղի 19 շքավոր անտեսությունների դիմումը։ Գյուղացիները 1890 թ. հոկտեմբերի 27-ին Երևանի նահանգապետին ուղղած դիմումում գրում էին, որ նրանք իրենց հողաբաժիններից օգտվել են մինչև 1879—1880 թթ., որից հետո պարտքի դիմաց այդ հողաբաժինները տրվել են գյուղական ցեցերին։ «...Մենք մեր հողերը մասնավոր կարգով վիճել ենք Յուվա գյուղի հարուստներին շնչին դներով և նրանցից մի քանիսին վատատթուղթ ենք ավել, որում 5—6 անգամ ավել է ցույց տրված, քան մեր ստացած դրամը»։ Այնուհետև գյուղացիները գրում են, որ նրանք կորցնելով իրենց հողաբաժինը, ստիպված Երևանի գավառի մյուս գյուղերում աշխատանք գտնելու որպես բատրակներ։ Սակայն հարուստները բավական չէ, որ այդ շքավորների հողաբա-

---

1 Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 6, էջ 143։

2 ՏԵՌ Материалы для изучения экономич. быта гос. крестьян Зак. края, том II, Тифлис, 1886, стр 180.

ժիններին բռնադրավեցին և նրանց էլ գյուղից փաստորեն վտարեցին, շարունակում էին այդ հողաբաժինների հարկերը նրանցից պահանջել։ Նրանք իրենց դիմումում գրում էին. «Այդ հարուստ գյուղացիները օգտվում են մեր հողերից և հարկերը պահանջում են մեզանից...»։ Եվ հետո գյուղացիները նշում են, որ 1870 թ. մայիսի 14-ի օրենքի անցկացումը Երևանի նահանգում պետք է որ կարգավորեր գյուղացիների դրությունը, բայց «մենք բոլորովին քայքայվել և ընկել ենք ծայրահեղ աղքատության մեջ...»[1]։

Էջմիածնի գավառի Ջանֆիդա գյուղի գյուղացիները հրաժարվեցին «մուլք» վճարել կալվածատիրոջը. գյուղացիները հրաժարվեցին կատարել նաև գավառապետի հրամանը։ Գավառապետը գյուղացիներին պատժելու համար մի խումբ զինված կոզակներ և հեծյալներ ուղարկեց գյուղ։ Սակայն 200 գյուղացիներ զինված գործիքներով և փայտերով «ցույց տվին բացարձակ դիմադրություն և վռնդեցին կոզակներին և հեծյալներին»[2]։

Մի ուրիշ փաստաթղթում ցարական չինովնիկը Էջմիածնի գավառից հաղորդում է, որ գյուղացիները հրաժարվում են «մուլք» վճարելուց կալվածատիրոջը և երբ այդ չինովնիկը սպառնում է, թե այդ մասին կդրի բարձրագույր օրգաններին, ապա նրան գյուղացիները պատասխանում են՝ «Թող նա գրի, մենք ոչ մի բանից չենք վախենում»[3]։

Երևանի գավառի հաշտարար միջնորդը իր զեկուցագրում հայտնում է, որ նա երկու կոզակների հետ ցանկացել է գնալ Բուզամբու գյուղը՝ մուլքադար Մամեդ-աղայի հողատիրական իրավունքները պաշտպանելու և գյուղացիներին «խաղաղեցնելու» նպատակով, սակայն գյուղացիները նրանց թույլ չեն տվել գյուղ մտնել և զգուշացրել են, որ «ում էլ ուղարկեն այստեղ մուլքադարի հարցով,— նրանք պետք է վիրավորեն և ծեծեն, և անպամ սպանեն»[4]։

Գյուղացիական նման ելույթներ տեղի ունեցան Երևանի գավառի Պաղնի և այլ գյուղերում։

Շատ տեղեր էլ գյուղացիները բռնի կերպով գրավում էին և մշակում կալվածատիրական և պետական հողերը։

---

[1] „Крестьянское движение в Армении в XIX в.", кн 1. док. 342. Составил проф. В. Рштуни при участии К. Степаняна, Ереван, 1948.

[2] Նույն տեղում, էջ 180։

[3] Նույն տեղում։

[4] Հայկական ՍՍՌ ԿՊԱ, ֆ. 7/70, գ. 447, թ. 43։

Նոր Բայազետի գավառի Էլիջա կալվածքի տեր Մակաշեր իր դիմումի մեջ 1901 թ. հունիսի 30-ին, գրում է, որ Դալլաքլուի գյուղացիները բռնի կերպով դրավել են նրան պատկանող հողամասը։ Նա կառավարությունից շտապ օգնություն էր խնդրում[1]։

Հաճախ էին նաև այն դեպքերը, երբ կալվածատերերն ու ցարական չինովնիկները, գյուղացիների ուշադրությունը դասակարգային պայքարից հեռացնելու նպատակով, հողային վեճեր էին ստեղծում հարևան գյուղերի միջև։ Տարիներ շարունակ դատական գործեր էին վարվում։ Հաճախ զինված ընդհարումների առիթ տալով, ցարական չինովնիկները հանդես էին գալիս հաշտարար միջնորդի դերում և մեծ քանակությամբ կաշառք էին վերցնում երկու կողմերից։ Նյութական հսկայական վնասներ էին կրում գյուղացիները, բայց անմիտ վեճը իր լուծումը չէր ստանում։ Սակայն իշխանությունների մեքենայությունները անկարող էին կանգնեցնել գյուղացիական աշխատավորության ռևոլյուցիոն պայքարը։ Պայքարը մի կողմից սակավահող և հողազուրկ գյուղացիների և մյուս կողմից կալվածատերերի միջև օրավուր ավելի սրվում և լայն ծավալ էր ստանում։

Վ. Ի. Լենինը նշում է, որ հետռեֆորմյան շրջանի ամբողջ պատմության ընթացքում «կարմիր ղծի պես անցնող գյուղացիական և կալվածատիրական շահերի պայքարն է, որ կազմում է մեր ռևոլյուցիայի տնտեսական կարևորագույն հիմքը»[2]։

Շահագործողների դեմ մղվող ռևոլյուցիոն պայքարում օրըստօրե ամրապնդվում էր տարբեր ազգերի աշխատավոր գյուղացիների եղբայրական բարեկամությունը։ Դժբախտ դեպքերում նրանք մեկը մյուսին օգնության ձեռք էին մեկնում[3]։

Գյուղացիների կողմից կալվածատերերի ու կառավարության նկատմամբ իրենց պարտավորությունները կատարելու և գյուղացիական շարժումները ճնշելու նպատակով ցարական կառավարությունը գյուղերի վրա նշանակում էր արտակարգ հարկեր, էկզեկուցիաներ, ուղարկում էր պատժիչ զորամասեր։

Այդպես վարվեցին ցարական իշխանությունները Բորչալուի գավառի Հաղպատ գյուղի հետ, երբ գյուղացիները պայքարի դուրս եկան կալվածատեր Բարաթովի դեմ[4]։

---

[1] „Аграрная политика царизма и крестьянское движение в Армении" кн. IV, стр. 183.

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 13, էջ 303։

[3] ՏԵՍ Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 5/12, գ. 2374, թ. 125։

[4] Նույն տեղում, ֆ. 34, գ. 4883, թ. 14։

Բորչալուի գավառապետը իր 1903 թ. նոյեմբերի 11-ին Թիֆլիսի նահանգապետին ուղղած զեկուցագրում հայտնում է, որ Լոռվա տեղամասի Հաղպատի գյուղացիները նոյեմբերի 8-ին ապստամբություն են բարձրացրել իրենց կալվածատեր Բարաթովի դեմ և բռնագրավել են նրա հողերը։ Ապստամբությունը ճնշելու համար գավառապետը ոստիկանության պրիստավ Ավալովին ուղարկել է Հաղպատ։ Ձինված ուժերի հետ կալվածատիրոջ իրավունքները պաշտպանելու համար Հաղպատ էին եկել նաև Թիֆլիսի օկրուգային դատարանի ներկայացուցիչները, Բորչալուի և Ալավերդու դատավորները և ուրիշները։ Նրանք գյուղ գալով հայտարարեցին գյուղացիներին, որ իզուր են դիմադրում, քանի որ «օրենքը, կանգնած է սեփականատիրոջ կողմը և չի կարող փոփոխության ենթարկվել հատկապես հախպատցիների համար»[1]։

Սակայն հաղպատցիները կարականապես հրաժարվեցին կալվածատիրոջը վերադարձնել նրանից բռնագրաված արոտատեղիները։ Այն ժամանակ պրիստավ Ավալովի հրամանով ոստիկանները գյուղացիների գյուղում գտնվող անասունները սկսեցին դրանցել, այն բռնագրավելու և կալվածատեր Բարաթովին հանձնելու համար։ Մի խումբ ոստիկաններ փորձեցին նաև արոտատեղիներում գտնվող անասուններն էլ գյուղ բերել, բայց, զինված դիմադրության հանդիպելով նրանք ստիպված եղան հետ նահանջել։ Երբ արդեն ոստիկանները գյուղացիներից բռնագրաված անասունները ուզում էին քշել և հանձնել կալվածատիրոջը, գյուղացիները զինված հարձակման անցան։ Ոստիկանները «չէին հասցրել տեղից շարժվելու, հաղորդում է մի փաստաթուղթ, երբ հաղպատցիների ամբողջ մասսան, որոնց թվում կանայք և պատանիները, զինված դաշույններով և փայտերով, իսկ կանայք քարերով դրոհեցին...»[2] ոստիկանների վրա։

«Ամբողջ գոռում-գոչումով և հայհոյանքներ թափելով սկսեց... քարերի տարափ թափել պրիստավի և ոստիկանության պահնորդների վրա, քարերով և փայտով նրանց հարվածներ հասցնելով»[3]։

Ավալովի հրամանով ոստիկանները կրակ բացին մասսայի

---

[1] „Аграрная политика царизма и крестьянское движение в Армении в начале XX века", кн. IV, стр. 190.

[2] Նույն տեղում, էջ 191։

[3] Նույն տեղում։

վրա. «Հախպատցիներից երեքը սպանվեց և հինգը վիրավորվեց, որոնցից երկուսը՝ ծանր»[1]։

Գյուղացիների ապստամբությունը ճնշելու համար, զինված ուժերի նոր հարյուրյակ ուղարկվեց Հաղպատ։ Կալվածատերն ու նրա պաշտպան ցարական չինովնիկները սկսեցին դաժան հաշիվ տեսնել գյուղացիների հետ։ Ապստամբությունը դենքի ուժով ճնշելուց հետո, սկսվեց քննություն կատարվել «հանցավորներին» պատժելու համար։ Անմիջապես բանտարկեցին գյուղացիներից 34 մարդ[2]։ Ամբողջ գյուղի վրա էկզեկուցիա նշանակվեց։ Գյուղում թողեցին կոզակների 75 հոգուց բաղկացած զորախումբը, Լոռվի պրիստավ Մակրոպուլոյի գլխավորությամբ։ Էկզեկուցիան վերջանալուց հետո, գյուղում պետք է ոստիկան պահակակետ նշանակվեր 5—6 պահնորդներից բաղկացած[3]։

1903 թ. նոյեմբերի 17-ին, դիմելով Թիֆլիսի նահանգապետին, հաղպատցիները իրենց օրհասական դրության մասին բողոքում էին. «Այժմ մենք պատժված ենք, այն էլ դաժան կերպով։ Մեր գյուղը լցված է զորքով, որին մենք պետք է կերակրենք։ Մենք կընկնենք լիովին քայքայման և անկման մեջ, եթե անգամ մի շաբաթ շարունակվի նման դրությունը...»[4]։

Հաղպատցիների պայքարը ղեկավարում էին Արզուման Սոխիկյանը, Սարգիս Աթանեսյանը և Կամսար Մելքումյանը։ Նրանք հաճախակի լինում էին Թիֆլիսում, որտեղ խորհուրդներ էին ստանում գյուղացիների պայքարը շարունակելու մասին[5]։

Ապստամբության կազմակերպման գործում ակտիվ դեր էին խաղում գյուղացիներից նաև Գրիգորյանը և ուրիշները։

Դաժան ճնշումներն ու հալածանքները չէին կարող դադարեցնել գյուղում ծայր առած պայքարը։ Հաղպատցիները հետագա տարիներին էլ շարունակում էին իրենց պայքարը ճնշողների դեմ։

Տնտեսական քայքայվածության հետևանքով գյուղերում ծայր են առնում անարխիան և գողությունը։ Ամենուրեք սկսում են

---

[1] „Аграрная политика царизма и крестьянское движение в Армении в начале XX века", кн. IV, стр. 192.

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում, էջ 193։

[4] Նույն տեղում, էջ 195։

[5] Նույն տեղում, էջ 193։

վխտալ ավազակային խմբերը։ Կառավարությունը ի վիճակի չլինելով վերջ տալ այդ խմբերին, որոնցից ավելի շատ տուժում էին գյուղացիների ցանքերը և նրանց տնտեսությունը, մեղադրում էին գյուղացիներին նրանց հովանավորելու համար։ Եվ ահա գյուղացիներին պատժելու համար նշանակում էին «էկզեկուցիա» և գյուղ էին ուղարկում ամբողջ զինվորական ջոկատներ, որոնք երկար ժամանակ ապրաղցնելով գյուղացիների բնակարանները, ապրում էին նրանց հաշվին և ամենախայտառակ կերպով բռնանում նրանց կանանց ու երեխաների վրա։ Առանձին գյուղացիներ, չկարողանալով տանել այդ ծանր հալածանքները, վերջ էին տալիս իրենց կյանքին ինքնասպանությամբ։ Այդ բոլորը ամենաուժեղ ատելություն էր առաջացնում գյուղացիների մեջ դեպի Նիկոլայ Արյունոտի ստոիկանական ծանր ռեժիմը և սրում դասակարգային պայքարը գյուղում։

Որոշ տեղեր էլ գյուղացիների վրա նոր վերակացուներ և այլ չինովնիկներ էին նշանակվում, որոնց պարձյալ պետք է վարձատրեին և կերակրեին գյուղացիները։

Գյուղացիների համար մեծ չարիք էր ցարական չինովնիկների գյուղում երևալը։ Նրանք դիշերում են գյուղացու տունը, կատարում են ամեն տեսակ բռնություններ և «...ինչ աներես պահանջներ տուես, որ չեն անում»[1]։

Գյուղացիները ձրի վերակրում էին նրանց ու ձիերին՝ ծախսելով վերջին կոպեկը, կամ պարտք վերցնելով, կտրելով իրենց երեխաների ապրուստի վերջին միջոցը, և ապա՝ իբրև «դիշքիրատի» գյուղացին պետք է իր ձիով «հյուրին» տաներ հարևան գյուղը։ Բողոքելու ոչ մի իրավունք, ոչ մի հնարավորություն գյուղացին չուներ, այդ նրան ավելի ծանր վայրության մեջ կդներ։ Բողոքի հետևանքը միայն ծեծ ու պատիժ կարող էր լինել։ «Այսպիսի երևույթները,— գրում է «Մշակ»-ը,— բնականաբար շատ ճնշող արտավորություն են անում և կարող են տխուր երևույթների պատճառ դառնալ...»[2]։

Սովորական երևույթ էր գյուղացիներից կաշառք վերցնելը։ Բնակչության բոլոր «դժբախտություններին,— ասված է մի փաստաթղթում,— միանում են նաև իշխանության համապարտ չարաշահումները և որ ոստիկանության բոլոր պաշտոնյաները, սկսած

---

[1] «Մշակ», № 79, 1905։

[2] Նույն տեղում։

տանուտերից մինչև գավառապետը ներառյալ, կաշառք են վերցնում»[1]։

Գյուղացիները-ամենուրեք պայքարում էին իրենց գրությունը բարելավելու համար, բայց նրանց քաղաքական դասակարգային դիտակցությունը դեռևս ցածր էր։ Նրանց մոտ դեռևս գոյություն ուներ միամիտ հավատ դեպի «բարի» թագավորը։ Այդ պատճառով էլ շատ անգամ գյուղացիները կալվածատերերի և տեղական չինովնիկների մասին բողոքում էին նահանգապետին, Կովկասի փոխարքայությանը կամ թե ցարին։ Պատահում էին նաև այնպիսի դեպքեր, երբ գյուղացիները իրենց համախոսական բողոքով հատուկ լիազորներ էին ուղարկում Թիֆլիս կամ Պետերբուրգ բարձր իշխանությանը կամ ցարին բողոքելու, բայց նրանք այդ բողոքներով չկարողացան բարելավել իրենց վիճակը. կալվածատերերն ու ցարական չինովնիկները վրիժառու լինելով, ավելի դաժան հալածանքների էին ենթարկում նրանց։

Սակայն գյուղացիներն էլ շատանալով ոչ մի դահացում, ատելանաբար համոզվում էին, որ ցարը և նրան շրջապատող բոլոր չինովնիկները կոչված են պաշտպանելու կալվածատերերի շահերը։ Այդ հանգամանքը նրանց մեջ ավելի է ուժեղացնում ռևոլյուցիոն տրամադրությունները։

Այսպիսով, ինչպես նշել է Վ. Ի. Լենինը «Գյուղացիները չէին կարողանում միանալ, գյուղացիները այն ժամանակ բոլորովին ճնշված էին խավարից, գյուղացիներն օգնականներ ու եղբայրներ չունեին քաղաքի բանվորների մեջ, բայց գյուղացիներն, այնուամենայնիվ, պայքարում էին ինչպես դիտեին և ինչպես կարողանում էին»[2]։

Վ. Ի. Լենինը նշում է, որ ճորտատիրական իրավունքը վերացնելուց հետո էլ «գյուղացիները մնացին առանց իրավունքի, մնացին որպես ստորին, հարկատու, սև դաս, մնացին ճորտատիրական ստրկացման ճիրաններում։ Եվ գյուղացիները շարունակում են հուզվել, շարունակում են որոնել լիակատար, իսկական ազատություն»[3]։

Աշխատավոր ժողովրդի ազատության իսկական ուղին դանդվեց այն ժամանակ, երբ «ճորտատիրական իրավունքի վերացու-

---

[1] Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 6, գ. 198, թ. 1։
[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 6, էջ 538։
[3] Նույն տեղում, էջ 538—539։

մից հետո առաջացավ դասակարգային մի նոր պայքար՝ պրոլետարիատի պայքարը բուրժուազիայի դեմ»[1]:

Կապիտալիզմն արագ կերպով սկսեց զարգանալ, կոտակվեցին մեծ չափերի հասնող հարստություններ, կառուցվեցին երկաթուղիներ, ֆաբրիկաներ ու գործարաններ, կապիտալիստների հարուստ պալատներով՝ բազմամարդ շքեղ քաղաքներ: Սակայն այդ բոլոր «...հարստություններն իրենց ձեռքը դցեցին շափազանց փոքրաթիվ մարդիկ, իսկ ժողովուրդն է՛լ ավելի էր աղքատանում, քայքայվում, տավատանջ լինում, դնում ուրիշների մոտ վարձու աշխատանք կատարելու»[2]:

Քաղաքային բանվորները համախմբվելով կազմեցին պրոլետարիատի հզոր բանակը, որը սկսեց «բոլոր շքավորների մի նոր մեծ պայքար ընդդեմ բոլոր հարուստների»[3]: Այդ պայքարը ավելի նպատակասլաց ու կազմակերպված բնույթ ստացավ այն ժամանակ, երբ բանվորները սկսեցին միավորվել սոցիալ-դեմոկրատական պարտիայի մեջ, «ամբողջ ժողովրդի համար պահանջելով քաղաքական ազատություն»[4]:

Բանվոր դասակարգի միավորված ու հերոսական պայքարը, նրա առաջին հաջողությունները. խոշոր նշանակություն ունեցան գյուղացիական շարժումների հետագա ծավալման համար: Դրա խոշոր սրգադանքը 1902 թ. գարնանը Պոլտավայի, Խարկովի և մի շարք ուրիշ նահանգների գյուղացիական ելույթներն էին, որտեղ «գյուղացիները ոտքի ելան ու հարձակվեցին կալվածատերերի վրա, բացեցին նրանց շտեմարանները, նրանց ստացվածքը բաժանեցին միմյանց միջև, քաղցածներին հաց տվին, որ ցանել ու հընձել էր մուժիկը, բայց դրավել և իր սեփականությունն էր դարձրել կալվածատերը, պահանջեցին նոր հողաբաժանում: Գյուղացիները չդիմացան անասհման ճնշումներին և սկսեցին լավ վիճակ որոնել: Գյուղացիները վճռեցին,— և վճռեցին միանգամայն ճիշտ,— որ ավելի լավ է մեռնել ճնշողների դեմ կռվելով, քան սովամահ լինել առանց կռվի»[5]:

Սակայն գյուղացիների վիճակը չլավացավ, նրանց պայքարը հաղթանակով չպսակվեց: Ցարական կառավարությունը ամեն ան-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 6, էջ 539:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում:

դամ նրանց հայտարարում էր խռովարարներ ու կողոպտիչներ և գործի դնելով զինված ուժերի դաժան ռեժիմը, հալածում ու կողոպտում էր գյուղացիներին, նրանց խմբերով դատում և քշում էր աքսորավայրերը։

Վ. Ի. Լենինը 1903 թ. իր «Գյուղական շքավորությանը» բրոշյուրում, խոսելով գյուղացիական ապստամբությունների անհաջողությունների մասին, գրել է. «Գյուղացիական ապստամբությունը ճնշվեց, որովհետև դա խավար, անգիտակից մասսայի ապստամբությունն էր, ապստամբություն առանց քաղաքական որոշակի, պարզ պահանջների, այսինքն՝ առանց պետական կարգերը փոխելու պահանջի։ Գյուղացիական ապստամբությունը ճնշվեց, որովհետև նախապատրաստված չէր։ Գյուղացիական ապստամբությունը ճնշվեց, որովհետև գյուղական պրոլետարների և քաղաքի պրոլետարների միջև դեռ դաշինք չկար։ Ահա գյուղացիների առաջին անհաջողության երեք պատճառները»[1]։

Գյուղացիների բազմապիսի և ամենուրեք ծավալվող պայքարը, անգամ զինված ելույթները վերջանում էին անհաջողությամբ։ Այդ բացատրվում է նրանով, որ գյուղացիությունը դեռևս հետամնաց էր և խարխափում էր մթության մեջ, նա դեռ չէր ճանաչում իր իսկական թշնամուն և պայքարում էր քաղաքային պրոլետարիատից կտրված։ Գյուղացիությունը դեռևս չէր գիտակցում, «որ Ռուսաստանում և առհասարակ ամենուրեք միայն ռևոլյուցիոն պրոլետարիատն է պատմության կողմից կոչված մարդկությունն ազատագրելու և աշխարհին երջանկություն տալու»[2]։

Գյուղացիական շարժումների ժամանակ ցարական կառավարությունը բազմաթիվ գյուղացիների բանտերն է նետում։ Այստեղ գյուղացիները հանդիպում են «քաղաքական հանցավորներին»—սոցիալ-դեմոկրատներին, որոնց հետ շփում ունենալով՝ քաղաքական պայքարի նոր լիցք են ստանում։ Գյուղացիների բազմաթիվ ներկայացուցիչներ, ազատվելով բանտից, նոր թափով են շարունակում քաղաքական պայքարը գյուղում։

Մինչև 1905 թ. ռևոլյուցիան տեղի ունեցած գյուղացիական դժգոհություններն ու բողոքները հիմնականում ուղղված էին տեղական կալվածատերերի, աղալարների, բեգերի, վաշխառուների և հոգևորականների դեմ։ Դեռևս արդարություն գտնելու հույսով

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 6, էջ 540—541։

[2] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 1, էջ 8։

գյուղացիները դիմում էին ցարին, աղերսելով իրենց դրությունը թեթևացնել և ցարիզմն էլ որոշ դեպքերում ուզում էր ցույց տալ իր «հովանավորող հոր» դերը: Սակայն քիչ չեն դեպքերը, երբեմն 1905 թ. ռևոլյուցիայի ժամանակաշրջանում, երբ գյուղացիները շատ հաճախ իրենց որոշումներում ու կոչերում նշում են, որ պետք է պայքարել բոլոր ճնշողների ու շահագործողների դեմ, ով էլ որ լինի՝ «թեկուզ ինքը՝ ցարը»:

1905 թ. ռևոլյուցիայի նախօրյակին Վ. Ի. Լենինը իր «Գյուղական չքավորությանը» աշխատության մեջ առաջ էր քաշում այն կարևոր խնդիրները, որոնց համար գյուղացիությունը պետք է պայքարեր պետական կարգերը փոփոխելու և քաղաքական ազատություն ձեռք բերելու համար:

«Առաջին պահանջն է՝ դեպուտատների համաժողովրդական ժողովի հրավիրումը,— գրում է Վ. Ի. Լենինը,— որպեսզի Ռուսիայում հիմնվի ժողովրդական ընտրովի, և ոչ թե ինքնակալ կառավարություն: Երկրորդ պահանջն է՝ ազատություն բոլորին և յուրաքանչյուրին՝ տպագրելու ամեն տեսակ գրքեր ու լրագրեր: Երրորդ պահանջն է՝ օրենքով ճանաչել գյուղացիների լիակատար իրավահավասարությունը մյուս դասերի հետ և հրավիրել ընտրովի գյուղացիական կոմիտեներ՝ ամենից առաջ ամեն տեսակ ճորտատիրական սարկացումը ոչնչացնելու համար»[1]:

Սրանք էին ՌՍԴԲՊ պահանջները, որոնց պրոպագանդայի և գյուղացիական մասսաների մեջ տարածելու համար լայն աշխատանք էր տարվում: Գյուղացիները հասկանալով այս պահանջները, սկսում էին ճիշտ կերպով կողմնորոշվել թե ինչից պետք է սկսել ժողովրդի ազատության համար պայքարն ու նախապես պատրաստվել այդ պայքարի համար «և պատրաստվել ոչ թե մենակ, այլ քաղաքի բանվորների՝ սոցիալ-դեմոկրատների հետ միասին»[2]:

Վ. Ի. Լենինը բանվորների և առանձնապես սոցիալ-դեմոկրատների առջև կարևոր խնդիր է դնում օգտագործելու ամեն մի առիթ գյուղացիության մեջ սոցիալիստական գաղափարների տարածման համար: Անդամ մի քանի օրով, եթե բանվորը իրենց գյուղն է գալիս, կամ մի որևէ գյուղ է ընկնում, պետք է կարողանա ընտրել առաջադեմ գյուղացիներին, որոնք պատրաստ են պայքարելու հողի և ազատության համար. Անհրաժեշտ է «այդ գյու-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 6, էջ 542:

[2] Նույն տեղում:

գացիներին բացատրել, թե ինչից է առաջանում նրանց անելանելի տարկացումը, պատմել, թե ինչպես կալվածատերերը խաբում էին գյուղացիներին և ինչպես ազնվականների կոմիտեներում թալանում էին նրանց, պատմել հարուստների ուժի ու ցարական կառավարության կողմից նրանց պաշտպանելու մասին, պատմել սոցիալ-դեմոկրատ բանվորների մասին»[1]:

Ռուսական առաջին ռևոլյուցիայի նախօրյակին Ռուսաստանի բանվոր դասակարգը մի այնպիսի հզոր ուժ էր դարձել, որ նա արդեն ի վիճակի էր գլխավորելու և իր հետևից տանելու բազմամիլիոն ճնշված գյուղացիությանը:

* * *

Այսպիսով, կապիտալիզմի զարգացումը գյուղում արագացրեց դասակարգային շերտավորումը: Գյուղացիության մի զգալի մասը գնալով աղքատանում և պրոլետարիզացիայի էր ենթարկվում մյուս կողմից գյուղում առաջանում է ունևոր-կուլակային տնտեսությունների մի շերտ: Առաջին ռուսական ռևոլյուցիայի նախօրյակին Ռուսաստանի ամբողջ գյուղացիության 65 տոկոսը աղքատներ էին, 20 տոկոսը միջակ տնտեսություն ունեցող գյուղացիներ: Միջակ գյուղացիության թիվը գնալով նվազում էր. նրա ճնշող մեծամասնությունը աղքատանում և ավելացնում էր գյուղական պրոլետարիատի բանակը, իսկ շատ աննշան մասը միայն՝ կուլակային խավի շարքերն էր անցնում: Գյուղում գնալով ուժեղանում էր դասակարգային պայքարը մի կողմից ամբողջ գյուղացիության և կալվածատերերի մեջ, իսկ մյուս կողմից գյուղի պրոլետարիատի և գյուղական բուրժուազիայի միջև: Սակայն հասարակական կյանքի զարգացման տվյալ էտապում պայքարը կալվածատիրական դասակարգի և ամբողջ գյուղացիության միջև ավելի էական նշանակություն էր ստանում. դա համագյուղացիական պայքար էր ուղղված ճորտատիրական մնացորդների և կալվածատիրական հողատիրության դեմ:

Երկրի տնտեսական կյանքի զարգացման ընթացքը և թե գյուղացիության շահերը հրատապ խնդիր էին դնում վերացնելու ֆեոդալական-ճորտատիրական արտադրական հարաբերությունները գյուղատնտեսության մեջ: Այդ պայքարում գյուղացիության շա-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 6, էջ 543—544:

հերը համընկնում էին բանվոր դասակարգի շահերի հետ։ Բանվոր դասակարգը շահագրգռված էր օգնելու գյուղացիությանը ցարիզմի, կալվածատերերի և ճորտատիրական կարգերի մնացորդների դեմ նրա մղած պայքարում, որպեսզի կարողանա պայմաններ ստեղծել սոցիալիստական հեղափոխության համար։ Գյուղացիության մղած պայքարը կարող էր հաջողության հասնել բանվոր դասակարգի հետ նրա դաշինքի ամրապնդման և բանվոր դասակարգի ղեկավար դերի պայմաններում։

Այսպիսով, բանվոր դասակարգի և գյուղացիության շահերի համընկնումը, բուրժուա-դեմոկրատական հեղափոխության ժամանակ հիմք հանդիսացավ նրանց դաշինքի ամրապնդման համար։ Սրի սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմանների զարգացումը բնականաբար տանում էր դեպի այդ դաշինքի ամրապնդումը։ Այդ դաշինքի հետագա ամրապնդման համար ակտիվ պայքար ծավալեցին բոլշևիկները, որոնք գյուղացիությանը բանվոր դասակարգի կողմը գրավելու համար հետևողականորեն մերկացնում էին բուրժուական և մանր բուրժուական պարտիաներին, որոնք խանգարում էին այդ դաշինքի ամրապնդման գործին։

Ռուսական առաջին հեղափոխության ժամանակաշրջանը բոլշևիկների կողմից բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրապնդման համար մղվող պայքարի կարևոր մի էտապ էր։

II. ՆՈՐ ՏԻՊԻ ՄԱՐՔՍԻՍՏԱԿԱՆ ՊԱՐՏԻԱՅԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

XIX դ. վերջերին մարքսիզմն սկսում է տարածվել նաև Անդրկովկասում։ Նրա առաջին պրոպագանդիստները ցարիզմի կողմից Անդրկովկաս աքսորված ռուս մարքսիստներն էին։ Նրանք կազմակերպում էին ընդհատակյա խմբեր և կոփում Անդրկովկասի բանվորների ու աշխատավորական խավերի շարքերից առաջին ռևոլյուցիոնիստների սերունդը։

Ռուսաստանի արդյունաբերական խոշոր կենտրոններից այստեղ աքսորված քաղաքական գործիչների մի մասն ընդմիշտ մնում էր Անդրկովկասի քաղաքներում մշտական աշխատանքի։ 1901 թ. Պետերբուրգից Բաքու աքսորված ռևոլյուցիոն գործիչներից մեկը գրում էր. «...այստեղ այնպիսի մի կուսական անկյուն է, որ եթե ոչ թե մեկ, կամ երկու, այլ շատ տարիներ աքսորեին, ապա առիթ չէր լինի ձեռքերը ծալած նստել»[1]։

Բաքուն իր բազմազգ պրոլետարական մասսայով ներկայացնում էր լայն ասպարեզ ռևոլյուցիոն աշխատանքի համար։ Բաքվի պրոլետարիատի մեջ հայ բանվորները զգալի թիվ էին կազմում, որոնք ակտիվորեն մասնակցում էին երկրամասում բարձրացող ռևոլյուցիոն շարժումներին[2]։

Վ. Ի. Լենինի գլխավորած «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի Միության» (1895 թ.) օրինակով։ Անդրկովկասի բանվորական կենտրոններում՝ Բաքվում, Թիֆլիսում, Բաթումում

---

[1] Всеподданнейший отчет о произведенной в 1905 году, по высочайшему повелению, сенатором Кузьминским ревизии города Баку и Бакинской губернии, стр. 27.

[2] *ՏԿՍ Վրաց. ՍՍՌ ԿԳՊԱ, ֆ. 1, գ. 51, թթ. 40—41, ֆ. 114, գ. 179 և ուրիշները։*

ստեղծվում են սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ. Անդրկովկասում մարքսիստական, սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ հիմնելու գործում մեծ դեր են կատարում Ի. Վ. Ստալինը, Ստ. Շահումյանը, Վ. Կուռնատովսկին, Վ. Կեցխովելին, Ա. Ծուլուկիձեն, Բ. Կնունյանցը, Մ. Ցխակայան, Ս. Սպանդարյանը, Մ. Մելիքյանը և ուրիշներ։

Մարքսիզմի տարածման և սոցիալիզմը բանվորական շարժման հետ միացնելու գաղափարի մասսայականացման գործում հսկայական դեր է խաղում լենինյան «Իսկրա»-ն, որը լույս տեսնելու օրից այն տարածում է գտնում Անդրկովկասում։

XIX դ. վերջերին կապիտալիզմը թևակոխում է իր զարգացման վերջին՝ իմպերիալիզմի ստադիան։ Այդ ստադիայում դասակարգային պայքարը ավելի սուր և բացարձակ բնույթ է ստանում։ Սկսվում է պրոլետարական ռևոլյուցիայի դարաշրջանը։

Ցարական Ռուսաստանը իմպերիալիզմի բոլոր հակասությունների հանգույցակետն էր և միաժամանակ իմպերիալիզմի ընդհանուր շղթայի ամենաթույլ օղակը։ Գոյություն ունեցող տնտեսական ու քաղաքական խորը հակասությունների ընդերքում հասունանում էր այն հսկայական ժողովրդական ռևոլյուցիան, որի գլուխն էր կանգնել աշխարհի ամենառևոլյուցիոն ուժը՝ ռուսական պրոլետարիատը։ Նա ուներ իր բնական դաշնակիցը՝ ի դեմս ռուսական բազմաչարչար աշխատավոր գյուղացիության։ Արագ կերպով աճում էր բանվորական շարժումը։ Սակայն այդ շարժումը. շարունակում էր մնալ տարերային, բացակայում էր գործողությունների միասնությունը, ղեկավարության կենտրոնական ամուր կազմակերպությունը։

Ամենուրեք բարձրացող բանվորա-գյուղացիական ռևոլյուցիոն շարժումները ռուսական մարքսիստների առաջ դնում էին ամենահրատապ հարցը՝ ստեղծել բանվոր դասակարգի միասնական համառուսական մարքսիստական պարտիա, որը հիմնովին պետք է տարբերվեր օպորտունիզմի գիրկն ընկած, պրոլետարիատի շահերին դավաճանող 2-րդ ինտերնացիոնալի պարտիաներից։

Մարքսիստական նոր տիպի պարտիայի ստեղծման համար մղվող մեծ պայքարը գլխավորեցին Վ. Ի. Լենինը և նրա զինակիցներն ու աշակերտները։ Վ. Ի. Լենինը հանճարեղ կերպով հիմնավորեց պրոլետարիատի նոր տիպի պարտիայի ստեղծման անհրաժեշտությունը, մի պարտիա, որը զինված լինելով ռևոլյուցիոն առաջավոր թեորիայով՝ կարող կլիներ գլուխ տանել բանվոր դասա-

կարդին և նրա ղեկավարությամբ ամբողջ ժողովրդին՝ տապալելու ինքնակալությունը և ջախջախիչ հարված հասցնելու վրաժիտալիզմին։

Մինչև «Իսկրա»-ի հանդես գալը, ռևոլյուցիոն շարժումը Ռուսաստանում մի ընդհանուր հոսանքի մեջ դեռևս չէր մտել։ Առանձին գործարանների և քաղաքների բանվորները պայքարի էին դուրս գալիս անջատ-անջատ, իսկ սոցիալ-դեմոկրատական խմբակներն ու կազմակերպություններն էլ գործում էին իրարից կտրված, առանց միասնական ծրագրի ու կենտրոնացված ընդհանուր ղեկավարության։ Բայց 1900-ական թվականներից, երբ ռևոլյուցիոն շարժումը իր ալորտի մեջ էր առնում Ռուսաստանի բոլոր շրջանները՝ քաղաքը և գյուղը, միասնական ղեկավարության, ուրեմն և միասնական պարտիայի ստեղծման գործը դառնում է հրատապ հարց։

Հայտնի է, որ իդեալական տարընթացությունը ավելի սրվեց 1898 թ. ՌՍԴԲՊ 1-ին համագումարից հետո։ Լենինը այս շրջանը համարում է տրոհման, տատանումների շրջան։ Սոցիալ-դեմոկրատական բազմաթիվ կազմակերպություններ տարվելով տեղական պրակտիկ աշխատանքով կարծում էին, թե կարիք չկա ստեղծելու Համառուսաստանյան միասնական պարտիա։ Միասնական պարտիա ստեղծելու գործում ամենավտանգավոր թշնամին «էկոնոմիզմն» էր՝ միջազգային օպորտունիզմի տարատեսակը Ռուսաստանում։

«Էկոնոմիստները» դեմ էին միասնական պարտիա ստեղծելուն. նրանք խոնարհվում էին բանվորական շարժման տարերայնության առաջ և սահմանափակվում էին բանվորների անհրաժեշտ տնտեսական պահանջների համար մղած պայքարով։ Խնդիր էր դրվում ջախջախել ու դուրս մղել «էկոնոմիզմի» վնասակար ազդեցությունը բանվորական շարժման միջից։ Այդ խնդրի լուծումը վիճակվեց Վ. Ի. Լենինին։ Նա գտնում էր, որ անհրաժեշտ է պարզել նոր պարտիայի նպատակն ու խնդիրները, իմանալ՝ ի՞նչ պարտիա ենք ցանկանում ստեղծել. անհրաժեշտ է նախ և առաջ իդեալես սահմանազատվել «էկոնոմիստներից» և ապա՝ ստեղծել նոր տիպի պարտիա։ Հենց այդ նպատակով Լենինը, որպես պարտիայի ստեղծման առաջին քայլ, ձեռնարկեց համառուսական մարտական քաղաքական թերթի հրատարակումը։ Համառուսական այդպիսի թերթի ստեղծման իդեան Լենինը առաջին անգամ առաջադրեց 1899 թ. իր հայտնի «Մեր մոտակա խնդիրը» և «Հասունացած

հարց» հոդվածներում[1]։ Այդ միտքը Լենինը հետագայում զարգացրեց «Ինչի՞ց սկսել» հոդվածում և հետո՝ «Ի՞նչ անել» հանճարեղ աշխատության մեջ։

Վ. Ի. Լենինը անչափ մեծ նշանակություն էր տալիս այդ խնդրին և նշում էր, որ «Մենք մեր մերձավորագույն նպատակը պետք է դարձնենք պարտիայի կանոնավոր լույս տեսնող և բոլոր տեղական խմբերի հետ սերտորեն կապված օրգանի կազմակերպումը»[2]։

Լենինյան «Իսկրա»-ն հսկայական ազիտացիոն-պրոպագանդիստական և կազմակերպչական դեր խաղաց Ռուսաստանում միասնական ռևոլյուցիոն մարքսիստական պարտիա ստեղծելու գործում։ «Լենինի վառած «Իսկրա»-ից («Կայծ»-ից) հետագայում բռնկվեց ռևոլյուցիոն մեծ հրդեհի բոցը, որն խարեց այրեց աղնվականական-կալվածատիրական ցարական միապետությունը և բուրժուական «իշխանությունը»[3]։

Մինչև ՌՍԴԲՊ երկրորդ համագումարը ռևոլյուցիոն շարժումները ղեկավարում էր «Իսկրա»-ն՝ Լենինի գլխավորությամբ։ «Իսկրա»-ն մեծ չափով նպաստեց գոյություն ունեցող ցաքուցրիվ, տեղական բնույթ կրող շարժումները միավորելու, դրանց քաղաքական և իդեական մակարդակը բարձրացնելու գործին։ Լենինյան «Իսկրա»-ն դառնում է Ռուսաստանի ամբողջ ռևոլյուցիոն շարժման խթանող ուժը։ «Իսկրա»-ի խմբագրությունը ստանում էր բազմաթիվ նամակներ ու դիմումներ, որոնցից երևում է, որ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները ամենայն դոհունակությամբ ընդունում էին «Իսկրա»-ի առաջադրած ծրագրային խնդիրները և գործում էին նրա ղեկավարությամբ՝ համարելով այն իրենց սեփական օրդանը։

Լենինյան «Իսկրան» կոփեց պրոֆեսիոնալ ռևոլյուցիոներների այն կուռ բանակը, որը դարձավ հերոսական բոլշևիկյան պարտիայի հիմքը։

«Իսկրա»-ի ամեն մի նոր համար լուսավորում էր բանվոր դասակարգի ռևոլյուցիոն պայքարի ուղին, նոր, ավելի բարձր աստիճանի էր հասցնում մարքսիզմի ռևոլյուցիոն թեորիայի համար մղվող պայքարի դրոշը։ Մարքսիզմի գանձարանում առանձնապես կարևոր ներդրումներ էին «Իսկրա»-ի էջերում տպագրված Վ. Ի. Լենինի հոդվածները։ Այդ հոդվածներում Լենինը հիմնավորեց նոր

---

1 Տես Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 4։

2 Նույն տեղում, էջ 198։

3 ՀԱՄԿ(բ)Պ պատմություն, համառոտ դասընթաց, 1946, էջ 35։

տիպի պարտիայի ծրագրային, տակտիկական և կազմակերպչական սկզբունքները։ Դրանցում Լենինը բնորոշեց նաև տարբեր դասակարգերի դերը Ռուսաստանի վերահաս ռևոլյուցիայի մեջ։ Լենինը նշեց, որ այդ ռևոլյուցիայի գլխավոր շարժիչ ուժը պրոլետարիատն է, իսկ նրա դաշնակիցը՝ ամբողջ գյուղացիությունը։ Նա ցույց տվեց նաև բուրժուազիայի կոնտրռևոլյուցիոն դերը իմպերիալիզմի և պրոլետարական ռևոլյուցիայի դարաշրջանում։ Լենինը միաժամանակ մահացու հարված հասցրեց «լեգալ մարքսիստներին», «էկոնոմիզմին» և բոլոր տիպի օպորտունիստներին, նացիոնալիստներին և մարքսիզմը աղավաղողներին ու դեհկացնողներին։ Այդ տեսակետից շատ խոշոր նշանակություն ունեցավ Վ. Ի. Լենինի «Ի՞նչ անել» հայտնի աշխատությունը, որը լույս տեսավ արտասահմանում՝ 1902 թ. մարտին։

Մերկայնելով ու ջախջախիչ հարված հասցնելով օպորտունիստներին, Վ. Ի. Լենինը «Ի՞նչ անել» գրքում շարադրեց նոր տիպի պարտիայի իդեոլոգիական հիմքերը։

Անդրկովկասի և առանձնապես Բաքվի ռևոլյուցիոն շարժման զարգացման գործում, «Իսկրա»-ի դերը հսկայական էր։ Բաքուն դարձավ լենինյան «Իսկրա»-ի կարևոր բաղաներից մեկը։ 1901 թ Բաքվում կազմակերպվեց ընդհատակյա տպարան «Նինա» անունով։ Այդ տպարանում 1901 թ. սեպտեմբերից Ի. Վ. Ստալինի և Լադո Կեցխովելու խմբագրությամբ սկսեց տպագրվել Անդրկովկասում առաջին անգամ «Բրձոլա» («Պայքար») մարքսիստական թերթը, որը լենինյան «Իսկրա»-ի լավագույն հետևորդն էր և նրա գաղափարների տարածողը Անդրկովկասում։

Բաքվի իսկրայականները Լադո Կեցխովելու, Բ. Կնունյանցի և մյուսների գլխավորությամբ մեծ աշխատանք ծավալեցին։ Կեցխովելին մշտական կապ հաստատեց Լենինի հետ։ Արտասահմանից Լենինը ուղարկում էր «Իսկրա»-ի համարները և այլ մարքսիստական գրականություն, որը Բաքվի միջոցով տարածվում էր Անդրկովկասում և Ռուսաստանի տարբեր քաղաքներում, առանձնապես Ռուսաստանի հարավային շրջաններում։ «Իսկրան» Ռուսաստան էր ուղարկվում հիմնականում Անդրկովկասի վրայով, որի կարևոր ուղիներն էին Վիեննա—Թավրիզ—Բաքու, իսկ ավելի ուշ Մարսել—Բաթում—Բաքու։ «Իսկրա»-ն իր թղթակիցներն ուներ Անդրկովկասի մի շարք քաղաքներում և շրջաններում։

Լենինյան «Իսկրա»-ն դաստիարակեց ու կոփեց պրոֆեսիոնալ ռևոլյուցիոներների մի ամբողջ սերունդ։ Նա դարձավ մարքսիստա-

կան ռևոլյուցիոն վարդերի մարտական դարբնոց։ Ռուսաստանի տարբեր կենտրոններում, որպես «Իսկրա»-ի գործակալներ, աշխատում էին ռևոլյուցիոն ակտիվ գործիչներ, Լենինի հավատարիմ գինակիցներ Ստարինը, Կալինինը, Բաումանը, Բաբուշկինը, Լադո Կեցխովելին, Բ. Կնունյանցը և շատ ուրիշներ։

«Իսկրա»-ի պահանջը բանվորական մասսաների մեջ գնալով աճում էր, դրա համար էլ Բաքվի իսկրայականները ձեռնամուխ եղան Բաքվի «Նինա» ընդհատակյա տպարանում «Իսկրա»-ի համարները արտատպելու և լայն չափով բանվորների մեջ տարածելու վարիր աշխատանքին։ Լենինը մեծ գոհունակությամբ ընդունեց այդ նախաձեռնությունը[1]։

«Իսկրա»-ի համարներում նաև սիստեմատիկաբար լուսաբանվում էր Անդրկովկասի արդյունաբերական կենտրոնների և գյուղական շրջանների ռևոլյուցիոն շարժումների ընթացքը։

1901 թ. մայիսմեկյան տոնակատարությունը Ռֆֆլիսում հանդիսավոր կերպով է նկարագրում «Իսկրա»-ն։ Քաղաքի կենտրոնում մոտ երեք հազար բանվորներ հավաքվելով՝ սկսեցին դեմոնստրացիան։ Նախորդ տարիներին բանվորները այդ տոնը անց էին կացնում քաղաքից դուրս, բաց դաշտում, անկեղծ պայմաններում։ Այս անգամ բանվորները որոշեցին քաղաքում ազատ ցույց կատարել և դուրս եկան փողոց՝ կարմիր դրոշակներով ու ռևոլյուցիոն լոզունգներով։ Նրանք առաջից տանում էին նաև Մարքսի, Էնգելսի և Լասալի պորտրետները։ Հանկարծ ամեն կողմից վրա տվին ժանդարմները։ Անզեն բանվորներին սկսեցին դաժանորեն ծեծել ու սվինահար անել։ Սոսկալի իրարանցում սկսվեց ամբողջ քաղաքում։ Այդ ջարդարարությունը շարունակվեց 3/4 ժամ։ Այդ ժամանակում անմեղ մարդկանց շատ արյուն հոսեց, շատերը վիրավոր ընկան։ «Ահա ընկնում է վիրավոր բանվորը, նա ամբողջովին արյան մեջ է։ Ոստիկանները սկսում են նրան ոտնահարել, իսկ նա առանց դա-

---

[1] 1901 թվականի աշնանը Մյունխենից մի ծանրոց ուղարկվեց Բաքու, որի մեջ գրված էին այրոմներ, իսկ նրանց կազմերի մեջ պահված էին «Իսկրա»-ի հոկտեմբեր ամսվա 9 և 10 համարների մասերիցները, որոնք «Նինա» տպարանում արագ բազմացվեցին և ուղարկվեցին Ռուսաստանի ու Անդրկովկասի տարբեր մասերը։ Նույն թվականի դեկտեմբերին «Նինան» արտատպեց նաև 1901 թ. նոյեմբերի 20-ի «Իսկրա»-ի № 11։ «Նինա» տպարանում տպագրվում էին նաև մարքսիզմի կլասիկների մի շարք աշխատություններ, դրանց թվում նաև Լենինի «Ի՞նչ անել» հռչակավոր աշխատությունը, «Գյուղական չքավորությանը», Մարքսի և Էնգելսի «Կոմունիստական պարտիայի մանիֆեստը» և այլն։

դարի շարունակում է դառալ. «Կեցցե՛ սոցիալիզմը, կեցցե՛ ուիթժամյա աշխատանքը»[1]։ Ցարական ժանդարմերիայի ամբողջ ուժը գործի անցավ ճնշելու բանվորների խաղաղ ցույցը։ Երեք օր անընդհատ քաղաքը ռազմական դրության մեջ էր[2]։ Թիֆլիսում ժանդարմերիան մեծ քանակությամբ ձերբակալություններ կատարեց։ Բանտարկված բանվորների և ռևոլյուցիոն գործիչների մի մասը աքսորվեց Ռուսաստանի տարբեր շրջաններ։ 1902 թ. նոյեմբերի 21-ին հայտնի դարձավ, որ բանվորներից երկուսին բանտում երկար ժամանակ տանջելուց հետո էտապային կարգով ուղարկելու են խարկով։ Գնացքը շարժվելուց առաջ հանկարծ բանտարկվածների վագոնի մոտ հավաքվեցին 300 բանվոր և սկսեցին երգել ռևոլյուցիոն երգեր և ապա նրանց գլխի վրա սկսեց ծածանվել կարմիր դրոշը, որի վրա գրված էր. «Կորչի ինքնակալությունը»։ Գնացքը շարժվեց և բանվորները ջերմ սիրով ճանապարհեցին իրենց աքսորյալ ընկերներին։ «Կորչի ինքնակալությունը» կոչը ամենուրեք թնդացնում էր օդը։ Այդ ցույցը ավարտելուց հետո հաջողվեց թաքցնել կարմիր դրոշը։ «Պոլիցիան և ժանդարմները պատրաստված չէին,— գրում է «Իսկրա»-ն։ Նրանք շփոթվեցին և մասսայի կողմից հետ մղվեցին»[3]։

«Իսկրա»-ի № 11 նշվում է նաև ՌՍԴԲՊ Թիֆլիսի Կոմիտեի ծավալած դժվարին աշխատանքը բազմազգ բանվորների մեջ։ Կոմիտեն 1901 թ. հունվարից մինչև հոկտեմբեր հրապարակել է ռուսերեն, վրացերեն և հայերեն լեզուներով 16 պրոկլամացիա 19. 800 օրինակով[4]։

«Իսկրա»-ի մի ուրիշ թղթակից Բաքվից հաղորդում է, որ կապիտալիստները սարսափում են բանվորական «բունտից»։ Պիտերի օրինակով նշանակվում են «հերթապահ» դռնապաններ, «կարծես թե բավական չէ, որ ամեն մի տան մեջ կա լրտես—դռնապան»[5]։

Այնուհետև թղթակիցը հաղորդում է, որ «Իսկրա»-ն բանվորներին դուր է գալիս և մեծ հետաքրքրությամբ կարդացվում է։ «Ճնշումը շարունակվում է և սրվում է,— գրում է հետո թղթակիցը,— գործարանների կեսը կանգնած են։ Բանվորներին մաս-

---

1 «Искра», № 6, 1901։

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում, № 31, 1903, 1 հունվարի։

4 Նույն տեղում, № 11, 1901։

5 Նույն տեղում, № 19, 1902։

սայլաբար ազատում են գործից»։ Հետո թղթակիցը նշում է, որ վերջին 10 ամսվա ընթացքում, ոստիկանությունը հարկադրաբար իրենց ծննդավայրն է ուղարկել մոտ 10 հազար բանվորների[1]։

«Իսկրա»-ն իր համարներից մեկում հաղորդում է, որ Թիֆլիսում «բանվորական շարժումը զարգանում է իր լայնությամբ և խորությամբ. ֆաբրիկաները, գործարանները, տպարանները և շատ թե քիչ աշքի ընկնող արհեստանոցները տեղական սոցիալ-դեմոկրատական կոմիտեի հսկողության տակ են ընկնում, իսկ ժողովուրդը և, անգամ ինտելիգենցիան, առանձնահատուկ հաճույքով է կարդում կոմիտեի աճելագալ հրատարակությունը և նրա պրոկլամացիաները, որոնցով մեծ չափով ոգևորվում է մեր քաղաքը»[2]։

«Իսկրա»-ն մերկացնում է ցարական չինովնիկների վարած շովինիստական բաղաքականությունը Անդրկովկասում։ «Իսկրա»-ի № 32-ում (1903 թ.) հաղորդվում է, որ ցարական չինովնիկները, Անդրկովկասյան երկաթգծում աշխատող կանանց ամեն կերպ աշխատում էին դուրս մղել աշխատանքից, մյուս կողմից նրանք սահմանափակում էին երկաթգծի արհեստանոցներում տեղական բանվորների ընդունելությունը, արգելում էին նշանակել նրանցից ավագ վարպետներ։

«Իսկրա»-ի № 44-ում հաղորդվում է, որ Բաքվի ընդհանուր գործադուլին, որը լուրջ կերպով նախապատրաստվել էր Բաքվի Կոմիտեի կողմից, մասնակցել են 40 հազ. մարդ։ «Բանվորական շարժումը Կովկասում դեռևս նոր է,— գրում է «Իսկրա»-ն,— սակայն նա արդեն ունեցել է պրոլետարիատի մի շարք հրաշալի ելույթներ։ Կարճ ժամանակում Կովկասի բանվորները անցել են մի շարք ուրիշ վայրերից, որոնք ավելի շուտ էին մտել շարժման մեջ»։

«Իսկրա»-ն նշում է, որ Անդրկովկասում հուլիսյան գործադուլներին Բաքվում մասնակցել են մոտ 45 հազար բանվոր, Թիֆլիսում՝ 15 հազար, Բաթումիում և Փոթիում մոտ 10 հազար, Անդրկովկասյան երկաթգծում՝ մոտ 5 հազ., Չիաթուրի լեռնային շրջանում՝ մոտ 20 հազար։ Գործադուլավորների թիվը Անդրկովկասում հասել է մոտ 100.000-ի։ Բացի այդ, շարունակվում էին գյուղացիական ապստամբությունները Անդրկովկասի մի շարք շրջան-

---

[1] «Искра», № 19, 1902.

[2] Նույն տեղում։

ներում, որտեղ գյուղացիները հրաժարվում էին մշակել հողերը հին պայմաններով[1]։

«Իսկրա»-ն կարճ ժամանակում Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները միացնող կարևոր օրգանը դարձավ, «Իսկրա»-ն նախապատրաստեց պարտիայի II համագումարի հրավիրումը, որը հիմք դրեց Ռուսաստանում նոր տիպի մարքսիստական պարտիայի։

ՌՍԴԲՊ 2-րդ համագումարը, որը տեղի ունեցավ 1903 թ. հուլիսի 17(30)-ին, շատ բարձր գնահատեց Լենինյան «Իսկրա»-ի աշխատանքը, նշելով, որ նա մեծ դեր կատարեց պարտիայի իդեական միավորման գործում, օպորտունիստական հոսանքների դեմ մղած պայքարում, պարտիական կազմակերպությունների պրակտիկ աշխատանքի ղեկավարման և նրանց կազմակերպչորեն ղեկավարելու և միավորելու աշխատանքներում։ Այդ բոլորից ելնելով ՌՍԴԲՊ II համագումարը «Իսկրա»-ն հայտարարեց պարտիայի կենտրոնական օրգան։

* * *

Անդրկովկասում առաջացած բանվորական իսկրայական խմբակները, 1901 թ. հիմք են դնում ՌՍԴԲՊ Բաքվի, Թիֆլիսի և Batումի կոմիտեներին։ Վ. Ի. Լենինը առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում Բաքվի պրոլետարիատի վրա։ Այդ առթիվ Ս. Մ. Կիրովը գրել է.

«Ընկ. Լենինը հեռու գտնվելով նավթային ծխոտված վիշկաներից, հրաշալի կերպով հաշվի էր առնում, թե Բաքուն իր պրոլետարիատով ռևոլյուցիայի համար ինչպիսի հզոր ամրոց կարող է ծառայել, դրա համար էլ իր ծավալուն աշխատանքի առաջին իսկ օրից Բաքվի բանվորներին չի թողել առանց հայրական ուշադրության... Ռևոլյուցիոն շարժումը իր առաջացման հենց սկզբից կապվել է ընկ. Լենինի և այն ժամանակվա դեռևս միասնական սոցիալ-դեմոկրատական պարտիայի լավագույն լենինյան մասի հետ»[2]։

Անդրկովկասի աշխատավորության մեջ ռևոլյուցիոն լայն աշխատանք ծավալեցին սոցիալ-դեմոկրատական կոմիտեները, որոնք

---

[1] «Искра», № 47, 1903։

[2] „26 лет Бакинской организации большевиков", стр. 103.

կառուցված լինելով ինտերնացիոնալիզմի սկզբունքներով՝ կոփում էին ռուս, հայ, վրացի, ադրբեջանցի և մյուս ժողովուրդների բարեկամությունը և կազմակերպում նրանց միատեղ պայքարը։

Հայաստանում ևս հիմք են դրվում սոցիալ-դեմոկրատական խմբակների։ Դեռևս 1899 թ. Ստ. Շահումյանի անմիջական աշխատանքի շնորհիվ Ջալալօղլիում ստեղծվում է Հայաստանում առաջին մարքսիստական խմբակը։

Հայ աշխատավորության միավորման և նրանց ինտերնացիոնալ դաստիարակման գործում մեծ դեր են կատարում հայ առաջավոր բանվորները և առաջին մարքսիստները։ 1902 թ. կեսերին կազմակերպվում է «Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը», որը ամբողջովին կանգնած լինելով լենինյան գիրքերի վրա՝ «Իսկրա»-ի հավանությանն է արժանանում և ապա միավորվում է Թիֆլիսի կոմիտեի հետ[1]։

Հայ ռևոլյուցիոն հասարակական մտքի և դեմոկրատական շարժման զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ հայ սոցիալ-դեմոկրատական մամուլի ստեղծումը, որը սերտորեն կապված էր լենինյան «Իսկրա»-ի հետ։ «Իսկրա»-ն նոր տիպի մամուլի մի փայլուն օրինակ էր, որը լայն շափով տարածվելով Անդրկովկասում՝ հիմք դրեց ազգային լեզուներով հրատարակվող ռևոլյուցիոն մի շարք թերթերի։

Հայ առաջին ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատներ Ստ. Շահումյանը, Բ. Կնունյանցը, Ս. Սալանդարյանը և ուրիշները կատարելով Վ. Ի. Լենինի հանճարեղ ցուցումները, որ «առանց ռևոլյուցիոն թեորիայի չի կարող լինել նաև ռևոլյուցիոն շարժում...»,[2] հիմք են դնում հայ սոցիալ-դեմոկրատական մամուլին, որը հանդես եկավ որպես մասսաների կոլեկտիվ պրոպագանդիստ, կոլեկտիվ ագիտատոր և կազմակերպիչ։ 1901 թ. սեպտեմբերին Անդրկովկասում առաջին իսկրայական վրացերեն «Բրձոլա» թերթից հետո 1902 թ. հոկտեմբերի 1-ին լույս է տեսնում Ստ. Շահումյանի և Բ. Կնունյանցի ղեկավարությամբ հայերեն «Պրոլետարիատ» թերթը, որպես հայ սոցիալ-դեմոկրատների միության օրգան։ «Պրոլետարիատ»-ի հրատարակման գործում ակտիվ աշխատանք էին տանում Ա. Զուրաբյանը, Դ. Շահվերդյանը, Ս. Խանոյանը, Ա. Խումարյանը և ուրիշները։

---

[1] „Искра", № 32, 1903.

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 5, էջ 487։

«Պրոլետարիատը» մեծ դեր կատարեց մարքսիստական գաղափարախոսության տարածման և բուրժուական նացիոնալիստական իդեոլոգիայի ջախջախման գործում։ «Անցյալ տարիների փորձը, մեզ հույս է ներշնչում,— գրում է «Պրոլետարիատ»-ը,— որ սոցիալ-դեմոկրատիան մեծ հաջողություն է ունենալու այդ գործում։ Բավական է հիշել, որ նա յուր դեռ մանուկ հասակում ամենահաջող կերպով գործադուլներ է առաջացնում և, որ գլխավորն է, նա փայլուն կերպով հաջողացրեց 1901 թ. ապրիլի 22-ի ցույցը Թիֆլիսում, ներկա տարվա (1902 թ.—Ս. Ա.) ցույցերը Բաքվում և Բաթումում...»[1]։

Թերթը մեծ հաստատակամությամբ նշում էր, որ մարքսիզմի ամենահաղթ գաղափարը շուտով բոլոր ճնշվածների ու տգիտության կարոտ մարդկանց սեփականությունը կդառնա, «որովհետև նրանք, ովքեր անդադար միջոցներ են որոնում ներկա հասարակական բազմաթիվ չարիքների ու հակասությունների դեմ, չեն կարող օրդանապես չգրավվել այն գիտական ուսմունքով, որը պնդում է, թե միայն ժամանակակից բանվոր դասակարգն է մեզ փրկելու այս բոլոր սխտերից ու տանելու դեպի համամարդկային փայլուն ու վսեմ իդեալը»[2]։

«Պրոլետարիատ»-ը հենց առաջին համարում, որպես առաջնորդող տպագրում է Հայ սոցիալ-դեմոկրատների միության «Մանիֆեստ»-ը, ուր հայտարարվում էր, որ հայ սոցիալ-դեմոկրատները միությունը ՌՍԴԲՊ ճյուղերից մեկն է, որը նրա հետ միասին պայքարելու է պրոլետարիատի շահերի համար[3]։ Այդ «Մանիֆեստ»-ին Վ. Ի. Լենինը բարձր գնահատական է տալիս[4]։ Վ. Ի. Լենինը իր «Հայ սոցիալ-դեմոկրատների մանիֆեստի մասին» հոդվածում հանդամանորեն կանգ է առնում «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» գործունեության վրա, միաժամանակ նշում է նրա օրգան «Պրոլետարիատ» թերթի առաջին համարի բովանդակությունը։ Վ. Ի. Լենինը նշում է, որ թերթը ճիշտ է բնորոշում բանվոր դասակարգի քաղաքական պայքարի խնդիրները և առանձնապես ընդգծում է ազգային հարցի ճիշտ դրվածքը «Մանիֆեստ»-ում։ «Մեզ համար,— գրում է Վ. Ի. Լենինը,— առանձնապես հե-

---

1 «Պրոլետարիատ», № 1, 1902։

2 Նույն տեղում։

3 Տես «Искра», № 33, 1903։

4 Նույն տեղում։

տարբերական է Միության վերաբերմունքը դեպի ազգային հարցը»[1]։

Վ. Ի. Լենինը լրիվ մեջ է բերում ազգային հարցի վերաբերյալ «Մանիֆեստ»-ի մարքսիստական դիրքորոշումը։ Առանձնապես Կովկասին վերաբերվող մասում նշվում էր. «Ինչ վերաբերվում է Կովկասին, ապա, նկատի ունենալով նրա բնակչության ծայրահեղ բազմազգությունը, մենք պետք է ձգտենք միավորելու տեղական բոլոր սոցիալիստական տարրերին և տարբեր ազգությունների պատկանող բոլոր բանվորներին. մենք պետք է ձգտենք ստեղծելու միասնական, ամրակուռ սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն,— ինքնակալության դեմ ավելի հաջող պայքար մղելու համար։ Ապագա Ռուսաստանում մենք ընդունում ենք բոլոր ազգերի ազատ ինքնորոշման իրավունքը, որովհետև ազգային ազատությունը մենք դիտում ենք միայն իբրև ընդհանրապես քաղաքացիական ազատության տեսակներից մեկը»։ Այնուհետև Վ. Ի. Լենինը մեծ դոհունակությամբ նշում էր. «Մենք ամբողջ հոգով ողջունում ենք «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» Մանիֆեստը և մանավանդ ազգային հարցի ճիշտ դրվածքը տալու նրա ուշագրավ փորձը»[2]։

Ազգային հարցում անհրաժեշտ է, ընդգծում է Վ. Ի. Լենինը, հաշվի առնել երկու հիմնական սկզբունք, որոնցով պետք է առաջնորդվեն Ռուսաստանի բոլոր սոցիալ-դեմոկրատները, որը «Միությունը միանգամայն ճիշտ է նշել։ Այդ, նախ, ոչ թե ազգային ավտոնոմիայի, այլ քաղաքական ու քաղաքացիական ազատության և լիակատար իրավահավասարության պահանջն է. այդ, երկրորդ, պետության կազմի մեջ մտնող յուրաքանչյուր ազգության ինքնորոշման իրավունքի պահանջն է»[3]։

Վ. Ի. Լենինը միշտ էլ կարևոր նշանակություն է տվել Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների աշխատանքին և բազմիցս մատնացույց է արել նրանց, որպես ֆինտերնացիոնալի փայլուն օրինակ։

1903 թ. մարտին Թիֆլիսում գումարվեց Կովկասյան սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների առաջին հիմնադիր համագումարը, «որը Կովկասյան Միության ակիզբը դրեց, կազմակերպության կառուցման ինտերնացիոնալ սկզբունքը նորից հրա-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 6, էջ 410։

2 Նույն տեղում, էջ 411։

3 Նույն տեղում։

չակվեց որպես միակ ճիշտ սկզբունք»[1]։ Համագումարը ընտրեց ՌՍԴԲՊ Կովկասյան Միութենական կոմիտե (բաղկացած 9 հոգուց)։ Նրա մեջ մտան Ի. Ստալինը, Ս. Ծուլուկիձեն, Բ. Կնունյանցը, Մ. Ցիտակյան, Մ. Բոչորիձեն, Ա. Զուրաբյանը, Ֆ. Մախարաձեն, Ս. Խանոյանը և ուրիշները։ Հետագայում Կոմիտեի մեջ է մտնում նաև Ստ. Շահումյանը։

Համագումարի որոշմամբ միացվում են վրացերեն «Բրձոլա» և հայերեն «Պրոլետարիատ» թերթերը և սկսում են լույս տեսնել հայերեն՝ «Պրոլետարիատի կռիվը» վրացերեն «Պրոլետարիատիս բրձոլա» և սկսած 1905 թ. ռուսերեն «Борьба пролетариата» թերթերը։

Հայ մարքսիստական մամուլի և Հայաստանում առաջին սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հիմնադիրներից մեկը՝ Վ. Ի. Լենինի հավատարիմ աշակերտ Ստ. Շահումյանն էր։ Դեռևս 1902 թ. Ղ. Աղայանի գործունեության 40-ամյա հոբելյանի առթիվ գրած ճառում Ստ. Շահումյանը հետևողականորեն մերկացնում է հայ լիբերալիզմի արատները և ցույց տալիս նոր, մարքսիստական գրականություն ստեղծելու անհրաժեշտությունը։ Նա նշում էր. ով ցանկանում է, որ հայ ժողովուրդը գրականություն ունենա՝ նա պիտի ամենից առաջ կռիվ հայտարարի այն պայմանների, քաղաքական այն կարգերի դեմ, որոնք արգելում են ժողովրդի, այդ հասարակական օրգանիզմի ազատ, բնական զարգացումը...»[2]։

Ստ. Շահումյանը հանդես է գալիս որպես մարքսիստական իդեոլոգիայի լավագույն պրոպագանդիստ և տաղանդավոր տեսաբան հայ իրականության մեջ։ Նա ուռոլյուցիոն պայքար է հայտարարում բուրժուական նացիոնալիզմին և նշում է, որ նրա «փլատակների վրա մենք կարմիր, պրոլետարական դրոշակ ենք պարզում, որի վրա գրում ենք առայժմ.

«Կռի՛վ բռնակալության դեմ,
Կեցցե՜ քաղաքական ազատությունը»...[3]։

Կովկասյան սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները լայն աշխատանք են ծավալում ՌՍԴԲՊ 2-րդ համագումարի նախապատրաստման գործում և ընտրում են իրենց դելեգատները։ Բաքվի կոմիտեից դելեգատ ընտրվեց Բ. Կնունյանցը (Ռուսով)։

---

1 Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 2, էջ 335—336։
2 Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, Երևան, 1948, էջ 17։
3 Նույն տեղում, էջ 21։

Համագումարում կարևոր նշանակություն ունեցավ Բ. Կնունյանցի ելույթը, որը պարտիական ամբողջ հետևողականությամբ մերկացրեց օպորտունիստական տարրերին և պաշտպանեց Լենինյան գիծը։

Վ. Ի. Լենինը «Մի քայլ առաջ, երկու քայլ ետ» աշխատության մեջ շատ բարձր է գնահատել համագումարում Բ. Կնունյանցի արտասանած ճառը[1]։

ՌՍԴԲՊ 2-րդ համագումարից հետո Անդրկովկասի պարտիական կազմակերպությունները ավելի լայն աշխատանք ծավալեցին բանվոր դասակարգի շարքերը ամրապնդելու և նրա քաղաքական պայքարը գլխավորելու գործում։

1903 թ. հոկտեմբերին Թիֆլիսում հրավիրվում է ՌՍԴԲՊ Կովկասյան Միության 2-րդ համագումարը, որը ընդունում է պարտիայի 2-րդ համագումարի մշակած ծրագիրն ու կանոնադրությունը։ Ամբողջովին կանգնելով բոլշևիկյան դիրքերի վրա, համագումարը դատապարտում է մենշևիկյան դավաճաններին և նրանց ֆրակցիոն քայքայիչ աշխատանքը։

Վ. Ի. Լենինը մեծ գոհունակությամբ էր նշում ՌՍԴԲՊ-ի Կովկասյան Միության եռանդուն աշխատանքը, նրա ճիշտ քաղաքական գիծը և միշտ էլ ամենաջերմ հոգատարություն էր ցուցաբերում նրա գործունեության նկատմամբ։ Արտասահմանից գրած իր նամակներից մեկում Վ. Ի. Լենինը նշում է. «Մենք այժմ եռանդուն մտածում ենք այստեղ վրացական և հայկական գրականության հրատարակության կազմակերպման մասին։ Այդ գործին ձեռնամուխ են եղել ձեռնհաս ընկերներ»[2]։

Վ. Ի. Լենինի ցուցումներով այդ ուղղությամբ ժնևում մեծ աշխատանք է տանում Ստ. Շահումյանը։ Նրա թարգմանությամբ հայերեն լույս է տեսնում անլեգալ գրականության մի ամբողջ սերիա, այդ թվում նաև Մարքսի և Էնգելսի «Կոմունիստական պարտիայի մանիֆեստը», որը լույս է տեսնում ժնևում 1904 թ.։ Ստ. Շահումյանի թարգմանած մարքսիզմի կլասիկների աշխատությունները, ինչպես նաև նրա տեսական բաղմաթիվ աշխատություններն ու հոդվածները կարևոր նշանակություն ունեցան մարքսիզմի տարածման համար հայ աշխատավորության մեջ։

Ստ. Շահումյանը սերտ կապ էր պահպանում Վ. Ի. Լենինի

---

1 Տես Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 7, էջ 399։

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 34, էջ 199։

հետ և նրա ցուցումներով լայն աշխատանք էր ծավալել Անդրկովկասում։

Ստ. Շահումյանը Վ. Ի. Լենինին տեղյակ է պահում Անդրկովկասում և հատկապես հայ իրականության մեջ կատարվող քաղաքական իրադրությանը և ամեն կերպ ցանկանում էր Վ. Ի. Լենինի, որպես առաջնորդի աջակցությունն ու օգնությունը ստանալ հայ հասարակական մտքին ռևոլյուցիոն նոր ուղղություն տալու համար։ Այդ տեսակետից ուշագրավ է Ստ. Շահումյանի 1904 թվականի նոյեմբերի 28-ին Վ. Ի. Լենինին ուղղված մի նամակը։

«Մեծարգո Վլադիմիր Իլյիչ.

Շտապում եմ կատարել մի հանձնարարություն, որ մի խումբ հայ ուսանողներ ուղարկել են ինձ Պետերբուրգից մի ընկերոջ միջոցով։ Այդ խումբը որոշել է հրատարակել հայերեն լեզվով մի լեգալ մարքսիստական ժողովածու...

Խումբը հանձնարարում է ինձ խնդրելու նաև Ձեզ և Պլեխանովին մասնակցելու ժողովածուին, եթե Դուք ժամանակ կգտնեք։ Ձեռնարկության գլուխ կանգնած է անձնապես ինձ լավ ծանոթ մի ընկեր, որ անցյալ տարի աշխատել է Թիֆլ[իսի] կոմ[իտեում] («ժայռակամներից» է)[1]։

Այստեղից երևում է, թե Ստ. Շահումյանը ինչպիսի մեծ հոգատարություն է ցուցաբերում դեպի հայերեն մարքսիստական գրականության տարածման գործը։

Թե՛ արտասահմանում և թե՛ Անդրկովկասի անլեգալ տպարաններում հրատարակվող սոցիալ-դեմոկրատական ռևոլյուցիոն գրականությունը մեծ քանակությամբ տարածվում էր Հայաստանի տարբեր շրջաններում, բանվորների, գինվորների և աշխատավոր գյուղացիության մեջ։ Անլեգալ գրականություն տպագրվում էր նաև Ալեքսանդրապոլի տպարանում[2], ինչպես նաև Կարսում, իսկ Զանգեզուրի գավառում անլեգալ գրականություն ստացվում և տարածվում էր Շուշիից։ Հետագա տարիների ընթացքում Ալեքսանդրապոլում տպագրված կոչերն ու թռուցիկները հայտնաբերվում են անգամ Ռուսաստանի կենտրոնական նահանգներում, որոնք տարածվել էին այնտեղ արձակուրդ վերադարձող ռուս գինվորների միջոցով[3]։

1903 թ. հուլիսին Բաքվի պրոլետարիատը ՌՍԴԲՊ Բաքվի կո-

---

1 Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, Երևան, 1948, էջ 27։

2 Տես «Пролетарий», № 23, 1905։

3 Տես ՍՄԿՊ ԿԿ կից ՄԷԼՍԻ-ի ինստ. Հայկական ֆիլ. արխիվ, ֆ. 33, գ. 251։

միտեի ղեկավարությամբ պայքարի դուրս եկավ կապիտալիստների դեմ։ Շուտով Բաքվի օրինակին հետևեցին Թիֆլիսի, Բաթումի, Փոթիի բանվորները, ինչպես նաև անդրկովկասյան երկաթուղայինները։ Հայաստանի երկաթուղայիններ, Ալավերդիի և Ղափանի պղնձաձուլարանները ևս մի շարք ելույթներ են կազմակերպում։

Բանվորական շարժումները անմիջական ազդեցություն են ունենում գյուղացիական շարժումների վրա։ Հայտնի են Հաղպատի գյուղացիների, ինչպես նաև Լոռու մի շարք գյուղերի 1903 թ. նոյեմբերի ռևոլյուցիոն ելույթները, որոնք ցարական վարչությունը ճնշեց զինված ուժերով։ ՌՍԴԲՊ Կովկասյան Միությունը անմիջականորեն ղեկավարում է երկրամասում ծավալվող ռևոլյուցիոն շարժումները և նրանց ճիշտ քաղաքական ուղղություն է տալիս։

Անդրկովկասի բազմաթիվ քաղաքներում, բանվորական շրջաններում ու զինվորական մասերում ստեղծվում են ՌՍԴԲՊ տեղական կազմակերպություններ։

1902—1905 թթ. ընթացքում Հայաստանում ստեղծվում են ՌՍԴԲՊ Կովկասյան Միության՝ Հաղպատի, Ալավերդու, Ալեքսանդրապոլի, Երևանի, Կարսի, Սարիղամիշի, Ղափանի, Նոր Բայազետի կազմակերպությունները։

1903 թ. Երևանի արդյունաբերական ձեռնարկություններում, երկաթգծում, ուսումնական հաստատություններում ստեղծվում են ՌՍԴԲՊ տեղական խմբեր ու բջիջներ, որոնք օգնություն և ցուցումներ են ստանում ՌՍԴԲՊ Կովկասյան Միության կողմից։ 1904 թ. սկզբին Երևանի կայարանի երկաթուղայինների սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը ընդգրկում էր 45 բանվոր։

Այդպիսի կազմակերպություն էր ստեղծվել Երևանի թեմական դպրոցի և արական ու իգական գիմնազիաների ուսուցիչներից և սովորող երիտասարդներից։

1904 թ. պարտիական հատուկ հանձնարարությամբ Երևան է գալիս Տոմսկի Պոլիտեխնիկական ինստիտուտի ուսանող Ալեքսանդրը Մալխասյանը, որը նշանակալից աշխատանք է տանում տեղական կազմակերպությունները ամրապնդելու, ինչպես նաև դաշնակցական և նացիոնալիստական մյուս պարտիաներին մերկացնելու և աշխատավոր մասսաներին բոլշևիկների շուրջը համախմբելու համար։

Նոր տիպի պարտիայի տեղական կազմակերպությունների ստեղծումը Հայաստանի քաղաքներում և շրջաններում հայ ժողո-

վրրդի հասարակական-քաղաքական կյանքի զարգացման գործում կարևոր նշանակություն ունեցող իրադարձություն էր։

Առաջին բոլշևիկյան կազմակերպությունները դարձան մարքսիզմի տարածման կարևոր օջախները։ Կապվելով սրանց հետ, հարյուրավոր առաջավոր բանվորներ, դյուղացիներ և զինվորներ հանդես էին գալիս լայն մասսաների մեջ որպես նոր տիպի պարտիայի իդեաների տարածողներ ու պրոպագանդիստներ։

Այդ ժամանակից սկսած պայքարը ցարիզմի, կապիտալիստական և կալվածատիրական շահագործման, ինչպես նաև բուրժուական նացիոնալիստների դեմ ավելի կազմակերպված և սիստեմատիկ բնույթ է ստանում։ Այդ պայքարին աստիճանաբար սկսում են մասնակցել ոչ թե միայն առանձին անհատներ, այլ աշխատավորների ամբողջ մասսաներ։

Հայ ժողովրդի հասարակական տարբեր խավերի մեջ լայն շարժում առաջացրեց ցարիզմի դաժան գաղութային քաղաքականությունից բխող հայկական դպրոցները փակելու և եկեղեցական կալվածները բռնագրավելու մասին 1903 թ. հունիսի 12-ի օրենքը։

ՌՍԴԲՊ Կովկասյան Միությունը այդ առթիվ հատուկ կոչով դիմեց հայ աշխատավորությանը։ Կոչում բացատրվում էր ցարիզմի գաղութային դաժան քաղաքականությունը, ինչպես նաև մերկացվում հայ հոգևորականության և նացիոնալիստական պարտիաների ոճրագործ քաղաքականությունը, որոնք ցանկանում էին հայ աշխատավորությանը շեղել իր ազատագրական պայքարի իսկական ուղուց։ Հայ բուրժուազիայի և կալվածատերերի շահերն արտահայտող դաշնակցությունը, տարածելով նացիոնալիզմի թույնը, ամեն կերպ ձգտում էր հայ ժողովրդին հակադրել ռուս և մյուս ժողովուրդներին։ ՌՍԴԲՊ Կովկասյան Միությունը կոչ էր անում հայ աշխատավորությանը միավորվել բոլոր ազգերի պրոլետարների հետ և պայքարի դուրս գալ ցարիզմի և բոլոր ճնշողների դեմ՝ հանուն ազատության, հանուն սոցիալիզմի։

1903 թ. հոկտեմբերի 1-ին Բ. Կնունյանցը հանդես է գալիս «Իսկրա»-ի էջերում «Նոր ավազակություն» վերտառությամբ հոդվածով։ Այդ հոդվածում նա նկարագրում է Անդրկովկասում տիրող տագնապալից դրությունը, որը ստեղծվել էր հունիսի 12-ի օրենքի հետևանքով[1]։

Դաշնակները ձգտում էին օգտագործել ստեղծված դրությու-

---

[1] Տես «Искра», № 49, 1903։

նը, հանդես գալով հայ ժողովրդի շահերի պաշտպանի դիմակի տակ, իրենց կողմը գրավել աշխատավոր մասսային, հետ պահելով քաղաքական պայքարից, ուղղել նրան դեպի անարխիստական տեռորիստական ուղին, այսպես կոչված «համայն հայության» շահերի պաշտպանության ուղին։

Ստ. Շահումյանը 1904 թ. հոկտեմբերի 1-ին հանդես եկավ «Հայ իրականությունից» հայտնի հոդվածով, որտեղ տալով ՌՍԴԲՊ-ի առաջադրած հիմնական խնդիրները հայ ժողովրդի ազատագրման պայքարում, միաժամանակ մերկացնում է հայ նացիոնալիստների կործանարար քաղաքականությունը։

Ստ. Շահումյանը դատապարտելով դաշնակցության նացիոնալիստական ագիտացիայի ետևից գնացող հետամնաց խավին, նշում է, որ նա «չհասկացավ, թե որտեղից է իրեն հարված հասցվում, նույնացրեց ցարիզմի և ռուս ժողովրդի շահերը և իր ծանր զգացումի ելքը գտավ կոպիտ, կարճատես շովինիզմի մեջ»[1]։

Այսպիսի պայմաններում դաշնակցությունը, ինչպես նաև նացիոնալիստական մյուս պարտիաները սկսեցին իրենց սև գործը կատարել։

«Այս հանգամանքից մեծապես օգտվեցին հայկական նացիոնալիստական պարտիաները,— գրում է Ստ. Շահումյանը։ Նրանք կաուչեցին ժողովրդի դժգոհության տարերային, անդիտակցական այդ ձևին, սկսեցին խրախուսել ու ամրապնդել բնակչության շովինիստական զգացումները և դրանք շահագործել իրենց պարտիական նպատակների համար։ Դրա հետևանքն եղավ այն, որ վերջին տարիներս ուժասպառ եղած, իրենց ոտքի տակի հողը Կովկասում, թվում էր, կորցրած այդ պարտիաները հանկարծ հարություն առան և ծավալեցին նոր, եռանդուն գործունեություն»[2]։

Ստեղծված քաղաքական իրադրությունից հայ նացիոնալիստները որոշ դասեր առնելով սկսեցին խորամանկորեն «վերակառուցվել» և ահա մինչ այդ նրանց դեմքը հանդիսացող «համազգային» թուրքահայ հարցի կողքին· հանդես է գալիս «նաև ռուսահայ հարցի առկայության ճանաչումը»[3]։ Եթե մինչ այդ դաշնակցությունն իր «Դրոշակ» օրգանով լուտանքներ էր թափում բոլոր նրանց դեմ, ովքեր «Կովկասյան հայերի քաղաքական կարիքներին

---

[1] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, 1948, էջ 22։

[2] Նույն տեղում, էջ 22։

[3] Նույն տեղում, էջ 23։

արձագանքելու» փորձեր էին անում[1], ապա այժմ նա հանդես է գալիս սոցիալիստական ֆրազներով, նպատակ ունենալով հետամնաց խավերին մոլորության մեջ պահել և նրանց պաշտպանության պատրվակով իր հակաժողովրդական քաղաքականությունը անցկացնել։

Բանը այնտեղ հասավ, որ «սոցիալիստական» դիմակ հագած, բանվոր դասակարգի քաղաքական պայքարի կատաղի թշնամի դաշնակցությունը որոշում ընդունեց. «չարդելել «Դրոշակ»-ի պարտիական կազմակերպություններին մասնակցող հայ բանվորներին մասնակցելու բանվորական կոմիտեների նշանակած գործադուլներին ու ցույցերին»[2]։

Բայց հայ աշխատավորությունը ՌՍԴԲՊ Կովկասյան Միության, ինչպես նաև տեղական պարտիական կազմակերպությունների ծավալած ագիտացիայի շնորհիվ սկսում է հասկանալ իր քաղաքական խնդիրները։ «Արդյունաբերական խոշոր կենտրոններին կից վայրերում,— Թիֆլիսի և Բաքվի նահանգներում նացիոնալիստների ազդեցությունը սաստիկ խախտված է»[3]։ Հայկական բազմաթիվ գյուղերում ստեղծվում են «երիտասարդական կազմակերպություններ,— գրում է Ստ. Շահումյանը,— որոնք կապված են մեր կոմիտեների հետ, ստանում են մեր դրականությունը և լարված ուշադրությամբ հետևում են հայ և այլազգի բանվորների հերոսական պայքարին»[4]։ Ստ. Շահումյանը ավարտելով իր հոդվածը, հույս է հայտնում, որ բանվոր դասակարգի հերոսական պայքարը «արդեն բազմաթիվ փայլուն հաղթանակներ է տարել. նա հաղթանակ կտանի նաև այժմ մոլեգնող, սիրտ վարատող հայկական ռեակցիայի դեմ»[5]։

Հայ աշխատավորներին համախմբելով իր ինտերնացիոնալիստական դրոշի տակ, բոլշևիկների պարտիան ցույց էր տալիս նրանց սոցիալական և ազգային ազատագրության միակ ճիշտ ուղին։ Սոցիալ-դեմոկրատիան,— նշում էր Ստ. Շահումյանը,— «պայծառ ճառագայթի նման»[6] թափանցում է հայկական շրջանները։

Ամբողջ Ռուսաստանում և Անդրկովկասում բարձրացող ռևո-

---

1 Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, 1948, էջ 23։
2 Նույն տեղում, էջ 24։
3 Նույն տեղում, էջ 25։
4 Նույն տեղում։
5 Նույն տեղում, էջ 26։
6 Նույն տեղում։

լյուցիոն շարժումները ծավալվում են նաև Հայաստանի քաղաքներում և գյուղական վայրերում՝ Ալեքսանդրապոլում, Կարսում, Լոռիում, Զանգեզուրում և այլ տեղերում։

ՌՍԴԲՊ Կովկասյան Միության և նրա տեղական կոմիտեների հատուկ հանձնարարությամբ Հայաստանի բազմաթիվ շրջաններն են ուղարկվում լավագույն ագիտատորներ և պարտիական աշխատողներ՝ աշխատավորության մեջ բացատրական լայն աշխատանք տանելու համար։ 1904 թ. ամռանը ՌՍԴԲՊ Կովկասյան Միության կոմիտեի հանձնարարությամբ Ստ. Շահումյանը գալիս է Լոռի, շրջագայում է մի շարք գյուղեր, ուր տանում է կազմակերպչական և ագիտացիոն ծավալուն աշխատանք։ Ստ. Շահումյանի հանձնարարությամբ այստեղից Հայաստանի մյուս շրջաններն են ուղարկվում մի շարք պարտիական աշխատողներ՝ մասսաների մեջ ագիտ-պրոպագանդիստական աշխատանք տանելու նպատակով։

Հայ ուսանողության մի ղդալի մասը, ինչպես Ստ. Շահումյանն է ասում, «նոր աշխարհայացքով զինված, ռուսաց նորագույն ռևոլյուցիոն ավազանում մկրտված մեր ուսանող երիտասարդությունը»[1] բավական մեծ ակտիվություն էր ցուցաբերում գեպի երկրում ծավալվող թե՛ քաղաքական շարժումներն ու ռևոլյուցիոն պայքարը և թե՛ անլեգալ գրականության տարածման գործը։

Թե որքան լայն տարածում էր գտնում անլեգալ գրականությունը Հայաստանի շրջաններում, ցույց է տալիս վերջերս (1951) Ալիքսանդրովի շրջանի Մալիշկա գյուղում հայտնաբերված ՌՍԴԲՊ Թիֆլիսի և Կովկասյան Միութենական կոմիտեների 1901—1902 և 1904 թթ. հրատարակած պրոկլամացիաների կապոցը։

Մարքսիզմի տարածման և նրա պրոպագանդայի շնորհիվ սկսեց լուսավորվել հայ բանվորի քաղաքական գիտակցությունը։ Բանվոր դասակարգը սկսեց ավելի մոտիկից ճանաչել իր դատի պաշտպան բոլշևիկներին, որոնք բացին նրա աչքերը՝ ճանաչելու նաև հայ ժողովրդի կատաղի թշնամի նացիոնալիստական պարտիաներին։ Բանվորական ժողովներում գիտակից բանվորները իրենք սկսում են մերկացնել դաշնակցական ավանտյուրիստներին։ «Այսպես, առաջին քարը դաշնակների գլուխը ճահճի, ահաբեկումների, սպառնալիքների տակ,— գրում է նշանավոր պրոլետարական քանաստեղծ, բոլշևիկ Հ. Հակոբյանը,— խիզախեց նետել մի բուռ հայ սոցիալ-դեմոկրատ բոլշևիկ կոլեկտիվ և այդ օրից հետո

---

[1] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, 1948, էջ 8։

արդեն դաշնակներին քննադատելը, դաշնակիզմի էությունը մերկացնելը դարձավ ոչ միայն մի բուռ հայ ս.—դեմոկրատ բոլշևիկների, այլև բանվորական լայն մասսաների իրավունքը»[1]։ Դա բոլշևիկների ամենախոշոր հաղթանակներից մեկն էր և ցուցանիշ այն բանի, որ բանվորների նշանակալից մասը հաճախակցել էր իրենց շահերը և գնում էր բոլշևիկների հետևից։

Հայ իրականության մեջ մարքսիզմի տարածման և պրոլետարական գրականության հիմնադրման գործում մեծ աշխատանք է տարել Հ. Հակոբյանը։ Նա դեռևս 1894 թ. «Մուրճ» ամսագրում տպագրել էր «Բանվորների հավաքական տպահովագրությունը Ռուսաստանում դժբախտ դեպքերից» ծավալուն հոդվածաշարը, իսկ 1895 թ. նա տպագրեց նույն ամսագրում իր հայտնի «Նամուս ու գեյրաթ» բանաստեղծությունը՝ նվիրված Ալչալայի ջրանցքի վառուցող հայ բանվորներին։ Այստեղ առաջին անգամ բանաստեղծը իր պոեզիայի հերոսն է դարձնում բանվորին, հասարակության բարիքները արտադրողին։

Հ. Հակոբյանը սոցիալ-դեմոկրատական գրականության տարածման առաջին նախաձեռնողներից մեկն էր։

Թիֆլիսի դեպոյի բանվորների առաջարկով Հակոբ Հակոբյանը 1902 թ. թարգմանեց «Մարսելյոզը», որը առանձին թռուցիկներով տարածվեց բանվորական և աշխատավորական լայն մասսաների մեջ[2]։ 1902 թ. «Մարսելյոզը» տպվեց թռուցիկներով ու հաղարավոր օրինակներով տարածվեց թե՛ Թիֆլիսում և թե՛ գավառներում,— գրել է այդ մասին Հ. Հակոբյանը։

Այդ երգն առաջին անգամն էր թարգմանվում հայերեն, առաջին անգամ լսվում հայերեն երգելիս։

Սա եղավ իմ առաջին սոցիալ-դեմոկրատական վուսակցության հարելու նախերգանքը 1902 թվականին։

Իմ թարգմանությունները նվիրում էի դեպոյի բանվորներին»[3]։

Ոստիկանական մի գաղտնի հաղորդագրության մեջ հայտնվում է այն մասին, թե ինչպիսի արագությամբ և մեծ քանակությամբ տարածվել են աշխատավորների մեջ «Մարսելյոզ»-ի հայերեն տեքստի թերթիկները։

Վրաց. ՍՍՌ Կենտրոնական պատմական պետական արխիվում պահվում են ոստիկանության կողմից հավաքված Հ. Հակոբյանի

---

[1] Հ. Հակոբյան, Երկեր, Երևան, 1951, էջ 410։
[2] Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 7, գ. 695, թ. 61։
[3] Հ. Հակոբյան, Երկեր, էջ 350։

թարգմանած «Մարսելյոզ»-ի տպագրված հայերեն թերթիկները, որի տակ գրված է ՌՍԴԲՊ Թիֆլիսի կոմիտե[1]։ Այդ կարևոր ռևոլյուցիոն երգի՝ Հակոբյանի թարգմանությունը կատարված էր շատ վարպետությամբ։ Այն շուտով դառնում է հայ աշխատավորների սիրելի երգը։

«Պրոլետարիատի կռիվը» թերթի № 5-ում, ռուսերեն, վրացերեն և հայերեն լույս է տեսնում Հակոբյանի «Թեև բանվոր է, բայց թագավոր է» բանաստեղծությունը։

Հ. Հակոբյանը 1904 թ. ավելի սերտ կերպով է կապվում ՌՍԴԲՊ Կովկասյան Միության հետ և նույն թվականին մտնում է բոլշևիկյան պարտիայի շարքերը։ Այդ ժամանակից էլ նա մոտիկից ծանոթանում է Ի. Վ. Ստալինի, Ստ. Շահումյանի, Բ. Կնունյանցի, Միխա Ցխակայայի, Կամոյի հետ և աշխատում է նրանց անմիջական ցուցումներով։

«Ես պաշտոնապես արդեն սոցիալ-դեմոկրատ էի,— գրում է Հակոբյանը,— բոլշևիկ, կուսակցության իսկական անդամ, կուսակցության անլեգալ գրականությունն ու թռուցիկները հայերենի վերածող, մի խոսքով նրա կանոնադրությունը ընդունող, ակտիվ պայքարող կուս-անդամ, անլեգալ պայմաններում, դրաշարներից կազմված մի բջջի ղեկավար»[2]։

Ռուսական ռևոլյուցիայի բուռն տարիներին Հ. Հակոբյանը կատարելով պարտիայի առաջադրանքները՝ հսկայական ստեղծագործական-ագիտացիոն աշխատանք է ծավալում։ Ստ. Շահումյանի առաջարկով Հակոբյանը մեծ քանակությամբ ռևոլյուցիոն թռուցիկներն ու պրոկլամացիաները թարգմանում էր հայերեն։ «Ուրախությանս ու եռանդիս չափ չկար,— գրում է Հ. Հակոբյանը,— երբ իրար ետևից գիշերները թռուցիկներ էի թարգմանում մինչև լուսաբաց ու մյուս օրը տեսնում տպված երեկոյան մութին, երբ թևի տակ դրած, դեռ տպարանական ներկի թարմ բույրը վրան, բերում էր գաղտնի տպարանի դրաշարը»[3]։ Ռևոլյուցիոն գործին նվիրված մարտիկները այդ թռուցիկները արագորեն տարածում էին մասսաների մեջ։

Այդ գործում բոլշևիկներին առանձնապես մեծ օգնություն էին ցույց տալիս նաև կանայք, որոնցից Հ. Հակոբյանը հիշատակում է Թադուհի Մելիք-Շահնազարյանին։ Հ. Հակոբյանը գրում է.

---

[1] Տես Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 7, գ. 695, թ. 61։

[2] Հ. Հակոբյան, Երկեր, Երևան, 1951, էջ 377։

[3] Նույն տեղում, էջ 350։

«Որսկան գազանների նման իսկույն վրա էինք տալիս, թափվում էինք թռուցիկների վրա՝ ես, Թագուհի Մելիք-Շահնազարյանը...ու տարածում էինք երեկոները՝ գործակատարներին, ցերեկը՝ բանվորներին, տներում, դերեզմանատներում և այլն։

Այստեղ էր, որ հանդիպում էի մեր առասպելական Կամոյին»[1]։

Սակայն Հակոբ Հակոբյանի վատարած ամենախոշոր ծառայությունը ռևոլյուցիայի տարիներին մարտական ոգով գրված տաղանդավոր բանաստեղծություններն էին։ Հակոբ Հակոբյանի «Մե՛կ էլ, մե՛կ էլ», «Ամբոխն իմ աշխարհը», «Դարբնի երգը», «Մայիսի 1-ը», «Ութ ժամ», «Օտարն ու հարազատը», «Երկու ախոյան», «Բուրժուաներին» և մյուս բանաստեղծությունները հայ բանվորների և աշխատավորական լայն մասսաների պայքարի ու հաղթանակի փոշեր էին։ Դրանք հայ պրոգրեսիվ մտքի և աշխատավորության ռևոլյուցիոն պայքարի պատմության մեջ վճռական դեր խաղացին և ըստ էության սկիզբ դրին հայ պրոլետարական գրականությանը։

Այդ բանաստեղծություններով Հ. Հակոբյանը մարքսիզմի գաղափարները ամենամատչելի և դիպուկ կերպով տարածում էր հայ աշխատավորության մեջ։ Այդ է պատճառը, որ ամենաթունոտ բուրժուական նացիոնալիստները՝ դաշնակցական գրչակները, ոչ մի միջոցի առաջ կանգ չէին առնում թուլացնելու Հ. Հակոբյանի ու նրա ռևոլյուցիոն պոեզիայի ամենուրեք տարածվող ազդեցությունը։ «Այդ դուր չէր գալիս մեր թե՛ իդեական և թե՛ անիդեական թշնամիներին,— գրում է Հ. Հակոբյանը, և այդ շատ բնական էր։ Չէ՞ որ գեղարվեստական արտահայտությամբ ավելի շուտ և ավելի հաջող կարելի էր վարակել մասսաները։

Այստեղից էին բխում ահա և այն հալածանքները, որ կրում էի ազգայնական շնչով թունավորված գրականագետներից-քննադատներից»[2]։

Հ. Հակոբյանը ոչ մի ուժ բաց չէր թողնում իր ստեղծագործությամբ, ինչպես նաև ռևոլյուցիոն պրակտիկ գործունեությամբ օգնելու պարտիային՝ նրա առաջադրած քաղաքական խնդիրները կատարելու համար։

Պրոլետարական գաղափարախոսության տարածման գործում բավական աշխատանք էր տանում նաև հայ պրոլետարական ա-

---

[1] Հ. Հակոբյան, Երկեր, Երևան, 1951, էջ 350։
[2] Նույն տեղում, էջ 351։

ռաջին արձակագիրը՝ Մադաթ Պետրոսյանը։ Հակոբ Հակոբյանը պատմում է.

«Երբ ես առաջին անգամ կարդացի Մ. Պետրոսյանի «Մի կտոր հացի համար» սրտառուչ պատմվածքը, բացագանչեցի՝ փառք պրոլետարիատին, հայ պրոլետարական արձակագիր էլ ունենք»[1]։

Մադաթ Պետրոսյանը, որ երկար տարիներ աշխատում էր Ավշալայի բանվորների մեջ, սիստեմատիկ կերպով ռևոլյուցիոն աշխատանք էր տանում մարքսիստական իդեաների տարածման համար։

Այն ժամանակ ամեն մի նոր մարքսիստի հանդես գալը հայ իրականության մեջ շատ կարևոր նշանակություն ուներ, քանի որ այդպիսիները դեռևս շատ քիչ էին։

Բանվոր դասակարգի ծոցից ելած և աշխատավորության լայն խավերի շահերն արտահայտող հայ առաջին խոշոր ռևոլյուցիոն գործիչն ու մարքսիզմի անկեղծ պրոպագանդիստը Մելիք Մելիքյանն էր, պարտիական շրջաններում հայտնի «Դեդուշկան»։ Պատահական չէ, որ այդ ինքնածին ռևոլյուցիոնների և հետևողական մարքսիստի մասին հայ բոլշևիկների առաջին սերունդը մեծ պատկառանքով ասում էր. «սա էլ հայ բոլշևիկների Ստեփան Խալատուրինն է... կամ Պյոտր Ալեքսեևը։»[2]

«Դեդուշկայի» մասին խոսելով, Հակոբ Հակոբյանը գրել է. «Ես նրան ճանաչում էի 1900 թվականից. մի թխագեմ, միջահասակ, սև, փարթամ միրուքով ու կոշիկների ճիտքերը մինչև ծնկները քաշած, անբաժան հատ հոնի փայտն էլ ձեռքին պատկառելի հեղափոխական, որ ինձ հիշեցնում էր 60—70 թվականների նարոդովոլցիներին»[3]։

«Դեդուշկան» աշխատավորության աղատության միակ ճիշտ ուղին համարում էր Վ. Ի. Լենինի, նրա ստեղծած պարտիայի գծած ուղին, որի համար նա անկեղծ կերպով և իր ամբողջ էությամբ նվիրվեց մինչև իր կյանքի վերջը։

Բոլշևիկյան պարտիայի հավատարիմ զինվորը իր անձնական ամբողջ երջանկությունը գտնում էր այդ պարտիայի մեծ գործին նվիրված լինելու մեջ։ «Դեդուշկան» ամեն ինչ անում էր «իր կրակոտ քարոզներով ու ագիտացիայով՝ բանվորական ան-

---

[1] Հ. Հակոբյան, Երկեր, Երևան, 1951, էջ 401։

[2] Նույն տեղում, էջ 484։

[3] Նույն տեղում։

գիտակից մասսաներին գիտակցության բերելու համար, հասկացնելու, թե ո՞վ է այն թշնամին, որ հասցրել է նրանց այն օրին, թշվառության, տգիտության, քաղցին, զրկանքներին»[1]։ «Դեղուշկա»—Մելիքի խոսքը բանվորների մեջ հսկայական հեղինակություն էր, նա ճանաչված ագիտատոր էր, բանվորների ամենօրյա խորհրդատուն, նրանց նվիրված բարեկամն ու կարեկիցը։ Նրա պատկառելի տեսքը, փարթամ միրուքով, բարի դեմքը, հենց տառաջին հայացքից մեծ տպավորություն էր թողնում իր լսողների վրա և բոլշևիկի հատու խոսքը իր կազմակերպող ու դաստիարակող մեծ գործն էր կատարում։

Սակայն «Դեղուշկա»—Մելիքը միայն շարքային ագիտատոր և մարքսիզմի պրոպագանդիստ չէր, այլ նաև խոշոր կազմակերպիչ ու ղեկավար։

Մ. Մելիքյանը ռևոլյուցիոն աշխատանք է տարել Գյանջայում, Բաքվում, Թիֆլիսում, Ալավերդում և Հայաստանի մի շարք շրջաններում։ 1901 թ. նա ՌՍԴԲՊ Բաքվի առաջին կոմիտեի անդամ էր։

Ցարական պահնորդական օրգանները ամենուրեք հետևում էին Մ. Մելիքյանին։ Դեռ 1904—1905 թթ. Բաքվի նահանգական ժանդարմական վարչությունը մեղադրական գործ էր պատրաստում Մելիքյանի դեմ, մեղադրելով նրան հակապետական գործունեության մեջ։ Նա գտնվում էր ոստիկանության գաղտնի հսկողության տակ[2]։ Բաքվի ժանդարմական վարչության 1904 թ. տված տեղեկության համաձայն Մ. Մելիքյանը 1903 թ. ակտիվ ռևոլյուցիոն աշխատանք էր տանում Բալախանի—Սարունչի ռայոնում և ղեկավարում էր պարտիական ամբողջ աշխատանքը, որպես ՌՍԴԲՊ Բաքվի Կոմիտեի ներկայացուցիչ։

«Բանվորական բոլոր ժողովներում... Մելիքյանցը հանդես էր գալիս որպես հեռատես և մարտական կազմակերպությունների ստեղծող, որոնք պետք է ակտիվորեն ղեկավարեն մասնակցություն ունենային գործադուլներին»[3]։

Մելիքյանը միաժամանակ ՌՍԴԲՊ Բաքվի կոմիտեից մեծ բանակությամբ անլեգալ գրականություն էր ստանում և տարածում բանվորների մեջ[4]։

---

1 Հ. Հակոբյան, Երկեր, էջ 484։

2 ՏԵՍ Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 3, գ. 563, թ. 56։

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում։

Միշտ էլ «Դեղուշկան» ռևոլյուցիոն մարտերի ամենաթեժ վայրերում էր գտնվում, բանվորական ռևոլյուցիոն մեծ ֆալանգայից անբաժան։ Նա պրոֆեսիոնալ ռևոլյուցիոների մեծ փորձ և հմտություն ուներ, որը հնարավորություն էր տալիս ոստիկանության հետապնդումից պաշտպանել իրեն և ընկերներին ռևոլյուցիայի մեծ գործի համար։ Նա սովորություն չուներ իր մասին խոսելու և իր հսկայական գործունեության մասին պատմելու իր ընկերներին։ «Դեղուշկան» հրճվում էր միշտ պարտիայի օր-օրի վրա ձեռք բերած հաջողություններով։ Հարկավոր էր տեսնել, պատմում են նրա գինակիցներն ու ընկերները, թե ինչպիսի «արհամարհանքով էր խոսում անձնական բարիքների մասին ու որպիսի ոգևորությամբ, երբ բանվոր բոլշևիկների թիվը հետզհետե աճեցնում, ավելացնում էր Մելիքը»[1]։

- Մելիք Մելիքյանը առաջին հայ բանթղթակիցն էր և անլեգալ սոցիալ-դեմոկրատական գրականության տարածողը։ Նա դեռևս 1902 թ. սկսում է գրել իր հոդվածներն ու պատմվածքները բանվորների և գյուղացիների կյանքից, որոնք լույս են տեսնում պարբերական հրատարակություններում՝ «Անհաշտ» ստորագրությամբ։

Իր հոդվածներում «Անհաշտը» մերկացնում է դաշնակների և մենշևիկների դավաճանական դերը։ Նրան օգնում և ամեն կերպ աջակցում էր հայ պրոլետարական պոեզիայի հիմնադիր Հակոբ Հակոբյանը, որի խմբագրությամբ հետագայում լույս տեսան Դեղուշկայի «Աչքը բացվեց», «Չորրորդ վիպական» և ուրիշ պատմվածքները[2]։ Առաջին անգամ Մաղաթ Պետրոսյանի, Անուշավան Վարդանյանի հետ միասին, հայ բանվորը գրում էր պրոլետարական պատմվածքներ։ Այդ պատմվածքները շատ պարզ ու մատչելի լեզվով շարադրված լինելով հանդերձ իրենց մեջ պարունակում են ժողովրդական իմաստության բազմաթիվ ասույթներ։ Նա իր «Աչքը բացվեց» պատմվածքում շատ դիպուկ կերպով ցույց է տալիս այն միտքը, թե ինչպես հայ գյուղացին քայքայվելով կալվածատերերի ու կուլակների ճնշումից, ընկնում է քաղաք, որտեղ նրա «աչքերը բացվում են» շնորհիվ պրոլետարիատի պայքարի ու մարքսիզմի ուսմունքի, որը նա պատկերավոր կերպով համեմատում է էլեկտրական լապտերի լույսի հետ։

«Չորրորդ վիպական»-ում գրսևորվում է ճնշողների դիշատիչ

---

[1] Հ. Հակոբյան, Երկեր, էջ 485։

[2] Տես «Կարմիր մեխակներ», «Բանվորի ալբոմ» ժողովածուները, 1914։

շահագործումն ու աշխատավորների ծանր դրությունը։ «Այդպիսով, Դեղուշկա Մելիքը բանվոր բոլշևիկ, արձակագիր, բանթղթակից, իր ժամանակի համար եղել է առաջին ծիծեռնակը հայ բոլշևիկ բանվորության»[1]։

Կոմունիստական պարտիան մասսաների քաղաքական դաստիարակման և ռևոլյուցիոն շարժումների ծավալման համար միշտ էլ կարևոր նշանակություն է տվել անլեգալ պարտիական գրականության տարածման գործին։ Այդ նպատակի համար ցարիզմի ծանր ռեժիմի պայմաններում պարտիան օգտագործում էր բոլոր հնարավոր միջոցները։ Անդրկովկասի բանվորական կենտրոններում տպագրվում և տարածվում էր գաղտնի գրականություն։ Այդ առակետից շատ խոշոր դեր էին կատարում Բաքվում և Թիֆլիսում կազմակերպված ընդհատակյա տպարանները։

Թե ինչպիսի խոշոր դեր էին կատարում այդ տպարանները, ցույց են տալիս Թիֆլիսում 1906 թ. հայտնաբերված Հավլաբարի գաղտնի տպարանի նյութերը։ Սկսած 1903 թ. այստեղ տպագրվում էին Վ. Ի. Լենինի և նրա գինակիցների բազմաթիվ աշխատությունները։

1906 թ. ապրիլի 15-ին Թիֆլիսի և «Նավթլուղ» տեղամասի միջև «Նովո-Տրոիցկո» գյուղում Դավիթ Ռոստոմաշվիլու բնակարանը խուզարկելիս հայտնաբերվում է ստորերկրյա տպարան, որի մուտքը ջրհորի միջով էր։ Տպարանը կառուցված էր շատ հմուտ կերպով և սարքավորված էր տպագրական անհրաժեշտ միջոցներով։ Այդ տպարանում գտնվեց 50 փութ ռուսերեն, վրացերեն, հայերեն տպագրական շրիֆտ, Ագուբսբուրգ ֆիրմայի տպագրական մեքենա։ Հայտնաբերվեցին մեծ քանակությամբ տպագրված պրոկլամացիաներ, բրոշյուրներ, ձեռագրեր, անձնագրերի մաքուր բլանկներ։

Բացի այդ, գտնվեցին ՌՍԴԲՊ Կովկասյան Միութենական կոմիտեի և նրա՝ Բաթումի, Թիֆլիսի և մի շարք ուրիշ տեղական կոմիտեների կնիքներ՝ ռուսերեն, հայերեն, վրացերեն լեզուներով։

Բազմաթիվ տպագրական նյութերի հետ միասին գտնվել են նաև հայերեն 6, ռուսերեն 10 կոշերի սրբագրված, տպագրության պատրաստ տեքստեր։ Բացի այդ, գտնվեցին ՌՍԴԲՊ Թիֆլիսի կոմիտեի կողմից տպագրված կոշեր՝ 10 օրինակ ռուսերեն, 12 օրինակ վրացերեն լեզուներով, որոնք վերաբերում էին «ցարական օպրիչնիկ-

---

[1] Հ. Հակոբյան, Երկեր, էջ 487։

ների» հարձակմանը Կովկասի խաղաղ ժողովրդի վրա։ Այդտեղ գտնվեցին նաև ՌՍԴԲՊ Կովկասյան Միութենական կոմիտեի օրգան «Պրոլետարիատի կոիվը» թերթի 1905 թ. № 1-ից 1620 օրինակ, 66 օրինակ նույն թերթի 3, 5, 6, 7 և 8 համարներից, № 3-ի առաջնորդող հոդվածը՝ «Ցարական մանիֆեստը և ժողովրդական ռևոլյուցիան» վերնագրով, ուր մերկացվում էր ինքնակալության քայքայվող կարգերը, որը անկման եզրին կանգնած լինելով խարուսիկ մանիֆեստով էր ուզում փրկել իր կյանքը[1]։

Այստեղ տպագրված, պատրաստ էին ՌՍԴԲՊ Կովկասյան Միութենական Կոմիտեի 422 օրինակ տարբեր կոչեր՝ ռուսերեն լեզվով, 220 օրինակ՝ վրացերեն և 36 օրինակ՝ հայերեն։ 176 օրինակ տարբեր կոչեր բաղմացված էին ՌՍԴԲՊ Կենտրոնական կոմիտեի կոչերից, 22 օրինակ՝ ՌՍԴԲՊ Բաքվի կոմիտեի կոչերից։ Բոլոր այդ կոչերը մի ընդհանուր նպատակ էին հետապնդում, այն է՝ «զինված ապստամբության միջոցով Ռուսաստանում դեմոկրատական Ռեսպուբլիկա ստեղծել»[2]։

Այստեղ տպագրված բրոշյուրներից հայտնաբերվեցին նաև 33 անուն հասարակական կյանքի և ռևոլյուցիոն շարժումների տարբեր հարցերին նվիրված բրոշյուրներ և գրքեր, ինչպես, օրինակ՝ «ՌՍԴԲՊ Ծրագիրը, ընդունված 2-րդ համագումարում»։ Այդ բրոշյուրից ժանդարմերիան բռնագրավել էր 172 օրինակ՝ ռուսերեն, 2058 օրինակ վրացերեն և 698 օրինակ՝ հայերեն։ Բացի այդ, հայտնաբերվել էին նաև «ՌՍԴԲՊ Կանոնադրությունը», ընդունված 3-րդ համագումարում և բանաձևը «Ժամանակավոր ռևոլյուցիոն կառավարության մասին», 27 օրինակ՝ ռուսերեն, 60 օրինակ՝ վրացերեն և 36 օրինակ հայերեն «Ծանուցագիր 3-րդ համագումարի մասին», որին կցված է եղել 3-րդ համագումարում ընդունված կանոնադրությունը և բանաձևը։ Այդ բրոշյուրից ժանդարմերիան բռնագրավել էր 6 օրինակ ռուսերեն, 365 օրինակ վրացերեն և 240 օրինակ հայերեն։ Հայերեն լեզվով այդտեղ տպագրվել էր Ի. Վ. Ստալինի «Համառոտակի պարտիական տարաձայնությունների մասին» աշխատությունը 405 օրինակ[3], ռուսերեն լեզվով տպագրվել էր Լենինի «Սոցիալ-դեմոկրատիայի երկու տակտիկան դեմոկրատական ռևոլյուցիայի մեջ»։

---

1 Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, գ. 23, գ. 289, թ. 5։

2 Նույն տեղում, թ. 5։

3 Նույն տեղում, թ. 6։

Թվարկվում են բազմաթիվ ուրիշ բրոշյուրներ, որոնք տպագրվել են ռուսերեն, վրացերեն և հայերեն։ Ոստիկանությունը այդ պաղտնի տպարանում հայտնաբերել է նաև բազմաթիվ փաստաթղթեր ու գրագրություններ՝ ռևոլյուցիոն կազմակերպությունների, ինչպես նաև առանձին ռևոլյուցիոն գործիչների միջև։

Գտնվել էին նաև բազմաթիվ ձեռագիր կոչեր և աշխատություններ. նրանցից մեկը ավարտվում էր հետևյալ խոսքերով. «...միայն ընդհանուր զինված ապստամբությունը կարող է արմատից ոչնչացնել ցարական կառավարությունը և նրա փլատակների վրա կառուցել դեմոկրատական ռեսպուբլիկա...»[1]։

Այդ տպարանը փաստորեն ՌՍԴԲՊ Կովկասյան Միության գլխավոր և ապահով շտաբն էր համարվում, որտեղ կենտրոնացվում էին կարևոր պարտիական փաստաթղթերը, հրահանգներն ու որոշումները, որոնք արագորեն բազմացվում և տեղական կազմակերպություններին ու աշխատավոր մասսային էին հասցվում։

Անլեգալ գրականության տպագրման և արագ տարածման գործը առանձնապես 1905 թ. ռևոլյուցիայի բուռն շրջանում, շատ կարևոր գործ էր։ Ցարական կարգերի ծանր ռեժիմը և բուրժուական ու նացիոնալիստական պարտիաների քայքայիչ աշխատանքը շատ մեծ հարված էր հասցնում բանվոր դասակարգի ռևոլյուցիոն գործունեությանը, նրա քաղաքական պայքարին։

Ցարիզմը և բուրժուազիան սուտ խոստումներով խաբում էին պրոլետարիատին, օպորտունիստական, կոնտրռևոլյուցիոն պարտիաները քայքայիչ աշխատանք էին տանում բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության մեջ, ցանկանալով նրան դարձնել բուրժուազիայի կցորդը և հետ պահել քաղաքական ռևոլյուցիոն պայքարից։

«Ինքնակալական կառավարությունը չի կարող ձեռնարկել ոչ մի գործողություն,— գրում է Ստ. Շահումյանը,— որն իր իսկ դեմ չդառնա։ Նա առանց ստելու ոչ մի քայլ չի կարող անել»[2]։

Պարզ է, որ նման բարդ իրադրության պայմաններում անհրաժեշտ էր, որ Կոմունիստական պարտիան իր բանավոր և գրավոր խոսքով օգներ բանվոր դասակարգի լայն խավերին, հասկացներ նրանց ռևոլյուցիոն պայքարի ճիշտ խնդիրներն ու նպատակը։ Քանի որ ցարական ծանր ռեժիմի պայմաններում արգելված էր

---

[1] Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 23, գ. 289, թ. 7։
[2] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, 1948, էջ 61։

ապատ խոսքը, բանվորական ժողովներն ու հավաքույթները, ապա պարտիական անլեգալ գրականության նշանակությունը հսկայական էր։

Այդ գրականությունը տարածելու համար անհրաժեշտ էին պարտիայի գործին մինչև վերջ նվիրված ռևոլյուցիոն գործիչներ։ Այդպիսի գործիչներից էր հայտնի ռևոլյուցիոներ Սիմոն Տեր-Պետրոսյանցը (Կամոն)։

Կամոն մի ինքնատիպ տաղանդ էր, հսկայական կամքի տեր ժողովրդական հերոսի տիպար, որը պարտիայի գործով միշտ ոգևորվում և հնարամիտ էր դառնում։ Նա ամենադժվարին մոմենտին թշնամու սարքած ամեն մի փակուղուց դուրս գալու ելք էր գտնում և բոլոր միջոցները գործադրում պարտիայի առաջադրանքը կատարելու համար։ Որտեղի՞ց էր Կամոյի մեջ ծնվում այդքան եռանդ, «...մեծ եռանդը,— գրում է Ի. Վ. Ստալինը,— միայն մեծ նպատակի համար է ծնվում»[1]։ Կամոյի չտեսնված էներգիայի աղբյուրը, դա պարտիայի մեծ նպատակին հասնելու ձգտումն էր, այդ նպատակի իրականություն դառնալու փափագն էր։

Պարտիայի գործին նվիրված հերոս մարտիկների թիվը շատ-շատ է եղել, նրանք բոլորն էլ ժողովրդի ծոցից ելած հասարակ մարդիկ էին, որոնք պայքարում էին ժողովրդի ազատության գործի համար։

Հայաստանում ՌՍԴԲՊ-ի Կովկասյան Միության հանձնարարությամբ անլեգալ պարտիական գրականության տարածման գործում մեծ աշխատանք է տարել Մարտիրոս Միրաքյանը։

Մարտիրոս Միրաքյանը (Միրաքով), որը ծագում է Շուլավեր գյուղից, աշխատել է 1904 թ. Բաթումիում Մանթաշևի գործարանում, հավանական է, որ այստեղ էլ նա մտել է ՌՍԴԲՊ-ի մեջ և կատարելով պարտիայի առաջադրանքները, եղել է նաև Հայաստանի մի շարք վայրերում։

Ռուսական առաջին ռևոլյուցիայի նախօրյակին բոլշևիկյան կազմակերպությունների ծավալած կազմակերպչական, ինչպես նաև պրոպագանդիստական աշխատանքը խոշոր նշանակություն ունեցավ Հայաստանի բանվորներին ու գյուղացիներին պայքարի դուրս բերելու ցարիզմի և կալվածատիրական դաժան կարգերի դեմ։

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 1, էջ 23։

Վ. Ի. Լենինի զինակիցների և աշակերտների ծավալած հերոսական աշխատանքի շնորհիվ հայ աշխատավորությունը Ռուսաստանի մյուս ժողովուրդների հետ միասին՝ բանվոր դասակարգի ղեկավարությամբ պայքարի դուրս եկավ ցարիզմի, կալվածատերերի ու բուրժուազիայի դեմ՝ ազատ ու երջանիկ կյանք ստեղծելու համար։

Այդ պայքարի մարտական ուղին ցույց տվողն ու ղեկավարողը Վ. Ի. Լենինի ստեղծած նոր տիպի պարտիան էր, հերոսական բոլշևիկյան պարտիան, որի ազդեցությունը ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին տարածվում է ամբողջ երկրում, այդ թվում նաև Հայաստանում։

III. ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՈՒԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1905—1907 ԹԹ.

1905 թ հունվարի 9-ի դեպքերը հանդիսացան ռուսական առաջին ռևոլյուցիայի սկիզբը։ Դրանք հզոր թափ հաղորդեցին ռևոլյուցիոն շարժմանը ամբողջ Ռուսաստանում։ Երկրի աշխատավոր մասսաները իմացան, որ ցարի հրամանով կրակ է բացվել նրա մոտ հաց և ազատություն խնդրելու գնացող հաղարավոր անզեն մարդկանց՝ բանվորների, կանանց և երեխաների վրա։ «Արյունոտ կիրակի»-ի դեպքերը մի անգամից բաց արին աշխատավորների աչքերը, ռևոլյուցիոն հակայական թռիչք կատարվեց նրանց գիտակցության մեջ։

«Բանվոր դասակարգը քաղաքացիական պատերազմի մեծ դաս ստացավ. պրոլետարիատի ռևոլյուցիոն դաստիարակությունը,— գրում է Վ. Ի. Լենինը,— մեկ օրում այնպես առաջ գնաց, ինչպես այն չէր կարողանա գնալ դորշ, առօրյա, խղճուկ կյանքի ամիսների ու տարիների ընթացքում»[1]։

Այդ օրվանից «հայր-ցարը» ժողովրդի աչքում դարձավ «դահիճ-ցար»։ Ցարական կառավարությունը «ժողովրդի մեջ լոկ ոչընչացրեց «հայր-ցարի» նկատմամբ եղած միամիտ հավատը։ Պրոլետարիատը քաղաքացիական պատերազմի դաս ստացավ։ Բանվորների ամենահետամնաց խավերը սկսեցին հասկանալ, որ միայն ռևոլյուցիոն պայքարով կարող են ձեռք բերել իրենց իրավունքները»[2]։

Պետերբուրգի բանվորների կանչը՝ «մահ դահիճ թագավորին»—հորդացած ալիքի նման տարածվեց ամբողջ երկրով մեկ. տատանվել սկսեցին ցարիզմի նեխած հիմքերը։

Ռուսական ռևոլյուցիայի զենքավորը և նրա գլխավոր շարժիչ ուժը պրոլետարիատն էր։ Ռուսաստանի բանվոր դասակարգը ռևո-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 8, էջ 106։

[2] Ռուսական առաջին ռևոլյուցիայի հիսուն տարին (Թեզիսներ)։

ղյուցիայի սկզբից ծավալեց պատմության մեջ չտեսնված հուժկու գործադուլային շարժում։

Միայն 1905 թ. հունվարին, ռևոլյուցիայի առաջին ամսում. գործադուլավորների թիվը հասավ 440 հազարի, որը ավելի շատ էր, քան նախորդ տասը տարում բոլոր գործադուլավորների քանակը միասին վերցրած։ Վ. Ի. Լենինը չափազանց կարևոր նշանակություն էր տալիս մասսայական-քաղաքական գործադուլներին, որպես մասսաները շարժելու համաժողովրդական զինված ապստամբությունը նախապատրաստելու հզոր գործոնի։ Վ. Ի. Լենինը նշում էր, որ 1905 թ. ռևոլյուցիան իր սոցիալական բովանդակությամբ լինելով բուրժուա-դեմոկրատական, պայքարի միջոցներով, սակայն, պրոլետարական էր։

1905 թ. հունվար-մարտ ամիսների ընթացքում գործադուլային շարժումը երկրում հսկայական չափերի հասավ. դրան մասնակցեցին 810 հազար միմիայն արդյունաբերական բանվորներ՝ երկու անգամ ավելի, քան նախորդ 10 տարում։

Ամբողջ ամառվա ընթացքում Ռուսաստանում ռևոլյուցիոն բռնկումները տեղի էին ունենում անընդմեջ։ Երկրի բոլոր ծայրամասերից ապստամբության, գործադուլի, քաղաքական պայքարի լուրեր էին հասնում կենտրոն։ Վարշավա, Ռիգա, Մոսկվա, Պետերբուրգ, Լոձ, Իվանովո-Վոզնեսենսկ, Անդրկովկաս—ամենուրեք լեռնանում էր ժողովրդական ցասումը։ 1905 թ. ռևոլյուցիայի դեմոկրատական դաղափարները մեծ արձագանք են գտնում աշխատավորական խավերի լայն շրջաններում։

Ռուսական առաջին ռևոլյուցիայի մեջ պրոլետարիատի ղեկավարությամբ ակտիվ մասնակցություն ցուցաբերեց գյուղացիությունը։ Բանվոր դասակարգը պայքարի ոգեշնչեց երկրի միլիոնավոր գյուղացիական մասսաներին։ Ռևոլյուցիայի ժամանակ հիմք դրվեց բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքին։ Այդ պատմական փաստը Ռուսաստանի ռևոլյուցիոն շարժումների համար շրջադարձային նշանակություն ունեցավ։

Քաղաքի մասսայական-պրոլետարական գործադուլների և գյուղացիական շարժումների մեծ թափը տատանեց նաև ցարիզմի հենարանը՝ բանակը։ Ռուսական ռևոլյուցիայի տարիներին տեղի են ունենում մի ամբողջ շարք ապստամբություններ նավատորմում և բանակում։ Ռևոլյուցիոն ալիքը իր ետևից տարավ նաև ուսանող երիտասարդությանը և դեմոկրատական ինտելիգենցիային։

1905 թ. հունվարի 9-ի դեպքերից հետո Անդրկովկասում ռևո-



լյուցիոն շարժումները ընդունում են մասսայական-քաղաքական գործադուլների և զինված ապստամբությունների ձև։ Այդ շարժումները ծավալվում են ամբողջ երկրամասով մեկ։ ՌՍԴԲՊ 3-րդ համագումարը, որը տեղի ունեցավ 1905 թ. (ապրիլի 12—17) Լոնդոնում, իր բանաձևի «Կովկասի իրադարձությունների առթիվ» բաժնում հատկապես ընդգծում է, որ Կովկասում բնակչության մեծամասնության մեջ ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղում, ինքնակալության դեմ մղվող ռևոլյուցիոն պայքարը հասել է համաժողովրդական ապստամբության։ Համագումարը ողջունում է Կովկասի հերոս պրոլետարիատին և գյուղացիությանը՝ նրանց մղված հերոսական պայքարի համար, և պարտավորեցնում է տեղական պարտիական կազմակերպություններին ամենաեռանդուն ագիտացիոն բացատրական աշխատանքներ տանել մասսաների մեջ[1]։

Ռևոլյուցիոն բռնկումները հաճախակի դարձան նաև զորամասերում, նավաստիների մեջ։ Այդ հատկապես նկատելի էր 1905 թ. աշնան ամիսներին։

Ինքնակալությունը ամենադաժան միջոցներով ճնշեց Սևվաստոպոլյան նավաստիների ապստամբությունը, բայց ի պատասխան ցարական սատրապների այդ արյունարբու գործունեության, ապստամբություններ բարձրացան Նովորոսիյսկում, Կիևում, Եկատերինոդրադում և այլուր[2]։

Ռևոլյուցիոն շարժումները ճնշելու համար ցարական կառավարությունը չտեսնված կրքոտությամբ սկսեց հավաքել ռեակցիոն ուժերը. ռազմական դրություն հայտարարվեց Լեհաստանում և Կովկասում։

Խոսելով ցարական ռեպրեսիաների մասին Ի. Վ. Ստալինը գրում է. ցարական կառավարությունը ռևոլյուցիոն «շարժման կենտրոնները ողողել է կազակներով ու զինվորներով և գնդացիրներն ուղղել է պրոլետարիատի դեմ,— կարելի է կարծել, որ կառավարությունը պատրաստվում է երկրորդ անգամ նվաճելու անծայրածիր Ռուսաստանը»[3]։

Բայց պրոլետարիատը իր վճռական պայքարով և հզոր ուժի ազդեցությամբ ստիպում էր ցարիզմին հետ նահանջել։ Շփոթված

---

[1] Տես ՍՄԿՊ-ն համագումարների, կոնֆերենցիաների և կենտկոմի պլենումների բանաձևերում ու որոշումներում, մասն 1-ին, Երևան, 1954, էջ 103—104։

[2] Տես „Кавказский рабочий листок", № 7, 1905.

[3] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 1, էջ 197։

կառավարությունը «անկարող լինելով հանդցնել այդ հրդեհը, մի կողմից մյուսն է նետվում, սկսում է նահանջել և իր դիրքերը մեկը մյուսի հետևից զիջել ռևոլյուցիոն բանակին»[1]։

1905 թ. երկաթուղայինների հոկտեմբերյան գործադուլը փաստորեն ծառայեց որպես համընդհանուր քաղաքական գործադուլի ակիզբ։ Սկսվելով Մոսկվայում, գործադուլը տարածվեց ամբողջ երկրով մեկ, ընդգրկելով նաև Անդրկովկասը։

Անդրկովկասում երկաթուղայինները 1905 թ. հոկտեմբերին մշակեցին երկաթուղային վարչությանը ներկայացվելիք հետևյալ պահանջները.

1. Արձակել ժանդարմական կորպուսը։

2. Կազակներին հեռացնել Կովկասյան երկրամասի սահմաններից։

3. Վերացնել մահապատիժը բոլոր տեսակի հանցավորների նկատմամբ։

4. Արգելել զինված զորքերին միջամտելու մանիֆեստացիաներին։

5. Վերացնել էկզեկուցիաները Իմերեթիայում և Գուրիայում։

6. Լիակատար ամնիստիա պարգևել Անդրկովկասյան երկաթգծի աշխատակից բոլոր քաղաքական հանցավորներին և պետության հաշվին նրանց վերադարձնել աքսորավայրերից իրենց նախկին բնակավայրը։

7. Վերացնել երկաթուղագծի կումարտակները[2]։

Երկաթուղայինների առաջադրած պահանջները չբավարարվեցին։ Բանվորները, մերժում ստանալով, ընդհանուր գործադուլ են հայտարարում։

Երկաթուղայինների շարժման կենտրոնը Թիֆլիսն էր։ 1905 թ. հոկտեմբերի 14-ին ժամը 11 անց 30 րոպե երկաթուղային զլխավոր արհեստանոցներում սկսեցին տագնապալի կերպով սուլել սուլիչները, որպես ընդհանուր գործադուլի ազդանշան։ Ավելի քան 2 հազար բանվորներ անմիջապես դադարեցրին աշխատանքը և «Մարսելյոզ» երգելով խմբեր կազմած վերադարձան տները։ Այդ լուրը արագ կերպով տարածվեց Անդրկովկասյան երկաթգծի մյուս տեղամասերում։ Ամենուրեք բանվորները շեղոքացնում էին երկաթուղային վարչության ներկայացուցիչներին՝ բանտարկում նրանց ու

---

[1] „Кавказский рабочий листок", № 7, 1905.

[2] Տես Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, գ. 192, թ. 5։

ղեկավարությունը վերցնում էին իրենց ձեռքը։ Փաստորեն երկաթուղագործը ամբողջովին անցել էր ռևոլյուցիոն մասսայի ձեռքը, որին գլխավորում էր ՌՍԴԲՊ-ի Կովկասյան Միության Կոմիտեն[1]։

Հոկտեմբերյան քաղաքական գործադուլների ժամանակ ստեղծվում են բանվոր դասակարգի պայքարի քաղաքական խոշոր ղենք հանդիսացող բանվորների դեպուտատների Սովետները։ Առաջին Սովետներից մեկը ստեղծվեց Իվանովո-Վոզնեսենսկում դեռևս մայիսյան գործադուլի ժամանակ։ Հետագայում Սովետներ սկսեցին կազմակերպվել Պետերբուրգում, Մոսկվայում, Բաքվում և բազմաթիվ այլ վայրերում։ Բանվորական դեպուտատների Սովետները դարձան ղինված ապստամբության նախապատրաստման օրգաններ, ինչպես նաև ռևոլյուցիոն նոր իշխանության սաղմեր։

«Սովետները որևէ պարտիայի կողմից հնարված բան չեն,— գրում է Վ. Ի. Լենինը։— Դուք շատ լավ գիտեք, որ չի եղել այնպիսի պարտիա, որը կարողանար Սովետներ հնարել։ Նրանց կյանքի է կոչել ռևոլյուցիան 1905 թվականին։ Այն ժամանակ, որքան էլ կարճ ժամանակ գոյություն ունեցան Սովետները, այն ժամանակ արդեն պարզ էր, որ ինքնակալության դեմ մղվող ժողովրդական կռվի միակ հաստատուն հենարանը Սովետներն են»[2]։

Սարսափած այդ հզոր շարժումից և տեսնելով, որ ճնշումն ու հալածանքը ավելի են դրդում մասսաներին, տեղական իշխանության օրգանները դիմում են որոշ դիջումների։ Կառավարական հատուկ խորհրդակցությունը որոշում է ընդունում—ելնելով ստեղծված դրությունից Անդրկովկասյան երկաթուղայիններին բաց թողնել միանվագ նպաստ՝ 140.000 ռուբլի և բանտից ազատել բանվորներին ու ծառայողներին։ Այդ որոշումը հաստատեց Կովկասի փոխարքայի պաշտոնակատար գեներալ-լեյտենանտ Մալամանը[3]։

Տեղական իշխանության այս միջոցառումները, սակայն, չէին կարող բանվորներին հանդստացնել և շեղել նրանց ռևոլյուցիոն պայքարի ուղուց։ Ոստիկանական մի հաղորդագրության մեջ նշվում էր, որ բանվորները բացարձակ կերպով հայտարարում էին, թե առանձին բարեփոխումները դրությունը չեն փրկի, որ «բանվորների դրությունը բարելավելու միակ միջոցը ինքնակալության տապալումն է Ռուսաստանում»[4]։

---

1 Տես Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, գ. 192։

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 603։

3 Տես Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, գ. 192, թ. 5։

4 Նույն տեղում։

Համառուսաստանյան հոկտեմբերյան գործադուլը փաստորեն կրախի առաջ կանգնեցրեց և խափանեց Բուլիգինյան դումայի հրավիրումը։ Ցարիզմը սարսափած սկսեց փրկվելու միջոցներ փնտրել։ Ցարական ողջ բյուրոկրատիան դործի անցավ և գրվեց ժողովրդի արյունով շաղախված «Հոկտեմբերի 17-ի» մանիֆեստը, որը նպատակ էր հետապնդում՝ «ժողովրդին մերձեցնել դահին», «հրավիրել պետական դումա» և այլն։ Մանիֆեստը տալիս էր մի շարք խոստումներ մամուլի, ժողովների, քաղաքական ազատության, ինչպես նաև օրենսդրական դումա հրավիրելու և նրանում ժողովրդի մասնակցությունը ապահովելու մասին։

«Հոկտեմբերի 17-ի» մանիֆեստի հրապարակումով ցարիզմը նպատակ ուներ մասսաներին խաբել կեղծ խոստումներով, ապա ժամանակ շահել և, իր շուրջ համախմբելով կոնտրռևոլյուցիոն ուժերը, հարձակման անցնել բանվորա-գյուղացիական ռևոլյուցիոն մասսաների վրա։

Սակայն մանիֆեստի հրապարակումից հետո քաղաքական պայքարը և ռևոլյուցիոն շարժումները ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Անդրկովկասի մի շարք շրջաններում առավել սուր բնույթ են ընդունում։

Առանձնապես պրոլետարական Բաքվում, Թիֆլիսում և Արևմտյան Վրաստանում բարձրացող ռևոլյուցիայի հրդեհը հսկայական չափերի էր հասնում և մեծ ազդեցություն էր թողնում Կովկասի ամենահեռավոր շրջանների վրա։

Ռևոլյուցիոն շարժումներն առանձնապես լայն ծավալ են ընդունում Գուրիայի շրջանում։ Այստեղ աշխատավորները հանդիսավոր երդում են տալիս միասնական ուժերով պայքարել ցարիզմի և բոլոր ճնշողների դեմ[1]։

1905 թ. դեկտեմբերի 10-ին սկսվում է Գուրիայի գյուղացիների կինված ապստամբությունը։ Բոլշևիկների ղեկավարությամբ այստեղ սկզբից ևեթ կազմակերպվում է ժողովրդական միլիցիա, որի մեջ մտնում են տեղական բնակչության 15-40 տարեկան բոլոր աշխատավորները։ Ժողովրդական միլիցիան իր կազմում ուներ 10—15 հազար զինված մարտիկներ։ Թիֆլիս կայարանից մինչև Կարուլետ և Փոթի կայարանները ընկած երկաթգիծը գրավվում է այդ մարտիկների կողմից։ Երկաթուղային կայարանների ամբողջ վարչական կազմը վռնդվում է աշխատանքից և չեղոքացվում։ Զի-

---

[1] Տես Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, գ. 192, թ. 7։

նաթափվում են ոստիկանությունը և ժանդարմերիան, դադարեց վում է նահանգական վարչական օրգանների և դատական իշխանության գործունեությունը[1]։

1905 թ. դեկտեմբերից Անդրկովկասյան երկաթուղագիծը նորից հայտարարվեց ռազմական գրության մեջ։ Սկսվեց սոսկալի տեռորն ու հալածանքները աշխատավորների նկատմամբ։ Ցարական սատրապները ղենքի ուժով ճնշում և արյան մեջ էին խեղդում երկաթուղայինների գործադուլները։ Գործադուլավորների նկատմամբ սկսվեցին մասսայական ձերբակալություններն ու դատավարությունները[2]։

Կառավարական մի կարգադրության մեջ նշվում էր, որ Անդրկովկասյան երկաթուղու բոլոր այն աշխատողները, որոնք գործի չեն ներկայանա, աշխատանքից հեռացվում և հանձնվում են զինվորական օրգանների կարգադրությանը[3]։ Հազարավոր բանվորներ գործից ազատվում և փողոց էին շպրտվում։ Նորից գործի ընդունվելու կամ ուրիշ տեղ աշխատանք գտնելու համար նրանք պետք է սահմանային ոստիկանության հատուկ թույլտվությունը։

Անդրկովկասի գլխավոր արդյունաբերական կենտրոններում և երկաթուղագծում հսկայական թափով ծավալված ռևոլյուցիոն շարժումները լայն արձագանք գտան նաև Հայաստանի բանվորների, երկաթգծի բանվոր-ծառայողների, զինվորական մասերի, ինչպես նաև կալվածատիրության ծանր ճնշման տակ տառապող գյուղացիական լայն մասսաների մեջ։

Անդրկովկասի այս կամ այն տեղամասում բարձրացող ռևոլյուցիոն ելույթները ուժեղ տպավորություն էին թողնում նաև մյուս շրջանների վրա։ Սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները ամեն կերպ ձգտում էին ուժեղացնել այդ կապը։

ՌՍԴԲՊ Կովկասյան Միությունը մեծ աշխատանք է տանում Հայաստանի կարևոր կենտրոններում, բանվորական շրջաններում և գյուղական վայրերում պարտիական կազմակերպություններ և խմբեր ստեղծելու, ռևոլյուցիոն աշխատանքը տեղերում ղեկավարելու ուղղությամբ։

Այդ նպատակով Թիֆլիսից և Բաքվից հաճախ Հայաստանի տարբեր շրջաններն էին ուղարկվում պարտիական աշխատողներ և ագիտատորներ, բանվորների և գյուղացիների, ինչպես նաև զորա-

---

[1] Տե՛ս Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, Ֆ. 1, գ. 192, թ. 8։

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում, գ. 53, թ. 137։

մասերի մեջ կազմակերպչական աշխատանք տանելու և անլեգալ գրականություն տարածելու համար։

Ոստիկանական մի հաղորդագրության մեջ նշվում է, որ 1905 թ. նոյեմբերին Ախալքալաքի գավառի Բակուրյանի գյուղում ընդհանուր հավաքույթ է տեղի ունեցել, որտեղ քննարկվել են աշխատավորների պահանջները՝ բաղկացած 17 կետից։ Այստեղից ժողովն անցկացնող «ագիտատորները մտադիր են անցնել Ալեքսանդրոպոլի գավառը պրոպագանդայի համար...»[1]։

1906 թ. Ստ. Շահումյանը խոսելով ամբողջ երկրում ծավալված ռևոլյուցիոն շարժումների ազդեցության մասին հայկական շրջաններում, գրում է. «Մենք պարզապես նկատում ենք, որ մեր գավառներում կյանքը փոխվում է։ Հին կուռքերը կամաց-կամաց ընկնում, դահավիժում են։ Քաղաքական գիտակցությունը մուտք է գործում հայկական գավառները։ Երևանում, Ալեքսանդրոպոլում, Կարսում, Շուշում, Շամախում և այլն և այլն, երբեմն նույնիսկ ամենահեռավոր և ամենահետամնաց գյուղերում մենք ունենք արդեն պրոլետարական-սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ, որոնք կամաց-կամաց խմբում են իրենց շուրջը մեր գավառների կենսունակ, իսկապես ռևոլյուցիոն-պրոլետարական տարրերը և կազմակերպում նրանց հանուն սոցիալիզմի ընդհանրապես և հանուն անմիջական ռևոլյուցիոն կռվի ռուսաց բռնակալության դեմ մասնավորապես[2]»։

Ստ. Շահումյանը իր հոդվածներից մեկում 1906 թ. ամռանը գիմելով հայ աշխատավորությանը, գրում է. «Մենք կոչ ենք անում գավառներում գործող մեր կազմակերպություններին, մեր ընկերներին, լարել իրենց բոլոր ուժերը, չխնայել ոչ մի բան, որպեսզի անմասն չմնալ այն սուրբ պատերազմի մեջ, որ մղվում է ռուսական ռճրագործ բռնակալության դեմ։ Հարկավոր է հարվածել թշնամուն ամեն կողմից և բոլոր ուժերով։ Հարկավոր է վերջ տալ արյունարբու գազանների ճնշումներին ու վայրագություններին։ Հարկավոր է բաց անել ազատության ու մարդավայել կյանքի դռները դարերով տառապող թշվառ հարյուր-միլիոնավոր ժողովրդի առաջ»[3]։

Այսպիսով, ռևոլյուցիոն շարժումները ընդգրկում են երկրի բոլոր շրջանները, ինչպես նաև Հայաստանը։

---

1 Տես Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, գ. 53, թ. 137։

2 Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, 1948, էջ 181։

3 Նույն տեղում, էջ 181—182։

1. ՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԱԼԱՎԵՐԴՈՒՄ

1905—1907 թթ. Հայաստանում ռևոլյուցիոն շարժման խոշոր կենտրոններից մեկը Ալավերդու արդյունաբերական շրջանն էր։

Կապիտալիզմի զարգացումը XX դ. սկզբում զգալի հաջողություններ է հասնում պղնձի արդյունաբերության մեջ։ 1903—1905 թթ. տվյալները ցույց են տալիս, որ Ալավերդու պղնձաձուլական գործարանը կառուցված էր նոր տեխնիկայի հիման վրա։ Այդ տարիներին Եվրոպայից ստացվեցին մի շարք նոր սարքավորումներ և մեքենաներ։ Պղնձաձուլման վառարանները բերվել էին Ամերիկայից ու Եվրոպայից[1]։ Այդ հանգամանքը զգալի չափով ընդլայնեց նաև հետախուզական և հանքագործական աշխատանքները և բարձրացրեց պղնձի արտադրությունը։ Արագ կերպով աճեց նաև հանքագործ և գործարանային բանվորների թիվը, որը ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին հասնում էր 4500-ի։ Այստեղ աշխատանքի էին գալիս շրջակա գյուղերի հողազուրկ գյուղացիները, ինչպես նաև Հայաստանի տարբեր շրջանի աշխատավորները։ Բանվորների զգալի մասը Պարսկաստանից եկած աշխատավորներն էին, որոնց վիճակը ավելի ծանր էր։

ՌՍԴԲՊ 5-րդ համագումարում՝ 1907 թ. մայիսի 7-ին արտասանած իր ճառում Ստ. Շահումյանը նշում է, որ 1906 թ. Ալավերդում դրեթե մեկ ամիս տևող գործադուլին մասնակցել են 4500 մարդ, իսկ Բորչալուում՝ բանվորների թիվը 10.000-ից ավելի է[2]։

1905 թ. «Կավկազսկի ռաբոչի լիստոկ» թերթը, նկարագրելով Ալավերդու բանվորների վիճակը, նշում է, որ բանվորները զուրկ են իրենց դրությունը բարելավելու ամենաչնչին միջոցներից։ Բանվորները չունեին կանոնավոր բնակելի տներ, բաղնիս և կենցաղային այլ հարմարություններ։ Նրանց տները նման էին գետնափոր խցերի, որոնց մեջ տեղավորվում էին 20—25 մարդ։ Այստեղ շարժվելն անգամ անհնար էր։

Հանքահորերում աշխատող բանվորները ստանում էին օրական 60 կ., շատ քչերը միայն՝ մեկ ռուբլի. գործարանում աշխատող բանվորները օրական ստանում էին 45-60 կոպեկ։

Բանվորների աշխատավարձի մի մասն էլ հետ էին պահում որպես տուգանք այս կամ այն «խախտումների» համար։ Սակայն աշխատավարձի չնչին դումարն էլ ժամանակին ստանալ հնարա-

---

[1] „Кавказский календарь", 1905, стр. 58.

[2] *Տես Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, Երևան, 1948, էջ 238—239։*

վոր չէր, այն տրվում էր 2—3 ամիսը մեկ անգամ միայն։ «Կոպիտ վերաբերմունք, լրտեսություն, անընդհատ տուգանքներ,— ահա թե ինչ պատկեր ունի Ալավերդու գործարանը»[1]—գրում էր «Կավկազսկի ռաբոչի լիստոկ» թերթը։ Բանվորական օրը տևում էր 12—14 ժամ, իսկ շաբաթական մեկ անգամ էլ 18 ժամ։

Հանքերում և գործարաններում բանվորների կյանքը ապահովելու համար ոչ մի հոգատարություն չկար, որի հետևանքով բանվորները հաճախ զոհ էին դառնում դժբախտ պատահարների, կամ հաշմանդամ դառնալով փողոց էին նետվում առանց որևէ ապահովման ու նպաստի։ Դաժան կառավարիչն ու վերակացուները բանվորներին ամենավայրենի կերպով ծեծում էին և տուգանքի ենթարկում, իսկ բանվորները գործազրկության սարսափից ստանձնված՝ դառնությամբ տանում էին այդ բոլոր հալածանքները։

Ալավերդու պղնձահանքերը շահագործում էին ֆրանսիական կապիտալիստները. տեղական հույն տերերից նրանք հանքերը վերցրել էին կապալով 30 տարի ժամանակով՝ տարեկան 9.000 ռուբլի կապալագնով։ Կապիտալիստները շահույթ ստանալու և բանվորներին շահագործելու համար միջոցների մեջ ոչ մի խտրություն չէին դնում։

Բոլշևիկյան «Կայծ» թերթի թղթակիցը 1906 թ. գրում էր. «...Ինչպես երևում է, այս հանքահորերի տեսուչը՝ Պոլ-Մարը, բավական փորձված մարդ է։ Նա ամեն տեսակ միջոցների դիմում է խանգարելու, որ այս խաղաղ տնկյունում մուտք չգործեն «վնասակար» մարդիկ և խելքից չհանեն բանվորներին։ Այդ բանի համար նա ունի վարձկան մարդիկ, որոնք որոշ ռոճիկ են ստանում։ Նրանց պարտականությունն է՝ հետևել բանվորներին, որպեսզի սրանք ժողովներ, միտինգներ և նման վնասարար տեղեր չհաճախեն, իսկ եթե նկատեն որևէ մեկին, անմիջապես իրեն տեղեկացնեն։ Վա՜յ այն բանվորին, որը կհամարձակվի մի որևէ ժողով գնալու կամ մի քանի ընկերների մոտ կանգնել և խոսել. նրան իսկույն առանց բացատրության ճանապարհ են ձգում»։ Թղթակիցը նշում է, որ նոր բանվորներ աշխատանքի ընդունելու համար միջնորդներն ու գործակատարը, ինչպես նաև տերերը մեծ չափերով կաշառք են վերցնում։ Որպես կանոն, առանց կաշառքի աշխատանք ստանալ հնարավոր չէր։

ՌՍԴԲՊ Թիֆլիսի կոմիտեի և Կովկասյան Միության կողմից

---

[1] „Кавказский рабочий листок", № 6, 1905.

[2] «Կայծ», № 37, 1906։

սիստեմատիկ օգնություն էր ցուցաբերվում Ալավերդու բանվորությանը։ Այստեղ էր ուղարկվում մեծ քանակությամբ անլեգալ պարտիական գրականություն. Ալավերդի մշտական աշխատանքի էին գործուղվում փորձված ագիտատորներ ու պարտիական ակտիվ գործիչներ։

Ստեփան Շահումյանը և Սուրեն Սպանդարյանը միշտ էլ կարևոր նշանակություն են տվել Ալավերդում տարվող ռևոլյուցիոն աշխատանքին և անմիջապես ղեկավարել են այդ աշխատանքը։

Ալավերդում ռևոլյուցիոն աշխատանքները կազմակերպում և ղեկավարում էր ՌՍԴԲՊ Բորչալու գավառի կազմակերպությունը, ուր ակտիվ աշխատանք է տանում նաև հայտնի բոլշևիկ Մ. Ցիտակյանը։

Ալավերդու բանվորները գործադուլային պայքարի առաջին փորձը կատարեցին 1903 թ. աշնանը, սակայն մի շարք գավառական տարրերի քայքայիչ աշխատանքի հետևանքով գործադուլը ձախողվում է։ Գործադուլային շարժման երկրորդ փորձը տեղի ունեցավ 1904 թ.։ Այս անգամ էլ ստիպականությունը նախօրոք իմանում է նախապատրաստվող գործադուլի մասին և ձերբակալում է «կասկածելի» բանվորներին ու գրանով իսկ, ինչպես հաղորդվում է ցարական պաշտոնական գրություններում՝ «գրությունը խաղաղվում է»։ Սակայն ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին Ալավերդում ծավալվող ռևոլյուցիոն պայքարը իր քաղաքական և իդեական մակարդակով ամբողջովին տարբերվում էր նախկին անհաջող փորձերից։ Ալավերդում աշխատավորական մասսաները ուժեղ գործադուլային շարժում սկսեցին 1905 թ. մարտին, ապա՝ նաև նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին։ Գործադուլային շարժումը Ալավերդում լայն ծավալ է ստանում նաև 1906 թ. ամռանը։

1905 թ. մարտի 8-ին Բորչալուի գավառապետը Թիֆլիսի նահանգապետին հայտնում է, որ Ալավերդու գործարանի բոլոր փականագործների և հյուսների արհեստանոցների բանվորներն ու վարպետները մարտի 5-ին դադարեցրել են աշխատանքը և գործարանի վարչությանը ներկայացրել հետևյալ պահանջները։

1. Բանվորական օրվա կրճատում մինչև 9 ժամ։
2. Զրի բնակարան՝ սանիտարական կանոններով։
3. Վարձատրության ավելացում 20%-ով։
4. Գործարանի փոխց բաց թողնվող հացի սրակի բարձրացում և այլն[1]։

---

[1] Տես Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ., ֆ. 39, գ. 712, թ. 20։

Գործարանի վարչությունը առաջարկում է գործադուլավորներին աշխատանքը վերսկսել և ընտրել իրենց ներկայացուցիչներին բանակցություններ վարելու համար։ Բանվորները մերժում են այդ առաջարկը և պահանջում ի կատար ածել իրենց առաջարկը։ Ոստիկանությունը դիմում է բռնի ուժի գործադրման և զենքի ուժով ստիպում է գործադուլավորներին անցնել աշխատանքի։ 8 հոգի հրաժարվում են աշխատել. նրանք անմիջապես աշխատանքից ազատվում ու գործարանից հեռացվում են[1]։

Բանվորների նկատմամբ գործադրվող ճնշումն ու հալածանքը չէին կարող կանգնեցնել նրանց պայքարը հանուն իրենց իրավունքների պաշտպանության։ ՌՍԴԲՊ Սանահինի ռայոնական կազմակերպությունը և գործարանում ու հանքահորերում աշխատող բոլշևիկները նոր թափով սկսեցին գործել բանվորական շարժումները կազմակերպելու, դրանց իդեական ու քաղաքական մակարդակը բարձրացնելու ուղղությամբ։

1905 թ. մայիսի 1-ին Ալավերդում տեղի ունեցավ խոշոր ցույց։ Ցույցին մասնակցում էին նաև շրջակա գյուղերի գյուղացիները։ Ցուցարարների առաջ ճառով հանդես եկավ Ստ. Շահումյանը, որը կոչ արեց համախմբված պայքարի դուրս գալ ցարիզմի և կալվածատիրական կարգերի դեմ, մերկացնել դաշնակների և մյուս բուրժուական պարտիաների կործանարար աշխատանքը։ Մայիսի սկզբներին Ստ. Շահումյանը անցկացրեց ՌՍԴԲՊ Բորչալուի կազմակերպության խորհրդակցություն, որտեղ հանդամանորեն խոսեց բոլշևիկների խնդիրների մասին ռևոլյուցիայի մեջ։ Ռուսաստանում և Անդրկովկասում տեղի ունեցող հոկտեմբերյան քաղաքական գործադուլները նոր թափ հաղորդեցին բանվորների պայքարին Ալավերդում։ 1905 թ. հոկտեմբերի 14-ին Անդրկովկասյան երկաթգծում սկսած համընդհանուր գործադուլը տևեց մինչև նոյեմբերի 4-ը։ Այդ ժամանակամիջոցում գնացքների երթևեկությունը կանգ էր առել, աշխատանքը դադարեցվել էր նաև դեպոներում, կայարաններին կից արհեստանոցներում, պահեստներում և այլ տեղերում։ Շատ կայարաններում զենքավարությունը ամբողջովին անցել էր գործադուլային կոմիտեների ձեռքը։ Երթևեկում էին միայն այսպես կոչված, «պատգամավորական գնացքները», որոնք սպասարկում էին գործադուլավորներին։ Երկաթուղային կարևոր հանգույցներում քաղաքական գործադուլը զլխավո-

---

[1] Տես Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 39. գ. 712, թ. 20։

ելու համար ստեղծվել էին գործադուլային կոմիտեներ կամ բյուրոներ, որոնք գործում էին ՌՍԴԲՊ-ի Կովկասյան Միության ցուցումներով։

1905 թ. հոկտեմբերի 14-ին Անդրկովկասյան երկաթուղային-ների Միության Բյուրոն հատուկ կոչ բաց թողեց։ Նկարագրելով երկաթուղայինների ծանր վիճակը, կոչը միակ փրկությունը համարում էր պայքարի դուրս գալ և միանալ երկաթուղայինների համառուսաստանյան գործադուլին։ Այդ կոչը մեծ չափով տարածվել է նաև Հայաստանի երկաթուղայինների մեջ։

Սանահինում, ինչպես նաև շրջակա Այրում, Ախթալա, Հաղպատ, Քոլագերան, Շահալի կայարաններում գործադուլը ղեկավարում էր ՌՍԴԲՊ Սանահինի կազմակերպությունը[1]։ Սանահինում, փաստորեն ամբողջ իշխանությունը գտնվում էր գործադուլային կոմիտեի ձեռքին, որը «Պատգամավորական դնացքի» միջոցով կապ էր պահպանում Թիֆլիսի հետ։

Սանահինի և մյուս կայարանների երկաթուղայինների գործադուլը ուժեղ ազդեցություն էր թողնում Ալավերդիի պղնձագործների և շրջակա գյուղերի վրա։ Սանահինի երկաթուղայինների հավաքույթներին մասնակցում էին մոտակա Ուղունլար, Այդեհատ, Աքորի և մի շարք ուրիշ գյուղերի աշխատավոր գյուղացիները։ Գյուղացիները զինված խմբերով մասնակցում էին բանվորների մղած ռևոլյուցիոն պայքարին։ ՌՍԴԲՊ Սանահինի ռայոնական կազմակերպությունը լայն աշխատանք էր տանում բանվորների և գյուղացիների դաշինքը ամրապնդելու և ռևոլյուցիայի հաղթանակը ապահովելու համար։

Երկաթուղայինների գործադուլային մեծ շարժումը և Սանահինում ու մոտակա կայարաններում տեղի ունեցող հոկտեմբերյան մարտերը կարևոր նշանակություն ունեցան նաև Ալավերդում ռևոլյուցիոն շարժումների հետագա զարգացման համար։

1905 թ. նոյեմբերի 20-ին սկսվում է Ալավերդու բանվորների կազմակերպած 5-օրյա գործադուլը։ Բանվորները, հաշվի առնելով պայքարի նախորդ շրջանի փորձը, այս անգամ հանդես եկան ավելի կազմակերպված և միասնական ուժերով։ Այդ փաստը մեծ գոհունակությամբ է նշում ՌՍԴԲՊ Կովկասյան Միության օրգան «Կավկազսկի բաբոչի լիստոկ» թերթը։ «Հետաքրքիր էր տեսնել,— գրում է թերթը,— թե ինչպես միատեսակ պայմանները միավորե-

---

[1] Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 27, գ. 2567, թ. 27։

ցին տարբեր ազգությունների բանվորներին, ինչպես այդ հեռավոր—խուլ անկյունում բանվորները որոշեցին՝ ինչ էլ որ լինի ամուր կանգնեն մինչև իրենց պահանջների բավարարումը»[1]։ Բանվորների միասնությունն ու ամուր կամքը հաղթանակեց։

Բոլշևիկների ղեկավարությամբ բանվորները նախօրոք մշակել էին 22 կետից բաղկացած իրենց պահանջները։ Գործադուլ հայտարարելուց հետո գործադուլային կոմիտեն, որի մեջ մտնում էին Ս. Փիրուզյանը, Վ. Զելինձեն, Ա. Դեվդորիանին, Մ. Ադամյանը (Չալ բանվոր), Չխեիձեն, Մ. Մուրադյանը, Ն. Ջաֆարովը, Ա. Խաջիևը և ուրիշները, այդ պահանջները անմիջապես ներկայացրեց գործարանի վարչությանը։

Բանվորները պահանջում էին. ութժամյա բանվորական օրաշխատավարձի բարձրացում 20 տոկոսով, օրավարձով աշխատող բանվորներին վճարել օրական 1 ռ., բանվորական տեսչության ստեղծում, տուգանքների վերացում, ապահովել բանվորներին բուժսպասարկումով և վճարել լրիվ աշխատավարձը հիվանդության ժամանակ, ապահովել տարեկան արձակուրդով, բարելավել բնակարանային և կենցաղային պայմանները և այլն։ Բանվորները հայտնում էին, որ մինչև այդ պահանջները չբավարարվեն, իրենք աշխատանքի չեն անցնի։ Պահանջներն ավարտում էին «Կեցցե՛ ՌՍԴԲՊ»[2] կոչով։

Գործարանի կառավարիչը ջիմում էր զանազան խորամանկ միջոցների՝ ցանկանալով խաբել բանվորներին և հրաժարվել առաջադրած պահանջները բավարարելուց։ Պղնձագործներին իրենց համերաշխությունը ցույց տվին երկաթուղայինները և շրջակա գյուղացիները։

Այդ նույն օրը՝ նոյեմբերի 20-ին, Սանահին կայարանում, սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ղեկավարությամբ, ոտքի ելան աշխատավորները. նրանց մեջ էին նաև «մեծ թվով զինված գյուղացիներ՝ շրջակա գյուղերից։ Այդ մասսան...կարմիր դրոշներով և ռևոլյուցիոն երգեր երգելով շարժվեց դեպի Սանահին կայարանից ոչ հեռու գտնվող Ալավերդու պղնձաձուլական գործարանը...»[3]։ Այդ ցույցին մասնակցում էին Ուզունլար, Այգեհատ և այլ գյուղերի աշխատավորները։ Այստեղ պղնձագործներն ու երկաթուղայինները, նրանց հետ նաև մոտակա գյուղերի աշխատա-

---

[1] „Кавказский рабочий листок", № 6, 1905։

[2] ՍՄԿՊ ԿԿ կից Մ.Լ.Մի ի Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 10, գ. 3։

[3] Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ. ֆ. 27, գ. 2567, թ. 32։

վորները ցույց տվին իրենց միասնությունը և խոստացան համերաշխորեն պայքարելու ցարի և բոլոր ճնշողների դեմ՝ ազատություն ձեռք բերելու համար։

Ոստիկանական մի հաղորդագրության մեջ նշվում է, որ այդ միտինգում ճառով հանդես եկավ միտինգի ղեկավարներից բոլշևիկ Կոխորիձեն[1], որը կոչ արեց՝ տապալել ցարական բռնակալությունը և «ձեռք բերել սոցիալ-դեմոկրատական ռեսպուբլիկա, այն ժամանակ բոլորը հավասար կլինեն և լավ կապրեն»[2]։ Ցուցարարները կարմիր դրոշի վրա գրել էին «Կորչի՛ ցարը, կեցցե՛ ռեսպուբլիկան և բանվորական միությունը»[3]։

Բանվորները ամուր մնալով իրենց դիրքերում, հանդես էին գալիս ռևոլյուցիոն ճառերով և մերկացնում գոյություն ունեցող պետական կարգերը, ցույց տալիս նոր հասարակարգ ստեղծելու գործում բանվոր դասակարգի քաղաքական պայքարի նշանակությունը։ Ճառախոսները մերկացնում էին նաև դաշնակների հակաժողովրդական քաղաքականությունը։

Քաղաքական կյանքին ընթացք տվող միակ ուժը դառնում է պրոլետարիատը. «Պրոլետարիատը գտնվում է հասարակական կյանքի կենտրոնում,— կարդում ենք մի պրոկլամացիայում,—որը իր շուրջն է համախմբում հասարակության բոլոր կենդանի էլեմենտները, որոնք ամբողջ հասարակական կյանքին տոն են տալիս»[4]։

Գործարանի կառավարիչ Պոլմարը նոյեմբերի 20-ին և 21-ին հատուկ նամակով դիմում է Թիֆլիս՝ ֆրանսիական հյուպատոսին և օգնություն է խնդրում գործադուլը դադարեցնելու համար։ Պոլմարի նոյեմբերի 21-ի նամակից երևում է, որ գործադուլին օգնում էին ոչ միայն երկաթուղայինները, այլ նաև «...շրջակա հայկական 4 գյուղերի տեղական զինված ուժերը»[5]։ Այնուհետև Պոլ-

---

[1] Երբ ամբողջ Անդրկովկասյան երկաթգծում հայտարարվում է զինվորական դրություն, Կոխորիձեն իր մի խումբ ընկերների հետ պաշտպանվելով ցարական կառավարության հետապնդումից՝ անցնում է ընդհատակյա աշխատանքի։ Ցարական կառավարությունը երկար տարիներ շարունակ փնտրում է նրան։ Միայն 1915 թ. մարտի 30-ին ոստիկանությունը գտնում և ձերբակալում է նրան Քութայիսում և տպա գատի տալիս։ Ցարական կառավարությունը նրան մեկուսացնում է հակասեմական գործունեության մեջ, Սանահինում 1903 թ. գործադուլային շարժումը կազմակերպելու համար (Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 27, գ. 2567, թ. 34 35։

[2] Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 27, գ. 2567, թ. 32։

[3] Նույն տեղում։

[4] Նույն տեղում, ֆ. 1, գ. 194, թ. 92։

[5] ՍՄԿՊ ԿԿ կից Մ.Լ.Մ.Ի-ի Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 40, գ. 3։

մարը տագնապով հայտնում է, որ գործադուլը սպառնում է գործարանի փակմանը[1]։

Գործարանի վարչությունը, տեսնելով բանվորների միասնական ուժն ու վճռական պայքարը, սկսեց նահանջել և ստիպված եղավ հաշտվել ստեղծված դրության հետ, առաջարկելով բանվորներից ընտրել հատուկ հանձնաժողով՝ բանվորների ներկայացրած պահանջները քննարկելու համար։

1905 թ. նոյեմբերի 25-ին բանվորների ընտրած լիազորների խորհուրդը հայտնեց, որ նրանց բոլոր պահանջները ընդունված են որոշ փոփոխություններով։ Բանվորների լիազորների խորհրդի և գործարանի վարչության միջև կնքվել էր 18 կետից հատուկ պայմանագիր, որի համաձայն աշխատանքի օրը պետք է տևեր 9 ½ ժամ և ամիսը մի անգամ աշխատավարձը վճարվեր։ 1906 թ. հունվարից պետք է սկսվեր բնակելի շենքերի կառուցումը, իսկ աշխատավարձի բարձրացման հարցը որոշելու էր հանձնաժողովը՝ գործարանի վարչության հետ միասին[2]։

«Կավկազսկի բաբոչի լիստոկ» թերթը մեծ գոհունակությամբ նշում էր. «Սանահին կայարանից հաղորդում են, որ Ալավերդու ոլոնձաձուլական գործարանում բանվորները գործադուլ են հայտարարել, որը տևել է 5 օր և վերջացել բանվորների լիակատար հաղթանակով»[3]։

Այդ գործադուլը ցույց տվեց, թե ինչ մեծ նշանակություն ունի բանվորների միասնությունն ու համառ պայքարը՝ առաջադրված նպատակին հասնելու գործում։

Ալավերդու բանվորների գործադուլը ռևոլյուցիոն ազդեցություն էր թողնում հարևան գյուղերի աշխատավորության վրա։ Բանվորների մի մասը, կապված լինելով գյուղի հետ, լայն ագիտացիոն աշխատանք է տանում գյուղացիների մեջ, կազմակերպում նրանց պայքարը կալվածատերերի դեմ։ Դրանով է բացատրվում գյուղացիների շտեսնված ակտիվությունը, որոնք խմբերով հարևան գյուղերից գալիս և միանում էին բանվորների գործադուլին, իսկ որոշ դեպքերում, զինված խմբեր կազմած, հարկավոր օգնություն էին ցույց տալիս բանվորներին։ Բանվորների և գյուղացիների օրավուր ամրապնդվող դաշինքը վախեցնում էր գործարանատեր կապիտալիստներին, գյուղի կալվածատերերին և

---

[1] ՍՄԿՊ ԿԿ կից Մեկ.Մի-ի Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 40, գ. 3։

[2] „Кавказский рабочий листок", № 6, 1905։

[3] Նույն տեղում, № 4, 1905։

ստիկանությանը։ Այդ է պատճառը, որ ոստիկանությունը ջանում էր ամեն կերպ արգելել գյուղացիներին՝ կապվելու բանվորների հետ։

Հայաստանում և Անդրկովկասի մյուս շրջաններում բանվոր դասակարգի ռևոլյուցիոն պայքարը կազմակերպելու և զինված ապստամբություն պատրաստելու գործում մեծ նշանակություն ունեցավ ՌՍԴԲՊ Կովկասյան Միության 4-րդ կոնֆերենցիան, որը տեղի ունեցավ 1905 թ. նոյեմբերին։ Կոնֆերենցիան մի շարք կարևոր որոշումներ ընդունեց և ցույց տվեց տեղական պարտիական կազմակերպություններին լայն աշխատանք ծավալել մասսաների ինտերնացիոնալ միավորման ուղղությամբ։ Կոնֆերենցիան պահանջում էր ամրապնդել ռևոլյուցիոն կազմակերպությունները, բանվորական դեպուտատների Սովետներն ու գյուղացիական կոմիտեները։

ՌՍԴԲՊ Կովկասյան Միության 4-րդ կոնֆերենցիան բանվորական դեպուտատների Սովետների մասին ընդունած բանաձևում նշում է, որ ամենուրեք բարձրացող բանվորական շարժումը, պայքարելով տիրող կարգերի դեմ, ստեղծում է իր կազմակերպական և ղեկավարման օրգանները—գործադուլային կոմիտեները և բանվորական դեպուտատների Սովետները, որոնց կազմակերպմանը պարտիական կազմակերպությունները պետք է ամենաակտիվ մասնակցություն ցույց տան և նրանց մեջ մտցնեն «հնարավորին չափ մեծ քանակությամբ կատարյալ սոցիալ-դեմոկրատներ...»[1]։

Կոնֆերենցիայի բանաձևում հատկապես նշվում էր սոցիալ-դեմոկրատական ազդեցությունը Հայաստանում ուժեղացնելու մասին։ Խնդիր էր դրվում Հայաստանի շրջաններում առաջացած պարտիական կազմակերպությունները և խմբերը ուժեղացնելու և նորերը կազմակերպելու մասին։ Կոնֆերենցիան որոշում է ընդունում նաև ցարական կառավարության կողմից հրահրվող պրովոկացիոն հայ-թյուրքական կոտորածները դադարեցնելու և լայն պրոպագանդայի միջոցով ժողովուրդների ինտերնացիոնալ միասնությունն ու բարեկամությունը ամրապնդելու մասին[2]։

Կոնֆերենցիան ՌՍԴԲՊ Կովկասյան Միության պաշտոնական օրգան է հաստատում «Կավկազսկի բաբոչի լիստոկ»-ը, որը լույս էր տեսնում Ի. Ստալինի և Ստ. Շահումյանի խմբագրությամբ։

---

[1] „Кавказский рабочий листок", № 9, 1905, դեկտ. 4։

[2] Նույն տեղում, № 8, 1905։

Թերթը 1905 թ. նոյեմբերի 29-ի առաջնորդողում գրում էր «....մենք միշտ ասել ենք և պետք է ասենք, որ միայն իշխանությունը ամբողջովին ռևոլյուցիոն ժողովրդի ձեռքն անցնելով երկրում կըստեղծվի կարգ, միայն ժամանակավոր ռևոլյուցիոն կառավարությունն է ի վիճակի վերջ տալու կոնտրռևոլյուցիոն ոտնձգություններին»[1]։

Այդ թերթի էջերում լույս են տեսնում Ստ. Շահումյանի գրչին պատկանող մի շարք առաջնորդողներ և առանձին հոդվածներ։ Թերթի էջերում հաճախակի էր տրվում հաղորդումներ Հայաստանի տարբեր շրջաններում ծավալվող ռևոլյուցիոն շարժումների, առանձնապես Ալավերդու բանվորական գործադուլների մասին։ Թերթը մերկացնում էր ցարիզմի և նացիոնալիստական պարտիաների ոճրագործ դերը հայ և ադրբեջանական ժողովուրդների զարավոր բարեկամությունը թշնամանքի վերածելու գործում։ Թերթում լույս տեսան Ստ. Շահումյանի «Էվոլյուցիոնիզմն ու ռևոլյուցիոնիզմը հասարակական գիտության մեջ»[2] և «Ութժամյա բանվորական օրը և բանվորների պետական ապահովագրությունը»[3] ծավալուն հոդվածները։ Դրանք խոշոր նշանակություն ունեցան Անդրկովկասի բանվորական շարժման զարգացման գործում։

«Կավկազսկի բաբոչի լիստոկ» թերթը լայն տարածում էր գտնում նաև Ալավերդում, Սանահինում և Լոռվի բազմաթիվ տեղերում։ Թերթը օգնում էր մասսաների ռևոլյուցիոն պայքարի կազմակերպման գործին։ Սանահինի պարտիական կազմակերպությունը ուներ իր ագիտատորները, որոնք «Կավկազսկի բաբոչի լիստոկ»-ը և պարտիական գրականությունը տարածում էին Ալավերդու պղնձագործների մեջ։ Այդ տեսակետից նուրն աշխատանք ծավալեց «Դեղուշկան»—Մ. Մելիքյանը։

Առհասարակ Սանահինի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը շատ ակտիվ աշխատանք էր տանում Ալավերդում և շրջակա գյուղերում։ 1905 թ. դեկտեմբերին Սանահինի կազմակերպությունը հատուկ հեռագիր է ուղարկում Բաթումի Կոմիտեին, որտեղ իր դայրույթն է հայտնում կազակների գազանությունների դեմ՝ Բաթումում և Քութայիսում բանվորների վրա կրակ բացելու համար։ Հայտնվում էր նաև, որ որպես եղբայրական համերաշխու-

---

[1] „Кавказский рабочий листок", № 5, 1905։

[2] Նույն տեղում, № 6, 1905։

[3] Նույն տեղում, № 8, 1905։

թյան նշան, Սանահինի աշխատավորները գործադուլ են հայտարարում և պահանջում են Անդրկովկասի սահմաններից հեռացնել դաժան կալվածատերերին՝ որոնց օգնությամբ ցարը ձգտում է արյան մեջ խեղդել ժողովրդին[1]։

1905 թ. նոյեմբերյան գործադուլից հետո էլ Ալավերդու բանվորների պրոլետարությունը չբարեկամվեց։ Ֆրանսիական լեռնարդյունաբերության ընկերության կապիտալիստներն իրենց աված խոստումներն ու «զիջումները» ստահճանաբար չեղյալ հայտարարեցին և ոստիկանական հսկողության տակ շարունակեցին բանվորների ճնշումն ու հալածանքները։

1905 թ. դեկտեմբերին բանվորները կրկին գործադուլի փորձ են անում, բայց այս անգամ նրանք անկազմակերպ ձևով են հանդես գալիս և արդյունքի չեն հասնում։

Սակայն բոլշևիկների ղեկավարությամբ բանվորները պատրաստվում էին նոր, ավելի ուժեղ գործադուլի։ Ոստիկանությունն ու ցարական չինովնիկները հետևում էին բանվորների ամենօրյա գործունեությանը և աշխատում էին խափանել նրանց նախապատրաստվող ելույթը։

1906 թ. փետրվարին տեղի ունեցավ ՌՍԴԲՊ Բորչալուի կազմակերպության կոնֆերանսը։ Կոնֆերանսը քննարկեց բանվորական և գյուղացիական ռևոլյուցիոն շարժումները ղեկավարելու հարցը։ Ընդունված որոշումները օգնում էին բոլշևիկներին նոր թափով ղեկավարելու ռևոլյուցիոն շարժումները գավառում։ Աշխատավորության ռևոլյուցիոն պայքարի ուժեղացումը մեծ անհանգստություն էր պատճառում ցարական իշխանություններին։ 1906 թ. մարտին զինվորական նոր ուժեր տեղափոխեցին Բորչալուի գավառը՝ բանվորական վայրերում և գյուղերում բարձրացող ռևոլյուցիոն շարժումները ճնշելու համար։ Սակայն աշխատավորների պայքարը դնալով ավելի և ավելի էր սրվում։

Գործադուլային շարժումը Ալավերդում նոր թափով սկսվեց 1906 թ. ամռանը։ 1906 թ. հունիսին Թիֆլիսի գեներալ նահանգապետին ուղղված հաղորդագրության մեջ ասվում էր, որ ֆրանսիական ընկերության պատկանող Ալավերդու պղնձաձուլական գործարանի բանվորները հունիսի 3-ին տնտեսական հողի վրա գործադուլ են հայտարարել։ Գործադուլ են հայտարարել նաև Շամլուղի հանքերի բանվորները։ Հաղորդվում է նաև այն մասին, որ գոր-

[1] Տես Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 27, գ. 2567, թ. 29։

ծարանի դիրեկտոր Պոլմարը առանց իր լիազորությունները որևէ մեկին հանձնելու անհետացել է։ Նրա վերադարձը կարող է գործը ավելի բարդացնել[1]։

Բանվորները այս անգամ որոշել էին այլևս չհավատալ կապիտալիստների սուտ խոստումներին և վճռական պայքար տանել նրանց դեմ։ Բորչալուի գավառապետի արդեն հունիսի 14-ի հաղորդագրության մեջ նշվում էր. «Ալավերդու գործարանի բանվորները շարունակում են գործադուլը, հրաժարվում են աշխատանքից ազատվել, հրավիրում եմ դինվորական մասեր Շուլավերից»[2]։

1906 թ. օգոստոսի 2-ից սկսվում է Ալավերդու հանքերի և գործարանների բանվորների նոր ընդհանուր գործադուլը։

ՌՍԴԲՊ Կովկասյան Միության մարզային Բյուրոյի կողմից հատուկ հանձնարարությամբ Ալավերդի եկան Ստ. Շահումյանը և Սուրեն Սպանդարյանը՝ տեղի բոլշևիկներին օգնելու և գործադուլային շարժումը ղեկավարելու համար։

Դեռևս գործադուլը սկսվելուց շատ առաջ, հուլիս ամսին, բանվորները ընտրեցին գործադուլային կոմիտե, որի մեջ մտան Ս. Գիրուզյանը, Զանթուրաշվիլին, Ս. Վերմիշյանը, Մ. Աղամյանը («Չալ բանվորը»), Իսմայիլ Մամեդ—օղլին, Ռ. Խաչիևը, Ն. Պապոնդոպուլոն և մի շարք ուրիշ բանվորներ։

Գործադուլային կոմիտեն կազմեց 18 կետից բաղկացած պահանջներ, որոնք բանվորների քննարկումից և ընդհանուր հավանություն ստանալուց հետո՝ օգոստոսի 1-ին ներկայացվեցին ֆրանսիական լեռնարդյունաբերության ընկերությանը։

Գործադուլավորները պահանջում էին՝ սահմանել ութժամյա բանվորական օր հասակավորների և վեցժամյա՝ երեխաների համար, բանվորների ապահովագրում, տուգանքների վերացում, աշխատավարձի բարձրացում, գործադուլային շարժմանը մասնակցած բոլոր բանվորներին աշխատանքի վերընդունում, բանվորների բժշկական սպասարկման ապահովում, կուլտուրական սպասարկման կազմակերպում՝ դրադարան-ընթերցարանների հիմնում և այլն։

Ինչպես պետք էր սպասել, ֆրանսիական ընկերությունը մերժեց բանվորների ներկայացրած պահանջները։ Բանվորները օգոստոսի 2-ին ընդհանուր գործադուլ հայտարարեցին։ Չորս հազարից

---

[1] ՍՄԿՊ ԿԿ կից ՄԷԼՍԻ-ի Վրաց. ֆիլ. արխիվ, ֆ. 2, գ. 112, թ. 81։

[2] Նույն տեղում, թ. 91։

ավելի բանվորներ հավաքվեցին «Մանանա»-ի հրապարակը, որտեղ նրանք խոսք տվեցին միասնական ուժով պաշտպանել իրենց շահերը և չնահանջել, մինչև որ չբավարարվեն ներկայացված պահանջները։

Գործադուլին մասնակցող պարսիկ բանվորների մեջ մեծ ակտիվություն էր առաջացրել այն լուրը, որ իբր թե պարսկական շահը ժողովրդին կոնստիտուցիա է տվել[1]։

Գործադուլավոր բանվորների պայքարին ուղղություն էին տալիս Ստ. Շահումյանը և Ս. Սպանդարյանը։

Ս. Սպանդարյանը շատ հաճախ էր հանդես գալիս բանվորական հավաքույթներում ու միտինգներում, ոգևորում էր բանվորներին ու ցույց տալիս նրանց մղած հերոսական պայքարի քաղաքական նշանակությունը բանվոր դասակարգի ընդհանուր պայքարում։

Բորչալուի բոլշևիկյան կազմակերպության օգնությամբ Ս. Սպանդարյանը լայն աշխատանք ծավալեց նաև շրջակա գյուղերում։

Հաղպատ և այլ գյուղերում նա անցկացրեց բոլշևիկյան կազմակերպությունների և գյուղացիների խորհրդակցություններ, պարզաբանեց բոլշևիկյան պարտիայի ագրարային ծրագրի հիմնական խնդիրները։

Սուրեն Սպանդարյանի նախաձեռնությամբ կազմված գործադուլային կոմիտեի կոչը՝ բանվորներին նյութական օգնություն ցույց տալու վերաբերյալ, որը բազմացվեց հատուկ թերթիկներով, մեծ ընդունելություն գտավ ոչ միայն շրջակա գյուղերում, այլ նաև Հայաստանի մյուս շրջաններում։ Բնակչության ժողովված միջոցների շնորհիվ Ղարաբիլիսայից և այլ տեղերից բանվորներին նյութական օգնություն հասցրին[2]։ Բանվորները կարողացան գործադուլային պայքարը շարունակել ավելի քան մեկ ամիս։

Ալավերդու բոլշևիկներն ու առաջավոր բանվորները Ստ. Շահումյանի և Ս. Սպանդարյանի ղեկավարությամբ վճռական պայքար էին տանում դաշնակցական-անարխիստական տարրերի դեմ, որոնք ցանկանում էին իրենց ավանտյուրիստական գործունեությամբ վիժեցնել գործադուլը։ Բանվորները գործադուլային կոմիտեի ցուցումներով կազմակերպեցին ղեկավարված ջոկատներ հանքերն

---

[1] Տես Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, դ. 201, թ. 166։

[2] Տես «Նոր խոսք», օգոստոսի 25, 1906։

ու գործարանները անարխիստական տարրերից պաշտպանելու համար։

Լոռիի շրջանում ակտիվ աշխատանք էին տանում նաև Մ. Մելիքյանը, Ս. Խանոյանը, Ա. Թումանյանը, Ս. Էվոյանը և ուրիշները։

Կապիտալիստները, տեսնելով բանվորների վճռական և երկարատև պայքարը, ստիպված եղան սկզբում համաձայնել բանվորների պահանջների հիմնական կետերի հետ, սակայն շուտով կառավարությունից նրանք ստացան ռազմական ուժեր, որպես օգնություն և սկսեցին զինված ուժերով ճնշել գործադուլավորների պայքարը։

Թիֆլիսի նահանգապետի հրամանով օգոստոսի վերջերին Ջալալօղլուց (Սանդիանավան), Բորչալուի զինվորական հրամանատար գնդապետ Զոլոտարյովը կազակային զորամասի գլուխն անցած 4 թնդանոթներով շտապեց Ալավերդի։ Շուլավերից նրան օգնության հասավ գավառապետը իր զորախմբով ու ոստիկաններով։ Մինչև ատամները զինված ցարական դահիճները թնդանոթներն ու գնդացիրները ուղղեցին անզեն բանվորների, երեխաների ու կանանց վրա։ Գործադուլը ճնշվեց։

Լկտիացած կապիտալիստները հարյուրավոր բանվորների աշխատանքից անմիջապես ազատեցին և փողոց շպրտեցին. բայց այդ դեռ բավական չէր, զորքի և ոստիկանության օգնությամբ նրանց արտաքսել տվեցին Ալավերդուց։

Աշխատանքից ազատվածների մի դդալի մասը Պարսկաստանից եկած բանվորներն էին, որոնց լցրին ապրանքատար վագոնները և քաղցած ու մերկ վիճակում օգոստոսի 29-ին արտաքսեցին Անդրկովկասից Իրան։

Բոլշևիկյան «Նոր խոսք» թերթը նկարագրելով ցարական սատրապների այդ ոճրագործությունը, գրում է. «...2500-ի չափ պարսկահպատակ թուրքեր, որ կազմում էին գործադուլավորների գլխավոր կադրը՝ թե քանակով և թե որակով, բանի կերպով հեռացված էին և ապրանքատար գնացքներով՝ անասունների նման լցված վագոնները՝ ուղարկված դեպի պարսկական սահմանը։ Գործարանի ադմինիստրացիան նրանց հետ վարվեց ամենամարդի կերպով. տարիների ընթացքում իրենց արյուն-քրտինքով, ստորերկրյա դժոխային աշխատանքով, գործարանատիրոջ համար միլիոններ ստեղծող բանվորներին՝ նա ճանապարհ դրեց բառի բուն

նշանակությամբ մերկ ու քաղցած, զուրկ մինչև անգամ ճանապարհածախսից»[1]։

Կապիտալիստները փաստորեն կողոպտեցին բանվորներին և մերկ ու քաղցած քշեցին երկրից։ Երկար տարիներ աշխատելով հանքերում, բանվորները ոչ մի աջակցություն չէին ստանում իրենց ապրուստի պայմաններ ստեղծելու համար։ Նրանք ապրում էին գետնափոր մութ ու խոնավ տնակներում։ Բանվորների մի մասը իր սուղ միջոցներով, տարիների խնայողության շնորհիվ, կարողացել էր իր հաշվին մոտ 60 խրճիթ շինել, որոնց մեջ մի քանի ընտանիք ապրում էին միասին։ Ամեն մի խրճիթի կառուցումը բանվորների վրա նստել էր 200—250 ռ.։ Գործարանի վարչությունը նախօրոք պայմանավորվել էր այդ խրճիթները գնել, ամեն մեկը գնահատելով 50 ռուբլի։ Սակայն գործադուլի ժամանակ բանվորներին արտաքսելով, բռնաղրավեց նրանց բնակարանները՝ չվճարելով և ոչ մի կոպեկ։

«Այդպիսով՝ ձրի կերպով նա սեփականացրեց արտաքսված աղքատ բանվորների տնակները»[2]։

Գործարանատերերը բանվորներին խաբում էին, թե գործարանների և հանքերի օգտագործումը առհասարակ դադարեցվում է։ Սակայն երբ հեռավոր տեղերից եկած բանվորներին արտաքսեցին, անմիջապես բանվորների նոր խմբեր հավաքագրեցին և աշխատանքը վերսկսվեց։

Հայ, ադրբեջանցի և պարսիկ բանվորները, որոնք գործադուլի ժամանակ ցույց տվին «Արտակարգ համերաշխություն ու կռվի պատրաստականություն...»[3], ռազմական ծանր կրունկի տակ, ընտրված էին «...տանել այդ բոլոր բարբարոսությունները, որովհետև նրանց առաջ կանգնած էր կառավարության զինված վայրենի ուժը, որ ամենաթույլ դիմադրության դեպքում պետք է ուղղեր նրանց դեմ հրացաններն ու թնդանոթները»[4]։

«Նոր խոսքը» չափազանց բարձր գնահատելով բանվորների այդ պայքարը, միաժամանակ նշում էր, որ բանվորների մի զգալի մասի քաղաքական դիտակցությունն ու կազմակերպվածությունը դեռևս գտնվում էր ցածր մակարդակի վրա։

«Գործարանատերերի հետ հաջողությամբ կռվելու համար,—

---

[1] «Նոր խոսք», № 6, 1906։

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում։

[4] Նույն տեղում։

գրում է «Նոր խոսքը»,— անհրաժեշտ է բանվորներին գիտակցություն, կազմակերպություն և նյութական փոխադարձ օգնության միջոցներ՝ կասսաներ և այլն։

Այդ բանը արդեն հասկանում են Ալավերդու պարտված ու ընկճված բանվորները, բայց ափսոս, որ այդ դասը նրանք ստացան չափազանց թանկ գնով»[1]։

Բորչալուի բոլշևիկյան կազմակերպության ղեկավարությամբ Ալավերդու բանվորները և Լոռիի աշխատավոր գյուղացիությունը նախապատրաստվեցին նոր մարտերի ինքնակալության և շահագործողների դեմ։

Բորչալուի գավառում և Հայաստանի մյուս շրջաններում առանձնապես ակտիվ աշխատանք էր տանում Ստ. Շահումյանը։ «Թիֆլիսի կազմակերպությունը երկու անգամ ուղարկել է ինձ,— գրում է Ստ. Շահումյանը,— որպես իր ներկայացուցչի, Բորչալուի կազմակերպության կոնֆերենցիաներին, որոնք տեղի ունեցան 1906 թ. հոկտեմբերի 15-ին և դեկտեմբերի 25-ին, որոնցից՝ առաջինում ներկայացված էին 10 տեղական կազմակերպություններ, երկրորդում՝ 21 կազմակերպություններ, և որոնք քննության առան մի շարք պարտիական հարցեր,— ինչպես օրինակ՝ դեպի բուրժուական ազգայնական պարտիաները վերաբերմունքի խնդիրը.— ս.—դ. դումայական կամպանիայի ստանձնման հարցը և այլն»[2]։ Ինչպես տեսնում ենք, ՌՍԴԲՊ Բորչալուի կազմակերպությունը քննարկում և իր վերաբերմունքն էր ցույց տալիս պարտիական կյանքի կարևորագույն հարցերի նկատմամբ և վճռական պայքար մղում ՌՍԴԲՊ 3-րդ համագումարի որոշումների կենսագործման համար։

Ալավերդու պղնձագործների հերոսական պայքարը խոշոր նշանակություն ունեցավ Հայաստանի մյուս շրջանների բանվորական, գյուղացիական և զինվորական շարժումների ծավալման գործում։ 1907 թ. մարտի 26-ին գործադուլ բարձրացրին Ղափանի պղնձահանքերի բանվորները։ Գործադուլին մասնակցում էին մոտ 2 հազար մարդ։ Գործադուլը ղեկավարում էին բոլշևիկները, որոնց օգնությամբ ընտրվել էր գործադուլային կոմիտե։ Առանձնապես մեծ աշխատանք են տանում Բաքվից եկած բոլշևիկները, որոնք իրենց պայքարի հարուստ փորձը տալիս են ղափանցիներին։

---

[1] «Նոր խոսք», № 8, 1906։

[2] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, 1948, էջ 239։

Գործադուլային կոմիտեն բանվորների հետ քննարկեց և մի շարք կարևոր պահանջներ ներկայացրեց ձեռնարկատերերին։ Բանվորները պահանջում էին 8 ժամյա բանվորական օր, աշխատավարձի բարձրացում և բանվորների նյութական ու կենցաղային պայմանների բարելավում։

Այսպիսով, Ալավերդում 1905—1906 թթ. ծավալված գործադուլային շարժումներն ու բանվորների քաղաքական պայքարը հայ ժողովրդի սոցիալական ու ազատագրական պայքարի պատմության փայլուն էջերից մեկն է, պայքար, որ հաղթանակով պսակվեց միայն Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակի շնորհիվ։

2. ՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՊՈԼՈՒՄ

Ալեքսանդրոպոլը Հայաստանի ռևոլյուցիոն կենտրոններից մեկն էր։ Այստեղ բանվորական շարժումներ տեղի են ունեցել դեռևս 1902—1903 թթ.[1]։ 1904 թ. մայիսմեկյան տոնակատարությունը Ալեքսանդրոպոլում՝ ընդունում է քաղաքական դեմոնստրացիայի բնույթ։ Ալեքսանդրոպոլի աշխատավորության ռևոլյուցիոն պայքարը ղեկավարում է տեղի սոց.-դեմ. կազմակերպությունը, որը հիմնադրվել էր 1902 թ.։ Այնտեղ ռևոլյուցիոն շարժումները առանձնապես լայն ծավալ են ստանում 1905 թ. «Արյունոտ կիրակի»-ի դեպքերից հետո։

ՌՍԴԲՊ Ալեքսանդրոպոլի կազմակերպության կոչերից մեկում նշվում է, որ 1905 թ. հունվարի 9-ին «...առաջին անգամ լսվեց հեղափոխական թմբկահարությունը, որն ամբողջ Ռուսաստանին արթնացրեց իր ձմեռային խոր քնից»[2]։

1905 թ. մարտի 20—21-ին գործադուլ արեցին Ալեքսանդրոպոլ-Ղարաքիլիսա գծի երկաթուղայինները։ Այդ գծի բոլոր ծառայողները դադարեցրին աշխատանքը, պահանջելով աշխատավարձի ավելացում, աշխատանքային օրվա կրճատում[3]։ Ալեքսանդրոպոլի կայարանում դեպոյի բանվորները նույնպես դադարեցրին աշխատանքը։ Հաջորդ օրերը միայն զինվորական ուժի ազդեցության տակ կարողացան դեպոյի բանվորներին ստիպել աշխատան-

---

[1] ՍՄԿՊ ԿԿ կից Մ.Լ.Սի-ի հայկ. ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 264։

[2] Նույն տեղում։

[3] Տես «Մշակ», № 59, 1905։

քը վերսկսելու։ Թիֆլիսից մինչև Երևան, ամբողջ գծի վրա զինվորական հսկողություն սահմանվեց։

Այդ օրերին՝ մարտի 20—21, չէր աշխատում նաև փոստահեռագրատունը։

Ապրիլի 5-ին Ալեքսանդրոպոլ կայարանի ավելի քան 300 գործադուլավոր բանվորներ ու աշխատողներ ներկայացրին իրենց տնտեսական պահանջները։ Ժանդարմական մի զեկուցագրում «Ալեքսանդրոպոլի դեպոյի գործադուլի մասին» նշված է. «ապրիլի 5-ին Ալեքսանդրոպոլ կայարանում հավաքվել էին երկաթգծի բոլոր աշխատողները՝ մեքենավարները, սրանց օգնականները, կաշեգործները, վարպետները և դեպոյի բանվորները թվով 300 հոգի, որոնք պահանջ են դնում իրենց տնտեսական դրությունը բարելավել։ Նրանք հրաժարվում են աշխատանքը վերսկսել և անցնելով քաղաք կազմակերպում են հավաքույթներ»[1]։ Նույն օրը դադարեց գնացքների երթևեկությունը Թիֆլիս—Երևան և Ալեքսանդրոպոլ—Կարս գծի վրա։ Արդեն ապրիլի 7—8-ին Անդրկովկասյան երկաթգծի բազմաթիվ կետերում բանվորներն ու ծառայողները գործադուլ հայտարարեցին և, բազմամարդ միտինգներ ու հավաքույթներ կազմակերպելով, հանդես եկան ռևոլյուցիոն ճառերով՝ ուղղված ցարական կառավարության դեմ[2]։ Գործադուլային շարժումն ընդգրկեց ամբողջ Անդրկովկասի երկաթգիծը։ 1905 թ. մայիսին Անդրկովկասի երկաթուղայինների գործադուլը դարձավ ընդհանուր։ Ապրիլի 30-ին սկսված գործադուլը շարունակվեց մինչև մայիսի 14-ը։

Երկաթուղայինների գործադուլային շարժումը նոր թափով շարունակվեց 1905 թ. հոկտեմբերին։

ՌՍԴԲՊ Ալեքսանդրոպոլի կազմակերպությունը աշխատանք էր տանում բանվորների, զինվորների և քաղաքի աշխատավորների գործադուլները կազմակերպելու և ղեկավարելու համար։

Հոկտեմբերյան գործադուլային շարժմանը ակտիվ մասնակցություն են ցույց տալիս նաև Ալեքսանդրոպոլի երկաթուղայիններն ու մյուս բանվորները։ Ալեքսանդրոպոլի բոլշևիկները սերտ կապ են պահպանում Թիֆլիսի ու Բաքվի հետ և այնտեղից ստանում են համապատասխան ցուցումներ։

Հոկտեմբերի 14-ին ՌՍԴԲՊ Ալեքսանդրոպոլի կազմակերպության ղեկավարությամբ երկաթուղային կայարանում տեղի ունե-

---

[1] Լենինգրադի ԿՊՊԱ, ֆ. Ոստիկանության դեպարտամենտի, գ. 1, թ. 32։
[2] Տես Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 39, գ. 701, թթ. 193—195։

ցավ բանվորների խորհրդակցություն, որտեղ որոշվեց՝ միանալ Անդրկովկասյան երկաթուղայինների ընդհանուր գործադուլին։ Հաջորդ օրը, հոկտեմբերի 15-ի առավոտյան ժամը 6-ին, սկսվեց գործադուլը։ Հոկտեմբերի 16-ին ՌՍԴԲՊ-ի Ալեքսանդրոպոլի կազմակերպությունը բաց է թողնում թռուցիկ, որը կոչ էր անում տեղական աշխատավորներին միանալ երկաթուղայինների համառուսաստանյան գործադուլին և հետևողականորեն պայքարել ազատության մեծ գործի համար։ Թռուցիկը առաջ է քաշում ամբողջ երկրում ընդհանուր և ազատ դեմոկրատական հիմունքներով ընտրություններ անցկացնելու, խոսքի, մամուլի, ժողովների ազատության, զինվորական դրության վերացման, ութժամյա բանվորական օրվա սահմանման, բանվորների աշխատավարձի բարձրացման, բոլոր աշխատավորների նյութական դրության ապահովման և այլ պահանջներ։ Այդ թռուցիկը տարածվեց նաև Սանահինի, Երևանի, Կարսի և Հայաստանի մյուս կայարանների երկաթուղայինների մեջ։ Այնտեղ նաև նշվում էր, որ գործադուլավորները որոշել են գործի չանցնել մինչև որ նրանց պահանջները բավարարում չստանան[1]։

Ամենուրեք երկաթուղային կայարաններում տեղի էին ունենում միտինգներ ու ցույցեր, որոնք անցնում էին «Կեցցե՛ դեմոկրատական ռեսպուբլիկան», «Կեցցե՛ Սահմանադիր ժողովը», «Կեցցե՛ ՌՍԴԲՊ», «Կորչի՛ ցարիզմը» լոզունգներով։

Երկաթուղայինների ռևոլյուցիոն պայքարը գլխավորում էր ՌՍԴԲՊ Ալեքսանդրոպոլի կազմակերպության ղեկավարությամբ կազմված գործադուլային կոմիտեն։ Նրա մեջ մտնում էին Գ. Պելիմկինը, Վ. Տոպուրիձեն, Վ. Աբրոսիմովը, Դ. Բերդիձեն և ուրիշներ։ Գործադուլավորները հետևողականորեն շարունակում էին իրենց պայքարը։ 1905 թ. հոկտեմբերի 17-ի մանիֆեստի հրապարակումից հետո գործադուլային շարժումը որոշ չափով թուլացավ։ Աշխատավորների մի մասը դեռևս շարունակում էր հավատալ ցարի սուտ խոստումներին։ Բայց բանվորները բոլշևիկների ագիտացիոն աշխատանքի շնորհիվ ստիպված եղան հասկանալ նրա կեղծությունն ու ցարի խորամանկ խաբեությունը։ Ալեքսանդրոպոլում կոնտրռևոլյուցիոն ուժերը քայքայիչ աշխատանք էին տանում, ցանկանալով ջլատել ռևոլյուցիոն մասսաների ուժերը։ Սահմանադրական, այսպես կոչված, «Ալեքսանդրոպոլի հայրենասիրական պարտիան», որի մեջ հավաքվել էին բոլոր մոնարխիս-

---

[1] Տես Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 23, գ. 6, թ. 37։

տական ուժերը, 1905 թ. հոկտեմբերի 28-ին «թագավորի դահը», «Սուրբ Ռուսիան», «պաշտպանելու» համար հոգևոր հայրերի գլխավորությամբ «խաչ ու փուրվառով», թագավորական տան անդամների նկարներով ընդհանուր թափոր է կազմակերպում քաղաքում։ Թափորը շարժվում է դեպի կայարան, ցանկանալով իր ցանցի մեջ առնել բանվորներին։

Հակառակ սև հարյուրյակայինների՝ բանվորները բոլշևիկների ղեկավարությամբ կազմակերպում են իրենց ցույցը։ Ժողովրդի «կորչին սև ֆարաջավորները» կոչերի տակ «հոգևոր հայրերը» գրյակորուլս փախչում են և ռեակցիոն թափորը բանվորների ցույցի ճնշման տակ ցրվում է։ Այդ դեպքը ուժեղ տպավորություն է թողնում Ալեքսանդրոպոլի աշխատավորների վրա։

Նույն օրը, հոկտեմբերի 28-ին, ՌՍԴԲՊ Ալեքսանդրոպոլի կազմակերպությունը Կարսից Բաքու վերադարձող քաղաքական աքսորյալներին ողջունելու համար մեծ ցույց կազմակերպեց, որին մասնակցում էին 2 հազար մարդ[1]։

Հետևելով Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատների օրինակին, Ալեքսանդրոպոլի սոց.-դեմ. կազմակերպությունը հոկտեմբերի 29-ին հրապարակած կոչով դիմում է աշխատավորներին, խրախուսում նրանց՝ շարունակել պայքարը և չխաբվել հոկտեմբերի 17-ի մանիֆեստով ցարի տված սուտ խոստումներից։

Հասարակական տարբեր խավեր տարբեր գնահատական տվեցին այդ «մանիֆեստին»։

Բանվորական շրջաններում հակակառավարական դեմոնստրացիաներ կազմակերպվեցին. մերկացվեց հոկտեմբերի 17-ի մանիֆեստի հակաժողովրդական էությունը։ Հակառակ դրան, բուրժուաներն ու կալվածատերերը այն համարում էին «նորին մեծության պարգև»։ Ալեքսանդրոպոլում, Երևանում, Էջմիածնում և Հայաստանի մի շարք վայրերում բուրժուազիան, կալվածատիրությունը, հոգևորականությունը, ինչպես նաև դաշնակցականները, մեծ գոհունակությամբ ընդունեցին հոկտեմբերյան «մանիֆեստը»։ Նկեղեցիներում և հատկապես Էջմիածնի վանքում հատուկ ժամերգություններ և մաղթանքներ կազմակերպվեցին։ Դրան հակառակ բանվորներն ու աշխատավորական մյուս խավերը դեմոնստրացիաներ և բողոքի ցույցեր կազմակերպեցին, կամ, գտնվելով

---

[1] Տես „Революция 1905 года в Закавказье", стр. 87.

ռազմական կրունկի տակ այն անցկացրին «խիստ լռությամբ»,— այդ ձևով արտահայտելով իրենց դժգոհությունը։

ՌՍԴԲՊ Կովկասյան Միության 1905 թ. հոկտեմբերի 26-ին հրապարակված «Բոլոր քաղաքացիներին» կոչի մեջ ցարիզմի տված «ազատության» մասին հետևյալն է ասվում. «...Փոքր և մեծ ինքնակալների կողմից ճնշելու և թալանելու ազատություն է։ Նախկինի պես բանվորներին սովից մեռնելու և իրենց բողոքների համար բանտերում նստելու ազատություն է տրվում, գինվորներին...հոտած կաղամբով և որդերով լի շիլայով կերակրվելու... ազատություն, իսկ գյուղացիներին վաշխառուների և կալվածատերերի ճիրաններում խեղդվելու և իրենց կանանց և աղջիկների պատիվը ծախելու ազատություն... Մալականները և մյուս բողոքականները հալածանքների են ենթարկվում իրենց հավատի համար, չնայած հավատի ազատություն է հայտարարված։

Հրեաներին, հայերին, վրացիներին, լեհերին և մյուսներին իրավունք է տրված մեռնել գնդակից և «գազազած ամբոխի» դավաղանի հարվածներից... Այդպես են բացատրում ազատությունը նորին մեծության սպասավորները»[1]։

Ցարական կառավարությունը ձեռնարկում է բոլոր միջոցները գործադուլային շարժումը երկրում ճնշելու համար։ Մի կողմից «ազատություն» էր խոստանում ժողովրդին, մյուս կողմից գաղտնի կարգադրություններ էր անում՝ արյան մեջ խեղդել և շղթայակապ բանտերը նետել «քաղաքական հանցավորներին»։

Կառավարության հատուկ կարգադրության համաձայն խիստ կերպով պատժվում էին բոլոր նրանք, ովքեր մասնակցել էին Անդրկովկասյան երկաթգծի ընդհանուր գործադուլին[2]։

Բանվորների միտքը լուսավորող և նրանց օգնող միակ պարտիան՝ բոլշևիկների պարտիան էր։ Նա սովորեցնում էր մասսանե-

---

[1] ՍՄԿՊ ԿԿ կից ՄԷԼՍԻ-ի Հայկ. գիլ. արխիվ, ֆ. 33, դ. 199։

[2] Ցարական չինովնիկները բոլոր նրանց, ովքեր մասնակցել էին երկաթուղայինների գործադուլին, աշխատանքի չէին ընդունում և տանջում ու հալածում էին երկար ժամանակ (տես Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 114, դ. 179, թ. 25)։

Շատ անգամ էլ գործադուլին մասնակցած երկաթուղայիններին հեռակա կարգով էին դատում։ Այդպիսի բանվորներից Ն. Պանֆիլովը Թիֆլիսի դատական պալատին ուղղված նամակում 1909 թ. նոյեմբերի 17-ին հայտնում էր, որ ինքը դատարանի որոշմամբ պետք է 8 ամիս բանտ նստի 1905 թ. ռևոլյուցիային մասնակցելու համար և խնդրում է իրեն բանտարկել, քանի որ ինքը անգործ մնալով բոլորովին քայքայվել և նյութական ծանր կարիքների մեջ է ընկել (Տես Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 114, դ. 179, թ. 109)։

ին զգուշանալ ցարական իշխանության սուտ խոստումներից և դաշնակցական պարտիայի ավանտյուրիստական-տեռորիստական գործունեությունից։

Նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին բանվորական գործադուլների ալիքը դարձյալ վերելք ապրեց և հասավ բավական բարձր մակարդակի՝ հատկապես դեկտեմբերյան գործադուլի ժամանակ։ Համարյա ամբողջ Անդրկովկասյան երկաթուղագիծը այդ օրերին կրկին ռևոլյուցիոն մասսաների ձեռքն անցավ[1]։

Անդրկովկասյան երկաթգծի բազմաթիվ կետերում, չհաշված Թիֆլիսը, ուր գտնվում էր գործադուլային շարժման գլխավոր կոմիտեն, կազմվել էին գործադուլային բյուրոներ կամ կոմիտեներ։ Այդպիսի բյուրոներ ստեղծվել էին Բաթումի կայարանում, Փոթիում, Սամտրեդիում, Կվիրիլիում, Հաջի-Կաբուլում, Բաքվում, Ալեքսանդրապոլում և Երևանում։ Գործադուլային բյուրոներում ընդգրկված էին ամենակոփված և պայքարի փորձ ունեցող բանվորները։ Սրանց մի զգալի մասը բոլշևիկներ էին[2]։

«Մշակ»-ը դեկտեմբերյան գործադուլի մասին գրում է. «Կանգ էին առել երկաթուղիները պետության բոլոր մասերում։ Ո՞չ մարդկանց երթևեկություն և ո՞չ ապրանքների փոխադրություն այլևս չկար երկաթուղիների միջոցով։ Իսկ պոստ-հեռագրատան գործադուլի շնորհիվ կտրված էր հեռագրական հաղորդակցությունը»[3]։

Ժանդարմական գործակալությունը երկաթուղայինների նման ուժեղ շարժումը և ռևոլյուցիոն ելույթները բացատրում է նրանով, որ երկաթգծի շրջակա բնակչությունը ամբողջովին տարված էր ռևոլյուցիոն տրամադրությամբ և երկաթուղայինների ամեն մի ելույթ ամենաջերմ պաշտպանություն էր գտնում տեղական բնակչության կողմից, մանավանդ որ իրենց երկաթուղայինների մեծ մասը տեղական բնակիչներ էին և լայն կապեր ունեին աշխատավորական մասսաների հետ»[4]։

Երկաթուղայինների դեկտեմբերյան գործադուլը Ալեքսանդրապոլում ավելի լայն թափ է ստանում։ Երկաթուղայինների հետ միաժամանակ գործադուլ են հայտարարում քաղաքի մի շարք հիմնարկ-ձեռնարկությունների բանվորները ու ծառայողները։

Աշխատավորության լայն խավերը ակտիվ օգնություն էին կազ-

---

[1] Տես Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, գ. 192, թ. 6։
[2] Նույն տեղում, թ. 7։
[3] «Մշակ», № 247, 1905։
[4] Տես Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, գ. 192, թ. 7։

մակերպում գործադուլավորներին։ Այդ տեսակետից խոշոր նշանակություն ունեցավ բոլշևիկների ղեկավարությամբ 1905 թ. դեկտեմբերի 13-ին կազմակերպված Ալեքսանդրոպոլի աշխատավորների ընդհանուր միտինգը։ Նրա նպատակն էր գործադուլավորներին օգնելու համար միջոցներ հավաքել։ Այդ միտինգը փաստորեն վերածվեց քաղաքական մեծ ցույցի, որտեղ բազմաթիվ բանվորներ հանդես եկան ռևոլյուցիոն ճառերով և լոզունգներով։

Ընդհանուր միտինգին ակտիվ կերպով մասնակցում էին նաև փոստ-հեռագրատան աշխատողները [1]։

Դեկտեմբերի 13-ի ընդհանուր միտինգի կապակցությամբ մի շարք հիմնարկներ դադարեցրին աշխատանքը և գործադուլ հայտարարեցին։ Իրենց քաղաքական ակտիվությամբ աչքի ընկան փոստ-հեռագրատան աշխատողները։ Նրանք իրենց համերաշխությունը ցույց տվին երկաթուղայիններին և առաջադրեցին մի շարք քաղաքական ու տնտեսական պահանջներ։

Սարսափած մասսաների հզոր շարժումից, տեղի ցարական չինովնիկները դիմում են վերադաս իշխանությունների օգնությանը. «...Օգնեցեք և ազատեք մեզ, մեր գահը, թագավորին...»,— խնդրում էին նրանք [2]։

Գիտակցելով համատեղ պայքարի անհրաժեշտությունը, 1905 թ. Ալեքսանդրոպոլի բանվորները սկսում են կազմակերպվել պրոֆեսիոնալ միություններ։ Դրանց զգալի մասը, օրինակ, կոշկակարների և տպագրական բանվորների միությունները անմիջականորեն գտնվում էին ՌՍԴԲՊ Ալեքսանդրոպոլի կազմակերպության ղեկավարության տակ։ Կոշկակարների մի թռուցիկը, որի տակ գրված էր. «Կոշկակար բանվորների արհեստակցական անկուսակցական միությունը», նշվում է, որ բանվորների պայքարը շահագործողների դեմ կշարունակվի մինչև այն պահը, երբ հասարակական կարգերը կփոխվեն և երբ բանվոր դասակարգը ձեռք կբերի հաջողություն, քանի որ նրանց և ունևորների շահերը անհաշտելի են։ Բազմաթիվ ձեռնարկների և հիմնարկությունների բանվորների և ծառայողների միավորումը պրոֆեսիոնալ միությունների մեջ խոշոր չափով նպաստեց ռևոլյուցիոն շարժումների ծավալմանը։

Ռևոլյուցիոն պայքարն ու քաղաքական հուզումները նոր թա-

---

[1] ՏԵՍ ՍՄԿՊ ԿԿ կից ՄԷԼՍԻ-ի Վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 2, գ. 112, թ. 43։

[2] Նույն տեղում, ֆ. 33, գ. 222։

փով շարունակվեցին 1906 թ.։ Բազմաթիվ քաղաքներում, բանվորական ավաններում և գյուղական շրջաններում աշխատավորները 1906 թ. հունվարի 9-ը հայտարարեցին սգո օր։ Կազմակերպվեցին սգո միտինգներ ու ցույցեր, որտեղ աշխատավորները հարգում էին ցարիզմի դահիճների ձեռքով ազատության մեծ գործի համար զոհված հերոսների հիշատակը[1]։

Անդրկովկասում երկաթուղայինների 1905 թ. դեկտեմբերի 10-ին սկսված հայտնի գործադուլը շարունակվեց մինչև 1906 թ. հունվարի 8-ը[2]։

Այդ պայքարի ընթացքում բանվորները ցուցաբերեցին քաղաքական պայքարի մեծ ունակություններ։

Գործադուլային այդ շարժման կարևոր օղակներից մեկն էլ Ալեքսանդրոպոլն էր։ Հաղթահարելով բոլոր դժվարությունները, Ալեքսանդրոպոլի երկաթուղայինները, բոլշևիկյան կազմակերպության ղեկավարությամբ, համառ կերպով շարունակեցին իրենց պայքարը։

Երկաթուղում ցարական կառավարության կողմից ռազմական դրություն հայտարարելը առավել չափով ծանրացրեց դրությունը։ Դաշնակները, որպես ցարիզմի գործակալներ, քայքայիչ ու դավաճանական աշխատանք էին տանում աշխատավորների մեջ։ Իրենց ազդայնական պրոպագանդայով նրանք ձգտում էին հայերին հակադրել մյուս ազգերի աշխատավորներին և նրանց ուշադրությունը շեղել ռևոլյուցիոն շարժումներից ու ռևոլյուցիայի հրատապ հարցերից։ Դաշնակները իրենց տեռորիստական գործունեությամբ պաշտպանելով կապիտալիստների ու ցարիզմի շահերը, հարկադրում էին բանվորներին աշխատանքի անցնելու։ Նրանց քայքայիչ աշխատանքի հետևանքով, ինչպես այդ երևում է ոստիկանության մի հաղորդումից, 1906 թ. հունվարի 2-ին բանվորների մի փոքրիկ խումբ Ալեքսանդրոպոլի երկաթուղում ուզում էր վերսկսել աշխատանքը[3], սակայն բոլշևիկյան եռանդուն գործունեության շնորհիվ բանվորների միասնությունը չխախտվեց։ Դաշնակների լրտեսական գործունեության հետևանքով ոստիկանությունը բանվորներից 22 հոգու բանտ նետեց[4]։

Երևանի նահանգի ոստիկանապետի հաղորդագրության համա-

---

[1] Տես Վրաց. ՍՍՌ ԿՊՄԱ, ֆ. 1, գ. 194, թ. 13։

[2] Նույն տեղում, գ. 192, թ. 6։

[3] Նույն տեղում, գ. 87, թ. 43։

[4] Նույն տեղում։

ձայն, 1906 թ. հունվարի 2-ին Ալեքսանդրոպոլի երկաթուղային-ներից գործադուլին մասնակցելու համար բանտարկվել էին 7 բան-վոր, իսկ փոստ-հեռագրատան աշխատողներից՝ 3 մարդ[1]։

Այդ բոլոր բռնություններն ու հալածանքները մասսաներին չէին ընկճում. նրանք ամենուրեք պատրաստվում էին նոր ելույթնե-րի։ Բանվորները ձեռք էին բերում զենք, պատրաստում ռումբեր, հրանոթներ։

Զարաքիլիսայի կայարանի դեպոյում բանվորները գաղտնի կերպով պատրաստել էին թնդանոթ։ Ոստիկանությանը հաջողվում է բռնագրավել այն և հանձնել Ալեքսանդրոպոլի զինանոցի պա-հեստը[2]։

Ինչպես Ալեքսանդրոպոլի, Ալավերդու, այնպես և ամբողջ Հա-յաստանի բանվորական շարժումները անմիջականորեն կապված էին պրոլետարիատի համառուսական քաղաքական պայքարի հետ։ Այդ շարժումները առաջադրում էին նույն լոզունգները և հետա-գնում նույն քաղաքական նպատակները։ Այս իրողությունը հարկադրված էին ընդունել նույնիսկ ցարական իշխանությունները։

Անդրկովկասի երկաթգծի ժանդարմական վարչությունը, զեկու-ցագիր ներկայացնելով Կովկասի ոստիկանության վարչությանը, 1906 թ. մարտի 6-ին նշում էր, որ երկաթգծի «ամբողջ գործա-դուլը անկասկած սերտ կապ ունի այն շարժման հետ, որով բռնը-նված էր ամբողջ Ռուսաստանը ընդհանրապես և Կովկասը մաս-նավորապես»[3]։

Այդ զեկուցագրում նշվում էր, որ երկաթուղայինները սկզբում տնտեսական պահանջներ էին դնում, բայց հետագայում գործա-դուլային շարժման ընթացքը վերջնականապես համոզեց, որ «տըն-տեսական հարցերը երկրորդական նշանակություն ունեին, գլխա-վորը և հիմնականն այն էր, որ գործադուլները խարսխվում էին քաղաքական ագիտացիայի վրա.. որ գործադուլների պատճառը պետք է փնտրել ոչ թե տնտեսական պայմաններում, այլ բանվո-րական ընդհանուր սոցիալիստական բնույթ կրող շարժման մեջ, որը հանդես է գալիս ամբողջ Ռուսաստանում»[4]։ Ահա այդ քաղա-

---

[1] Տես Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, գ. 194, թթ. 15—16։

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում, ֆ. 1, գ. 192, թ. 4։

[4] Նույն տեղում։

քական պայքարի գաղափարը խոր արմատներ էր գցել նաև Ալեքսանդրոպոլի աշխատավորական ամենալայն խավերի մեջ։

Հայ աշխատավորությունը նախկինում խարխափում էր ազգայնական-դաշնակցական իդեոլոգիայի ճահճի մեջ, որը նրան սովորեցնում էր հաշվի առնել միայն և միայն, այսպես կոչված, «ազգային շահերը», արգելելով անգամ մյուս ազգի բանվորների հետ շփվելու և միավորվելու մի քաղաքական միության մեջ։ Սակայն այդ բոլորը ռևոլյուցիայի հուժկու ալիքի մի հարվածով ջարդ ու փշուր եղավ։ Հայ բանվորն ու գյուղացին ռուս և մյուս ազգերի աշխատավորների հետ միասին դուրս եկան քաղաքական կյանքի և ռևոլյուցիոն պայքարի լայն ասպարեզ։

«Ցարիզմի լծի տակ հեծացող բոլոր ազգությունների պրոլետարների համերաշխությունը,— գրում է Ստ. Շահումյանը,— ռևոլյուցիայի հաղթության գլխավոր գրավականն է»[1]։

Մի գաղտնի հաղորդագրության մեջ 1906 թ. փետրվարի 4-ին հայտնվում էր, որ Հայաստանի շրջանները ամբողջովին վարակված են ռևոլյուցիոն շարժումներով, իսկ Ալեքսանդրոպոլի շրջանը «...շատ եռանդուն մասնակցություն է ունեցել համառուսաստանյան վերջին գործադուլներին»[2]։ Այդ հաղորդագրության մեջ նաև ասված էր, որ Ռուսաստանի ռևոլյուցիոն շրջանների օրինակով Ալեքսանդրոպոլը «հանդիսացել է քաղաքական դեմոնստրացիաների և միտինգների ասպարեզ»[3]։

Գործադուլ էին հայտարարում և ճնշողների ու ցարիզմի դեմ քաղաքական պայքարի էին դուրս գալիս արհեստավորները և առհասարակ հասարակության աշխատավորական այնպիսի խավերը, որոնք նախկինում բոլորովին կտրված էին հասարակական կյանքից և ոչ մի ակտիվություն չէին ցուցաբերում։

Այժմ դրությունը բոլորովին փոխվել էր, կյանքը մտել էր նոր հոսանքի մեջ, որը իր ճանապարհին շարժման մեջ էր ընդգրկում ժողովրդական բոլոր կենդանի ուժերը։ Ալեքսանդրոպոլի ամենափոքրիկ արհեստանոցն անգամ, որտեղ միայն մի քանի բանվոր կամ ենթավարպետ էին աշխատում, ղերծ չէր մնում անլեգալ դրականության և առհասարակ կոմունիստական գաղափարների հեղաշրջող ազդեցությունից։

---

1 Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, 1948, էջ 62։

2 ՍՍԿՊ ԿԿ կից Մարքս-Էնգելս-Լենինի Վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 2, գ. 112, թ. 43։

3 Նույն տեղում։

«Նամակ Ալեքսանդրոպոլից» հոդվածում «Կայծ» թերթի Ալեքսանդրոպոլի թղթակիցը հայտնում էր, որ գործադուլային շարժումներին և քաղաքացիական պայքարին մասնակցում են քաղաքի աշխատավորների բոլոր խավերը, որոնց ղեկավարում է ՌՍԴԲՊ։ 1906 թ. մայիսի 27-ին «...գործադուլ արին պայտահատ դարբին բանվորները մոտ 200 հոգի՝ կազմելով բացօթյա միտինգ, ուր հրավիրված էին դասախոսելու և կազմակերպելու անդիս ընկերներից. բոլորն էլ կազմակերպվեցին և մտան մեր դրոշի տակ»[1]։

1906 թ. հունիսի 6-ին Ալեքսանդրոպոլում գործադուլ հայտարարեցին կոշկակարների և դարբինների ենթավարպետները՝ պահանջելով 10%-ով բարձրացնել աշխատավարձը և պակասեցնել աշխատանքի ժամերը[2]։

1906 թ. հուլիսի 3-ին Ալեքսանդրոպոլի փոխադարձ վարկի ընկերության ծառայողները ՌՍԴԲ պարտիայի անդամների ղեկավարությամբ դադարեցրին աշխատանքը և ներկայացրին 8 կետից բաղկացած պահանջներ։ Նրանք խնդիր էին դնում ավելացնել աշխատավարձը, բարելավել իրենց նյութական ու տնտեսական դրությունը, բանվոր-ծառայողներին աշխատանքից հեռացնելու հարցը համաձայնեցնել ընկերական դատարանի հետ և այլն։

8-րդ կետում, օրինակ, գործադուլավորները նշում էին. «Գործադուլի օրերի ամբողջ ընթացքում մենք ստանալու ենք մեր լիովին վարձը։

Վերոհիշյալ պահանջները բավարարություն ստացած կհամարվեն և մենք գործի կձեռնարկենք այն ժամանակ միայն, երբ բոլոր ծառայողներին կտրվի ավելացրած ռոճիկը, իսկ մնացած պահանջների վերաբերմամբ, երբ կստանանք խորհրդի և վարչության որոշումը՝ մեր պահանջների պարտավորական լինելու առթիվ։

Սույն պահանջները ներկայացնելու օրից, այսինքն հուլիսի 3-ից մենք երեք օր ժամանակամիջոց ենք տալիս»[3]։

ՌՍԴԲՊ Ալեքսանդրոպոլի կազմակերպությունը հատուկ թռուցիկ բաց թողեց, կոչ անելով աշխատավորներին՝ պայքարի դուրս գալ ճնշողների դեմ, նշելով, որ շահագործողների դեմ տարած «ամեն մի հաղթանակ մեր կողմից՝ մի քայլ է դեպի ազատագրական շարժումը»։ Ի պատասխան այդ կոչի, քաղաքի մի շարք հիմնարկների բանվորներ և ծառայողներ, որոնց թվում և քաղաքային բան-

---

[1] «Կայծ», № 30, 1906։

[2] ՏԵՍ Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, գ. 200, թ. 109։

[3] «Կայծ», № 35, 1906։

կի ծառայողները ներկայացրին իրենց պահանջները և նշեցին, որ բացասական պատասխան ստանալու դեպքում պատրաստ են գործադուլ հայտարարել [1]։

Ցարական իշխանությունը դիմում է ամենադաժան միջոցների՝ ռևոլյուցիոն մասսաներին ճնշելու և հալածելու համար։ Ձեծը, գնդակոծությունը և բռնության տարբեր ձևերն ու փողոցային ջարդերը դարձել էին սովորական երևույթ։

Ալեքսանդրոպոլի բանտը և նրան կից բոլոր նկուղները լեփ լեցուն էին «քաղաքական» բանտարկյալներով։ Բանտարկյալներին պահում էին սոսկալի ծանր պայմաններում։ Նրանց պահում էին շղթայակապ, ծեծի ու սարսափելի տանջանքների մեջ։ Բանտարկյալներին օգնում և նրանց հետ կապ էին պահպանում բոլշևիկներն ու ռևոլյուցիոն բանվորները։

1906 թ. հուլիսի 7-ին բոլշևիկյան «Կայծ» թերթը տպագրում է Ալեքսանդրոպոլի բանտարկյալների մի նամակ։ Այդ նամակում նրանք գրում էին. «Մենք Ալեքսանդրոպոլի բանտի բանտարկյալներս գտնվում էինք տաս-քսան ամիսների ընթացքում քննության տակ, լիովին անտեղյակ մեր գործերի դրությունից, դիմել ենք շատ անգամ, դիմում ենք և հիմա տեղական իշխանությանը, բայց ոչ մի հետևանք։ Քննության տակ գտնված բանտարկյալներս, հակառակ նույնիսկ գոյություն ունեցող օրենքների, պահվում ենք շղթայակապ» [2]։

Այսպիսով՝ բոլշևիկները ոչ միայն դաղտնի կապ էին պահպանում բանտարկյալների հետ, այլև մեծ դժվարությամբ բանտից դուրս բերելով նրանց դիմումներն ու նամակները, հրատարակում էին մամուլում, դրանց վրա հրավիրելով հասարակության ուշադրությունը։

1906 թ. օգոստոսի 11-ին գործադուլ են հայտարարում խանութների ծառայողները և պահեստների բանվորները, որոնք ներկայացնում են 9 կետից բաղկացած պահանջագիր։ Նույն օրը գործադուլ են անում խոհարարներն ու տնային ծառայողները, որոնք նույնպես ներկայացնում են իրենց պահանջները՝ բաղկացած 14 կետից։ Օգոստոսի 11-ին աշխատանքը դադարեցրին և մի շարք տրանսպորտային պահանջներ ներկայացրին Ալեքսանդրոպոլի հայթուխ

---

1 «Կայծ», № 35, 1906։

2 Նույն տեղում։

բանվորներն ու խանութների վարձու աշխատողները[1]։ Նույն թվականի օգոստոսի 22-ին գործադուլ հայտարարեցին նաև «Զինդեր» ընկերության խանութի բանվոր-ծառայողները։ Նրանք ներկայացրին հինգ կետից բաղկացած տնտեսական պահանջներ[2]։

Ակտիվ աշխատանք էր ծավալել Ալեքսանդրոպոլի տպարանի բանվորների կազմակերպած պրոֆմիությունը։ 1906 թ. սեպտեմբերի 19-ին քաղաքի չորս տպարանների բանվորները գործադուլ են հայտարարում ու ներկայացնում իրենց պահանջները։ Նրանք պահանջում էին իննժամյա բանվորական օր, աշխատավարձի բարձրացում և այլն։ Տպարանատերերը ստիպված են լինում բավարարել բանվորների պահանջները, որից հետո միայն (սեպտեմբերի 25-ին) տպարաններում վերսկսվում է աշխատանքը։

1906 թ. ամռան և աշնան ամիսներին սոցիալ-դեմոկրատական տեղական կազմակերպությունների ծավալած աշխատանքի շնորհիվ հնարավոր է դառնում Ալեքսանդրոպոլում լայն չափով տարածել անլեգալ կոչեր, թռուցիկներ ու բրոշյուրներ։ Այդ գրականության մի զգալի մասը ստացվում էր Թիֆլիսից, իսկ մյուս մասը տպվում և բազմացվում էր տեղի տպարանում[3]։ Ոստիկանության կողմից պատահական կարգով հավաքված ռևոլյուցիոն կոչերի ու թռուցիկների քանակը ցույց է տալիս, թե ինչպիսի մեծ չափերով էր տարածվում անլեգալ գրականությունը Ալեքսանդրոպոլում։

Ոստիկանական գաղտնի հաղորդագրությունը 1906 թ. օգոստոսին հաստատում է, որ «համառուսական զինվորական միության» Ալեքսանդրոպոլի կայազորի բաժանմունքը տպագրել և մեծ քանակությամբ տարածել է Ալեքսանդրոպոլում, Երևանում և ուրիշ տեղերում «Ողբայր կաբարդինցիներ» կոչը, որից 110 օրինակ ոստիկանությունը հավաքել է գործակալության միջոցով[4]։

Ալեքսանդրոպոլում ոստիկանությունը հայտնաբերում է նաև գաղտնի պահեստ, որտեղ պահվում էր մեծ քանակությամբ ռևոլյուցիոն գրականություն՝ ռուսերեն, վրացերեն և հայերեն լեզուներով։

1907 թ. մարտի 10-ին Ալեքսանդրոպոլի տպարանների բանվորները նորից գործադուլ արին։ Դրան առիթ ծառայեց տպարանատեր Մալիխասյանի կողմից երկու բանվորի աշխատանքից հե-

---

1 Տես Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 40, գ. 10, թ. 114։

2 Նույն տեղում, թ. 155։

3 Տես ՍՄԿՊ ԿԿ կից ՄԼՄԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 251։

4 Տես Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 10, գ. 207, թ. 200։

ռացնելը։ Բոլշևիկների ղեկավարությամբ պրոֆմիությունը հեռացվող ընկերների շահերը պաշտպանելու համար դործադուլ է հայտարարում։ Ժանդարմերիան հարձակվում է դործադուլավորների վրա և դաժանորեն ճնշելով այն, ստիպում է բանվորներին վերսկսել աշխատանքը։ Դործադուլի ղեկավարներից 10 հոգու բանտ են նստեցնում։

1907 թ. ապրիլ-մայիս ամիսներին Ալեքսանդրոպոլում նորից բարձրանում է բանվորների և ծառայողների դործադուլային ալիքը։ Ապրիլի 1-ին դործադուլ են անում քաղաքի հրուշակեղենի բանվորներն ու ծառայողները։ Նույն թվականի մայիսի 2-ին իրենց բողոքի ձայնն են բարձրացնում և դործադուլ հայտարարում քաղաքի խանութների բոլոր դործակատարները։ Նրանք պահանջում են կրճատել աշխատանքի ժամերը, բարձրացնել աշխատավարձը և բարելավել իրենց տնտեսական դրությունը։ Մայիսի 5-ին դործակատարներին միանում են նաև «Զինգեր»-ի ծառայողները, որոնք նույնպես ներկայացնում են իրենց պահանջները։

Ալեքսանդրոպոլում ծավալված աշխատավորության ռևոլյուցիոն պայքարին ակտիվ մասնակցություն էր ցույց տալիս աշակերտական երիտասարդությունը, ինչպես նաև ուրիշ քաղաքներից վերադարձած ուսանողները։ Նրանց մի զգալի մասը հանդես էր գալիս որպես լավագույն ագիտատոր և կազմակերպիչ, նրանք մեծ հմտությամբ ձեռք էին բերում անլեգալ գրականություն և արագորեն տարածում բանվորների, արհեստավորների և զինվորների մեջ[1]։

Ռևոլյուցիոն շարժումները ընդգրկում են նաև Ալեքսանդրոպոլի կայազորը։

Բոլշևիկները կարևոր նշանակություն էին տալիս զինվորների մեջ տարվող աշխատանքներին։ Այդ առավել չափով անհրաժեշտ էր Հայաստանի պայմաններում, որտեղ ռուս ռևոլյուցիոն զինվորները շփվելով տեղի աշխատավորների հետ, հաղորդակից էին դարձնում նրանց Ռուսաստանի ռևոլյուցիոն կենտրոնների իրադարձություններին։ Բավական է ասել, որ Ալեքսանդրոպոլի կայազորը բաղկացած էր 3 հետևակ գնդից, 1 հեծյալ գնդից, 1 հրանոթային բրիգադայից. նրա մեջ էին մտնում նաև տեղական զորամասը և Ալեքսանդրոպոլ ամրոցի հրանոթային խումբը։ Ընդամենը կայազորում ծառայողների թիվը հասնում էր 10.500 մարդու։ Սրանց զգալի մասը գնում էր բոլշևիկների ետևից, ունկնդրում էր

---

[1] ՏԵՍ Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, գ. 201, թ. 225։

բոլշևիկյան լոզունգներին, պատրաստակամություն էր հայտնում պայքարի դուրս գալ այդ լոզունգների ներքո։

ՌՍԴԲՊ Ալեքսանդրոպոլի կազմակերպությունը զինվորական մասերում ստեղծել էր իր ագիտացիոն աշխատանքի և ռևոլյուցիոն գործունեության լայն ցանցը։ Այստեղ մասսայաբար տարածվում էր պարտիական անլեգալ գրականություն, կոչեր, թռուցիկներ և բրոշյուրներ։

Ռևոլյուցիոն պրոկլամացիաներում, որոնք մասսայաբար տարածվում էին զինվորների մեջ, մանրամասնորեն նկարագրվում էր զինվորների ծանր վիճակը, նրանց նկատմամբ գործադրվող ճնշումներն ու հալածանքները. նշվում էին այն պահանջները, որ պետք է առաջադրեին զինվորները իրենց իրավունքները պաշտպանելու համար։ Պրոկլամացիաները զինվորներին կոչ էին անում ակտիվ մասնակցություն ցույց տալ բանվոր դասակարգի մղած ռևոլյուցիոն պայքարին։ Զինվորների ռևոլյուցիոն դիտակցությունը լուսավորելու համար պրոկլամացիաներում բացահայտվում էր ռուս-յապոնական պատերազմի իմպերիալիստական, զավթողական բնույթը և Ռուսաստանի պարտության պատճառները։

Ջնայած գոյություն ունեցող զինվորական ծանր ռեժիմի, հաճախ, մանավանդ 1905 թ. աշնանից, զինվորները մեկուսացնելով հրամանատարներին, դիմում էին բացարձակ միտինգների և մասսայական հավաքույթների, որտեղ հանդես էին գալիս ռևոլյուցիոն ճառերով ու լոզունգներով։

Այդ միտինգներից առանձնապես բուռն անցավ «Արյունոտ կիրակի»-ի կապակցությամբ կազմակերպված միտինգը։ Այդ մասին բոլշևիկյան «Պրոլետարի» թերթը գրում է, որ Ալեքսանդրոպոլում «մի անգամ բավական բազմամարդ լսարանի առաջ, Պետերբուրգի սարսափելի դեպքերի մի ականատես ընկեր հանդես եկավ ճառով։ Դրա հետ միասին բաժանում էին նաև բրոշյուրներ...»[1]։

1905 թ. ապրիլի 25-ին Ալեքսանդրոպոլի ոստիկանական մի հաղորդագրության մեջ նշվում է, որ ապրիլ ամսվա ընթացքում զինվորական մասերում լայն չափով սկսել են տարածել հակապետական պրոկլամացիաներ։ Երևանի նահանգապետը նշանակել է ժանդարմական խիստ հսկողություն և հետախուզություն։

Վերջինը պարզում է, որ Ալեքսանդրոպոլի կայազորում գոյություն ունի ռևոլյուցիոն հատուկ կազմակերպություն և որի ղեկա-

---

[1] „Пролетарий", № 11, 1905.

վար կորիզը շարքային զինվորներից էր կազմված։ Ղեկավար կոմիտեի մեջ աշխատում էին շարքայիններ Լեոնտի Կորոշկինը, Պյոտրը Բերդիկովը, Դավիթ Կուջաշվիլին, և ուրիշները։ Սրանց մի մասը հետո տեղափոխվում է Քութայիսի [1]։

Երևանի նահանգապետը քաղաքական շարժման հզոր ուժից սարսափած՝ Կովկասի ոստիկանության վարչապետին մի շարք նախազգուշացնող առաջարկություններ է անում։ Նա անհրաժեշտ է համարում ավելացնել դատական չինովնիկների, ինչպես նաև ոստիկանների քանակը։ Պաշտոնական տվյալներից հայտնի է, որ Կովկասի փոխարքայության բյուջեի մեծ մասը ծախսվում էր ոստիկանության վրա։ Օրինակ, 1907 թ. Կովկասի փոխարքայության բյուջեի 57 տոկոսը ծախսվում էր այդ նպատակի համար [2]։ Այսպիսով, ոստիկանական կառավարությունը իր փրկությունը գտնում էր միայն ոստիկանության և ժանդարմերիայի թվի ավելացման մեջ։

Երևանի նահանգապետը հայտնում էր նաև, որ նահանգի ամենաառևոլյուցիոն կետը Ալեքսանդրոպոլն է [3]։ Այդ հաղորդագրության մեջ ասված է, որ տեղի ՌՍԴԲՊ կազմակերպությունը ագիտացիոն ուժեղ աշխատանք է տանում աշխատավորության մեջ և զինվորական մասերում։

Զինվորական մի զաղտնի հաղորդագրության մեջ նշվում է, որ Ալեքսանդրոպոլում գոյություն ունի ռևոլյուցիոն կազմակերպություն։ Այնտեղ ասված է, որ այդ կազմակերպությունը զբաղվում է զինվորների մեջ հակապետական պրոկլամացիաներ տարածելու գործով [4]։ Միաժամանակ ապրիլի 25-ին Ալեքսանդրոպոլից ժանդարմական վարչությունը հայտնում էր, թե ապրիլ ամսվա ընթացքում քաղաքում և կայազորի «շարքային զինվորների մեջ սկսել է տարածվել հակապետական պրոկլամացիաներ, այն էլ մեծ քանակությամբ...» [5]։

Ցարական կառավարությունը և երկրի ռեակցիոն բոլոր ուժերը, ամեն կերպ ցանկանում էին չեզոքացնել հասարակական պրոզրեսիվ հոսանքները և ապա տիղնուտեղը խեղդել երկրում ծավալ-

---

[1] Տես ՍՄԿՊ ԿԿ կից ՄԷԼՍԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 169։

[2] Տես Всеподданнейшая записка по управлению Кавказским краем, генерал-адъютанта графа Воронцова-Дашкова, 1907, стр. 99.

[3] Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, գ. 194, թ. 87։

[4] Տես ՍՄԿՊ ԿԿ կից ՄԷԼՍԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 169։

[5] Նույն տեղում։

921—9

վող ռևոլյուցիոն շարժումները։ Ազատության համար մարտնչող ռևոլյուցիոներներին նրանք հայտարարում էին ժողովրդի թշնամի։ Նրանք ամեն կերպ խաբում էին զինվորներին, որպեսզի կարողանան նրանց սուրն ուղղել ռևոլյուցիայի դեմ։ Բոլշևիկները լայն աշխատանք էին տանում զինվորների մեջ։ Նրանք զինվորներին ցույց էին տալիս ժողովրդի իսկական թշնամիներին՝ ցարին և բոլոր ճնշողներին և կոչ անում զենքը ուղղել հենց նրանց դեմ։

Զինվորներին ուղղված մի ռևոլյուցիոն կոչի մեջ նշվում էր, որ ապստամբները՝ քաղաքական պայքարի մարտիկները «...ժողովրդի թշնամիներ չեն, այլ ազնիվ մարդիկ են, որոնք ուրիշների համար չեն խնայում անգամ իրենց կյանքը»[1]։

Մի ուրիշ կոչում ՌՍԴԲՊ Ալեքսանդրոպոլի կայազորի զինվորական կազմակերպությունը դիմում է զինվորներին՝ նրանց առաջարկելով միանալ իրենց ապստամբած եղբայրների՝ բանվորների հետ և զենքն ուղղել շահագործողների դեմ[2]։

Մի այլ պրոկլամացիայում Ալեքսանդրոպոլի կայազորի ռևոլյուցիոն զինվորները նշում են, որ նրանց ծառայելու ժամկետը արդեն վաղուց անց է կացել և նրանք սպասում են իրենց հայրենի օջախը, սեփական ընտանիքը վերադառնալուն, «որոնց հասցրել են ծանր վիճակի և որոնք սովի են մատնված»[3]։ Սկզբում ցարական իշխանությունը այդ զինվորներին խոստանում էր զորացրել Յապոնիայի հետ պատերազմը ավարտվելուց հետո, իսկ երբ պատերազմը վերջացավ, նա ծառայության ժամկետն անցած զինվորներին շարունակեցրեց նպատակով սկսեց տարածել այն սուտը, որ իբր Կովկասի բնակիչները պատրաստվում են ապստամբել Ռուսաստանի դեմ, ցանկանալով դուրս քշել ռուսներին իրենց անկախ պետությունը ստեղծելու համար։ «Սկզբում, ցավոք սրտի, հավատում էինք այդ հեքիաթներին, և մեր զինակիցները սկսեցին անխղճորեն դնդակոծել մարդկանց, որոնց մեղքը կայանում էր նրանում, որ միանալով ռուս ժողովրդի հետ, ոտքի ելան այստեղ՝ Կովկասում—պայքարելով ազատության համար, ցանկանալով դուրս քշել ռուս չինովնիկներին, որոնք որպես տզրուկներ խրվել էին ռուս ժողովրդի մարմնի մեջ և անխղճորեն ծծում էին ժողովրդի արյան վերջին կաթիլը»[4]։ Բայց զինվորները տեսնում էին, որ Ռուսաստա-

---

[1] ՍՄԿՊ ԿԿ կից ՄԻԼՍԿ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 259։

[2] Նույն տեղում, գ. 243։

[3] Նույն տեղում, գ. 210։

[4] Նույն տեղում։

նի բոլոր ծայրամասերում էլ ռևոլյուցիոն շարժումը ուժեղանում է, բաղաքացիական պայքարը սրվում։

Զինվորների նույնիսկ այն մասը, որ դեռևս գտնվում էր ցարական սպաների ազդեցության տակ, վերջապես սկսեց հասկանալ, որ եթե Կովկասում նման դրությունը բացատրում են տեղական ժողովրդի հակառուսական տրամադրությամբ, ապա ինչո՞վ պետք է բացատրել Ռուսաստանի ներքին նահանգներում ծավալվող քաղաքական սուր պայքարը, այն, որ Սարատովի նահանգում ռազմական դրություն են հայտարարել, որ ռուս մուժիկը խեղդվում է արյան մեջ։ Դժվար էր այլևս սուտ խոսքերով զինվորներին կիրակրել։ Զինվորները սկսեցին հասկանալ ռևոլյուցիոն պայքարի բուն էությունը։ «Ոչ,— գրում են զինվորները,— մենք համոզվել ենք, որ և ռուսական գյուղացիները, ճիշտ այնպես, ինչպես և վրացիները հող են պահանջում և ազատություն։ Մենք հասկացանք, թե ինչի համար են մեզ պահել։

Մենք տեսնում ենք, թե ինչպես Սարատովի նահանգում նրա համար, որ սովից մեռնող գյուղացիները հարձակվել են կալվածատիրական պահեստների վրա, որոնք լցվել էին հենց գյուղացիների հավաքած հացով, մի ամն գնդապետ զորքի գլուխն անցած դրոհել է գյուղացիների վրա, և առաջին հերթին գնդակոծել են մեր քույրերին ու կանանց։ Ահա թե ինչի համար էինք հարկավոր մենք։ Նրա համար, որ մեր եղբայրների արյունը թափենք, նրա համար, որ պաշտպանենք կալվածատերերին և խարդախ չինովնիկներին»[1]։

Ուշագրավ է նաև Սարիզամիշի կայազորի զինվորական Սովետի հրապարակած «Ընկեր զինվորներ» պրոկլամացիան, որը մերկացնում է ցարիզմի արյունոտ քաղաքականությունը և նրա ոստիկանական ռեժիմի ամբողջ նենգավարությունը, ռեժիմ, որ ձգտում էր անկումից փրկել իրեն՝ պրովոկացիոն լուրեր տարածելով և ժողովրդին խաբելով։ Աշխատավորների ռևոլյուցիոն պայքարը դադարեցնելու և մյուս ազգերին ռուսներին հակադրելու նպատակով իշխանությունը սուտ լուրեր էր տարածում, որ իբր թե Մերձբալթիկայի, ինչպես և Կովկասի աշխատավորների նպատակն է անջատվել Ռուսաստանից և պայքարել նրա դեմ։ «Այդ խայտառակ խաբեբայություն է,— ասված է այդ պրոկլամացիայում։ Նրանք (աշխատավորները—Ս. Ա.) ցանկանում են ձեռք բերել եր-

---

[1] ՍՄԿՊ ԿԿ կից Մարքսի-Լենինի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 210։

ջանիկ կյանք և լավ կառավարություն, իսկ անջատվելու մասին նրանք անգամ չեն էլ մտածում։ Նրանք չեն էլ համաձայնվի անջատվել Ռուսաստանից, քանի որ առանց մեկը մյուսի թույլ կլինի, իսկ բոլորը միասին—կազմում են հզոր ուժ»[1]։

Երկրում ծավալված ռևոլյուցիոն իրադրությունը բարձրացնում է զինվորների քաղաքական դիտակցությունն ու ռևոլյուցիոն տրամադրությունը։ Զորքը աստիճանաբար դառնում է ռևոլյուցիոն մասսաների բարեկամն ու աջակիցը։

Այսպիսով, ցարական «ինքնակալությունը կորցնո՞ւմ է գլխավոր հենարանը—իր «հուսալի զորականությունը»[2]։

Զորքի մեջ տեղի ունեցող ռևոլյուցիոն խմորումներն առանձնապես ուժեղացան հոկտեմբերյան գործադուլների ժամանակ։

Սոցիալ-դեմոկրատական պարտիայի կատարած աշխատանքի շնորհիվ ռևոլյուցիոն ելույթներն ու ապստամբությունները Ալեքսանդրոպոլի կայազորի զորամասում օրավուր ուժեղանում են։ 1905 թ. նոյեմբերի 6-ին տեղի է ունենում Ալեքսանդրոպոլում գտնվող 153-րդ Բաքվի և Կարաբինյան 80-րդ հետևակ գնդերի ապստամբությունը։ Ապստամբները կազմակերպեցին ընդհանուր հավաքույթ, որտեղ զինվորները հանդես են գալիս ռևոլյուցիոն ճառերով ու լոզունգներով։ Նրանք կոչ են անում միանալ բանվորների ընդհանուր գործադուլին։ «Հավաքույթի ժամանակ,— գրված է ոստիկանական հաղորդագրության մեջ,— արտասանում էին ռևոլյուցիոն բովանդակությամբ ճառեր, կոչ անելով ապստամբել... լսվում էին նորին մեծության անձը վիրավորող արտահայտություններ... շարքայինների մեջ նկատվում են խմորումներ, որոնք որոշ դեպքերում վեր են ածվում դժգոհության դույթյուն ունեցող կարգերի նկատմամբ...»[3]։ Չնայած ապստամբների նկատմամբ գործադրվող խիստ միջոցներին, այնուամենայնիվ զինվորների ելույթները չդադարեցին։ Նոյեմբերի 22-ին ցերեկվա ժամը 11-ին Ալեքսանդրոպոլի հայկական դերեզմանատանը Բաքվի 153-րդ հետևակ գնդի մոտ 300 զինվորներ նորից ապստամբում և հավաքվում են ընդհանուր միտինգի։ Այդ միտինգում զինվորները ռևոլյուցիոն ճառեր են արտասանում։ Ապստամբների պահանջով ներկայանում են հրամանատարական կազմի ներկայացուցիչները և կայազորի հրամանատար գեներալ-լեյտենանտ Տարանովսկին։ Զին-

---

[1] ՍՄԿՊ ԿԿ կից ՄԼՍՄ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 274։

[2] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 1, էջ 86։

[3] Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, գ. 33, թ. 334։

վորները ներկայացնում են իրենց պահանջները։ Նրանք պահանջում էին անհապաղ զորացրել պահեստային զինվորներին և ազատել իրենց զանազան ստորացուցիչ պարտականություններից ու հրամանատարների հալածանքներից [1]։

ՌՍԴԲՊ Ալեքսանդրոպոլի կազմակերպությունը 1905 թ. նոյեմբերի 24-ին զինվորների խորհրդակցությունում, քննարկելով զինվորների տնտեսական և քաղաքական դրությունը, կազմեց 33 կետից բաղկացած մանրամասն պահանջներ, մասնավորապես առաջ էին քաշվում բանակի դեմոկրատացման, զինվորների իրավական-քաղաքական և տնտեսական դրության բարելավման խնդիրները [2]։ Նույն օրը բոլշևիկների բաց թողած մի կոչում նշված էր, որ ցարական կառավարությունը ծառայության ժամկետը լրացած զինվորներին չի զորացրում, ցանկանալով նրանց ավիններով խեղդել ռևոլյուցիան։ Զինվորները իրենք ասում էին, որ «մեզ շալատեցին, բայց մենք ցույց տվինք, որ նույնպես կկարողանանք պաշտպանել մեր ազատությունը, ինչպես ամբողջ Ռուսաստանն է պաշտպանում» [3]։

Երկաթուղայինների, փոստ-հեռագրատան աշխատողների դեկտեմբերյան գործադուլներին զորամասերը մասնակից անելու ուղղությամբ բոլշևիկները մեծ աշխատանք էին ծավալում։

Ալեքսանդրոպոլի կայազորի զորամասերի մի զգալի մասը ամբողջովին պատրաստ էր միանալու աշխատավորների հետ։ Բազմաթիվ պրոկլամացիաների և այլ փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ զինվորական մասերից շատերը պատրաստ էին զինված ապստամբության։ Սակայն ցարական դահիճները կարողացան զենքի ուժով կանխել այդ, բանտարկել ռևոլյուցիոն կոմիտեի կազմը և դաժան միջոցներով կասեցնել ու ճնշել բանակում պատրաստվող ապստամբությունը։

Երևանի նահանգապետը նկարագրելով բանակում կառավարության համար տիրող դրությունը, եզրակացնում էր. «...Ես գալիս եմ այն եզրակացության, որ գալիք գարունը, շատ հավանական է, որ կարող է իր հետ բերի նոր բարդություններ մեր նահանգի կյանքում...» [4]։

---

[1] Տե՛ս Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, գ. 32, թ. 264։

[2] Տե՛ս ՍՄԿՊ ԿԿ կից ՄԷԼՍԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 210։

[3] Նույն տեղում։

[4] ՍՄԿՊ ԿԿ կից ՄԷԼՍԻ-ի Վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 2 գ. 112, թ. 44։

Բոլշևիկյան կազմակերպության աշխատանքի շնորհիվ Ալեքսանդրոպոլի կայազորի ռևոլյուցիոն զինվորները և քաղաքի աշխատավորական մասսաները համագործակցված պայքար էին մղում։

Քաղաքի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը դնալով ուժեղացնում էր զինվորների շրջանում տարվող աշխատանքները։ 1905 թ. դեկտեմբերի 20-ին կազմակերպությունը բաց է թողնում զինվորներին ուղղված մի պրոկլամացիա։ Այնտեղ ասված էր, որ կառավարությունը ձգտում է «մեր արյան մեջ խեղդել այն շարժումը, որը այնպիսի ուժեղ ալիքներով ողողեց հասարակության բոլոր խավերը, չնտեսելով նաև բանակը, որովհետև մեր թշնամին այդ շարժման մեջ տեսնում է իր անկումը, որովհետև նրանք չեն կարող այլևս ուռճացնել իրենց դրությունը ժողովրդական հարստության հաշվին, որտեղ ամեն մի դոռշը արյունով է թաթախված»[1]։

Այնուհետև պրոկլամացիան զինվորներին կոչ էր անում պայքարել ժողովրդի շահերի համար, միանալ նրանց պայքարին, տապալել ցարի դաժան և ատելի տիրակալությունը։

Ընդդեմ ցարիզմի սահմանադրական քաղաքականության ռևոլյուցիոն զինվորներն իրենց եղբայրներին կոչ էին անում չդառնալ կույր գործիք ռեակցիայի ձեռքին. «Ընկեր զինվորներ. գրում էին նրանք, մի՞թ մոռանա՞ք, որ մենք ժողովրդի զավակներն ենք... ինչո՞ւ համար մենք դառնանք դահիճ և ամոթանք հայրենիքի համար»[2]։

Ալեքսանդրոպոլի կայազորի սովետը զինվորներին ուղղած ռևոլյուցիոն պրոկլամացիաներից մեկում, մերկացնելով ցարական դաժան կարգերը և բանակի հրամանատարական կազմի նենգավարությունը, գրում է.

«...Դո՛ւք պարոն սպաներ, որ կրում եք պսպղուն կոշիկներ և ձեռնոցներ, ժողովրդի արյունով ձեռք բերած փողով, երբ ժողովուրդն ինքը սովից մահանում է, մեզ զինվորներիս պահում եք խավարի մեջ, իսկ ժողովուրդը գտնվում է տանջալից շարչարանքների մեջ։ Եվ դուք ահա սարսափով ցանկանում եք համոզել մեզ, զինվորներիս, որ մենք պետք է գնդակահարենք մեր անմեղ եղբայրներին, որոնք տանջվում են մեր օգտի համար... Դուք ժողովրդի ստոր դավաճաններն եք, որ փախել եք յատոնացիների առջև, իսկ ռուս զին-

---

[1] ՍՍԿՊ ԿԿ կից Մ.Լ.Մ.Ի-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 223։
[2] Նույն տեղում։

վորը ցուցաբերել է մեծագույն հերոսություն, իսկ հիմա դուք, ստորներդ, ստիպում եք կրակել անզեն, քաղցած գյուղացիներին, բռնաբարում եք կանանց, մորթոտում մանուկներին։ Դրանք մեր հայրերն ու մայրերն են, կանայք ու երեխաները»[1]։

Դիմելով դահիճ հրամանատարներին, պրոկլամացիան նշում էր. «Դուք հայրենիքը պաշտպանելու ձեր պաշտոնը փոխարինել եք ոստիկանների, լրտեսների և դահիճի պաշտոնով։ Մենք զինվորները ևս կվարվենք ձեզ հետ, որպես դահիճների»[2]։

1905 թ. բոլշևիկյան «Պրոլետարի» թերթի № 11-ում տպագրվել է մի ծավալուն թղթակցություն Ալեքսանդրոպոլի կայազորում տարվող ՌՍԴԲՊ տեղական կազմակերպության աշխատանքների մասին։ Թղթակիցը նշում է, որ զինվորները, սերտ կապ պահպանելով բոլշևիկյան պրոպագանդիստների հետ, ստանում և իրենց ընկերների մեջ տարածում են մեծ քանակությամբ անլեգալ գրականություն։ Քաղաքի աշխատավորների, երկաթուղայինների և զինվորների միջև դաշտնի կապ է պահպանվում. նրանք գաղտնի խորհրդակցություններ և հանդիպումներ են ունենում առանձին ռևոլյուցիոն գործիչների և բանվորների բնակարաններում։ «Պրոլետարիի» հոդվածագիրը նշում է նաև այն հանգամանքը, որ Ալեքսանդրոպոլի կայազորում վերջին ժամանակներս զինվորական ծառայության կանչվածների մեջ շատ հաճախ են պատահում ավելի կիտակից և պատրաստված մարտիկներ, իսկ այդ հետևանք է ամբողջ երկրում բարձրացող մասսաների քաղաքական ակտիվության։ Հաճախ այդ զինվորները հանդես էին գալիս որպես լավագույն ագիտատորներ և ամբողջ վաշտը, որտեղ ծառայում են նրանք, տեղյակ են պահում երկրում կատարվող իրադարձությունների հետ[3]։

Ռևոլյուցիոն կազմակերպություններն ու խմբերը ցրելու և կազմալուծելու նպատակով ցարական բանակի հրամանատարությունը զորամասերը արագորեն մի տեղից փոխադրում էր մի ուրիշ տեղ, իսկ որոշ դեպքերում էլ փոխում էր զինվորական միավորումների կազմը։ Բայց ռևոլյուցիոն տրամադրությունները բանակում օրըստ օրի աճում էին։

Ալեքսանդրոպոլում տեղի ունեցող ռևոլյուցիոն ելույթները ճնշելու համար հաճախ կայազորի հրամանատարությունը կարգա-

---

[1] ՍՄԿՊ ԿԿ կից Մ.Լ.Մ.Ի-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 254։
[2] Նույն տեղում, գ. 254։
[3] Տես „Пролетарий", № 11, 1905։

դրում էր համալարկային կրակ բացել ռևոլյուցիոն մասսաների վրա։ Գնդակոծումից հետո պարզվում էր, որ կամ բոլորովին զոհեր չկան, կամ նրանց թիվը շատ քիչ է։

Զինվորները չէին ցանկանում կրակել ռևոլյուցիոն մասսաների վրա, դրա համար էլ նրանց «մեծամասնությունը գնդակը օդում էր արձակում, կրակում էին (աշխատավորների վրա—Մ. Ա.) միայն փոքրաթիվ սարսներն ու անպիտանները, որոնցից ամեն մի վաշտում կգտնվի 2—3 հոգի»[1]։

Դաս առնելով այդ դեպքերից, հրամանատարությունը տնվրատահություն և զգուշություն էր ցուցաբերում դեպի գործադուլային շարժումները ճնշելու համար ուղարկվող զորամասերը։ Ցարական իշխանությունները ամեն բան սպասում էին, որ զինվորները զենքը շուռ կտան իրենց դեմ, ինչպես այդ հաճախ տեղի էր ունենում։

1906 թ. հունիսի 25-ին Ալեքսանդրոպոլի կայազորի զորամասերը կրկին պայքարի դուրս եկան։ Դրան առիթ ծառայեց այն, որ 1906 թ. հունիսի 25-ին, ցերեկվա ժամը 4-ին Ալեքսանդրոպոլի բանտը բերվեցին Թիֆլիսում բանտարկված երկաթուղային դումարտակի մի խումբ շարքայիններ։ Զինվորական մասերում արագորեն լուր է տարածվում, որ դրանք ապստամբ այն զինվորներից են, որոնց որոշված է գնդակահարել։

Արտահայտելով իրենց զայրույթը, զինվորները արագ կերպով հավաքվում են միտինգի։ Նրանք քննարկում են բանտարկյալներին ազատելու հարցը։

Հերթապահ հրամանատարներից մեկը հավաքվող զինվորներին հրամայում է ցրվել։ Ցայրացած զինվորները քարկոծում են հրամանատարին, «իսկ շարքայիններից մեկը հրացանի կոթով խփում է հրամանատարի գլխին, որը ընկնում է...»[2]։

Չնայած հրամանատարության գործադրած միջոցներին՝ զինվորները չեն հնազանդվում և հրաժարվում են զենքերը հանձնել։ Նրանք դիշերը հավաքվում են իրենց վրաններում և դիշերում զենքը ձեռքներին։ Մյուս օրը առավոտյան ապստամբ զինվորների վրանները պաշարվում են։

Համառ դիմադրությունից հետո նրանք հանձնվում են։ Ցարական դահիճները գնդապետ Գուրևի հրամանով ապստամբների նը-

---

[1] „Пролетарий", № 11, 1905.

[2] Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ. ֆ. 63, գ. 3915, թ. 196։

կատմամբ դաժան դատաստան են տեսնում։ Ապստամբության ղեկավարներից 25 հոգի դատի են տրվում[1]։

Նույն օրը, հունիսի 25-ին, ապստամբում են Ալեքսանդրոպոլի մոտ գտնվող սակրավորների Կովկասյան առաջին և երկրորդ դումարտակների զինվորները։ Զինվորական հատուկ հաղորդագրության մեջ այդ առթիվ ասված է. «Հունիսի 25-ին արևմուտից կես ժամ անց սակրավորների Կովկասյան առաջին դումարտակի ձախ թևում լսվեցին «ուռա» կոչեր. դրան ձայնակցեցին սակրավորների Կովկասյան երկրորդ դումարտակի շարքայինները, որով և սկսվեց»[2] ապստամբությունը։ Այնուհետև ապստամբները զենքը ձեռքներին շարժվեցին դեպի Ալեքսանդրոպոլի բերդը՝ նպատակ ունենալով «ազատել քաղաքական բանտարկյալներին—շարքայիններին...»[3], որոնց ուղարկել էին Թիֆլիսից՝ մահապատժի ենթարկելու համար։ Ապստամբությունը շարունակվեց չորս ժամ։ Հրամանատարությունը խուճապահար դիմում է մի շարք միջոցների։ Մոտակա տեղերից մեծ քանակությամբ զորք հրավիրվեց, բայց ապստամբները մինչև հաջորդ օրվա առավոտը համառությամբ դիմադրում էին։ Հրամանատարությանը հաջողվում է գերակշռող ուժերի շնորհիվ ապստամբներին շրջապատել և ապա զինաթափել։ Ապստամբության ղեկավարներից և մասնակիցներից 18 հոգու անմիջապես բանտ նետեցին[4]։

Մի այլ հաղորդագրության մեջ բանտարկվածների թիվը 27 հոգի է[5]։ Այդ ելույթի մասնակից շարքային Վարդան Արոյանը, հարցաքննության ժամանակ մի շարք կարևոր տեղեկություններ է տալիս։ Նա պատմում է, որ վերջին երկու օրվա ընթացքում զինվորների մեջ լուրեր էին տարածվում, թե Թիֆլիսում դատարանը մահապատժի վճիռ է կայացրել մինդրելյան դնդի 27 զինվորների նկատմամբ, սակայն Թիֆլիսի կայազորի զինվորները բողոքել են դրա դեմ և հրաժարվել են դնդակ արձակել դատապարտվածների վրա։ Ցարական կառավարությունը որոշում է դատապարտվածներին տեղափոխել Ալեքսանդրոպոլ և նրանց հետ հաշիվ տեսնել։ Սակայն այստեղ ևս կայազորի զինվորները պայքարի դուրս եկան

---

[1] Տե՛ս Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 63, գ. 3915, թ. 198։

[1] Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 22, գ. 58ա, թ. 5։

[3] Նույն տեղում։

[4] Նույն տեղում։

[5] Նույն տեղում, թ. 11։

ցարական դահիճների դեմ՝ ի պաշտպանություն մահապարտի դատապարտված զինվորների։ Վ. Արոյանը պատմում է, որ ապստամբությունն սկսվեց հանկարծ, ընդհանուր «ուռայով» և «կորչեն հրամանատարները»[1] կոչով։ Միայն սակրավորների 2-րդ գումարտակից այդ ապստամբությանը մասնակցում էին 500—600 զինվոր[2]։ Հրամանատարներից ոմանք փորձում են ցրել զինվորներին, նրանք գոչում են. «Ցրվեցեք, հիմա ուրիշ զորամասերից զինվորներ կգան և բոլորիդ կկնդակահարեն»։ Ի պատասխան դրա՝ զինվորները կոչ էին անում իրենց ընկերներին «զենքի դիմել»[3]։

Ապստամբ զինվորները իրենց վճռական բողոքն են հայտնում բանակում տիրող դաժան հալածանքների ու ճնշումների դեմ։ Այսպես՝ շարքային զինվոր Գոստենկոն հայտարարում է, որ զինվորները հալածված են և հրամանատարների հետ համեմատած չնչին դրոշներ են ստանում։ Նա զինվորներին կոչ է անում պահեստներից ուժով բռնագրավել զենքը։ Դիմելով հրամանատարներից մեկին, նա հարցնում է.

«...ինչից է, որ երբ մեր եղբայր զինվորներին գնդակահարում են, այդ մասին թերթերում ոչինչ չեն տպում, իսկ երբ սպանում են մի ստիկանի կամ ստիկանապետի, այդ մասին թերթերը անընդհատ թմբակահարում են։ Նո՛ւ, գնանք ընկերներ, ազատենք մեր անմեղ եղբայրներին, մինգրելյաններին»[4]։ Մի ուրիշ զինվոր դիմելով հրամանատարին, բարձրաձայն գոչում է. «Ինչո՞ւ... մեզ թույլ չեն տալիս թերթ կարդալու։ Երբ թերթը գնում են, ստիպված են կարդալ այն (դաղտնի—Մ. Ա.) որպես ինչ որ պրոկլամացիա»[5]։

Իշխանությանը զինված դիմադրություն ցույց տալու համար մահվան դատապարտված Մինգրելյան գնդի 27 զինվորների տեղափոխումը Աղեքսանդրապոլ քաղաքի ամբողջ կայազորում իրարանցում առաջացրեց։ Զինվորները պատրաստվում են զինված ուժով պաշտպանել դատապարտվածներին։ Նրանք հրամանատարությունից պահանջում են ազատել իրենց եղբայրներին։ Ցարական ոստիկան շտաբս-կապիտան Շիխլինսկին փորձում է պատակտում առաջացնել զինվորների մեջ և նրանց մի մասին ուղղել մյուսի դեմ։ Այդ նպատակով նա 2-րդ մարտկոցի 39-րդ բրիգադի զինվորներին

---

[1] Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ. ֆ. 22, գ. 58ա, թ. 45։
[2] Նույն տեղում։
[3] Նույն տեղում։
[4] Նույն տեղում, թ. 88։
[5] Նույն տեղում, թ. 89։

յուժանում է մեկական շիշ գարեջուր և 30 կոպեկ փող։ Բայց բոլշևիկների ծավալած աշխատանքի հետևանքով կանխվեց Շիխլինսկու կազմակերպած դավադրությունը։ «Բավական է։ Եղբոր ձեռքով չպետք է այլևս հոսի եղբոր արյունը,— ասված է զինվորներին ուղղված ռևոլյուցիոն կոչում։ Բոլորը այդ հասկացել են։ Մենք այլևս թույլ չենք տա, որպեսզի մեր եղբայր զինվորը մեռնի նրա համար, որ ճշմարտության կողմն է»[1]։

Բաղմաթիվ զորամասեր և մասնավորապես Թիֆլիսի կայազորի զինվորները միահամուռ ուժերով պահանջում են ազատել Մինգրելյան դնդի դատապարտված զինվորներին։ Վախենալով ռևոլյուցիոն նոր պոռթկումից, ցարական իշխանությունները փոխեցին Մինգրելյան դնդի 27 զինվորների նկատմամբ մահապատժի դատավճիռը։ Զինվորների մի մասը բոլորովին ազատվեց, իսկ մնացածը ենթարկվեց թեթև պատժի։

Զինվորների այդ հաղթանակը նրանց կազմակերպության և միասնության արդյունքն էր։ Ալեքսանդրոպոլի կայազորի Սովետը, որն ամբողջ կայազորի ռևոլյուցիոն շարժման ոգին էր, այդ հաղթանակից միանգամայն ճիշտ հետևություն է անում։ Այդ առթիվ բաց թողած կոչում Սովետը գրում էր. «Եթե բոլորը որպես մի մարդ հանդես չգային պաշտպանելու իրենց եղբայրներին, ապա նրանք դնդակահարված կլինեին»[2]։

Այսպիսով, շնորհիվ զինվորների միահամուռ ռևոլյուցիոն պայքարի, Մինգրելյան դնդի զինվորները մահապատժից ազատվեցին, բայց բանտարկեցին նրանց պաշտպանելու համար պայքարող բաղմաթիվ զինվորների։

Սակայն ցարական դահիճների այդ դաժանությունը չկարողացավ ընկճել Ալեքսանդրոպոլի կայազորի ռևոլյուցիոն կամքը։ Ռևոլյուցիոն պայքարը կայազորի զորամասերում դնալով ավելի էր ուժեղանում։

ՌՍԴԲՊ Ալեքսանդրոպոլի կազմակերպությունը, կատարելով պարտիայի 3-րդ համագումարի որոշումները, զգալի աշխատանք էր տանում մասսաներին զինելու և ընդհանուր զինված ապստամբություն պատրաստելու ուղղությամբ։

«Զենքի պաշարներն ավելացնելու և նրա հայթայթումն ու գործարանային եղանակով պատրաստումը կազմակերպելու հետ միասին,— գրում է Ի. Վ. Ստալինը,— անհրաժեշտ է ամենալուրջ ուշա-

---

[1] ՍՄԿՊ ԿԿ կից Մ.Լ.Մ.Ի-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 254։
[2] Նույն տեղում։

գրությունը դարձնել ամեն տեսակ մարտական ջոկատների ստեղծման վրա՝ ձեռք բերած զենքն օգտագործելու համար»[1]:

Ալեքսանդրոպոլի բոլշևիկները զենքի պաշարներ էին ստեղծում արհեստանոցներում՝ գաղտնի կերպով զենք պատրաստելու միջոցով: Բայց զենքը գլխավորապես ձեռք էր բերվում զինվորական ռազմական պահեստներից գանազան դաղտնի ճանապարհներով: Բազմաթիվ փաստեր կան, երբ հենց իրենց, հերթապահ զինվորների աջակցությամբ գաղտնի կերպով մեծ քանակությամբ զենք էր դուրս բերվում և հանձնվում ռևոլյուցիոն կազմակերպություններին: Առանձին ռևոլյուցիոն գործիչների հսկողությամբ ստեղծվել էին գաղտնի պահեստներ, որտեղ թաքցվում էին զենքը և ռևոլյուցիոն գրականությունը: Պահեստներում զենքի անհետացում հայտնաբերելիս դատական օրգանները միշտ գործ էին բացում տասնյակ զինվորների ու քաղաքացիների դեմ: Բայց ցարական դատն ու դատաստանը անկարող էին կանգնեցնելու մասսաների ռևոլյուցիոն պայքարը:

ՌՍԴԲՊ Ալեքսանդրոպոլի կազմակերպությունը զինվորներին ուղղված «Նավաստիից զինվորին» վերնագիրը կրող կոչում նկարագրում է բարձրացող ռևոլյուցիոն շարժումը: Կոչը վճռականորեն դատապարտում է ցարական սեհրայուրյակայինների ձեռքին կույր գործիք դարձած այն զինվորներին, որոնք տգետորեն կատարելով դահիճ հրամանատարների կամքը, կրակում են ռևոլյուցիոն մասսաների վրա: Միաժամանակ թռուցիկը զինվորներին բացատրում էր աշխատավորների ու զինվորների շահերի միասնությունը և նրանցից պահանջում անցնել ռևոլյուցիոն մասսաների կողմը: «Երբ քեզ նորից կուղարկեն սպանել անպաշտպան բանվորներին և գյուղացիներին, քո հրամանատարները կկարգադրեն կրակել նրանց վրա, դու մի կրակիր նրանց վրա, այլ դնա բանվորների մոտ և նրանց ասա, ես էլ Ձեզ հետ եմ, ընկերներ, ես ձեզ եմ պաշտպանում, ազատության համար, եղբայրության համար, հավասարության համար, ճշմարտության համար և հարվածիր, հարվածիր նրանց հետ մեկտեղ, ժողովրդի թշնամիներին, ազատության թշնամիներին, հարվածիր պետերին, հարվածիր նահանգապետերին, իշխաններին, թագավորին, հարվածիր բոլոր ձրիակերներին, հարվածիր բոլոր կախաղան բարձրացնողներին, անիծյալ ճնշողներին. և դու կտեսնես թե ինչպես շնորհակալ կլինեն քեզնից բանվորնե-

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 1, էջ 152:

ը, և դու կտեսնես ինչպես անկեղծությամբ... բանվորները իրենց կոշտացած ձեռքերով կսեղմեն քո ձեռքը, նրանց կանայք և երեխաները ուրախությամբ կշրջապատեն քեզ և դոհունակությամբ ջնորհակալություն կհայտնեն քեզնից, որպես եղբայր մեկ բանվորական ընտանիքի, որպես աղատարարի։

Լսիր ինձ, զինվոր, այս քեզ ասում եմ, որպես բարեկամի. խնդրում եմ քեզ։ Միայն ժողովրդի կողմը անցնելով դու կարող ես քեզ արդարացնել ժողովրդի առաջ, այլ կերպ դու ոչ մի տեղ փրկություն չես գտնի։ Ամեն տեղ, և քաղաքում, և զորանոցում, և դաշտում, և դյուղում, ամենուրեք քեզ հետապնդելու են երեխաների խոսքերը. մարդասպան, մարդասպան»[1]։

Կայազորի զինվորներին ուղղված մի այլ կոչում ՌՍԴԲՊ Ա. լեքսանդրոպոլի կազմակերպությունը նշում է, որ ռուս ժողովուրդը մեծ դոհունակությամբ է ողջունում զինվորներին, որոնք հասկացան ժողովրդի շահերը և անցան նրա կողմը։ Զինվորները ասա. ճանարար համոզվում էին, որ ցարին ծառայելը «...հանդեցնում է այն բանին, որ դառնում են իր ժողովրդի դահիճ»[2]։

Այդ նույն կոչի մեջ բերվում է զինվորների պայքարի հետևյալ օրինակը։ Վարշավայում ժողովրդական ապստամբությունը ճընշելու համար հրամանատարությունը հրավիրում է Լիտովսկի Լեյբ-գվարդիական գունդը և հրամայում կրակ բացել ռևոլյուցիոն մասսաների վրա։ Սակայն այդ գնդի «ութ սպաներ հայտարարել են, որ նրանց խիղճը թույլ չի տալիս կրակել անմեղ, անզեն մարդկանց վրա»[3]։ *Արյունարբու դահիճները ըմբոստացող զինվորականներին մահվան են դատապարտում և մի գումարտակի հրամայում են դատապարտվածներին գնդակահարել։ Սակայն. «այդ նպատակի համար հրավիրված գումարտակի զինվորները հրաժարվում են կրակել»*[4]։

Հրամանատարության կողմից ուղարկված կազակների պատժիչ խմբին ըմբոստ զինվորները համազարկային ուժեղ ջարդ տվին։ «Ահա թե ինչպես են իրենց բողոքը հայտնում զինվորները ուրիշ զորամասերում,— շարունակում է սոցիալ-դեմոկրատական կոչը։— ժամանակը չէ՞ արդյոք, որ մեր կայազորն էլ դադարի հրամանատարության ձեռքին կույր գործիք լինելուց։ Մի՞թե մեր վիճակը ավե-

---

1 ՍՄԿՊ ԿԿ-ին կից ՄԷԼՍԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 245։

2 Նույն տեղում, գ. 241։

3 Նույն տեղում, գ. 241։

4 Նույն տեղում։

ի լավ է, քան մյուս բոլոր զինվորներին է։ Չէ՞ որ մեզ էլ ճիշտ այնպես խեղդում են, սովամահ անում, պահում են որպես բանտարկյալներ»[1]։

Ալեքսանդրոպոլում գտնվող զինվորների դրությունը անչափ ծանր էր, ինչպես ցարական բանակի բոլոր զորամասերում։ Այսպես, օրինակ, Ալեքսանդրոպոլում գտնվող Բակինսկի գնդի 12-րդ վաշտի հրամանատարը ծայրահեղ դաժանություն է ցուցաբերում, որի հետևանքով զինվորները հրաժարվում են կատարել նրա հրամանը։ Սակայն հրամանատարությունը բոլորովին չհետաքրքրվելով թե ինչումն է բանը, 23 զինվորների տալիս է ռազմական դատարանին[2]։

ՌՍԴԲՊ Ալեքսանդրոպոլի կազմակերպությունը զինվորներին ուղղած մի այլ թռուցիկում, նրանց կոչ է անում միավորել ուժերը ցարիզմի արյունոտ դահը տապալելու համար։ «Մի ժամանակ մեր կառավարությունը կազմակերպում էր միայն հրեաների և լեհերի կոտորածները։ Իսկ այժմ նա սպանում է բոլոր ռուս քաղաքացիներին...։ Ցանկանալով խեղդել ազատության բոլոր մարտիկներին, նա ուզում է ոչնչացնել բոլոր ռուս քաղաքացիներին, նրա համար, որ բոլորն էլ ազատություն են պահանջում։ Այս տարի մեր կառավարությունը ոչ մի օր էլ չի հանգստացել, ամեն օր նա իր զավրերի թաթը անպաշտպան կանանց և երեխաների արյունով է թաթախել։ Այնպես «սիրալիր» է մեզ կառավարում, որ այս տարի 26 նահանգները հասցրել է սովի»[3]։

Կոչը վերջանում է հետևյալ խոսքերով. «Բողոքում ենք կառավարության դեմ, այն կառավարության դեմ, որը սպանում է նրանոր զոհերի։ Ելնենք, ընկերներ, հզոր պայքարի, ազատության և եղբայրության պաշտպանության վերջին պայքարի։

Հասել է ժամը, երբ անմեղ ժողովրդի արյունով ներկված սրվիները պետք է դառնան դեպի... ժողովրդի թշնամիները։ Կազմակերպվեցեք, ընկերներ, ազատության, հավասարության, եղբայրության դրոշի տակ, և պաշտպան կանգնեք ձեր հնչված եղբայրներին»[4]։

Այդ կոչը փայլուն կերպով ցույց է տալիս, թե ինչպիսի հմտությամբ ՌՍԴԲՊ Ալեքսանդրոպոլի կազմակերպությունը համատու-

---

1 ՍՄԿՊ ԿԿ կից Մ.Լ.Սի-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 241։

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում, գ. 253։

4 Նույն տեղում։

սական դեպքերը կապում է տեղական ռևոլյուցիոն շարժումների ու խնդիրների հետ, թե ինչպիսի վերելք էին ապրում ռևոլյուցիոն շարժումները Ռուսաստանի ծայրամասերում։ Այդ և բոլշևիկյան կազմակերպության մյուս կոչերը մեծ արձագանք գտան զինվորական լայն շրջաններում և խորը ազդեցություն ունեցան նրանց վրա։

Այսպիսով, 1905—1907 թվականների ռևոլյուցիոն շարժման մեջ նշանակալի դեր խաղացին Հայաստանում Ալեքսանդրոպոլի կայազորի ռևոլյուցիոն զինվորները։ Ալեքսանդրոպոլի կայազորը Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների կարևոր հենակետերից մեկն էր։

* * *

Հայաստանում, ինչպես նաև ամբողջ Անդրկովկասում բարձրացող ռևոլյուցիոն շարժումների ծավալմանը զգալիորեն խանգարեցին ցարիզմի և բուրժուա-նացիոնալիստական պարտիաների նախաձեռնությամբ կազմակերպված հայ-ադրբեջանական կոտորածները։ Այդպիսի կոտորածներ տեղի ունեցան Բաքվում, Երևանում, Շուշիում, Գանձակում, Թիֆլիսում և այլ վայրերում։ Ընդդեմ ազգամիջյան ջարդերի, բոլշևիկյան կազմակերպությունները հայ և ադրբեջանցի աշխատավորության շրջանում հակայական բացատրական աշխատանք ծավալեցին։

1905 թ. նոյեմբերի 30-ին Ալեքսանդրոպոլ կայարանում տեղի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ղեկավարությամբ այդ առիթով տեղի ունեցավ աշխատավորների միտինգ։ Միտինգը բողոքի ցույց հանդիսացավ ցարական սատրապների դեմ։ Իր որոշման մեջ միտինգը նշեց, որ հայ-ադրբեջանական եղբայրասպան ընդհարումները ռեակցիոն ուժերի գործն է, որը «վնասարում է ազատագրական մեծ շարժմանը Ռուսաստանում»[1]։

Աշխատավորները միահամուռ կերպով խնդրում էին ՌՍԴԲՊ-ի Ալեքսանդրոպոլի կազմակերպությանը գլխավորել և մասսայական ագիտացիոն լայն աշխատանք տանել Կարսի և Երևանի երկաթգծի ամբողջ ուղղությամբ և կանխել հայ-ադրբեջանական ընդհարումները։ Առաջարկվում է կազմել հատուկ բրիգադաներ ազդամիջյան կռիվները դադարեցնելու նպատակով[2]։

---

1 ՍՄԿՊ ԿԿ կից ՄԷԼՍԻ-ի Վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 2, գ. 112, թ. 32։

2 Նույն տեղում։

Մասսաների ինտերնացիոնալ դաստիարակության աշխատանքը Ալեքսանդրոպոլում օրեցօր ուժեղանում էր։ 1905 թ. նոյեմբերի 30-ին ցերեկվա ժամը 3-ին Ալեքսանդրոպոլ կայարանի դեպոյի մոտ քաղաքի սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպության գլխավորությամբ կայացավ կայարանի բանվորների և ծառայողների միտինգը։ Միտինգին մասնակցում էին նաև Կարսի բանվորների ներկայացուցիչները, ինչպես նաև վերանորոգման արհեստանոցների բանվորներն ու քաղաքի մյուս աշխատավորները։ Միտինգը անարգանքի սյունին գամեց ցարիզմի և նացիոնալիստական պարտիաների ժողովրդասպան քաղաքականությունը։ Իր բանաձևում միտինգը նշեց, որ ցարիզմի և բոլոր ռեակցիոն ուժերի կողմից կազմակերպված այդ ազգամիջյան ընդհարումները խանգարում են ազատագրական մեծ շարժմանը ամբողջ Ռուսաստանում։

Միտինգի մասնակիցները որոշեցին ագիտացիոն-մասսայական լայն աշխատանք ծավալել հայ և ադրբեջանական աշխատավորների մեջ, թույլ չտալ եղբայրասպան ընդհարումների ծավալմանը։ Միտինգը անհրաժեշտ համարեց Ալեքսանդրոպոլ—Երևան, Ալեքսանդրոպոլ—Կարս, Ալեքսանդրոպոլ—Թիֆլիս գծերի ուղղությամբ կազմակերպել բանվորական դրուժիններ՝ կարգ պահպանելու և ընդհարումները կանխելու նպատակով։ Այն որոշեց նաև ուժեղ պայքար ծավալել խուլիգանների և պրովոկատորների դեմ, ձեռք առնել կտրուկ միջոցներ՝ պրովոկացիոն ընդհարումներին վերջ տալու և դնացքների երթևեկությունը ընդհարումներից ու ավերածություններից ապահովելու համար [1]։

Միտինգում բանվորները ղենք են պահանջում՝ բանվորական դրուժիններին զինելու և ռևոլյուցիոն կարգը պահելու համար։ Այդ դրուժիններին պետք է գործեին Ալեքսանդրոպոլի սոց. դեմոկրատական բանվորական կազմակերպության ղեկավարությամբ։

Աշխատավորական լայն շրջաններում ՌՍԴԲՊ Կովկասյան Միության և նրա տեղական կազմակերպությունների ծավալած աշխատանքի շնորհիվ, հնարավոր եղավ կարճ ժամանակում կասեցնել ազգամիջյան ընդհարումները։

ՌՍԴԲՊ Կովկասյան Միության հրահանգով Հայաստանի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները, բանվորների և աշխատավորական մասսաների աջակցությամբ, բացատրական լայն աշխատանք ծավալեցին։ Տարածվում էին մեծ քանակությամբ

[1] „Кавказский рабочий листок", № 10, 1905.

թռուցիկներ ու կոչեր, հրավիրվում էին միտինգներ ու ժողովներ, որտեղ բացատրվում էր ցարիզմի սարքած եղբայրասպան ընդհարումների քաղաքական նպատակը։

Պետք է նշել, որ ազգամիջյան ընդհարումները դադարեցնելուց հետո, 1905 թ. վերջերին և 1906 թ. սկզբներին, մասսաների ռևոլյուցիոն պայքարը Հայաստանում ղդալի վերելք է ապրում։ Սակայն առանձին տեղերում դեռևս գոյություն ուներ անարխիստական տարրերի և տարերայնության ազդեցությունը։ Այդ առավել նկատելի էր երկաթգծում, ուր նրանք ավերում էին գծերը, կազմակերպում էին գնացքների ընդհարումներ ու խորտակումներ։ Նման երևույթները շատ բացասական տպավորություն էին թողնում աշխատավորության և զորքի վրա և զենք էին տալիս ցարական պրովոկատորներին ռևոլյուցիայի դեմ պայքարելու համար։ Բոլշևիկները վճռական պայքար էին տանում բոլոր տիպի անարխիստական, բուրժուա-նացիոնալիստական տարրերի դեմ։

ՌՍԴԲՊ Ալեքսանդրոպոլի կազմակերպության 1906 թ. մարտի 27-ի կոչում նշվում է, որ դաշնակցությունն իր ամբողջ գործունեությամբ և թունոտ ազդամոլությամբ արտահայտում է բուրժուազիայի շահերը և հանդես գալիս որպես հայ ժողովրդի կատաղի թշնամի։

Բոլշևիկյան «Կայծ» թերթը «Նամակ Ալեքսանդրոպոլից» թղթակցությունում (1906 թ. հունիսի 25-ին) մերկացնում է դաշնակցության քայքայիչ և հակաժողովրդական դերը Ալեքսանդրոպոլում։ Թղթակիցը ցույց է տալիս, որ դաշնակները ծառայելով ցարական ոստիկանությանը, պրովոկացիոն դեր են կատարում և խանգարում բանվորների միավորմանն ու նրանց քաղաքական պայքարին։ Թղթակիցը գոհունակությամբ հայտնում էր, որ չնայած դաշնակների քայքայիչ գործունեությանը, ռևոլյուցիոն տրամադրությունները քաղաքում գնալով աճում են[1]։

Կարսի մարզում դաշնակները ստիպում էին հայերին զինվել ադրբեջանցիների դեմ և դրանով իսկ բորբոքում էին ազգամիջյան ընդհարումները[2]։

Աշխատավորական մասսաները ռևոլյուցիոն պայքարի բովում հետզհետե ավելի ու ավելի էին համոզվում, որ ժողովրդական ազատության և աշխատավորների շահերի իսկական մարտիկները բոլշևիկներն են։ Բոլշևիկների ազդեցությունը մասսաների վրա օր-

1 Տես «Կայծ», 30, 1906։

2 Տես Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ. ֆ. 1, գ. 37, թ. 22։

ավուր աճում էր։ Այս հանգամանքը ավելի էր կատաղեցնում բուրժուա-նացիոնալիստական պարտիաներին, մասնավորապես դաշնակցություն պարտիային, որը «սոցիալիզմի» դիմակ հագած ձգտում էր դառնալ ամբողջ հայ ժողովրդի «ղեկավարը»։ Սակայն ռևոլյուցիան ակնհայտ դարձրեց դաշնակցության բուրժուական էությունը, նրա ռեակցիոն, հակաժողովրդական ոգին։ Այն դերը, որ կատարում էր դաշնակցությունը Ալեքսանդրոպոլում, Հայաստանի այլ քաղաքներում, գյուղերում և ամբողջ Կովկասում, բացահայտեց դաշնակներին որպես ցարիզմի գործակալների և ռևոլյուցիայի կատաղի թշնամիների։

Պարտիական անլեգալ գրականությունը տարածելու և մասսաներին Կոմունիստական պարտիայի շուրջը համախմբելու համար բոլշևիկները գործադրում էին բոլոր հնարավոր միջոցները։

ՌՍԴԲՊ Ալեքսանդրոպոլի կազմակերպությունը 1905 թ. մեծ քանակությամբ պրոկլամացիաներ ու կոչեր էր տպում Ալեքսանդրոպոլի լեգալ կերպով գործող մի տպարանում (որը գտնվում էր Ալեքսանդրոպոլյան փողոցի ետևում և տեղավորված էր խանութում— բակալեայի խանութի դեմ)։ Այդ գրականությունը մեծ չափով տարածվում էր նաև Երևանում։ Սոցիալ-դեմոկրատները տպարանի հետ կապը պաշտպանում էին առանձին անհատների միջոցով և գործում էին զգույշ ու գաղտնի կերպով, ուստի և ոստիկանությանը երկար ժամանակ չէր հաջողվում նրանց հայտնաբերել[1]։

1906 թ. օգոստոսի 22-ին ոստիկանությունը հաղորդում է, որ Ալեքսանդրոպոլի փողոցներում դիշերը փակցրել են մեծ քանակությամբ պրոկլամացիաներ։ Քաղաքային այգում Երևանի գիմնազիայի ուսանող Ա. Շահինովը (Շահինյանը) մասսայի առաջ ռևոլյուցիոն պրոկլամացիան կարդալիս բռնվել և բանտ է նետվել։ Ա. Շահինյանը կապ ուներ Մ. Միրաքյանի հետ և աշխատում էր նրա ցուցումներով։

Այսպիսով, ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին Ալեքսանդրոպոլը հանդես է գալիս որպես քաղաքական պայքարի կարևոր կենտրոն, որը Հայաստանի մյուս շրջաններում ծավալվող

---

[1] Առանձնապես նշվում է դերձակ Դավիթի (ենթադրությամբ՝ ազգանունը — Ավետաուրյանց), որի խանութը գտնվում էր Ալեքսանդրոպոլյան փողոցի վրա։ Բայց այդ կապը պահվում էր նաև Արսենի միջոցով, որն այն ժամանակ աշխատում էր հայկական եկեղեցուն կից պատրաստվող կրպակում (ՍՄԿՊԿԿ կից ՄԷԼՍԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 251)։

հետագա ռևոլյուցիոն պայքարի վրա մեծ ազդեցություն է թողնում։

Ռուսական առաջին ռևոլյուցիայի ազդեցությամբ, ռուս բանվորների և զինվորների օրինակով Ալեքսանդրոպոլի աշխատավորները դուրս են գալիս տնտեսական և քաղաքական պայքարի։ Ալեքսանդրոպոլի բանվորներն ու զինվորները բոլշևիկների ղեկավարությամբ ժամանակին արձագանքում էին ռևոլյուցիայի բոլոր կարևոր իրադարձություններին՝ հունվարյան դեպքերին, հոկտեմբերյան համառուսական քաղաքական գործադուլներին, դեկտեմբերի հզոր զինված ապստամբությանը։ Այսպիսով, Ալեքսանդրոպոլի աշխատավորները իրենց ակտիվ պայքարով մասնակցում էին ցարիզմի տապալման համաժողովրդական մեծ գործին։

Ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիները Ալեքսանդրոպոլի աշխատավորների համար հանդիսացան քաղաքական մեծ դաս ստանալու տարիներ։ Այդ տարիների հարուստ փորձի հիման վրա նրանք նախապատրաստվում էին ցարիզմի և բուրժուազիայի դեմ մղվելիք հետագա վճռական մարտերին։

3. ՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Որպես կազմակերպված ուժ արդյունաբերական պրոլետարիատը Երևանում ավելի ուշ է սկսում հանդես գալ։ Այստեղ առհասարակ բանվոր դասակարգը համեմատաբար ավելի թույլ էր, քան Ալավերդում, Ղափանում և Ալեքսանդրոպոլում։ Այնուամենայնիվ, ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին Երևանի բանվորները ու քաղաքի աշխատավորական մասսաները վճռական պայքարի են դուրս գալիս ցարիզմի և հարստահարիչների դեմ՝ հանուն իրենց քաղաքական ազատագրման։

ՌՍԴԲՊ Կովկասյան Միութենական կոմիտեի հանձնարարությամբ այստեղ էին գալիս մի շարք բոլշևիկներ, որոնք ագիտացիոն աշխատանք էին տանում և անընդհատ ռևոլյուցիոն գրականություն տարածում քաղաքի աշխատավորների մեջ։ ՌՍԴԲՊ Երևանի կազմակերպությունը ռևոլյուցիայի տարիներին մասսաների շրջանում մեծ հեղինակություն էր ձեռք բերել։

ՌՍԴԲՊ Երևանի կազմակերպությունը, ինչպես արդեն նշել ենք, գոյություն ուներ առանձին բջիջների ու խմբերի ձևով՝ սկսած 1903—1904 թթ.։ 1905 թ. նախօրյակին Երևանի երկաթգծում, արդյունաբերական ձեռնարկություններում, ինչպես նաև ուսումնական հաստատություններում մի շարք սոցիալ-դեմոկրատ-

սական խմբակներ էին առաջացել, որոնք, սակայն, գործում էին անջատ-անջատ։ Նրանց միջև կապը պաշտպանվում էր միայն առանձին ագիտատորների և պարտիական ղեկավարների միջոցով։ Այդ տեսակետից մեծ աշխատանք ծավալեց բոլշևիկ Ալեքսանդր Մալխասյանը։ Երևան է ժամանել նաև ականավոր ռևոլյուցիոն գործիչ Բ. Կնունյանցը։

1905 թ. ռևոլյուցիան բոլշևիկների առաջ հրատապ խնդիր էր դնում ղեկավարել ամենուրեք ծավալվող ռևոլյուցիոն շարժումները, ապահովել բանվոր դասակարգի հեգեմոն դերը այդ ռևոլյուցիայում՝ հակահարված տալով մենշևիկներին և նացիոնալիստական պարտիաների քայքայիչ գործունեությանը։

ՌՍԴԲՊ կենտրոնացված ղեկավարության անհրաժեշտությունը առանձնապես զգալի էր Երևանում, որտեղ ցարիզմի հրահրած հայ-ադրբեջանական ընդհարումների հետևանքով նացիոնալիստական պարտիաների գործունեությունը բավական աշխուժացել էր։ 1905 թ. մայիսին Ստ. Շահումյանի նախաձեռնությամբ բոլշևիկյան կազմակերպությունների քաղաքային ընդհանուր ժողովը ընտրում է ՌՍԴԲՊ Երևանի կոմիտե, որի մեջ մտան Ա. Մալխասյանը և ուրիշները։

Ա. Մալխասյանը Երևանի աշխատավորների սիրած ղեկավարներից էր։ Իր ռևոլյուցիոն գործունեությամբ նա մասսաների մեջ մեծ հեղինակություն էր վայելում։ Նա մահացավ 22 տարեկան հասակում, 1906 թ. հունվարին։ Մալխասյանի թաղումը վերածվեց խոշոր քաղաքական ցույցի, որի ժամանակ բոլշևիկները հանդես եկան ռևոլյուցիոն ճառերով։

1905 թ. աշնանից ՌՍԴԲՊ Երևանի կազմակերպությունում ակտիվ կազմակերպչական ղեկավար աշխատանք է տանում նաև Ա. Մռավյանը։

Ա. Մռավյանը 1903 թ. մտնում է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը։ Այստեղ նա մասնակցում է ընդհատակյա ռևոլյուցիոն խմբակի աշխատանքին։

1905 թ. ռևոլյուցիայի ժամանակաշրջանում Մռավյանը հանդես է գալիս որպես լավագույն պրոպագանդիստ ու կազմակերպիչ։

1905 թ. ապրիլին նա մտնում է բոլշևիկյան պարտիայի շարքերը և ընդմիշտ նվիրվում բանվոր դասակարգի ազատագրական պայքարի մեծ գործին։

1905 թ. սեպտեմբերին Մռավյանի ղեկավարությամբ տեղի է ունենում ճեմարանի աշակերտների դասադուլը։ Սեպտեմբերի 25-ին

որպես «խռովարարի» նա հեռացվում է ճեմարանից։ Այնուհետև նրան հաջողվում է ուսումը շարունակել Երևանի թեմական դպրոցում։ Այստեղից Մռավյանը շուտով դարձյալ հեռացվում է՝ աշակերտական ելույթներին մասնակցելու համար։ Սակայն նրան հաջողվում է վերընդունվել և 1906 թ. ավարտել դպրոցը։

Ա. Մռավյանը մեծ աշխատանք է տանում Երևանի բոլշևիկյան կազմակերպության ամրապնդման և նացիոնալիստական տարրերի ջախջախման ուղղությամբ։ «Իմ գիտակցական կյանքի հենց սկզբից,— գրել է Ա. Մռավյանը,— ես բացասաբար եմ վերաբերվել դեպի դաշնակցության պարտիան և նրա ավանտյուրիստական գործունեությունը Թյուրքահայաստանում»[1]։

Ա. Մռավյանը ակտիվ մասնակցություն է ցուցաբերում 1905—1906 թթ. Երևանի բանվորների, ծառայողների և ուսանողների ռևոլյուցիոն պայքարը կազմակերպելու և ղեկավարելու գործում։

---

[1] ՍՄԿՊ ԿԿ կից ՄԵԼՍԻ-ի Հայկ. ֆիլ. արխիվ, ֆ. 10, գ. 2, թ. 23։ 1906 թ. Ա. Մռավյանը, Ստ. Շահումյանի և Ս. Սպանդարյանի ցուցումներով ռևոլյուցիոն աշխատանք է տանում Գանձակում (այժմ Կիրովաբադ)։ Մռավյանը առանձնապես եռանդուն մասնակցություն է ցուցաբերում հայ-ադրբեջանական կոտորածների դադարեցման և այդ ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում։ Բոլշևիկյան «Կայծ» և «Նոր խոսք» թերթերում «Հրանտ» ծածկանունով դետեղված նրա «Նամակ Գանձակից» հոդվածաշարքը (տես «Կայծ», № 31, 1906, №«Նոր խոսք», № 7, 1906 թ.) ամենայն վճռականությամբ մերկացնում է հայ-ադրբեջանական կոտորածների կոնտրռևոլյուցիոն և կործանարար բնույթը։ Մռավյանը ցույց է տալիս դաշնակների և բոլոր դույնի նացիոնալիստների կոնտրռևոլյուցիոն էությունը։ Մռավյանը նրանց համարում է մեծագույն չարիք հայ ժողովրդի համար։

1906 թ. նոյեմբերին Գանձակ է ժամանում Ս. Սպանդարյանը։ Ս. Սպանդարյանի ցուցումներով Ա. Մռավյանը եռանդուն աշխատանք է ծավալում անկախ տպարանի կազմակերպման և ռևոլյուցիոն գրականության տարածման ուղղությամբ։ Այդ աշխատանքին գրչի օգնություն են ցույց տալիս նաև Հակոբ Հակոբյանը, Դեղուշկան և ուրիշները։ 1907 թ. Ա. Մռավյանը մի խումբ ընկերների հետ ռևոլյուցիոն գործունեության համար հեռացվում է ուսուցչական աշխատանքից։ 1907 թ. հուլիսին նա տեղափոխվում է Բաքու։ Այդ ժամանակ Բաքվում էին գործում Վ. Ի. Լենինի գինակիցներ Ի. Վ. Ստալինը, Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Ա. Ջափարիձեն, Մ. Ակիզբեկովը և ուրիշները։

Լենինյան տիպի այդ ականավոր գործիչների շարքերում, Բաքվի հերոսական պրոլետարիատի եռուն, պայքարի բովում կոփվում էր ռևոլյուցիոն գործիչների մի ամբողջ սերունդ։

Այդ գործիչների շարքումն էր նաև Ա. Մռավյանը։ Ահա թե ինչու Ա. Մռավյանը Բաքուն համարում էր իր «Բոլշևիկյան հայրենիքը»։

1906 թ. Երևանի կազմակերպությունը Ստ. Շահումյանին ընտրում է ՌՍԴԲՊ 4-րդ (միավորիչ) համագումարի դելեգատ։ Մենշևիկների ջանքերը՝ Երևանի կազմակերպությունը իրենց ազդեցության տակ դցելու ուղղությամբ, անհաջողությամբ են վերջանում։ Ստ. Շահումյանը համագումարում ընտրվում է մանդատային հանձնաժողովի անդամ։ Համագումարում Ստ. Շահումյանը հետևողականորեն պաշտպանում է լենինյան գիծը։ Նա հանդես է գալիս բոլշևիկների վերաբերյալ հատուկ առաջարկով (Սուրենին անվան տակ), որը և ընդունում է համագումարը[1]։

Վերադառնալով Ստոկհոլմի համագումարից, Ստ. Շահումյանը 1906 թ. մայիսին դալիս է Երևան և պարտիական ակտիվի առաջ զեկուցում է տալիս համագումարի արդյունքների մասին, Վ. Ի. Լենինի ցուցումները հասցնելով Երևանի պարտիական կազմակերպությանը։

Ստ. Շահումյանը հանդիպումներ է ունենում աշխատավորների հետ, լինում է Երևանի կայազի գործարանում, օգնում է ռևոլյուցիոն աշխատանքը բարձրացնելու գործին, ցուցում է տալիս ցարիզմի, դաշնակների, սոցիֆիֆիկների և մենշևիկների դեմ անհաշտ պայքար ծավալելու անհրաժեշտության մասին և այլն։

Հայ աշխատավորության կատաղի թշնամի դաշնակները՝ դաշն կնքած փոխարքա Վորոնցով-Դաշկովի հետ, հանդես էին գալիս որպես սեհարյուրյակալիններ՝ ռևոլյուցիոն շարժումները ճնշելու գործում։ Նրանցից հետ չէին մնում «սոցիֆիֆիկները» (որոնք իրենց կոչում էին «հայկական սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպություն»)։ «Սոցիֆիֆիկները» նպատակ էին դնում պայքարել ռևոլյուցիայի դեմ, անջատելով հայ բանվորներին ռուս և մյուս ազգերի բանվորներից։ Պայքարելով բանվորների ինտերնացիոնալ միավորման դեմ, նրանք ցանկանում էին հայ բանվորներին ենթարկել հայ բուրժուազիայի շահերին։ Ահա թե ինչու Վ. Ի. Լենինը 1905 թ. սեպտեմբերի 7-ի նամակում սոցիֆիֆիկների մասին գրում է. «Խիստ նախազգուշացնում եմ, «հայկական ս.-դ. ֆեդերացիայի» վերաբերյալ... Դրանք մի զույգ ժնևյան կազմալուծիչներ են, որոնք այստեղ հրատարակում են ամենադատարկ բաներ, առանց որևէ լուրջ կապերի Կովկասի հետ։ Դա բունդական կրեատուրա է, ուրիշ ոչինչ, որը հատկապես հորինված է կովկաս-

---

[1] Տես ՍՄԿՊ-ն համագումարների, կոնֆերենցիաների և կենտկոմի պլենումների բանաձևերում և որոշումներում, 1-ին մաս, Երևան, 1954, էջ 147

յան բունդիզմը սնելու համար... Կովկասի ընկերները բոլորն էլ դեմ են դրականապետ-կազմակերպիչների այդ շայկային...»[1]։

Հայ բանվորներին ընդհանուր պայքարից հետ պահելու համար «սպեցիֆիկները» Բաքվում ստեղծեցին հատուկ «Բյուրո»։ Այդ բյուրոն սերտ գործարքի մեջ մտավ հայ կապիտալիստ-ձեռնարկատերերի հետ։ Նրանք դեմագոգիկ կերպով առաջ էին քաշում հայ բանվորների տնտեսական պայմանների բարելավման հարցը, «մտնելով բանակցությունների մեջ հայ ձեռնարկատերերի հետ այն մասին, որ նրանք վճարեին բանվորներին «օգոստոսյան գործադուլային օրերի համար»։ «Սպեցիֆիկները» պայքարի նման մեթոդներով սկսեցին որոշ ազդեցություն ձեռք բերել և իրենց կողմը քաշել քաղաքական պայքարից հեռու կանգնած բանվորների հետամնաց մասին։

Նացիոնալիստական պարտիաների մերկացման գործում բոլշևիկները ակտիվ աշխատանք էին տանում ինչպես Անդրկովկասի բանվորական խոշոր կենտրոններում, այնպես էլ Հայաստանի քաղաքներում ու գյուղական շրջաններում։

Բոլշևիկները մամուլի և անկեղծ գրականության տարածման, ինչպես նաև ժողովների և միտինգների ժամանակ ռևոլյուցիոն ճառերի ու զրույցների միջոցով մասսաների մեջ հասունացող քաղաքական պայքարին և ռևոլյուցիոն ելույթներին ճիշտ ուղղություն էին տալիս։ Դրա շնորհիվ նախկինում քաղաքական կյանքից համարյա թե կտրված Երևանը կարճ ժամանակամիջոցում սկսեց ակտիվ կերպով մասնակցել երկրում ծավալվող ռևոլյուցիոն շարժումներին։ Ամենուրեք աշխատավորները պայքարի էին դուրս գալիս բոլշևիկյան լոզունգներով։

Ռևոլյուցիոն ելույթներն ու շարժումները Երևանում սկսվում են առանձնապես 1905 թ. «Արյունոտ կիրակի»-ի դեպքերից հետո։ Արդյունաբերական ձեռնարկություններում, ինչպես նաև քաղաքի մի շարք արհեստանոցներում և հիմնարկներում տեղի ունեցան բողոքի ցույցեր և հավաքույթներ։ Ոստիկանությունը խիստ հսկողություն է սահմանում. նա դաժանորեն ճնշում ու արգելում է բոլոր տեսակի հավաքույթներն ու ցույցերը։

1905 թ. մարտին ընակչության կողմից հատուկ պահանջագիր ուղարկվեց Կովկասի փոխարքային, որտեղ քաղաքի ինքնավարու-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 383։

[2] Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, գ. 194, թ. 231։

թյան հետ մեկտեղ նրանք մի շարք դեմոկրատական պահանջներ էին առաջադրում, այդ թվում ընդհանուր ընտրական իրավունքի, կանանց իրավահավասարության, խոսքի, մամուլի, ժողովների ազատության, 8 ժամյա բանվորական օրվա, մայրենի լեզվով ընդհանուր տարրական ուսուցման և այլն պահանջներ։

1905 թ ապրիլին գործադուլ են հայտարարում Սարաջևի գինու և կոնյակի գործարանների բանվորները։ Այդ գործադուլը սկսվում է ՌՍԴԲՊ Երևանի կազմակերպության ղեկավարությամբ։

Գործադուլավորները իրենց ներկայացրած պահանջներում խնդիր էին դնում աշխատավարձը ավելացնել մինչև 30 տոկոս, աշխատանքի ժամերը կրճատել (որը մինչև այդ տևում էր 11 ժամ), բանվորներին աշխատանքի ընդունել և արձակել բանվորական կոմիտեի համաձայնությամբ։ Բանվորները պահանջում էին նաև հեռացնել դաժան կառավարիչ Զեդգինիձեին և այլն։

Գործադուլ հայտարարեցին նաև Շուստովի գործարանի բանվորները։ Սակայն գործարանատերը, վախեցած բարձրացող քաղաքական շարժումներից, դիմեց զիջումների։ Բանվորների պահանջների դդալի մասին բավարարություն տալով, գործարանատերը նրանց հետ փոխադարձ համաձայնագիր կնքեց, որից հետո միայն բանվորները գործադուլը դադարեցրին և վերսկսեցին աշխատանքը։

1905 թ. ապրիլի 22-ին գործադուլ հայտարարեցին Երևանի հյուրանոցների, ճաշարանների և քաղաքային ակումբի բանվորներն ու ծառայողները։ Գործադուլավորները ներկայացրին 13 կետից բաղկացած պահանջներ, այդ թվում աշխատավարձի ավելացում 10—20 տոկոսով, աշխատանքի ժամերի կրճատում, բնակարանային-կենցաղային դրության բարելավում, հիվանդության ժամանակ բժշկական օգնություն, բոլոր տեսակի տուգանքների վերացում, գործադուլի ժամանակ աշխատավարձով ապահովում, գործադուլին մասնակցած բանվոր-ծառայողներին աշխատանքից հեռացնելը և այլն[1]։

Ճաշարանների և հյուրանոցների տերերը հրաժարվեցին ընդունել բանվորների և ծառայողների առաջադրած պայմանները և գործադուլավորներին սկսեցին աշխատանքից ազատել։ Ոստիկանական զրույցները այդ մասին նշում է, որ գործադուլավորները, շարունակելով իրենց պայքարը, խմբերով շրջում են քաղաքի փո-

---

[1] Տես ՍՄԿՊ ԿԿ կից ՄԼՄԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 167։

ղոցներով և ապստամբության կոչ անում։ Սակայն գործադուլավորների մեջ կային նաև անարխիստական տարրեր, որոնք «ջարդում էին խանութների ապակիները»[1]։ Ոստիկանությունը գլուխը կորցրել էր և վախից թաքնվել. նա սպասում էր հարմար առիթի, որ ճնշի գործադուլը։

Գործադուլը գլխավորում էր ՌՍԴԲՊ Երևանի կազմակերպությունը։ Ոստիկանությունը նշում է, որ այդ գործադուլի, ինչպես նաև քաղաքի ուսանողների մեջ հավաքույթների կազմակերպողը ուսանող Գեորգի Նիկոլաևիչ Սոկոլովսկին էր։ Ոստիկանությունը բոլոր միջոցները ձեռք էր առնում Սոկոլովսկուն աքսորելու և խիստ կերպով պատժելու համար[2]։

1905 թ. սկսվում են Երևանի ուսումնարանների աշակերտների ու ուսուցիչների ռևոլյուցիոն ելույթները։

1905 թ. հոկտեմբերի 26-ին Երևանի գիմնազիայի բարձր դասարանների աշակերտները դասադուլ են հայտարարում և կազմակերպում բողոքի ցույց։ Դրա առիթն այն էր, որ Երևանի նահանգապետի կարգադրությամբ ոստիկանությունը ընդհանուր խուզարկություն է անցկացնում բոլոր ուսանողների և կասկածելի ուսուցիչների բնակարաններում։ Այդ օրերին քաղաքում մեծ չափով անլեգալ գրականություն է տարածվում, որին ակտիվ մասնակցություն է ցույց տալիս ուսանող երիտասարդությունը։

Ռևոլյուցիոն ելույթներ են տեղի ունենում Թիֆլիսի, Ալեքսանդրապոլի և Շուշիի հայ աշակերտների մեջ։ Շուշիի թեմական դպրոցի աշակերտները, ինչպես նաև Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի աշակերտները ցույցեր են կազմակերպում և ներկայացնում են իրենց պահանջները[3]։

Շուշիի թեմական դպրոցի աշակերտները իրենց առաջադրած ծավալուն պահանջների մեջ խնդիր էին դնում դպրոցն անջատել եկեղեցուց և նրան տալ ներքին ինքնավարություն, այն հանձնելով հասարակության հսկողությանը, դպրոցը դասել միջնակարգ դպրոցների շարքը, որպեսզի ավարտողները կարողանան համալսարան ընդունվել, մեծ տեղ հատկացնել աշխարհարարի դասավանդմանը, իսկ դրաբարը ավանդել որպես կլասիկ լեզու։ Պահանջների մեջ բավական մեծ տեղ էր տրվում ռուսական կուլտուրայի ուսումնասիրությանը։ Պահանջվում էր ռուսաց լեզվի և Ռուսաստանի

---

[1] ՍՄԿՊ ԿԿ կից ՄԷԼՍԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 167։

[2] Նույն տեղում։

[3] Տես «Լումա», № 2, 1906, էջ 105։

պատմության դասավանդումը դնել դիտական բարձր հիմքերի վրա, վերջ տալով առասպելականությանը։ Աշակերտների ռևոլյուցիոն շարժումների պատմությանը ծանոթացնելու համար անհրաժեշտ էր համարվում դասավանդել XIX դ. քաղաքական շարժումների պատմությունը։ Առաջարկվում էր հանել կրոնի դասավանդումը որպես առանձին առարկա։ Անհրաժեշտ էր համարվում լայն տեղ տալ բնադիտական և մաթեմատիկական առարկաներին։ Հատկապես նշվում էր ավանդել քաղաքատնտեսության և քաղաքակրթության պատմությունը և այլն։

Նման պահանջներ առաջադրում են նաև մյուս քաղաքների աշակերտները ու ուսանող երիտասարդությունը։ Դա ռուսական ռևոլյուցիայի խորը ազդեցության հետևանք էր հասարակական բոլոր խավերի վրա։

Ուսանողների մեջ բավական ուժեղ էին սոցիալ-դեմոկրատական գաղափարները։ ՌՍԴԲՊ Կովկասյան Միության ներկայացուցիչները հատուկ աշխատանք էին տանում ուսանողության շրջանում։ Շնորհիվ դրան, աշակերտական ռևոլյուցիոն խմորումները դնալով ուժեղանում են։ Երևանի թեմական դպրոցի աշակերտները իրենց ընդհանուր հավաքում որոշեցին շարունակել դասադուլը, «որպեսզի դրանով իրենց համակրանքը ցույց տան այն շարժման նկատմամբ, որ կատարվում է ամբողջ կայսրությունում»։ Աշակերտները հայտարարում են, որ հնարավոր չէ պարապել այն պահին, երբ երկրում արյուն է հոսում[1]։ Այդ նույն ժամանակ դասադուլ են հայտարարում նաև Հռիփսիմեի իգական գիմնազիայի աշակերտուհիները։

1906 թվականին Երևանում ռևոլյուցիոն շարժման մեջ ընդգրկվում են աշխատավորության ավելի լայն շերտեր։ Ուժեղանում է բոլշևիկների ազդեցությունը բանվորների և դեմոկրատական ինտելիգենցիայի վրա։ Դրան հակառակ, նացիոնալիստական պարտիաները կորցնում են նախկինում ունեցած իրենց ազդեցությունը։ Ռևոլյուցիայի ազդեցության տակ աշխատավորական տարրերը երես են թեքում նացիոնալիստներից և հարում ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիային։ Երևանի և ամբողջ Հայաստանի բոլշևիկյան կազմակերպության շարքերի ամրապնդման և աշխատավորության ռևոլյուցիոն դաստիարակության գործում խոշոր դեր են խաղում Թիֆլիսում Ստ. Շահումյանի և Ս. Սպանդարյանի խմբագրու-

---

[1] Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, գ. 33, թ. 266։

թյամբ լույս տեսնող «Կայծ» և ապա «Նոր խոսք» բոլշևիկյան լեգալ թերթերը։ Այդ թերթերն ունեին իրենց թղթակիցները Երևանում և լայնորեն լուսաբանում էին Երևանի ու Նահանգի աշխատավորության տնտեսական ու քաղաքական կյանքի հուզող հարցերը։

1906 թ. Երևանում և Նահանգում տեղի ունեցան մի շարք նոր գործադուլներ։ Դրանք ղեկավարում էին բոլշևիկները։ Նույն թվի հունվարի 10-ի ոստիկանական հաղորդագրության մեջ նշվում է, որ «Ուլուխանլու կայարանից մինչև Նախիջևան նոր կառուցվող երկաթգիծը գտնվում է գործադուլավոր-ռևոլյուցիոներների ձեռքին և Նախիջևանի ժանդարմական վարչության պետի կարծիքով անդրկովկասյան երկաթուղագիծը զինվորական վարչության ձեռքը անցնելուց հետո անհրաժեշտ է գործադրել ռեպրեսիվ միջոցներ այդ տեղամասի նկատմամբ»[1]։

Երևանի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը լայն աշխատանք էր տանում մասսաների ինտերնացիոնալ միասնությունն ապահովելու, հատկապես հայ և ադրբեջանական աշխատավորների եղբայրական կապերը ամրապնդելու ուղղությամբ։

1906 թ. փետրվարի 19-ին ՌՍԴԲՊ Երևանի կազմակերպությունը հայերեն և ադրբեջաներեն լեզուներով բաց է թողնում «Ընկերներ» վերնագիրը կրող պրոկլամացիան՝ նվիրված գյուղացիական ռեֆորմի 45 ամյակին։ Պրոկլամացիան մերկացնում է ցարիզմի ագրարային և ազգատյաց քաղաքականությունը, որը ժողովուրդներին հասցրեց ծայրահեղ քայքայման ու աղքատության։ «Կայսրը միշտ էլ օգնել է հարուստներին, որոնք իրար հետ միացած քայքայում են աղքատ գյուղացիներին և բանվորներին։ Հոգնել ենք նման կառավարությունից և ինչ էլ որ լինի, մենք պետք է կառավարություն ընտրենք ժողովրդից։ Կառավարությունը ցանկանալով ազատվել ժողովրդի ձեռքից և ոչնչացնել նրա ուժերը և ուղղել այն ուրիշ՝ իրեն ցանկալի ուղղությամբ, կովկասում ստեղծել է թշնամանք հայերի և թաթարների (ադրբեջանցիների—Ծ. Ա.) մինչև, իսկ Ռուսաստանում ռուսների և հրեաների միջև...»[2]։ Այնուհետև պրոկ-

---

[1] Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, դ. 194, թթ. 15—16։ Այս տեղամասում երկաթգիծը կառուցող բանվորները գոյություն ունեցող դաժան ճնշումների դեմ պայքարի դուրս գալուն դեռևս 1904 թ. ամառվա և աշնան ամիսներին։ Բանվորների համար անչափ ծանր էր դաժան կապալառուների ճնշումներն ու շահագործումը։ Բանվորները 3—4 ամիս աշխատավարձ չէին ստանում։

[2] Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, դ. 194, թ. 152։

լամացիան կոչ է անում հայ և ադրբեջանցի աշխատավորներին՝ վերջ տալ ազգային թշնամանքին, «որպեսզի միացյալ ուժերով ոչնչացնել այդ անպետք կառավարությունը»[1]։

Երևանի աշխատավորների դայրույթն ու ատելությունը առաջ բերեց ռևոլյուցիոն գործիչ Լևոն Տեր-Հովսեփյանի նկատմամբ կազմակերպված դատավարությունը։ Մասսաներին ահաբեկելու համար 1906 թ. ապրիլի 17-ին, Թիֆլիսի դատական պալատի կոլեգիան Երևան էր եկել հատկապես քննելու «...Սոցիալ-դեմոկրատ ընկեր Լևոն Տեր-Հովսեփյանի գործը...»[2], որին մեղադրում էին զինվորների մեջ ռևոլյուցիոն պրոկլամացիաներ տարածելու և աշխատավորության շրջանում ռևոլյուցիոն պրապագանդա տանելու մեջ։

Բայց ցարիզմի գործադրած ռեպրեսիաները ավելի և ավելի էին դրդում մասսաներին, ուժեղացնում նրանց զժգոհությունը դեպի գոյություն ունեցող կարգերը։ 1906 թ. փետրվարին Երևանի ու Ալեքսանդրոպոլի փոստա-հեռագրատան աշխատողները գործադուլ արին։ Ցարական կառավարությունը խիստ միջոցների դիմեց գործադուլը ճնշելու։ Գործադուլի մասնակիցների գործը 1906 թ. փետրվարի 21-ին հանձնվեց Երևանի օկրուգային դատարանի քննությանը[3]։

Բանվորական շարժումներին ակտիվ մասնակցություն էր ցույց տալիս նաև պրոգրեսիվ ինտելիգենցիան։ Մի շարք քաղաքներում գիմնազիայի և սեմինարիայի ուսանողները շատ աշխույժ գործունեություն էին ծավալում։

Հայտնի է Երևանի արական և Հռիփսիմեի իգական գիմնազիաների դասադուլը, որը, ինչպես նշեցինք, սկսվել էր դեռևս 1905 թվականին և 1906 թ. շարունակվում էր։ Ոստիկանական հաղորդագրությունը հայտնում է, որ 1906 թ. մարտի 20-ին դասադուլ են հայտարարել Երևանի տղաների գիմնազիայի սովորողները, որոնց կոչին հետևում են նաև Հռիփսիմեի օրիորդաց գիմնազիայի ուսանողուհիները[4]։

Հետևելով Երևանի ուսանողների օրինակին, նույն թ. մարտի 21-ին դասադուլ հայտարարեցին նաև Էջմիածնի հոգևոր ճեմարանի ուսանողները։ Վերջիններս պահանջում էին վերջ դնել ստեղծված ծանր ռեժիմին և վերականգնել 5-րդ դասարանի մի աշակեր-

---

1 Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, գ. 194, թ. 152։

2 «Կայծ», № 7, 1906։

3 Տե՛ս Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, գ. 194, թ. 144։

4 Նույն տեղում, թ. 218։

տի, որը հեռացվել էր դեմոկրատական գաղափարներով գրած իր թղթակցության համար։ Աշակերտները ամենավճռական կերպով պահանջեցին վերականգնել իրենց ընկերոջ ուսանողական իրավունքները, սպառնալով հակառակ դեպքում դասադուլը շարունակել։ Ստեղծված դրությունից դուրս գալու միակ միջոցը կաթողիկոսը գտավ նրանում, որ կարգադրեց փակել Ակադեմիան և աշակերտներին մինչև սեպտեմբեր ամիսը արձակել[1]։

Ոստիկանության օգնությամբ ուսանողներին շտապ կարգով ցրում էն էջմիածնից։

Երևանում սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը զգալի աշխատանք է տանում պրոֆմիություններ կազմակերպելու և բանվորներին միավորելու ուղղությամբ։ Չնայած դաշնակներն ու մյուս նացիոնալիստները ուժեղ դիմադրություն են ցույց տալիս բանվորների ինտերնացիոնալ միավորմանը, այնուամենայնիվ բոլշևիկներին հաջողվում է կազմակերպել մի շարք պրոֆմիութենական կազմակերպություններ և իրենց ձեռքը վերցնել դրանց ղեկավարությունը։

Պրոֆմիութենական կազմակերպություններ ստեղծվեցին Սարաջևի գործարանում, այգեգործ բանվորների, կաշեգործների, տրնային ծառայողների, քարգահների, զինագործների մեջ և այլ ձեռնարկություններում ու հիմնարկներում։ 1906 թ. Երևանում պրոֆմիութենական կազմակերպությունների թիվը 11-ից ավելի էր։

Աշխատավորների քաղաքական պայքարի վերելքի գործում խոշոր նշանակություն ունեցավ պետական I Դումայի ակտիվ բոյկոտի տակտիկան, որ հաջողությամբ կիրառեցին Երևանի բոլշևիկները։

Ընտրական կամպանիայի ընթացքում ժողովներում ու միտինգներում բոլշևիկները մերկացնում էին մենշևիկների օպորտունիզմը, հիմնավորում զինված ապստամբության միջոցով ցարական ինքնակալության տապալման անհրաժեշտությունը։

1906 թ. ապրիլի 16-ին ՌՍԴԲՊ Երևանի կազմակերպությունը քաղաքից դուրս մի այգում միտինգ է կազմակերպում, որտեղ դասախոսություններ են լսվում հայերեն և վրացերեն լեզուներով[2]։ Միտինգի մասնակիցները բոլորն էլ բանվորներ և արհեստավորներ էին։

---

[1] Տես Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, գ. 194, թ. 306։

[2] Տես «Կայծ», № 7, 1906։

Ինչպես այդ երևում է Երևանի նահանգապետի հաղորդագրությունից, 1906 թ. մայիսի 8-ին Երևան են ժամանում մի շարք ռևոլյուցիոն գործիչներ, որոնք ագիտացիոն լայն աշխատանք են ծավալում քաղաքի աշխատավորների մեջ ռևոլյուցիոն շարժումներն ուժեղացնելու և Պետական դումայի ընտրությունները տապալելու համար։ Փողոցներում ամենուրեք կախվում էին կարմիր դրոշակներ. ասոցիացիաները բռնի կերպով հավաքում և արգելում էր դրանք[1]։

Սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ծավալած աշխատանքի շնորհիվ ասոցիացիաներ ռևոլյուցիոն շարժման մեջ են ընդգրկվում աշխատավորության բոլոր խավերը, այդ թվում նաև արհեստավորները։ Վերջինները գտնվում էին ծանր վիճակում։ «Կոչ Երևանի բանվոր արհեստավորներին» հոդվածում, որ տպագրվել է «Կայծ» թերթում, նկարագրվում է արհեստավորների ծանր ու տանջալի դրությունը։ Թերթը կոչ է անում Երևանի աշխատավորներին՝ չարքաշ արհեստավոր բանվորներին, Ռուսաստանի մյուս քաղաքների աշխատավորների օրինակով պայքարի դուրս գալ ցարիզմի և բոլոր ճնշողների դեմ։ «Ձեզնից շատերին արդեն հայտնի կլինի,— գրում է հոդվածագիրը,— թե ուրիշ քաղաքներում ինչպես նստում է կյանքը արհեստավոր դասակարգի մեջ. ինչպես նրանք կարծես նոր քնից արթնացած, թոթափում են իրանց աչքերից թմբրության քունը և գիտակցության փրկարար ուժը յուրացրած, դասակարգային կռիվ են մղում այն բոլոր շահագործողների. կեղեքող տերերի դեմ, որոնք ձեզ նմաններին իրանց բուռը հավաքած, օրն ի բուն բանեցնում, տանջում են, բայց վարձատրում են այնքան, որ հազիվ թե մի կտոր չոր հացի դին ստանայիք»[2]։

Բանվոր արհեստավորները Երևանում ապրում էին տաժանակիր աշխատանքի, սովի ու հոմաճարակ հիվանդությունների թագավորության մեջ։ Սակայն ինչպես նկարագրում է բոլշևիկյան «Կայծ» թերթը, վարձու աշխատանքով ապրող այդ մարդիկ արյուն քրտինք էին թափում օրական աշխատելով 16 ժամ, դարձյալ քաղցած ու անօգնական էին մնում։

«Ձեր խաղեցին-վարպետները,— գրում է «Կայծ»-ը,— ձեզ վրա նայում են ինչպես ստրուկների վրա և բավական չէ, որ ամբողջ 16 ժամ բանեցնելուց և ձեզանով բավական օգտվելուց հետո,

---

[1] Տես Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, գ. 207, թ. 80։

[2] «Կայծ», № 33, 1906։

դեռ ասում են, թե «մենք վարձկրդեցին ենք բանեցնում...» Այսինքն ուզում են ասել, որ ձեզ դեռ խղճում և ողորմություն են անում, որ բանեցնում ու շահագործում են։ Նրանք ձեզ հայհոյում, ձեզ վրա բարկանում, բռնանում են, փոքրերին բավական հաճախ «դրսելուց» (ծեծելուց—Ծ. Ա..) հետո, ամբողջ տարիներ տանը «նոքարություն» են անել տալիս։ Ամեն տեսակ ստոր ծառայություններ են հարկադրում կատարել, ծառայել ուստի-կնոջն ու նրա երեխին. այդտեղ էլ նրան բավական իրավունքով հայհոյում են ու ամեն ժամանակ վրան փնթփնթում»[1]։

Վարպետ դառնալու համար աշխատավորների համար ստեղծված էր մի չտեսնված տաժանակիր աշխատանքի երկարատև ժամանակաշրջան։ Որևէ արհեստ սովորելու համար աշխատողը պետք է մի քանի տարի վարպետի տանը ծառայեր, կատարելով ամենադժվարին և սև աշխատանք։ Դրանից հետո միայն վարպետը թույլատրում էր աշակերտին խանութում աշխատել, արհեստ սովորելու համար։ Այստեղ էլ աշակերտին վեց տարի «տանջելուց հետո, արդեն մարդ համբերություն և տոկունություն պետք է ունենա դիմանալ և մի բան սովորել»[2]։ Վերջապես հազար ու մի տանջանքներ կրելուց հետո, ավելի քան տասը տարի առանց որևէ վարձատրության տաժանակիր աշխատանք կատարելով, ծեծ ուտելով ու ամեն տեսակ զրկանքներ կրելով հազիվ վարպետ է դառնում[3]։

Երևանի արհեստանոցների բանվորների պայմանները միանգամայն անմխիթարական էին։ Նրանք աշխատում էին խոնավ ու մութ խցերում, դեռևս ոչ տնակներում։ Բանվորների հետ տերերը վարվում էին ամենաանմարդավայել կերպով։ Ամեն մի չնչին սուիթով բանվորների վարձը կտրում էին, իսկ ցանկացած պահին էլ աշխատանքից հեռացնում, փողոց էին նետում, կամ ծեծում ու տանջանքի ենթարկում։ Բանվորների իրավունքները պաշտպանող որևէ օրենք կամ կանոնադրություն գոյություն չուներ. ամեն ինչ կախված էր տիրոջ քմահաճույքից։ Աշխատանքային օրվա տևողությունը ևս կախված էր տիրոջ կամքից. «...ո՛չ, հաշիվ կա, ո՛չ էլ որոշում, ուզենան մինչև ժամի 1-ն (գիշերվա—Ծ. Ա..) էլ կբանեցնեն»[4]։

Նկարագրելով բանվորների աշխատանքային պայմանները,

---

1 «Կայծ», № 33, 1906։

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում։

«Կայծ» թերթը նշում է, որ այդ խոնավ խոռոչներում անասունները անդամ չեն կարող ապրել. «իսկ դուք տարին տասներկու ամիս այդ տեղերից դուրս չեք գալիս,—գրում էր թերթը, դիմելով բանվորներին։— Աղքատությունից և սակավ վարձատրությունից, դուք ոչ լավ հագնում եք, ոչ լավ կերակրվում և ոչ էլ ձեր առողջության մասին կարողանում եք հոգ տանել»[1]։

Հիվանդության և դժբախտ պատահարների դեպքում արհեստավոր-բանվորները մնում էին միանգամայն անօգնական և ծանր վիճակում։ Նրանք որևէ նպաստ կամ օգնություն չէին ստանում։ «Կայծ» թերթը բանվորների կյանքից վերցրած, նրանց հուզող հարցերի օրինակներով ցույց էր տալիս նրանց ապրուստի ծանր պայմանները և վայրագ շահագործումը։ «Բայց ի՞նչ է լինում ձեր դրությունը, ասացեք խնդրեմ, երբ հիվանդանում եք,—գրում է «Կայծը»։— Ձեր օրավարձը կտրվում է թեկուզ մեկ օր բանելու չգնաց, դուք մնում եք անտեր, անճար, անկողնում ընկած, ոչ ոք հոգ չի տանում ձեր առողջության համար, բայց ի՞նչ կա մարդու համար աշխարհում ավելի թանկ բան, քան առողջությունը. և ահա այդ թանկագին բանն է, որ մարդիկ միշտ շահագործում են, և քանի տեղումը կա, ծծում են, իսկ երբ նա ուշնանում է և քայքայվում՝ ղզվանքով դեն են շպրտում, ինչպես մի անպետք առարկայի»[2]։

Բոլշևիկյան մամուլը բանվորների և բոլոր շահագործվողների կյանքից վերցրած կոնկրետ և համոզիչ օրինակներով ցույց էր տալիս նրանց ծանր վիճակը, շահագործողների դաժան կեղեքումներն ու հալածանքները, միաժամանակ նշելով այդ դրությունից դուրս գալու միջոցները։

Կոչ անելով բանվորներին միավորել իրենց ուժերը և պայքարի դուրս գալ բռնության դեմ, «Կայծը» գրում էր, որ գիտակից բանվորներն ու արհեստավորները արդեն «...ոտք են դրել քաղաքական կռվի ասպարեզը և մոնելով սոցիալ-դեմոկրատիայի դրոշի տակ, խիզախ կերպով կռիվ են մղում այն կառավարության դեմ, որն արդեն հովանավորում և պաշտպանում է բոլոր այդ տնտեսական, անհատական ու քաղաքացիական բռնությունները»[3]։ Հոդվածի վերջում թերթը բանվորներին կոչ է անում. «Սթափվեցեք, բավական է որքան քնեցիք «աղդասերների» թմրեցուցիչ «նեյնիմ»-ներով։ Առաջ անցեք, դուք ևս կազմակերպեցեք արհեստակցական միու-

---

1 «Կայծ», № 33, 1906։

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում։

թյուններ, պաշտպանեցեք ձեր շահերը և ձեր մարդկային իրավունքները»[1]։

«Կայծ» թերթը մանրամասն լուսաբանել է «Ռոսիյսկիե տավարիշչեստվո» (առևտրական ընկերության) գործակալության Երևանի բաժանմունքի բանվորների ու ծառայողների գործադուլը։ Այդ բաժանմունքի բանվորներն ու ծառայողները աշխատում էին առանց հերթափոխության՝ առավոտից մինչև գիշերվա ժամը 10—11-ը. աշխատում էին նույնիսկ կիրակի և տոն օրերին։ Բանվորները և ծառայողները «չկարողանալով այլևս տանել «ազգայիններին շարքերին» պատկանող գործակալի բիրտ վարմունքը»[2] 1906 թ. մայիսի 22-ին նրանց գործադուլ հայտարարեցին ու ներկայացրին իրենց պահանջները։

Գործադուլը ղեկավարում էին բոլշևիկները։ Բոլշևիկները մերկացնում էին դաշնակցության գործակալներին, որոնք ամեն ինչ գործ էին դնում հաշտվողական դիծ անցկացնելու, գործադուլը ձախողելու համար, որ սակայն նրանց չհաջողվեց։ Գործադուլավորների համառ ու միասնական պայքարի հետևանքով ընկերության վարչությունը ստիպված եղավ ընդունել բանվոր-ծառայողների 7 կետից բաղկացած պահանջները՝ նրանց տնտեսական դրությունը բարելավելու, աշխատանքի պայմանները լավացնելու, տերերի և չինովնիկների կամայականություններին ու բանվորների նկատմամբ տարած կոպիտ վերաբերմունքին վերջ տալու մասին։ Բոլշևիկյան «Կայծ» թերթը, դիմելով գործադուլավորներին գրում էր.

«Շնորհավորում ենք մեր ընկերների հաղթանակը, որ և հաղթանակն է ՌՍԴԲ կուս. տեղուս կազմակերպության, որ ղեկավարեց այդ գործադուլը»[3]։

Ծանր պայմաններում էին գտնվում նաև խանութների բանվորներն ու ծառայողները։ Կազմակերպված բողոքի ցույցերում և հավաքույթներում նրանք քննում էին իրենց տնտեսական ու քաղաքական դրությունը բարելավելու հարցերը և առևտրականներից պահանջում էին լավացնել իրենց վիճակը։ Նրանք աշխատում էին օրական 13 և ավելի ժամ և ստանում էին չնչին աշխատավարձ։ 1906 թ. մայիսի 17-ին Երևանի գործակատարները իրենց ընդհա-

---

[1] «Կայծ», № 33, 1906։

[2] «Կայծ», № 23, 1906 թ. հունիսի 4-ին։

[3] Նույն տեղում։

նուր ժողովում պահանջեցին կրճատել աշխատանքի ժամերը, կազմել միջնորդ դատարան վիճելի խնդիրները կանոնավորելու համար, որը պետք է կազմված լիներ երեք գործակատարից, երեք վաճառականից և մի չեզոք անձնավորությունից։ Նրանք պահանջում էին նաև աշխատավարձի բարձրացում, որի չափը թողնվում էր միջնորդ դատարանի հայեցողությանը։

Երևանում գործակատարները ստեղծել էին իրենց ընկերությունը, որը կազմակերպված կերպով պահանջներ էր ներկայացնում կապիտալիստ-առևտրականներին՝ բանվոր-ծառայողների դրությունը բարելավելու համար։ Վաճառականները դրան հակառակ ստեղծել էին վաճառականական ընկերություն։ Վերջինիս խնդիրն էր պաշտպանել վաճառականների շահերը ընդդեմ աշխատավորների։ «Կայծ» Ռերթի թղթակիցը այդ մասին գրում է. «Գործակատարությունն ինչպես ամեն տեղ, այնպես էլ Երևանում որպես աշխատավոր ու շահագործվող տարր, ամենևին հույս չպիտի դնի այդ բանակցությունների վրա։ Վաճառականության, իր «բարեգործությամբ», մեղ շպրտած փշրանքները մեղ բավարարություն տալ չեն կարող. գործակատարության համար պարզ պիտի լինի այն ճշմարտությունը, որ աղոն, եթե հնարավորություն ունենա, կլրկի իրան սեղանի փշրանքները վայելողին, ամենավերջին պաշարից անգամ, ամեն մի դասակարգային պահանջ բավարարություն է ստանում ճնշված դասակարգի առաջ բերած ուժեղ դասակարգային կռվով։ Գործակատարությունը իր դասակարգային կռիվը կանոնավոր առաջ տանելու և իր դասակարգային շահերը իրականապես պաշտպանելու համար, պիտի կազմակերպվի որպես մի դասակարգ, իր նման բոլոր ճնշվածների, աշխատավորների հետ և միայն իր ուժեղ դասակարգային կռվով կարողանա իր պահանջները կյանքի մեջ մտցնելու»[1]։

1906 թ. հուլիսի 23-ին ՌՍԴԲՊ Երևանի կազմակերպության նախաձեռնությամբ և ղեկավարությամբ Ուլուխանլու կայարանի մոտ տեղի է ունենում բանվորների ընդհանուր միտինգ։ Միտինգին մասնակցում էին Ուլուխանլուի երկաթուղայինները և Երևանից եկած բանվորները։ Այստեղ ռևոլյուցիոն ճառերով հանդես եկան բանվորները, ինչպես նաև բոլշևիկներ Մ. Միրաքյանը և Լ. Յաղուբյանը[2]։

---

[1] «Կայծ», № 19, 1906։

[2] Հին բոլշևիկ Լ. Յաղուբյանը (պարտիայի անդամ 1900 թ.) Պետերբուրգում 1905 թ. մասնակցել է «Արյունոտ կիրակի»-ի դեպքերին։ Նա այն ժամանակ աշխատում էր Պետերբուրգի Պուշկինյան տպարանում։ 1906 թ. պար-

Ալիխանովի բացատը միտինգի համար ընտրվել էր ոստիկանության հսկողությունից խուսափելու համար։ Սակայն դաշնակցական-պրովոկատորների դավաճանության հետևանքով միտինգի տեղը շուտով ոստիկանությանը հայտնի է դառնում։ Ոստիկանությունը զինված ուժերով ցրում է միտինգը, իսկ նրա ղեկավարներին ձերբակալում ու Երևանի բանտն է նետում[1]։

Միտինգի ղեկավար Մարտիրոս Միրաքյանը, որը հայտնի է ռևոլյուցիոն գործիչների շրջանում «Շանթ» անունով, աչքի ընկնող պարտիական գործիչ էր։ Նա այդ ժամանակ ՌՍԴԲՊ Կովկասյան Միության կողմից ամրացված էր Երևանի Կոմիտեին, որտեղ նա պարտիական ակտիվ աշխատանք էր ծավալել։ Մ. Միրաքյանը Սիմոն Տեր-Պետրոսյանի՝ Կամոյի մտերիմ ընկերներից էր և նրա նման համարձակ, մինչև վերջը պարտիայի գործին նվիրված կրակոտ բոլշևիկ։

1905 թ. սեպտեմբերի 11-ին Մարտիրոս Միրաքյանը ռևոլյուցիոն աշխատանքի համար բանտարկվում է, սակայն հոկտեմբերի 20-ին, համաձայն 1905 թ. հոկտեմբերի 17-ի մանիֆեստի, ազատ է արձակվում։ Այնուհետև Մ. Միրաքյանը որոշ ժամանակ ապրում է հայրենի Շուլավեր գյուղում, որտեղ գյուղացիների մեջ ագիտացիոն լայն աշխատանք է տանում և գաղտնի պարտիական բջիջ հիմնում։ Միրաքյանը Կովկասյան բոլշևիկյան կենտրոնի կողմից կարևոր հանձնարարություն է ստանում պարտիական անլեգալ գրականություն տեղափոխելու և այն Հայաստանի շրջաններում տարածելու մասին։ Կապվելով Ալեքսանդրոպոլի, Երևանի և մի շարք ուրիշ շրջանների պարտիական աշխատողների և նվիրված բանվորների հետ, Միրաքյանը մեծ եռանդով գործի է անցնում։ Ոստիկանությանը նա հայտնի էր դեռևս Բաթումից՝ 1902—1903 թթ. այնտեղ կատարած ռևոլյուցիոն գործունեության ժամանակից և միշտ գտնվում էր ոստիկանության խիստ հսկողության տակ։ 1906 թ. հունվարի 26-ին Ալեքսանդրոպոլ կայարանում ոստիկանությունը Միրաքյանին ձերբակալում է և հայտնաբերում նրա մոտ մեծ քանակությամբ պարտիական անլեգալ գրականություն՝ ռուսերեն, հայերեն և վրացերեն լեզուներով։ Այդ գրականությունը տպագրվել էր Թիֆլիսի Հավլաբարի գաղտնի տպարանում[2]։

Միրաքյանին Ալեքսանդրոպոլի բանտն են նետում։ Բայց նրան

տիայի կողմից ազատվում է Երևան և ընտրվում է ՌՍԴՊ Երևանի կոմիտեի անդամ (տես «Գրական թերթ», № 3, 1955)։

[1] Տես Վրաց. ՍՍՌ ԿՊԳԱ, ֆ. 23, գ. 289, թթ. 9—11։

[2] Մ. Միրաքյանը Հավլաբարի գաղտնի տպարանի հիմնադիրներից մեկն էր։

հաջողվում է կապ հաստատել Ալեքսանդրոպոլի ռևոլյուցիոն գործիչների հետ։ 1906 թ. փետրվարի 27-ին նա բանտից փախչում է[1]։ Ոստիկանության հետապնդումներից փրկվելու համար Միրաքյանը հանդես է գալիս Գրիգոր Ավագի Ստեփանյանց ծածկանունով։

Միրաքյանին հայտնաբերելու և ձերբակալելու ուղղությամբ ոստիկանության գործադրած բոլոր ջանքերը ապարդյուն են անցնում։

Թիֆլիսի դատաստանական պալատի դատախազի գործերից մեկում առանձնապես նշվում է Միրաքյանի գործի մասին։ Երևանի նահանգապետը բացատրություն է տալիս, որ Մ. Միրաքյանի գործի քննությունը սկսվել է 1906 թ. հունվարի 29-ին (նրա բանտարկությունից 3 օր հետո) և շտապ չի կատարվել, որովհետև այդ թույլ չի տվել նրա մոտ հայտնաբերված մեծ քանակությամբ անլեգալ գրականության ստուգումը։ Այստեղ էլ հենց նշվում է, որ Միրաքյանը բանտից փախել է։ Չնայած նրա փախուստին, գործի քննությունը շարունակվում է։ Երևանի նահանգապետը այդ մասին գրում էր. «1906 թ. օգոստոսի 17-ից № 145 գրությամբ կարգադրվում է Երևանի նահանգական ժանդարմական վարչության պետին միջոցներ ձեռնարկել արագորեն քննելու գրականությունը»[2] (խոսքը Միրաքյանից բռնագրավված անլեգալ գրականության մասին է)։

Սակայն նույն թվականի ամռանը՝ հուլիսի 23-ին, ինչպես նշեցինք այդ մասին, Ուլուխանլու կայարանի երկաթուղայինների ընդհանուր միտինգի ժամանակ, Մ. Միրաքյանը, որը գործում էր Գրիգոր Ավագի Ստեփանյանց ծածկանունով, նորից ձերբակալվում է։

Գրիգոր Ավագի Ստեփանյանցի (Մ. Միրաքյան) և Լևոն Յաղուբյանի մոտ խուզարկության ժամանակ հայտնաբերվեցին հայերեն անլեգալ գրականություն, բավական թվով պրոկլամացիաներ, բրոշյուրներ և թերթեր։

Մ. Միրաքյանը Ստեփանյանց անվան տակ Երևանի նահանգապետի կարգադրությամբ նորից բանտ է նետվում։ Այս անգամ նա նստում է Երևանի նահանգական բանտում։ Բայց այստեղից էլ մի ամսից հետո ռևոլյուցիոն մարտիկը դուրս է գրծնում և էլի նվիրվում ռևոլյուցիոն գործին[3]։

---

[1] ՏԵՍ Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, գ. 53, թ. 75։

[2] Նույն տեղում, ֆ. 114, գ. 210, թ. 5։

[3] Վրա են հասնում ռեակցիայի ծանր տարիները, երբ ամենուրեք վիճում էին ռևոլյուցիոնային խմբերը։ Մ. Միրաքյանը, կատարելով պարտիայի հանձնարարությունները, անցնում է ընդհատակյա աշխատանքի։ Հետագայում

1906 թ. օգոստոսի սկզբներին գործադուլ են հայտարարում Թիֆլիսի առևտրական բանկի Երևանի բաժանմունքի ծառայողները։ Նրանք ներկայացնում են հետևյալ պահանջները. աշխատավարձի բարձրացում 25 տոկոսով, միաժամանակ առաջարկվում էր, հաշվի առնելով աշխատավորների ստաժը, ամեն երեք տարին մի անգամ կրկին բարձրացնել աշխատավարձը, աշխատակիցներին ապահովել միամսյա արձակուրդով՝ պահպանելով աշխատավարձը, մի տարուց ոչ պակաս աշխատանքի ստաժ ունեցող աշխատողներին, գործից հեռացնելիս վճարել մի ամսվա աշխատավարձ։ Աշխատակիցներից որևէ մեկին աշխատանքից հեռացնելիս հաշվի առնել մյուս աշխատակիցների կարծիքը, աշխատակիցների բուժումը հիվանդանոցում կատարել բանկի հաշվին և այլն։

Գործադուլի կապակցությամբ Թիֆլիսից հրավիրված ներկայացուցչից պահանջեցին բավարարում տալ առաջադրված պահանջներին։ Աշխատողները, ստանալով բացասական պատասխան, օգոստոսի 21-ից աշխատանքը բոլորովին դադարեցնում են։ Բանկի վարչությունը ստիպված է լինում փակել բանկի Երևանի բաժանմունքը[1]։

Գործադուլը գլխավորում է սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը։ Դաշնակները պաշտպանելով դաշնակցական փայատերերի շահերը, ամեն կերպ աշխատում են վիժեցնել գործադուլը։ Բայց իզուր։ Այն տևում է 3 ամիս։ Գործադուլավորներին սպառնում էին բանտ նետել, իսկ բանկի բաժանմունքը բոլորովին

նորից ոստիկանության ճանկն է ընկնում և զինվորական դատարանի որոշմամբ ռևոլյուցիոն գործունեության համար 1909 թ. հունվարի 30-ին դատապարտվում է աքսորի։ Նա ցարական կառավարության կողմից մեղադրվում էր ՌՍԴԲՊ Կովկասյան կազմակերպության անդամ լինելու մեջ։

Սակայն բանտն ու աքսորը չեն կարողանում ընկճել Մ. Միրաքյանի կամքը, նրա հավատը դեպի բանվոր դասակարգի ապատության մեծ գործը։

Այս անդամ էլ փախչում է աքսորից և անլեգալ կերպով, գարձյալ ծածկանվան տակ ապրում է Հյուսիսային Կովկասում։

Ոստիկանությունը, երկար որոնումներից հետո միայն 1910 թ. սեպտեմբերի 5-ին կարողացավ նրան գտնել և նորից ձերբակալել։ Այս անդամ Մ. Միրաքյանը ռևոլյուցիոն աշխատանք էր տանում Կուբանի մարզի Կորենովսկի կայարանում, որտեղ նա ապրում էր անլեգալ կերպով՝ Խաչատուր Հովհաննեսի Հակոբյանց անվան տակ (տես Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 23, գ. 289, թ. 9—11)։

Երկար տարիներ ցարական կառավարության հալածանքներից հետո, Մ. Միրաքյանը, 1913 թ. Բաքվից Եկատերինոդար էտապով փոխադրելու ժամանակ ծանր հիվանդանում է և նույն թվականի դեկտեմբերի 24-ին մահանում։

[1] Տես Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 40, գ. 10, թ. 114։

փակել։ Միայն նոյեմբերին գործադուլավորները սպառնալիքի տակ ստիպված վերսկսում են աշխատանքը։

1906 թ. օգոստոսի 21-ին գործադուլ հայտարարեցին Երևանի արհեստանոցների ենթավարպետներն ու աշակերտները։ Տերերին ներկայացրած պահանջներում նրանք խնդիր էին դնում աշխատանքի օրվա տևողությունը կրճատել և աշխատանքը վերջացնել երեկոյան ժամը 9-ին, օրվա ընթացքում տալով 2 ժամյա ընդմիջում՝ ճաշելու և հանգստի համար, աշխատավարձը ավելացնել 20 տոկոսով, վերջ տալ տերերի կողմից աշակերտների և ենթավարպետների նկատմամբ անմարդավայել և կոպիտ վերաբերմունքին[1]։ Այդ պահանջները բավարարվում են և գործադուլավորները հաջորդ օրը աշխատանքը վերսկսում են։

1906 թ. սեպտեմբերի 4-ին գործադուլ են անում փականագործ և դարբին բանվորները։ Նրանք ներկայացնում են մի շարք պահանջներ, սակայն տերերը այն թողնում են անհետևանք։ Գործադուլը շարունակվում է 10 օր, որից հետո ստիպում են նրանց աշխատանքը վերսկսել։ Բայց Տեր-Ավետիքյան եղբայրների շուգունձուլող գործարանի բանվորները պայքարը շարունակում են մինչև սեպտեմբերի 18-ը։ Սակայն սրանց ևս ստիպում են աշխատանքի անցնել։ Այդ գործադուլի հենց սկզբում, սեպտեմբերի 4-ին, բանտեն նետվում բանվորների շահերի ակտիվ պաշտպաններ, գործադուլի ղեկավարներ Արշակ Հայրապետյանը ու Հարությունն և Գարեգին Բաղդադյանները[2]։

«Նոր խոսք» թերթի հաղորդմամբ, գործադուլ են հայտարարում Ա. Հակոբյանի տպարանի բանվորները, բայց դաշնակների ագիտացիայի հետևանքով բանվորների մի մասը, դավաճանելով ընկերներին, գործի է անցնում։ Գործադուլավորները իրենց զզվանքն էին արտահայտում դեպի թուլամորթները, «որոնք իրենց վարմունքով սովի մատնեցին մյուս ընկերներին, խանգարելով գործադուլը», իսկ բանվորների թշնամի դաշնակները օգնության հասան «գաղտնի խաղերին, բանվորների մեծամասնությանը փողոց շպրտելու...»[3]։

1906 թ. նոյեմբերի սկզբին գործադուլ են անում Սարաջևի գործարանի բանվորները։ Մի շաբաթ պայքարելուց հետո գործադուլավորները նորից վերսկսում են աշխատանքը, ստանալով չնչ-

---

1 Տես Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 40, գ. 10, թ. 114։

2 Տես Լենինգրադի ԿՊՊԱ, Ոստիկանական դեպարտամենտի ֆ, գ. 4, 1906։

3 «Նոր խոսք», № 13, 1906։

չին բավարարություն իրենց առաջադրած պահանջներին։ Նույն թվականի դեկտեմբերին գործադուլ են անում կաշվի գործարանի բանվորները, զինագործները, բաղնիսի աշխատողները, որոնք պայքարը շարունակում են 10—18 օր։ Տերերը ստիպված են լինում գործադուլավորների բոլոր պահանջները բավարարել։

1907 թ. հունվարի 27-ին ՌՍԴԲՊ Երևանի կոմիտեի ղեկավարությամբ կրկին գործադուլ են հայտարարում Սարաջևի գործարանի բանվորները։ Գործադուլը շարունակվում է մինչև փետրվարի 12-ը և ավարտվում բանվորների հաղթանակով[1]։

Չնայած վրա հասնող ռեակցիային, գործադուլային պայքարը շարունակվում է։ 1907 թ. մարտի սկզբին գործադուլ են հայտարարում բաղնիսի աշխատողները, որոնք աշխատանքի են անցնում միայն մարտի 28-ին՝ իրենց պահանջները բավարարվելուց հետո։

Նույն թվականի մարտ ամսին այդեղործ բանվորները հայտարարում են գործադուլ, որին մասնակցում են մոտ 100 հոգի։ Գործադուլավորները մարտի 25-ին հավաքվում են Երևանի «Ղարիբանոց» կոչվող հին դերեզմանատանը և քննարկում են իրենց դրությունը լավացնելու պահանջները։ Նրանք մեծամասնությամբ Նոր Բայազետից և Էջմիածնից եկած բատրակներ էին, որոնք աշխատելով այդիներում, օրական ստանում էին չնչին վարձատրություն, որը անգամ իրենց չէր բավարարում, իսկ գյուղում թողած ընտանիքները դատնվում էին սովահար վիճակում։ Այդ ժողովում նրանք որոշում են ընդունում՝ «գործադուլի միջոցով ստիպել այդետերերին ավելացնել օրավարձը»[2]։ Ոստիկանությունը հարձակվում է գործում գործադուլավորների վրա և ցրում նրանց ցույցը։ Սակայն այդետերերը ստիպված են լինում բավարարել գործադուլավորների պահանջները, աշխատավարձը օրական դարձնելով 25—60 կոպեկ[3]։

1907 թ. ապրիլի 17-ին գործադուլ են հայտարարում քաղաքի հրուշակեղենի բանվորները։

Կովկասի փոխարքայության ոստիկանության հատուկ բաժինը 1907 թ. օգոստոսի 8-ին հայտնում է, որ նույն թվականի հուլիսի սկզբներին Երևանի տպարանների բանվորների և կաղմարարների գործադուլը շարունակվում է։ Շահագործողների հետ համաձայնության են եկել միայն Տեր-Նիկողոսյանի արհեստանոցի բանվոր-

---

[1] Տես „Факты", № 2, 1907։

[2] Տես Լենինգրադի ԿՊՊԱ, Ոստիկանության դեպարտամենտի ֆ., գ. 4, 1907 թ.։

[3] Նույն տեղում։

ները։ Նրանք կնքել էին պայմանագիր, ըստ որի սահմանվում է 9 ժամյա բանվորական օր և 30 տոկոսով բարձրացվում է աշխատավարձը։ Ոստիկանության հաղորդագրության համաձայն հիմնարկատերերը ոչ միայն ցույց չեն տալիս դործադուլի նախաձեռնողներին և ղեկավարներին, «այլ անգամ մատադրված են... թաքցնել դործադուլի փաստը, վախենալով վրիժառությունից դործադուլավորների կողմից»[1]։

1907 թ. օգոստոսի 22-ին դործադուլ հայտարարեցին Երևանի ինժեներ Միրզոևի բաղաքային ձիաքարշի բանվորներն ու ծառայողները։ Դործադուլի հետևանքով ձիաքարշի երթևեկությունը կանգ է առնում։ Կոնցեսիոներ Միրզոևը պահանջում է բանտարկել դործադուլի ղեկավարներին և ըմբոստացողներին փոխարինել նոր բանվորներով։ Սակայն բանվորները շարունակում են դործադուլային պայքարը. այն տևում է մի քանի օր։ Պաշտպանելով դործադուլի ղեկավարներին, բանվորները թույլ չեն տալիս նրանց բանտարկելու[2]։ Բանվորները հասկացել էին, որ հակիճանակի դրությունը իրենց հետևողական և միավորված պայքարի մեջ է։

Գնալով ուժեղանում էին ցարական սահմանադրությունների հնչումները և հալածանքները։ Ռևոլյուցիոն մասսաների դեմ միավորվում էին ռեակցիայի սև ուժերը։ Երևանի նահանգի գավառներում ու առանձին տեղամասերում ոստիկանության և ժանդարմական չինովնիկների քանակը ղգալի չափով ավելացվում է[3]։ Սահմանադրությունային այդ հորդաները դաղանային դատաստան էին տեսնում առաջավոր բանվորների ու դյուղացիների նկատմամբ։ Նրանք հետապնդում էին ռևոլյուցիոն շարժումները, դաժանորեն պատժում նրանց ղեկավարներին ու մասնակիցներին։

Բայց մոլեգնող ռեակցիան չընկճեց Երևանի աշխատավոր մասսաների ռևոլյուցիոն ոգին։ Քաղաքի բոլշևիկյան կազմակերպության ղեկավարությամբ, որի հիմքը դրել էր Սա. Շահումյանը, նրանք նախապատրաստվում էին դալիք վճռական մարտերին։

---

[1] ՍՄԿՊ ԿԿ կից ՄԷԼՍԻ-ի Վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 2, գ. 112, թ. 100։

[2] Նույն տեղում, թ. 102։

[3] Տես Վրաց. ՍՍՌ ԿՊՊՍ, ֆ. 1, գ. 194, թ.թ. 77—78։

4. ՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԿԱՐՍԻ ՄԱՐԶՈՒՄ

Ռևոլյուցիոն շարժումները, մասնավորապես բանվորական գործադուլները, Կարսում սկսվում են դեռևս 1903 թ.։ Նույն թվականի հունվարի 9-ին Կարսի արհեստավորները՝ դարբինները, հյուսները, կոշկակարները և ուրիշները մոտ 60 հոգի, գործադուլ են անում և հրաժարվում աշխատանքը շարունակել։ Ցափաղանց ծանր էր այդ արհեստավորների վիճակը։ Նրանք աշխատում էին լուսաբացից մինչև ուշ գիշեր, ապրում էին տնտեսական ծայրաստեղ ծանր պայմաններում։ Համաձայն պայմանագրի, որ կնքվում էր տերերի և բանվորների միջև մեկ տարի ժամանակով, տերերը պարտավոր էին կերակրել բանվորներին։ Բայց բանվորները բացի չոր հացից և մի կտոր պանրից, ոչինչ չէին ստանում։ Արհեստավորների գործադուլը շարունակվում է երեք օր և վերջանում նրանց պահանջների մասնակի բավարարումով։ Կնքվում է պայմանագիր, ըստ որի աշխատանքը պետք է սկսվեր առավոտյան ժամը 5-ին և վերջանար երեկոյան ժամը 8-ին[1]։

Այդ պայմանագրի կետերը, սակայն, միշտ էլ տերերի կողմից խախտվում էին։ Շատ հաճախ նրանք ստիպում էին ենթավարպետներին և աշակերտներին աշխատել լուսաբացից մինչև ուշ գիշեր։

Կային բազմաթիվ մանր արհեստանոցներ, որտեղ աշխատող բանվորների և ծառայողների աշխատանքը ոչ մի օրենքով չէր կարգավորվում։ Բանվորներն աշխատում էին 14—16 ժամ, իսկ որոշ տեղեր աշխատանքային օրը հասնում էր մինչև 18 ժամի։ Թե՛ աշխատանքի ժամաքանակը և թե՛ աշխատավարձի չափը ամբողջովին կախված էր տիրոջ քմահաճույքից։

Այս փոքր հիմնարկների բանվորների կացությունը շատ թույլ էր։ Այլ էր բանը խոշոր արդյունաբերական կենտրոններում, որտեղ բանվոր դասակարգը համախմբված էր մեծ մասսաներով, ստեղծում էր իր հասարակական, կուլտուրական և պարտիական կազմակերպությունները և միացյալ ուժերով պաշտպանում էր իր շահերը։

Աղետալի էր Կարսի մարզի աղահանքերում աշխատող բանվորների վիճակը։ Այդտեղ աշխատող բանվորների գերակշռող մասը XIX դ. վերջին Թյուրքիայից ներգաղթած գյուղացիներ էին։

---

[1] *Տես Լենինգրադի ԿՊՊԱ. ստիկանական դեպարտամենտի ֆոնդը. գ. 1 1903։*

նրանք հող չէին ստացել և իրենց գոյությունը պահպանում էին վարձու աշխատանքի միջոցով։

Հողազուրկ գյուղացիները ստիպված էին վարձու աշխատանքի գնալու Կովկասի խոշոր արդյունաբերական կենտրոնները։ Սակայն, դրա համար նույնիսկ ցարական կառավարությունը մեծ դժվարություններ էր ստեղծում։ Ներգաղթած գյուղացիներին անցագիր չէր տրվում, նրանք ամենուրեք ենթարկվում էին հետապնդման։ Այդ իսկ պատճառով հիշյալ գյուղացիները ստիպված էին ավելի ծանր պայմաններով աշխատել Կարսի արհեստանոցներում և Կաղզվանի և Օլթիի աղահանքերում։ Այդ աղահանքերի կապալառուներ Ջանփոլադովները մեծ քանակությամբ բանվորական ուժ էին աշխատեցնում աղահանքերում։ Նրանց ձեռքին էր գտնվում նաև Նախիջևանի աղահանքերը։ Բավական է ասել, որ նրանց արտադրած աղի չափը տարեկան հասնում էր 2.604.969 փթի [1]։ Աղի արտադրության այդպիսի քանակը ինքնըստինքյան ցույց է տալիս, որ աղահանքերում բավական մեծ թվով բանվորական ուժ էր աշխատում։

Աղահանքերում աշխատանքը կատարվում էր ամբողջովին ձեռքի ուժով, ամենապրիմիտիվ գործիքներով։ Տեխնիկայի գործադրություն իսպառ բացակայում էր։ Սակայն ֆիզիկական այդ ծանր աշխատանքի դիմաց բանվորներն ստանում էին բոլորովին չնչին աշխատավարձ։ Գործազուրկների մեծ քանակի առկայությունը հանքատեր կապիտալիստներին հնարավորություն էր տալիս բանվորներին շահագործել ամենաչնչին աշխատավարձով։

Նրանք աշխատում էին լույսը բացվելուց մինչև մութն ընկնելը։ Կապիտալիստի և բանվորների փոխհարաբերությունը որևէ օրենքով կարգավորված չէր. ամբողջովին բացակայում էր բանվորների շահերը պաշտպանող որևէ օրենսդրություն։ Բանվորներն ամիսներով աշխատավարձ չէին ստանում. սովորաբար նրանց հասնող չնչին կոպեկները տրվում էին 3 ամիսը կամ 6 ամիսը մեկ անգամ։

Բանվորների կուլտուրական ու կենցաղային պայմանները բարելավելու համար ոչ մի միջոց ձեռք չէր առնվում։ Աղահանքերում բանվորների համար ապրելու ոչ մի հնարավորություն չէր ստեղծված։ Տարվա տաք եղանակին գիշերում էին աղահանքերում տաղավայա, իսկ ցուրտ եղանակին վերադառնում էին իրենց գյուղե-

---

[1] Տե՛ս „Кавказский календарь", 1905։

ը դիշերելու, ամեն օր անցնելով բավական հեռավոր տարածություն։ Բանվորների համար չտեսնված պատուհաս էին կապիտալիստների կողմից նշանակված վերակացուներն ու կառավարիչները։ Նրանք ծեծում էին բանվորներին, նրանց ենթարկում էին զանազան տանջանքների։ Բանվորները գյուղից գալու ժամանակ պետք է նրանց համար նվեր բերեին եփած հավ, խմիչք կամ որևէ ուրիշ «փեշքեշ»։ Իսկ աշխատավարձ ստանալու ժամանակ, բացի տարբեր տեսակի տուգանքներ վճարելուց, բանվորները պետք է վերակացուին հատուկ բաժին հատկացնեին։ Հակառակ դեպքում վերակացուն կղայրանար և բանվորին կզրկեր աշխատանքից ու ապրուստի միջոցից։

Հաճախ տաժանակիր աշխատանքում իրենց կյանքն էին մաշում դեռահաս պատանիները։

1905 թ. ռևոլյուցիոն շարժումները լայն արձագանք են գտնում նաև Կարսի մարզում՝ երկաթուղայինների մեջ, զինվորական մասերում և գյուղական շրջաններում։

1905 թ. փետրվարի 17-ի պաշտոնական հաղորդագրության մեջ հայտնվում է հակապետական ռևոլյուցիոն կոչերի տարածման մասին Ռուսաստանի բազմաթիվ շրջաններում, այդ թվում նաև Կարսում[1]։

Նույն թվականի մարտին բոլշևիկյան «Վպերիոդ» թերթը հաղորդում էր, որ բանվորական և գյուղացիական շարժումներն ուժգնություն են ստացել Անդրկովկասի բազմաթիվ գավառներում, ինչպես նաև Հայաստանի և առանձնապես Կարսի մարզի սահմանամերձ շրջաններում[2]։

Այն փաստը, որ ռուսական առաջին ռևոլյուցիայի հզոր ալիքը ընդգրկել էր Ռուսաստանի այնպիսի հեռավոր ծայրամասը, ինչպիսին Կարսի մարզն էր, ինքնին ցույց է տալիս այն խոշոր նշանակությունը, որ ուներ այդ ռևոլյուցիան մեր երկրի բոլոր ժողովուրդների համար։ Ռևոլյուցիան փաստորեն կյանքի կոչեց քաղաքական կյանքից կտրված, սահմանափակ կյանքով ապրող բոլոր ժողովուրդներին և ռուսական պրոլետարիատի քաղաքական պայքարի խնդիրները դարձրեց բոլոր ճնշված ժողովուրդների կենսական հարցը, նրանց պայքարի դրոշը։ Այդ տեսակետից ռուսական ռևոլյուցիան ցարիզմի գաղութային ճնշման տակ տառապող ծայրա-

---

[1] „Начало первой русской революции" (Сб. документов и материалов), , Москва, 1955, стр. 726

[2] Տես „Вперед", № 11, 1905.

մասերի ժողովուրդների համար խոշորագույն նշանակություն ունեցավ։

Չնայած ցարական կառավարության բոլոր մեքենայություններին, շուտով ժողովրդական մասսաների և ամենահետամնաց խավերի համար անդամ պարզ է դառնում 1905 թ. հոկտեմբերի 17-ի մանիֆեստի կեղծ ու խարեբայական ողջ էությունը[1]։ Այդ մանիֆեստի կապակցությամբ Կարսի բանտից 1905 թ. հոկտեմբերի 20-ին ազատվել էին քաղաքական 32 բանտարկյալներ, որոնց թվում 8 կին։ Նրանք Բաքվի հերոս բանվորներից էին, որոնք ռևոլյուցիոն գործունեության համար աքսորվել էին Կարս։

1905 թ. սեպտեմբերի սկզբներին, երբ Բաքվում շարունակվում էր ընդհանուր գործադուլը, նավթարդյունաբերողների պահանջով քաղաքապետ Շուրինսկին թույլատրեց հրավիրել նավթահորերի բանվորների և ձեռնարկատերերի ժողով՝ գործադուլի հարցը քննարկելու համար։ Այդ նույն ժամանակ Բաքու էր ժամանել պարտիայի Կենտկոմի անդամ Մ. Լյադովը, որի հետ խորհրդակցելով՝ բանվորները որոշել էին օգտագործել ամիթը և շարունակել գործադուլը։

1905 թ. սեպտեմբերի 11-ին Բիբի—Էյբատի նավթահորերի մոտ, հրապարակում բանվորները հավաքվում են, բայց ձեռնարկատերերը չեն ներկայանում։ Բանվորները Ս. Ջափարիձեի ղեկավարությամբ էլեկտրակայանի մոտ գտնվող մի բնակարանում անց են կացնում իրենց ժողովը, որտեղ լսում են Լյադովի զեկուցումը Կենտրոնական Ռուսաստանում տիրող դրության մասին։ Զեկուցումից հետո հանդես են գալիս մի շարք բանվորներ։ Որոշում է ընդունվում գործադուլային պայքարը շարունակելու մասին։ Բայց ժողովականներին շրջապատում են զորքերով և ոստիկանության խմբերով։ Խուժելով ներս, ժանդարմները հայտարարում են, որ բոլոր ներկա գտնվողները ձերբակալված են։ Սկսվում է անզեն բանվորների և ռևոլյուցիոն գործիչների խուզարկությունը և ապա ցուցակագրումը։ Բանվորների մի մասին հաջողվում է անհետանալ։ Ընդամենը ձերբակալում և բանտարկում են 61 հոգու։

Ցարական կառավարությունը իմանալով, որ բանտարկվածնե-

---

[1] Անդամ բուրժուական մամուլի որոշ օրգաններ հետագայում սկսում էին համոզվել, որ այդ խարեբայություն էր, քանի որ շուտով խոսքի, մամուլի ազատությունը չեղյալ հայտարարվեց։ «Մուրճը» հոկտեմբերի 17-ի մանիֆեստի մասին այսպիսի բնորոշում է տալիս—«Լեռը մուկ ծնեց» («Մուրճ», № 12, 1905, էջ 225)։

րի թվումն են ՌՍԴԲՊ Բաքվի կազմակերպության գեկավարները, որոշում է ընդունում նրանց Բաքվից հեռավոր վայրեր աքսորելու մասին։ Բանվորները, սակայն, ձեռք են առնում բոլոր միջոցները պարտիական գեկավար աշխատողներին բանտից դուրս բերելու համար։ Այսպես, կաշառելով բանտապետին, բանվորները փախցրին Մարտին Լյադովին, նրա փոխարեն տալով բանվոր Լեֆասին։ Նույն կարգով՝ նախապատրաստվում էր Ա. Ջափարիձեի աղատությունը[1]։ Սեպտեմբերի վերջին քաղաքական գործիչների մի խումբ՝ 32 հոգու աքսորեցին Կարս։ Նրանց հետ պետք է Կարս աքսորվեր նաև Ալյոշա Ջափարիձեն, սակայն բոլշևիկներին հաջողվում է բանվորների օգնությամբ նրան աղատել աքսորվելու վտանգից։ Ա. Ջափարիձեի փոխարեն ռևոլյուցիոն գործիչները ներկայացրին Գեորգի Գեորգոբիանիին։

Կարս աքսորված քաղաքական գործիչների մեջ կային նաև կանայք։ Առաջին իսկ օրը, երբ բանտ այցելեցին Կարսի ժանդարմական վարչության պետը, ոստիկանապետը, դատախազը և այլ չինովնիկներ, քաղաքական գործիչները ներկայացրին մի շարք պահանջներ՝ առաջարկելով ի կատար ածել դրանք։

Չինովնիկները, զարմացած այդպիսի համարձակությունից, պատասխանեցին, որ բանտարկյալները երևի ծանոթ չեն բանտային ռեժիմի հետ։ Քաղաքական գործիչները պատասխանեցին «...մեզնից մի քանիսը ծանոթ են Ռուսաստանի շատ բանտերի կարգի և ռեժիմի հետ և որ մենք պայքար ենք մղում հենց գոյություն ունեցող կարգերի փոփոխման համար ընդհանրապես և բանտային կարգերի՝ մասնավորապես»[2]։

Տեղական չինովնիկները համոզվեցին, որ գործ ունեն ոչ թե սովորական բանտարկյալների հետ, այլ քաղաքական պայքարում կոփված ռևոլյուցիոն մարտիկների հետ։ Բանտապետը ստիպված եղավ բավարարել քաղաքական գործիչների պահանջները։

Ամեն օր ռևոլյուցիոն գործիչները բարձրաձայն երգում էին ռևոլյուցիոն խմբային երգեր, որը մեծ տպավորություն էր թողնում քաղաքի բնակչության վրա։ Ցարական չինովնիկները ստիպված էին հաշտվել այդ դրության հետ։ Վերջապես հոկտեմբերի

---

[1] Մի շարք հոդվածներում գոյություն ունեցող այն կարծիքը, թե Ա. Ջափարիձեն Բաքվի մյուս քաղաքական գործիչների հետ միասին աքսորվել է Կարս, իրականությանը չի համապատասխանում (Տես Ս. Ալիքյուևի հուշերը և մի շարք ուրիշ փաստաթղթեր)։

[2] Տես С. Аллилуев, Пройденный путь, 1946, стр. 143.

17-ի մանիֆեստի համաձայն աքսորականները ազատ են արձակվում[1]։

Բանտից դուրս գալով, ռևոլյուցիոն գործիչները, որոնց թվում Ս. Ալիլուևը, Լեֆասը, Գ. Գեորգոբիանին, Մ. Բագրաձեն, Ա. Խումարյանը և մյուսները անմիջապես գործի անցան. նրանք խմբերով ցրվեցին ամբողջ քաղաքով մեկ, որպեսզի արագ և ճիշտ կերպով ուսումնասիրեն մասսաների տրամադրությունը։ Կարսը այդ ժամանակ խոշոր ամրոց էր, ուր գտնվում էին բազմաթիվ զինվորական մասեր։ Քաղաքում զգալի թիվ էին կազմում բանվորներն ու արհեստավորները։ Այստեղ բավական բարձր էր մասսաների ռևոլյուցիոն տրամադրությունը։ Օգտվելով դրանից, ռևոլյուցիոն գործիչները տեղի սոցիալ-դեմոկրատների հետ հոկտեմբերի 21-ին կազմակերպեցին միտինգ, որտեղ հանդես եկան ճառերով։

Բաքվի ռևոլյուցիոներները, տեղական սոցիալ-դեմոկրատների հետ միասին, դիշերը մեծ քանակությամբ ռևոլյուցիոն թերթիկներ են տպագրում ռուսերեն և հայերեն լեզուներով, ապա դրանք տարածում կայազորի զորամասերի և քաղաքի բնակչության մեջ։ Մյուս օրը՝ հոկտեմբերի 22-ի առավոտյան, քաղաքական գործիչները նորից խմբերով ցրվեցին քաղաքում՝ մասսաների մեջ ագիտացիոն աշխատանք տանելու, պայմանավորվելով որոշյալ ժամին հավաքվել քաղաքային այգում։ Հին Բոլշևիկ Ս. Ալիլուևը այդ մասին գրում է, որ իրենք նպատակ էին դրել ծանոթանալ «տեղական բնակչության, արհեստավորների, ինտելիգենցիայի, սովորող երիտասարդության և առանձնապես կայազորի զինվորների հետ. մոտենում էինք արհեստանոցները, սրճարանները, թեյարանները։ Զրուցելով զինվորների հետ, մենք իմացանք, որ մի շարք զինվորական մասերում տեղի են ունեցել կոնֆլիկտներ շարքայինների և հրամանատարների միջև, որը հասել է լուրջ ընդհարումների»[2]։

Հոկտեմբերի 22-ին Բաքվի ռևոլյուցիոն գործիչները որոշված ժամին հավաքվում են քաղաքային այգի։ Բոլոր կողմերից նրանց ողջունում են քաղաքի աշխատավորները և մեծ խմբերով հավաքվում նրանց շուրջը։ Այստեղ են գալիս մեծ քանակությամբ զինվորներ, սովորող երիտասարդներ, քաղաքի արհեստավորներ, բանվորներ, հիմնարկների ծառայողներ, կանայք և երեխաներ։ Միտինգը բացելով, առաջինը ելույթ է ունենում տեղական ինտելիգենցիայից

---

[1] Տես Ս. Ալիլուև, Նշված հիշողությունները, էջ 143։

[2] Նույն տեղում, էջ 145։

մի սոցիալ-դեմոկրատ, որից հետո խոսքը տրվում է Բաքվի ռևոլյուցիոն գործիչներին (Ս. Ալիլուևին և մյուսներին)։ Ճառախոսները մերկացնում էին ցարական ինքնակալությանը և կոչ անում չհավատալ նրա տված սուտ խոստումներին։ Միտինգի մասնակիցները որոշեցին հաջորդ օրը նույնպես հավաքվել։

Ոստիկանապետի՝ մասսային ցրելու և ռևոլյուցիոն գործիչներին կղզիացնելու նպատակով գործադրած միջոցները ապարդյուն են անցնում։ Միտինգի մասնակիցները ողջունում են Բաքվի քաղաքական գործիչներին։ Նրանց լոզունգներն էին «Կորչի՛ արյունոտ ցարը», «Կեցցե՛ դեմոկրատական ռեսպուբլիկան» և այլն։ Վերջում միտինգի մասնակիցները կարմիր դրոշ պարզած երգելով և մասսայի մեջ պրոկլամացիաներ բաժանելով՝ շարժվում են փողոցներով[1]։ Կարսի աշխատավորները ցույց են տալիս իրենց ատելությունը դեպի ցարական արյունոտ կարգերը, դեպի հոկտեմբերի 17-ի կեղծ և մասսաներին խաբելու համար հորինած մանիֆեստը։

Երթի ժամանակ լայն չափով տարածվում և ձեռքից ձեռք էին անցնում բոլշևիկյան պրոկլամացիաները։ Դրանցից մեկում գրված էր «Կորչի՛ ցարական կոնստիտուցիան, կորչի՛ ցարական մանիֆեստը, Պետական դուման, կեցցե՛ հաղթական ռևոլյուցիան և Սահմանադիր ժողովը»[2]։

Կարսի բոլշևիկների կազմակերպված քաղաքական այդ ցույցը ռևոլյուցիոն ակտիվություն ստեղծեց ամբողջ քաղաքում, երկաթգծում, ինչպես նաև շրջակա գյուղերում։ Ոստիկանությունը գլուխը կորցրած հաղորդում է, որ «Բաքվի քաղաքական» գործիչները ռևոլյուցիոն ակտիվ աշխատանք են ծավալել, որոնց ներկայությունը մեծ տպավորություն է թողնում մասսաների վրա, ժողովրդի տրամադրությունը տագնապային է»[3]։ Ոստիկանությունը վախենում էր ձեռք տալ ռևոլյուցիոն գործիչներին, քանի որ դա մեծ չափով կգրգռեր ժողովրդին և քաղաքական նոր ելույթի առիթ կտար։

Նա գործադրում էր բոլոր միջոցները, ռևոլյուցիոն գործիչներին քաղաքից հնարավորին չափ շուտ դուրս հանելու և Բաքու ճանապարհելու համար։

Քաղաքում ստեղծվում է լարված դրություն։ Հաջորդ օրը առավոտյան ամբողջ քաղաքով մեկ ժանդարմների հեծյալ խմբերը

---

1 Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, գ. 33, թ. 251։

2 Նույն տեղում, թ. 290։

3 Նույն տեղում, թ. 267։

ոլոր կետերում խիստ հսկողություն են սահմանում։ Սակայն քաղաքի աշխատավորները խումբ-խումբ գալիս են դեպի քաղաքային այգին։ Շուտով այստեղ են գալիս նաև Բաքվի ռևոլյուցիոն գործիչները։ Նրանց երևալը մեծ ոգևորություն է առաջացնում։ Սկսվում է բազմամարդ դեմոնստրացիան, շատերը հանդես են գալիս քաղաքական ճառերով։ Կարսի նահանգապետը քաղաքական գործիչների զեկավարներից մեկին՝ Լեֆասին մոտենալով, փորձում է խորամանկությամբ համոզել նրան, որ վերջինս ազդի իր ընկերների վրա, որպեսզի նրանք «զգույշ լինեն իրենց ճառերում։— Այդ մանիֆեստը նրա համար չի հրատարակված, որպեսզի վերջին խոսքերով հայհոյեք ցարի ընտանիքին»[1], ասում է նահանգապետը։ Նա Լեֆասից խորհուրդ է հարցնում, թե ինչ կարող է նա անել, Լեֆասը նայելով զլուխը կորցրած նահանգապետին, հեգնանքով պատասխանում է, որ նրա դրությունը «ծանր» է. «хуже губернаторского»։ Դուք չեք դա բարձր իշխանությանը —դատի կդնաս, դուք չեք դա ռևոլյուցիոներներին—ինչ լավ բան, будешь болтаться на фонаре»[2]։

Ապա նահանգապետը, իր զայրագին դժգոհությունը արտահայտելով Բաքվի նահանգապետի հասցեին, վրդովված բողոքում էր, որ վերջինս ռևոլյուցիոն գործիչներին «իր քաղաքն» է թողել և իրեն դժվարին կացության մեջ դրել։

Խաղաղ ցույցը շարունակվում էր, երբ հանկարծ երևացին քաղաքի տարբեր մասերից դեպի ժողովրդական միտինգը շարժվող զորամասերի հեծյալ ուժերը, ժանդարմական և ոստիկանության զինված խմբերը։ Գաղտագող ոստիկանությունը ցանկացավ ցրել ցույցը, սակայն մասսան դիմադրեց նրան, պատասխանելով. «Հոկտեմբերի 17-ի մանիֆեստով բոլորին այժմ տրված է խոսքի, ժողովների, միությունների ազատություն և անձի անձեռնմխելիության իրավունք...»[3]։

Զորքը և ոստիկանները շղթա կազմելով, շրջապատում են ցուցարարներին և նրանցից մի մեծ խմբի, որոնց մեջ էին դեմոնստրացիայի զեկավարները և Բաքվի ռևոլյուցիոն գործիչները, զենքի ուժով նրից քշում են բանտ։ Այդ բռնությունը մեծ զայրույթ է առաջացնում Կարսի աշխատավորների մեջ։ Ռևոլյուցիոն տրամադրություններով տարված տեղական հայ երիտասարդությունը,—

---

[1] Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, գ. 33, թ. 267։
[2] Ս. Ալիլուև, Նշված հիշողությունները, էջ 147։
[3] Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, գ, 33, թ. 990։

գրում է Ս. Ալիլուևը,— պատրաստ էր գենքը ձեռքին թույլ չտալ մեր բանտարկությունը, որի մասին տեղյակ դարձրեց մեզ։ Մենք մերժեցինք երիտասարդության այդ ծայրահեղ առաջարկը և շարժվեցինք դեպի մեր հյուրընկալ բանտը...»[1]։

Ամբողջ աշխատավորությունը մեծ ամբոխով շարժվում էր քաղաքական գործիչների ետևից։ Երիտասարդներն ու երեխաները շվայնում և ծաղր ու ծանակի էին ենթարկում ցարական ոստիկաններին, զինվորների շղթայի արանքով ներս էին վազում ու խառնվում ռևոլյուցիոն գործիչներին, չէին ուզում բաժանվել նրանցից։ Երբ արդեն մոտենում էին բանտին, հանկարծ ամեն կողմից ձայներ լսվեցին՝ «հրամանատարն ընկավ, հրամանատարը սատկեց»։ Հետո պարզվեց, որ բերդի պարետը մեծ դժվարությամբ էր զորը հանել ցուցարարների վրա։ Բոլորը հրաժարվել էին այդ ստոր գործից և միայն մեկն էր գտնվել, որ իր զինվորներին մեծ դժվարությամբ դուրս էր բերել մասսայական միտինգը ցրելու համար։ Այնուամենայնիվ այդ զինվորները հրաժարվում են կրակ բացել ժողովրդի վրա, որը անչափ գազազեցրեց հրամանատարին։ Եվ ահա այդ չարագործը զգալով իրեն անզոր և հեղինակազրկված, ընկավ ձիուց և սրտի պայթյունից մահացավ։

Երբ ձերբակալվածներին հասցրին բանտ, պարզվեց, որ նրանց թիվը 60-ից ավել է։

Ցարական սատրապները վախենալով ընդհանուր շարժումից, շտապեցին ազատել բանտից կարսեցիներին, որպեսզի հետո հաշիվ տեսնեն Բաքվի քաղաքական գործիչների հետ։ Սակայն կարսեցիները հասկանալով այդ չարամտությունը, հրաժարվում են բանտից դուրս գալ՝ «պահանջելով նրանց հետ միաժամանակ ազատել նաև Բաքվի ռևոլյուցիոներներին»[2]։ Երեք օր 58 հոգի մնում են բանտում, որոնցից 7-ը կին էին։ Ոստիկանական հաղորդագրությունը հայտնում է, որ երբ ցուցարարներին քշում էին դեպի բանտ, մասսան ոգևորված «ուռա» էր գոչում և ոգևորում ռևոլյուցիոն գործիչներին։ Կարսի ոստիկանապետը Կովկասի ոստիկանության վարչությանը շտապ զեկուցագիր ուղարկելով, նշում է, որ «Բաքվի ապիտատորների շնորհիվ դրությունը քաղաքում դարձել է սադնապային»[3]։ Իսկ Կարսի նահանգապետ Սամոյլովը 1905 թ. հոկտեմբերի 25-ի իր հաղորդագրության մեջ գրում է, թե «Կարսում ժողովրդի տրամա-

---

[1] Ս. Ալիլուև, Նշված հիշողությունները, էջ 148։

[2] Վրաց. ՍՍՌ ԿՊԿԱ, ֆ. 1, գ. 33, թ. 290։

[3] Նույն տեղում, թ. 297։

դրությունը անչափ լարված է շնորհիվ Բաքվի 32 քաղաքական աքսորյալների ագիտացիայի»[1]։

Տեղական իշխանությունը Կովկասի փոխարքայության դատական պալատի դատախազից հարցում է անում բանտարկյալների նկատմամբ պատժի չափի կիրառման մասին[2]։ Սակայն վախենալով ժողովրդական հուզումների նոր ալիքից, ստիպված է լինում նրանց ազատ արձակել։ Նրանք բանտից պետք է ազատվեին ժամը 5-ին, դրա համար էլ բանտարկյալները նախապես հրաժեշտի ճաշ էին պատվիրել քաղաքում՝ Կարսի ռևոլյուցիոներների հետ հանդիպելու նպատակով։ Սակայն շուտ վ նրանց հայտնում են, որ բանտից կարձակեն միայն գիշերվա ժամը 11-ին։ Այդ հանգամանքը խիստ վրդովեցնում է բանտարկյալներին։ Նրանց հետ բանտարկված կարսեցի երիտասարդները առաջարկեցին ապստամբություն բարձրացնել, եթե ժամը 5-ին նրանց ազատ չարձակեն։ Ժամը 4 անց 50 րոպեին Ս. Ալիլուևը ապստամբության նշան տվեց և բոլորը միասին մեծ աղմուկ-աղաղակով սկսեցին ջարդել բանտի պատուհանները, դռները և մյուս իրերը։ Մի քանի րոպեից բանտը շրջապատված էր զինվորներով, բայց արդեն ուշ էր, ամեն ինչ կատարված էր։ Շուտով ներկայացան նաև նահանգական վարչության չինովնիկները և նահանգապետի անունից հայտարարեցին, որ նրանք բանտից ազատ են արձակվում։

Կարսի աշխատավորները չտեսնված ջերմությամբ ճանապարհեցին իրենց բարեկամ ռևոլյուցիոն գործիչներին։ Նրանց ճանապարհ գցելու համար մեծ բազմություն էր հավաքվել կայարանում, որոնցից շատերը նվերներ էին բերել ռևոլյուցիայի մարտիկներին։ Իսկ ամենաթանկարժեքը Կարսի հայ կանանց նվերն էր. «Մեր ճանապահորդությունը Կարսից Թիֆլիս դեմոնստրացիայի բնույթ էր կրում,— գրում է Ալիլուևը։— Մենք ունեինք ատլաս կարմիր դրոշ, որը պատրաստել էին Կարսի հայ կանայք... Մոտենալով մեծ կայարանին, կախում էինք այն գնացքի պատուհանից, իսկ մեր երգեցիկ խումբը, որը կազմել էր անխոնջ երիտասարդ բոլշևիկ Պավել Բլյախինը—«Սոլոմոնչիկը», միասին երգում էր ռևոլյուցիոն երգեր։ Հավաքված մասսան աղմկալից ողջունում էր մեզ»[3]։

Բաքվի քաղաքական գործիչներին դիմավորելու համար Ալեքսանդրոպոլ կայարանում «սոցիալ-դեմոկրատական կազմակերպու-

---

1 Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, գ. 146, թ. 102։

2 ՍՄԿՊ ԿԿ կից Մարքս-Էնգելսի-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 203։

3 Ս. Ալիլուև, Նշված հիշողությունները, էջ 153։

թյան ղեկավարությամբ հոկտեմբերի 28-ին մեծ ցույց է տեղի ունենում, որին մասնակցում են 2000 մարդ։ Ռևոլյուցիոն ճառերով հանդես են գալիս Ալեքսանդրոպոլի բոլշևիկները և Բաքվի ռևոլյուցիոն գործիչները»[1]։ Ցուցարարները մեծ խանդավառությամբ են դիմավորում ռևոլյուցիոն գործիչներին և իրենց ողջույնն են հղում Բաքվի հերոս պրոլետարիատին։ Այդպիսի հանդիպումներ և ցույցեր կազմակերպվում են մի շարք ուրիշ կայարաններում։ Բաքվեցիները մի քանի օր մնում են Թիֆլիսում, այստեղ ևս ակտիվ կերպով մասնակցություն ցույց տալով տեղի ռևոլյուցիոն անցքերին։ Բանվորական միտինգներից մեկում նրանք հանդես են գալիս ճառերով։ Թիֆլիսում «այդ ժամանակ առավոտից մինչև երեկո տեղի էին ունենում ժողովներ և միտինգներ,— գրում է Ս. Ալիլուևը։ Մենք միտինգից միտինգ, ժողովից ժողով էինք գնում»[2]։ Կովկասի փոխարքայության ոստիկանության վարչության պետ Շիրինկինը ձեռնարկեց բոլոր միջոցները Բաքվի ռևոլյուցիոն գործիչներին Թիֆլիսից արագորեն դուրս հանելու համար։ Վերջապես նրանք մեկնեցին Բաքու՝ հայ ժողովրդից նվեր ստացած իրենց անբաժան կարմիր դրոշով։

Ռևոլյուցիոն տրամադրությունները Կարսում օրըստօրե վերելք էին ապրում ոչ միայն քաղաքի աշխատավորության, այլև կայազորի զինվորականության շրջանում։

Կարսի բանտում գտնվող ռևոլյուցիոն գործիչները և առանձնապես Բաքվից այստեղ աքսորված բանվորներն ու ՌՍԴԲՊ անդամները բանտի որոշ աշխատողների իրենց կողմը գրավելով, կարողացել էին կապ հաստատել թե՛ քաղաքի աշխատավորների և թե՛ զինվորական մասերի հետ։ Լայն աշխատանք էին տանում բոլշևիկյան ագիտատորները բերդապահ զորքի զինվորների մեջ։ Զինվորների մի զգալի մասը պատրաստ էր միանալու աշխատավոր ժողովրդի հետ և պայքարելու ազատության համար։ Ինչպես նշում է Ստ. Շահումյանը, «ռևոլյուցիայի թույնը վարակում է և զորքը, վարակում է մինչև իսկ կայսերական վեյլուն դվարդիան...»[3]։

Կարսի բոլշևիկները եռանդուն աշխատանք էին տանում քաղաքի աշխատավորների, երկաթուղային բանվորների և զինվորների միացյալ պայքարը կազմակերպելու համար։ Այդ նպատակով

---

[1] „Революция 1905 г. в Закавказии", стр. 87.

[2] Ս. Ալիլուև, Նշված հիշողություններ, էջ 154։

[3] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, 1948, էջ 117։

նախօրոք տպագրվել և պատրաստվել էին մեծ քանակությամբ ռևոլյուցիոն պրոկլամացիաներ և կոչեր։

Բանտից՝ քաղաքական բանտարկյալների ազատման հաջորդ օրը, հոկտեմբերի 21-ի գիշերը, զինվորները պայթեցրին Կարսի բերդապահ զորքի սակրավորների վաշտի հրամանատարի տունը։ Այդ պետք է ընդհանուր ազդանշան հանդիսանար զինվորների ապստամբության համար։ Սակայն ոստիկանությունը և կայազորի հրամանատարությունը զգալով զորամասերում տիրող անհանգիստ դրությունը, նախօրոք խիստ հսկողություն էին սահմանել և խափանել զինվորների ելույթը։ Չնայած զորամասերն իրարից կղզիացած պահելու և առանձին զինվորների հանդիպումներն ու հավաքույթներն արգելելու ուղղությամբ ձեռք առած խիստ միջոցառումներին, դժգոհություններն ու ռևոլյուցիոն խմորումները ուժեղանում էին։ Հոկտեմբերի 23-ի քաղաքական ցույցի ճնշելը և նրա ղեկավարներին բանտ նետելը դժգոհության նոր ալիք առաջացրեց Կարսի կայազորում։

ՌՍԴԲՊ Կարսի խումբը 1905 թ. հոկտեմբերի 26-ին դիմելով բոլոր քաղաքացիներին, կոչ է անում միասնական ուժերով դուրս գալ ցարի ու կալվածատերերի դեմ, տապալել նրանց լուծը և ապահովել ժողովրդի ազատությունը[1]։

Նույն թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին շարունակվում է Կարսի մարզի փոստ-հեռագրատան աշխատողների գործադուլը։ Ցարական չինովնիկների ձեռնարկած խիստ միջոցները երկար ժամանակ չէին կարողանում դադարեցնել գործադուլը։ Մարզի մի շարք օկրուգների և տեղամասերի միջև կապ պաշտպանելու համար տեղական իշխանությունները փոստ-հեռագրատան աշխատողներին փոխարինել էին ոստիկանության չինովնիկներով[2]։ Գործադուլային շարժումը լայն տարածում էր գտել երկաթուղայիններին մեջ, ինչպես նաև արհեստանոցների բանվորների շրջանում։

Ոստիկանության 1906 թ. հունվարի 11-ի հաղորդագրության մեջ ասված է, որ Թիֆլիս—Կարս երկաթգծի բանվորներն ու ծառայողները գործադուլ են հայտարարել, որից գնացքների երթևեկությունը կանգ է առել։ Կարսի նահանգապետի 1906 թ. հունվարի 4-ի հաղորդագրության համաձայն, գործադուլի ընթացքում «Կարս—Թիֆլիս գծի վրա մարդատար գնացքների երթևեկությունը շարու-

---

[1] Տես ՍՄԿՊ ԿԿ կից Մ.Լ.Մ.Ի-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 199։
[2] Տես Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, գ. 32, թ. 239։

նակվել է և գնայքները երթևեկել են համարյա ամեն օր սոցիալ-դեմոկրատական պարտիային պատկանող մարդկանց ղեկավարությամբ, որոնք տեղափոխել են բացառապես պահեստի շարքային-ների, իսկ մասնավոր անձանցից գերազանցապես աղքատ դասակարգից, որոնց համար, նրանց (սոցիալ-դեմոկրատների—Ս. Ա.) կարծիքով, երթևեկելը խիստ անհրաժեշտ է եղել, ճանապարհածախսը հավաքվել է համաձայն գոյություն ունեցող տարիֆի, բայց ուր են գնացել այդ փողերը, բննությունը դեռևս չի պարզել»[1]։

ՌՍԴԲՊ անդամներն իրենց ձեռքը վերցնելով երկաթգծի ղեկավարությունը, ղեկավար պոստերի աշխատողներին փոխարինում էին աշխատավորության շահերը պաշտպանող մարդկանցով։ Այսպես, Կարսի կայարանապետին հեռացրին աշխատանքից և «նրա պարտականությունները սոցիալ-դեմոկրատական պարտիայի կողմից հանձնվեց մի ոմն Զիտայայի,— ասված է մի պաշտոնական հաղորդագրության մեջ,— իսկ հեռագրի և մյուս ծառայությունների աշխատանքը վարում էին նրանք, ովքեր սոցիալ-դեմոկրատական պարտիայի պատգամավորներն էին»[2]։

Կարսի զինվորական նահանգապետը հայտնում էր նաև, որ 1905 թ. դեկտեմբերի 21-ին Կարսի բանտի բանտարկյալները, թվով 62 մարդ[3], բողոքի կազմակերպված ելույթ են ունեցել և ապրստամբություն բարձրացրել, որը ճնշելու համար բանտապետը հրաման է տվել դնդակոծել և միայն հրաձգության սարսափի տակ են կարողացել ճնշել բանտարկյալների ելույթը»[4]։

1906 թ. հունվարի 11-ին Կարսի զինվորական նահանգապետը հաղորդում է, որ Կարս—Թիֆլիս դիծը դրավել են ապստամբ երկաթուղայինները, որոնք ամբողջովին գործում են սոցիալ-դեմոկրատական պարտիայի գլխավորությամբ։ Երկաթուղուց ստացված եկամուտը տրվում էր գործադուլավորներին և չքավորությանը[5]։

Երկաթուղայինների պայքարը ճնշելու համար տեղական իշխանությունը դիմում է արտակարգ միջոցների։ Կարսի զինվորական նահանգապետը ամբողջ երկաթգծում ռազմական դրություն է հայտարարում։

---

1 ՍՄԿՊ ԿԿ կից ՄԷԼՍԻ-ի Վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 2, գ. 112։

2 Նույն տեղում։

3 Տես Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, գ. 194, թ. 18։

4 Տես ՍՄԿՊ ԿԿ կից Վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 2, գ. 112, տես նաև Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, գ. 196, թ. 3։

5 Տես Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, գ. 194, թ. 18։

Բոլշևիկների ծավալած ագիտացիոն աշխատանքի շնորհիվ ռևոլյուցիոն շարժումներին մասնակցում են քաղաքի աշխատավորության ամենալայն խավերը։ 1906 թ. հուլիսի 9-ին գործադուլ են հայտարարում Կարսի նավթային պահեստների բանվորները։ Նրանք պահանջում են 10-ժամյա բանվորական օրվա սահմանում և աշխատավարձի բարձրացում 15—30 տոկոսով։

Օգոստոսի 7-ին աշխատանքը դադարեցնում են Կարսի կոշկակար, սղոցարար և այլ արհեստների ենթավարպետները։ Գործադուլավորները, մոտ 150 մարդ, բոլշևիկների ղեկավարությամբ՝ ցերեկվա ժամը 4-ին հավաքվում են քաղաքից դուրս նախօրոք պայմանավորված տեղը խորհրդակցելու, իրենց պահանջները մշակելու և դրանք տերերին ներկայացնելու համար։ Խորհրդակցությունը որոշեց ներկայացնել տնտեսական մի շարք պահանջներ։ Ոստիկանները զինված ուժերով հարձակում են գործում խորհրդակցության վայրը և ցրում այն [1]։

Կարսի մարզում ռևոլյուցիոն շարժումների մեջ աչքի ընկնող մասնակցություն ունեցան զինվորները։ Ցարական կառավարությունը ամեն կերպ աշխատում էր զինվորներին կղզիացրած պահել, թույլ չտալ, որ նրանք որևէ կերպ շփվեն ժողովրդի հետ։ Սակայն այդ նրանց քիչ էր հաջողվում։ Զինվորները իրենց բողոքի ձայնն էին բարձրացնում ընդդեմ գործադրվող ռեպրեսիաների և հանդես էին գալիս որպես աշխատավոր ժողովրդի շահերի պաշտպաններ։

Այդ տեսակետից ուշադրավ է Սարիղամիշի զորամասերի «հակակառավարական ելույթը», որ տեղի ունեցավ 1905 թ. սեպտեմբերի 29-ին։ Այդ ելույթում առանձնապես աչքի ընկավ Ելիսավետպոլյան գունդը, որը ակտիվ կերպով քննարկեց գյուղացիների դրությանը վերաբերող հարցերը և իր համերաշխությունը հայտնեց Քութայիսի նահանգում ծավալված գյուղացիական պայքարին։

Զինվորները իրենց զայրույթն ու արհամարհանքն էին հայտնում այն զինվորների նկատմամբ, որոնք կատարելով հրամանատարների կարգադրությունը, ճնշում էին բանվորական ու գյուղացիական շարժումները։ Ցարական իշխանությունը ճնշեց զինվորների այդ ելույթը, իսկ նրա ղեկավարներին Կարսի բանտը նետեց [2]։

Կարսի բոլշևիկները կարևոր նշանակություն էին տալիս Սարիղամիշում տարվող ռևոլյուցիոն աշխատանքներին։ Ոստիկանության 1906 թ. հունվարի 26-ի հաղորդագրությունից պարզվում է,

---

[1] ՏՍՆ Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ., ֆ. 1, գ. 201, թ. 213։

[2] Նույն տեղում, ֆ. 1, գ. 32, թ. 85։

որ նույն թվի հունվարին Սարիղամիշի դեղատունը խուզարկելու ժամանակ հայտնաբերվել է մեծ քանակությամբ ռևոլյուցիոն անլեգալ գրականություն [1]։

Կարսի աշխատավորների ելույթները լայն արձագանք էին գտնում կայազորի զորամասերում։ Զինվորներն իրենց բողոքն էին հայտնում դեպի իշխանությունների բռնությունները, իսկ աշխատավորների գործադուլներն ու ելույթները ճնշող զորքերին անվանում էին «դավաճաններ»։ Հոկտեմբերի 25-ին տեղի ունեցավ Կարսի բերդի հետևակ գնդի առաջին վաշտի զինվորների ռևոլյուցիոն ելույթը։ Զինվորները պահանջում էին բարելավել իրենց դրությունը, վերջ տալ ճնշումներին ու հալածանքներին, հեռացնել դաժան հրամանատարներին [2]։

Նման ելույթներ տեղի ունեցան նաև Կարսի կայազորի մի շարք զորամասերում։ Սակայն այդ ելույթները ճնշվեցին ռազմական ամենադաժան միջոցներով. բազմաթիվ շարքայիններ զինվորական դատարան հանձնվեցին և խիստ պատժի ենթարկվեցին։

1905 թ. նոյեմբերի 3-ին Կարսի բերդի զինվորական մասից ռևոլյուցիոն գործունեության համար իշխանությունները բանտ էին նետել 20 շարքայինների, իսկ դեկտեմբերի 15-ին, վախենալով զինված ելույթից. նրանք դինամիտ էին արել կապավորների ճակատի բոլոր շարքայիններին։

Նույն ժամանակ Օլթիի շրջանից Կարս են տեղափոխում և խիստ հսկողության տակ պահում 2-րդ Սևծովյան գնդի 6-րդ հարյուրյակի կազակներին, որոնք հրաժարվել էին կատարել հրամանատարության կարգադրությունները [3]։

1905 թ. նոյեմբերի 23-ին Կարսում 154 Դերբենդյան գնդի պահեստի զորացրման ենթակա շարքայինները քաղաքում ընդհանուր ցույց են կազմակերպում. առաջ շարժվելով փողոցներով, նրանք արտասանում են ռևոլյուցիոն ճառեր ու լոզունգներ։ Նրանք պահանջում էին անմիջապես զորացրել բոլոր այն զինվորներին, որոնց «ծառայության ժամկետը լրացել է և պահվել են պատերազմական դրության հետևանքով» [4]։

1905 թ. ռևոլյուցիոն շարժումներին ակտիվ մասնակցություն ցույց տվին Սևծովյան նավաստիները։ Ծովայինների մի զգալի

---

[1] Տես Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, գ. 194, թ. 49։

[2] Նույն տեղում, գ. 33, թ. 293։

[3] Նույն տեղում, գ. 194, թ. 20։

[4] ՍՄԿՊ ԿԿ կից ՄԷԼՍԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 216։

մասին պատժելու համար ուղարկում էին ծառայության ցամաքային զորամասերը։ 1906 թ. մայիսի 9-ից մինչև 11-ը Կարսում էր գտնվում մի գունդ, որը Կարսի վրայով ուղարկվում է Արդահան՝ մշտական ծառայությունն այնտեղ անցկացնելու համար։ Այդ գնդում կային մոտ 200 ծովայիններ, որոնց որպես պատիժ տեղափոխել էին հետևակ։ 1906 թ. մայիսի 11-ի գիշերը զինվորական մասի տերիտորիայում գտնվեցին ռևոլյուցիոն պրոկլամացիաներ «նորակ նավաստիներին» վերնագրով, որի տակ ստորագրված էր «Համառուսական զինվորական միություն, Կարսի կայազոր»։ Պրոկլամացիան ողջունում էր նորակ ծովայիններին, փառաբանում նրանց ռևոլյուցիոն գործունեությունը [1]։

Դժգոհությունը և զինվորականների ելույթները Կարսի կայազորում գնալով ուժեղանում են։ 1905 թ. դեկտեմբերի 15-ին 600 կազակներ վանդում են իրենց հրամանատարներին և ապստամբություն բարձրացնում։ Ապստամբներն ստեղծում են ղեկավար կոմիտե։ Կոմիտեն մշակում և հրամանատարությանն է ներկայացնում մի շարք պահանջներ։ Զինվորների դրությունը բարելավելու հետ միասին այդ պահանջները շոշափում էին նաև քաղաքական աղատության մի շարք կարևոր խնդիրներ։

Կայազորի հրամանատարությունը ռեակցիոն ուժերի օգնությամբ ապստամբներին օղակի մեջ է առնում և զինաթափ անում։ Այնուհետև «խռովարար» զինվորներին տեղափոխում են Օթլիի շրջանը, որտեղ նրանց պահում էին զինվորական խիստ հսկողության տակ [2]։

Զինվորների մեջ լայն աշխատանք էին տանում բոլշևիկները։ Նրանք տարածում էին ռևոլյուցիոն պրոկլամացիաներ և կոչեր։ Այդ պրոկլամացիաներից մեկում նշվում էր, որ «Իշխան Պոտյոմկին Տավրիչեսկու» զրահանավի մի ծովային բոլշևիկ Գրիգորի վակուլինչուկը 1905 թ. հունիսին սպանվել է հրամանատարների ձեռքով միայն նրա համար, որ համարձակվել է ասել «բորշշը անպետք է»։ Այդ պրոկլամացիան կոչ է անում վրեժ առնել արյունախում դավաճաններից, և պայքարել ազատության ու երջանիկ կյանքի համար։ Սևծովյան նավաստիները բոլշևիկների ղեկավարությամբ կազմած այդ կոչում նշում էին, որ բանակը պետք է իր զենքը ուղղի ժողովրդի բոլոր թշնամիների ու ցարիզմի դեմ։

---

[1] Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ., ֆ. 1, գ. 297, թ. 107։

[2] Տես Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ., ֆ. 1, գ. 32, թ. 292 և ուրիշները։

«Ո՛չ, մենք մարդասպաններ չենք, մենք մեր ժողովրդի դահիճը չենք, այլ նրա պաշտպանն ենք։ Եվ մեր ընդհանուր դավիդն է մահ կամ ազատություն ողջ ռուս ժողովրդի համար. մենք պահանջում ենք անհապաղ դադարեցնել հեռավոր Մանջուրիայի դաշտերում անմիտ արյունահեղությունը։ Մենք պահանջում ենք անհապաղորեն հրավիրել համաժողովրդական Սահմանադիր ժողով՝ ընդհանուր, ուղղակի, հավասար, ընտրական օրենքով, գաղտնի քվեարկությամբ։ Այդ պահանջների համար մենք պատրաստ ենք մեր պրահանավի հետ մեկտեղ ընկնել մարտում կամ հաղթանակ նվաճել»[1]։ Սհա այս ռևոլյուցիոն կոչերն ու պրոկլամացիաները, բոլշևիկների ծավալած աշխատանքի շնորհիվ հասնում էին աշխատավորներին և շատ մեծ դեր կատարում նրանց ռևոլյուցիոն դաստիարակման գործում։

1905 թ. նոյեմբերի 26-ին ՌՍԴԲՊ Կարսի խումբը զինվորներին ուղղած մի պրոկլամացիայում կոչ էր անում միանալ բանվոր դասակարգի և գյուղացիության մղած ընդհանուր ազատագրական պայքարին և զենքը ուղղել ցարիզմի և բոլոր շահագործողների դեմ.

1906 թ. մարտին ապստամբում են Կարսի կայազորի 18-րդ լեռնային հրետանային մարտկոցի զինվորները։ Զինվորական Սովետը Կարսում հատուկ կոչ-թռուցիկ է բաց թողնում, որտեղ ասվում է. «Ողջույն ձեզ, ընկեր—հրետանավորներ և ժողովրդական գործի հերոս մարտիկներ։ Ընկե՛ր հրետանավորներ. եղեք առույգ, չընկճվեք և չհուսահատվեք։ Եղեք այստեղ Կարսում էլ այնպիսի հերոս մարտիկներ, ինչպիսին եղել եք Վլադիվոստոկում։ Զկարծեք, ընկերներ, որ դուք այստեղ մենակ եք... Ոչ, ընկերներ, ձեր հետևից ուժ կա, ձեզ հետ և ձեզ համար պատրաստ են ձեր ընկերները և Կարսի կայազորի զինվորները։ Մենք բոլորս, ընկերներ, կոչ ենք անում միանալ և ընթանալ ձեռք ձեռքի տված, ընդհանուր ուժերով ձեռք բերելու մարդկության իրավունքը։

Կարսի կայազորի Սովետի ընկերները ձեզ ողջունում և ցանկանում են հաջողություն ձեր սկսած գործում»[2]։

1906 թ. հուլիսի 2-ին ոստիկանապետը Կովկասի փոխարքային հայտնում է, որ Կարսի զինվորական մասերում ուժեղացել է հակապետական ռևոլյուցիոն շարժումը։ Այդ հաղորդագրության մեջ ասված է նաև, որ Կարսի զինվորական շտաբի գրագիր Կրաս-

---

1 Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, դ. 33, թ. 33։

2 ՍՄԿՊ ԿԿ կից ՄԷԼՍԻ-ի Վրաց. ֆիլիալի արխիվ, ֆ. 2, դ. 112, թ. 78։

նասելսկին հունիսի 20-ին շուկայում տոնական հավաքույթի ժամանակ տարածել է հակապետական ռևոլյուցիոն պրոկլամացիաներ [1]։

1906 թ. օգոստոսի 2-ին ոստիկանությունը հայտնում է, որ Կաղզվանի շրջանում Դերբենդյան գնդի զինվորների մեջ տարածվել են մեծ քանակությամբ ռևոլյուցիոն պրոկլամացիաներ, որոնք կոչ էին անում զինված ապստամբության միջոցով տապալել տիրող կարգերը։ Պրոկլամացիան վերնագրված էր՝ «Ընկեր զինվորներ» և ստորագրված «Կաղզվանի զինվորական կազմակերպություն» [2]։

1907 թ. օգոստոսի 14-ին արխիվային մի դոկումենտի մեջ նշվում է, որ Կարս քաղաքում Սուրենյանցի տպարանում տպագրվել է ռուսերեն բրոշյուր՝ «Երկու օր դերության մեջ, կամ հանդիպում» վերնագրով։ Այդ բրոշյուրը տպագրվել է 1201 օրինակով և ամբողջովին բռնագրավվել է ոստիկանության կողմից։ Ինչպես նշում է ոստիկանական հաղորդագրությունը, հեղինակը նպատակ էր դրել «...տարածել տեղական հասարակ ժողովրդի մեջ ծայրահեղ ռևոլյուցիոն իդեաներ» [3]։

Բրոշյուրի հերոս Սելիմ-բեյը հանդես է գալիս որպես ռևոլյուցիոներ-պրոպագանդիստ, որը համախմբելով բոլոր ազգի ժողովուրդներին, ատելություն է սերմանում դեպի կառավարությունը, հարուստների դասակարգը և հոգևորականությունը, քարոզում է «պայքարի միջոցով վերացնել գոյություն ունեցող հասարակական կարգերը» [4]։

Վարչական օրգանները, դատարանը և մյուս բոլոր կառավարական հաստատությունները ներկայացվում են որպես հասարակության դահիճներ, որոնք «ծծում են նրա ամբողջ ունեցվածքը և նրան հասցնում վերջնական քայքայման» [5]։ Դիմելով զանազան ազգերի երիտասարդներին, բրոշյուրի հերոս Սելիմ-բեյը ասում է.

«Հասարակության թշնամին այս կամ այն ազգը չէ, այլ յուրաքանչյուր հարուստ, որը իր դրպանը ուռցնում է աղքատների հաշվին... Միացե՛ք, բոլոր ժողովուրդներ, օգնության ձեռք մեկնեցեք

---

1 Տես ՍՄԿՊ ԿԿ կից Մ.Լ.Մ.Ի-ի Վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 2, գ. 179, թ. 77։

2 Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 40, գ. 10, թ. 31։

3 Նույն տեղում, ֆ. 23, գ. 505, թ. 2։

4 Նույն տեղում։

5 Նույն տեղում։

իրար և ձեր թշնամու դեմ գործեցեք միասնաբար։ Դուք բոլորդ եղբայրներ եք և ձեր թշնամին ընդհանուր է։ Բեգերին սանձահարեք և բռնագրավեք նրանց հողերը»[1]։

Բրոշյուրը մերկացնում է հոգևորականության, որպես խաբեբաների մի ոհմակի, որը մթագնում է ժողովրդի գիտակցությունը հօգուտ շահագործող դասակարգի։

Թիֆլիսի դատական պալատը քննելով այդ գործը, որոշում է բրոշյուրը ոչնչացնել, իսկ նրա հեղինակին՝ բանտ նստեցնել[2]։

Այսպիսով, չնայած Կարսը ռուսական կայսրության ամենահեռավոր ու հետամնաց ծայրամասերից մեկն էր, այնուամենայնիվ ռուսական առաջին ռևոլյուցիան այստեղ լայն արձագանք է գտնում։ Կարսի աշխատավոր մասսաները և կայազորի զինվորները ակտիվորեն մասնակցում են 1905—1907 թվականների ռևոլյուցիոն իրադարձություններին, ցույց տալով ռևոլյուցիոն պայքարի լավագույն օրինակներ։

5. ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՌՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Վ. Ի. Լենինը 1907 թ. նոյեմբեր—դեկտեմբերին գրած «Սոցիալ-դեմոկրատիայի ագրարային ծրագիրը 1905-1907 թվականների ռուսական առաջին ռևոլյուցիայի մեջ» աշխատությունում ամենայն խորաթափանցությամբ վերլուծում է գյուղացիության սոցիալ-տնտեսական դրությունը, նշում նրա մղած պայքարի պատմական նշանակությունը, մշակում մարքսիստական պարտիայի ագրարային ծրագրի թեորիական, քաղաքական և տակտիկական հիմունքները բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի ժամանակաշրջանում։

«Ռևոլյուցիայի երկու տարին,— գրում է Վ. Ի. Լենինը,—1905 թ. աշնանից մինչև 1907 թ. աշունը, պատմական ահագին փորձ տվեց՝ Ռուսաստանի գյուղացիական շարժման, հողի համար գյուղացիության մղած պայքարի բնույթի և նշանակության վերաբերյալ»[3]։

Այդ ժամանակները մեր երկրի պատմության մեջ բուռն տարիներ էին։ Գյուղացիական մասսաները անմիջական պայքարի դուրս եկան իրենց ճնշողների դեմ՝ կալվածատիրական հողատիրությունն

---

[1] Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 23, գ. 505, թ. 2։

[2] Նույն տեղում, թ. 34։

[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 13, էջ 273։

ու շահագործումը վերացնելու համար։ «Խաղաղ» էվոլյուցիայի տասնյակ տարիները չէին «կարող տալ այնքան հարուստ նյութ մեր հասարակարգի ներքին մեխանիզմը լուսաբանելու համար, որքան տվեց այս երկու տարին՝ թե՛ այն մտքով, որ գյուղացիական մասսաներն անմիջական պայքար էին մղում կալվածատերերի դեմ, և թե՛ այն մտքով, որ գյուղացիական պահանջները թեկուզ փոքրիշատե ազատ արտահայտվում էին ժողովրդական ներկայացուցիչների ժողովներում»[1]։

Վ. Ի. Լենինը այդ ժամանակաշրջանի բոլոր ագրարային ծրագրերի և այդ հողի վրա տարբեր պարտիաների պայքարի հիմքը համարում է Ռուսաստանում գոյություն ունեցող հողատիրության վիճակը։ Ռուսաստանում «տաս միլիոն գյուղացիական ծխերն ունեն 73 միլիոն դեսյատին հող։ Քսանմի հազար ազնվազարմ ու կոռ լենդլորդերը՝ 62 միլիոն դեսյատին։ Այս է այն դաշտի հիմնական ֆոնը, որտեղ ծավալվում է գյուղացիության պայքարը հողի համար»[2]։ Այդ այն կարևոր հարցն էր, որն իր գաղափարական-քաղաքական արտացոլումն էր գտնում տարբեր դասակարգերի շահերն արտահայտող ծրագրերի և պահանջների մեջ։

Ագրարային հարցի լուծումը բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի գլխավոր հարցն էր։ Ռևոլյուցիայի նախօրյակին Ռուսաստանում չքավորները կազմում էին գյուղացիության 65 տոկոսը, միջակները 20 տոկոսը։

Ճորտատիրության մնացորդները խանգարում էին գյուղատնտեսության զարգացմանը։ Սակայն, արդեն պարզ էր, որ Ռուսաստանը գնում էր բուրժուական զարգացման ճանապարհով։ Ռուսաստանում կապիտալիզմի զարգացումը գնալով ավելի և ավելի ակնառու էր դառնում։ «Բայց այս զարգացման ձևերը կարող են լինել երկակի,— գրում է Լենինը։ Ճորտատիրության մնացորդները կարող են վերացվել թե՛ կալվածատիրական տնտեսությունների փոխակերպմամբ և թե՛ կալվածատիրական լատիֆունդիաների ոչնչացումով. այսինքն՝ ռեֆորմի միջոցով և ռևոլյուցիայի միջոցով»[3]։ Ահա այս հարցն էր, որ ժամանակի հասարակական հոսանքների և քաղաքական պարտիաների ուշադրության կենտրոնումն էր գտնվում, որի շուրջը և ծավալվում է սուր պայքար։ Միայն բոլշևիկ-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 13, էջ 273։

[2] Նույն տեղում, էջ 280։

[3] Նույն տեղում, էջ 298—299։

ներն էին, որ պայքարում էին զարգացման ռևոլյուցիոն ուղու համար։ Բուրժուական ու մանր բուրժուական բոլոր պարտիաները այս կամ այն կերպ ի վերջո հանգում էին ռեֆորմիզմի դաղափարին և հանդես էին գալիս որպես ռևոլյուցիայի թշնամիներ։

«Առաջին դեպքում,— գրում է Վ. Ի. Լենինը,— էվոլյուցիայի հիմնական բովանդակությունը լինում է ճորտատիրության վերացումն կիսաճորտատիրական և կապիտալիստական շահագործման՝ ֆեոդալների—կալվածատերերի—յունկերների հողերի վրա։ Երկրորդ դեպքում հիմնական ֆոնը նահապետական գյուղացու վերացումն ու բուրժուական ֆերմեր դառնալն է»[1]։

Բոլշևիկյան պարտիայի ագրարային ծրագիրը, ելնելով ռևոլյուցիայի ծավալման ու խորացման խնդրից, առաջադրում էր կալվածատիրական հողերի բռնագրավում և երկրում բոլոր հողերի ազգայնացում։ Այս ծրագիրը արտահայտում էր աշխատավոր գյուղացիության շահերը, որքի էր հանում նրանց ռևոլյուցիոն պայքարի՝ պրոլետարիատի ղեկավարությամբ։

Հայ գյուղում ծավալվող ռևոլյուցիոն պայքարի հիմքում ևս ընկած էր հողային հարաբերությունների հարցը, ագրարային հարցը։

Հայաստանի գյուղացիությունը ցարական դաժան ռեժիմի և տիրապետող կիսաճորտատիրական կարգերի պայմաններում դտնվում էր չափազանց տնտեսական ու քաղաքական ծանր դրության մեջ։ Գյուղացիների գերակշռող մասսան հողազուրկ էր, կամ սակավահող՝ անորակ մի փոքր հողաբաժնով, որից նա ոչ մի օգուտ չէր ստանում։ Գյուղացին ստիպված էր կալվածատիրոջից հող վարձակալել, կամ թե նրա մոտ բատրակություն անել՝ մի կտոր հաց վաստակելու, իր ընտանիքի գոյությունը պահպանելու համար։ Հաճախ նա իր ամբողջ ընտանիքով աշխատում էր կալվածատիրոջ կամ կուլակի ու վաշխառուի տնտեսության մեջ։ Բայց այդ աշխատանքը չէր բարելավում գյուղացու ընտանիքի վիճակը։ Անգամ մանկահասակ երեխաներն ու ծերերը աշխատում էին տարին բոլոր։

Հայաստանում ամենուրեք սակավահողությունից տառապող աշխատավոր գյուղացիության կողքին մի շարք կապիտալիստներ ու կալվածատերեր, ինչպիսիք էին Արամյանցը, Բարաթովը, Իսկանդար բեկը, Ղալումյանները, Աղամովը, Ծատուրովը, Աղամալովները, Գեղամովները, Սուլթանովը, Վեքիլովը և ուրիշներ իրենց

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 13, էջ 299։

ձեռքն էին կենտրոնացրել հսկայական քանակությամբ հողային տարածություններ։

Այսպես, 1900—1903 թթ. միայն Լոռիում կապիտալիստ-կալվածատեր Սրամյանցը իր ձեռքն է դցում 8.500 դեսյատին հող[1]։

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, Հայաստանում կատարված 343,7 հազար հեկտար ցանքսից կալվածատիրական, վանքապատկան և կուլակային տնտեսություններին էր պատկանում 205.7 հազար հեկտար, իսկ չքավոր և միջակ տնտեսություններին՝ միայն 138,0 հազար հեկտար։ Միջին հաշվով ամեն մի գյուղացիական տնտեսության հասնում էր 0,9 հեկտար ցանքային տարածություն։ Կալվածատիրական և կուլակային տնտեսությունները կազմելով գյուղացիական տնտեսությունների մոտ 15 տոկոսը, տիրում էին ամբողջ այդիների տարածության 57,1 տոկոսին։

Առանձին գավառներում դրությունը ավելի ծանր էր։ Զանգեզուրում հին 1886 թ. մեկ շնչին հասնում էր մոտավորապես 0,73 հեկտար հողամաս, ապա 1906 թ. այդ չափը կրճատվել և հասել էր 0,49 հեկտարի[2]։

1905 թ. Նոր Բայազետի գավառի Ղուլալիի գյուղացիները, նկարագրելով իրենց ծանր դրությունը, նշում են, թե սակավահողությունն այն աստիճանի է հասնում, որ ամեն մի շնչին նույնիսկ 0,25 դեսյատին հող չի ընկնում։ Գյուղացիներն իրենց ապրուստի միջոցներ ձեռք բերելու համար ստիպված էին վարձու աշխատանք կատարելու[3]։

Մյուս կողմից էլ գյուղացու վրա ծանրանում էին պարտքերը և վաշխառուական կապիտալի ճնշումը։ Զանգեզուրի գավառի Քարահունջ, Տեղ, Բանակոթ, Թաղագյուղ, Ղարաքիլիսա (հայկական), Ղարաքիլիսա (ադրբեջանական) վեց գյուղերը, որտեղ ընդամենը կար 1604 տնտեսություն, նրանցից 1903 թ. 990 տնտեսություններ ունեին պարտք 70.000 ռ. ընդհանուր գումարով։ 1906—1907 թթ. պարտապանների թիվը ավելանում և հասնում է 1320 տնտեսության 110.000 ռ. պարտքով, այսինքն պարտք ուներ բոլոր տնտեսություն-

---

[1] Տես Ս. Ը. Մարուխյան, Գյուղացիության դրությունը նախասովետական Հայաստանում, 1948, Երևան, էջ 15։

[2] Նույն տեղում, էջ 17—19։

[3] Տես Հայկական ՍՍՌ ԿՊԱ, ֆ. 26, գ. 2362, թ. 1, մեջ ենք բերում ըստ Ս. Մարուխյանի նշված աշխատ., էջ 29։

ների 82,5 տոկոսը [1]։ Այդ հանգամանքը ուժեղացնում էր դժգոհությունը գյուղական աշխատավորության շրջանում և ավելի սրում դասակարգային պայքարը գյուղում։ Անգամ ցարական չինովնիկները ստիպված էին խոստովանել, որ «գյուղացիները գանգատվում են կալվածատերերի և պետական ճնշումների վրա, որոնք սահմանափակում են նրանց իրավունքները՝ անտառներից օգտվելու։ Ընդհանրապես գյուղացիների տնտեսական վիճակը անտանելի է...» [2]։ Գանգատվելով իրենց ծանր դրությունից, գյուղացիները բողոքում էին, որ «մշտապես զբաղված են աշխատանքով միայն նրա համար, որ վճարեն ծանր հարկերը» [3]։

Գյուղացիների շահագործումն ու ճնշումը գոյություն ունեցող հետամնաց տեխնիկայի պայմաններում շտեսնված չափերի էին հասնում։ «Ճորտատիրական ստրկացուցիչ վարձակալության, աշխատավճար (կոռային) տնտեսության, «ձմեռային վարձման», արածավերության համար ծառայագրելու, կտրվածքների համար ծառայագրելու զանազան ձևեր և այսպես անվերջ։ Ճորտատիրական շահագործմամբ ճնշված գյուղացիական մասսան տնաքանդ է լինում, և նրա մի մասը ինքը վարձակալությամբ է տալիս իր հողաբաժինները «ճշտապահ» տնտեսատերերին։ Ունևոր գյուղացիների սակավաթիվ փոքրամասնությունը դառնում է գյուղացիական բուրժուազիա, հող է վարձակալում կապիտալիստական տնտեսության համար, շահագործում է հարյուր-հազարավոր բատրակների ու օրամշակների» [4]։

«Պրոլետարիատի կռիվը» բոլշևիկյան թերթը, նկարագրելով Բորչալուի գավառի գյուղացիների ծանր դրությունը, նշում է, որ ներքին Դուրնուկ կամ Քոթնշ գյուղի բնակիչները պարտավոր էին տալ կալվածատեր իշխան Բարաթովին տարեկան բերքի մի երրորդ մասը, կալվածատիրոջը հասնող բերքը գյուղացիները պետք է տեղափոխեին նրա կալվածքը, միաժամանակ ամեն մի տնտեսություն պարտավոր էր կալվածատիրոջ համար մի սայլ փայտ տանել Թիֆլիս։ Տոն օրերին գյուղացիները կալվածատիրոջ համար պետք է նվեր տաներին ոչխար, յուղ և այլն։ Նրա ջրաղացի և տնտեսության տարբեր մասերում գյուղացիները պետք է ձրի աշխատեին։ Գյուղացին պետք է գութանով մեկ օր վար աներ կալվածատիրոջ համար [5]։

---

1 Տես С. Заваров, Экономические условия Карабаха, 1907, стр. 55.

2 «Լուսա», № 2, 1905, էջ 156։

3 Նույն տեղում, էջ 157։

4 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 13, էջ 281։

5 «Պրոլետարիատի կռիվը», № 6, 1906։

Գյուղացուն կողոպտում էին բոլորը՝ կալվածատերերն ու ցարական չինովնիկները, կուլակները, հոգևորականները, գյուղի վաշխառուներն ու «ցեցերը»։ Նա երկար ժամանակ այդ տանջալից կյանքից ազատվելու ելք էր փնտրում։ Գյուղացին երազում էր հող ձեռք բերելու և իր «արյուն քրտինք»՝ աշխատանքի ու վաստակի տերը դառնալու մասին։ Նա պայքարում էր ճնշողների դեմ՝ ինչպես կարող էր։ Այդ պայքարը կրում էր անկազմակերպ և պատահական բնույթ։ Իր կյանքի ուրույն պայմանների բերումով գյուղացու քաղաքական գիտակցությունը դեռևս ցածր էր և նա խարխափում էր խավարի մեջ։ Նա չէր կարողանում ըմբռնել, որ գոյություն ունեցող ճնշումն ու շահագործումը, խարդախությունն ու բոլոր չարագործությունները կվերանան միայն այն ժամանակ, երբ կվերացվեն տիրապետող քաղաքական կարգերը։ Իսկ այդ հնարավոր կլիներ, երբ գյուղացիությունը բանվոր դասակարգի հետ և նրա գլխավորությամբ միասնական պայքարի դուրս գար հին կարգերը տապալելու և դեմոկրատական կարգեր ստեղծելու համար։ Այդ գաղափարը գյուղական աշխատավորության մեջ սկսում էր մարմնավորվել բանվոր դասակարգի ավանգարդ Կոմունիստական պարտիայի ծավալած եռանդուն աշխատանքի շնորհիվ։ Արդեն առաջին ռուսական ռևոլյուցիայի ժամանակ բանվորներն ու գյուղացիները միասնական պայքարի դուրս եկան այդ գաղափարների իրագործման համար։

Գյուղում դասակարգային պայքարը ընթանում էր մի կողմից ամբողջ գյուղացիության և կալվածատերերի, իսկ մյուս կողմից գյուղական պրոլետարիատի և գյուղի բուրժուազիայի՝ կուլակության միջև։ Սակայն ռևոլյուցիայի զարգացման ավյալ էտապում առանձնապես էական նշանակություն է ստանում ամբողջ գյուղացիության պայքարը կալվածատերերի դեմ։ Այդ հողի վրա ծավալված գյուղացիության համընդհանուր պայքարը ճորտատիրական մնացորդների և կալվածատիրական հողատիրության դեմ խոշոր չափերի հասավ։

«Ռուսաստանի կապիտալիստական զարգացումը,— գրում է Վ. Ի. Լենինը,— վերջին կես դարի ընթացքում արդեն այնպիսի քայլ է արել դեպի առաջ, որ հողագործության մեջ ճորտատիրության պահպանումը բացարձակորեն անհնարին է դարձել, նրա վերացումը ընդունել է բանի կրիպիսի, ընդհանուր-ազգային ռևոլյուցիայի ձևեր»[1]։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 13, էջ 541։

Այստեղ է ահա, որ համընկնում են բանվոր դասակարգի և գյուղացիության շահերը։ Բանվոր դասակարգը շահագրգռված էր տապալելու ցարիզմը և ոչնչացնելու ճորտատիրության մնացորդները, որով և նա ճանապարհ էր հարթում սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի համար։ Դրա համար էլ բանվոր դասակարգը ամեն կերպ օգնում և գլխավորում էր գյուղացիության պայքարը կալվածատիրության դեմ, ցանկանալով մինչև վերջ հասցնել բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի հաղթանակը։

Աշխատավոր գյուղացիությունը, որը դարեր շարունակ պայքարել էր հող և ազատություն ձեռք բերելու համար, սկսում էր հասկանալ, որ դրան նա կարող է հասնել միայն բանվոր դասակարգի օգնությամբ, նրա հեղափոխական պայքարի շնորհիվ։ Այդ համոզումը գյուղացիությանը դարձնում է բանվոր դասակարգի հավատարիմ դաշնակիցը։ Այսպիսով, դեմոկրատական ազատության համար մղվող պայքարում ծնվում և կոփվում էր բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը։ Հողի և ազատության կարոտ տասնյակ միլիոնավոր գյուղացիներ սկսում են գնալ բանվոր դասակարգի ետևից, որի մեջ նրանք տեսնում են իրենց ազատագրական պայքարի ղեկավարը։ 1906 թ. Ս. Սպանդարյանը գրում էր, որ «ներկա մոմենտը հրամայողական կերպով պահանջում է գյուղը ձգել դեպի հեղափոխությունը»[1]։ Եվ, իսկապես, գյուղը ձգվեց դեպի ռևոլյուցիան։

Հակառակ մենշևիկների, բոլշևիկները բանվոր դասակարգի դաշնակիցը համարում էին ոչ թե լիբերալ բուրժուազիային, որը ըստ էության ռևոլյուցիայի թշնամին էր, այլ աշխատավոր գյուղացիությանը։ Բոլշևիկների ղեկավարությամբ բանվոր դասակարգը 1905—1907 թվականների «Ռևոլյուցիոն մարտերում դրեց գյուղացիության հետ դաշինքի հիմքերը, ստեղծեց հասարակական այն ուժը, որը 1917 թվականին տապալեց կալվածատերերի ու կապիտալիստների իշխանությունը և մեր երկրի ժողովուրդների համար հարթեց սոցիալիզմի ուղին»[2]։

Կովկասի բոլշևիկները, ղեկավարվելով Վ. Ի. Լենինի ցուցումներով, վճռական նշանակություն էին տալիս բանվոր դասակարգի

---

[1] Ս. Սպանդարյան, Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր, 1939, Երևան, էջ 84։

[2] Ռուսական առաջին ռևոլյուցիայի հիսուն տարին (թեզիսներ)։

և գյուղացիության դաշինքի ամրապնդմանը։ ՌՍԴԲՊ Կովկասյան Միության 4-րդ կոնֆերենցիան, որը տեղի ունեցավ 1905 թ. նոյեմբերի վերջերին, իր բանաձևում «Գյուղացիների մեջ տարվող աշխատանքի մասին» նշում է, որ գյուղացիների մեջ ամենուրեք բարձրացող ռևոլյուցիոն պայքարը ուժեղացնելու և գյուղում փաստորեն տիրող ճորտատիրական կարգերը վերացնելու համար երաշխավորվում է լայն դեմոկրատական հիմքերի վրա կազմակերպել գյուղերում «ռևոլյուցիոն գյուղացիական կոմիտեներ, խորհուրդ տալով միաժամանակ չշփոթել այդպիսի կազմակերպությունները սոցիալ-դեմոկրատականի հետ, այլ աշխատել նրանց ենթարկել վերջիններին»[1]։

Վ. Ի. Լենինի տաղանդավոր աշակերտ Ս. Սպանդարյանը քաջ տեղյակ լինելով հայկական գյուղի կյանքին 1906 թ. «Մեր դերը գյուղերում» վերնագիրը կրող հոդվածում գրում էր. «Ագրարային հարցը այժմ Ռուսաստանում ամենակարևոր, ամենահրատապ հարցերից մեկն է և իր վրա գրավել է բոլոր քաղաքական կուսակցությունների լուրջ ուշադրությունը»[2]։ Ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին բանվոր դասակարգի ծավալած համաժողովրդական պայքարում, այն «մեծ պատմական դեպքերում, որ վրդովում են ամբողջ երկիրը, այն օրհասական կռվում, որ մղում է ժողովուրդը բռնակալ ռեժիմի դեմ— գյուղացիությունը կատարում է և կկատարի առաջին և վճռական դեր»[3]։

1905—1907 թթ. ռուսական առաջին ռևոլյուցիայի կարևորագույն խնդիրներից էր վերացնել գյուղում ճորտատիրական մնացորդները, կալվածատիրական հողատիրությունը, որը ծանր ճընշման տակ էր պահում Ռուսաստանի բազմամիլիոն գյուղացիությունը։ «Մեր հեղափոխության գլխավոր հետևանքը կլինի,— գրում է Ս. Սպանդարյանը,— ոչնչացնել այդ միջնադարյան մնացորդները, մաքրել ճանապարհը զուտ բուրժուական հասարակության համար և բաց անել մաքուր դասակարգային կռվի ասպարեզը։

Այդ տեսակետից մեղանում գյուղացիությունը, որպես դաս, պիտի կատարի մեծ առաջադիմական դեր»[4]։

---

[1] „Кавказскій рабочій листок", № 9, 1905.

[2] Ս. Սպանդարյան, Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր, 1939, Երևան, էջ 77։

[3] Նույն տեղում։

[4] Նույն տեղում, 78։

Հասկանալի է, թե ինչու բանվոր դասակարգը և նրա «ամենահեղափոխական և ամենադեմոկրատական կուսակցությունը, այն է՝ սոցիալ-դեմոկրատիան, ինչու՞ համար է հետաքրքրվում հողային հարցով և գնում է գյուղը իր խոսքով, իր քարոզով»[1]:

Ս. Սպանդարյանը նշելով գյուղացիական հարցի վերաբերյալ Կոմունիստական պարտիայի լենինյան հիմնական դրույթները, տալիս է հայկական գյուղի պատկերը և այնտեղ տարվող քաղաքական աշխատանքի կարևորությունը:

Առաջին հերթին բոլշևիկների կողմից գյուղում տարվող աշխատանքը «...իբրև գլխավոր նպատակ պետք է ունենա կազմակերպել գյուղի պրոլետարական կամ կիսապրոլետարական մասսան, գյուղական բանվորներին, հողազուրկներին»[2], նրանց մեջ զարթնեցնի դասակարգային գիտակցությունը, գեկավարի դասակարգային պայքարը «...բացատրելով մեր վերջնական մեծ նպատակը և հաստատելով գաղափարական կապ՝ գյուղի և քաղաքի բանվորության մեջ»[3]:

Գյուղում տարվելիք աշխատանքի կարևոր խնդիրներից մեկն էլ Ս. Սպանդարյանը համարում էր պայքարը գաշնակցական և նացիոնալիստական այլ տիպի բոլոր . պարտիաների դեմ: «Մեր «ազգային կուսակցությունները», որոնք բաժանել են հայ գյուղացիությունը իրենց մեջ, որ «կապմակերպել» և «զարդացրել» են մեր գյուղերը մտրակներով, գենքով և էկզեկուցիաներով—շարունակ բթացրել են գյուղի պրոլետարական տարրերի գիտակցությունը և հայ գյուղացիությունը դարձրել են «ամենախաղաղ» լուռ ու մունջ մասսա»[4]: Հայ գյուղի նման վիճակը բացատրելու համար գաշնակները և մյուս նացիոնալիստները «միշտ մատնացույց են անում հայ-թյուրքական կոտորածների վրա. բայց այդ առարկությունը կարող է խաբել միմիայն նախիր մարդկանց»[5], քանի որ ցարիզմի և գաշնակ ավանտյուրիստների նացիոնալիստական քաղաքականության հետևանքով էին տեղի ունենում ազգամիջյան կոտորածները, որոնք ռևոլյուցիոն շարժման ծավալմանը մեծ վնաս էին հասցնում ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղում:

---

1 Ս. Սպանդարյան, Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր, Երևան, 1939, էջ 78:

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում, 78—79:

4 Նույն տեղում, էջ 79:

5 Նույն տեղում:

«Սոցիալիստների» դիմակի տակ նացիոնալիստական պարտիաները միշտ էլ հանդես էին գալիս որպես սոցիալիստական դաղափարների ամենակատաղի թշնամիներ։ Հենց այդ պատճառով էլ բոլշևիկները մեծ տենդենցներ ունեին հայկական գյուղում։ Նրանց խնդիրն էր մերկացնել ազգայնական խդեանների բուրժուական ու հակաժողովրդական էությունը և ճնշված գյուղացիության սեփականությունը դարձնել Կոմունիստական պարտիայի հող և ազատություն ձեռք բերելու մասին լոզունգը։ Բոլոր կեղեքիչներից և նացիոնալիստական պարտիաներից հալածված ու խաբված հայ գյուղացին մեծ ոգևորությամբ էր ընդունում Կոմունիստական պարտիայի լոզունգները և ազրարային հարցի լուծման լենինյան պլանը։ «Որքան մենք կարողացանք ծանոթանալ հայկական գյուղի և նրա գրության հետ,— գրում է Ս. Սպանդարյանը,— մենք եկանք այն եզրակացության և հաստատ համոզման, որ ազրարային շարժման համար հարուստ հող կա և իսկապես հեղափոխական և իսկապես սոցիալիստ կուսակցությունը շատ գործ կարող է կատարել այնտեղ»[1]։

Բոլշևիկները չափազանց կարևոր նշանակություն էին տալիս գյուղացիության մեջ հասունացող ռևոլյուցիոն շարժումների ղեկավարման և դրանց կազմակերպված բնույթ տալու խնդրին։ Նրանք դանում էին, որ այդ շարժումները պետք է լինեն ոչ թե որպես «սոսկ ժողովրդական զայրույթի և կատաղության բռնկում, պայթյուն, առանց որևէ որոշակի նպատակի, այլ գիտակից և կազմակերպված, հեռու էքսցեսներից և ավելորդ աննպատակ ծայրահեղություններից»[2]։

Պատմությունից արդեն հայտնի է, որ այդպիսի տարերային շարժումները, որոնք տեղի էին ունենում անջատ—անջատ և առանց բանվոր դասակարգի ղեկավարության, վերջանում էին պարտությամբ. «Թողնելով գյուղացու հոգում հիասթափումն, անբավականությունն, մի տեսակ պեսիմիզմ և մինչև անգամ թշնամական վերաբերմունք դեպի հեղափոխությունը և հանուն հեղափոխության գործող կուսակցությունը»[3]։

Ս. Սպանդարյանը լուրջ նշանակություն է տալիս գյուղացիության գիտակցական և կազմակերպված վերաբերմունքին դեպի քա-

---

[1] Ս. Սպանդարյան, Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր, Երևան, 1939, էջ 79։

[2] Նույն տեղում, էջ 79—80։

[3] Նույն տեղում, էջ 80։

զաքական պայքարը։ Անդամ եթե այդպիսի շարժումը անհաջողությամբ է վերջանում, նա ունենում է խոշոր նշանակություն, քանի որ «մասսան այդ շարժման մասնակցել է գիտակցաբար և նրա պարտությունը ավելի ևս բաց է արել նրա աչքերը, ավելի ևս ավելացրել նրա հեղափոխական էներգիան»[1]։

Կալվածատերերն ու ցարական ոստիկանները հեշտությամբ ճնշում էին գյուղացիական անջատ-անջատ, տարբեր ժամանակներում տեղի ունեցող շարժումները։ Մասսաների միասնական և միաժամանակյա պայքարը հսկայական նշանակություն էր ստանում, անհրաժեշտ խնդիր էր դառնում «պատրաստել մասսան միաժամանակյա ընդհանուր առաջխաղացման և պատերազմի։

Դրա մեջ է հաղթության գրավականը»[2]։

Գյուղացիների քաղաքական գիտակցությունը օրավուր բարձրանում էր։ Նրանք սկսում էին գիտակցել հող և ազատություն ստանալու համար քաղաքական կարգերի փոփոխության անհրաժեշտությունը։ Անհրաժեշտ էր գյուղացիների մի մասի միջից արմատախիլ անել դեռևս պահպանվող «բարի» և «չար թագավորի» գաղափարը, պետք էր նրանց հասկացնել, որ այս կամ այն անձնավորության փոփոխմամբ դրությունը չի փոխվի, որ դրա համար «պետք է ամբողջ սիստեմը հեղաշրջել նեղքեից մինչև վերև»[3]։

Հայկական գյուղը, որին դաշնակցությունը երկար ժամանակ իր նացիոնալիստական տեռորիստական գործունեությամբ կարողացել էր ահաբեկել և այնտեղ ժամանակավոր տիրապետող դիրք ստեղծել,— ռևոլյուցիայի վերելքի շրջանում վճռական բողոք է հայտնում դաշնակցության դեմ և դատապարտում նրա բռնություններն ու կեղեքումները։

Գյուղում դնալով աճում էր բոլշևիկների հեղինակությունը։ Ժողովրդի մեջ ավելանում էր նրանց համակրողների քանակը։ Այդպիսի պայմաններում «սոցիալ-դեմոկրատիան կարող է իր շարքերը արտաքին կերպով ճոխացնելու համար—շատ բան անել»[4]։ Սակայն մյուս կողմից, ղդուշացնում է Ս. Սպանդարյանը, պետք չէ տարվել քանակով։ Հարկավոր չէ ունենալ գյուղում «միմիայն ա-

---

[1] Ս. Սպանդարյան, Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր, Երևան, 1939, էջ 80։

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում։

[4] Նույն տեղում, էջ 81։

նունով սոցիալ-դեմոկրատ անդիտակից ամբոխը, ինչպես նա ներկայումս հնչակյան է կամ դաշնակցական...

Պետք չէ երբեք մոռանալ, որ կազմակերպության հիմնաքարը գիտակցությունն է»[1]։

Հայկական գյուղում դաշնակցականները իրենց տեսորիստական գործունեությամբ ճնշել ու մեռցրել էին գյուղացիների ակտիվությունն ու ինքնագործունեությունը։ Նրանք ձգտում էին գյուղացուն մեջքը կորացած հլու կամակատար դարձնել։ «Սոցիալ-դեմոկրատիան պետք է այդ երևույթի դեմ կռվի և ամեն կերպ առաջ տանի գյուղացիության ինքնագործունեության սկզբունքը»[2],—գրում էր Ս. Սպանդարյանը։ Այսպիսով, բոլշևիկյան կազմակերպությունների խնդիրն էր գյուղացիությանը դուրս բերել նեղ, սահմանափակ կյանքից դեպի դեմոկրատական-քաղաքական կյանքի լայն տարածք։

Հանդես գալով որպես ցարիզմի սահմանադրական-դրամական գործակալներ և շատ տեղերում իրենց ձեռքը վերցնելով գյուղական հասարակությունների ղեկավարությունը, դաշնակները դատապարտեցնում էին տեսնում առաջավոր գյուղացիների նկատմամբ։ Շնորհիվ դաշնակցական ավանդապետների և սահմանադրական խմբերի օգնության, ցարական կառավարությունը ճնշում էր կարմրաբանների և ցարիզմի դեմ Լոռում, Ղամարլուում, Կոտայքում, Զանգեզուրում և այլուր բարձրացող գյուղացիական ռևոլյուցիոն ելույթները։ Ապստամբած գյուղերը դնում էին էկզեկուցիայի տակ, կողոպտում էին գյուղացիներին և տուգանում բարձր գումարներով։ Դաշնակները գյուղերում և ավաններում ստեղծել էին իրենց դատական տայանները։ Ռևոլյուցիոն բանվորներին ու գյուղացիներին նրանք ցարական իշխանությունների օգնությամբ դատապարտում էին մահվան կամ բշում աքսոր։

Կովկասի նոր փոխարքա Վորոնցով-Դաշկովը հաշվի առնելով Գոլիցինի վարած քաղաքականության տխուր փորձը, սկսեց խորամանկ սիրաշահումներով գրավել և լեզու դնել հայ բուրժուազիայի, նրա նացիոնալիստական պարտիաների և հոգևորականության հետ։ Ժողովրդական մասսաների նկատմամբ նա գործի դրեց ցարիզմի ռեակցիոն քաղաքականության ողջ մեքենան։

1906 թ. ամռանը Վորոնցով-Դաշկովի թույլտվությամբ էջ-

---

[1] Ս. Սպանդարյան, Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր, Երևան, 1939, էջ 81։

[2] Նույն տեղում, էջ 82։

միածնում հրավիրվում է հայ բուրժուազիայի և հոգևորականության «Ազգային սահմանադիր ժողովը»: Ժողովն առաջադրեց մի շարք ռեֆորմիստական պահանջներ: Ստ. Շահումյանը և Սուրեն Սպանդարյանը մերկացրին այդ խորհրդակցության հակաժողովրդական էությունը:

Ռուսական ռևոլյուցիայի բուռն շրջանում, երբ բանվորներն ու աշխատավոր գյուղացիները արյան գնով էին ձեռք բերում իրենց տղատությունը, դաշնակցության կողմից հրավիրված, այսպես կոչված, «Ազգային ժողովը» մի հակառևոլյուցիոն և ռեակցիոն քայլ էր հայ աշխատավորության դեմ, որի նպատակն էր նրան հետ պահել ամենուրեք ծավալվող ռևոլյուցիոն շարժումներից և առհասարակ քաղաքական պայքարից: Այսպես կոչված «Ազգային ժողովի» պատգամավորների ընտրությունները դաշնակները անց էին կացնում չտեսնված կամայականությունների և ռեռորի պայմաններում: Չնայած դրան, բանվորական շրջաններում և գիտակից մասսաների մեջ նրանք որևէ հաջողության չհասան: Այսպես, օրինակ, Թիֆլիսում նրանք ստացան ձայների ընչին փոքրամասնություն, այն է՝ 3—4 տոկոսը: Նրանք իրենց տխրահռչակ գործունեությունը անց էին կացնում հետամնաց խավերի մեջ, գլխավորապես գյուղական շրջաններում: Էջմիածնի կաթողիկոսը կոնդակներ էր հրապարակում «հոգևոր-վարչական հաստատությանց պաշտոնյաներին» ընտրություն անցկացնելու և այլ հարցերի մասին:

Հոգևորականության, հայ բուրժուազիայի և նրա նացիոնալիստական դաշնակցական պարտիայի կողմից մասսաներին խաբելու և նրանց ռևոլյուցիայից հետ պահելու համար ձեռնարկված այդ լիբերալ ոտնձգությունը անողոքաբար մերկացվեց:

Հայ գիտակից պրոլետարիատը պայքարելով ռևոլյուցիայի բոլոր թշնամիների դեմ, գիտակցում էր, որ իր «առաջ դրված է մեծ և պատասխանատու պարտավորություն՝ միացյալ ուժերով Ռուսաստանի պրոլետարիատի հետ՝ անողոք կռիվ մղելու բռնակալության դեմ: Այդ այնպիսի ահագին պատմական դեր է, որ հայ բանվորի համար մեր դատ հայկական «ռևոլյուցիան» հավասարվում է ղեկոյի»[1]:

Այսպիսով, հայ ակտիվ բոլշևիկները, մեծ Լենինի գինակիցներն ու աշակերտները, հայ աշխատավորությանը համախմբում էին ռուսական ռևոլյուցիայի շուրջը; դարձնում էին նրան այդ ռևո-

---

[1] Ս. Սպանդարյան, Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր. 1939, էջ 51:

լյուցիայի ակտիվ մասնակիցը, լուսավորելով նրա պայքարի ուղին մարքսիզմի անպարտելի տեսությամբ։

Դաշնակցությունը հանդես էր գալիս որպես ցարական տիրահաչակ հոկտեմբերի 17-ի մանիֆեստի ջերմ պաշտպան։ Երևանի նահանգապետը իր 1906 թ. զեկուցագրերից մեկում, ցույց տալով դաշնակների կատարած ծառայությունը ցարիզմի հանդեպ, հայտնում էր, որ դաշնակցությունը իր տեսորիզմով կասեցնում է Ալեքսանդրոպոլում, Կարսում և այլուր տեղի ունեցող ժողովրդական ելույթներն ու գործադուրությունները։ Իր մարդատյաց գործելակերպով դաշնակցությունը մասսաների առաջ ամբողջությամբ մերկացրեց իր «սոցիալիստական» դիմակը և ցույց տվեց բուրժուա-նացիոնալիստական իր ողջ էությունը։

1905 թ. ռևոլյուցիան մասսաներին ցույց տվեց բոլշևիկյան պարտիայի, որպես միակ ղեկավարի և առաջնորդող պարտիայի, հսկայական դերը։ Իրենց պայքարի պրոցեսում մասսաները համոզվում էին, որ ազատության և դեմոկրատիայի համար պայքարող միակ պարտիան՝ բոլշևիկների պարտիան է։ Ոչ միայն բանվորական կենտրոններում, այլ նաև գյուղական շրջաններում չտեսնված համակրանք և շարժում է ստեղծվում դեպի բոլշևիկների պարտիան։ Այդ մասին Ս. Սպանդարյանը 1906 թ. գրում է, որ «գյուղացիությունը լայն հոսանքով մղվում է դեպի մեր կուսակցությունը...»[1]։

ՌՍԴԲՊ Կովկասյան Միության 4-րդ կոնֆերենցիան իր ընդունած բանաձևում հատկապես նշում և խնդիր էր դնում լուրջ ուշադրություն դարձնել հայկական ու ադրբեջանական շրջաններում պարտիական աշխատանքը ուժեղացնելու և այդ շրջաններում առաջացած պարտիական խմբերն ամրապնդելու և միաժամանակ նորերը ստեղծելու վրա[2]։

Սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների աշխատանքի շնորհիվ Հայաստանի շրջաններում ու գյուղերում ծավալված ռևոլյուցիոն պայքարը լայն թափ է ստանում։ Հայաստանում գյուղացիական շարժումների հետագա զարգացման համար խոշոր նշանակություն ունեցավ հայ գյուղացիներին ուղղված ՌՍԴԲՊ Կովկասյան Միության կոմիտեի 1905 թ. մարտի 19-ի կոչը՝ որը մեծ քանակությամբ տարածվեց Անդրկովկասի հայաբնակ շրջաններում։

«Հայ գյուղացիներ.— ասվում էր կոչում։— Անցյալ հին ժամա-

---

[1] Ս. Սպանդարյան, Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր. 1939, էջ 83։

[2] Տես „Кавказский рабочий листок", № 8, 1905.

նակները։ Խախտվեց գյուղական թմբությունը։ Գյուղը նմանապես բացեց իր աչքերը և զգաստացավ։

Երեկվա ընկճված և հոգին հավասարեցված գյուղացին այսօր գլուխ բարձրացրած և մեջքն ամրապնդած գոչում է յուր արյունը ծծողների դեմ, թե ինքը ևս արարած է և իրան նմանապես մարդավայել կյանք է հարկավոր»[1]։ Այնուհետև այդ կոչի մեջ նկարագրվում է հայ գյուղացու դրությունը և մերկացվում է ճորտատիրական կարգերի վերացման վերաբերյալ ցարական մանիֆեստի կեղծությունը։ «Այդ հրովարտակը,— կարդում ենք կոչի մեջ,—չազատեց հայ գյուղացուն բեկերի, խաների, կալվածատեր վաշխառուների և որկրամոլ կապալառուների քմահաճությունների և շահագործությունից։ Հայ գյուղացին այդ «մանիֆեստի» մեջ չգտավ իր վաստակի և արյան քրտինքի տպահովությունը, նա չստացավ իր դառն աշխատանքի լիուլի պտուղը, նա մինչև այսօր գերի է նույն կալվածատերերի և կապալառուների ձեռքում։ Նա մինչև օրս զուրկ է օրինական անկախությունից և ազատությունից նրա համար, որ կառավարությունը պաշտպան հանդիսացավ ոչ թե յուր հրովարտակով ազատած գյուղացուն, այլ նույն տգրուկներին, որոնք գյուղացու աղաներն էին մինչև մանիֆեստը[2]։

Այնուհետև կոչում ցույց է տրվում, թե ինչպես գյուղացիությունը տանջվում և քայքայվում է տեղական ճնշողների և ցարական չինովնիկների դաժան լծի տակ։ «Այդ բավական չէ,— ասված է կոչում,— նա (ցարական կառավարությունը—Ս. Ա.) նշանակեց ձեր գլխին մարակավոր պահակներ, մի դուցե հանդգնեք տրտնջալ և մերժել հարկերը վճարել, թե իրան և թե աղաներին։ Նա հրաման տվեց և օրենքով էլ հաստատեց ծախել ձեր վերջին... աշխատող անասունը, ծախել ձեր ջրի կուժը, միայն թե աղաներին դժգոհություն չլինի պատճառած։ Յուր պրիստավների և մինչև անգամ հետին ավազակի ուսերից կարմիր լաթեր կպցնելով՝ իրավունք տվեց գյուղի մեջ քո ընկերներիդ առաջ մտրակով կարմրացնել մեջքդ, միայն թե հարկը վճարես, յուր ինչ պետքն է թե մի տարվա մեջ անասուններդ են կոտորվել, հունձդ պակաս է եղել կամ հարար ու մի տանջանք ես տեսել»[3]։

---

1 ՍՄԿՊ ԿԿ կից ՄԷԼՍԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, պրոկլամացիաների ֆոնդ։

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում։

Կոչը այնուհետև դիմում է գյուղացիներին այլևս չլռել, այդ դաժան կարգերի դեմ պայքարի դուրս գալ ու պայքարի միջոցով ազատություն ձեռք բերել. «Անհրաժեշտ է ձեռնամուխ լինել մեր սոցիալական գործին, որովհետև ժողովրդի ազատության գործը ինքը ժողովուրդը պետք է անհրաժեշտ և ոչ թե թագավորը։

Ուշադիր եղեք, հայ գյուղացիներ, ամբողջ Գուրիան, Իմերեթիան և Մինգրելիան ոտքի են կանգնել, գյուղացիք իրենց մարդկային իրավունքներն են պահանջում։ Նրանք միացած քաղաքի բանվորների բազմության հետ, դիմում են տապալելու բռնակալի օրենքները և սահմանած կարգերը»[1]։

Այնուհետև կոչում առաջադրվում են 10 կետից բաղկացած պահանջներ։ Այդ պահանջները արտացոլում են բոլշևիկյան պարտիայի հիմնական դրույթները ազրարային հարցի լուծման վերաբերյալ՝ ռուսական առաջին ռևոլյուցիայի ժամանակաշրջանում։

Կոչն ավարտվում է հետևյալ խոսքերով. «Ուրեմն հառաջ, հայ գյուղացիներ, միացած քաղաքացի բանվորների հետ, դիմեցեք դեպի դեմոկրատական հասարակապետություն, միասին արմատախիլ անենք ղզվելի օրենքը և ստոր բռնակալությունը, որպեսզի ճանապարհ բանանք դեպի հավասար և համակրելի կյանքը, դեպի սոցիալական օրենքներն ու կարգերը, որոնց այնքան տենչանքով դիմում են քաղաքի բանվորները և ազատացած գյուղացիները»[2]։

Այս և նման կոչերն ու պրոկլամացիաները աշխատավոր գյուղացիության մեջ բարձրացնում էին ռևոլյուցիոն տրամադրություններ։ Գյուղացիությունը հափշտակված լսում էր սոցիալ-դեմոկրատ ագիտատորներին, որոնք խոսում էին գյուղացու կարիքի և այդ կարիքից դուրս գալու ելքի մասին։ Շատ տեղերում նրանք կազմակերպում էին գյուղացիական կոմիտեներ՝ կալվածատիրական հողերը բռնագրավելու համար։

«...Պիտի ասենք,— գրում է «Պրոլետարիատի կոիվը»,— որ իրերի ընդհանուր դրությունը և գյուղացիների տրամադրությունը սոցիալ-դեմոկրատական ագիտացիայի համար լավ հող են նախապատրաստում։ Գյուղացիները լսելով, որ իրենց կարիքների մասին խոսելու ժողով պիտի լինի, ուրախությամբ են հավաքվում։ Մի քանի գյուղերում, իրենց, գյուղացիների առաջարկությամբ, գաղտնի և անմիջական քվեարկությամբ գյուղական կոմիտեներ են ընտ-

---

[1] ՍՄԿՊ ԿԿ կից Մ.Լ.Մ.Ի-ի Հայկական ֆիլիալի արխիվ, պրոկլամացիաների ֆոնդ։

[2] Նույն տեղում։

տրվում։ Այս կոմիտեները վարում են գյուղական ներքին գործերը, համայնքային մեջ ծագող վեճերն ու տարաձայնությունները, տարածում են գրականություն և տեղացիներին գյուղական ժողովի հրավիրում։ Մի խոսքով, նկատվում է, որ գյուղացիները մեծ համակրանք են ցույց տալիս մեր ագիտացիային և ուշադրությամբ լսում են մեր ասածները։ Բացառություն են կազմում մի քանի գյուղեր, որոնց մեռած օղակով շրջապատել են «դաշնակցությունը»։ Այս կուսակցության ագենտներն ինչ միջոցի տես դիմում են... որպեսզի իրենց ձեռքում պահեն արդեն մի անգամ իրենց կողմ ձգած գյուղացիներին»[1]։

Այնուհետև, «Պրոլետարիատի կոիվը» թերթը նշում է, որ Ջալալօղլիում և հայկական մյուս գյուղերում դաշնակները տեռորի են ենթարկում բոլոր նրանց, ովքեր ցանկանում են ինքնուրույն կերպով մտածել և մասնակցել հասարակական կյանքին։ «Դաշնակցական զինվորները» հետևում ու բանտարկում են այն ամենին, ով հանդգնում է «խելքին զոռ տալ» և իրենց քեֆի ուզածի պես չմտածել։ Կարճն ասած, իրենց հայացքներին հակառակ համոզմունքները «ինասակար» համարելով, խիստ հալածում են»[2]։

Չնայած ցարական կառավարության չինովնիկների, կալվածատերերի ու բուրժուական նացիոնալիստների գործադրած ռեպրեսիաներին, գյուղացիների պայքարը գնալով ուժեղանում էր։ 1905 թ. մարտի 4-ին Ղարաբիլիսայի կալվածքներից մեկի կառավարիչը տագնապով հաղորդում էր, որ գյուղացիները պատրաստվում են ապստամբության. նա կառավարությունից օգնություն էր խնդրում այն ճնշելու համար։ Միաժամանակ նա պահանջում էր կառավարական օրգաններից գենք բաց թողնել՝ տեղում սեփական ուրյակային խմբեր կազմելու և գյուղացիների դեմ պայքարելու համար[3]։

1905 թ. նախօրյակին, ինչպես նաև ռևոլյուցիայի տարիներին, Երևանի նահանգում գյուղացիական գժգոհությունները ու ելույթները մեծ չափերի են հասնում։ Այդ ելույթները երկրամասում տագնապային դրություն են ստեղծում։ Զգալի չափով ուժեղացվում է

---

[1] «Պրոլետարիատի կոիվը», № 6, 1905։

[2] Նույն տեղում։

[3] Տես ՍՄԿՊ ԿԿ կից Մ.Լ.Մ.Ի-ի Վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 2, գ. 112, թ. 22։

ստիկանական հսկողությունը և հալածանքները գյուղացիների նկատմամբ [1]:

1904—1905 թթ. վանքապատկան հողերի վրա աշխատող եղվարդցիները պայքարի դուրս եկան և հրաժարվեցին վճարել հարկերն ու բաղմապիսի տուրքերը: Նույն ձևով վարվեցին նաև Բանաքեռի և նրա շրջապատի հայ և ադրբեջանցի գյուղացիները:

1906 թ. գարնանը գյուղացիական ուժեղ ելույթներ են տեղի ունենում Շամշադինի մի շարք գյուղերում: Գյուղացիները ապըստամբում են կալվածատերերի ու ցարական չինովնիկների դեմ և գրավում կալվածատիրական հողերը: «Շամշադինի ու մոտակա գյուղերում,— գրում է «Կայծ» թերթը,— համառ կռիվներից հետո ճնշեցին գյուղացիական շարժումները, ձերբակալեցին գյուղական կոմիտեի անդամներին: Կալվածատեր Արամյանի հողերը հանձնվեցին իրեն, Բեկ Յուսուբովի 1500 դես. նույնպես, որը գրավել էին գյուղացիները:

Սրանից 10—15 օր առաջ, կազակները գյուղացիների շարժումը խեղդեցին արյան մեջ: Այժմ նրանք թալանում ու ավերում են գյուղերը, առևանգում կանանց ու ջահել աղջիկներին: Բռնագրավում են գյուղացիների ողջ ունեցվածքը, ցանկանում են հիմքից կործել ուսուցչին շարժումները, սակայն չեն կարողանում ոչնչացնել գյուղացիների ատելությունը, ցասումը դեպի միապետական կարգերը, դեպի կալվածատերերը և շրջանային սատրապները» [2]:

Գյուղացիական ելույթներ տեղի են ունենում նաև Փարբի, Օշական, Մաստարա, Կարբի և մի շարք ուրիշ գյուղերում: Կարբի գյուղում գյուղացիական շարժման ղեկավարներին բանտարկում են և գյուղի վրա էկզեկուցիա նշանակում: Այստեղ 20 օր շարունակ կազակների ջոկատը ամեն տեսակ կամայականություններ և հնշումներ էր գործադրում:

Բաղմաթիվ գյուղերում գյուղացիները վանդում են կալվածատերերին ու նրանց ներկայացուցիչներին և հարաժարվում են հարկեր վճարելուց: Կոտայքի Ջառ գյուղի կալվածատեր Հաջի Ալասկյար Օղլին բողոքում էր, որ գյուղացիները հրաժարվում են տուրքերը վճարելուց և սպառնում են իրեն:

Իրենց պայքարում գյուղացիները հետևում էին Ռուսաստանում տեղի ունեցող գյուղացիական շարժումների օրինակին: «Բույլ չենք

---

[1] Տես Հայկական ՍՍՌ ԿՊԱ. ֆ. 70, գ. 13, թ.թ. 61—62:
[2] «Կայծ» № 7, 1906:

տա ոչ ոքի մուլք վճարել,—գրում են գյուղացիները,— հակառակ դեպքում, կայրենք բերքը դաշտում, ինչպես այդ անում են գյուղացիները Ռուսաստանում»[1]: Նույնն էր կատարվում նաև Բժնի գյուղում և մի շարք ուրիշ գյուղերում: Կալվածատեր Գեղամովը Կոտայքի Գյոյքիլիսա գյուղի բնակիչներից բողոքում էր, որ նրանք գյուղից դուրս են վռնդել իր գործակատարին և այլևս նրան չենք ընդունում: Այդպես էին վարվում պայքարի դուրս եկած գյուղացիները Անդրկովկասի համարյա բոլոր շրջաններում[2]:

Գյուղացիների համբերության բաժակը լցվել էր: Ինչպես այդ հետևում է բազմաթիվ հաղորդագրություններից, նույնիսկ բանտ նետելու և Սիբիր աքսորելու սպառնալիքի առաջ հրաժարվում էին տերերին հարկեր վճարելուց: Գյուղացիական շարժումները առանձնապես ակտիվ բնույթ են ստանում Լոռիի գավառում, որտեղ գյուղացիները դտնվում էին չափազանց ծանր դրության մեջ[3]:

1905 թ. դեկտեմբերի 2-ին Ջալալ—օղլիում տեղի ունեցավ ղորակոշիկների միտինգ: Միտինգի մասնակիցները քննեցին տրվյալ պայմաններում զինվորական ծառայության գնալու հարցը: Նրանք միաձայն որոշեցին «1) կառավարությունից պահանջել անմիջապես դադարեցնել հայ-թաթարական կոտորածը, 2) ծառայության ժամկետը կրճատել, հասցնելով 2 տարու, 3) ավելացնել ռոճիկը, դարձնելով ամսական 5 ռ. և մինչև այս պահանջների բավարարում չստանալը ծառայության չգնալ»[4]:

Միտինգը միաժամանակ իր համակրանքն էր ցույց տալիս փոստ-հեռագրական աշխատողների գործադուլին, նրանց կողմից մղվող համառ պայքարի համար:

Միտինգը որոշեց կազմակերպել նաև դրուժինաներ ժողովրդի անդորրությունը եղբայրասպան ընդհարումներից պաշտպանելու համար[5]:

Գավառում գյուղացիական շարժումների հետագա ծավալման համար խոշոր նշանակություն ունեցավ Լոռիի սոցիալ-դեմոկրատական գյուղական կազմակերպությունների կոնֆերանսը: Կոնֆե-

---

[1] Հայկական ՍՍՌ ԿՊԱ, ֆ. 27, գ. 27, թ. 26:

[2] Տես Վորոնցով-Դաշկովի նշված հաշվետվությունը, էջ 6, „Кавказское сельское хозяйство", № 80, 1905.

[3] Տես «Պրոլետարիատի կռիվը», «Կայծ», «Նոր խոսք»:

[4] „Кавказский рабочий листок", № 11, 1905.

[5] Նույն տեղում:

բանը գյուղացիներին կոչ արեց գրավել կալվածատիրական և վանքապատկան հողերը և դրանք բաժանել աշխատավորության մեջ, չվճարել կալվածատիրական և պետական հարկերը, ընտրել գյուղական դատավորներ, դուրս քշել պրիստավներին և մյուս բոլոր չինովնիկներին, ստեղծել գյուղական կոմիտեներ, սահմանել պարտադիր ուսուցում բոլորի համար և այլն[1]:

Ռևոլյուցիոն մի պրոկլամացիայում նշվում էր, որ աշխատավորները տեսան ցարիզմի խարեբայությունն ու ռեակցիոն-քաղաքականությունը, որը չեղյալ համարեց խոսքի, մամուլի և ժողովների ազատությունը, տեսան, թե ինչպես սկսեց իշխել սև ռեակցիան: Գյուղացիությունը, որը մի ժամանակ «...աստվածացնում էր «Հայր թագավորին», օր-օրի վրա երես է թեքում նրանից և համոխմրվում է պայթարի նոր պրոլետարիատի շուրջը: Կառավարության նկատմամբ անվստահությունը ավելանում էր ամեն օր, նրանք չեն ցանկանում զինվոր տալ: «Զինվոր չտալ» — լոզունգը դառնում է մասսայական լոզունգ: «Հայր թագավորին» բոյկոտի են ենթարկում և տառում են նրան»[2]:

Գավառի ռևոլյուցիոն շարժումների մեջ առանձնապես աչքի էին ընկնում Հաղպատ գյուղի աշխատավոր գյուղացիները:

«Կայծ»-ի թղթակիցը «Նամակ Հաղպատից» իր հոդվածում 1906 թ. հունիսի 15-ին գրել է, որ Բորչալուի գավառի Հաղպատ գյուղը, չկարողանալով տանել կալվածատեր իշխան Բարաթովի լուծը, ապստամբեց, պահանջելով հող և ազատություն: Գյուղացիների այդ օրինական պահանջին բռնապատիշները պատասխանեցին անասելի դաժանությամբ և արյունալի կոտորածով: Գավառապետ Սվալիանովի «Պատժիչ արշավախումբը» շատ կարգով ժամանեց Հաղպատ, շրջապատեց գյուղը և սկսեց սրի ու հրի մեջ խեղդել անզեն գյուղացիներին: Ջդիմանալով զորքերի համազարկերին, գյուղացիները ստիպված էին նահանջել «... գյուղացիները տեղն ու տեղը ոմբ կանանց, երեխաների ու մարդկանց դիակներ թողնելով փախան անտառները... Հաղպատը մնաց բաշիբոզուկների արամադրության տակ... ամեն բան տակն ու վրա արին, մնացին այնքան, որ ուտելու ամեն բան հատավ մինչև սովից ստիպ-

---

[1] Տես ՍՄԿՊ ԿԿ կից Մ.Լ.Ս.Ի-ի Հայկական ֆիլիալի արխիվ, Ս. Էվոյանի հիշողությունները:

[2] Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, դ. 194, թ. 92:

ված հեռացան»[1]: Ցարական բարձրաստիճան չինովնիկները գովաբանում և ոգևորում էին արյունոտ դահիճների այդ վայրագությունները:

Իշխան Բարաթովը հաղպատցիներին դաժան չարչարանքների ենթարկելուց հետո վաճառեց իր կալվածքը հայտնի կապիտալիստ-կալվածատեր Արամյանցին: Հաղպատի նոր տիրակալի լուծը գյուղացիներին նորանոր զրկանքների առաջ կանգնեցրեց: «Իշխան Բարաթովի անօրենություններից ազքատացած հաղպատցին այսօր ենթարկված է հայտնի միլիոնատեր Արամյանցի բարբարոսություններին...»[2],— գրում է «Կայծ» թերթը:

Թե որքան դաժան էր Արամյանցի լուծը, ցույց է տալիս ակտնատեսի հետևյալ վկայությունը. «Մի խումբ սարաժնիկներ սպասավորված, Արամյանցի առաջնորդությամբ, խեղճ ու կրակ գյուղացիների տարիների ընթացքում արյուն քրտինքով աշխատած, խնամած այգիները, նրա մեջ գտնված պտղատու ծառերը, այսօր ոտքերի տակ ոչնչացվում են»[3]: Իսկ գյուղացիների վրա ամեն կողմից բարձրանում էր ոստիկանի և կալվածատիրոջ մարակն ու գավազանը, սուրն ու հրացանի կոթը. «... և այս բոլորը կատարվում է այսօր... երբ ամեն օր հեռագիրները լուր են բերում Ռուսաստանի ամեն կողմից հողային և բանվորական շարժումների մասին, հող և ազատություն ձեռք բերելու համար... երբ արդեն մոտեցել է այն ժամանակը, որ ժողովուրդը պիտի դատե իր դահիճներին, այդ բոպեին պ. Արամյանցը նոր էներգիա առած սարսափներ է տարածում հաղպատցիների մեջ...»[4]: Այնուհետև թղթակիցը նշում է, որ տղրուկ Արամյանցն ու նրա նմանները պետք է պատասխան տան ժողովրդի առաջ իրենց բազմաթիվ չարագործությունների համար: Գյուղացիներին դիմելով, թղթակիցը գրում է. «... իսկ դուք տանջված հաղպատցիներ, թեև շրջապատված եք շովինիստական կուսակցության ցանցերով պատած գյուղերով, բայց նրանք ևս տանջվում են թե նույն կուսակցությունից և թե կալվածատերերից և մոտ է այն ժամանակը, երբ նրանք պիտի թափ տան իրենց ուսերից այն ծանրությունը, որը դերեզմանաքարի չափ ճնշող է նրանց համար...»[5]:

Լոռիի շրջանի գյուղացիները 1906 թ. հուլիսին որոշում են

---

[1] «Կայծ», № 30, 1906:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում:

կալվածատերերին հարկեր չտալ և կալվածատիրական պարտավորությունները չկատարել, սակայն դաշնակները ամեն կերպ ձգտում են գյուղացիներին համոզել և նրանց կալվածատերերին ենթարկել։ «Կայծ» թերթը հայտնում է. «...Լոռիում կալվածատիրական հողերի վրա ապրող գյուղացիք մի ժողով են ունեցել, որտեղ պարզ. դաշնակցականները որոշել են, որ գյուղացիք այս տարի կալվածատերերին տան նախկին տարիների տված տուրքի կամ փողի կեսը, որովհետև կալվածատերերը «մեղք» են։ Այս վճիռը համարյա դառնում է պարտադիր, բայց մենք տեսնում ենք, որ շատ տեղերում կալվածատերերը միայն սպառնալիքներ անելով գյուղացիներից ստանում են ամբողջը»[1]։

«Կայծի» թղթակիցը «Արդարապատ առաջնորդը» հոդվածում 1906 թ. հուլիսի 24-ին գրում է, որ «Լոռվա շրջանի 40 հայ գյուղերի մեջ Հաղպատը հայտնի է որպես հեղափոխական գյուղ»։ Խոսելով դաշնակցության ռեակցիոն դերի մասին, նշվում է, որ «մեր «սոցիալիստ» դաշնակցականները մտնում են բոլոր հայկական անկյունները և... նրանց բթացնում են զանազան ուտոպիական «Տաճկա-Հայաստանի» իլյուզիաներով և այդպիսով հայ գյուղացիությանը մի ռեակցիոներ տարր են դարձնում ռուսական մեծ հեղափոխության մոմենտին։ Եվ որքան շրջել եմ այս քանի օրս Լոռվա գյուղերը, միայն մի բան եմ լսել—այն, որ բոլոր գյուղերը երդում են տալիս Հաղպատին և պատկառանքով են խոսում այդ գյուղի մասին»[2]։

Գյուղացիները հալածանքի ու ճնշման էին ենթարկվում ոչ միայն կալվածատերերի ու ցարական չինովնիկների, այլև հոգևորականների կողմից։ Գյուղացիներին դաժանորեն ճնշում էր Հաղպատի վանքի Միքայել վարդապետը, որը «...տարիներից ի վեր կերել է ամբողջ վանքի հարստությունը և ոչ մի կերպ ցույց չի տվել ժողովրդին... Եվ գիտակից ժողովուրդը պահանջում է, որ հեռացվի ամբողջապես ձրիակեր վարդապետը և վանքական գործերը ղեկավարելու իրավունքը անցնի ժողովրդի ձեռքը»[3]։ Գյուղացիների անընդհատ բողոքները մնում էին անհետևանք։ Թիֆլիսից եկած հոգևոր առաջնորդը ամբողջովին արդարացրեց ժողովրդի արյունը

---

[1] «Կայծ», № 43, 1906։

[2] Նույն տեղում, № 46։

[3] Նույն տեղում։

ծծող վարդապետին, որը «...կեղեքում է ոչ միայն հաղպատցիներին, այլ ամբողջ Լոռին և Ղազախը»[1]։

«Նոր խոսք» թերթը «Կովկասյան կյանք» հոդվածում գրում է, որ Լոռվա շրջանում գյուղացիները գլխավորապես ապրում են պետական հողերի վրա, բայց քանի որ այդ հողերը շատ քիչ են, գյուղացիները ստիպված են կապալով վերցնել Լոռիս-Մելիքովի, Քալանթարների և Եղիգարովի կալվածքների հողերից։ Այսպես, օրինակ, եթե գյուղացին կալվածատիրոջից վարձակալությամբ հող է վերցնում «մի օրավար (կես դեսյատին) գարնանը և վճարում 4 ռ. վարում, ցանում, հնձելու ժամանակ դարձյալ 4 ռ., իսկ հնձելուց հետո արտի տակը դարձյալ գյուղացիների վրա ծախում է որպես արոտատեղեր։ Ահա մինչև օրս Լոռվա գյուղացին տարել է այս սարսափելի կեղեքումները, բայց ներկա քաղաքական-տնտեսական շարժումները արձագանք տվին նաև Լոռում ու գյուղացիք հետզհետե թերվում են դեպի հեղափոխական ճանապարհը»[2]։

Ագրարային-գյուղացիական շարժումներին կազմակերպված բնույթ տալու և դրանք ղեկավարելու համար ՌՍԴԲՊ Բորչալուի կազմակերպությունը լայն աշխատանք է ծավալում գավառի աշխատավոր մասսաների մեջ։ 1906 թ. օգոստոսի 12-ին «...Այգեհատում գյուղացիները հավաքվելով զանազան գյուղերից կազմեցին մի միտինգ ՌՍԴԲՊ Բորչալուի կազմակերպության անդամների ղեկավարությամբ և վճռեցին փոփոխության ենթարկել մինչև օրս կատարվող տուրքերի և արենդների եղանակը...»[3]։

Հաղպատ գյուղից 10—13 վերստ հեռավորության վրա գտնվում էր իշխան Բարաթովի անտառը, որտեղից կապալառուները փայտ էին պատրաստում Ալավերդիի գործարանների և երկաթուղու կառուցումների համար։ Շրջակա գյուղերի չքավոր գյուղացիները անչափ կարիքի մեջ լինելով գնում էին կապալառուների մոտ աշխատելու։ «Նոր խոսք» թերթի թղթակիցը գրում է, որ այդ «...տղրուկների մոտ բանվորները աշխատում են 60 կոպեկ օրավարձով»[4], սակայն այդ էլ ստանալը կապված էր շատ մեծ դժվարությունների հետ։ Անցնում էին շաբաթներ ու ամիսներ, բայց կառավարիչը ամեն անգամ խաբում և ճանապարհ էր գցում, ասելով, որ «փաղեթինը չկա»։ «Խեղճ գյուղացիները շաբաթական մի քանի

---

1 «Կայծ», № 16, 1906։

2 «Նոր խոսք», № 5, 1906։

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում, № 31։

անգամ ըստ կառավարչի նշանակած ժամերի իջնում են գյուղից և կրկին դատարկաձեռն վերադառնում գյուղ»[1]։

Անգութ կառավարիչները կտրում էին գյուղացու արյան քրտինքով ձեռք բերած աշխատավարձը և ապա երկար ձգձգումներից հետո միայն վճարում։

«Կայծի» թղթակցի հաղորդմամբ կարկուտի հետևանքով, որը ոչնչացրել էր Հաղպատի արտերի մի զգալի մասը, գյուղացիները իրենց ընդհանուր միտինգում կալվածատեր Արամյանցի կառավարչի ներկայությամբ որոշում են գյուղից անմիջապես հեռացնել կալվածատիրոջ ստրաժնիկներին, իրավունք տալ գյուղացիներին անտառից փայտ բերելու, բոլոր տեսակի հարկերը չվճարել և այլն[2]։

Գյուղացիները շատ հաճախ ապստամբելով դատաստան էին տեսնում իրենց համար ատելի կալվածատերերի, բեգերի ու աղաների հետ։ Այդպես, Ջալալօղլի շրջանի Գյառդյառ գյուղի գյուղացիները սպանել էին բոլորին ատելի շահագործող Արազ-Բեգ Շահվերդյանին։ Ոստիկանությունը պահանջում էր գյուղացիներից՝ հանձնել սպանողին, բայց վերջիններս հրաժարվում էին իրենց եղբայրներին ոստիկանության ձեռքը հանձնել։ Ոստիկանները սարսափելի հալածանք են սկսում գյուղում և սպառնում են 12 հոգու վարչական կարգով աքսորել, իսկ գյուղի վրա էկզեկուցիա նշանակել[3]։ Այդ նույն գյուղում գտնվում էր մի զորամաս, որին կարգադրված էր հնձել պետական խոտհարքները։ Զինվորները հրաժարվում են այդ հրամանը կատարելուց և գործադուլ են հայտարարում։ Այդ զինվորներին պահում էին վատ պայմաններում։ Նրանց կերակրում էին հոտած ճաշով։ Զինվորները հրաժարվում են նման ճաշը ուտելուց. «Շունն էլ չի ուտի այս, մեզ մարդավայել կերակուր տվեք»[4], հայտարարում էին զինվորները։ Այնուհետև նրանք կապ են պահպանում գյուղացիների հետ և շարունակում են պայքարը կալվածատերերի և իշխանության ներկայացուցիչների դեմ։

«Բորչալուի գյուղացիներին» վերնագիրը կրող մի ռևոլյուցիոն պրոկլամացիայի մեջ նշվում է դաշնակների քայքայիչ և ավան-

---

[1] «Կայծ», № 34, 1906։
[2] Նույն տեղում, № 37։
[3] Նույն տեղում, № 43։
[4] Նույն տեղում։

տյուրիստական գործունեության մասին, որոնք շրջելով գյուղերը, տեղերում ստեղծում են դաշնակցական կոմիտեներ «...առաջուց իմանալով, թե գյուղի մեջ ով մեծ ձայն ունի, որ նրան կոմիտեի անդամ դարձնեն, որպեսզի նա կարողանա գյուղը իր լուռն մեջ պահել և այլն։ Իսկ դուք գիտեք որ ո՞ւմ ձեռքին է լինում գյուղը. մի քանի վաշխառուներ, հարուստ հողատերեր և չաթուրյասաններ... Եվ ահա սրանցից կազմած կոմիտեն կառավարում է գյուղը և նույն դաշնակցության գյուղի մեջ ունեցած գործերը»[1]։

Գյուղացիներին ուղղված այդ կոչում ասվում է, որ Ռուսաստանի, Վրաստանի, Գուրիայի և այլ տեղերում ապստամբած գյուղացիները «...բոյկոտ են անում կալվածատերերին, հրաժարվում են բռնակալ կառավարության ու կալվածատերերի հարկերը վճարելուց...»[2]։ Այդ նույն ժամանակ Բորչալուի գավառում «...դաշնակցություն կոչված կուսակցության նշանակած վաշխառուներից ու այլ անպետք մարդկանցից կազմած «կոմիտեները» քերթում են աղքատ գյուղացու կաշին, պահանջում, որ նա անհապաղ վճարի կալվածատիրոջ ու բռնակալ կառավարության հարկերը»[3]։

Աղքատ ու չարքաշ գյուղացուն դաշնակ բախտախնդիրները իրենց տեռորիստական գործունեությամբ ստիպում էին իր վերջին ունեցվածքը ծախել, վաշխառուի պարտքը տալ և «ղոչի» մաուզերիստներին էլ բաժին հասցնել։ Դիմելով ցարական չինովնիկների, կալվածատերերի, հոգևորականների և դաշնակցական խմբապետերի ծանր հալածանքների տակ տառապող գյուղացիությանը բոլշևիկները ռևոլյուցիոն կոչերից մեկում գրում էին. «Ձեզ ենք հարցնում գյուղացի եղբայրներ, այդպես են անում թե չէ՞։ Միթե նույն ծեծը չի, ինչ որ կազակն ու ստրաժնիկը, պրիստավը և գավառապետն են տալիս։ Ինչ զանազանություն կա սրանց ու նրանց մեջ»[4]։ Այդ նույն փաստաթղթում կոչ է արվում գյուղացիներին բացահայտել դաշնակների իսկական դեմքը, որպես ժողովրդի երդվյալ թշնամիների և չհավատալ նրանց սուտ խոստումներին։ «Գյուղացիներ, ուշքի եկեք,— ասված է կոչի մեջ։— Իմացեք, թե ում հետ եք դուք գործ բռնել։ Լավ հասկացեք, թե ինչ եք անում։ Միթե չեք կարդացել, որ Ալեքսանդրոպոլում, երբ բանվորները հավաքվել

---

1 ՍՄԿՊ ԿԿ կից ՄԷԼՍԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, դ. 108։

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում։

էին իրենց կարիքների մասին խոսելու, նույն դաշնակցության անդամները ղենքը ձեռներին քշել են նրանց»[1]։

Դաշնակները նույն գործելակերպով էին շարժվում նաև Կարսում և Հայաստանի բոլոր շրջաններում։ Եվ այս բոլորը, նրանք կատարում էին, «իբր թե «ազգի շահերը» պաշտպանելու համար»[2]։

Այդ կոչն ավարտվում էր հետևյալ խոսքերով. «գյուղացիներ, մենք կոչ ենք անում ձեզ, երես դարձրեք ձեր սուտ բարեկամներից, իմացեք, թե ով է ձեր բարեկամը և ով—թշնամին... հասկացեք, որ մեր, չունևորներիս, քաղաքի և գյուղի ղարիբ ու անճար մարդկանց թշնամին մեկ է։ Դուրս եկեք ձեզ կապկպող մարդկանց ճանկերից, միացեք ձեր ընկեր քաղաքի բանվորների հետ, կռվեցեք ցարի և նրա պաշտպան կալվածատերերի դեմ. դեն շպրտեցեք ձեր արյունը ծծող վաշխառուներին և մտեք սոցիալիստական դրոշակի տակ»[3]։ Բոլշևիկների այդ կոչերն ու պրոկլամացիաները խոշոր նշանակություն ունեին գյուղացիների հետագա պայքարի վերելքի ու ծավալման համար։

1905 թ. սեպտեմբերի 23-ին Կովկասի ոստիկանական վարչությունը իր զեկուցագրում հայտնում է Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին, որ Նոր Բայազետի սահմանակից շրջաններում դժգոհությունն ու քաղաքական ելույթները մասսայական բնույթ են կրում։ Նախիջևանի և Շարուր-Դարալագյազի գավառներում բարձրացող ընդհանուր դժգոհությունը զգալի կերպով աղդեցություն թողեց նաև մյուս գավառների վրա, ինչպես նաև Նոր Բայազետի գավառի վրա[4]։

Սարսափած Կովկասում ամենուրեք տարածվող ռևոլյուցիոն շարժումներից ոստիկանությունը շտապ կերպով ուժեղացնում է հսկողությունը նույնիսկ շարժման մեջ չընդգրկված վայրերում[5]։ Բայց գյուղացիական շարժումները գնալով վերելք էին ապրում։

Գյուղացիական շարժման ալիքը ընդգրկում է նաև Զանգեզուրը։ Ռևոլյուցիայի տարիներին Զանգեզուրի գավառում ստեղծվում են սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ, որոնց հիմնա-

---

1 ՍՄԿՊ ԿԿ կից ՄԵԼՍԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 168։
2 Նույն տեղում։
3 Նույն տեղում։
4 Նույն տեղում։
5 ՍՄԿՊ ԿԿ կից ՄԵԼՍԻ-ի Վրաց. ֆիլիալի արխիվ, ֆ. 2, գ. 112, թ. 4։

դիրները Բաքվից վերադարձած բանվորներն էին։ Առանձնապես ուժեղ էր Խնձորեսկի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը։

Զանգեզուրում գյուղացիների զգալի մասը գնում էր բոլշևիկների նեպից և վճռական պայքար էր մղում ցարիզմի և նրա պաշտպան նացիոնալիստական պարտիաների ազդամոլ քաղաքականության դեմ։ 1906 թ. հունվարի 27-ին Խնձորեսկում դաշնակների և աշխատավորության միջև զինված ընդհարում տեղի ունեցավ։ Աշխատավոր գյուղացիները կտրականապես հրաժարվեցին զենք գնելու համար դրամ հավաքել, որ պահանջում էին դաշնակները։

Վերջիններն ուզիմատում ներկայացրին, բայց գյուղացիները մերժեցին այն և զինված ուժով ետ շպրտեցին դաշնակցական սավանտյուրիստական խմբերի հարձակումը։

Ցարական ճնշումների դեմ զինված պայքարի են բարձրանում Զանգեզուրի Քարահունջ (Գորիսի մոտ) գյուղի բնակիչները։ Գեներալ Բաուերի հրամանատարությամբ ցարական զորքերը զենքի ուժով ճնշում են գյուղացիների ելույթը։ Գեներալը պահանջում է գյուղացիներից հանձնել խուսվարարներին, բոլոր զենքերը և 1500 ռուբլի տուգանք։ Գյուղացիները հրաժարվելով կատարել այդ պահանջը, թողած տուն ու տեղ փախչում են գյուղից և պատսպարվում խուլ անկյուններում ու լեռներում[1]։

Ինչպես Հայաստանի մյուս վայրերում, այնպես էլ Կարսի մարզում գյուղացիությունը գտնվում էր սոցիալական ու տնտեսական ծանր վիճակում։ Ճորտական կարգերի ծանր ռեժիմը, բազմաթիվ հարկերն ու պարտավորությունները, որ կատարում էին գյուղացիները, վերջնականապես քայքայել էին նրանց տնտեսությունները և բոլորովին ոնեզրկել նրանց։ Ավելի վատթար դրության մեջ էին գտնվում այստեղ ներգաղթած գյուղացիները[2]։

---

[1] Տես «Մշակ», № 206, 1906։

[2] Հայտնի է, որ 1893—94 թթ. Սասունի և Էրզրումի դեպքերից հետո հայերը իրենց գոյությունը պահելու և սուլթանի դահիճներից ազատվելու համար Թյուրքիայից վաստայարար սկսում են գաղթել Կարսի մարզը, առավելապես Կաղզվանի օկրուգը։ Եթե Կարսի մարզի բնակչության թիվը 1888 թ. 174.044 շունչ էր, ապա այն զգալի կերպով աճեց գլխավորապես ներգաղթի հաշվին և 1897 թ. մարդահամարի ժամանակ հասավ 292498 շնչի։ Այդ ժամանակամիջոցում բնակչության աճը Կարսի մարզում կազմում էր 68 տոկոս, մինչդեռ Երևանի նահանգում 20 տոկոս, իսկ ամբողջ Անդրկովկասում 17 տոկոս (Տես Կովկասյան օրացույց, 1900 թ.)։ Ներգաղթած հայերը տնտեսապես քայքայված էին և հողազուրկ, իսկ ցարական կառավարությունը որևէ

1902 թ. հայ գաղթականները կառավարական հատուկ կարգադրության համաձայն դրանցվեցին Կաղզվան տեղամասում և առանձին գյուղերում, բայց առանց հողաբաժնի իրավունքի։ «Այդ հանգամանքը նրանց հուսախաբության մեջ դցեց,— ասված է ցարական չինովնիկի հաղորդագրության մեջ,— իսկ մի մասի մեջ էրզայրույթ առաջացրեց դեպի կառավարությունը»[1]։

Գյուղացիների մի մասը ստիպված էր շատ բարձր գներով վարձակալությամբ հող վերցնել կալվածատերերից։ 1905 թ. Կարսի գյուղացիները մի դիմում են ուղղում Կովկասի փոխարքային, որտեղ նրանք նկարագրում են փրենց թշվառ կյանքը և նշում, որ այդպես «ապրել այլևս հնարավոր չէ»։ Գյուղացիները խնդրում էին Կովկասյան գյուղատնտեսական ընկերությանը միջնորդելու փոխարքայի առաջ, որպեսզի պետական հողերից փրենց հողաբաժին հատկացվի[2]։

Վատ էր նաև տեղական գյուղացիների դրությունը։ Գոյություն ունեցող կիսաճորտատիրական կարգերը, բեգերի, աղաների, մելիքների և կալվածատիրական մյուս խավերի մեծ չափի հասնող, շատ անգամ ոչ մի օրենքով չնախատեսված հարկերը և պարտավորությունները, ցարական չինովնիկների կամայականությունները, սահմանամերձ շրջանի զինվորական ռեժիմը գյուղացիությանը դցել էր տնտեսական և քաղաքական ծանր դրության մեջ։ Դրան ավելանում էին սահմանամերձ գյուղերը, քշում, տանում էին գյուղացիներին, որոնք շատ հաճախ անարգել կերպով ավերում ու թալանում էին սահմանամերձ գյուղերը, քշում տանում էին գյուղացիների անասունները և անպատիժ կերպով կոտորում էին դիմադրություն ցույց տվող գյուղացիներին։ Տեղական և կենտրոնական արխիվներում մնացել են բազմաթիվ փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս տեղական և օտար բռնակալների լծի տակ տառապող գյուղացիների ծանր դրությունը։

Կարսի մարզի նահանգապետը 1906 թ. նոյեմբերի 5-ին ստիպված էր հայտնել, որ գյուղացիության տնտեսական դրու-

---

նպաստավոր պայմաններ չստեղծեց նրանց տնտեսական դրությունը բարելավելու համար։ Այստեղ բնակվելով, նրանց մի մասը օրավարձով աշխատանք էր գտնում, կամ թե վարձակալությամբ հող էր վերցնում բարձր գներով։ Այդ հողազուրկ գյուղացիների բազմությունը հույս էր դնում հողաբաժին ստանալու վրա։

[1] Վրաց. ՍՍՌ ԿԳԳԱ, ֆ. 1, գ. 34, թ. 30։

[2] „Кавказское сельское хозяйство", № 585, 1905.

թյունը տագնապալի է, չափից դուրս ծանր հարկերի հետևանքով։

«Ժողովրդի դժգոհությունը ուժեղ կերպով արտահայտված է չափից դուրս բարձր հարկերի հետևանքով, որը 1901 թ. սկսած ավելացել է համարյա երեք անգամ;— գրում է նահանգապետը.. Կարսի օկրուգի հարկերը այնքան ծանր են, որ եթե ժամանակի ընթացքում այդ հարկերը չթեթևացվեն, ապա բնակիչները վրնկնեն անելանելի դրության մեջ...»[1]։

Այս ամենը բնականաբար ուժեղացնում էր գյուղական աշխատավոր մասսաների դժգոհությունը և նրանց աստիճանաբար ընդգրկում ռևոլյուցիոն պայքարի մեջ։

Հաճախ զայրացած աշխատավորները սպանում էին իրենց համար ատելի ցարական չինովնիկներին։ Կարսի զինվորական նահանգապետը 1905 թ. սեպտեմբերի 9-ին հաղորդում էր, որ Համալի գյուղացիները սպանել են մի շարք չինովնիկների, որի համար կարզադրություն է արված նրանց դատական պատասխանատվության կանչել[2]։

Գյուղացիների ճնշված ու թշվառ վիճակը և նրանց մղած պայքարը լայն արձագանք էին գտնում բանակում՝ շարքային զինվորների մեջ, որոնք նամակներից և գյուղացիների հետ ունեցած շփումից ծանոթ էին նրանց դրությանը։ Գյուղում զարգացող ռևոլյուցիոն շարժման վրա մեծ ազդեցություն էին թողնում գյուղ վերադարձող զինվորները։ Այդ զինվորները իրենց հետ բերում էին մեծ քանակությամբ ռևոլյուցիոն պրոկլամացիաներ ու գրքեր և դրանք տարածում էին աշխատավորության շրջանում։ Այսպես, 1917 թ. Ուկրաինայի Կրեշչենդուգա քաղաքի պահեստրդական բաժնի նյութերը բացելու ժամանակ հայտնաբերվել է մի ռևոլյուցիոն պրոկլամացիա, որը տարվել էր 1905 թ. Ալեքսանդրոպոլից։ Այդ պրոկլամացիան ոստիկանությունը 1906 թ. հայտնաբերել էր խուզարկության ժամանակ՝ Կրեշչենդուգսկի գավառի մի գյուղում, Ալեքսանդրոպոլից հայրենի գյուղ արձակուրդ գնացած մի զինվորի մոտ[3]։

Ռուսական առաջին ռևոլյուցիայի ժամանակաշրջանում Հայաստանում ծավալված գյուղացիական շարժումների ամենաբնորոշ կողմն այն էր, որ այդ շարժումները ընթանում էին բոլշևիկյան պարտիայի լոզունգներով և առանձնապես քաղաքական սուր բնույթ

---

[1] Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, գ. 34, թ. 44։

[2] Նույն տեղում, գ. 49, թ. 221։

[3] ՏԵՍ ՍՄԿՊ ԿԿ կից Մ.Լ.Մ.Ի-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 251։

էին կրում բանվորական կենտրոնների հետ կապված շրջաններում։ Բանվոր դասակարգի ռևոլյուցիոն ազդեցությունը զգացվում էր սմենտարեք։ Գյուղացիները փրենց համակրանքն էին հայտնում դեպի բանվորական շարժումները, հանդես էին գալիս այդ շարժումների պաշտպանների դերում։ Ցարական պահնորդական բաժնի բաղմաթիվ հաղորդագրություններում նշվում է, որ Անդրկովկասի երկաթուղայինների գործադուլային շարժումը մեծ ընթացք ստացավ, քանի որ երկաթգծին և կայարաններին մոտ գտնվող գյուղերը «լիովին համակրում էին բանվորների քաղաքական պայքարին», իսկ շատ տեղերում էլ գյուղացիները անմիջապես միանում էին բանվորների հետ, օգնում բանվոր դասակարգի մղած պայքարին։ Ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին գյուղացիները, օրինակ, Ալավերդու բանվորական գործադուլի ժամանակ։

Բանվորների օրինակով գյուղերում ստեղծվել էին «քաղաքական կոմիտեներ», ինչպես այդ մասին հայտնվում է ժամանակի պաշտոնական գրություններում։ Գյուղացիները հրաժարվում էին կալվածատերերին և կառավարությանը հարկեր վճարելուց։ Հողը հայտարարում էին գյուղացիների սեփականությունը և բաժանում էին իրենց մեջ։ Վանքապատկան հողերը մի շարք տեղեր նույնպես հայտարարում էին ժողովրդի սեփականությունը և ինքնագլուխ կերպով մշակվում էին գյուղացիների կողմից։

Գյուղացիական շարժումները ճնշելու և գյուղացիներին ռևոլյուցիոն ելույթներից հետ պահելու համար ցարական չինովնիկները գյուղացիներից պահանջում էին հարգել օրենքները և վստահությամբ վերաբերվել դեպի կառավարությունը։ Այդ պահանջին գյուղացիները պատասխանում էին. «Ինչպես մենք կարող ենք հարգել օրենքը, որը մեզ համար գոյություն ունի որպես մտրակ։ Իսկ երբ մենք վստահությամբ էինք վերաբերվում դեպի կառավարությունը, դրանից ոչինչ դուրս չեկավ, մեր դրությունը միայն վատացավ...»[1]։

Ծավալվող գյուղացիական շարժումները ճնշելու համար միավորվում էին ռեակցիոն բոլոր ուժերը։ Կալվածատերերը, որոնց գյուղացիները անվանում էին «ճորին մեծության պատվավոր պահակներ»[2], կազմում էին սևհարյուրյակային խմբեր և ցարական զորքի օգնությամբ արյան մեջ խեղդում գյուղացիների ելույթները։

---

[1] „Вперед", № 14, 1905.

[2] Նույն տեղում, № 16.

1905 թ. նոյեմբերի 3-ի մանիֆեստով ցարական կառավարությունը մի նոր քայլ էր կատարում ժողովրդին խաբելու։ Ռազմական դրություն հայտարարելով ապստամբությամբ բռնված նահանգներում, դրա հետ միասին նա դիմում է խուսանավելու մեթոդին։ Մասնավորապես այդ նպատակով խոստանում է 1906 թ. գյուղացիների փրկավճարները կիսով չափ կրճատել, իսկ 1907 թ. դրանք բոլորովին վերացնել։ Այդ գումարը կազմում էր 45 միլիոն ռուբլի։ Կառավարությունը խոստանում էր նաև վերացնել սակավահողությունը՝ գյուղացիական բանկերի միջոցով հողակտորները գնելու ճանապարհով։ Պատերազմի հասցրած վնասները, սովը, համաճարակ հիվանդությունները, երկիրը վանդնեցրել էին կատարյալ ավերածության առաջ. քայքայվել էին ու շարունակում էին քայքայվել գյուղացիական տնտեսությունները։ Իսկ ցարիզմը բարձրացող գյուղացիական շարժումները կասեցնելու նպատակով մահակի հետ միասին շարունակում էր սուտ խոստումներով խաբել ժողովրդին։ Նա ձգտում էր դրանով իսկ ժամանակ շահել, ուժեր հավաքել և ապա հարձակման անցնել ռևոլյուցիոն մասսաների վրա։

1905 թ. դեկտեմբերի 24-ին ցարական կառավարությունը նահանգապետներին հատուկ կարգադրություն է իջեցնում, նրանցից պահանջելով գյուղացիական ելույթների մասնակիցների նկատմամբ «գործել առանց տատանվելու և ամենավճռական կերպով, ոչնչացնելով ապստամբներին դինված ուժով... գործադրելով ամենադաժան միջոցները ճնշել ապստամբությունները հենց նրանց առաջացման սկզբում...»[1]։

«Լուման» 1906 թ. փետրվարին խոսելով երկրում տիրող ծանր դրության մասին, նշում է, որ հայ գյուղացիությունը հասել է ծայրահեղ աղքատության և մնալով առանց գործիքների ու անասունների, փ վիճակի չէ գյուղատնտեսական աշխատանքներ կատարելու։ Նրա ունեցվածքն ու անասունները հափշտակել էին բոլոր ճնշողները, մի մասն էլ «ղաղախների (կազակների—Ս. Ա.) կերակուր դարձել կամ ոստիկանության ձեռքով ծախվել՝ տուրքերը վճարելու համար։ Ինչո՞վ պետք է դեմինը հերկի գյուղացին, որ հետևյալ ձմեռը սովամահ չլինի. ահա՛ մեծ և այս բոպիս ամենաէական խնդիրը»[2]։

Ամենուրեք ուժեղացող բռնություններն ու հալածանքները ավելի էին սրում գյուղացիների պայքարը։

---

1 Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 1, գ. 36, թ. 3։

2 «Լուման», № 2, 1906, էջ 102։

Ագրարային շարժումներից սարսափած, կալվածատերերի մի մասը վաճառում էր կալվածքները և գյուղերից փախչում։ «Նամակ Շուլավերից» հոդվածում «Մշակը» 1906 թ. հայտնում է այն մասին, որ հողերը գնելու ցանկություն ունեցող կապիտալիստները, վախեցած գյուղացիների խռովություններից, հրաժարվում են հողերը հափշտակելու իրենց մտադրություններից։ Կալվածատեր Շուրինյանը առաջարկում է գյուղացիներին գնել հողը, բայց նրանք հնարավորություն չունեն այն գնելու[1]։

1906 թ., հաղպատցիների պայքարից վախեցած, կալվածատերը առաջարկում է նա գնել հողը ոչ թե ամբողջ համայնքով, այլ առանձին-առանձին տնտեսություններով։ Դրանից, իհարկե, աշխատավոր գյուղացին չէր շահի, որովհետև հողը կգնեին գյուղի հարուստներն ու վաշխառուները, իսկ գյուղացին կմնար դարձյալ հողազուրկ վիճակում[2]։

Գյուղացիական շարժումներից վախեցած, առանձին կալվածատերեր նույնիսկ հրաժարվում էին հողի վրա ունեցած իրենց իրավունքներից։ Գյուղացիները ստիպում էին կալվածատերերին ոչնչացնել կալվածատիրական «ակտերը» և պարտամուրհակները, դրա փոխարեն նրանցից համաձայնագիր էին վերցնում, որ հողը պատկանում է գյուղացիներին։

Վորոնցով-Դաշկովը 1907 թ. ցարին ուղղած զեկուցագրում ստիպված էր ընդունել, որ ռևոլյուցիոն շարժումները ճնշելու և երկրամասում «կարգ» սահմանելու ուղղությամբ իր գործադրած բոլոր միջոցները ըստ էության նպատակին չեն հասել։ «Նա ճնշված է միայն ձևականորեն, որպեսզի չպայթի, կամ ավելի ճիշտ պայթի, լույս աշխարհ գա միայն առանձին դեպքերում»[3]։

Ցարական կառավարությունը գործադրվող ռեպրեսիաների հետ միասին որոշեց նոր հարված հասցնել ռևոլյուցիային՝ «օրենսդրական» դումա հրավիրելու միջոցով։ Նա ձգտում էր մասսաներին կտրել ռևոլյուցիայից և ջլատել նրա ուժերը։ 1905 թ. դեկտեմբերին ցարական կառավարությունը օրենք հրատարակեց նոր «օրենսդրական» դումայի հրավիրման մասին։ Նախկին «խորհրդակցական» բուլիգինյան դուման բոլշևիկյան բոյկոտի հետևանքով տապալվել էր։

---

[1] Տես «Մշակ», № 222, 1906։

[2] Նույն տեղում, № 198։

[3] Վորոնցով – Դաշկովի նշված հաշվետվությունը, էջ 20։

Ռևոլյուցիան ծավալելու նպատակով բոլշևիկները կոչ արին աշխատավորներին բոյկոտի ենթարկել նաև ցարական այդ դուման։

Բանվոր դասակարգը աշխատավորության գլուխն անցած պայքարում էր հանուն ցարիզմի տապալման և սահմանադիր ժողովի հրավիրման, որին պետք է մասնակցեին ժողովրդի իսկական ընտրյալները՝ ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրություններով, գաղտնի քվեարկության միջոցով և որը պետք է ապահովեր ժողովրդի իսկական ազատությունը։

Վիտեյան այդ դուման բոյկոտի ենթարկելու նպատակով հսկայական աշխատանք են ծավալում նաև Հայաստանի բոլշևիկները։

Ալեքսանդրոպոլի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը այդ առթիվ բաց թողած պրոկլամացիայում աշխատավորությանը կոչ էր անում բոյկոտ հայտարարելու Պետական դումային և ընտրություններին չնկրկայանալ։ «Թող Նիկոլայ արյունոտը և նրա օպրիչնիկները իմանան, որ մոտ է նրանց անկումը»[1],— գրված էր պրոկլամացիայում։

Ցարական ընտրական օրենքը իր հակադեմոկրատական բնույթով, ինչպես և պետք էր սպասել, չէր արտահայտում աշխատավորների շահերը։ Կանայք և ավելի քան 2 միլիոն բանվորներ բոլորովին զրկված էին ընտրական իրավունքից։ Ընտրությունները անհավասար էին։ Ընտրողները բաժանվում էին 4 կուրիաների՝ կալվածատերերի, բուրժուազիայի, գյուղացիների և բանվորների։ Ընտրական օրենքը դումայում ամբողջովին ապահովում էր կապիտալիստների և կալվածատերերի գերակշռությունը բանվորների և գյուղացիների նկատմամբ։

Պետք է նշել, որ դումայական «իլյուզիաները» ավելի ուժեղ էին գյուղական շրջաններում։ Գյուղացիության մի զգալի մասը դեռևս հավատում էր, որ կարող է դումայի միջոցով հող ստանալ։ Կադետները, մենշևիկներն ու էսերները խաբում էին ժողովրդին. թե առանց ռևոլյուցիոն պայքարի դումայի օգնությամբ կարելի է ձեռք բերել հող և դեմոկրատական ազատություն։ Բոլշևիկները անողոք պայքար ծավալեցին կոնստիտուցիոն պատրանքներ սերմանող այդ պարտիաների, մասնավորապես կադետների դեմ, համախմբելով գյուղացիությանը բանվորների շուրջը։

«Կայծ» թերթի 1906 թ. հունիսի 10-ի համարում Ս. Սպանդար-

---

1 ՍՄԿՊ ԿԿ դեպ ՄԻԿՍԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ։ ֆ. 38։ գ. 267։

յանը, «Հեղափոխության ալիքը բարձրանում է» հոդվածում գրում է, որ ցարական բյուրոկրատիան ցանկանում է սահմանադրական իլյուզիաներով խաբել ժողովրդին, ռևոլյուցիայից հետ պահելու համար։ «Պետական դուման, որ փորձում էր հաշտեցնել անհաշտելին, որ ցանկանում էր համաձայնություն կայացնել կառավարության հետ՝ ժողովրդական ազատության հաշվին, կորցնում է այժմ ժողովրդի վստահությունը։ Այն սահմանադրական ցնորքները և խաղաղ պարլամենտական մղվի հույսերը, որ նա սկզբում առաջադրեց, այժմ լիովին խորտակվեցին իրականության ձեռքով։ Հոսում է Ռուսաստանի քաղաքացիների արյունը, ազատության մարտիկները հյուծվում են բանտերում ու աքսորավայրերում և նրանց թիվը դնալով մեծանում է ու մեծանում...»[1]։

Առաջին Պետական դուման բավականաչափ հնազանդ չդտնվեց, դրա համար էլ 1906 թ. ամռանը ցարական կառավարությունը ցրեց այն։ Գազանացած ցարիզմը ավելի կատաղի կերպով սկսեց հարձակվել և ամենադաժան միջոցներով ճնշել ռևոլյուցիան։

Դումայի ցրումը մի անգամ ևս համոզեց ժողովրդին զինված ապստամբության միջոցով ցարիզմը տապալելու անհրաժեշտությունը։ «Դուման,— գրում էր Ստ. Շահումյանը,— այդ իրավազուրկ ժողովրդական ներկայացուցչությունը ոչինչ չի կարող տալ մեզ. հարկավոր է նորից կռվել, նորից արյուն թափել և ավելի լավ ու ավելի շատ, քան հոկտեմբեր-դեկտեմբերին, որպեսզի մեր հաղթությունը լինի կատարյալ։ Այս եղրակացրեց ռևոլյուցիոն ժողովուրդը։ Եվ այս եղրակացության մեջ է ամփոփվում անցած ապրած շրջանի մեզ տված խոշոր պատմական դասը»[2]։

Բոլշևիկները որոշեցին մասնակցել 2-րդ Պետական դումայի ընտրություններին և նրա տրիբունան օգտագործել ռևոլյուցիայի շահերին, մասսաների առաջ ներկացնելով ցարիզմը և ռևոլյուցիայի բոլոր թշնամիներին։ Մենշևիկները Դումայում սերտ բլոկ են վարում վարդետների հետ։ Այդ մասին 1906 թ. «Տ» ստորագրությամբ իր «Տակտիկական հարցերից» հոդվածում Ս. Սպանդարյանը գրում էր. «Մենք, որպես հետևողական մարքսիստներ, որպես հետևողական և անհաշտ հեղափոխականներ, կօգտվենք այդ Դումայից մեր նպատակների համար, հեղափոխությունը մինչև վերջ մինչև դեմոկրատական հասարակապետությունը հասցնելու համար»[3]։

---

[1] «Կայծ», № 20, 1906։

[2] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, էջ 213։

[3] Ս. Սպանդարյան, Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր, էջ 23։

Արյունարբու ցարը, ցրելով 1-ին Պետական դուման, հույս էր դնում, որ 2-րդ Պետական դուման կկատարի իր բոլոր ցանկությունները։ Սակայն 2-րդ Պետական դուման էլ առաջինի բախտին արժանացավ։1907 թ. հունիսի 3-ի օրենքով այն ցրվեց, և ցարը որոշեց նոր Պետական դումա հրավիրել՝ ավելի ռեակցիոն ընտրական օրենքի հիման վրա։ 2-րդ Պետական դումայի սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի 65 դեպուտատները ձերբակալվեցին և Սիբիր աքսորվեցին։ Ցարական մինիստր Ստոլիպինը սկսում է ամենադաղանային հաշվեհարդարը ռևոլյուցիոն բանվորների և գյուղացիների հետ։

Երկրորդ Պետական դումայի արձակման կապակցությամբ բաց թողած «2-րդ Պետ. դուման արձակված է» թռուցիկի մեջ ՌՍԴԲՊ Բորչալուի կոմիտեն գրում էր. «Բանվորական հակայական գործադուլներն ու ցույցերը սարսափի մեջ էին գցում մեր երկրի «կառավարող» բռնակալներին. բայց այդ բոլորի վրա ավելացավ նաև զորքի ապստամբության առաջ գալը... Ապստամբվեցին Կրոնշտադտի, Սևծովյան և այլն ֆրոնտները...»[1]։

Կառավարությունը սարսափած Պետական դումա հրավիրեց, ժողովրդին կեղծ խոստումներով խաբելով ու հուսադրելով։ Սակայն Պետական դուման «... չկարողացավ հեղափոխության առաջն առնել, և բյուրոկրատիան վռնդեց նրան ու դիմեց իր դաղանային ուժի միջոցին... Նա սկսեց գնդամահարել անմեղ գյուղացիներին, որոնք հող էին աղաչակում... Նա կախաղաններ բարձրացրեց բանվորների ներկայացուցիչներին և բոլոր նրանց, որոնք մտածում են Ռուսաստանի բազմաչարչար, տանջված ժողովրդի ազատության համար...»[2]։

Այնուհետև այդ թռուցիկում ասված էր, որ հրավիրելով 2-րդ Պետական դուման, ցարական կառավարությունը մտադիր էր հավաքել բոլոր տեսակի դավաճաններին ու ժողովրդի թշնամիներին, բայց այնպես ստացվեց, որ «2-րդ Պ. Դուման ուղարկվեցին շատ ժողովրդական իսկական ներկայացուցիչներ և այնտեղ նրանք բարձրաձայն, համարձակ կերպով պահանջում էին «հող և ազատություն» և դրա հետ միասին քննադատում էին բյուրոկրատ կառավարության բոլոր դաղանությունները...»[3]։

---

1 ՍՄԿՊ ԿԿ կից ՄԵԼՍԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 6. գ. 322։

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում։

Ուստի ցարական կառավարությունը ցրեց նաև 2-րդ Պետական դուման և նշանակեց 3-րդ Պետական դումայի ընտրությունները։

Սակայն ցարիզմը ռևոլյուցիան ճնշելու համար ոչ միայն միավորում էր Ստոլիպինների ու Տրեպովների ռեակցիոն ուժերը երկրի ներսում, այլև փանակցություններ էր վարում միջազգային իմպերիալիզմի հետ նրա օգնությամբ ռևոլյուցիան ճնշելու և արյան մեջ խեղդելու համար. «Այդ ուժը միջազգային վոնտրռևոլյուցիան, առանձնապես «հանճարեղ» գերմանական Վիլհելմն է։ Վաղուց է, որ համառ կերպով լուր էր պատում, թե ռուս կառավարությունը մի համաձայնություն է վայելում գերմանական և ավստրիական կայսրների հետ՝ միացյալ ուժերով ջախջախելու մեր հեղափոխությունը։ Ռուսաց ցարը դաշն էր կապում օտարազգիների հետ «իր ժողովրդի» դեմ, հրավիրում է օտարներին սպանել, կոտորել ռուս բանվորներին, ռուս գյուղացուն»[1]։ Սակայն ռևոլյուցիայի դահիճները մոռանում էին այն խոշոր համակրանքը, որ ռուսական ռևոլյուցիան գտնում էր Եվրոպայի և Ասիայի աշխատավոր մասսաների մեջ, որոնք պատրաստ էին հարմար մոմենտին օգնության ձեռք մեկնել ռուսական պրոլետարիատին։

«Բայց եթե իսավար, սև ուժերը միանում են հեղափոխության դեմ, դեմոկրատիայի դեմ,—գրում է Ս. Սպանդարյանը,—միանում են և հեղափոխության ուժերը, միանում է բոլոր երկրների պրոլետարիատը՝ այդ ռեակցիային դիմադրելու համար»[2]։ Սպանդարյանը մերկացնելով բուրժուական մամուլի ռեակցիոն էությունը և նրա հարձակումներն ու սպառնալիքները, նշում է, որ նա «ցինիկաբար փորձում է վախեցնել մեզ գերմանական զորքերով, մենք արհամարհանքով ենք վերաբերվում այդ սպառնալիքին՝ գիտենալով, որ մեզ պաշտպանում է գերմանական պրոլետարիատը և նրա հետ միասին և ամբողջ միջազգային պրոլետարիատը»[3]։

Պրոլետարիատի հանճարեղ առաջնորդը՝ Վ. Ի. Լենինը և նրա տաղանդավոր աշակերտներն ու զինակիցները, լայն աշխատանք տանելով մեր երկրի բոլոր ժողովուրդների մեջ, պոտիում էին նրանց միասնությունն ու ռևոլյուցիոն տոկունությունը դեպի դալիք հաղթանակը։

Պրոլետարիատի ամեն մի փոքր հաջողված գործում էր, թե ինչ-

---

[1] Ս. Սպանդարյան, Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր, էջ 54։
[2] Նույն տեղում։
[3] Նույն տեղում։

պիսի ընդհանուր թելերով է ինքը կապված ռուսական ամենառևոլյուցիոն պրոլետարիատի հետ, աշխարհի բոլոր երկրների պրոլետարների հետ։

Պրոլետարիատի ղեկավարությամբ Հայաստանի գյուղացիությունը ևս Անդրկովկասի և ամբողջ Ռուսաստանի ռևոլյուցիոն գյուղացիության օրինակով 1905—1907 թվականներին ազատագրական մարտեր ծավալեց ցարիզմի ու կալվածատերերի դեմ։ Հայաստանի գյուղացիությունը անցավ քաղաքական պայքարի մեծ դպրոց, ստացավ ռևոլյուցիոն կուսակցք, որը օգնեց նրան 1917—1920 թվականներին կանգնել Սովետական իշխանության հաղթանակի համար պայքարող մարտիկների շարքում։

IV. ՊԱՅՔԱՐ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ, ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԸՆԴԴԵՄ ՑԱՐԱԿԱՆ ՌԵԱԿՑԻՈՆ ՈՒԺԵՐԻ

Երկրում բարձրացող ռևոլյուցիոն շարժումների դեմ ցարիզմը օգտագործում էր բոլոր տեսակի ռեակցիոն ուժերը։ Մասսաների ուշադրությունը շեղելու և նրան ռևոլյուցիոն պայքարից հեռացնելու համար ցարիզմը հաճախ էր կազմակերպում ազգամիջյան ջարդեր և վտառրածներ։ Այդպիսին էին Ռուսաստանի տարբեր մասերում կազմակերպված հրեական ջարդերը և Անդրկովկասում՝ հայկական ջարդերը։

Ռևոլյուցիոն շարժումների ծավալմանը Երևանում և առհասարակ Երևանի նահանգում զգալի չափով խանգարեցին ցարիզմի և նրա գործակալներ հանդիսացող նացիոնալիստական պարտիաների 1905 թ. փետրվարին հրահրած պրովոկացիոն հայ-ադրբեջանական ընդհարումները։ Դրանք սկսվեցին Բաքվում և ապա տարածվեցին Անդրկովկասի այլ շրջաններում։

Պատահական չէր, որ այդ պրովոկացիան սկսվեց Բաքվում՝ Անդրեովկասի ռևոլյուցիոն պայքարի ամենաուժեղ կենտրոնում։

1905 թ. ապրիլին հայ-ադրբեջանական ընդհարումների կապակցությամբ քննություն կատարելու նպատակով Բաքու ժամանելով սենատոր Կուզմինսկին, գրում էր, որ Բաքուն գտնվում է ամբողջովին ռևոլյուցիոն դրության մեջ, իսկ այդ դրությունն սկսվել էր դեռևս 1904 թ.դեկտեմբերին։ «Հավատը դեպի կառավարական իշխանությունը ամբողջովին կորել էր և նրա հեղինակությունն ընկել»[1]։

Բաքվի նահանգապետ Նազաշիձեն[2], հայ-ադրբեջանական եղ-

---

[1] Всеподданнейший отчет о произведенной в 1905 году, по высочайшему повелению, сенатором Кузминским ревизии города Баку и Бакинской губернии, стр. 26.

[2] *Բաքվի նահանգապետ Նազաշիձեն, որն անմիջապես ցարական կառավարության այդ քաղաքականությունն կիրառողն էր, սպանվեց 1905 թ. մայիսի 11-ին՝ նրա վրա նետված նռնակի պայթյունից։*

բայրասպան ընդհարումների նախօրյակին Պետերբուրգից վերադարձավ Բաքու՝ քաղաքում տեղի ունեցող շարժումները ամենախիստ միջոցներով ճնշելու հանձնարարությամբ։ Նաղաշիձեի Բաքու վերադառնալուց անմիջապես հետո ոստիկանության նախաձեռնությամբ լուրեր տարածվեցին պատրաստվող հայ-ադրբեջանական կոտորածների մասին։ Բաքվի բոլշևիկները անմիջապես սկսեցին բացատրական լայն աշխատանք ծավալել Բաքվի բանվորական շրջաններում։ ՌՍԴԲՊ Բաքվի Կոմիտեն ռուսերեն, ադրբեջաներեն և հայերեն լեզուներով թերթիկներ տարածեց։ Այդ թերթիկներում բացատրվում էր, որ ցարիզմը պատրաստում է ազգամիջյան կոտորածներ ժողովրդի ուշադրությունը ռևոլյուցիայից հետ պահելու համար։

Չդալով բանվորական մասսային խաբելու դժվարությունը, ոստիկանությունը սկսեց զինել կրոնական ֆանատիզմով տարված խանութպաններին, սպեկուլյանտներին և «ղոչիներին»։ Ոստիկանությունը օգտագործեց նաև հայ-ադրբեջանական բուրժուազիայի հակասությունները։ Հայ բուրժուազիան իր ազդատյաց քաղաքականությամբ ձգտում էր Բաքվում գերակշռող դիրք դրավել՝ արդյունաբերության և առևտրի բնագավառում։ Ադրբեջանական բուրժուազիան նոր էր հանդես գալիս և համեմատաբար ավելի թույլ էր, բայց արդեն 1905 թ. ռևոլյուցիայի ժամանակ իրենից զգալի ուժ էր ներկայացնում և նույնպիսի ատելությամբ էր լցված դեպի իր մրցակից հայ բուրժուազիան։ Արդեն հանդես էին եկել ադրբեջանական բուրժուազիայի այնպիսի տուզեր, ինչպիսիք էին Թաղիևը, Ասադուլլաևը, Նագիևը, Մուխտարովը և շատ ուրիշներ, որոնք բավական ազդեցություն ունեին բուրժու-բեկական խավերի շրջաններում։

Ցարական ոստիկանությունը շատ խորամանկ կերպով էր օգտագործում հայ-ադրբեջանական և հայ-վրացական շահագործող խավերի այդ հակասությունները և ձգտում էր այն տարածել նաև ժողովրդական լայն խավերի մեջ։

1905 թ. փետրվարի 6-ին Բաքվում ընդհարումներ տեղի ունեցան։ Պրովոկացիոն լուրեր սարքելու և հայերին ու ադրբեջանցիներին միմյանց դեմ դրդռելու նպատակով ոստիկանության ներկայացուցիչները իրենք առաջինը կրակ բացեցին։ Այս ու այն անկյունում նրանք գնդակահարում էին հայերին ու ադրբեջանցիներին և ապա ժողովուրդներին միմյանց դեմ բորբոքելու համար հանցավոր հայտարարում հայերին կամ ադրբեջանցիներին։ Այդ դեպքերի

924—15

ականատես հին բոլշևիկ Ս. Ալիլուևը գրում է. «Մի շարք տեղեր կարելի էր տեսնել զինվորների և ոստիկանների, որոնք հանգիստ դիտում էին կոտորածը»[1]: Հայ և ադրբեջանցի կապիտալիստները՝ «ցարիզմի այդ պատվավոր պահակները», ավելի էին զրգռում եղբայրասպան կոտորածը: Հայ բուրժուազիայի շահերն արտահայտող «դաշնակցությունը» ամենամատաղի նացիոնալիստական ագիտացիա սկսեց և ավանտյուրիստական խմբեր կազմելով նորանոր ջարդերի պատճառն ու կազմակերպողը դարձավ:

Ոստիկանությունը ոչ միայն դաղտնի, այլև շատ դեպքերում բացարձակ կերպով ոգևորում էր ջարդարարներին:

Այդ դաղտնային ավանտյուրայի գոհերը օգնություն էին, աղերսում փողոցով անցնող կազակներից, զինվորներից և ոստիկանությունից, բայց նրանք ոչ միայն չէին օգնում, այլ, ընդհակառակը, նույնիսկ ոգևորում էին եղբայրասպան կոտորածը[2]:

Բաքվի նահանգապետի կարգադրությամբ շատ տեղեր ոստիկանությունը զինաթափ էր արված, որպեսզի նա բոլորովին հնարավորություն չունենա միջամտելու հայ-ադրբեջանական կոտորածին:

Ոստիկանական այդ պրովոկացիան իր նպատակին հասավ գլխավորապես Բաքվի մեշչանական խավերի շրջանում, խանութպանների թաղամասում: Ձնայած պրովոկատորների դործ դրած բազմաթիվ ջանքերին, քաղաքի բանվորական շրջանները զերծ մնացին եղբայրասպան ջարդերից:

Ստ. Շահումյանը ազդամիջյան կոտորածները համարում էր խոշորագույն չարիք: Նրա դրած բազմաթիվ կոչերն ու թռուցիկները մեծ դեր խաղացին ցարիզմի պրովոկացիային վերջ տալու, հայ և ադրբեջանական ժողովուրդների բարեկամությունը վերականգնելու դործում: «Բայց հայ-թյուրքական կոտորածը...,— դրում է Ստ. Շահումյանը,— օ՜, մենք դիտենք, դժբախտաբար շատ լավ դիտենք,

---

[1] С. Аллилуев, „Пройденный путь", Москва. 1946, стр. 130.,

[2] Անդամ Սենատոր Կուզմինսկին է խոստովանում Բաքվի նահանգի մասին կազմած 1905 թ. դեպքերին վերաբերող հաշվետվության մեջ, որ հայ-ադրբեջանական ընդհարումների ժամանակ զորքը, ոստիկանությունը և կառավարության մյուս ներկայացուցիչները հանգիստ սրտով դիտում էին տեղի ունեցող կոտորածները և ոչ մի միջոց ձեռք չէին առնում այն դաղարեցնելու համար: Ժողովրդի ներկայացուցիչների այն հարցին, թե ինչու միջոց ձեռք չեք առնում դաղարեցնելու այդ խայտառակ դրությունը, նրանք սովորաբար պատասխանում էին.

«Մեզ չի կարդադրված միջամտելու»: (Սենատոր Կուզմինսկու նշված հաշվետվությունը, էջ 64):

թե որպիսի ահռելի չարիք էր նա Կովկասի համար, որպիսի դաժան միջոց էր նա մեռնող բռնակալության ձեռքին՝ փակելու համար հայ և թուրք ազգաբնակչության առաջ ռևոլյուցիոն շարժման դռները»[1]:

Սակայն ցարական օպրիչնիկները և բուրժուական նացիոնալիստները չկարողացան փակել զարձրացող ռևոլյուցիայի դռները, բոլշևիկյան հզոր ագիտացիան լույս սփռեց, խավարամոլ ազգայնական կրքերը փարատեցին և եղբայրական ժողովուրդները նորից բարձրացրին խաղաղության ու ապատության համար մղվող պայքարի դրոշը:

ՌՍԴԲՊ Բաքվի Կոմիտեն 1905 թ. փետրվարի 10-ին հատուկ կոչ հրապարակեց, որով դիմում էր բանվոր դասակարգին՝ միավորել իր ուժերը և չենթարկվել ցարական պրովոկատորների մոլեռանդ ագիտացիային: Նշվում էր նաև, որ այդ բոլոր չարիքների պատասխանատվությունը ընկնում է ինքնակալության ամբողջ ոհմակի վրա:

Բանվորները ամենուրեք ելույթներ էին ունենում՝ կոչ անելով վերջ տալ եղբայրասպան ընդհարումներին: Բալախանիի, Սաբունչիի ապրբեջանցի բանվորները մեծ վրդովմունքով գրում էին. «Մենք մեր զայրույթն ենք հայտնում բոլոր այն խուլիգան-պրովոկատորներին, որոնք հեղինակն են հանդիսանում այն կեղծ լուրերի, որ իբր թե մենք մտադիր ենք ոչնչացնելու հայերին և հրեաներին»[2]:

Բոլշևիկյան կազմակերպությունների ծավալած հակայական աշխատանքի շնորհիվ հնարավոր եղավ դադարեցնել ընդհարումները և կազմակերպել ինտերնացիոնալ միտինգներ:

Հակոբ Հակոբյանը գրում էր, որ բոլշևիկները ամեն միջոց ձեռք էին առնում. վերջ տալու հայ-ադրբեջանական կոտորածներին, «որի կրակի վրա յուղ էր թափել ռուսական շայթանը՝ հանձինս ցարական ռեակցիոն օպրիչնիկների և դաշնակցության...»[3]:

Բոլշևիկյան «Վպերիոդ» թերթը հայ-ադրբեջանական կոտորածների առթիվ Բաքվի 3 հազար աշխատավորների միտինգի մասին գրել է. «Բաքվի դեպքերը ռևոլյուցիոնականացնում են ամբողջ Կովկասը»[4]:

Աշխատավորությունը, բացահայտելով ցարական չինովնիկների հանցավոր պրովոկացիան, զրոհեց նահանգապետի տան վրա և

---

1 Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, էջ 180:

2 «Баку», № 157, 1905.

3 Հ. Հակոբյան, Երկեր, Երևան, 1951, էջ 378:

4 „Вперед", № 11, 1905:

հարկադրեց նրան դադարեցնել եղբայրասպան կոտորածները։

Այդ օրերին Ի. Ստալինը, Ստ. Շահումյանը, Ալ. Ջափարիձեն, Մ. Աղիզբեկովը, Պ. Մոնտինը, Սիմոն Տեր-Պետրոսյանը և շատ ուրիշ ականավոր բոլշևիկներ լայն պայքար ծավալեցին հայ-ադրբեջանական ժողովուրդների բարեկամությունն ամրապնդելու համար։

Ալյոշա Ջափարիձեն, որ այդ ժամանակ աշխատում էր Բաքվում, բանվորների օգնությամբ լայն պայքար ծավալեց սահմանադրական-դեմոկրատական խմբերի և բոլոր տեսակի պրովոկատորների դեմ։ Մի քանի անգամ սահմանադրականները հարձակում գործեցին այն տան վրա, որտեղ ապրում էր Ալ. Ջափարիձեն։ Միայն բանվորների հոգատարության շնորհիվ նրա կյանքը փրկվեց[1]։

Ադրբեջանական աշխատավորության մեջ լայն աշխատանք էր տանում բոլշևիկ Մաշադի Աղիզբեկովը, որը դեռևս 1904 թ. ադրբեջանական բանվորներին լենինյան ինտերնացիոնալիզմի դրոշի տակ համախմբելու համար ՌՍԴԲՊ Բաքվի Կոմիտեին կից կազմակերպեց «Դումմեթ» («Էներգիա») սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը։ 1906 թ. հայ-ադրբեջանական պրովոկացիոն ընդհարումների դեմ պայքարելու համար Մ. Աղիզբեկովը ՌՍԴԲՊ Բաքվի Կոմիտեի հանձնարարությամբ բանվորներից կազմակերպեց և գլխավորեց «Աղատության դրոշ» մարտական դրուժինան, որը խոշոր դեր խաղաց Բաքվում եղբայրասպան ընդհարումները դադարեցնելու և ժողովուրդների բարեկամությունը ամրապնդելու գործում։

Եղբայրական ընդհարումներին վերջ տալու և բանվոր դասակարգի միասնությունը պահպանելու գործում մեծ աշխատանք էր տանում բոլշևիկ Պյոտր Մոնտինը։ Մոնտինին ցարական սատրապները անընդհատ հետապնդում էին։ 1905 թ. դեկտեմբերի 6-ին սահմանադրականների գնդակից Բաքվի կայարանից ոչ հեռու Պ. Մոնտինը զոհվեց։ Այդ նույն օրը երևկոյան նա պետք է մեկներ Ֆինլանդիա՝ մասնակցելու առաջին Համառուսաստանյան բոլշևիկյան կոնֆերենցիային, որին Մոնտինը դելեգատ էր ընտրվել Բաքվի կազմակերպության կողմից[2]։

---

[1] Տես С. Аллилуев, Пройденный путь, стр. 133.

[2] Պ. Մոնտինը ծնվել է 1882 թ. նա շատ երիտասարդ հասակում սկսել է աշխատել Թիֆլիսի կայարանի վագոնների պարկում, որտեղ և 18 տարեկան հասակում մտավ ՌՍԴԲՊ շարքերը և անցավ ռևոլյուցիոն ակտիվ գործունեության։ 1900 թ. նա անցավ գրականություն տարածելու և ռևոլյուցիոն գոր-

Ցարական կառավարության կողմից հրահրված եղբայրասպան ընդհարումներն ու ռևոլյուցիոն գործիչների նկատմամբ ձեռնարկած տեռորիստական ակտերը ավելի էին բարձրացնում Բաքվի հերոսական պրոլետարիատի զայրույթը դեպի այդ կառավարությունն ու նրա ապիկար մինիստրները։

Հայ-ադրբեջանական պրոդրեսիվ ուժերը գործ էին դնում բոլոր միջոցները՝ երկու ժողովուրդների դարավոր բարեկամությունը ամրապնդելու և կոտորածներին վերջ տալու համար։ 1905 թ. Պետերբուրգի հայ և ադրբեջանցի ուսանողները միասին ժողովներ են անում և միջոցներ մշակում օգնելու հայրենի երկրին՝ ազգամիջյան ընդհարումները դադարեցնելու և ցարական կառավարության պրովոկացիոն գործունեությունը մերկացնելու համար։ Այդ նպատակով ուսանողությունը «20 հոգուց հաշտարար պատգամավորություն ուղարկեց ընդհարման վայրերը...»[1], որը շրջելով Հայաստանի և Ադրբեջանի մի շարք շրջաններ, հսկայական դեր խաղաց կոտորածներին վերջ տալու գործում։

ծունեության համար Մետեխի բանտը ընկավ։ 6 ամսից հետո Մոնտինը բանտից դուրս եկավ որպես հասունացած ռևոլյուցիոներ և անցնելով Բաքու՝ մտավ Շիբաևի գործարանը։ Այստեղ] Մոնտինը հանդես է գալիս որպես բանվոր դասակարգի ղեկավար գործիչ, որը 1903 թ. նորից է ցարական պահնորդական բաժնի ճանկն ընկնում և բանտ նստում մինչև 1904 թ. փետրվարի 23-ը։ Ոստիկանության հետապնդումից ազատվելու համար նա գալիս է Թիֆլիս, բայց նորից պարտիական աշխատանքի ուղարկվում Բաքու։ 1905 թ. օգոստոսի 22-ին ոստիկանությունը նորից է բանտարկում Մոնտինին, որին այս անգամ ուղարկում են Կուբայի բանտը։ Այստեղ էլ 3 ամիս մնալով վերադառնում է Բաքու և լայն աշխատանք է ծավալում Զուլայատով ազգանվան տակ։ Մոնտինը ընդամենը 22 տարեկան էր, բայց նա արդեն փորձված պրոֆեսիոնալ ռևոլյուցիոն գործիչ էր։ Նա ՌՍԴՐՊ Թիֆլիսի և Բաքվի կոմիտեների անդամ էր։ 1905 թ. նոյեմբերին մասնակցեց ՌՍԴՐՊ Կովկասյան Միության 4-րդ կոնֆերենցիային։ Ոստիկանությունը խիստ հետևում էր Մոնտինին, բայց գտնել չէր կարողանում։ Նահանգապետը մեծ դումար էր խոստանում Մոնտինին գտնելու համար։ Պրիստավներից մեկին հաջողվում է վերջապես բռնել Մոնտինին, սակայն Մոնտինը նրան ասում է, «եթե ինձ բանտարկեք՝ ձեզ կսպանեմ» („Елисаветопольский вестник", № 17, 1905)։ Մոնտինը ի նկատի ուներ բանվորներին, որոնք անչափ սիրում էին նրան։ Պրիստավը ստիպված էր իր «որսը» բաց թողնել և գրկվել նահանգապետի խոստացած մեծ դումարից։ Պ. Մոնտինի դիակը տեղափոխվում է Թիֆլիս այնտեղ թաղելու) տես „Кавказский рабочий листок", № 15, 1905.)։ Նրա թաղումը վեր է ածվում Բաքվում և Թիֆլիսում աշխատավորների մի հզոր ցույցի։ Բաքվում՝ բանվորները աշխատանքը դադարեցրին 129 գործարաններում, ֆաբրիկաներում և այլ ձեռնարկություններում։

[1] «Լուման», № 1, 1906, էջ 79։

1905 թ. փետրվարի 11-ին Բաքվում տեղի ունեցող իրենց միտինգում ավելի քան 2000 աշխատավորներ նշեցին, որ այդ ընդհարումները ոչ թե ազգային կամ կրոնական հակասության հետևանք են, այլ ամբողջովին կառավարության կողմից գիտակցաբար կազմակերպված ավանտյուրա, որն այդ նպատակի համար օգտագործեց խուլիգանական տարրերին։

«Կովկասի բաբոչի լիստոկ» բոլշևիկյան թերթը հայ-ադրբեջանական ընդհարումների պատճառների մասին իր առաջնորդող հոդվածում գրում է, որ ցարական կառավարությունը շարունակ իր «ծայրամասային» քաղաքականությամբ բորբոքում էր ազգային կրքերը և թշնամանք էր ստեղծում տարբեր ազգությունների միջև, պաշտպանելով շովինիստական ռեակցիոն հոսանքները այս կամ այն ժողովրդի մեջ։ Ցարիզմը դրանով իսկ սիստեմատիկ կերպով պատրաստում և անց էր կացնում այն սարսափելի ազգային ջարդերը, որի կարիքը նա զգում էր համառուսական պրոլետարիատի ռևոլյուցիոն համերաշխությունը թուլացնելու համար[1]։

Այդպիսի ընդհարումներ են տեղի ունենում նաև Շուշիում, Նլիսավետպոլում, Երևանում և մի շարք այլ վայրերում։ Հետևանաց տարրերը ցարական պրովոկատորների և ազգային նացիոնալիստական խմբերի՝ ադրբեջանական բեկ-ղաչիների և հայ մաուզերիստների դրդմամբ սկսեցին դաղանաբար կոտորել խաղաղ մասսաներին։

«Մեր երկրի ամենամեծ դժբախտություններից մեկը ներկայումս ազգայնական կռիվն է,— գրել է Ստ. Շահումյանը։ Թե՛ երկրի ընդհանուր տնտեսական ու կուլտուրական առաջադիմության համար, և թե՛ կոտորածներ ազգային թշնամությանն ու կոտորածներին վերջ տալու համար միակ միջոցը, միակ ճանապարհը՝ դեմոկրատիայի կատարյալ հաղթանակն է»[2]։

Բաքվի դեպքերից անմիջապես հետո ցարական կառավարությունը փորձում է ազգամիջյան ջարդեր հրահրել նաև Թիֆլիսում։

«Այստեղ, Կովկասի կենտրոնում,— գրում է Ի. Վ. Ստալինը,— նա մտադիր էր արյունալի տրագեդիա սարքել և հետո այն փոխադրել դավառները։ Հանած բա՞ն է—միմյանց դեմ հանել Կովկասի ազգություններին և իր իսկ սեփական արյան մեջ խեղդել Կովկասյան պրոլետարիատին։ Ցարական կառավարությունն ուրախությու-

---

[1] Տես „Кавказский рабочий листок", № 2, 1905.

[2] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, 1948, էջ 120։

նից շփում էր ձեռքերը։ Նա նույնիսկ մի պրոկլամացիա տարածեց, կոչ անելով ջարդե՛լ հայերին»[1]։

Սակայն Թիֆլիսի հայ, վրացական, ադրբեջանցի և ռուս բանվորական մասսան 1905 թ. փետրվարի 13-ին «հավաքվում է Վանքի մայր եկեղեցու բակը և երդվում է պաշտպանել միմյանց՝ «մեր միջև երկպառակություն սերմանող սատանայի դեմ մղած պայքարում»։ Համերաշխությունը լիակատար է»[2]։

Այդ օրը ճառերով հանդես եկան մի շարք ռևոլյուցիոն գործիչներ, որոնց թվում և Սիմոն Տեր-Պետրոսյանը — Կամոն։

«Այստեղ Թիֆլիսում մեծ հանդեսներ կատարվեցին եղբայրության,— գրում է Հովհաննես Թումանյանը։ — Առաջին օրը հայերն ու թուրքերը համբուրվեցին ու եղբայրության երդվեցին...»[3]։

1905 թ. նոյեմբերի 22—23-ին հայ-ադրբեջանական ընդհարումները դադարեցնելու համար ՌՍԴԲՊ Թիֆլիսի կոմիտեն կազմակերպեց Թիֆլիսի դեպոյի բանվորների գործադուլը։ Գործադուլավորները մեծ ցույց սարքեցին և սպիտակ դրոշներ բարձրացրին՝ կոտորածը դադարեցնելու համար։ «Բանվորները որոշեցին առաջարկել հակառակ կողմերին դադարեցնել անմիտ եղբայրասպան պատերազմը, հակառակ դեպքում Թիֆլիսի պրոլետարիատը կդիմի վճռական միջոցների»[4]։ Իսկ նոյեմբերի 29-ին Թիֆլիսում տեղի ունեցող զինվորական միտինգը, որին մասնակցում էին մոտ 3000 մարդ, իր դայրույթն է հայտնում ցարիզմի կողմից կազմակերպված հայ-ադրբեջանական ընդհարումների նկատմամբ։ Ելույթ ունեցող զինվորները կոչ էին անում միահամուռ ուժերով թույլ չտալ, որպեսզի նման պրովոկացիան տեղի ունենա նաև Թիֆլիսում[5]։

1905 թ. նոյեմբերի 23-ին ՌՍԴԲՊ Թիֆլիսի Կոմիտեի կոչով բանվորները գործադուլ հայտարարեցին և շարժվեցին Օրթաքիլիսա։ Ցուցաբարները հայերին և ադրբեջանցիներին կոչ էին անում վերջ տալ եղբայրասպան կռվին, որ պատրաստվում և հրահրվում էր ոստիկանության կողմից՝ բանվոր դասակարգի ռևոլյուցիոն միասնությունը չլատելու նպատակով[6]։

ՌՍԴԲՊ Թիֆլիսի կոմիտեն բանվորական ցույցեր և ագիտա-

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 1, էջ 95։

[2] Նույն տեղում, էջ 96։

[3] Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 5, էջ 295։

[4] „Кавказский рабочий листок", № 3, 1905.

[5] Նույն տեղում, № 4, 1905։

[6] Նույն տեղում, № 5, 1905։

ցիոն լայն աշխատանք ծավալելուց, թռուցիկներ տարածելուց բացի կազմակերպեց նաև դինված սոցիալ-դեմոկրատական խմբեր, որոնք բանվորների օգնությամբ կարգ էին պաշտպանում և հետևում էին, որ պրովոկատորներն ու ավանտյուրիստական տարրերը չկարողանան հայ և ադրբեջանցի աշխատավորներին եղբայրասպան ընդհարումների դրդել[1]։ Բանվորներից կազմված մարտական դրուժինաները գլխավորում էր պրոֆեսիոնալ ռևոլյուցիոներ Կամոն — Սիմոն Տեր-Պետրոսյանը[2]։

ՌՍԴԲՊ Կովկասյան Միությունը 1905 թ. նոյեմբերի վերջին իր 4-րդ կոնֆերենցիայում հատուկ բանաձև ընդունեց հայ-ադրբեջանական ընդհարումների մասին։ Կոնֆերենցիան նշում էր, որ հայ-ադրբեջանական ընդհարումները հող ծառայեցին ամբողջ Կովկասում կոնտրռևոլյուցիայի ուժեղացման համար և որ այդ ընդհար-

---

[1] Բաքվում Թիֆլիսի օրինակով ձևաք առած միջոցառումների մասին «Կավկազսկի բարոչի լիստոկ» թերթը գրում է.

1905 թ. նոյեմբերի 27-ին Բաքվում, երբ նախորդ դիշերը տեղի էին ունեցել արյունալի ընդհարումներ ու ժողովուրդը սարսափահար սպասում էր նոր կոտորածների, հանկարծ հայ, ադրբեջանցի և մյուս ազգերի բանվորները սոցիալ-դեմոկրատների գլխավորությամբ, սովետակ դրոշները պարզած, մեծ թափորով, եղբայրական կոչերով անցան ադրբեջանական և հայկական թաղամասերը, որտեղ անմիջապես նրանց միացավ ժողովուրդը։ Կրակոտ ճառերով այս կամ այնտեղ հանդես էին գալիս հայ, ադրբեջանցի աշխատավորների ներկայացուցիչները, որոնք ցույց էին տալիս, որ այդ եղբայրասպան ընդհարումները ցարական կառավարության և բուրժուազիայի պրովոկացիայի հետևանքով էր։ Կոչ էին անում եղբայրական միասնություն ստեղծել և ապա բարձրաձայն արտասանում էին՝ «Կեցցե եղբայրությունը, կեցցե սոցիալ-դեմոկրատիան»։ Միտինգի մասնակիցները որոշեցին ժողովրդի պաշտպանության և խաղաղության գործը հանձնել սոցիալ-դեմոկրատիային, որը ընդունվեց մեծ խանդավառությամբ («Կավկազսկի բարոչի լիստոկ», № 8, 1905, դեկտեմբերի 3. «Սոցիալ-դեմոկրատները խաղաղության են կանչում»)։

Բաքվեցիների այդ բարմահարար միտինգի վերջում ընդունված բանաձևում դայրույթ է հայտնվում դեպի այդ եղբայրասպան ընդհարումներն ստեղծող պրովոկատորները. «Մենք համոզված ենք,— ասված է բանաձևում,— որ միայն սոցիալ-դեմոկրատիայի ղեկավարությամբ կազմակերպված բանվոր դասակարգն է ընդունակ պաշտպանել մեր կյանքը և ստեղծել իսկական խաղաղություն» («Կավկազսկի բարոչի լիստոկ», № 8, 1905 թ. դեկտեմբեր 3)։ Բանաձևում նշվում էր նաև, որ հետևելով Թիֆլիսի օրինակին, անհրաժեշտ է կազմակերպել բանվորական դրուժիններ՝ կարգ պահպանելու համար։ Այդ միտինգում ճառով հանդես է գալիս մի կին՝ սոցիալ-դեմոկրատ, որը կոչ է անում բաքվեցիներին հետևել Թիֆլիսի բանվորների օրինակին և դադարեցնել եղբայրական ընդհարումները։

[2] Տես С. Аллилуев, „Пройденный путь", М., 1946, стр. 162.

ման հիմքն է հանդիսանում հայ-ադրբեջանական մասսաների հետամնացությունը, որոնց մի մասը դեռևս գտնվում է բուրժուանացիոնալիստական իդեոլոգների ազդեցության տակ։ Ելնելով այդ դրությունից, կոնֆերենցիան որոշեց հանձնարարել ՌՍԴԲՊ Կովկասյան Միության կազմակերպություններին՝ 1) երկու ժողովուրդների բանվորների միջև ուժեղացնել սոցիալ-դեմոկրատական պրոպագանդան, նպատակ դնելով հետ պահել նրանց դիտակից և անգիտակից կոնտրռևոլյուցիոներներից, 2) իր վրա վերցնել հաշտեցնելու միսիան՝ պրոլետարիատի ներկայացուցիչներից կազմված ժողովրդական դատարանի միջոցով և 3) ընդհարումների ժամանակ պահակներ նշանակել, որպեսզի կանխվի ոստիկանության ագենտների պրովոկատորական գործունեությունը[1]։ *Այնուհետև բանաձևը նշում էր, որ կոնֆերենցիան հանձնարարում է գործի դնել բոլոր միջոցները՝ կոնտրռևոլյուցիոներների ընդհարումներ կազմակերպելու պլանները ձախողելու և աշխատավորության ուշադրությունը ցարական կառավարության դեմ մղվող ռևոլյուցիոն պայքարի վրա կենտրոնացնելու համար*[2]։

Երևանում, ինչպես նաև Երևանի նահանգի բազմաթիվ շրջաններում՝ Դարալագյազում, Ղամարլուում, Էջմիածնում, Նոր Բայազետում և մի շարք տեղերում հայ-ադրբեջանական ընդհարումների պրովոկացիան բավական վտանգավոր դրություն էր ստեղծել դարերով բարեկամական կապերով միացած հայ և ադրբեջանական աշխատավոր ժողովուրդների համար։

1905 թ. մարտին բոլշևիկյան «Վպերիոդ» թերթը հաղորդում էր. «Երևանից գրում են, որ այնտեղ ընդհանուր իրարանցում է»[3]։ *Նույնպիսի տագնապալից վիճակ էր ստեղծվել նաև Կարսի մարզում, ինչպես նաև Նախիջևանում։*

Ազգային ընդհարումները զգալի վնաս հասցրին գյուղատնտեսական աշխատանքներին։ Ցանքսերը ժամանակին և որակով չկատարվեցին, որի հետևանքով Երևանի նահանգի մի շարք գավառներում 1905—1906 թթ. անբերրիություն եղավ, գյուղացիության առանց այն էլ ծանր դրությանն ավելացան սովն ու հիվանդությունները[4]։

Ընդհարումներ տեղի ունեցան նաև Զանգեզուրում։

---

[1] „Кавказский рабочий листок", № 9, 1905.

[2] *Նույն տեղում։*

[3] „Вперед", № 11, 1905.

[4] *Տես* „Кавказское сельское хозяйство", № 84, 1905.

1905 թ. հոկտեմբերի 5-ին Գորիսի մի խումբ բնակիչներ հեռագրում էին Կովկասի փոխարքայությանը այն մասին, որ Զանգեզուրի գավառապետ Սվալիանին ինքն է հրահրում հայ-ադրբեջանական պրովոկացիոն ընդհարումները։ Գորիսեցիները պահանջում էին հեռացնել գավառապետին, որից հետո բոլոր «անկարգությունները ինքնըստինքյան կվերանան»[1]։

«Ժողովուրդը զզվել է խրոնիկական պրովոկացիայից և հուսահատվել իրեն հասած զրկանքներից ու տառապանքներից,— գրում է «Նոր խոսքը»։ — Անկեղծ ու խիզախ խոսքը կարծում ենք, պիտի կարողանա սթափեցնել խավարային վրեժխնդրությամբ համակված մասսային»[2]։

Բազմաթիվ փաստերը ցույց են տալիս, որ աշխատավոր գյուղացիները բարեկամական մեծ վայելով էին կապված իրար հետ և ամեն հարմար ասիթ նրանք օգտագործում էին փրար պաշտպանելու։ «Նոր խոսք» թերթը բազմաթիվ օրինակներ է բերում, թե ինչպես Երևանի նահանգի Ապարանի և մի շարք ուրիշ շրջաններում հայ գյուղացիները ադրբեջանցիներին թաքցնում են իրենց տներում ազգամոլներից նրանց պաշտպանելու համար, նույն կարգով ադրբեջանցիներն էին մեծ սիրով պաշտպանում իրենց հայ եղբայրներին[3]։ Աշխատավոր գյուղացիները ամրապնդում էին իրենց եղբայրական կապերը։ Այդ տեսակետից ուշագրավ է Երևանի նահանգի Հայկական Յուվա և ադրբեջանական Փոքր Վեդի (Քեշիկ—Վեդի) գյուղերի միատեղ պայքարը ճնշողների և ազգայնական թշնամանք տարածողների դեմ։ 1905 թ. նոյեմբերի 30-ին երկու գյուղերի աշխատավորները փրենց ընդհանուր հավաքում ընտրում են միացյալ լիազորներ, որոնց իրավունք էր տրվում պատժել բոլոր նրանց, ովքեր թշնամանք կտարածեն երկու բարեկամ ժողովուրդների միջև[4]։

Յարիզմի և մայիոնալիստական պարտիաների հրահրած եղբայրասպան ընդհարումներին վերջ տալու գործում զգալի դեր խաղացին հայ և ադրբեջանական ժողովուրդների առաջադեմ գրողներն ու հասարակական գործիչները։

Հայ և ադրբեջանական ժողովուրդների եղբայրության և նրանց անխախտ բարեկամության ջերմ պաշտպանն ու նրա անխոնջ մար-

---

[1] Վրաց. ՍՍՌ ԿՊԱ, ֆ. 1, գ. 33, թ. 0160։

[2] «Նոր խոսք», № 11, 1906։

[3] Նույն տեղում, № 4։

[4] Տես Հայկական ՍՍՌ ԿՊԱ, ֆ. 770, գ. 13, թ. 1։

տիկն էր հայ մեծ բանաստեղծ Հովհ. Թումանյանը։ Նա իր տաղանդավոր ստեղծագործություններում և նամակներում բերում է բազմաթիվ օրինակներ անդրկովկասյան ժողովուրդների դարավոր բարեկամության մասին, պրոպագանդում է այդ բարեկամության գաղափարները։ «Ես հավաքում եմ էդ դեպքերի պատմությունները»[1],— գրում է Հովհ. Թումանյանը։ Առանձնապես ուշադրություն են մեծ բանաստեղծի հետևյալ տողերը. «Թե 1905—6 (թթ.) հայ-թյուրքական ընդհարումների ժամանակ, թե վերջին մեծ պատերազմի ժամանակ շատ դեպքեր են պատահել, երբ հայը պաշտպանել է թուրքին, թուրքը հային՝ ցույց տալով մարդասիրության կամ անձնուրացության բարձր օրինակ, նույնիսկ հաճախ իր անձը վտանգի ենթարկելով»[2]։

Հովհ. Թումանյանը, մերկացնելով ցարիզմի ավանտյուրիստական քաղաքականությունը ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին, գրում է, որ «Հեղափոխության ուրվականից վախեցած ռուսական բյուրոկրատիան ժողովուրդների համար մի շար խաղ հնարեց, ցանկանալով բաժանել նրանց և դրանով զբաղեցնել նրանց ուշադրությունը»[3]։

1905 թ. ռուսական ռևոլյուցիան Հովհ. Թումանյանը համարել է «Դարավոր վարդերի ու հատկացողությունների հեղաշրջումի. օրը, պատմության ահավոր դատաստանի օրը։

Մեծ ալեկոծություններն ու ակնկալությունները ամենքին տեղահան են արել, դուրս են բերել իրենց անկյուններից և ահա— ժողովուրդներն իրենց ունեցած ուժերով հրապարակի վրա են»[4]։

Հովհ. Թումանյանը հայ-ադրբեջանական ընդհարումները դադարեցնելու գործում իր կատարած դերի մասին գրել է. «ամենն ջանք շարունակ գործ եմ դրել մեր դավառներում խաղաղություն պահելու և կոտորածների առաջն առնելու։ Եվ այսօր ես այնքան գոհ չեմ, որ գրականության մեջ մի որևէ բան եմ արել, որքան գոհ եմ, որ ամենքս կարողացա իրար դեմ կանգնած ժողովուրդների սրերը պատյան դնել տալ և շատ ու շատ անմեղների ազատել այս պաղանական կոտորածից»[5]։

Հովհ. Թումանյանը շրջադայում էր Բորչալուի, Լոռիի և Ղազախ-Շամշադինի շրջանները և սպիտակ դրոշը ձեռքին ժողովուրդ-

---

[1] Հովհ. Թումանյան, հատ. 4, 1951, Երևան, էջ 420։
[2] Նույն տեղում։
[3] Նույն տեղում, էջ 421։
[4] Նույն տեղում, էջ 99։
[5] Նույն տեղում, հատ. 5, էջ 298։

ներին խաղաղություն էր քարոզում։ Այդ մասին իր ընկերներից մեկին նա գրել է. «Հաճախ հիշել եմ քեզ և մոտիկ մի քանի մարդկանց,— թե ինչ կասեիր,— ինչպես պիտի ծիծաղեիք — երբ տեսնեիք լեռներում պատրոնդաշները գցած, զինված ոտից գլուխ, հարյուրավոր ձիավորներով ու ճերմակ դրոշակով»[1]։

Կովկասում ծավալված ազգամիջյան կոտորածները խորապես ցնցում են Հովհ. Թումանյանին։ Ազգամիջյան չարիքը վերացնելու նպատակին է նվիրվում նա իր հոգու ամբողջ զորությամբ։ Այդ մասին Ավ. Իսահակյանը պատմում է. «...Սկսվեցին հայ-թուրքական արյունոտ վրիվները... Օհաննեսը ամբողջ էությամբ կլանված էր մի կերպ վերջ դնելու այս անմիտ եղբայրասպանությանը, որ ծառայում էր միայն ցարերի բռնակալության հարատևման գործին։ Այդ ժամանակներին էր, որ նա հայ զինված գյուղացիների գլուխն անցած, Լոռում, գնում է հարևան թուրքերի մոտ և հաշտության դաշն կնքում, որով այդ շրջանի խաղաղությունը պահպանվում է»[2]։

1906 թ. գրած նամակներից մեկում Հովհ. Թումանյանը նշում է, որ մեծ ջանքերի հետևանքով հաջողվեց Բորչալուի և Ղազախի գավառներում խաղաղություն պահպանել, որտեղ. «... Բոլոր բարեմիտ մարդիկ գոհում ու անդադար հետամուտ էին լինում, որ խուսափեն հայ-թուրքական զազրելի ընդհարումներից»[3]։

Հովհ. Թումանյանը մեծ զայրույթով է խոսում այն շահամոլ և ժողովուրդների բարեկամության թշնամի կալվածատերերի մասին, որոնք հրահրում էին եղբայրասպան պատերազմը։ Նա բերում է հայ կալվածատեր Բաշբոյուկ-Մելիքովի օրինակը, որը Ղազախի ազգաբնաջնջի քոչվորներից Շամուտի ճանապարհի վրա բռնադրավել էր մոտ 100 ոչխար։ «Մեր «աղնվականի» այդ տխուր սիրադործությունից, գրում է Թումանյանը, մենք բոլորս էլ վրդովված ենք մինչև մեր հոգու խորքը։

Նա խախտում է երկու ժողովուրդների միջև հաղիվ պահպանված խաղաղությունը, առաջ է բերում արյունահեղ ընդհարումներ։ Նա վարկաբեկում է մեր հարևանների առաջ, որոնց մենք խոստացել ենք մեր սահմաններում լիակատար ապահովություն»[4]։

---

[1] Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 5, Երևան, 1945, էջ 299։

[2] Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1951, էջ 28։

[3] Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 5, Երևան, 1945. էջ 291։

[4] Նույն տեղում, էջ 292։

Հովհ. Թումանյանը անձամբ հետաքրքրվում է այդ գործով և պարզում, որ այդ դաժան շահագործողը, հայ և ադրբեջանցի աշխատավորների արյունախում թշնամին, ամեն տարի քոչվորներին կողոպտել է։ Իսկ 1906 թ. «... ունենալով իր կալվածքում կապակներ և զինված ծառաներ, մեր հիդալգոն անցել է սովորականի սահմանները»[1]։ Այդ կալվածատերը տեսնելով, որ Հովհ. Թումանյանի գլխավորությամբ ամբողջ գյուղացիությունը իր վրդովմունքն ու բողոքի ձայնն է բարձրացնում, սկսում է հայտարարել և բողոքել կառավարությանը, որ ադրբեջանցիները իր արոտատեղիները արածացրել են և «Կուրտիկ» կոչվող կալվածքում ինքնագլուխ կերպով ծառերը կտրել։ Արյունախում տղրուկը դեռ պահանջ էր դնում, որ գյուղացիներից բռնագանձվի իբր թե իրեն հասցրած վնասի համար։ Մերկացնելով կալվածատեր Բաշբոյուկ-Մելիքովի չարագործությունները, մեծ պոետը գրում էր. «Կուրտի՞կ... Կուրտիկը — հենց ճիշտ այն տեղն է, ուր տեղավորված են կապակները։

Ոչ մի անտառահատում չի եղել Կուրտիկում։ Թյուրք քոչվորները անցել են շատ խաղաղ, ոչ մի տեղ ոչ ոքի չեն նեղացրել»։ Այնուհետև Թումանյանը նշում է, որ եթե կալվածատերը «խոսում է իր վնասների մասին և այլն, ապա այդ նրա համար է, որպեսզի թաքցնի իր արածը։ Եվ ոչ միայն թաքցնի, այլև մինչև անգամ... բռնագանձի թյուրքերից, հանդես գալով տուժած մարդու դերում»[2]։

Հովհ. Թումանյանը իր մի շարք նամակներում մերկացնում է նաև Լոռու կալվածատերեր Եղիազարով եղբայրների հակաժողովրդական գործունեությունը։

Սակայն ցարական չինովնիկներին դուր չէր գալիս մեծ պոետի՝ ժողովուրդների բարեկամության երգչի պրոգրեսիվ գործունեությունը։ Նրանք ամեն էին մտադրում Հովհ. Թումանյանին աստիճանից հեռացնելու համար։ Ցարական ոստիկանությունը սկսում է հետապնդել մեծ բանաստեղծին։ Կովկասի ոստիկանության վարչապետ Շիրինկինը կարգադրություն է անում Հովհ. Թումանյանին ձերբակալելու համար։ «Շիրինկինը գրել է, որ ինձ ձերբակալեն։ Տեսնենք ինչպես է վերջանում,— գրում էր պոետը։

Նորից մթնոլորտը խառնվում է և ով գիտե էս կարկուտի տակից էլ կաղատվեմ թե չէ»[3]։ Սակայն բռնակալները վախենում էին ձեռք տալ մեծ բանաստեղծին. նրանք գիտեին, որ Հովհ. Թուման-

---

[1] Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 5, Երևան, 1945, էջ 292։

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում, էջ 299։

յանի բանաստեղծությունը տեղիք կտար ժողովրդական մասսաների նոր գժգոհությունների։

Եղբայրաջինջ սպանդին վերջ տալու և ժողովուրդների բարեկամությունը ամրապնդելու ուղղությամբ խոշոր աշխատանք էին տանում նաև Սվ. Խաչատրյանը, Դ. Աղայանը, Մ.Պետրոսյանը և ուրիշները։

Եղբայրական ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում անգնահատելի աշխատանք էին ծավալել նաև Ադրբեջանական դեմոկրատ գրողներ Ջաբար Ջաբարլին, Ջալիլ Մամեդ Կուլիզադեն, Ա. Սաբիրը և շատ ուրիշները։

1906 թ. ադրբեջանական ականավոր բանաստեղծ Սաբիրը հատուկ կոչ-բանաստեղծությամբ դիմեց իր հայ ադրբեջանցի բարեկամներին «շեյթանի» (նկատի ուներ ցարին) ձեռքով հրահրված եղբայրասպան կոտորածներին վերջ տալու համար։ Այդ բանաստեղծությունը շատ ուշագրավ երևույթ էր ադրբեջանական գրականության մեջ։ Ահա այդ բանաստեղծությունը.

«ԲԵՅՆԵԼՄԻԼԵԼ»

Հայ և թուրք հայրենակիցներիս

Երբ որ հիմա, մեր դարում, պետք է լինել միաբան,
Լինել եղբայր, ունենալ մի նպատակ սրբազան,
Երբ որ չկա լուրջ պատճառ թուրք ու հայի դժտության,
Ինչու համար ենք դարձել թշնամիներ մենք դաժան։
Հայրենիքի, նույն հողի զավակներ ենք վաղուց մենք,
Չկա մեկը, որ այսօր ուզիլ համփա ցույց տար մեզ։*

Իմաստուններ, եկեք հանդես, եղբայրության խոսք թող հնչի,
Որ լինենք հաշտ ու մտերիմ, թշնամությունն անդարձ կորչի։

Երկու ընկեր՝ հարևան, հայրենիքում երկրակից,
Որ դարերով աշխատել, միշտ եղել ենք բախտակից,
Արտ ենք ջրել, ջուր խմել նույն դետերից, աղբյուրից,
Այսօր հանկարծ իրար դեմ սուր ենք հանում պատյանից։
Տգիտության, ԻԳՆՈՐԱՆՍԻ[1] մատն է այստեղ խառնակիչ,
Գյուղ ու քաղաք ավերակ՝ դարձան արյան կարմիր լիճ։

---

* Բանաստեղծը, ինչպես երևում է, դեռ չէր հասել այն ճանաչողությանը, որ այդպիսի պարտիա արդեն կար։

[1] Նկատի ունի ցարին։

Իմաստուններ, եկեք հանդես, եղբայրության խոսք թող հնչի,
Որ լինենք հաշտ ու մտերիմ, թշնամությունն անդարձ կորչի։

Այսքան որոմ[1] ով ցանեց, և ով նյութեց այսքան դավ,
Օ՜, ինչպիսի փոթորիկ մեր շուրջն ահա բարձրացավ.
Մարդասերներ չեն նրանք, որոնք պարձան մարդադավ,
Թրքությունն ու հայությունը, դուք է, պատճառ չեն բնավ...
Տգիտություն, մոլորանք, դուք եք ատելն ու պատճառ,
Դուք եք խարում երկու լավ ժողովրդին չարաչար։

Իմաստուններ, եկեք հանդես, եղբայրության խոսք թող հնչի,
Որ լինենք հաշտ ու մտերիմ, թշնամությունն անդարձ կորչի։
Ժողովրդին ասենք մենք ճշմարտությունն անվարան,
Բանանք աչքերը նրա, որ լավն ու վատն իմանա.
Ինչպես արևն է գրում իր շողերով ոսկեմատ՝
Ցրենք խավարն անդադար, մինչև անցնի մահանա...
Հետու վանենք տխրությունն արյունոտված մեր սրտից,
Բնչնելմիլելն, ով Սարիր, դառնա պայծառ ուղեկից...

Իմաստուններ, եկեք հանդես, եղբայրության խոսք թող հնչի,
Որ լինենք հաշտ ու մտերիմ, թշնամությունն անդարձ կորչի։

Ժողովուրդների բարեկամությունն ամրապնդելու ուղղությամբ հավայական աշխատանք էր ծավալել հայտնի դեմոկրատ գրող. «Մոլլա Նասրէդդին» ամսագրի հիմնադիր և խմբագիր Ջալիլ Մամեդ Կուլիզադեն իր ամսագրում և բազմաթիվ ստեղծագործություններում, ինչպես օրինակ՝ «Ուստա Ջեյնալ», «Քյամանչա», «Ախունդի և տերտերի քարոզը», «Առաջին խոսք», «Մուսուլմանները զինվում են» և այլ գործերում կարմիր թելով անց է կացնում ժողովուրդների ջերմ բարեկամությունը։ Նա մոտ բարեկամություն է ունեցել Շիրվանզադեի և մի շարք հայ գրողների հետ և բավարար չափով ուսումնասիրել հայերեն լեզուն։ Ուշադրավ է հետևյալ փաստը. մի անգամ հարց է ծագում պարսկերեն լեզվով Թավրիզում հրատարակել «Մոլլա Նասրէդդին» ամսագիրը, Ջալիլ Մամեդ Կուլիզադեն հրաժարվում է պարսկերեն հրատարակել և պատասխանում է պարսկական կառավարությանը՝ «Ձեզ մոտ, Թավրիզում հրատարակվում են հայկական չորս թերթ, բայց ոչ մի իրանցի չգտի հայերեն։ Ես ծանոթ եմ հայերենին,— գրում է նա։— Այդ դեպքում թույլ տվեք ամսագիրը հրատարակել հայերեն»[2]։

---

[1] Թունավոր սերմ ունեցող խոտաբույս։

[2] Ադրբեջ. ՍՍՌ ԳԱ Նիզամու անվան Գրականության ինստիտուտի աշխատություններ, հատ. 3, Բաքու, 1948, էջ 55։

Հայ-ադրբեջանական բարեկամության ջերմ արտահայտիչն է ադրբեջանական մեծ դրամատուրգ Աբուրադիմ բեգ Հախվերդիևը։ Հախվերդիևը գրույցներից մեկի ժամանակ ասել է. «... գրվածքներիս հերոսների անունները որ փոխեմ, նրանց անվանելով Գրիգոր, Հովհաննես, Մկրտիչ՝ գրվածքս կդառնա հայկական կյանքից»։

Տաղանդավոր դրամատուրգ Ջաբար Ջաբարլին իր «1905 թիվը» գրամայի մեջ հանդես է բերում հայ գյուղացի Ալահվերդուն և ադրբեջանցի Իմամվերդուն, որոնք հայ-ադրբեջանական դարավոր բարեկամության լավագույն օրինակն են։ Նրանք հարված են հասցրնում այն ազգամոլ-նացիոնալիստներին, որոնք ձգտում էին այդ ժողովուրդների մեջ արհեստական թշնամանք սերմանել։ Հայ-ադրբեջանական ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում կարևոր դեր են կատարել «Մոլլա-Նասրէդդին» և «Խաթաբալա» երգիծական պարբերականները, առանձնապես 1906—1907 թվականներին, երբ ամենուրեք մոլեգնում էր ցարական դաժան ռեակցիան։ Հիշատակման արժանի են «Մոլլա Նասրէդդին» ամսագիրը 1907 թ. 12-րդ համարում տպագրված երեք ծաղրանկարները, որոնք մերկացնում էին ցարիզմի և բուրժուական նացիոնալիստների ազգակործան քաղաքականությունը և ցույց տալիս հայ-ադրբեջանական աշխատավորների ներկայացուցիչների գրկախառնվելը, որպես նրանց բարեկամության ցայտուն արտահայտություն։

«Խաթաբալա»-ն իր 1906 թ. 4-րդ համարում զետեղված մի նկարում պատկերում է, թե ինչպես թունավոր օձն իր պտույտի մեջ է առել հայ-ադրբեջանցի աշխատավորներին և ուզում է խեղդել։ Իսկ 1907թ. ապրիլի 7-ի համարում ցույց է տրվում օձը սրով կտրտված, արյունաշաղախ, իսկ ազատված հայերն ու ադրբեջանցիները բացագանչում են. «Նզովք հիշատակիդ, եղբայրասպան շեյթան»։

Հայ և ադրբեջանական ժողովուրդների ջերմ բարեկամության արտահայտությունն էր 1906 թվականից հայերեն և ադրբեջաներեն լեզուներով Մ. Ավիլբեկովի ջանքերով հրատարակվող «Կոչ-Դեհեթ» թերթը։ Այդ թերթը, չնայած դոյության կարճ ժամանակամիջոցին, մեծ դեր խաղաց ժողովուրդների բարեկամությունն ամրապնդելու գործում։ Այդ է պատճառը, որ Վ. Ի. Լենինը և նրա զինակիցներ Ի. Ստալինը և Ստ. Շահումյանը շատ կարևոր նշանակություն էին տալիս «Կոչ-Դեհեթ» թերթի հրատարակմանը։

Ցարական կառավարությունը, զգալով իր քաղաքականության ոնանկությունը, 1905 թ. ապրիլին Կուզմինսկուն Բաքու ուղարկեց

հայ-ադրբեջանական ընդհարումների վերաբերյալ քննություն կատարելու։ Դրանով ցարիզմը նորից ուզում էր խաբել մասսաներին՝ տպավորություն ստեղծելու համար, որ այդ բոլորի պատճառը իրեն ինքը չի եղել։

Վ. Ի. Լենինը 1905 թ. գրած «Ոստիկանության դեպարտամենտի գլխավոր Լոպուխինի զեկուցագիրը» բրոշյուրի առաջաբանը» հոդվածում մերկացնում է ցարական ոստիկանության սնանկությունն և նրա անհարկությունը ռևոլյուցիոն մասսաների բարձրացող հուժկու ալիքների առաջ։ Վ. Ի. Լենինը ցույց է տալիս, թե ինչպես ցարական դահիճները ղդալով ոստիկանության և ամբողջ պահնորդական բաժնի անկարողությունը, գործի են դնում ռազմական ուժը, սևհարյուրյակային խմբերը և սկսում են «բորբոքել ազգային, ռասայական թշնամություն»[1]։ Ցարական կառավարությունը գործի է դնում նացիոնալիստական բոլոր ռեակցիոն ուժերին և ապա նրանց դուրս բերում միմյանց դեմ։

Ցարիզմը ձգտում էր գահի պաշտպանության համար համախմբել բնակչության մեջ եղած բոլոր ռեակցիոն տարրերին և ռևոլյուցիոն կազմակերպությունների «դեմ ոստիկանության մղած պայքարը դարձնել ժողովրդի մի մասի պայքար ժողովրդի մյուս մասի դեմ»[2]։

Վ. Ի. Լենինը նշում է, որ ցարիզմը հենց այդպես էլ վարվում է՝ Բաքվում ադրբեջանցիներին «դրդռելով հայերի դեմ, փորձելով առաջ բերել հրեական նոր ջարդեր...»[3]։

Սակայն ցարիզմի այդ մեքենայությունները չէին կարող փրկել նրան կործանումից։ Դրանք ավելի էին բորբոքում ժողովրդական մասսաներին դեպի ցարն ունեցած զայրույթն ու ատելությունը. ուժեղացնում նրանց պայքարը։ Դրան օրինակ կարող է ծառայել Բաքվի ջարդը, «որը տասնապատիկ բոլոր խավերի ռևոլյուցիոն տրամադրությունն ընդդեմ ցարիզմի։ Կառավարությունը մտածում էր ժողովրդին վախեցնել արյան տեսքով և փողոցամարտերի բազմաթիվ զոհերով,— իրականում նա ժողովրդին ընտելացնում է արյունահեղությունից չվախենալուն, ուղղակի զինված ընդհարման»[4]։

Ցարական ոստիկանական կառավարությունն իրեն փրկելու

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 8, էջ 247։

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում, էջ 248։

համար ամբողջ Ռուսաստանը հայտարարեց ռազմական դրության մեջ։ Ամենուրեք նշանակվեցին գեներալ-նահանգապետներ, որոնց հրամայվեց ամենախիստ միջոցներով ճնշել ռևոլյուցիոն շարժումները։ Ձերբակալվեցին ու աքսորվեցին բանվոր դասակարգի բազմաթիվ ղեկավար գործիչներ։ Բոլոր նրանք, ովքեր կասկածելի էին համարվում, ձերբակալվում ու բանտ էին նետվում։ 1905 թ. վերջին և 1906 թ. սկզբներին մամուլի տեղեկությունների համաձայն աքսորականների թիվը 75 հազարից ավելի էր։ Փակվել էին բազմաթիվ տպարաններ, արգելվել էր 72 լրագրերի հրատարակումը, որոնց խմբագիրներն ու աշխատակիցները կամ դատի էին տրվել կամ աքսորվել[1]։

Դաշն կնքած բոլոր ռեակցիոն ուժերի հետ, ցարիզմը միջազգային իմպերիալիզմի օգնությամբ սկսեց ճնշել ռուսական առաջին ռևոլյուցիան։ Սկսվեցին առոլիպինյան սև ռեակցիայի տարիները։

* *

Ցարական կառավարությունը և նրա շուրջը համախմբված բոլոր ռեակցիոն տարրերն ու բուրժուա-նացիոնալիստական պարտիաները օգտվելով բանվորական, գյուղացիական և զինվորական շարժումների ցրիվությունից, նրանց անջատ-անջատ լինելուց, ճնշեցին դրանց, արյան մեջ խեղդելով բանվորա-գյուղացիական ռևոլյուցիոն մասսաներին։

1905—1907 թթ. ռևոլյուցիայի «պարտության հիմնական պատճառն այն էր, որ չհաջողվեց միասնական ռևոլյուցիոն հոսանքի մեջ միավորել բանվորների, գյուղացիների և զինվորների ելույթները»[2]։ Մենշևիկները, էսեռները և բուրժուա-նացիոնալիստական մյուս պարտիաները թաքցրին աշխատանք տարան բանվոր դասակարգի և գյուղացիության մեջ և չլուծեցին ռևոլյուցիայի միասնական ուժը։ Մի շարք իմպերիալիստական պետություններ ցարիզմին մեծ քանակությամբ փոխառություն տրամադրեցին՝ ռևոլյուցիան ճնշելու համար, իսկ կայզերական Գերմանիան նույնիսկ ռազմական ինտերվենցիա էր պատրաստում ռևոլյուցիայի դեմ՝ եթե այն հաղթանակեր։

Զնայած պարտությանը, ռուսական ռևոլյուցիան ունեցավ համաշխարհային խոշոր պատմական նշանակություն։

---

1 Տես «Լուսաբեր», № 1, 1906։

2 Ռուսական առաջին ռևոլյուցիայի հիսուն տարին (թեզիսներ)։

Այդ ռևոլյուցիայի մեջ պրոլետարիատը հանդես եկավ որպես առաջատար հասարակական ուժ, որպես աշխատավոր մասսաների առաջնորդ ու ղեկավար։ Նրա պայքարում հոկտեմբերյան դեր խաղացին պայքարի պրոլետարական ձևերը՝ մասսայական-քաղաքական գործադուլները։ Այստեղ առաջին պատմական ստուգումը ստացավ նաև բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրապնդման լենինյան գաղափարը։

Բանվորական դեպուտատների Սովետների ստեղծումը ռևոլյուցիայի խոշորագույն նվաճումն էր, բանվոր դասակարգի հանճարի ստեղծագործությունը, որը ելակետ հանդիսացավ Սովետների ռեսպուբլիկայի որպես պրոլետարիատի դիկտատուրայի պետական ձևի, լենինյան հանճարեղ ուսմունքի ստեղծման համար։

Այդ ռևոլյուցիան խարխլեց ցարիզմի հիմքերը և ուժեղացրեց ռևոլյուցիոն շարժումները բոլոր երկրներում։ Աշխարհի բոլոր պրոգրեսիվ մարդիկ կոչ էին անում «կանգնել ռուսական ռևոլյուցիայի դրոշի տակ»։

Վ. Ի. Լենինը, խոսելով ռուսական առաջին ռևոլյուցիայի նշանակության մասին, գրել է. «1905 թվականի ռուսական շարժումից հետո դեմոկրատական ռևոլյուցիան ընդգրկել է ողջ Ասիան՝ Թյուրքիան, Պարսկաստանը, Չինաստանը։ Աճում է խմորումն անդլիական Հնդկաստանում»[1]։

Ռուսական առաջին ռևոլյուցիան խոշոր ազդեցություն թողեց նաև մեր երկրի հասարակական մտքի զարգացման ընթացքի վրա։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 19, էջ 83։

V. ՌՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՏՔԻ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ

Ռուսական առաջին ռևոլյուցիան խորը հետքեր թողեց հասարակական մտքի բոլոր բնագավառների՝ գրականության, արվեստի, կուլտուրայի վրա և նրանց համար բացեց լայն հորիզոններ։ Այդ ավելի ակնառու կերպով արտահայտվում է գրականության ասպարեզում։ Վ. Ի. Լենինը նշել է, որ անգամ «ռեակցիոներները ստիպված էին ընդունել, որ 1905 թվականը, կռվի տարին, «խելագար տարին» վերջնականապես թաղեց նահապետական Ռուսաստանը»[1]։

Ռևոլյուցիայի ազդեցությունը ուժեղ տպավորություն թողեց, հեղաշրջող նշանակություն ունեցավ Ռուսաստանի ազգային ծայրամասերում, ինչպես և Հայաստանում։

Հայ իրականության մեջ նոր՝ պրոլետարական կուլտուրայի և գրականության ստեղծման ու զարգացման գործում անգնահատելի գեր կատարեցին Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Հակոբ Հակոբյանը և ուրիշները։

Վ. Ի. Լենինը նշել է, որ բուրժուական հասարակության մեջ կուլտուրան, արվեստն ու գրականությունը ծառայում են ունևորիշխող դասակարգերին, մինչդեռ աշխատավոր ժողովուրդը զրկված է այդ բարիքներից օգտվելու հնարավորությունից։ Մի՞ավ պարտիան, որ պայքարում էր· իրական ազատ և աշխատավորական մասսաների հետ կապված արվեստ և գրականություն ստեղծելու համար, դա բոլշևիկների պարտիան էր։ Միայն պրոլետարիատի և նրա պարտիայի ստեղծած գրականությունը «կլինի՞ ազատ գրականություն,— գրում է Վ. Ի. Լենինը,— որովհետև նա կծառայի տ՛չ թե

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 23, էջ 318։

հագեցած հերոսուհուն, ո՛չ թե ձանձրացող ու ճարպակալումից տառապող «վերին տասը հազարին», այլ միլիոնավոր ու տասնյակ միլիոնավոր աշխատավորներին, որոնք երկրի ծաղիկը, նրա ուժը, նրա ապագան են կազմում»[1]։

Ստ. Շահումյանը և Ս. Սպանդարյանը կյանքում հետևողականորեն անց էին կացնում Վ. Ի. Լենինի 1905 թ. գրած «Պարտիական կազմակերպություն և պարտիական գրականություն» նշանավոր հոդվածի այն հիմնական դրույթը, ըստ որի պրոլետարիատը պետք է առաջադրի պարտիական գրականության սկզբունքը և ամեն կերպ կենսագործի այն։ «Ոչ միայն այն,— գրել է Վ. Ի. Լենինը,— որ սոցիալիստական պրոլետարիատի համար գրական գործը չի կարող անձնավորությունների կամ խմբերի շահառության միջոց լինել, այն ընդհանրապես չի կարող ընդհանուր պրոլետարական գործից անկախ, անհատական գործ լինել։ Կորչե՛ն անպարտիական գրականագետները։ Կորչե՛ն գերմարդ գրականագետները։ Գրական գործը պետք է դառնա համապրոլետարական գործի մի մասը, սոցիալ-դեմոկրատական այն մեկ միասնական, մեծ մեխանիզմի «անվակն ու պտուտակիկը», որ շարժման մեջ է դրվում ամբողջ բանվոր դասակարգի, ամբողջ գիտակից ավանգարդի կողմից»[2]։

Գրականությունը որպես իդեոլոգիայի կարևորագույն ճյուղերից մեկը, միշտ էլ եղել է Ստ. Շահումյանի ուշադրության կենտրոնում։ Նա իր աշխատություններում, հոդվածներում ու ճառերում ընդգծում էր, որ գրականությունը իր սոցիալական բովանդակությամբ դասակարգային է, որի զարգացումը պայմանավորված է դասակարգային պայքարի ընթացքով։

Պրոլետարական գրականությունը սոցիալդեմոկրատական, ժողովրդական գրականությունն է, քանի որ այն արտացոլում է ռևոլյուցիոն պրոլետարիատի շահերն ու խնդիրները։

Ստ. Շահումյանը գրականության զարգացման խնդրում ամենակարևորը համարում էր նրա իդեական-քաղաքական ուղղությունը, այն, ինչով գրողը ազդում է հասարակական մտքի զարգացման վրա։

Հայ պրոլետարական գրականության զարգացման գործում կարևոր ներդրում էին Ղ. Աղայանի, Լ. Տոլստոյի, Մ. Գորկու մա-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 10, էջ 45։

[2] Նույն տեղում, էջ 40։

սին գրած Ստ. Շահումյանի գրականագիտական մի շարք հոդվածները։

Հայ հասարակական մտքի զարգացման գործում զգալի դեր է կատարում ռուսներից հայերեն թարգմանվող գրականությունը։ Ռուս ականավոր գրողներից Պուշկինի, Գրիբոյեդովի, Գոգոլի, Լերմոնտովի, Նեկրասովի, Սալտիկով-Շչեդրինի, Տուրգենևի, Լ. Տոլստոյի, Ա. Չեխովի և մանավորապես Մ. Գորկու երկերը մեծ չափով թարգմանվում և տպագրվում են հայերեն պարբերական մամուլում և առանձին գրքերով։ Մ. Գորկու ազդեցությունը հայ պրոլետարական գրականության ստեղծման և զարգացման գործում ակնհայտ էր և հսկայական։

20-րդ դարի սկզբից հայ գրականության մեջ դերիշխող տեղ է գրավում քննադատական ռեալիզմը, որի ականավոր ներկայացուցիչներն էին Ալ. Շիրվանզադեն, Հովհ. Թումանյանը, Նար-Դոսը և ուրիշները։

Պրոլետարական-դեմոկրատական իդեոլոգիան ձևավորվում և զարգանում էր որպես մի նոր թարմ հոսանք, որ անհաշտ պայքարի մեջ էր մտել հայ իրականության մեջ գոյություն ունեցող բոլոր ռեակցիոն ուժերի դեմ։

Հասարակական մտքի զարգացման մարքսիստական գաղափարների տարածման գործում անգնահատելի դեր խաղաց բոլշևիկյան մամուլը։ Թիֆլիսի և Բաքվի գաղտնի տպարաններում, ինչպես նաև Սվերդլովսկի, Շուշիի, Կարսի տպարաններում տպագրված անվեղար գրականությունը, որոնց թվում Վ. Ի. Լենինի, Ի. Վ. Ստալինի, Ստ. Շահումյանի աշխատությունները լայնորեն տարածվում էին Հայաստանի բազմաթիվ քաղաքներում ու շրջաններում։

Ստ. Շահումյանի 1905 թ. «Կավկազսկի բաբոչի լիստոկ» թերթում լույս տեսած «Ռևոլյուցիայի նոր հաղթությունը», «Էվոլյուցիոնիզմն ու ռևոլյուցիոնիզմը հասարակական գիտության մեջ», «Ութ ժամյա քանվորական օրը և բանվորների պետական ապահովագրությունը» հոդվածները լուրջ ներդրում էին մարքսիզմի մեջ։ Այդ հոդվածներում առաջ քաշված խնդիրները ամբիջապես ելնում էին Վ. Ի. Լենինի ցուցումներից՝ պրոլետարական ռևոլյուցիայի ստրատեգիայի և տակտիկայի կարևոր հարցերը պրակտիկ դերպով կյանքում անցկացնելու գործում։

1906 թ. ապրիլի 1-ին Ստ. Շահումյանի ջանքերով և նրա ղեկավարությամբ սկսեց լույս տեսնել բոլշևիկյան «Կայծ» թերթը։

«Մեր օրգանը» առաջնորդողում թերթն իր խնդիրները հետևյալ կերպ է բնորոշում։

«Մեր օրգանը պետք է լինի բերան հայ բանվորության, պրոլետարական համաշխարհային բանակի այդ փոքրիկ անբաժան դնդերից մեկի։ Նա պաշտպան ու արտահայտիչ պետք է լինի պրոլետարիատի վեհ միջազգային իդեալի»[1]։

Նույն թվականի մայիսին «Կայծ»-ի խմբագրությունում սկսում է աշխատել Ս. Սպանդարյանը, որը դառնում է նրա խմբագիրներից մեկը։ Այստեղ էր աշխատում նաև բանաստեղծ Հակոբ Հակոբյանը։

Սպանդարյանը «Կայծ»-ի էջերում մերկացնում էր դաշնակ ավանտյուրիստների դիմակը, ցույց տալիս նրանց հակաժողովրդական, հայ ժողովրդի համար կործանարար գործունեությունը։ «Անսպառ էր, ըստ երևույթին, Սուրենի եռանդը,— գրում է Հ. Հակոբյանը,— նրա խառնվածքը՝ կրքոտ, ավյունը՝ լայնաշունչ։ Մենամենակ ելնել մի ամբողջ ոհմակի, դաշնակ լիդերների դեմ՝ դիմակազերծ անելու նրանց էությունը, ձգելու նրանց վարկը. ահա։ Սուրենի խոշորագույն ծառայությունը ամենօրյա «Կայծ»-ի էջերում իր ժամանակին, որը հետագայում միշտ դառնում է անկրկնելի, պատմական մի ծառայություն»[2]։

Ստ. Շահումյանի և Ս. Սպանդարյանի գլխավորած «Կայծ» թերթը դարձավ հայ իրականության մեջ բոլշևիկյան պարտիայի ազդեցության տարածման կարևոր գենքը։ Հակոբ Հակոբյանը, որը «Կայծ»-ի ակտիվ դործիչներից էր, խոսելով այդ մեծ ազդեցության մասին, նշում է, որ «Կայծ»-ը մի նոր թարմություն էր մտցրել հասարակական կյանքում, որի շնորհիվ «տեսնում էինք դաշնակցականների «Հառաջ» թերթը հետ շպրտված այնպես, որպես փշրված ու ձորը նետված մի սայլ։ Իսկ «Ալիք»-ին էն օրը ձգած, որը շատ ալեկոծվելուց գլուխն էր կորցրել ու ջարդված նավակի պես տիրը նետվել։

Պայքարն ընդունել էր կտրուկ դրոհի կերպարանք և բավականություն էր պատճառում ամենադժգոհ ընկերներին անգամ»[3]։

«Կայծ»-ի ազդեցությունը հայ բանվորների և դյուղացիների վրա հսկայական էր. դրա համար էլ դաշնակցական խմբապետները ամեն կերպ արգելում և տեռորի էին ենթարկում «Կայծ»-ի տարածողներին և ընթերցողներին[4]։ «Կայծ»-ի ընթերցողներից մեկը

---

1 Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, Երևան, 1948, էջ 80—81։

2 Հ. Հակոբյան, Երևան, 1951, էջ 407։

3 Նույն տեղում։

4 Տես «Կայծ», № 6, 1906։

1906 թ. ապրիլի 23-ին խմբագրությանը ուղղված նամակում վերդամնությամբ գրում էր. «այսօր ես դնայի տեղիս երկաթուղու դայարանը և այնտեղի լրագրավաճառից խնդրեցի ինձ տալ վերջին «Կայծ»-ի համարը, բայց փոխանակ լրագիր ստանալու, անսպասելի կերպով ստանում եմ պատասխան, թե «դաշնակցական գինվորները» արգելել են ծախել «Կայծ» թերթը: Այս ինչ տարօրինակ կարգադրություն և բաշիբոզուկություն է, թույլ չեն տալիս դոնե հասարակ ժողովուրդը հասկանա «Կայծ» թերթի միջոցով ճշմարտությունը»[1]:

Ստ. Շահումյանի առաջարկով «Կայծ» թերթին կից կազմակերպված էր հատուկ դրադարան՝ Հակոբ Հակոբյանի գեկավարությամբ, որը արտատպում էր «Կայծ»-ից կարևոր նյութերը բրոշյուրներով հրատարակում և ապա դրանք մեծ տիրաժով տարածում հայ աշխատավորական մասսաների մեջ: Այդ ձևով տպագրվեցին ու տարածվեցին Ֆ. Էնգելսի «Սոցիալիզմի զարգացումը ուտոպիայից դեպի գիտություն», Ստ. Շահումյանի «Ազգային հարցը և սոցիալ-դեմոկրատիան», Ա. Բեբելի «Սոցիալիստական հասարակությունը», Պ. Լաֆարգի «Կոմունիզմ և անտեսական էվոլյուցիան» և շատ ուրիշ աշխատություններ: Մարքսիստական դրականության բազմահազար տիրաժով տարածելը հայ բանվորների և գյուղացիների մեջ՝ վերափոխող խոշոր նշանակություն ունեցավ: Հակոբ Հակոբյանը գտնում է, որ դրանով բոլշևիկները սոցիալիստական գիտակցության կայծ վառեցին «բանվորական մասսաների մեջ, այն մասսաների, որոնք կղզիացած խեղդվում էին դաշնակների նացիոնալիստական, մոլորեցնող մթնոլորտում, և որոնց անհրաժեշտ էր ազատագրել դաշնակների և այլ նացիոնալիստական պարտիաների թունավոր, վարակող ազդեցությունից»[2]:

«Կայծ»-ի դրադարանին նույնպես օգնում էին բանվորները, որոնք այդ դրականությունը մեծ սիրով տարածում էին աշխատավորության շրջանում:

«Կայծ»-ը և թե նրա դրադարանը լայն չափով տարածում էին մարքսիզմի դաղափարները, լուսաբանում էին ռևոլյուցիայի հրատապ հարցերն ու կարևոր խնդիրները, միաժամանակ մահացու հարված հասցնելով ցարիզմի հենարան հանդիսացող նացիոնալիստական պարտիաներին: «Դաշնակցական Գողիաթի դեմ ելնում է մանկահասակ Դավիթը՝ հանձին «Կայծ» հայ անդրանիկ Ս. Դ. թեր-

---

[1] «Կայծ», № 8, 1906:

[2] Հ. Հակոբյան, Երկեր, էջ 409:

թի, և մի այնպիսի շեշտակի պարսավագրիկ հասցնում դաշնակների թերթին, որ սա առաջին սուր լեզալ հարվածը ղրալով՝ տագնապի ու շփոթության մեջ է ընկնում»[1]:

«Կայծ»-ի հասցրած հարվածը դաշնակցական դրշակներին կատարյալ շփոթության մեջ դցեց: «Կայծ»-ի համարձակ ու «խիզախ ելույթը դաշնակների կեղծ սոցիալիստ լինելու, ժողովուրդը խաբելու և ժողովրդի դիտակցությունը մթագնելու մերկացումն այնպես շանթեց դաշնակցական խմբագիրներին ու ղեկավարներին, որ նրանք շշկլվելուց ու հայհոյանքներից բացի՝ իրենց թերթերում ոչինչով պատասխանել չկարողացան»[2]:

Դաշնակցության մերկացումը և նրա «սոցիալիստի» կեղծ դիմակի պատռումը խոշոր նշանակություն ունեցավ հայ հասարակական մտքի զարգացման և նացիոնալիզմի ախտի դեմ պայքարելու գործում: Բոլշևիկյան մամուլն ու այնտեղ գետեղվող Ստ. Շահումյանի և Ս. Սպանդարյանի հոդվածներն ու ելույթները մահացու հարված հասցրին դաշնակցությանը, որը «կորցրեց ընդմիշտ իր կեղծ կաշվի մեջ փաթաթված խորհրդավորությունը և այնուհետև բանվորական հայ մասսաների համար դարձավ կեղծ դրամ»[3]:

1906 թ. օգոստոսին Թիֆլիսի նահանգապետի կարգադրությամբ արգելվեց «Կայծ» թերթի հրատարակումը: Ստ. Շահումյանի և Ս. Սպանդարյանի ջանքերով նույն թ. օգոստոսի 18-ին լույս տեսավ «Նոր խոսք» բոլշևիկյան թերթը: «Նոր խոսք»-ը շարունակեց «Կայծ»-ի գործը և մեծ դեր խաղաց հայ հասարակական մտքի զարգացման գործում: Այդտեղ լույս տեսան Ստ. Շահումյանի «Դաշնակցական համադումարը էջմիածնում», «Ապարդյուն ջանքեր», «Ներկա մոմենտը և մեր տակտիկան» և մի շարք ուրիշ կարևոր հոդվածներ: «Նոր խոսք»-ում են տպագրվել նաև Ս. Սպանդարյանի «Մեր դերը գյուղում», «Դպրոցական հարցը և սոցիալ-դեմոկրատիան» և այլ հոդվածներ:

Բաքվում լույս տեսնող բոլշևիկյան թերթերն ու բրոշյուրները էս այս կամ այն ճանապարհով գլխավորապես Ջանգեզուրի վրայով տարածվում էին Հայաստանում:

1906 թ. ապրիլից Բաքվի բոլշևիկյան կազմակերպությունը սկսում է հրատարակել «Բակինսկի բարոչի» թերթը, մայիսի 26-ին Բաքվում Մ. Ազիզբեկովի ջանքերով սկսում է լույս տեսնել սոցիալ-

---

1 Հ. Հակոբյան, Նրկեր, էջ 410:

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում, էջ 411:

դեմոկրատական «Կոչ-Դեվեթ» թերթը, որին աջակցում և մեծ դնահատական էր տալիս «Կայծը»[1]։

Հայերեն և աղրբեջաներեն հրատարակվող «Կոչ-Դեվեթը» մեծ դեր խաղաց ժողովուրդների բարեկամության ամրապնդման և ցարիզմի կողմից հրահրված հայ-աղրբեջանական եղբայրասպան կռիվները դադարեցնելու գործում։

1907 թ. պարտության հանձնարարությամբ Ի. Ստալինը, Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը մշտական պարտիական աշխատանք են տանում Բաքվում, Անդրկովկասի այդ կարևոր բանվորական խոշոր կենտրոնում։ Ս. Սպանդարյանի ջանքերով Բաքվում 1907 թ. փետրվարի 2-ին սկսում է լույս տեսնել բոլշևիկյան «Օրեր» թերթը։ Նույն թվականի հունիսի 20-ին լույս է տեսնում «Բակինսկի պրոլետարիատի» թերթի առաջին համարը, ինչպես նաև «Բանվորի ձայն» թերթը։

Հայ իրականության մեջ մարքսիզմի տարածման ու ռևոլյուցիոն մտքի զարգացմանը անգնահատելի ծառայություն մատուցին «Պրոլետարիատի կռիվը», «Կայծ», «Նոր խոսք», «Օրեր» և բոլշևիկյան այլ թերթերը, ինչպես նաև բոլշևիկյան պրոկլամացիաները ու բրոշյուրները։

Բոլոր դեպքերում էլ «Հայ բոլշևիկյան թերթերի շուրջը միշտ խմբված են եղել նույն անունները՝ Շահումյան, Սպանդարյան, որպես հիմնադիրներ»[2]։ Ստ. Շահումյանը և Ս. Սպանդարյանը դատապարտել և առաջ են քաշել հայ իրականության մեջ ռևոլյուցիոն գործիչների մի ամբողջ սերունդ։

Հսկայական էր բանվոր դասակարգի գործին նվիրված բանվորների և ինտելիգենցիայի առաջավոր ներկայացուցիչների դերը բոլշևիկյան թերթերի լույս ընծայման և տարածման գործում։ Այդ տեսակետից աչքի ընկնող աշխատանք էր տանում հին բոլշևիկ Արմենակ Սարգսյանը։ Նա «Կայծ»-ի և անլեգալ դրականության ակտիվ տարածողներից մեկն էր։ Ակտիվ աշխատանք էին տանում Նիկոլայ Կոստանյանը, Գևորգ Սահակյանը, Սերգո Մարտիկյանը, Արտաշես Կարինյանը, Մինաս Սարգսյանը և ուրիշները։

Վերջինս բազմիցս հանդիպումներ է ունեցել Ի. Ստալինի, Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի, Ա. Ջափարիձեի հետ և կատարել է նրանց առաջադրանքները։ 1905 թ. ռևոլյուցիայի ակտիվ

---

[1] Տես «Կայծ», № 21, 1906։

[2] Հ. Հակոբյան, Երկեր, էջ 411։

մասնակիցներն են նաև Լևոն Յաղուբյանը, Արտյոմ Աղամալյանը, Միքայել Վարդանյանը, Միսակ Տեր-Գևորգյանը և շատ ուրիշները։

Հայ հասարակական մտքի զարգացման, նրա տեսական հարցերին մարքսիստական ճիշտ ուղղություն տվողը Ստ. Շահումյանն էր։

Ստեփան Շահումյանը՝ «այդ արթուն ու զգոն պահակը մեր կուսակցության, որը միշտ հետևում էր թե՛ քաղաքական և թե՛ գրական կյանքի անց ու դարձին...»[1],— գրել է Հ. Հակոբյանը։

Բոլշևիկյան մամուլի ստեղծման և նրա տարածման գործում անգնահատելի դեր է կատարել Հակոբ Հակոբյանը։ 1905 թ. հուլիսին Հ. Հակոբյանը ՌՍԴԲՊ Կովկասյան Միության հանձնարարությամբ մեծ չափով ռևոլյուցիոն գրականություն, պրոկլամացիաներ և կոչեր է տեղափոխում Գանձակ (այժմ Կիրովաբադ) և հանձնում է տեղական սոց. դեմոկրատական կոմիտեին, որը տեղավորված էր կայարանից ոչ հեռու Սլարոդկայում։ Նա հատուկ հանձնարարություն էր ստացել կազմակերպել տեղական տպարանի գրաշարների և աշխատողների բոլշևիկյան կազմակերպությունն և նրանց ջանքերով տեղում կարգավորել ռևոլյուցիոն անլեգալ գրականության տպագրման ու բազմացման գործը[2]։

Որպես պարտիային նվիրված գործիչ Հակոբ Հակոբյանը աշխատավորների մեջ հանդես էր գալիս լենինյան դաղափարների կրքոտ պրոպագանդիստի և աշխատավորների ունակ կազմակերպչի դերում։ Նա 1900 թ. Թիֆլիսի երկաթուղային արհեստանոցների բանվորների հետ մասնակցում է մայիսմեկյան ցույցին։ Հ. Հակոբյանի ռուսերենից հայերեն թարգմանած «Ինտերնացիոնալ», «Անվախ ընկերներ», «Մահվան քայլերգ», «Մարսելյոզ», «Վարշավյանկա» և ուրիշները կարևոր նշանակություն ունեցան հայ բանվորության համար։

Հակոբ Հակոբյանը ռևոլյուցիայի տարիներին (1906) հրատարակեց «Աշխատանքի երգեր» ժողովածուն, իսկ 1907 թ. ամռանը, երբ արդեն ամենուրեք ռեակցիայի սև քողն էր տարածվում, աննկուն բոլշևիկ պոետը «Պրոլետար» ծածկանվան տակ լույս ընծայեց «Հեղափոխական երգեր» ժողովածուն, որտեղ տպագրվել են «Մարսելյոզ», «Թաղման քայլերգ», «Առաջ ընկերք», «Ինտեր-

---

[1] Հ. Հակոբյան, Երկեր, էջ 378։

[2] Նույն տեղում, էջ 433—434։

նացիոնալ», «Վարշավյանկա» և ուրիշ ռևոլյուցիոն երգերի թարգմանությունները։

Հ. Հակոբյանի սեփական ստեղծագործությունները և ռևոլյուցիոն երգերի նրա բազմաթիվ թարգմանությունները լույս էին տեսնում «Կայծ»-ում և ուրիշ պարբերականներում։ «Կայծ»-ում լույս տեսան Հ. Հակոբյանի «Ամբոխն իմ աշխարհը», «Հեղափոխություն», «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» և այլ ստեղծագործությունները։

Թե որքան լայն տարածում էր գտել Հակոբյանի ջանքերով հրատարակած ռևոլյուցիոն գրականությունը հայ աշխատավորության մեջ, ցույց է տալիս հետևյալ փաստը։ 1907 թ. ամռանը, ռեակցիայի ամենածանր շրջանում, Հ. Հակոբյանը հանգստանում էր Աբասթումանում։ Մի օր վաղ առավոտյան պոետը գնում է փոքր հաց գնելու։ Բանաստեղծը փոքին մոտենալով, լսում է, թե խմոր հունցող հայ բանվորը ինչպես դյութիչ ձայնով «տաք-տաք և՛ հունցում էր խմորը և՛ գլուխը կախ, տակտով երգում «Վարշավյանկայից»։

Դեպի մարտ արյան,
Արդար սրբազան,
Դեհ, քայլենք առաջ
Բանվորներս քաջ։

Ու երգի ամեն մի վանկը ձուլվում էր խմորի ճլնդոստին, երբ հունցում էր այն»[1]։

Բանաստեղծը երկար ժամանակ անշարժ լսելով հացթուխի երգը, հանկարծ հիացմունքով ձայն տվեց. «Ա՜յ տղա, որտեղի՞ց գիտես դու այդ երգը։

— Վա՜հ, հիմա ո՞վ չգիտե հեղափոխական երգ»,— պատասխանում է հացթուխը։

Հ. Հակոբյանի ուրախությանը չափ չկար. նա հպարտորեն քայլում էր առաջ և մտածում այն մասին, թե ինչպիսի պարարտ սերմեր են ցցել բոլշևիկները ժողովրդի մեջ, թե որքան խորն են տարածվել ռևոլյուցիայի արմատները։ Ահա թե որտեղ է հասել «Հեղափոխական երգ»-ի ձայնը... այն էլ 1907 թ. ամռանը, ռեակցիայի

[1] Հ. Հակոբյան, Երկեր, էջ 352։

ամենաթունդ ամիսներին, երբ գավառը արդեն տեռորի ու սարսափի էր ենթարկված»[1]։

Ռեակցիայի ծանր տարիներին պրոլետարական անվանի բանաստեղծ Հակոբ Հակոբյանը մնաց աննկուն մարտիկի լենինյան դիրքերում։ Նա «Պրոլետար» ծածկանվան տակ թղթակցում էր Վ. Ի. Լենինի խմբագրությամբ ծնված լույս տեսնող «Պրոլետարի» բոլշևիկյան թերթին[2]։

1909 թ. լույս է տեսնում Հակոբ Հակոբյանի ռևոլյուցիոն մեծ պաֆոսով գրված «Նոր առավոտ» պոեմը։

Ս. Սպանդարյանը շատ բարձր է գնահատել Հակոբ Հակոբյանի պոեզիան և առանձնապես նրա «Նոր առավոտ» պոեմը։ «Մեր առաջն է հայ տաղանդավոր գրողի և թարգմանչի մի նոր երկը։ Այս հեղինակը,— գրել է Սպանդարյանը,— պատկանում է այն սակավաթիվ հայ բանաստեղծների թվին, եթե չասենք միակն է,— որոնք վաղուց հրաժարվել են «Թմբկա-հայրենասիրական» թեմաներից և համամարդկային բնույթ կրող բոլորովին նոր մոտիվներ են մտցրել հայ պոեզիայի ու գրականության մեջ։ Հայ գրականության մեջ Հ. Հակոբյանն առաջինն էր, որ խոսեց աշխատավոր մարդու տառապանքների, տանջանքների ու ձգտումների մասին»[3]։ Ս. Սպանդարյանը իր դրախոսականը «Նոր առավոտ» պոեմի մասին ավարտում է հետևյալ խոսքերով. «Առանձնապես հաջող են պոեմի այն տեղերը, ուր սինթետիկ ձևով նկարագրվում են ժամանակակից գործարանները, հանքահորերը, բանվորների աշխատանքը, նրանց տառապանքները, նրանց ուժը և նրանց հույսերը»[4]։

«Նոր առավոտ»-ը շատ բարձր է գնահատել նաև Ստ. Շահումյանը։ Այդ առիթով նա Հ. Հակոբյանին ուղղած իր նամակում գրել է. «Պոեմդ՝ «Նոր առավոտը» գեղեցիկ գործ է. դու շատ լավ մարմնացրել ես քո հիմնական մտքերն ու իդեաները այնտեղ, և անկասկած տվել բանաստեղծական պատկերներ. քո մեջ ընդհանրապես կա Վերհարնի ջիղը, իսկ այդ պոեմով դու ավելի մոտենում ես Վերհարնին»[5]։

---

[1] Հ. Հակոբյան, Երկեր, էջ 352։

[2] Նույն տեղում, էջ 353։

[3] Ս. Սպանդարյան, Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր, էջ 267։ «Լիստոկ կոպեյկա», № 21, 1911 թ. Հ. Հակոբյանի մասին գրած գնահատականը ստորագրված էր «Իզդոյ», որը Ս. Սպանդարյանի գրական կեղծ անունն էր, պարտիականը՝ «Տիմոֆեյ»։

[4] Հ. Հակոբյան, Երկեր, Երևան, 1951, էջ 267—268։

[5] Նույն տեղում, էջ 355։

Հ. Հակոբյանի ստեղծագործությունները ամենալայն մասսայականություն էին ստացել աշխատավորական մասսաների մեջ։ Իսկ «Նոր առավոտը» ռեակցիայի տարիների մութ խավարի մեջ պայծառ մի ռումբ էր։ Նա գրավեց շատերի ուշադրությունը և լիցք տվեց գալիք ռևոլյուցիոն պայքարին։

Հայաստանի ակտիվ ռևոլյուցիոն գործիչներից մեկը՝ Հակոբ Բեժանյան-Կամարին, որն Հակոբյանին իր ուսուցիչն էր համարում, գրել է. «Նոր առավոտը» գնում եմ բարձիս տակ»։

«Նոր առավոտ»-ի մասին Ավ. Իսահակյանը գրել է. «Ես ևս շատ հավանել էի «Նոր առավոտ»-ը։ Հակոբյանը կարողացել էր դեղարվեստորեն, լիրիկական զեղումներով առարկայացնել իր գաղափարների աշխարհը։ Դա սոցիալիստական անդրանիկ և հաջող պոեմն էր մեր գրականության մեջ»[1]։

Ավ. Իսահակյանը բարձր է գնահատել Հակոբ Հակոբյանի պոեզիայի ժողովրդական նշանակությունը։ «Նա ապրեց և գրեց պրոլետարիատի համար և հաղթական պրոլետարիատը սիրեց նրան և երկար ժամանակ պիտի սիրեն իր մեծ վաստակավորին։

Նրա երգերը տակավին երկար պիտի պետք գան մարտնչող սերունդներին, որովհետև նրանք ռազմական շեփորի նման կոչող, ոգևորող կոչեր են»[2]։

Հակոբ Հակոբյանը առաջին անգամ երգեց հայ բանվոր դասակարգի հերոսական աշխատանքն ու պայքարը, նրա առաջավոր դաղափարները ու քաղաքական նպատակները առանց շահագործողների նոր և ազատ աշխարհ կառուցելու նրա իղձերն ու ձգտումները։

Իր մարտական պոեզիայում արտահայտելով բոլշևիկյան վեհ դաղափարները, Հ. Հակոբյանը բանվորներին ինտերնացիոնալ միավորման կոչ էր անում, միաժամանակ մերկացնելով հայ նացիոնալիստներին, դաշնակներին, սոցիալ-ֆիլիներին, բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության բոլոր գույնի թշնամիներին։ Հակոբյանն իր պոեզիայով արտացոլել է ժամանակի ռևոլյուցիոն ոգին։ Իր քաղաքական նշանակությամբ այդ պոեզիան հայ աշխատավորության ռևոլյուցիոն պայքարի պատմության մեջ գրավում է իր ուրույն տեղը։

Ավ. Իսահակյանը, որ ռևոլյուցիայի տարիներին հաճախակի

---

[1] Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1951, էջ 56։

[2] Նույն տեղում, էջ 58։

հանդիպում էր ունենում Հ. Հակոբյանի հետ, գրել է. «Նկատի ունենալով ավյալ ժամանակը, նա բավական էրուդիցիա ուներ սոցիալիզմի և ռևոլյուցիայի հարցերի մեջ, ռևոլյուցիայի և սոցիալիզմի հույները նրա հոգեկան տարերքն էին կազմում։ Ռևոլյուցիան ու սոցիալիզմը նրա մեջ, եթե կարելի է այսպես որակել, մտաղրացում էր—հավատ և դիտություն, պաթոս և իմացություն»[1]։

Ռուսական առաջին ռևոլյուցիան հսկայական ազդեցություն թողեց բանաստեղծուհի Շ. Կուրղինյանի ստեղծագործության վրա։ Շ. Կուրղինյանը դեռ վաղ շրջանի իր բանաստեղծություններում արտահայտում է «մշակ» մարդկանց չարքաշ կյանքը և նրանց աշխատանքը։ «Ղարիպ մշեցուն» բանաստեղծության մեջ Կուրղինյանը դիմում է «մշակին», որ նա իր դարդն ու ցավը իրեն պատմի. իսկ «Տուր ինձ քնարդ...» բանաստեղծության մեջ խնդիր է դնում երգել մարդկանց «տխուր կսկիծը» և այն թշվառի կյանքը.

«Որ անտուն անտեր չունի կոր հաց...
Երգեմ տանջանքը
Գերի սրտերի և արցունքները
Սև դիշերների ...[2]

Ռևոլյուցիայի բուռն տարիներին Շ. Կուրղինյանի պոեզիան խարազանում է գոյություն ունեցող ցարական դաժան և տարկական կարգերն ու Երգում ազատության համար պայքարող մտասաների արդար գործը։ «Ես ինձ շատ պարտական եմ զգում ռուսական կյանքին,— գրել է Կուրղինյանը, վերածնդի փոթորկոտ օրերին և հատկապես ռուսական պրոլետարիատին։ Ռուսաստանն իմ բարդքական մոտիվների հայրենիքն է»։ Շ. Կուրղինյանը նշում է, թե ինչպիսի խոշոր ազդեցություն թողեցին նրա վրա 1905 թ. մայիս-մեկյան տոնակատարությունները Ռոստովում, որի ակտիվ մասնակիցն էր ինքը։ «Մայիսի մեկին բանվորական կուս շարքերը ալիքի պես, ինչպես մի ուժեղ հոսանք, վերցրեց ու տարավ ինձ,— գրում է Կուրղինյանը։—Վերադարձա տուն ուշ, հոգնած, փոշոտված, բայց վերածնված, և զգացի, որ իմ սիրտն ու հոգին մնաց նրանց հետ անվերադարձ, հավիտենապես...»։

1905 թ. հուլիսին գրած իր «Անեծք» բանաստեղծության մեջ բանաստեղծուհին դատապարտում է ժողովրդի դահիճներին, ցա-

---

[1] Ա. Ի ս ա հ ա կ յ ա ն, Երկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1951, էջ 55։

[2] Շ. Կ ո ւ ր ղ ի ն յ ա ն, Երկերի ժողովածու, Երևան, 1947, էջ 17։

ռիզմի շահամոլ տատրապներին, որոնք

«Մութ անկյունների որպես սիրահար
Փախչում են լույսից և արդար սխից...»։

Նա կոչ է անում վերջ տալ «Գարշանքի արժան ամեն հատկությունի»։ «Ինձ տվին» բանաստեղծության մեջ, բանվոր դասակարգին պայքարի կոչելով, Շ. Կուրղինյանը գրում էր.

«Եվ թող մեր սիրտ մեղսալից փառքի
Խարխլած ուժից չդա ահ ու դող...»։

Բանվորներին մեծ նպատակի համար պայքարի կոչելով, Կուրղինյանը «Ոչ լալկան երգեր» բանաստեղծության մեջ գրում է.

«Գիսակից մահվան ես չեմ ափսոսում»։

«Անգործավորը» բանաստեղծության մեջ, դիմելով բանվորներին, բանաստեղծուհին ասում է, որ կուշտ մարդկանց աղերսելով հաց չեն ստանա։

«Քո գոյության հացին արդար
Լոկ կռվով են սիրանում...»։

1907 թ. լույս տեսավ Շ. Կուրղինյանի «Արշալույսի զողանջներ» ժողովածուն։ Այդ պատկերավոր վերնագիրը հենց ցույց է տալիս, որ բանաստեղծուհու այդ ժողովածուն արդասիք էր աշխատավորների ռևոլյուցիոն պայքարի և որ այն վրա հասնող սև ռեակցիայի մութ քողի տակից աղդարարում էր գալիք արշալույսը։ «Հանդգրեք ջահերը...», «Բանվորները», «Ազատության զողանջները» և ուրիշ բանաստեղծությունները ցույց են տալիս բանվոր դասակարգի վճռական պայքարը և ատելությունը դեպի գոյություն ունեցող կարգերը։

Շուշանիկ Կուրղինյանը, 1907 թ. հունվարի 23-ին, ողջունելով իր ծանոթներից մեկի ձեռնարկությունը, նոր թերթ հրատարակելու վերաբերյալ գրել է. «Որպես բարեկամ, թույլ եմ տալիս ինձ ձեզ խորհուրդ տալու, որ թերթն այնպիսի հիմքերի վրա դնեք, որ չլինի «ոտքերը-կապած, ձեռքերը շղթա...»։ Այնուհետև Շ. Կուրղինյանը նշում է, որ «կյանքի և մտքի այժմյան տեմպերամենտի պահանջները լայն են... ազատ, ըմբոստ... ուստի քիչ թե շատ, այսպես թե այնպես նորածին թերթը պիտի ձևվի նրանց չափերին համեմատ, հարմար։

Խուսափեցեք նեղ, սահմանափակ տեսչերից, շատ լոգոսոֆոն-

րի հետ, որոնք ձեր սրտին մոտ են, դրեք և այս. «Пусть будут все живущия существа свободны от страданий...»[1].

Հայ դեմոկրատական պոեզիայում ևս ռևոլյուցիան մեծ ազդեցություն է թողել։ Հատկապես այդ զգացվում է Հովհ. Թումանյանի, Ավ. Տատուրյանի, Ավ. Իսահակյանի ստեղծագործություններում։

Ռևոլյուցիան իր դրոշմն է թողնում նաև գուսանական երգերի վրա (աշուղ Ջիվանի և ուրիշները)։

Հովհ. Թումանյանի գրական և հասարակական, քաղաքական գործունեությունը մեծ նշանակություն է ունեցել հայ աշխատավորության ազատագրական պայքարի համար։ Թումանյանի ստեղծագործությունները և բանաստեղծական մեծ վարպետությամբ կատարած թարգմանությունները խթանել են հայ հասարակական մտքի առաջընթացը։ Հովհ. Թումանյանը Ստ. Շահումյանի սիրած պոետներից էր։ Դեռևս 1903 թ. մայիսմեկյան տոնի կապակցությամբ Հովհ. Թումանյանը Ստ. Շահումյանի հանձնարարությամբ թարգմանում է Պուշկինի «Ազատություն» բանաստեղծության հետևյալ տողերը.

«Ապում եմ լեզ և դո դահը
Միահեծան դողող ցար—
Եվ քո որդոց ու քո մահը
Գիտի տեսնեմ անպատճառ»։

Հովհ. Թումանյանի այս չգերազանցված թարգմանությունը այն ժամանակ տպագրվեց բանվորներին ուղղված կոչերում և մեծ քանակությամբ տարածվեց հայ աշխատավորների մեջ։

Մեծ բանաստեղծը հավատում էր հայ ժողովրդի լավագույն ապագային։ Նա նշում էր, որ հայ ժողովրդի առաջընթացի գործում «Ռուսաստանն ունեցել է ու կունենա վճռական ազդեցություն»[2]։

1905 թ. ռևոլյուցիան խորը տպավորություն է թողել հայ ինտելիգենցիայի մի զգալի մասի վրա։ Հայ բանաստեղծներից Ավ. Տատուրյանը տգեղունչ տողերով է նկարագրում դալիք ազատությունը։ Նա լիահույս էր, «որ կա՛ ու կգա՛ ոսկի՛ առավոտ...»։ Իսկ ռեակցիայի ծանր տարիներին, երբ ինտելիգենցիայի մի զգալի

---

1 «Գրական թերթ», № 27, 1955։ «Շ. Կուրղինյանի անտիպ նամակներից»։

2 Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 4, 1951, Երևան, էջ 236։

մասը անվանական տրամադրությունների մեջ էր, Ալ. Մատուրյանը լավատեսության բարձր զգացումով գրում էր.

«Կովենք անվախ, կովի կոչենք փոխորիկ.
Առաջ տարենք կյանքը այս ժանտ խավարում...
Դուք էլ հերոս-նավորդներ եք, սիրելիք,
Իմ հայրենի ծով-ալեկոծ աշխարհում...»:

Ռուսական առաջին ռևոլյուցիայի ազդեցության տակ բանաստեղծը գրեց ժողովրդի կողմից սիրված, սոցիալական և քաղաքական խոր հագեցվածությամբ «Բանվորուհու օրորը» բանաստեղծությունը:

Մեծ խորաթափանցությամբ և պատկերավոր գերպով է տալիս բանաստեղծը կապիտալիստական աշխարհի հակասությունները, ոսկու տիրակարությունը սև հայի կարոտ միլիոնավոր մարդկանց վրա:

«Այնտեղ ոսկին տեր-տիրական
Որպես դահիճ դժնադեմ,
Սուր է պարզում մեր օրական
Թույնով շաղախ հայի դեմ...»:

Սակայն բանաստեղծը այդ դաժան աշխարհի խորտակումն է կանխատեսում, նրա տապալման համար մարտի ելած հերոսներին է երգում իր տաղանդավոր գնարի գնքուշ լարերով:

«Այնտեղ հայրեր, այնտեղ որդիք
Մի նոր կյանքի եզերքում,
Որպես մի մի հերոս-մարտիկ,
Մահ են գրկում ու երգում...»:

Մեծ արվեստագետը բանվորուհու և բոլոր աշխատավոր մայրերի երգերով ու օրորներով սերունդներին վճռական նոր մարտի կոչ է անում լուսավոր ապագա ստեղծելու համար, «Բանվոր դրոների» գալիք մարտերին պատրաստվելու համար:

Հայ գրականության խոշորագույն վարպետը, Ավ. Իսահակյանը, բարձր է գնահատում Ալ. Մատուրյանի դեմոկրատական պոեզիան:

«Մեր պատանեկությունը՝ Ռուսաստանի մռայլ իրականության մեջ ծարավ լույսի և ազատաշունչ խոսքի, ոգևորվում էինք նրա

երգած դեմոկրատիկ-ժողովրդական զգացմունքներով, գաղափարներով»[1]:

Զգալի տեղաշարժ է կատարվում ռևոլյուցիոն հայ պոեզիայի, հավասարապես նաև դրամատուրգիայի բնագավառում: Հանդես են գալիս Մ. Պետրոսյանը, Ան. Վարդանյանը և ուրիշները, որոնց ստեղծագործությունները գեղարվեստական վարպետությամբ պատկերում են աշխատավորության ծանր դրությունը և նրա պայքարը ցարիզմի ու շահագործողների դեմ:

Դեմոկրատական գրողների մի մասը, տալով շափազանց սրընթաց, ագիտացիոն գործեր, այնուամենայնիվ չկարողացավ հասկանալ և լիովին վեր հանել պրոլետարիատի ռևոլյուցիոն և տոնաջատող դերը: Նրանցից մի մասը ակտիվ մասնակցություն էր ցույց տալիս երկրում ծավալվող ռևոլյուցիոն շարժումներին: Այդ տեսակետից ուշագրավ է Հակոբ Հակոբյանի հուշերը Ղազարոս Աղայանի մասին.

«Ցարի հոկտեմբերյան մանիֆեստից հետո,— գրում է Հ. Հակոբյանը,— Ղազարոսը արդեն մեզ հետ էր, որպես համակրող: Նա կանոնավոր, համարյա ամեն օր, մասնակցում էր այն մասսայական բացօթյա միտինգներին, որ կազմակերպում էինք մենք, բոլշևիկներս Վերայում—աղյուսի գործարանների մոտ (Թիֆլիսում— Մ. Ա.). Նա երբեք չէր հաճախում մենշևիկների միտինգները: Վերջապես 1906/7 թվին, նա, մեզ համակրողը, 5-րդ քաղաքամասում մտավ մեր ընտրական պատգամավորական ցուցակի մեջ որպես պատվիրակ 2-րդ Պետական դումայի ընտրությունների:

Գալիս էր Աղայանը մոտս և մենք միասին թրամ էինք նրա տում, ուզվոմ դեպի միտինգ, ուր միշտ իր բարձր հասակով տեսա, լայնեղր գլխարկով աչքի էր ընկնում պատկառելի ծերունին»[2]:

Հ. Հակոբյանը գտնում է, որ Ղ. Աղայանը սրտանց համակրում և հավատում էր բոլշևիկների կատարած մեծ գործին[3], *և որ անվանի գրողի վրա ռևոլյուցիան մեծ տպավորություն էր թողել:*

Ղ. Աղայանի մասին Ավ. Իսահակյանը գրել է. «1905 թ. ռևոլյուցիայի շարժումներին երիտասարդական խանդավառությամբ հետևում էր նա և մոտ էր համարում իր երազների, տենչերի, իր ուտոպիայի իրականացումը...»[4]:

---

[1] Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 53:

[2] Հ. Հակոբյան, Երկեր, էջ 389—390:

[3] Նույն տեղում, էջ 390:

[4] Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1951 էջ 14:

1906 թ. Լազարյան ճեմարանի որոշ ժամանակով փակվելուց հետո, Վահան Տերյանը վերադարձել էր Թիֆլիս։ Այստեղ նա հանդիպում է Ավ. Իսահակյանին և ապա նրա հետ, երկու ընկերով, գնում են Ալեքսանդրապոլ, որտեղից անցնում են Շիրակի գյուղերը. «որպեսզի ժողովրդին բացատրեն Ռուսաստանում տեղի ունեցող անցքերը»[1]։

Ավ. Իսահակյանը իր հուշերում նշում է, որ Վ. Տերյանը իր ընկերոջ հետ գալով Կովկաս, նպատակ էին դրել Հայաստանում «Ռևոլյուցիոն աշխատանք, պրոպագանդա տանել ժողովրդի մեջ»[2]։

1908 թ. դեկտեմբերին ցարական կառավարությունը Հովհ. Թումանյանին և Ավ. Իսահակյանին Մեսեխի բանտը նետեց, ուր նրանք մնացին վեց ամիս։ Խոսքի հանճարեղ բանաստեղծները մեղադրվում էին հակասեմական գործունեության մեջ[3]։

Ռուսական առաջին ռևոլյուցիայի ազդեցությամբ հայ գյուղում առաջացած զարթոնքը շատ դիպուկ կերպով պատկերված է մի շարք գյուղագիրների երկերում։ Այդպիսիներից են Ջավախեցու, Մալխասյանի, Ճուղուրյանի և մյուսների քաղմաթիվ երկերը, որոնց մեջ պատկերվում են, թե ինչպես հայ գյուղացին աստիճանաբար ներգրավվում է քաղաքական պայքարի մեջ։

Հ. Ճուղուրյանը «Կնդխատոր» երկում, նկարագրելով գյուղի մշակների կյանքը, գրել է. «Խեղճ ու քյասիբ մշակներ, այդ թշվառ ու անմեղ արարածները, ամբողջ օրը հանդիստ չունին. կիրակի էլ չունին. նրանք շարունակ քաշ են գալիս, քար ու փետ են ջարդում, հարուստի՝ վաշխառուի գրպանը լցնում և իրենց՝ օրական պարեն— շոր ու դուռուբ հաց վաստակում»[4]։

«Զատոյի բախտի անիվը» պատմվածքում (1906) պատկերելով Զատոյի և նրա բախտակից գյուղացիների չարքաշ վիճակը, Ճուղուրյանը երկու խոսակիցների լեզվով գրում է.

«— Բան չկա, աքիր, դրանց օրերն էլ համրված են, վերջ կունենա։

— Ո՞նց։

— Նհենց որ, մեր Ռասեիը Բաքվից ա եկել, ասում ա «ըսօր, թե էգուց թարավերութիմը շուտ են տալու, ու էդ տեսակ արին ծը-

---

[1] Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1951, էջ 62։

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում, էջ 31։

[4] «Հայ գյուղագիրներ», Երևան, 1950, էջ 160։

ծողներին էլ փրթելու են»։ Զատոյի հիվանդ կինը, լսելով այդ խոսքերը, անկողնու միջից տանջալից բացագանչում է «Ա՜խ, ե՛ռնեկ կյի, ո՜ւր ա...»[1]։

Այստեղ ակնհայտ կերպով երևում է պրոլետարական Բաքվի և բանվորական մյուս կենտրոնների ազդեցությունը գյուղի վրա ռուսական ռևոլյուցիայի տարիներին։

«Զատոյի բախտի անիվը» պատմվածքում ասված է, որ միայն 1905 թ. «առաջին անգամ, արդար զատաստան տեսնվեց գյուղում, ուր, ինչպես և ամեն տեղ՝ մեր աշխարհում, հեղափոխության շնորհիվ, սարսափ տիրեց բոլոր կաշառակեր հարստահարիչներին, որոնք էլ չկարողացան հովանավորել գյուղական ցեցերին...»[2]։

Ռուսական ռևոլյուցիան խորը հետքեր թողեց նաև արտասահմանյան հայ հասարակական մտքի զարգացման վրա։ Արտասահմանյան հայ առաջավոր մտածողները հայ ժողովրդի փրկությունն ու առաջադիմությունը տեսնում էին դեմոկրատական Ռուսաստանի մեջ։ Դրա համար էլ ռուսական ռևոլյուցիան մեծ հետաքրքրություն էր առաջացրել արտասահմանյան հայ աշխատավորության մեջ։ Այդ տեսակետից հսկայական գործ է կատարել հայ դեմոկրատ գրող Արփիար Արփիարյանը (1851—1908), որը ապրում և ստեղծագործում էր Կ. Պոլսում և ապա Կահիրեում։ Նա մեծ ոգևորությամբ է ողջունում ռուսական առաջին ռևոլյուցիան և կոչ է անում հայ ժողովրդին կանգնել նրա դիրքերում։ Նա ճիշտ կերպով է բնորոշում ռևոլյուցիայի խնդիրները, նշելով, որ ցարիզմի և կալվածատիրական կարգերի տապալումով վտանգվի գոյություն ունեցող պետական կարգը։ Չափազանց բարձր գնահատելով ռևոլյուցիան և նրա աղատագրական նշանակությունը, Արփիարյանը գրում էր. «Թեև թնդանոթը բյուրավոր բանվորներ ջարդ ու փշուր կընե, բայց ընկերավարական դաղափարը գործնականապես կհաղթանակե ու տիեզերքի բոլոր կալվածատերերը, դրամատերերը կը սարսափեն։ Նորատեսիլ հեղափոխություն մըն է, որ կը ծագի, անոր դեմ թնդանոթը, հրացանը, սուրը անզոր պիտի գտնվին»։

Կահիրեում Արփիար Արփիարյանի խմբագրությամբ հրատարակվող «Շիրակ» ամսագիրը բաղմաթիվ ուշագրավ նյութեր է տպել Ռուսական ռևոլյուցիայի վերաբերյալ։ Այդ ամսագիրը 1906 թ. իր

---

[1] «Հայ գյուղացիները», էջ 104։

[2] Նույն տեղում, էջ 223։

առաջին համարում «Միջազգային» վերնագիրը կրող բաժնում, խոսելով Ռուսաստանում տիրող դրության մասին, նշում էր.

«Ռուսիա նոր վիճակ մը կը ակսի. հինին նորը փոխանցումը չի կրնար կատարվիլ առանց ահագնաբախ ընդհարումներու և խորտակումներու»[1]։ Այդ միջազգային տեսությունը պատկանում է Ա. Արփիարյանի գրչին։ Այստեղ ուշադրությունն այն է, որ նշվում է տիրող բռնակալության ռևոլյուցիոն ճանապարհով տապալելու անհրաժեշտությունը։

Ա. Արփիարյանը հայ ժողովրդի առաջավոր մարդկանց հետ միասին գտնում էր, որ Ռուսաստանում կատարվող ռևոլյուցիոն շարժումները մեծ ազդեցություն են գործում հայ ժողովրդի վրա։ «Ինչ որ Ռուսիոյ մեջ կը պատահի, ա՛ն, մեզի՝ հայերիս դերազանց ատիճանով կը շահագրգռե, ոչ թե իրր ժամանցի հետաքրքրությամբ, այլ՝ մեր վրայ ամենահզոր ազդեցությամբ ներգործելու ապահովությամբ»[2]։ Ա. Արփիարյանը մեծ հրճվանքով է խոսում ռևոլյուցիայի միջոցով ձեռք բերած հաղթանակների մասին և դատապարտում է ցարական ռեակցիոն ուժերի բռնությունները։

Խոսելով հոկտեմբերի 17-ի մանիֆեստից հետո ցարական կառավարության կողմից պրոգրեսիվ մամուլի վրա գործ դրած ճնշումների մասին, «Շիրակ»-ը նշում էր. «Նորանոր օրագիրները այն ինչ ծլած, ահա՛ կը խամրին վարչական խոստմնանց խորշակեն»[3]։

Հետաքրքիրն այն է, որ Ա. Արփիարյանը ընդգծում էր ռուսական ռևոլյուցիայի միջազգային նշանակությունը։ Ամսագրի 1906 թ. № 3-ում բավական ծավալուն «Միջազգային բաժնում հետևյալ կերպ է գնահատված ռուսական ռևոլյուցիայի նշանակությունը.

«Եվրոպայի ու Ամերիկայի հանրային ուշադրությունը ամբողջովին Ռուսիոյ վրա հառած է, ուր աշխարհացունց պատահարներ մեծագոր կայսրության մը վերանորոգ կյանք մը կը պատրաստեն»[4]։ Ցարիզմի փլատակների վրա ստեղծվող այդ նոր կյանքի ստեղծման գործն էր, որ մեծապես հետաքրքրում էր հայ առաջավոր գործիչներին։

Ամսագիրը տպագրում էր ռուսական ռևոլյուցիային վերաբերող բազմաթիվ հետաքրքիր նյութեր։ Իտալական մի խումբ պրո-

---

[1] «Շիրակ», № 1, 1906, էջ 58։

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում, էջ 61։

[4] Նույն տեղում, № 3, էջ 186։

գրեթե պետական և հասարակական գործիչներ իրենց հրապարակած դիմումի մեջ մեծ գոհունակությամբ են խոսում ռուսական բռնակալության դեմ ուղղված դեմոկրատական շարժման մասին։ Այդ դիմումը իր ժամանակ Նեապոլի արևելյան լեզուների ինստիտուտի պրոֆ. Ստեփան Նազարյանի թարգմանությամբ տպվել է «Շիրակ» ամսագրում։ Դիմումը բռնակալության դեմ ռուս ժողովրդի մղած պայքարը գնահատում է որպես «դյուցազնական» պայքար [1]։ Նշվում է նաև այն, որ իտալական ժողովուրդը մեծ սիրով և բարեկամաբար է պաշտպանում ռուս ժողովրդի դատը «... որպես և նոցա դյուցազնությանը վրա՝ սքանչացողներ կան միայն, քանզի իտալական ժողովուրդը, որոն վերածնունդն ի կյանս անկախության ու ազատության այնքան վաղվաղ իմն է, վրդովայ թե՝ ժողովրդոց ազատության դատն՝ յուր սեպհական դատն է, և թե յուր սեպհական հառաջադիմության փառակեան ու պարծանքը ուրիշ տեղ վարելի չէ հայցել ապահովաբար, բայց եթե ամենայն ազգանց եղբայրական համերաշխության մեջ» [2]։

Բարձր գնահատելով ռուս ժողովրդի պատմության մեջ կատարած հսկայական դերը, դիմումը նշում էր «Իտալիան կը ճանչնա Ռուսիո պատմության վսեմությունը։ Հնջա յուրյանց՝ Տոստոեվսկի, Տուրգենիեֆ, Չերնիշևսքի, Տոլստոյ և Գորկի, ուստերն նմա կարդալ Ռուսաց ազգին հեղ և երազող բարեհենչիկ հոգվույն մեջ, ու սիրել զայն։ Ձեր բարին ու բարեբախտությունը մերն է, մերն են ձեր ցավերը և հոգեկան ասնիվ տենչանքները» [3]։

Դիմումում ասված է, որ Արևմտյան Եվրոպայի ժողովուրդը «...յուր սեպհական խաղաղության ու հառաջադիմությանը համար, յուր սեպհական զարգացման և ազատության համար կը պահանջե, արտանց, կուզե Ռուսաց ազատությունը և խաղաղությունը. ատ այս, նա զորավիդն պիտի լինի ձեր վարած դատին, և պիտի ջանա ու նյութե, որ այս դատին դեմ բարձրեն դրված որևիցե դամ ու դարան. կամ ապառնալիք անդոր մնան ու ի չիք դառնան» [4]։

Դիմումը վերջանում էր հետևյալ խոսքերով.

«Մեր խոսքերը, սլավական մեծ հայրենյաց հարազատ և ազնիվ մարտիրոսներուն համար, այնպես կը թխին մեր զգացած սքանչացումն ու վարեկցութենեն, որպես միանդամայն մեր վեն-

---

[1] «Շիրակ», № 3, 1906, էջ 186։

[2] Նույն տեղում, էջ 186—187։

[3] Նույն տեղում, էջ 187։

[4] Նույն տեղում։

սակայն ամենաէական շահերուն հոդ և խնամք տանելու համար արդեն կազմած մեր բուն համոզումն»[1]։

Այսպիսով՝ ռուսական ռևոլյուցիան որպես առաջին ժողովրդական ռևոլյուցիա, իր վրա էր բևեռել համաշխարհային հասարակայնության բոլոր պրոգրեսիվ և ազատամիտ խավերի ուշադրությունը։ Սակայն մյուս կողմից ռուսական ռևոլյուցիային—Նիկոլայ Արլանովին իր ձեռքն էր մեկնել եվրոպական ռեակցիան։

Արևմտյան իմպերիալիստների օգնությամբ ռևոլյուցիոն մասսաների վրա ցարի կատարած հարձակման մասին Արփիարյանը գրում էր. «Հեղափոխությունը կրնա քանի մը ճակատամարտ կորցնել, բայց վերջնական հաղթանակը իրեն պիտի մնա, երկարատև կռվի մը հետո»։

«Շիրակ» ամսագիրը իր «Քաղաքական» վերնագիրը կրող խմբագրականում նշում է հատկապես գերմանական իմպերիալիզմի ռեակցիոն ուժերի նենգավոր պլանների մասին. «... Պիտի հիշենք անշուշտ որ հայոց, ինչպես Բյուրքիոյ բոլոր քրիստոնեից դեմ, սուլթանին զորավիգը Գերմանիան եղած է, նախ մինչ մենք բոլոր մեղքը Ռուսիո վիզը փաթթելու եռանդ կը լլանք։

Երբ այս տողերը կը գրվին, հուլիսի վերջին օրը, եվրոպական մամուլը ընդարձակ տեղեկություններ հաղորդելով Ռուսիո Դումային լուծմանը վրա, կը հավատան թե Գերմանիոյ կայսրը իր պաշտպանությանը ներքև առած է Ռուսիո միահեծան իշխանությունը, և իհարկե գերման բանակները Ավստրիականներուն միացած Ռուսիա պիտի մտնեն հեղափոխությունը զսպելու նպատակով։

Այսպես, ահա, ամեն կողմ ժողովուրդներու ազատական շարժումին ընդդիմամարտը Վիլհելմ կայսրը կը ներկայանա»[2]։

Մերկացնելով իմպերիալիստական ռեակցիան, միաժամանակ Ա. Արփիարյանը ընդգծում է ռուս մեծ ժողովրդի ազատարար դերը։

Արփիար Արփիարյանի մի շարք երկեր, ինչպես, օրինակ, «Մինչև ե՞րբ», «Ոսկի ապրջան»[3] և ուրիշները գրված են ռուսական առաջին ռևոլյուցիայի անմիջական ազդեցության ներքո։ Այդ երկերում հեղինակը մերկացրում է բանվորների շարքաշ վիճակը և շահագործողների դաժան վերաբերմունքը դեպի աղքատները, դե-

---

[1] «Շիրակ», № 3, 1906, էջ 187։

[2] Նույն տեղում, № 2, էջ 127։

[3] Վեպ զարծարի կեանքն (տես «Շիրակ», № 2, 1906, էջ 108—122, № 3, 1906, էջ 130—146)։

պի հարուստների համար ոսկիներ և նրանց ամբողջ հարստությունը ստեղծող աշխատավորները։

Ռուսական առաջին ռևոլյուցիան լայն շափով իր արտացոլումն է գտել նաև Ա. Արփիարյանի խմբագրությամբ Կահիրեում հրատարակվող «Լուսաբեր» թերթում։

1907 թ. թերթը «Կովկաս» բաժնում, խոսելով ռևոլյուցիայի ժամանակ Հայաստանի աշխատավորների տված զոհերի մասին, նշում է, որ նրանք «սուրբ գործի համար մարտիրոսացած են»[1]։

Այնուհետև «Լուսաբեր»-ը նշում է ռուսական ռևոլյուցիայի խորը ազդեցությունը մի շարք երկրամասերի ու շրջանների վրա[2]։ Թերթը հանդամանորեն նկարագրում է ստոլիպինյան ծանր ռեակցիան և բերում է բավականաչափ փաստեր այն հալածանքների մասին, որ գործադրվում էին աշխատավորների նկատմամբ[3]։

Հայ բոլշևիկյան մամուլի և պրոլետարական գրականության հանդես գալով զգալի փոփոխություն է կատարվում նաև հայոց լեզվի մեջ՝ նրա զարգացման և հարստացման ուղղությամբ։

Ռևոլյուցիայի ազդեցությունը նկատելի է դառնում նաև հայ թատրոնի, երաժշտության, կերպարվեստի, նկարչության և քանդակագործության վրա։

Ռևոլյուցիան իր արտացոլումն է գտնում հայ անվանի կոմպոզիտոր Սպենդիարովի ստեղծագործություններում[4]։ Այդ ժամանակաշրջանում նա ստեղծագործեց ժողովրդի կյանքն ու նրա աշխատանքն արտացոլող մի շարք հոյակապ երկեր։ Այդպիսին էին նրա «Զհնձած արտ» խմբերգը, որը արտահայտում է գյուղացու չարքաշ կյանքը. «Զկնորսն ու փերին» վոկալ բալետը, որտեղ խարազանվում է քալքենիությունը, «Երևք արմավենի» սիմֆոնիկ պատկերը, որտեղ արտահայտվում են ժողովրդական մոտիվներ և այլն[5]։

Սպենդիարովն իր բողոքի ձայնն է բարձրացնում իր ուսուցիչ Ռիմսկի-Կորսակովին Պետերբուրգի կոնսերվատորիայից հեռացնելու դեմ։ Ռիմսկի-Կորսակովը 1905 թ. հունվարի 9-ի դեպքերից հետո գայրույթ է հայտնում ցարական արյունռուս կարգերի նկատմամբ և ակտիվորեն մասնակցում Պետերբուրգի բարձրագույն

---

1 «Լուսաբեր», 26 հունվարի, 1907։

2 Նույն տեղում, 2 մարտի։

3 Նույն տեղում, 12 փետրվարի։

4 Տես Ֆ. Գրիգորյան, Ալեքսանդր Սպենդիարով, Երևան, 1952։

5 Տես Մ. Ս. Սարգսյան, Հայկական և ռուսական կերպարվեստի կապերը, XIX—XX դարերում, Երևան, 1953, էջ 142։

ուսանողական հասարակություններում բարձրացող ուսանողական շարժումներին[1]։ Ցարական կառավարությունը խոշորագույն արվեստագետ Ռիմսկի-Կորսակովին նրա 34-ամյա բեղմնավոր աշխատանքից հետո հեռացնում է կոնսերվատորիայի պրոֆեսորական կազմից։ Այս փաստը պրոգրեսիվ արվեստագետների և հասարակության մեջ մեծ վրդովմունք է առաջացնում։ Ա. Գլազունովը, Ա. Լյադովը և մի քանի այլ պրոֆեսորներ, որպես բողոքի նշան, ինքնակամ կերպով հեռանում են կոնսերվատորիայից։ Մամուլում բազմաթիվ բաց նամակներ են տպագրվում Ռիմսկի-Կորսակովի հեռացման այդ արատավոր փաստի դեմ։ Բաց նամակով հանդես է գալիս նաև Սպենդիարովը։ Նամակն ուղղված էր Ռիմսկի-Կորսակովին։ Այնտեղ ասված էր.

«Թանկագին Նիկոլայ Անդրեևիչ.

Ձեր մեջ բարձր գնահատելով ազնվագույն և ուղղամիտ մարդուն և անկեղծորեն խոնարհվելով ռուսական արվեստում Ձեր ունեցած հսկայական նշանակության առջև, իմ անկեղծ համակրանքն եմ արտահայտում Ձեր արդարև ազնիվ բողոքին, որ Դուք արտահայտել եք ՍՊԲ. Կոնսերվատորիայի դիրեկտորին Ձեր գրած նամակում։ Ես չեմ կարող իմ մեջ խեղդել խորին զայրույթիս զգացումը, Ձեզ կոնսերվատորիայից վտարելու առթիվ, որը տեղի է ունեցել Ձեր բողոքի հետևանքով, և որը ներկայացնում է իրենից մի ամոթալի փաստ վտարողների համար, փաստ՝ անհամատարի և չտեսնված։

Ձեր աշակերտ Ա. Սպենդիարով

Յալտա

29 մարտի 1905 թ.»[2]։

Ռուսական առաջին ռևոլյուցիան խոր ազդեցություն է թողել հայ նշանավոր նկարիչ Հարություն Շամշինյանի ստեղծագործության վրա։ Նրա բազմաթիվ գործերում պատկերված էր աշխատավորների կյանքը, նրանց առօրյան։ Նկարիչը սերտորեն կապված էր ժողովրդական մասսաների հետ, որը նրան հնարավորություն էր տալիս ռեալիստորեն ցույց տալու նրանց հույզերն ու ձգտումները։

---

[1] Տես М. Яновский. Римский-Корсаков и революция 1905 г. Москва, 1950.

[2] Газ. „Русь", за 4 апреля 1905. Մեջ ենք բերում ըստ Գ. Գրիգորյանի «Ալեքսանդր Սպենդիարով» գրքի էջ 14—15, Երևան, 1952։

1905 թ. մայիսի 1-ին Հ. Շամշինյանը ավանտյուրա է լինում Թիֆլիսի Մուշտեիդի այգում կայացած ժողովրդական մեծ ցույցին և տեսնում է ցարական ոստիկանների կողմից խաղաղ ցուցարարների նկատմամբ գործադրված բռնությունները: Դեմոկրատ նկարիչը այդ տպավորությունների տակ ստեղծում է մի շարք գծանկարներ, որոնցով պատկերում է այդ արյունահեղ դեպքերը: Այդ գծանկարներն աչքի են ընկնում իրենց խորը բովանդակությամբ. դրանք ժողովրդական մասսաների քաղաքական պայքարի պատմության կարևոր դրվագներ են [1]:

Սովետական արվեստի անվանի ներկայացուցիչ Մարտիրոս Սարյանի այդ շրջանի գործերը կրում են ժամանակի ազդեցությունը:

Սարյանը ռևոլյուցիայի ազդեցության տակ հոգեբանական շտեսնված խորությամբ է պատկերել Ալեքսանդր Մյասնիկյանի դիմանկարը (1909 թ.), որը արտացոլում է ռևոլյուցիոն մարտիկի ամբողջ հոգեկան աշխարհն ու նրա մարտական ոգին:

Ռևոլյուցիան իր դրոշմն է դրել նաև Գ. Բաշինջաղյանի ստեղծագործությունների վրա:

Ռեալիստական-դեմոկրատական գաղափարները իրենց արտացոլումն են գտնում հայ քանդակագործության մեջ: Դրա փայլուն օրինակը հանդիսացավ 1902 թ. քանդակագործ Ա. Տեր-Մարությանի քանդակած Մ. Նալբանդյանի կիսանդրին, որը պատրաստվել էր Նոր-Նախիջևանում (Ռոստով) նրա դամբարանի հուշարձանի համար: Պատահական չէ, որ խոշոր ռևոլյուցիոն դեմոկրատին հուշարձան կանգնեցնելու պահանջը հայ հասարակական առաջավոր խավերը առաջադրեցին ռուսական առաջին ռևոլյուցիային նախորդող բուռն շրջանում:

Այդ շրջանին են վերաբերում նաև աշխատավոր մարդկանց կերպարի պատկերումը մի շարք քանդակներում: Քանդակագործ Միքայել Միքայելյանը 1903—1906 թթ. քանդակեց «Հայ մշակը», «Շուշեցի բեռնակիրը», «Ասեղ թելող կինը», «Կուժը կոտրած աղջիկը», և այլն: Իսկ ռևոլյուցիայի բուռն շրջանում Մ. Միքայելյանը գիպսից ձուլում է ռուս քանդակագործ Ն. Ժակի «Դարբին» շատ ուշագրավ և խորիմաստ արձանիկը:

«Այդ երևույթը մի անգամ ևս հաստատում է, որ ռուսական

---

[1] Տես Մ. Ղազարյան, Հ. Ի. Շամշինյան, «Գրական թերթ». № 23 1954:

դեմոկրատական արվեստի մեջ հայ նկարիչներն ու քանդակագործները դնում էին բարձր գաղափարականության և ռեալիստական ճշմարտացիության այնպիսի օրինակներ, որոնք կարող են օգնել իրենց ստեղծելու և զարգացնելու ազգային ռեալիստական արվեստը»[1]:

Հետագա տարիներին Ս. Տեր-Մարգարյանը վերադառնում է նաև հաշտարար Աբովյանի արձանը, նպատակ ունենալով այն Երևանում կանգնեցնելու, սակայն ցարական ռեակցիոն կարգերը ամեն կերպ արգելակում են դրան:

Այսպիսով, ռուսական առաջին ռևոլյուցիան մեծ ազդեցություն է թողնում հայ հասարակական մտքի զարգացման վրա:

* * *

Ռուսական պրոլետարիատը ռեակցիայի ծանր տարիներին, ինչպես նաև իմպերիալիստական ավերիչ պատերազմի ժամանակաշրջանում բոլշևիկյան պարտիայի ղեկավարությամբ կուտում է իր կուռ շարքերը հաղթական նոր մարտերի համար:

Ռուսական առաջին ռևոլյուցիայի հարուստ փորձի հիման վրա հնարավոր եղավ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակը, որը միաժամանակ լուծեց նաև բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի խնդիրները:

Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակի շնորհիվ ստեղծվեց ՍՍՌՄ-ն՝ աշխարհի ամենահզոր և առաջադեմ սոցիալիստական երկիրը: ՍՍՌՄ-ն այժմ կապիտալի լծի տակ տառապող բոլոր աշխատավորների ազատագրության սիմվոլն է: Նա ղեկավարում է ազատության ու պրոգրեսի մեծ գործը:

Մեծ Հոկտեմբերը ազատագրեց մեր երկրի նախկինում տանջված ու հալածված բոլոր ժողովուրդներին: Բազմաչարչար ու տանջված հայ ժողովուրդն էլ Մեծ Հոկտեմբերում գտավ իր փրկությունն ու երջանկությունը: Այդ մասին հանճարեղ պոետը գրել է.

Ինչպես աշխարհի ճորտերին բոլոր,
Այնպես էլ ձեզի աշխարհին իմ հին-
Երկինք մի մարդ, արև մի բոսոր
Լոկ Հոկտեմբերյան հողմերը տվին:

(Ն. Զարենց):

---

[1] Մ. Ս. Սարգսյան, Նշված աշխատ., էջ 154:

РЕЗЮМЕ

Русская революция 1905—1907 гг. была первой революцией эпохи империализма, поднявшей на активную политическую борьбу широкие массы рабочего класса и крестьянства.

Вслед за мощным январским движением 1905 года сразу же последовал новый подъем революционных событий весной и летом. Выступление бакинского пролетариата, баррикадные бои в Лодзе, забастовочное движение текстильщиков Иваново-Вознесенска, восстание на крейсере «Потемкин», крестьянское движение в Западной Грузии явились новым этапом в развитии революции, привели к октябрьской всероссийской политической стачке и знаменитому декабрьскому вооруженному восстанию 1905 года.

В условиях невиданного подъема революционных сил большевики, под руководством В. И. Ленина, выработали стратегический план русской революции. Они указывали, что победа в этой классовой борьбе приведет к установлению революционно-демократической диктатуры рабочего класса и крестьянства, после чего буржуазно-демократическая революция должна перерасти в социалистическую.

В этой исторической обстановке В. И. Ленин обогатил марксизм новыми теоретическими положениями и обобщениями. Он гениально обосновал руководящую роль рабочего класса в буржуазно-демократической революции и доказал, что единственным союзником рабочего класса в ней может быть только крестьянство.

Опыт первой русской революции показал, что, борясь за великую революционную цель, трудящиеся массы, под руководством рабочего класса, способны выявить огромную революционную энергию и творческую силу. Революция показала также роль и значение массовых политических стачек и уличных боев в освободительной борьбе пролетариата.

Являясь крупным всемирно-историческим событием, первая русская революция подготовила победу Великой Октябрьской социалистической революции. В. И. Ленин писал, что без опыта революции 1905 г. «победа Октябрьской революции 1917 года была бы невозможна»[1].

* * *

В конце XIX века Россия вступила в империалистическую фазу своего развития. Развитие капитализма получило широкий размах также и в Закавказье. Вследствие развития промышленности, расширения экономических и торговых связей, русские товары наводняют Закавказье. Для развития капитализма в Закавказье большое значение имел рост нефтяной промышленности.

Армения фактически была отсталой колонией Российской империи, одним из ее отдаленных уголков. Большое значение для экономического и культурного развития здесь имело проведение железной дороги.

Развитию капитализма и оформлению рабочего класса в Армении значительно способствовало также расширение медной промышленности в Алаверди и Кафане.

Развитие капитализма охватило также сельское хозяйство. Вместе с этим усилилось классовое расслоение деревни. Все больше увеличивалось число безземельных и малоземельных крестьян, что явилось причиной постоянно растущего недовольства и аграрных движений. В. И. Ленин указывал: «Борьба крестьянских и помещичьих интересов, которая проходит красной нитью через всю пореформенную историю России, и составляет важнейшую экономическую основу нашей революции...»[2].

Чрезмерно тяжелыми для крестьянства были экзекуции, к которым часто прибегали царские власти. По самому незначительному поводу целые села подвергались экзекуции,

---

[1] В. И. Ленин, Сочинения, т. 31, стр. 11.

[2] В. И. Ленин, Сочинения, т. 15, стр. 218.

собирались дополнительные налоги, крестьян заставляли нести многочисленные барщинные повинности. Истинным злом для крестьян было появление в деревне царских чиновников. Они ночевали у крестьян, чиня разного рода насилия. Обычным явлением были взяточничество и злоупотребление властью.

Экономические и политические условия жизни армянского народа исторически сложились таким образом, что его значительная часть была рассеяна по всем районам Закавказья. Промышленные центры Закавказья представляли собой интернациональную семью братских народов. В Баку, Тифлисе и других городах было значительное число рабочих-армян — выходцев из разных деревень Армении.

В конце XIX и начале XX веков трудящиеся армяне принимают участие в той общей борьбе, целью которой было свержение царизма и установление в стране демократического строя. В этой борьбе из среды армянского народа вышли преданные делу революции такие деятели Коммунистической партии, как Ст. Шаумян, С. Спандарян, Б. Кнунянц, М. Меликянц, А. Акопян, А. Мравян и другие.

* *

В конце XIX века марксизм распространяется также и в Закавказье. Первыми его пропагандистами были сосланные царским правительством на Кавказ русские марксисты. Они организовывают подпольные кружки; в них получили революционную закалку первые марксисты края.

В деле распространения марксизма и соединения рабочего движения с социализмом большую роль сыграла ленинская «Искра», получившая широкое распространение также в Закавказье. «Искра» систематически освещала революционную борьбу трудящихся Закавказья и давала ей направление. Вскоре в Закавказье возникают социал-демократические организации искровского направления. В 1901 году были основаны Бакинский, Тифлисский и Батумский комитеты РСДРП.

В Армении также возникли социал-демократические

кружки. Еще в 1899 г. усилиями Ст. Шаумяна в Джалал-оглы (ныне Степанаван) был создан марксистский кружок.

В объединении трудящихся армян и их интернациональном воспитании большую роль сыграли первые марксисты края и передовые армянские рабочие. В половине 1902 г. армяне-искровцы, при поддержке Тифлисского Комитета РСДРП, организовали «Союз армянских социал-демократов». Союз целиком стоял на позициях ленинской «Искры», удостоился положительного отзыва последней и объединился с Тифлисским Комитетом РСДРП. В течение 1902—1905 гг. в Армении создаются Александропольская, Лорийская, Эриванская, Карсская, Сарыкамышская, Новобаязетская, Кафанская организации Кавказского Союза РСДРП.

Большое распространение среди рабочих, солдат и трудящихся крестьян Армении получила революционная социал-демократическая литература, издаваемая как за границей, так и в нелегальных типографиях Закавказья. Нелегальная литература печаталась также в типографиях Александрополя и Карса, а в Зангезурский уезд привозилась из Баку и Шуши.

В июле 1903 г., под руководством местного комитета РСДРП, на революционную борьбу поднялся бакинский пролетариат. Вскоре примеру бакинцев последовали рабочие Тифлиса, Батума, Поти, а также закавказские железнодорожники. Ряд революционных выступлений имел место также на железной дороге Армении, на медных рудниках Алаверди и Кафана.

Большое возмущение различных общественных слоев армянского народа вызвал закон 12 июня 1903 г. о закрытии армянских школ и о конфискации церковных имений.

Кавказский Союз РСДРП специальным воззванием обращается к трудящимся армянам, в котором разоблачает колониальную политику царизма и преступную деятельность армянского духовенства и националистических партий, стремившихся помешать трудящимся в их политической борьбе. 1 октября 1903 г. в «Искре» печатается статья Б. Кнунянца «Новый разбой», где он описывает положение в Закавказье в связи с принятием закона 12 июня 1903 г.

1 октября 1904 г. Ст. Шаумян выступает со статьей «Из

армянской действительности». Отмечая основные задачи РСДРП в освободительной борьбе армянского народа, Ст. Шаумян одновременно разоблачает авантюристическую и антинародную политику армянских националистов.

Летом 1904 г., по заданию Кавказского Союза РСДРП, Ст. Шаумян приезжает в Лори, посещает ряд районов Армении, где проводит большую агитационно-массовую и организационную работу. По указанию Ст. Шаумяна, из Лори в другие районы Армении посылается ряд партийных работников.

Большую работу по созданию и укреплению социал-демократических организаций Армении проводили Александр Малхасян, М. Миракян, Л. Тер-Осипян, А. Мравян, Л. Ягубян и др. В распространении марксизма в Армении выдающаяся роль принадлежит также первому армянскому рабочему-марксисту Мелику Меликяну, вошедшему в историю революционного движения Армении под именем «армянский Петр Алексеев».

* * *

События 9 января 1905 г. в Петербурге дали мощный толчок революционному движению во всей стране. «Рабочий класс,— писал В. И. Ленин,— получил великий урок гражданской войны; революционное воспитание пролетариата за один день шагнуло вперед так, как оно не могло бы шагнуть в месяцы и годы серой, будничной, забитой жизни. Лозунг геройского петербургского пролетариата: «Смерть или свобода!» эхом перекатывается теперь по всей России. События развиваются с поразительной быстротой»[1]. Призыв рабочих: «Смерть царю-палачу!» прокатился по всей стране. Гнилые основы царской тирании заколебались.

Большое значение для революционной борьбы масс имел III съезд РСДРП, созванный в апреле 1905 г. в Лондоне. Революция выдвинула перед рабочей партией такие задачи,

---

[1] В. И. Ленин. Сочинения, т. 8, стр. 77.

которых не знали прежде никакие демократические революции.

Съезд принял решение по целому ряду важных стратегических и тактических вопросов, а именно, вопрос о вооруженном восстании, о свержении царизма и организации временного революционного правительства, об участии в нем социал-демократов, об отношении к крестьянству, либеральной буржуазии и др. По всем этим вопросам В. И. Ленин заранее составил проекты резолюций, основные положения которых он обосновал в ряде статей, печатавшихся в большевистской газете «Вперед».

Весной и летом 1905 г. забастовочное движение принимает широкий размах на предприятиях Петербурга, Москвы, Варшавы, Риги, Баку. Забастовка рабочих Иваново-Вознесенска продолжалась с мая до августа 1905 г. В этой исторической борьбе родились первые рабочие Советы. В июне 1905 г. вспыхнуло восстание на Черноморском флоте.

Крупное значение в дальнейшем развитии революции сыграла забастовка железнодорожников в октябре 1905 г., положившая начало всероссийской политической стачке, начавшейся в Москве и распространившейся по всей стране, охватив и Закавказье.

В дни октябрьской политической стачки в Петербурге, Москве, Баку и других городах по инициативе революционных масс были созданы Советы рабочих депутатов. Советы были зачатками революционной власти рабочих и крестьян.

* * *

В годы первой русской революции трудящиеся Армении поднялись на политическую борьбу против векового ига эксплуататоров за свое социальное и экономическое освобождение. В авангарде этой борьбы шел рабочий класс Армении Значительный размах принимает борьба рабочих медной промышленности, а также железнодорожников Армении.

5 марта 1905 года началась забастовка алавердских рабочих. Рабочие здесь были лишены элементарных условий

жизни. Они жили в сырых землянках по 20—25 человек в страшной тесноте. Рабочие получали мизерную зарплату, часть которой к тому же удерживалась в виде всевозможных штрафов. Рабочий день продолжался от 12 до 14 часов[1]. Приостановив работу, рабочие предъявили заводоуправлению требования о сокращении рабочего дня до 9 часов, повышении зарплаты на 20 процентов, обеспечении бесплатным жилищем согласно санитарным правилам, повышении качества хлеба, выпекаемого в заводской пекарне, и др. Заводоуправление потребовало немедленно возобновить работу, но рабочие ответили отказом, настаивая на выполнении своих требований. Только при помощи вооруженной полиции заводоуправлению удалось сорвать забастовку. Восемь рабочих не приступили к работе. Их немедленно выгнали с завода.

Репрессии властей, однако, не смогли задушить борьбу рабочих. Под руководством Санаинской социал-демократической организации и работающих на шахтах большевиков, борьба рабочих начинает принимать все более организованный характер.

20 ноября 1905 г. началась пятидневная стачка алавердских рабочих. По сравнению с предыдущими забастовками, ноябрьская стачка отличалась своей организованностью и сплоченностью. С большим удовлетворением отметил этот факт орган Кавказского Союза РСДРП «Кавказский рабочий листок» (№ 6, 1905 г.). Эта борьба увенчалась победой рабочих.

20 ноября на станции Санаин, под руководством социал-демократической организации, рабочие-железнодорожники совместно с крестьянами окрестных сел устроили большую демонстрацию с красными знаменами и революционными песнями, затем направились к рабочим Алаверди и соединились с ними.

Стачка алавердских рабочих имела революционное воздействие и на окрестные села. Многие рабочие, связанные с селами, проводили среди крестьян агитационную работу, организовывали борьбу крестьян против помещиков и цар-

---

[1] См. „Кавказский рабочий листок", 1905, № 6.

ских властей. Этим именно и объясняется до селе невиданная активность крестьян, которые солидаризировались с бастующими рабочими, а иногда и вооруженными группами приходили им на помощь.

Забастовочное движение в Алаверди еще более усилилось летом 1906 года.

В июне 1906 г. в одном из донесений, направленном тифлисскому генерал-губернатору, сообщалось, что 3 июня 1906 г. рабочие Алавердского медеплавильного завода объявили забастовку и предъявили экономические требования. Приостановили работу также рабочие шамлугских рудников. В сообщении говорилось также о том, что директор завода исчез, не передав своих полномочий кому-либо другому, что его возвращение может еще более осложнить дело. Рабочие решили не поддаться лживым обещаниям хозяев и продолжать борьбу до тех пор, пока не будут удовлетворены выставленные требования. 14 июля борчалинский уездный начальник сообщал, что рабочие Алавердского завода продолжают стачку и что для ее подавления он из Шулаверов вызвал войсковые части.

В августе 1906 г. началась новая мощная стачка алавердских рабочих. С целью помощи местным большевикам и для руководства забастовкой, по поручению Кавказского Союза РСДРП в Алаверди приезжает С. Спандарян.

Еще в июле рабочие избрали стачечный комитет, куда вошли С. Пирузян, С. Вермишян, М. Агамян, Семенов, И. Хаджиев, В. Челидзе, Исмаил Мамед-оглы и др.

В своем требовании, состоящем из 18 пунктов, рабочие настаивали на установлении 8-часового рабочего дня для взрослых и 6-часового — для детей, страховании рабочих, отмене штрафов, повышении заработной платы, медицинском обслуживании рабочих, организации библиотек-читален и др. Как и следовало ожидать, управление Алавердской медной промышленности отказалось выполнить эти требования. 2 августа рабочие объявили общую забастовку. Более 4000 рабочих собралось на площади «Манес». Они заявили, что до конца будут бороться за свои права.

Под руководством С. Спандаряна стачечный комитет раз-

вернул большую политическую работу среди забастовщиков. С помощью Борчалинской социал-демократической организации Спандарян развернул работу также и в окрестных селах. Он объяснял крестьянам, что от тяжелого ига помещиков они могут избавиться только тогда, когда совместно с рабочими и под их руководством поднимутся на борьбу против эксплуататоров.

Призыв стачечного комитета об оказании материальной помощи рабочим, составленный по инициативе С. Спандаряна и распространенный в листовках, стал достоянием не только окрестных сел, но и других населенных пунктов Армении. Благодаря помощи трудящихся масс, рабочим удалось более чем месяц продолжать забастовку.

Большевики и передовые рабочие вели решительную борьбу против дашнакско-анархистских элементов, стремившихся своей авантюристической политикой сорвать забастовку. В эти бурные дни забастовочной борьбы в Алаверди приезжает Ст. Шаумян. В Алаверди и в окрестностях часто бывал также «Дедушка» — Мелик Меликянц. Благодаря проведенной большевиками работе, стачечная борьба в Алаверды принимает еще более организованный характер.

Встретив упорное сопротивление рабочих, хозяева были вынуждены принять их основные требования. Однако вскоре им на помощь пришли царские палачи, которые вооруженной силой начали подавлять забастовку. По приказу тифлисского губернатора, в конце августа из Джалал-оглы в Алаверди в срочном порядке были переброшены казацкие части полковника Золотарева с четырьмя пушками. Из Шулаверов к нему на подкрепление прибыл уездный начальник со своим вооруженным отрядом. Царские палачи направили пушки и пулеметы против безоружных рабочих, детей и женщин. Забастовка была подавлена в крови. Обнаглевшие капиталисты освободили от работы сотни рабочих. Часть из них была из Персии. Их посадили в товарные вагоны и выслали обратно в Персию. Они с собой везли на память красное знамя, на котором было начертано: «Пролетарии всех стран, соединяйтесь!».

* * *

После «Кровавого воскресенья» 1905 года революционное движение значительно усилилось и в Александрополе. В одном из воззваний Александропольской организации РСДРП указывается, что 9 января 1905 г. «в первый раз раздался революционный барабанный бой, разбудивший всю Россию от глубокого зимнего сна».

На революцию 1905 г. в Армении первыми отозвались железнодорожники. Уже с марта происходили забастовки на железнодорожной линии Александрополь — Караклис. На всей линии Тифлис — Эривань был назначен военный надзор. 20 и 21 марта не работали также почта и телеграф.

5 апреля бастующие рабочие и трудящиеся станции Александрополь предъявили свои экономические требования. В тот же день движение приостановилось на железнодорожных линиях Тифлис — Эривань и Александрополь — Карс. 7 и 8 апреля на многих станциях Закавказской железной дороги рабочие и служащие объявили забастовку и организовали митинги, направленные против царского правительства.

В своем донесении эриванский губернатор 25 апреля 1905 г. сообщал, что Александрополь является наиболее революционным пунктом в губернии. Революционное движение охватило всю Закавказскую железную дорогу. В мае забастовка железнодорожников стала всеобщей и продолжалась до 14 числа.

Забастовка железнодорожников с новой силой развернулась в октябре 1905 г.

Александропольская организация РСДРП проводила среди рабочих, солдат и широких масс трудящихся большую агитационную работу. Под ее руководством 14 октября на станции Александрополь происходило совещание рабочих, на котором было решено соединиться с общей стачкой закавказских железнодорожников. На следующий день утром, 15 октября, забастовка началась. 16 октября Александропольская организация РСДРП обращается с воззванием к трудящимся города, призывая их соединиться со всероссийской стачкой железнодорожников.

В другом воззвании, от 29 октября 1905 г., Александропольская организация РСДРП призывает трудящихся города продолжать борьбу, не верить лживым обещаниям царя, данным в манифесте 17 октября.

Революционное движение охватило также Александропольский гарнизон. Местная социал-демократическая организация в войсковых частях гарнизона имела широкую сеть своих агитаторов, партийных работников. Среди солдат гарнизона распространялись революционные воззвания, листовки и брошюры.

6 ноября 1905 г. выступили солдаты 153-го Бакинского и Кабардинского пехотных полков. Они собрались на общий сход, на котором произносились революционные речи. Несмотря на репрессии, солдаты не прекращали борьбы. 22 ноября того же года около 300 солдат 153-го Бакинского полка устроили на армянском кладбище революционный митинг.

24 ноября 1905 г. на совещании солдат гарнизона Александропольская организация РСДРП, обсудив вопросы, касающиеся социально-политического положения солдат, составила подробные требования из 33 пунктов. Благодаря работе социал-демократической организации, устанавливается тесная связь между солдатами гарнизона и трудящимися города. В своем донесении начальнику главного Кавказского штаба командующий 80-м Кабардинским полком сообщал список из 28 лиц, обвиняя их в руководстве революционным движением как на железной дороге, так и в городе. Он просил в отношении указанных лиц принять самые строгие меры. Он требовал также освободить от работы на линии Тифлис — Карс всех местных работников, как не внушающих политического доверия.

20 декабря 1905 г. в прокламации, адресованной солдатам гарнизона, Александропольская организация РСДРП указывала, что царское правительство желает затопить в крови трудящихся революцию, охватившую все слои трудящихся[1].

Царизм использовал для подавления революции военную силу. Но солдаты призывали своих товарищей не идти против

---

[1] См. Архив Арм. фил. ИМЭЛС при ЦК КПСС, ф. 33, д. 223.

революционного народа, а защищать его интересы. В одной из своих прокламаций Александропольский гарнизонный Совет разоблачал жестокий режим царского правительства и гнилостность командного состава армии, который стал душителем свободы народов[1].

Когда из Тифлиса в Александрополь перебросили 27 осужденных солдат Мингрельского полка, обвиняемых в антиправительственном выступлении, то почти во всех частях Александропольского гарнизона вспыхнули революционные выступления.

Газета «Пролетарий» 11 ноября 1905 г. напечатала большую корреспонденцию о работе местной организации РСДРП среди солдат Александропольского гарнизона. Газета отмечала, что в Александрополе пропаганда, а также распространение революционной литературы, значительно расширились.

В знак протеста против спровоцированной царским правительством армяно-азербайджанской резни, 30 ноября 1905 г. в Александрополе, под руководством местной социал-демократической организации, состоялся многолюдный митинг трудящихся. Участники митинга в своей резолюции указывали, что армяно-азербайджанское братоубийство является делом реакционных сил. Митинг решил провести большую агитационно-массовую работу среди населения, живущего по линии железной дороги Эривань—Карс, для предотвращения межнациональных столкновений.

Забастовочная борьба рабочих особенно усилилась в декабре 1905 г., когда почти вся Закавказская железная дорога опять перешла в руки революционных сил. Во многих пунктах этой железной дороги организовывались стачечные комитеты или бюро. Стачечные бюро были созданы также в Эривани и Александрополе. В них были имеющие долголетний опыт борьбы рабочие, значительную часть которых составляли большевики.

Наиболее широкий размах получает декабрьская забастовка железнодорожников в Александрополе. Одновременно с железнодорожниками бастовали также рабочие и служащие

---

[1] См. Архив Арм. фил. ИМЭЛС при ЦК КПСС, ф. 33, д. 224.

ряда предприятий и учреждений города. Широкие слои населения активно помогали бастующим. В этом отношении большое значение имел организованный 13 декабря 1905 г., по инициативе большевиков, митинг трудящихся Александрополя с целью сбора средств для помощи бастующим. Митинг фактически превратился в большую политическую демонстрацию. В ней участвовали также работники почты и телеграфа.

Революционная борьба в Александрополе имела широкий отклик среди трудящихся крестьян уезда.

В Караклисе рабочие железнодорожной станции изготовили пушку. Полиции удалось захватить ее. В секретном сообщении от 4 февраля 1906 г. говорилось, что районы Армении заражены революционным движением, а Александропольский район «имел очень энергичное участие в последних всероссийских стачках». По примеру революционных районов России, Александрополь «явился ареной политических демонстраций и митингов»[1].

6 июля 1906 г. объявили забастовку подмастерья сапожников и кузнецов, требуя повышения зарплаты и сокращения рабочего дня. 25 июля имели место революционные выступления солдат Александропольского гарнизона. По приказу полковника Гурева, выступления солдат были подавлены. 25 революционных руководителей солдат было передано в руки судебных властей.

3 июля 1906 г., по инициативе социал-демократов, прекратили работу служащие Александропольского взаимно-кредитного товарищества, требуя повышения зарплаты.

Александропольская организация РСДРП выпустила специальную листовку к трудящимся города, призывая их подняться на борьбу против эксплуататоров. В ответ на этот призыв, рабочие и служащие ряда предприятий города, в том числе и служащие городского банка, предъявили местным властям и хозяевам предприятий свои экономические требования. 11 августа 1906 г. рабочие пекарен и служащие магазинов в Александрополе объявили забастовку, предъявив ряд требо

---

[1] Архив. Груз. фил. ИМЭЛС при ЦК КПСС, ф. 2, д. 112, л. 43.

ваний об улучшении своего положения. 19 сентября рабочие александропольской типографии также прекратили работу. Наряду с экономическими требованиями они настаивали на установлении 8-часового рабочего дня.

В августе 1906 г. организация «Всероссийского военного Союза» Александропольского гарнизона выпустила воззвание. 110 экземпляров этого воззвания было захвачено полицией. В Александрополе полицией был раскрыт тайный склад, содержавший большое количество революционной литературы на русском, грузинском и армянском языках. Александропольская тюрьма была переполнена политическими заключенными. 7 июля 1906 г. в большевистской газете «Кайц» было напечатано их письмо. Они писали о страшных условиях тюрьмы и жестоких пытках. «Находящихся под следствием заключенных, вопреки даже существующим законам, держат закованными в цепи»,—сообщалось в письме.

В революционной борьбе трудящихся Александрополя активное участие принимали и учащиеся, а также приехавшие из других городов на побывку студенты. В деле распространения революционной литературы энергичную работу проводили студенты А. Шагинян, Л. Тер-Овсепян и др. Видными деятелями Александропольской организации РСДРП были А. Туманян, Хачатрян и др. За революционную работу был заключен в тюрьму М. Миракян («Шант»).

Для подавления революционной борьбы масс дашнаки, специфики, гнчакисты и другие контрреволюционные партии усердно помогали царской охранке. Защищая интересы эксплуататоров, дашнаки своей террористической деятельностью заставляли рабочих прекращать забастовки. В результате контрреволюционной деятельности дашнаков в 1906 г., группа рабочих-железнодорожников в Александрополе попыталась прекратить стачку, но благодаря энергичной разъяснительной работе большевиков единство рабочих-стачечников не было нарушено. В результате шпионской деятельности дашнаков, царской полиции удалось арестовать и бросить в тюрьму 22 рабочих-стачечников.

Аресты и преследования не смогли сломить революци-

онный дух трудящихся. Повсюду трудящиеся массы готовились к дальнейшей борьбе.

Таким образом, в годы первой русской революции Александрополь явился одним из важных центров политической борьбы в Армении. Революционная борьба трудящихся Александрополя имела огромное влияние на дальнейший рост революционных выступлений в других районах Армении.

* * *

Революционные события в Эривани начались после «Кровавого воскресенья» 1905 г. Здесь, на винно-коньячных заводах Сараджева и Шустова, а также на ряде предприятий и мастерских, происходили демонстрации протеста и собрания. Рабочие винно-коньячных заводов предъявили хозяевам предприятий ряд экономических требований.

В марте 1905 г. жители города послали на имя наместника Кавказа целый ряд демократических требований, а именно. самоуправление городом, всеобщее избирательное право, равноправие женщин, свобода слова, печати, собраний, 8-часовой рабочий день, общее начальное обучение родному языку и др.

Забастовочным движением руководили социал-демократические кружки города, положившие свое начало в 1903 г.

В мае 1905 г. на состоявшемся городском партийном собрании был избран партийный комитет Эриванской организации РСДРП. В деле основания и укрепления Эриванской организации РСДРП, начиная с 1904 г., большая роль принадлежит большевику Александру Малхасяну. С 1906 г. здесь работал также Мартирос Миракян. Видную роль играли Асканаз Мравян и другие. Работу Эриванской партийной организации возглавлял Кавказский Союз РСДРП. Ст. Шаумян и С. Спандарян уделяли ей большое внимание. Благодаря работе Эриванской организации РСДРП, революционное движение на промышленных предприятиях города и железной дороге изо дня в день усиливалось.

В полицейском сообщении от 10 января 1906 г. говорилось, что рабочие-строители железнодорожной линии Улухан-

лу — Джульфа объявили забастовку. Царские чиновники поспешили и здесь «применить репрессивные меры»[1].

В феврале 1906 г. объявили забастовку работники почты и телеграфа Эривани, а также Александрополя.

16 апреля 1906 г. по инициативе Эриванской организации РСДРП за городом состоялся общий митинг трудящихся. На митинге социал-демократы выступали с речами на армянском и грузинском языках.

Большое возмущение трудящихся города вызвал судебный процесс против революционера Левона Тер-Овсепяна. С целью запугать массы и расправиться с Тер-Овсепяном, обвинявшемся в распространении прокламаций и проведении революционной пропаганды, 17 апреля из Тифлиса в Эривань приехала коллегия Тифлисской судебной палаты.

Жестокие методы реакции, однако, еще больше усиливали недовольство масс, поднимали их на революционную борьбу.

По сообщению эриванского губернатора, 8 марта 1906 г. в Эривань прибыл ряд революционных деятелей, который развернул большую работу среди трудящихся города. В 1906 г. Эриванская организация РСДРП избирает Ст. Шаумяна делегатом на IV съезд партии. Возвратившись из Стокгольма, где происходил съезд, Шаумян на совещании городского партийного актива делает доклад о решениях съезда. Приезд Шаумяна в Эривань оживил работу партийной организации города.

29 мая 1906 г. бастовали рабочие и служащие Эриванского отделения «Российского товарищества», предъявив свои экономические и политические требования. Забастовкой руководили большевики. Обращаясь к бастующим, большевистская газета «Кайц» поздравляет их с одержанной победой. 17 мая 1906 г. служащие эриванских магазинов также прекратили работу, требуя сократить рабочий день и образовать третейский суд для разрешения спорных вопросов.

23 июля 1906 г. по инициативе Эриванской организации РСДРП у станции-Улуханлу состоялся общий митинг трудящихся города. В нем принимали участие и железнодорожни-

---

[1] ЦГИА ГрузССР, ф. 1, д. 194, л. 16.

ки Улуханлу. На митинге с революционными речами выступили рабочие, а также большевики М. Миракян и Л. Ягубян.

В августе 1906 г. прекратили работу служащие Эриванского отделения Тифлисского торгового банка. Они требовали повысить зарплату на 25 процентов, обеспечить отпуском, улучшить экономические условия и др. 21 августа бастовали подмастерья и ученики эриванских мастерских, а 4 сентября — рабочие чугунолитейного завода бр. Аветиковых. В первых числах июля 1907 г. происходила забастовка рабочих эриванских типографий. 22 августа этого же года забастовку объявили рабочие и служащие эриванской конки.

Наряду с подъемом революционного движения происходила и консолидация контрреволюционных сил. Развертыванию революционного движения заметным образом мешали армяно-азербайджанские столкновения, организуемые царскими властями и местными националистическими партиями. И не случайно, что эти провокационные акты начались именно в Баку — в центре революционной борьбы Закавказья — в самом начале революции (февраль 1905 г.).

Ни репрессии властей и ни межнациональные столкновения, организуемые черными силами реакции, не могли, однако, приостановить борьбу трудящихся за свержение царизма и установление демократических порядков.

* * *

Революционные события 1905 г. нашли широкий отклик и среди железнодорожников, солдат и крестьян Карсской области. Карсская организация РСДРП проводила значительную работу среди трудящихся. Партийная работа здесь еще более оживилась после того, как стало возможным установить связь с большевиками, сосланными сюда из Баку.

Царское правительство всячески стремилось изолировать солдат от народа, не разрешать им общаться с народом. Но солдаты—эти одетые в военный мундир рабочие и крестьяне—поднимали свой голос протеста против насилия властей, солидаризировались с революционными массами, всячески защи-

щали интересы трудящегося народа. В марте 1905 г. в Карсе восстали солдаты 18-й батареи горной артиллерии. Карсский солдатский Совет выпустил по этому поводу специальное воззвание, в котором приветствовал героический подвиг солдат, борющихся за общенародное дело, за освобождение трудящихся. Большое революционизирующее значение для солдат Карсского гарнизона имело антиправительственное выступление воинских частей Сарыкамыша, происходившее 29 сентября 1905 г. Здесь особенно отличился Елизаветпольский полк. Выступление солдат было подавлено. Руководители его были заключены в карсскую тюрьму.

В июле прекратили работу рабочие нефтяных складов Карса, требуя 10-часового рабочего дня и повышения зарплаты на 15—20 процентов.

20 октября 1905 г. из карсской тюрьмы удалось освободить 32 политических арестованных, в том числе 8 женщин — сосланных в Карс бакинцев.

21 октября солдаты взорвали дом командира саперной роты Карсской крепости. Это должно было послужить сигналом для восстания солдат. Но, чувствуя создавшееся напряженное положение в частях, военные власти заранее усилили охрану, что дало им возможность сорвать выступление.

22 октября освобожденные из тюрьмы бакинские революционеры собрались в городском парке. Со всех сторон их приветствовали трудящиеся города. Революционерам Баку женщины преподнесли Красное знамя. В числе ссыльных были С. Алилуев, М. Бакрадзе, А. Хумарян и другие. 23 октября трудящиеся города опять группами собираются в городской парк. Вскоре в парк приходят также бакинские революционеры. Приход последних вызвал всеобщее воодушевление. Началась демонстрация. С революционной речью выступил один из местных большевиков. Затем выступили бакинские товарищи.

По приказу губернатора, были вызваны войска. Последние угрожали открыть огонь по собравшимся. Войска и полиция окружили безоружных демонстрантов. Руководители демонстрации и бакинские революционеры были заключены в тюрьму. Боясь обострения положения, власти поспешили освобо-

дить из тюрьмы жителей Карса, чтобы потом организовать расправу над бакинскими революционерами. Но, поняв эти намерения, находящиеся в тюрьме жители Карса отказались выйти из нее, требуя освобождения также бакинских товарищей. В течение двух дней 58 человек оставались в тюрьме. В жандармском сообщении говорится, что когда революционеров вели в тюрьму, трудящиеся города выкрикивали революционные лозунги. В своем докладе начальнику полиции на Кавказе начальник карсской городской полиции указывал, что бакинские политические деятели для городских властей создали тревожное положение.

На пути по возвращении в Баку бакинские большевики остановились в Александрополе, где под руководством местной социал-демократической организации 28 октября происходила демонстрация трудящихся города. В ней участвовало более 2 тысяч человек. Демонстранты с огромным энтузиазмом встретили революционеров. Такие встречи и митинги происходили и в других местах — на ж.-д. станциях.

В одном из полицейских донесений сообщалось, что во время общей стачки закавказских железнодорожников в октябре — декабре 1905 г. забастовку объявили также рабочие и служащие железной дороги Тифлис — Карс. Вследствие этого движение на этом пути прекратилось. Социал-демократы руководство дорогой взяли в свои руки. На руководящие посты назначались представители трудящихся.

29 октября 1905 г. Карсская организация РСДРП выпускает специальное воззвание, в котором разоблачает лживую сущность манифеста 17 октября. Воззвание заканчивалось лозунгами: «Да здравствует республика и революция!», «Да здравствует социализм!».

Власти вынуждены были принять срочные меры против революционных масс. Военный губернатор Карсской области всю железную дорогу объявил на военном положении.

Забастовка железнодорожников имела сильное революционное влияние на войсковые части, расположенные в Карсе.

25 октября восстала первая рота пехотного полка Карсской крепости, требуя улучшить положение солдат, прекратить насилия и преследования, отстранить жестоких офицеров. По-

добные выступления имели место и в других частях Карсского гарнизона.

Военные власти арестовывали революционных солдат. Кроме того, чтобы расстроить революционную деятельность, они перебрасывали войсковые части с одного места на другое. 3 ноября 1905 г. за революционную деятельность было арестовано 20 рядовых разных частей гарнизона, 15 декабря все солдаты отделения связи были разоружены. В это самое время из района Ольти в Карс перевели казаков 6-го батальона 2-го Черноморского полка, отказавшихся выполнять приказы командиров, и держали под особым надзором. 23 ноября 1905 г. происходила демонстрация солдат 154-го Дербентского полка. Шествуя по улицам города, солдаты произносили революционные лозунги.

Революционное настроение солдат в частях Карсского гарнизона все усиливалось. 15 декабря 1905 г. казаки в количестве 600 человек отстранили своего командира и подняли восстание. Восставшие создали солдатский Совет, который выработал и предъявил военному командованию ряд требований. Наряду с требованием улучшения положения солдат Совет ставил также вопросы политических свобод.

Командование гарнизона при помощи реакционных сил окружило и разоружило восставших. Затем их перевезли в Ольтинский район, назначив над ними строжайший военный надзор.

26 ноября 1905 г. Карсская социал-демократическая группа обратилась со специальным воззванием к солдатам гарнизона, призывая их объединиться с рабочими и крестьянами в их общей освободительной борьбе против эксплуататоров.

21 декабря 1905 г. восстали 62 заключенных Карсской крепости. По приказу начальника тюрьмы, по восставшим был открыт огонь.

2 июня 1906 г. начальник полиции доносил наместнику на Кавказе о том, что революционные выступления в войсковых частях Карсского гарнизона усилились. В этом же донесении сообщалось, что 20 июля на рынке, во время праздничной торговли, солдатами были распространены антиправительственные прокламации.

Благодаря агитационной работе большевиков, в революционном движении принимали участие самые широкие слои трудящихся.

7 августа 1906 г. бастовали подмастерья сапожников и лесопильщиков. Под руководством большевиков в 4 часа дня 150 забастовщиков собрались за городом, чтобы выработать свои требования и предъявить их хозяевам. Однако вооруженная полиция разогнала совещание.

На подавление революционной борьбы трудящихся царское правительство посылало «преданные» царизму войсковые части. Но даже к этим «надежным» частям власти относились, не без оснований, с большой сомнительностью, ибо практика показывала, что войска могут в любой момент направить оружие против самих властей. Часть солдат была готова объединиться с народом в общей освободительной борьбе. Как указывает Ст. Шаумян, «яд революции заражает и войско, заражает даже блестящую императорскую гвардию»[1].

Итак, на первую русскую революцию активно откликнулись также трудящиеся и войска одного из самых отдаленных уголков царской империи — Карсской области.

* * *

Тяжелым было положение трудящегося крестьянства Армении в условиях полукрепостнических порядков царского режима. Очень часто крестьянин со всей своей семьей весь год работал в хозяйстве помещика, кулака или ростовщика. Однако он жил всегда в нужде и еле-еле влачил свое нищенское существование. Крестьян грабили все: помещики и царские чиновники, кулаки, духовенство, ростовщики и другие живодеры. Долгое время крестьянин не находил выхода из такого тяжелого положения. Крестьянство еще не могло понять, что его освобождение возможно только тогда, когда оно совместно с рабочим классом и под его руководством поднимется на общую борьбу против эксплуататоров за демократическое переустройство общества. В годы первой русской революции рабочие и крестьяне уже стали на путь совместной борьбы. В этой

[1] С. Шаумян, Избр. сочинения, Ереван, 1948, стр. 117.

общей борьбе были заложены основы союза рабочего класса и крестьянства. Под руководством В. И. Ленина большевики проводили огромную работу по упрочению этого союза. Работа большевиков в деревне, писал С. Спандарян, прежде всего «должна ставить себе главной целью организацию пролетарских и полупролетарских масс деревни — сельских рабочих, безземельных крестьян», разбудить в них классовую сознательность, «разъясняя нашу конечную великую цель и устанавливая идейную связь между рабочими города и деревни»[1].

Для дела революционного воспитания армянского крестьянства большое значение имело воззвание к нему Кавказского Союза РСДРП от 19 марта 1905 г. Оно в большом количестве было распространено в районах Закавказья и особенно в Эриванской губернии, Карсской области и др.

4 марта 1905 г. управляющий одного из поместий в Караклисе с тревогой доносил, что крестьяне готовятся к выступлению. Он просил вооруженной помощи для его подавления и требовал отпустить оружие для вооружения на местах черносотенных отрядов с целью борьбы против революционных масс.

Как накануне, так и в ходе первой русской революции выступления крестьян Эриванской губернии принимают довольной широкий размах. Вследствие этого полицейский надзор и преследования значительно усиливаются.

В 1904—1905 гг. крестьяне Егварда, работавшие на монастырских землях, отказались платить налоги. Так поступили также крестьяне Канакера и других близлежащих армянских и азербайджанских сел.

В докладе на имя наместника Воронцова-Дашкова Кавказское полицейское управление доносило, что в граничащих с Нор Баязетом районах недовольство и политические выступления принимают массовый характер.

2 декабря 1906 г. в Джалал-оглы состоялся митинг новобранцев. Они обсуждали ряд волнующих их вопросов и выста-

---

[1] С. Спандарян, Статьи, письма, документы, 1940, стр. 74.

вили свои требования. Участники митинга выразили свою солидарность революционному выступлению работников почты и телеграфа. На митинге было решено организовать дружины для предотвращения братоубийственных столкновений.

В 1906 г. имели место серьезные выступления крестьян нескольких шамшадинских деревень. Крестьяне захватывали помещичьи земли. «В Шамшадине и ближайших селах после упорных боев подавили крестьянское движение, арестовали членов сельского комитета,— писала газета «Кайц».— Земли помещика Арамяна были возвращены ему, а также 1500 дес. земли Бек-Юсупова, которые были захвачены крестьянами»[1].

На революционную борьбу поднялись также крестьяне сел Парби, Ошакан, Мастара, Карби и др. Для подавления крестьянских выступлений в эти села были отправлены казацкие карательные отряды, которые расправлялись с крестьянами, грабили их добро, арестовывали «непокорных». Так, в селе Карби руководители крестьянского выступления были арестованы, а само село было подвергнуто экзекуции. В продолжение 20 дней казацкие отряды бесчинствовали в селе, творя всякого рода насилия.

Во многих селах крестьяне выгоняли помещиков и их представителей, отказывались платить налоги. Помещик Гаджи Аласкер-оглы жаловался, что крестьяне села Зар, Котайкского района, наотрез отказываются платить налоги и угрожают ему убийством. «Никому не разрешим платить мульк,— писали крестьяне,— в противном случае сожжем на поле урожай, как это делают крестьяне в России». То же самое происходило в Бжни и других селениях. Помещик Гегамов жаловался, что крестьяне села Гейкилиса, Котайкского района, выгнали из села его управляющего и не признают его самого.

Своей революционной борьбой особенно выделялись крестьяне села Ахпат, Борчалинского уезда. Еще в 1903 г. ахпатцы выгнали из села царского пристава вместе с полицейскими и отказались выполнять их требования. Между крестьянами и казаками имело место кровопролитное столкновение. По безо-

---

[1] „Кайц", № 7, 1906 г.

ружной толпе крестьян казаки открыли ураганный огонь. Борьба трудящихся Ахпата особенно усилилась в годы первой русской революции.

15 июня 1906 г. в корреспонденции «Письмо из Ахпата» газета «Кайц» писала, что крестьяне села Ахпат, не вынеся ярма князя Баратова, поднялись на борьбу, требуя земли и свободы. На требования трудящихся власти ответили жестокими репрессиями. Карательный отряд уездного начальника окружил село и в крови подавил выступление крестьян. Часть крестьян ушла в леса и горы. «Ахпат остался в распоряжении башибузуков,— писала газета «Кайц»,— все разорили и захватили, в селе... для еды больше ничего не осталось...». Впоследствии князь Баратов продал свое имение капиталисту-помещику Арамянцу. О тяжелом положении крестьян при Арамянце «Кайц» писала: «Вооруженная группа стражников во главе с Арамянцом сегодня топчут кровью и потом приобретенные и обработанные бедными крестьянами в течение многих лет сады и плодовые деревья». Газета заключала, что Арамянц и подобные ему кровопийцы должны ответить перед народом за свои преступления.

12 августа 1906 г., под руководством Борчалинской организации РСДРП в селе Айгеат состоялся митинг трудящихся крестьян уезда. На митинге было решено не признавать существующих налогов и системы земельной аренды.

Крестьяне села Гергер, Джалалоглинского участка, убили ненавистного им эксплуататора Абас-бек Шахвердяна. В связи с этим село было окружено полицией. Последняя предъявила крестьянам требование о выдаче виновников. Сельчане ответили отказом. Озверевшие царские изверги разорили село, замучили крестьян, разграбили их добро. На село была назначена экзекуция. Находящиеся в этом селении солдаты войсковой части отказались работать на казенной земле. Они установили связь с крестьянами и вместе с ними выступили на борьбу против помещиков и местных властей.

В воззвании к «Борчалинским крестьянам» социал-демократическая организация призывала трудящихся крестьян поднять знамя свободы, выступить с городским пролетариатом

на борьбу против общего врага рабочих и крестьян — царя, капиталистов и помещиков[1].

В годы первой русской революции в Зангезурском районе по инициативе бакинских большевиков были созданы социал-демократические организации. Особенно сильной была организация села Хндзореск. 27 января 1906 г. в Хндзореске вспыхнуло вооруженное выступление трудящихся крестьян. На борьбу поднялись также крестьяне села Караундж (у Гориса). Царскими властями были пущены в ход карательные войска генерала Бауера.

Большая роль в развитии крестьянского движения принадлежала революционным рабочим и солдатам, привозившим в село нелегальную литературу и проводившим среди крестьян агитационную работу.

Крестьянское движение в Армении в годы первой русской революции проходило под руководством РСДРП и было особенно сильно в уездах, соседствующих с рабочими центрами. Во многих сообщениях царской охранки говорится, что забастовочное движение закавказских железнодорожников получило большой размах вследствие того, что близлежащие к железной дороге и станциям села «полностью сочувствовали политической борьбе рабочих». Во многих местах крестьяне объединялись с рабочими и совместно боролись против своих общих врагов. Так, в забастовочной борьбе алавердских рабочих активное участие приняли и крестьяне окрестных сел. По примеру рабочих, как об этом сообщается в официальной переписке, в селах создавались «политические комитеты». Крестьяне отказывались платить помещичьи и государственные налоги, землю объявляли своей собственностью и делили ее между собой.

В годы первой русской революции на армянском языке издавались в массовом тираже многочисленные прокламации, воззвания, революционные листовки и т. д. Большевистские легальные газеты «Кайц», «Нор хоск» и др. имели широкое распространение среди рабочих и крестьян Армении. Произведения таких пролетарских писателей, как Акоп Акопян, Мадат Петросян и др., становились достоянием трудящихся масс.

---

[1] См. Архив Арм.фил. ИМЭЛС при ЦК КПСС, ф. 33, д. 168.

Огромное идейное воздействие имели переведенные на армянский язык статьи В. И. Ленина и И. В. Сталина. Ст. Шаумян, С. Спандарян и др. проводили большую работу по распространению идей марксизма в армянской действительности. Их перу принадлежат многочисленные статьи по различным вопросам армянской общественной жизни. Первая русская революция явилась новым этапом в идейной жизни армянского народа. Новая прогрессивная струя становится все более заметной в области литературы, искусства и культуры армянского народа.

* * *

Царское правительство и помогавшие ему контрреволюционные партии сплачивали свои черные силы против революционных масс рабочих и крестьян. В распоряжении палача народа П. Дурново губернаторам от 24 декабря 1905 г. говорилось о том, чтобы в отношении участников революционных выступлений «применялись самые жестокие меры и подавлялись восстания в самом их зачатке...».

Царское правительство, пользуясь разрозненностью рабоче-крестьянских и солдатских движений, в крови подавили их.

Меньшевики, эсеры и другие националистические партии проводили среди рабочего класса и крестьянства подрывную работу и парализовали силы революции. Царю помогали западные империалистические государства, предоставив ему заем, а кайзеровская Германия готовила даже военную интервенцию в случае победы революции.

Несмотря на поражение, революция 1905—1907 гг. имела огромное всемирно-историческое значение. Будучи по своему характеру революцией буржуазно-демократической, она в то же время была революцией пролетарской, ибо в ней решающую роль играли формы и методы пролетарской борьбы. В эту революцию пролетариат вступил как передовая общественная сила, как руководитель и авангард трудящихся масс. Русская революция была первой проверкой ленинской идеи союза рабочего класса и крестьянства.

Крупным достижением революции было создание Советов рабочих депутатов, что послужило исходным пунктом гениального учения Ленина о республике Советов, как государственной форме диктатуры пролетариата.

Расшатав основы царизма, русская революция усилила революционную борьбу трудящихся всех стран. Все прогрессивные люди мира призывали трудящихся встать под знамя русской революции.

В. И. Ленин, говоря о значении первой русской революции, писал: «Вслед за русским движением 1905 года демократическая революция охватила всю Азию — Турцию, Персию, Китай. Растет брожение в английской Индии»[1].

Богатый опыт первой русской революции был использован Великим Октябрем, создавшим первое в истории человечества государство рабочих и крестьян — СССР.

---

[1] В. И. Ленин, Сочинения, т. 19, стр. 65.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 5

I. Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը XIX դարի վերջին և XX դարի սկզբին 11

1. Կապիտալիզմի զարգացումը և բանվոր դասակարգի ձևավորումը Հայաստանում 11

2. Կապիտալիստական հարաբերությունների զարգացումը գյուղում և ագրարային շարժումները Հայաստանում 29

II. Նոր տիպի մարքսիստական պարտիայի ստեղծումը Ռուսաստանում և առաջին սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ռևոլյուցիոն աշխատանքը Հայաստանում 59

III. Աշխատավորների ռևոլյուցիոն պայքարը Հայաստանում 1905—1907 թթ. 90

1. Ռևոլյուցիոն շարժումները Ալավերդում 98

2. Ռևոլյուցիոն շարժումները Ալեքսանդրոպոլում . . . 114

3. Ռևոլյուցիոն ելույթները Երևանում 147

4. Ռևոլյուցիոն շարժումները Կարսի մարզում 169

5. Գյուղացիական շարժումները Հայաստանում ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին

IV. Պայքար ինտերնացիոնալ ճամբարաշխության համար՝ ընդդեմ ցարական ռեակցիոն ուժերի 224

V. Ռուսական առաջին ռևոլյուցիայի ազդեցությունը հայ հասարակական մտքի զարգացման վրա

Резюме 269

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Տպված է	Պետք է լինի
70	31 վ.	ինտերնացիոնալի	ինտերնացիոնալիզմի
175	21 »	կազմակերպված	կազմակերպած
182	15 »	ցոում	ցրում
184	22 »	օթլի	օլթի
214	22 վ.	էին սահմանամերձ գյուղերը, քշում, տանում էին գյուղացիների	էին նաև թյուրքիայից անընդհատ ներխուժող ավազակային խմբե-

ՀՖ 12982 ԽՀԽ № 300 Հատ. № 1207 Պատվեր 924: Տիրաժ 3000

Հանձնված է արտադրության 28/VII 1955 թ.:
Ստորագրված է տպագրության 27/X 1955 թ.:
Թուղթ՝ 60×92 1/16, տպագր. 18,5 մամ., հրատ. 15,6 մամ.:
Գինը 5 ռ. 60 կ.:

ՍՍՌ Կուլտուրայի մինիստրության հրատարակչությունների և պոլիգրաֆ արդյունաբերության Գլխավոր վարչության Պոլիգրաֆկոմբինատ, Երևան, Ծերյան, № 91:

ՀԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220032946

II
A 32946